ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ
(ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ)

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2011

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՆՎԻՐՎՈՒՄ Է Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԾՆՆԴՅԱՆ 60-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Մ 180

Ադամ Քահանա Մակարյան

Մ 180 Քրիստոնեության իսկությունը (գիտելիքներ հավատացյալներին)

Ադամ քահանա Մակարյան.- Սուրբ էջմիածին: Հեղինակային հրա-տարակություն, 2011.- 408 էջ:

«Քրիստոնեության իսկությունը (գիտելիքներ հավատացյալներին)» գիրքը ներկայացնում է հոգևոր-եկեղեցական ոլորտին, կյանքի տարբեր ասպարեզներին առնչվող իրողությունների վերաբերյալ ուսուցումներ և բացատրություններ: Բազմատեսակ հարցերին տրվում են կրոնական պատասխաններ՝ աստվածաշնչյան մեջբերումներով, Սուրբ Հայրերի գրվածքներից, Եկեղեցու պատմությունից քաղված տեղեկություններով, անտիկ և նորագույն շրջանի փիլիսոփաների ստեղծագործությունների, հոգեբանների և ժամանակակից եկեղեցական հեղինակների աշխա-տություններից վկայակոչումներով: Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ
(ՏԱՇԻՐԻ ՄԵԾԱՎԱՆ ԳՅՈՒՂ)

ISBN 978-9939-0-0090-9 © Ադամ քահանա Մակարյան, 2011

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Արդ կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5.48):

Աստվածային այս կոչը թելադրում է մեզ առաքինություններ կենսագործելով ձեռք բերել ստեղծելու, արարելու կարողություն, իմաստության իմացություն, ինչն առաջ է բերում առաջադիմություն, աստվածայինի և մարդ-կայինի ներդաշնակություն, քանի որ ողջ այս վիճակը սկիզբ է առնում աստվածային հայտնության և մարդու աշխարհընկալման միաշաղկապումից. «Իմաստություն պահողը բարիք է պահում» (Առակ. 1.98): Ի վերուստ շնորհված իմաստությունը պայծառակերպում է մարդու միտքը, առաջնորդում նրան ճշմա-րիտ ճանապարհով, որպեսզի մարդը չշեղվի քրիստոնեական բարոյակա-նության սկզբունքներից և առաջնորդվի աստվածային պատվիրաններով: Իմաստությամբ քրիստոնյա մարդը կերտում է իր հոգևոր-բարոյական նկա-րագիրը և կառուցում բարոյական հասարակարգի իր նոր տաճարը: Ինչպես փիլիսոփա Բեկոնն է ասում, «աշխարհի վրա չեղավ մի կրոն կամ օրենք այնպես նպաստավոր հասարակաց բարքին, ինչպես քրիստոնեական կրոնը»:

Մարդը միշտ էլ ցանկացել է զարգացնել միտքը, ձգտել է իմաստության և կատարելության: Սակայն մարդկային իմաստությունը կատարյալ չէ, տևական չէ: Մարդկային միտքը հաստատ է, երբ աստվածային կենդանի լույս ունի իր մեջ: Մարդուն բարի ու իմաստուն, աստվածահաճո են դարձնում քրիստոնեա- կան բարոյականությունն ու առաքինությունները, որովհետև սրանք են նախ իմացությամբ կրթում և դաստիարակում, ապա լուսավորելով միտքը՝ ուղղում այն դեպի ճշմարիտը, գերագույն բարին և կատարելությունը: Աստծո գիտու-թյան իմացությունը առաքինությունների ոսկեճաղ աստիճաններով բարձրաց-նում է մարդուն դեպի Աստված:

Ցավոք, այսօր ոմանք ոչ իրենց կամքով, այլ պատմական, քաղաքական հանգամանքների բերումով, անգիտության և

օտարամոլության պատճառով հեռացել և հեռանում են քրիստոնեական, բարձրագույն բարոյահոգեբանական ողջ արժեհամակարգից, որը շուրջ երկու հազար տարիներ կրել, պահպանել է մեր Սուրբ Եկեղեցին, և որով ձևավորվել ու լուսավորվել է հայի ինքնությունն ու հոգևոր-բարոյական նկարագիրը, դիմագիծը՝ մեր ազգապահպանության կա-ռևորագույն գրավականը: Մեր Սուրբ Եկեղեցին ինչպես հնում, այնպես էլ հիմա իր շնորհաբաշխ անսպառ զորությամբ առաջնորդում է դեպի կատարելու-թյուն՝ ուսուցանելով, մեկնելով, կրթելով, դաստիարակելով հայ քրիստոնյային, իր հավատացյալներին այնպես, որ նա վաղը դառնա իր ազգի, Եկեղեցու և ժողովրդի հավատավոր ու արժանավոր զավակը, որպեսզի ունենանք քրիս-տոնեական բարձր բարոյականության չափանիշներով ու գիտելիքներով զորա-ցած նոր սերունդ, վերածնված սերունդ:

Այս իմաստով տեղին է ու ժամանակին «Քրիստոնեության իսկությունը (գիտելիքներ հավատացյալներին)» գրքի լույս ընծայումը, ուր արծարծվում են հայ մարդուն, հատկապես երիտասարդ սերնդին հուզող բազմաթիվ հարցեր: Սուրբ Գրքի ավանդական մեկնությունների հիման վրա գրքի հեղինակը՝ Արժանապատիվ Տ. Ադամ քահանա Մակարյանը, պարզ ու հետաքրքիր մեկնաբանությամբ կարողացել է այսօր շատերին հուզող հոգևոր-բարոյական կյանքին վերաբերող բազմաթիվ հարցեր առաջ քաշել և իրեն հատուկ անմիջականությամբ, խելամտությամբ մեկնել դրանք: Սույն գիրքը Արժա-նապատիվ Տեր Հոր տարիների ջանադիր ուսումնասիրությունների և աշխա-տանքի արդյունքն է, որ անպայման պիտի նպաստի քրիստոնեական հա-վատքի զորացմանը, հավատք, որով մեր Սուրբ Եկեղեցին իբրև վահան պահպանել և պահպանում է հավատավոր իր հոտը փոթորիկներից, արհա-վիրքներից, կյանքի երբեմն դաժան թելադրանքներից ու փորձություններից՝ առաջնորդելով նրան դեպի կատարելություն, դեպի Աստված, միշտ հնչեցնելով աստվածային կենարար պատգամը. «Արդ կատարյա՛լ դուք եղեք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»:

Ահավասիկ քրիստոնեության իսկության ոսկե սյունը՝ վեր խոյացած դեպի անհունները աստվածային ստեղծագործության, որն իր հավերժական ընթաց-քով պտտում է կյանքի անիվը, որպեսզի տիեզերական անսահմանության մեջ երկնաշնորհ պարգևը՝ կյանքը, արժևորվի, իսկ կյանքն արժևորելու համար պետք է ապրել Աստուծով ու անմահանալ Նրա հետ:

Արժանապատիվ Տեր Հորը մաղթում ենք ստեղծագործական նորանոր հորիզոններ, իր հոգևոր կյանքում բազում հաջողություններ,

ձեռքբերումներ: Աղոթում ենք, որ Ամենակալ Տերը պահպանի նրան, զորացնի, «աստուածային շնորհս և վարձս պարգևեսցէ». ամեն:

«Այսուհետեւ եղբա՛րք իմ սիրելիք, հաստատո՛ւն եղերուք, անշա՛րժ կացէք, առաւե՛լ լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջի՛ք՝ զի վաստակքն ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ. 15.58):

Զարեհ վարդապետ Կաբաղյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Ավելի քան երկու հազար տարիներ առաջ քրիստոնեությունը հավիտենական կյանքի և հոգու փրկության շնորհներով նաև բարոյականության ու մտածելակերպի առավել բարձր հարթակի բարձրացրեց մարդկային հասարակությունը: Քրիստոսի առաքյալները, աշխարհում Տիրոջ վարդապետությունը քարոզելով և Եկեղեցիներ հիմնելով, քրիստոնեության լույսով պայծառություն բերեցին մարդկության պատմության նոր ընթացքին: Քրիստոնեական հավատքը մուտք գործեց մարդկային հոգիներից ներս, աստիճանաբար ընդունվեց նաև պետությունների կողմից: Մարդկանց կյանքը սերտորեն կապվեց Եկեղեցուն, ժողովուրդներն իրենք դարձան Եկեղեցի այս բառի բուն իմաստով՝ որպես անդամները Քրիստոսի խորհրդական մարմնի (Ա Կորնթ. 12.27; Եփես. 1.23, 4.12; Կող. 1.24, 2.19): Նոր Կտակարանից գիտենք, որ նույնիսկ վաղ շրջանի Եկեղեցում կային խնդիրներ ու մարտահրավերներ, և առաքյալները պայքարում էին իրենց իսկ հիմնած եկեղեցիներում ծագած սխալ ուսուցումների և առաջնայնորեն սեփական շահը փնտրող մարդկանց դեմ: Միջնադարում շարունակվեցին այս փորձությունները և մեծ վնաս հասցրեցին արևմտյան Եկեղեցիներին ու նրանց հավատացյալներին՝ ինկվիզիցիայի, կրոնական պատրվակներով պատերազմների, գիտության նոր ձեռքբերումների ճնշման պատճառներով: Այդուամենայնիվ, քրիստոնյա երկրներում հասարակության կյանքը կենտրոնացած էր Եկեղեցու շուրջը մինչև նոր ժամանակները:

Հայաստանում, ի տարբերություն արևմտյան իրականության, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ինքն էր հովանավորը գիտության ու մշակույթի: Գիտական ու մշակութային ստեղծագործություններն ու գլուխգործոցներն ստեղծվում էին Եկեղեցու ծոցում, կերտվում հիմնականում եկեղեցականների կողմից: Եվ մեր պատերազմները մղվում էին ինքնապաշտպանության նպատակներով, հոգևորականների օրհնությամբ ու մասնակցությամբ: Դարեր շարունակ հայոց պետականության բացակայության պայմաններում Եկեղեցին էր, որ հովվեց հայ ժողովրդին, և նրա օրհնությամբ ու ջանքերով մեր ժողովուրդը համախումբ իրականություն դարձրեց անկախ Հայրենիքի իր երազը: Եկեղեցու փրկչական առաքելության հետ մեկտեղ ազգապահպան գործունեությունը ներկայիս ոմանք որակում են որպես թեոկրատիա կամ կղերապետություն, մինչդեռ եկեղեցականներն իրենց սպասավորությունը միշտ ընկալել, իրականացրել և իրականացնում են որպես ուխտյալ ծառայություն Աստծուն, ազգին և Հայրենիքին:

Միջնադարյան ժամանակաշրջանի ավարտից հետո մինչ այդ Եկեղեցու շուրջը կենտրոնացած հասարակությունն սկսեց ապրել այլ պատկերացումներով ու ընկալումներով: Դա հետևանք էր հատկապես 17-19-րդ դարերում լայն տեղ գտած սկեպտիցիզմի, փիլիսոփայական տարբեր ուղղությունների, աթեիստական ուսմունքների, որոնց տարածումն իր ազդեցությունն ունեցավ մարդկանց մտածելակերպի վրա: Անհրաժեշտ էր հավատացյալներին վերստին զորացնել Քրիստոսի վարդապետության իմացությամբ: Հավատքի հիմնական սկզբունքները, դավանանքը, վարդապետությունն ու ուսուցումները հավատացյալներին սովորեցնելու համար տարբեր Եկեղեցիներ ստեղծեցին Կատեխեզիսներ՝ ուսուցարաններ, նոր բացատրություններով և պարզ շարադրանքով կրոնական գիտելիքներ մատուցելու նպատակով: Հայ իրականության մեջ առկա են մեր Եկեղեցու Սուրբ Հայրերի հիանալի ուսուցումները, որոնք սփռված են նրանց ընդարձակ գրվածքներում, աշխատություններում ու քարոզներում: 19-րդ դարից սկսյալ մի քանի աշխատանքներ են արվել «Քրիստոնեական»ներ կամ հարց ու պատասխանի ձևով այլ գրքույկներ ու գրքեր պատրաստելու՝ կրոնի և Եկեղեցու մասին համառոտ տեղեկություններ ներկայացնելու առավելաբար սկսնակ հավատացյալներին և մանուկներին: Սակայն որքան զարգանում է հասարակությունը, այնքան փոխվում են մարդկային ընկալումներն ու մտածելակերպը, և կարիք է զգացվում միջնադարյան բանաձևումներն ու բացատրությունները վերաշարադրել նոր բառապաշարով՝ նաև նկատի ունենալով տվյալ ժամանակի մարդկանց խնդիրներն ու պահանջները:

Այս նպատակով ձեռնարկեցինք «Քրիստոնեության իսկությունը (գիտելիքներ հավատացյալներին)» խորագրով սույն աշխատությունը, որի պատրաստման աշխատանքները տևեցին հինգ տարուց ավելի: Գրքի բովանդակությունը շարադրված է բավականին մատչելի ձևով՝ համապատասխան նոր ժամանակների մարդու ընկալումներին, աշխարհայացքին, հասկացողությանն ու մտածելակերպին: Այստեղ հոգևոր իրողություններին անդրադարձ է արվում բոլորվին նոր տեսանկյուններով: Նախ տրվում են աստվածաբանական, ապա՝ եկեղեցաբանական գիտելիքներ, որոնց հաջորդում են կյանքի տարբեր ոլորտներին առնչվող և հոգևորի հետ կապ ունեցող իրողությունների բացատրություններ և ուսուցումներ՝ աստվածաշնչյան մեջբերումներով, Սուրբ Հայրերի գրվածքներից, Եկեղեցու պատմությունից քաղված տեղեկություններով: Հայ իրականության մեջ աղանդավորության քայքայիչ գործունեության և Սուրբ Գրքից անտեղյակ մարդկանց մոլորեցնելու մտադրությունները նկատի ունենալով՝ առանձին բաժին է հատկացված աղանդավորական ուսմունքներին ու դրանց հերքմանը: Կան նաև հորդորակներ, որոնց նպատակն է գիտելիք տալով ընթերցողին հորդորել առավել ամրապնդվելու հավատքի և աստվածասիրության մեջ: Նյութը շարադրելիս գործածվել են նաև անտիկ և նորագույն շրջանի նշանավոր փիլիսոփաների կարևոր և հայտնի ստեղծագործություններ, հոգեբանների և ժամանակակից եկեղեցական հեղինակների աշխատություններ: Գրքի բովանդակությունը բաժանված է ըստ թեմաների՝ համապատասխան վերնագրերով ու ենթավերնագրերով: Այս գրքի ընթերցման մի քանի ձև կարող է լինել: Կարելի է գիրքն ընթերցել սկզբից մյուս սովորական գրքերի նման: Բայց կարելի է նաև ընթերցումը սկսել հետաքրքրող բաժնից՝ դրա վերնագրի և ենթավերնագրերի դիտարկումով: Ինչպես նաև օգտակար կլինի որևէ հարցի վերաբերյալ համապատասխան վերնագրերի ներքո տրվող նյութն ընթերցելը, որի համար գրքի վերջում տրված է բովանդակության այբբենական կարգը՝ հետաքրքրող թեման հեշտությամբ գտնելու համար:

Իմ սրտի մեծ ցանկությունն է այս աշխատությունը որդիական ջերմ սիրով և խոնարհումով նվիրել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 60-ամյակին: Համայն հայ ժողովրդի հանդեպ Վեհափառ Հայրապետի հայրական հոգատարությամբ, Նորին Սրբության եռանդուն առաքելությամբ այսօր զարթոնք է ապրում մեր Սուրբ Եկեղեցին, հայ իրականության մեջ արձանագրվել են բազում ձեռքբերումներ, և առավել վառ է հավատքը, հավատարմությունը մեր սրբազան արժեքներին: Հայոց Հովվապետի հավատարիմ հոտը մշտապես աղոթում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջ արևշատության ու երկարամյա,

բազմարդյուն գահակալության համար և վստահ է, որ Հայրապետի քաջակորով ջանքերով մշտապես հավելվելու է փառքն ու պայծառությունը մեր Սուրբ Եկեղեցու:

Խորին հարգանքով ցանկանում եմ նաև իմ երախտագիտությունը հայտնել հարգարժան Մելքոնյան եղբայրներին՝ Տաշիրի Մեծավան գյուղից, ովքեր պատրաստակամությամբ հանձն առան աստվածահաճո բարերարությամբ հովանավորել «Քրիստոնեության իսկությունը» գրքի հրատարակությունը և իրենց բարի գործերին ավելացնել ևս մեկ նախաձեռնություն՝ ի սեր Հայ Եկեղեցու և Քրիստոսասեր մեր ժողովրդի: Աստծո օրհնությունն ու բարիքներն ենք մաղթում սիրելի բարերարներին և աղոթում, որ Տերը հաջողություններ պարգևի նրանց գործունեությանը, եկեղեցանպաստ նոր ձեռնարկների իրականացմանը:

Եղբայրական սիրով իմ շնորհակալությունն եմ հայտնում Հոգեշնորհ Տ. Զարեհ վարդապետ Կաբաղյանին գրքի վերջնական խմբագրման և հրատարակության պատրաստման գործում իր կարևոր խորհուրդների և օգտակարության համար:

Լիահույս ենք, որ «Քրիստոնեության իսկությունը» գիրքը օգտակար կլինի ընթերցողներին՝ զորացնելու կրոնական գիտելիքները, նորովի մտածելու Աստծո, քրիստոնեության, Եկեղեցու և մարդկային կյանքի ու հավիտենության մասին:

Ադամ քահանա Մակարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ 24
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆԸ 25
ՔՐԻՍՏՈՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ 27
ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 30
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԱՊԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ 32
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՏԱՍՎԵԼԸ 33
ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀԸ ԵՎ ԻՋՆԵԼԸ ԴԺՈՒՔ 33
ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ 34

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՇԱՄԱԿԸ 37
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԳԵԼՔԸ 37
ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ 38
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 39
ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՎԱԾ ԵՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ 41
ՔՐԻՍՏՈՍԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐ 42

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 44
ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԷՋՔԸ 45
ԿՐԿԻՆ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ 45
ՇՆՈՐՀՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ 46

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 47
ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵԿՈՒԹՅՈՒՆԸ 48

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ 49
ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏԱՐԻՔԸ 50
ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ 50
ԿՈՒՅՍ ԵՎ ՄԱՅՐ 51
ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆ 52
ԻՐԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ 53
ԿՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 54

ԽԱՉ

ԽԱՉԻ ՄԱՍԻՆ 55
ԳՅՈՒՏ ԽԱՉԻ 56
ԽԱՉԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ 57
ԱՆՁՆԱԿԱՆ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ 58
ԿԵՆԱՑ ԾԱՌ 59
ԽԱՉԻ ՆՇԱՆԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ 59

ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՆԱԽՕՐԻՆԱԿՆԵՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ 61
ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ 62
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ 62
ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐ 64

ԵԿԵՂԵՑԻ

ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑԻՆ 64
ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ 66
ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 67
ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՁՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ 69
ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ 71
ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ 73
ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՎԱՅՐ 75
ՀԻՆ ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ 77
ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 77
ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ 80

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 80
ՀԱՅՐԵՐ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ 81
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 83
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԵՐԸ 84
ԵԿԵՂԵՑԻ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 85
ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 87
ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 89
ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ 89

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ 91
ԱՂՈԹՔ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 91
ՃՇՄԱՐԻՏ ԵՎ ԻՆՔՆԱԿՈՉ ՔԱՀԱՆԱ 92
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ 93
ՊԱՏԻԺ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ 93

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԳԵՍՏՆԵՐ 94
ՔԱՀԱՆԱ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 94

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 95
ՃԳՆԱՎՈՐ, ՔԱՀԱՆԱ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ 97
ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՐՔԵՐ 99
ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՐ 100

ՀԱՅՈՑ ԱՌԱՔԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ 101
ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 101
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ ԿԱՄ
ՀՈԳԻՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ 102
ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ 104
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ 104
ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ 105

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

ՍՐԲՈՒԹՅԱՆ ՁԳՏՈՒՄ 105
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԽՈՀԱՆՈՑԻՑ ԴՈՒՐՍ 106
ՍՐԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ 106
ՍՐԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՐԲԵՐ 106
ՍՐԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐԲՆԱԿԱՆԻ ԸՆԿԱԼՈՒՄ 107
ՀԱՎԱՏՔ ԵՎ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ 108

ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԵՐ ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ 109
ԻՆՔՆԱՄԵԾԱՐՈՒՄ 109
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 109
ՀԵԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ 111
ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ 112
ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԾՈՒՂԱԿԸ 112
ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ ՄԵԿԴ ՄՅՈՒՍԻՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀԱՄԱՐԵՑԵՔ 113

ՓԱՌՔԻ ԵՎ ՓԱՌԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 113
ՓԱՌՔ ԵՎ ՊԱՏԻՎ 114

ՀԱՎԱՏՔ

ՀԱՎԱՏՔԻ ԶԳԱՑՈՒՄԸ 115
ԱՆԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ 116
ԱՆՀԱՎԱՏԻ ԿՐՈՆԸ 117
ՀԱՎԱՏԱԼ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ 117

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԱՄՔ

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ 118
ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ԱԶԱՏ ԿԱՄՔ 119
ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ 121
ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 122
ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՀ 123
ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ, ՍԿԻԶԲ ԵՎ ՎԵՐՋ 123

ՀՐԱՇՔՆԵՐ

ՀՐԱՇՔԻ ՍԿԻԶԲԸ 124
ՀԱՎԱՏ ՀՐԱՇՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ 124
ՀՐԱՇՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ 125
ՀՐԱՇՔԻ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻՑ 126
ՀՐԱՇՔԻ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 126
ՀՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԵՆ 127
ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԸ 128
ՍՐԲԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ 128
ԵԹԵ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՌԱՆՑ ՀՐԱՇՔԻ 129
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿՐՈՆ 129
ՀՐԱՇՔՆԵՐ, ԱՂԵՏՆԵՐ, ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 130
ՀՐԱՇՔՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ՉԵՆ 132
ՀՐԱՇՔ ԱՌԱՆՑ ՀԱՎԱՏՔԻ 133
ՄԵՆՔ՝ ՀՐԱՇԱԳՈՐԾՆԵՐ 133

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ԱՂՈԹՔ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ 134
ԱՂՈԹՔ ԵՎ ԲԺՇԿՈՒՄ 134
ԱՌՈՂՋՆԵՐԻՆ ԲԺԻՇԿՆԵՐ ՊԵՏՔ ՉԵՆ 136
ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 137
ԱՌՈՂՋԱՑՈՒՄ ՀՈԳԵՎՈՐՈՎ 137
ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 138
ԱՆԴԱՄՆԵՐ ՄԵԿ ՄԱՐՄՆԻ 138

ԱՂՈԹՔ

ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ 139
ԱՂՈԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ 140
ԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ԱՂՈԹԵՑԵՔ 140
ԻՆՉՈՒ՞ ԱՂՈԹԵՆՔ 140
ԱՂՈԹՔԻ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՄՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ 140
ՄԵԾ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ 141
ՀԱՆՈՒՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ 142

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ 142
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՀԱՄԱՐՀՈՒՄ 143
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՄԽԻԹԱՐԻՉ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ 145
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՆԴԵՊ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ 145

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ

ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ 146
ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 147
ԱՐԻՍՏՈԿՐԱՏ ԴԱՌՆԱԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ 148
ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ 148

ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ 149
ՊՐՈՄԵԹԵՎՍ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ 151
ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է 152

ՊԱՀՔ

ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ 153
ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՀՔ 154
ՊԱՀՔ, ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՈՒՆ ԵՎ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ 154
ԱՂՈԹՔԸ ՊԱՀՔԻՑ ԵՎ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՎԵԼ 155
ԱՌԱՁԱՎՈՐԱՑ ՊԱՀՔ 155
ՊԱՀՔ ԿԱՄ ԴԻԵՏԱ 155
ՊԱՀՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 156
ՊԱՀՈՑ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 157
ՀԻՍՆԱԿԱՑ ՊԱՀՔ ԵՎ ԲՈՒԴԱՅԱԿԱՆ ՊԱՀԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ 158
ԽՄԻՉՔ ԵՎ ԽՆՁՈՒՅՔ 160
ՊԱՀՔ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒԹՈՒՆ 160
ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 162
ՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ 162

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԻՐԱԿԻՆԵՐ

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ 163
ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ 165
ԿՐԿԻՆ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ 166
ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ 167
ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ 169
ԿՐԿԻՆ ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ 170
ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ 172
ԿՐԿԻՆ ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ 174
ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻ 175
ԾԱՂԿԱԶԱՐԴ 177

ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՏՐՏՈՒՆՁԻ ՓՈԽԱՐԵՆ 178
ՄԵԾ ԶՈՀՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 179
ՆԵՂՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 179
ՆԵՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԼԻՈՒԹՅՈՒՆ 180
ՆԵՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 181

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՕՐԻՆԱԿՈՎ 181
ԿՅԱՆՔԻՑ ԷԼ ԱՎԵԼԻ 182

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԶՐԿՈՒՄՈՎ 182
ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 183
ԿՐԿԻՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԻ ՄԱՍԻՆ 184
ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ 185
ՀԱՑԻ ԽՆԴԻՐ 185
ԱՆՇԱՀԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ 187
ՀՈԳԵՎՈՐ ԿԵՐԱԿՈՒՐ 187
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ 188
ՏՆԵՐԻ ՉԱՓՍԵՐԸ 190
ՀՐԱԺԱՐՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՉԻՑ 190
ՊԱՅՔԱՐ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ 191

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 192
ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՐԴՅՈՒՆՔ .....
193
ԴՐԱԽՏ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ 193
ԿՐԿԻՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 195
ՉԱՐԻՔ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ 196

ՄԱՀ

ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ 197
ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀ 197
ԿՐԿԻՆ ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ 199
ԲԵԹՂԵՀԵՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ 200
ՄԵՌՆԵԼԸ ՇԱՀ Է 201
ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒ ՄԱՀՎԱՆ ՀԱՄԱՐ 203
ՄԱՀՎԱՆ ՊԱՏԻԺԸ 204
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՏՈՒՄ 205
ՎՇՏԻ ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 205

ԱՌԱՔԻՆԻ ՄԱՀ 206
ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՆՆՁԵՑՅԱԼԻ 206
ՀԱՆՈՒՆ ՆՆՁԵՑՅԱԼՆԵՐԻ 207
ԱՂՈԹՔ ՆՆՁԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ 207
ԳԵՐԵԶՄԱՆ ԳՆԱԼԸ 208
ԱՅԳԱԼՈՒՑ 208
ԵՐՐՈՐԴ ՕՐ 209
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ 209
ՅՈԹՆԵՐՈՐԴ ՕՐ 209
ՍԱՐՍԱՓ ՄԱՀԻՑ ԵՎ ՄԵՌԱԾՆԵՐԻՑ 210
ՄԵՌԱԾՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ 211

ԵՂԵՌՆ

ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ 212
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏՔԸ 213

ՀՈԳԻ

ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ .....
214
ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ 214
ՀՈԳՈՒ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 216

ՎԱՐԴԱՆԱՆՔ

ՆԵՐԲՈՂՅԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ 218
ՎԱՐԴԱՆԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ 218
[illegible] 218
[illegible] 219
ԱՖՈՐԻԶՄ 219
ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎԸ 219
ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԶՈՀՈՂՈՒԹՅՈՒՆ 220

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 221

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 221
ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ 223
ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 224
ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐ ԵՎ ՎԱՅՐԻ ՑԵՂԵՐ 224
ՍՈՒՐԲ ԶԻՆՎՈՐՆԵՐ 226

ՍԱՏԱՆԻԶՄ

ՍԱՏԱՆԱՅԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ 227
ՍԱՏԱՆԱՅԻ ԵՎ 666-Ի ՄԱՍԻՆ 228
ՉԱՐԻ ՄԱՍԻՆ 231
ԳՈՒՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 232
ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ 233
ՄՈԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԽԱՐԴՈՒԹՅՈՒՆ 234
ԹՈՒՂԹՈՒԳՐԻ ՄԱՍԻՆ 235
Ո՞ՐՆ Է ՃՇՄԱՐԻՏ ԿՐՈՆԸ 236
ՃՇՄԱՐԻՏ ԿՐՈՆԸ 237

ԱՂԱՆԴՆԵՐ

ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐ 242
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՁԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ 243
ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ 244
ԻՆՔՆԱՍՏՎԱԾԱՑՈՒՄ 245
ՓԱՌԱԶՐԿՈՒՄ 246
ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 246
ՆԶՈՎՔԻ ՏԱԿ 247
ԻՄԱՆԱԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ 247
ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ 248
ԴԻՎԱԿԱՆ ՏԵՍԻԼՔՆԵՐ 249
ԱՂԱՆԴՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 250
ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ 250
ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԱՂԱՆԴՆԵՐԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ 251
ԻՄ ՏՈՒՆԸ ԱՂՈԹՔԻ ՏՈՒՆ ՊԻՏԻ ԿՈՉՎԻ 254
ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ 255
ԼԵԶՎԱԽՈՍԱԿԱՆ ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ 256
ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ 258
ՏԻՐՈՋԸ ՊԱՏԿԱՆՈՂՆԵՐԸ 259

ՄՈԳԵՐԸ

ԲԵԹՂԵՀԵՄՅԱՆ ԱՍՏՂԻ ՄԱՍԻՆ 259
ԲԵԹՂԵՀԵՄՅԱՆ ԱՍՏՂԸ ԵՎ ՄՈԳԵՐԸ 260
ՄՈԳԵՐԻ ԸՆԾԱՆԵՐԸ 261
ՄՈԳԵՐԻ ԵՎ ՀՈՎԻՎՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ 262

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 262
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 263
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՏՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 265
ՄՈՎՍԵՍՆԵՐ ԵՎ ՔՐԻՍՏՈՍՆԵՐ 266

ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄԱՏԱՆԻ 267
ՓԵՍԱՅԻ ԱՋ ՁԵՌՔՈՎ ՀԱՐՍԻ ԱՋ ՁԵՌՔԸ
ԲՈՆԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ 267
ՊՍԱԿԻ ԶԳԵՍՏՆԵՐ 268
ՅՈԹ ՕՐ ՅՈԹ ԳԻՇԵՐ ՀԱՐՍԱՆԻՔ ԱՐԻՆ 269

ԾԻՍԱԿԱՆ

ԾԵՍ ԵՎ ԾԻՍԱԿԱՆ ԳՐՔԵՐ 269
ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 271
ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ Ի ԴԵՄՍ 271
ԺԱՄԱԳՐՔԻ ՔԱՐՈԶՆԵՐԻ ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ 272
ՈՐՔԱՆ ՀԵՌՈՒ Է ԱՐԵՎԵԼՔՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ 273
ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ 273
ՆԱԽԱՏՈՆԱԿ 274
ՃՐԱԳԱԼՈՒՅՑ 274

ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԺՈՂՈՎՆԵՐ 275
ԽԱՉՎԱՌ 276
ԾԱՂԿԱԶԱՐԴ 277
ԴՈՆԲԱՑԵՔ 277
ԱՎԱԳ ՇԱԲԱԹ 278
ԾԵՍԻ ԼԵԶՈՒՆ 280
ԿՐԿԻՆ ԾԻՍԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 282

ՔԱՐՈԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՉԱՆՉՐԱԼԻ ՔԱՐՈԶՆԵՐ 283
ՔԱՐՈԶՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ 284
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐ 285

ՆՈՐ ՏԱՐԻ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ 286
ՉՄԵՌ ՊԱՊ ԿԱՄ ՍԱՆՏԱ ԿԼԱՈՒՍ 287
ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՄՍԱԹԻՎՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ 287
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐ 289

ՀՈՐԴՈՐԱԿՆԵՐ

ՀՐԱԺԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՑ 289
ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՉԵՎԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ 290
ԺԱՄԱՆԱԿ ՀՈԳԵՎՈՐԻ ՀԱՄԱՐ 291
ԱՍՏՎԱԾԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 292
ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՎԱԾՍԻՐՈՒԹՅՈՒՆ 293
ԿՇԵՌՔ ԵՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ 294
ԳԱՅԹԱԿՂԻՉ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ 294
ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ 296
ՍԻՐԵՑԵՔ ՉԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ 297
ՄՈՒՍՈՒԼՄԱՆՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ 297
ԴԱՏԱՍՏԱՆ 299
ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ 299
ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՅԵՆԻՆ 300
ՈԳՈՒ ՍՈՎ 301
ԱԶԱՏՈՒՄ ՄԵՂՔԵՐԻՑ 302

ՃՇՄԱՐԻՏ ԿՅԱՆՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ 302
ԿԵՆՍԱԿԵՐՊ 303
ՍԵՓԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ 303
ՍԻՐՈ ՏՈՆ 303
ՏՆՕՐՀՆԵՔ 306
ՇՆՈՐՀՆԵՐԸ՝ ՁՐԻԱԲԱՐ 306
ՇԱՐԺՈՒՄ ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ 307

ԱՅԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ 307
ՄԱՍՆԱՏՎՈՂ ԱՆՄԱՍՆԱՏԵԼԻՆ 308
ՀԱՐՈՒՑՅԱԼՆԵՐԻՑ ԱՌԱՁԻՆԸ 309
ԱՐԵԳԱԿԻ ԽԱՎԱՐՈՒՄ 309
ՄԻՖՈՍ ԵՎ ԼՈԳՈՍ 310
ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՈՐՈՇՈՒՄ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ 311
ԹԵԻԶՄ, ԴԵԻԶՄ ԵՎ ԱՆԹՐՈՊՈՄՈՐՖԻԶՄ 312
ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ 313
ԴԱՎԱՆԱՆՔ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 314
ԳԻՏԵԼԻՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ 316
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԵՑ ԿՈԱՊԱՇՏՈՒԹՅԱՆԸ 316
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍԵՐԸ 317
ՄԱՐԴԸ 318
ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐՈՎ 318
ՀՈԳԵՎՈՐԸ ԵՎ ՄԱՐՄՆԱՎՈՐԸ 319
ՓԱՌԱՎՈՐՈՒՄ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 320
ԿԱՄՔ, ՀԱՃՈՒՅՔ ԵՎ ԿՐՔԵՐ 320
ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՃՈՒՅՔ 322
ԿՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ 324
ՀԱՅԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 325
ԱՍՏՎԱԾՆԵՐ 325
«ԱՍՏՎԱԾ» ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 326
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅՐ ԿԱՄ
ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ 326
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՐ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ 329
ՇՆՈՐՀ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ 331
ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ 333
ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԸ 335

ԿՐԿԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ 336
ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԵՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԸ 337
ՉԱՐ ՈԳԻՆԵՐ ԵՎ ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐ 338
ՀՈԲԻ ԽՈՍՔԵՐԻՑ 339
ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՎ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ 340
ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ 342
ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ
ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ 343
ՁԱՐՄԱՆԱԼԻ ՍՐԲԱՑՈՒՄՆԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ 344
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ 346
ԱՅԼ ԿՐՈՆԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 347
ՕՐՀՆՎԱԾ ՁՈՒՐ 348
ԱԲԳԱՐ ԹԱԳԱՎՈՐ 349
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ, ՀԱՅՏՆԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ ՍՐԲԵՐԻ ՏՈՆԸ 351
ԿԱՏԱՐՅԱԼ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ 351
ԿՇԵՌՔ ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 352
ՀԻՆԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ 352
ՀՐԵԱ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ 353
ԿՐՈՆԱԿԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ 354
ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ 355
ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 356
ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՏՈՆԻ ՄՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 357
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ 358
ԱՌԱՏԱՋԵՌՆՈՒԹՅՈՒՆ 359
ՄԱՏԱՂ 360
ՁԱՏԿԱԿԱՆ ՁՈՒ 361
ԵՐԱՁՆԵՐԻ ՄԱՍԻՆ 362
ՈՐԴԵԾՆՈՒԹՅՈՒՆ 363
ՊԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 364
ՀՍԿԱՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ 366
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԽՈՍՆԵՐԸ 367
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ 367
ԱՍՏՎԱԾԱՑՈՒՄ 368
ԿԻՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ 368
ԴՐԱԽՏ ԿԱՄ ԿՅԱՆՔԻ ԲԱՐԵԿԵՑԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ 369
ԱՐԳԵԼՎԱԾ ՊՏՈՒՂԸ 371
ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ 372
ՁԳԵՍՏԻ ՆՊԱՏԱԿԸ 373

ԱԶԳԱՆ/ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 374
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ 375
ԼԵԶՈՒՆ ԶՍՊԵԼՈՒ ԵՎ ՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 375
ՇՐՋԱՊԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 377
ԱՔԱՂԱՂԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ 377
ԴԱՐԻ ԽԵՂԿԱՏԱԿՆԵՐԸ 378
ՀԱՂԹԵԼՈՒ ՎԾՈՒԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 379

ՔԱՐՈԶՆԵՐ

«ԿԱ ԺԱՄԱՆԱԿ ԾՆՎԵԼՈՒ ԵՎ
ԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՄԵՌՆԵԼՈՒ» (ԺՈՂ. 3.2) 379
«ԱՀԱ ՄԵՆՔ ԹՈՂԵՑԻՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ ԵՎ ԵԿԱՆՔ ՔՈ ԵՏԵՎԻՑ,
ՄԵՆՔ Ի՞ՆՉ ԿՈՒՆԵՆԱՆՔ» (ՄԱՏԹ. 19.27) 382
«ՄԱՐՄՆԻ ՃՐԱԳԸ ԱՉՔՆ Է» (ՄԱՏԹ. 6.22) 385
«ԾԱՌԱ ՉԵՍ, ԱՅԼ՝ ՈՐԴԻ, ԵՎ ԵԹԵ ՈՐԴԻ ԵՍ, ԱՊԱ ԵՎ՝
ԺԱՌԱՆԳ ԱՍՏԾՈ» (ԳԱՂ. 4.7) 389

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հունվարի 6-ին մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնն է: Հիսուս Քրիստոսի Ծննդյան պատմությունը բոլորս էլ գիտենք, սակայն մի քանի մանրամասներ կարող են մեզ համար ավելի ընկալելի դարձնել այս հրաշալի իրադարձությունը: Երբ Գաբրիել հրեշտակը Մարիամին հայտնեց Հիսուս Քրիստոսի Ծննդյան մասին, նա հարցրեց. «Ինչպե՞ս այդ կպատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»: Աստված ընտրել էր ամենախոնարհ և ամենահեզ, ամենաառաքինի և Տիրոջը ամենահավատարիմ կնոջը, և Սուրբ Կույսի այս հարցը ոչ թե թերահավատությունից էր, այլ ճշմարտությունն իմանալու համար էր: Եվ հրեշտակի բացատրությունը լսելուց հետո Սուրբ Մարիամն ասաց. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը» (Ղուկ. 1.30-38): Այսօր, ցավոք, կան մարդիկ, ովքեր այս հարցը տալիս են առաջին հերթին թերահավատությամբ և երբեմն էլ ծաղրանքով. «Ինչպե՞ս կարող է կույսը որդի ունենալ»: Աստված միշտ նախապատրաստել է մարդկանց այսպիսի մեծ իրադարձությունների և հրաշքների, որպեսզի երբ դրանք տեղի ունենան, մարդիկ չընկնեն գայթակղության մեջ: Շատ դեպքեր, որոնք կատարվել են Հին Կտակարանում, նախօրինակը և ստվերն էին այն մեծ իրադարձությունների, որոնք կատարվելու էին Նոր Կտակարանում: Աշխարհի արարման ժամանակ առանց սերմի և առանց աշխատանքի, միայն Աստծո խոսքով երկիրը բույսեր աճեցրեց և պտղաբերեց (Ծնն. 1.11): Ճիշտ նույն կերպ էլ այս դեպքում առանց մարդկային սերմի, միայն Աստծո զորությամբ կույսը հղիացավ և որդի ծնեց:

Քրիստոս ծնվեց Բեթղեհեմում: Ավետարանում այս մասին գրված է, որ երբ Մարիամն ու Հովսեփը Բեթղեհեմ հասան, Մարիամի ծննդաբերելու օրերը լրացան, և նա ծնեց իր անդրանիկ Որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց Նրան ու դրեց մսուրի մեջ (Ղուկ. 2.7): Այն փաստից, որ ծննդաբերության ժամանակ որևէ կողմնակի անձի ներկայություն չի հիշատակվում և նշվում է, որ Աստվածամայրն ինքը մանկանը խանձարուրի մեջ փաթաթեց, Եկեղեցու Հայրերը հետևյալ եզրակացությունն են արել: Աստվածամայրը միայնակ ծնեց իր Որդուն առանց կողմնակի օգնության, և այդ ծննդաբերությունը Սուրբ Կույսի համար չէր ուղեկցվում ծննդաբերող կանանց հատուկ ցավերով: Քրիստոս ծնվեց մսուրի մեջ՝ քարայրում: Այդ քարայրի վրա հետագայում Հեղինե թագուհին Աստվածածնի պատվին տաճար կառուցեց:

Որոշ Եկեղեցիներում Քրիստոսի Ծնունդը տոնում են դեկտեմբերի 25-ին: Այս տարբեր ամսաթվերի գոյության պատճառը հետևյալն է: Նախկինում Սուրբ Ծննդյան և Մկրտության տոները միասին էին տոնում՝ հունվարի 6-ին, բայց հետո դա փոխվեց Բեթղեհեմի և Հորդանանի՝ միմյանցից հեռու լինելու պատճառով: Հունվարի 6-ին մարդիկ գնում էին ուխտի Քրիստոսի ծննդյան և մկրտության վայրերը, սակայն շատերն ի վիճակի չէին լինում իրենց ուխտը կատարելու՝ նույն օրը երկու վայրերն էլ այցելել չկարողանալու պատճառով: Դրա համար երուսաղեմացիները Ծննդյան տոնը փոխեցին դեկտեմբերի 25-ին: Նաև հեթանոսական ժամանակներում արևին նվիրված տոն կար դեկտեմբերի 25-ին, և մարդիկ այդ օրը, ըստ հաստատված սովորության, տոնախմբություն էին անում: Եվ հեթանոսական տոնախմբությունը քրիստոնեականով փոխարինելու համար Սուրբ Ծննդյան տոնը տեղափոխվեց դեկտեմբերի 25: Իսկ հայ քրիստոնյաները, ինչպես սկզբից սովորեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչից, այդպես էլ պահեցին՝ շարունակելով Փրկչի Ծննդյան և Աստվածահայտնության տոները տոնել ճշգրիտ օրը՝ հունվարի 6-ին:

Աստվածահայտնություն ասելով՝ հիշատակում ենք Փրկչի մկրտությունը: Աստվածահայտնությունն այն է, որ Քրիստոսի մկրտության ժամանակ հայտնվեցին աստվածային երեք Անձերը՝ Սուրբ Հոգին՝ Քրիստոսի վրա աղավնակերպ իջմամբ (Մատթ. 3.16, Մարկ. 1.10, Ղուկ. 3.22), Հայրը՝ ի վերուստ հնչող ձայնով. «Դա է Իմ սիրելի Որդին, որն ունի Իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթ. 3.17, Մարկ. 1.11, Ղուկ. 3.22):

Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով մարդիկ միմյանց ավետիս են տալիս՝ ասելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ», որի պատասխանն է՝ «Օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի»:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆԸ

Մանուկ Հիսուսին ծննդյան ութերորդ օրը տաճարում թլփատեցին և անուն դրեցին (Ղուկ. 2.21): Ըստ հրեական օրենքի՝ ութ օրեկանը լրացած երեխաներին տանում էին տաճար, արու զավակներին թլփատում և անվանակոչում: Թլփատությունը հուշում էր, որ մարդը պետք է հեռու մնա իր մարմնի մեղավոր հաճույքներից և կրքերից. Հին Կտակարանի մարդը նախ մարմնականին վերաբերող ըմբռնումների միջոցով պետք է բարձրանար դեպի հոգևորը: Սակայն այժմ, երբ Նոր Կտակարանի ժամանակներում մենք ունենք սրտի թլփատությունը, այսինքն՝ այն գիտակցությունը, որ պետք է հրաժարվենք մեղավոր ու ստոր հաճույքներից, այլևս կարիք չունենք մարմնավոր թլփատության, ինչպես որ ուսուցանում է Պողոս առաքյալը՝ հիմնվելով մարգարեի խոսքերի վրա, թե՝ ձեր սրտի անթլփա-

տությո՛ւնը թլփատեցեք (Հռ. 2.29, Երեմ. 4.4): Ավետարանում գրված է, որ մանկացյալ Աստվածորդուն կոչեցին Հիսուս, ինչպես, որ պատվիրել էր հրեշտակը (Մատթ. 1.21): *Հիսուս* անունը հրեական *Հեսու* անվան հունարեն տարբերակն է: Հեսու անունով Հին Կտակարանից հայտնի է հրեաների ամենամեծ գործիչներից մեկը՝ Նավեի որդի Հեսուն: Նրա սկզբնական անունն էր Օսեա, որը նշանակում է ազատություն: Նա քանանացիների երկիր ուղարկված հետախույզներից էր (Թվեր 13.9), Մովսեսի կողմից ընտրվել էր իբրև իր օգնականը: Հետագայում աստվածային հայտնությամբ Մովսեսն իմացավ, որ Հեսուն է հաջորդելու իրեն և նա պետք է հրեաներին առաջնորդի ավետյաց երկիր: Եվ Մովսեսն անվանափոխեց իր օգնականին (Թվեր 13.17)՝ նրա Օսիա կամ Օսեա անվանն ավելացնելով Աստծո Եհովա անունը, որով առաջացավ Հեսու անունը կամ եբրայական ավելի ճիշտ արտասանությամբ՝ Հեշուա, որ նշանակում է *Տերը փրկում է:* Իսկ *Քրիստոս* նշանակում է *օծյալ*: Հետևաբար Տիրոջ Հիսուս Քրիստոս անունը ևս ցույց տալիս, որ Նա է օծյալ Փրկիչը համայն մարդկության: Եկեղեցական հեղինակները նմանություն են տեսնում Հիսուս Քիստոսի և Հեսուի միջև: Ըստ նրանց՝ Հեսուի առաջնորդությամբ հրեաների մուտքը ավետյաց երկիր խորհրդանշում էր Քրիստոսի առաջնորդությամբ հավատացյալների մուտքը Երկնքի Արքայություն:

Մեր Եկեղեցու աստվածաբան հեղինակներից Կաթողիկոս Ղազար Ձահկեցին հատուկ ուշադրություն է հրավիրում Տիրոջ անվան արտասանության վրա: Նա գրում է, որ մեր Եկեղեցու վարդապետության համաձայն՝ չի կարելի Փրկչին կոչել միայն Հիսուս անունով, որովհետև այդ անունը գործածվում է նաև հասարակ մարդկանց համար: Այս անունը կարող են ունենալ նաև սովորական ավազակները, և մենք պետք է հատուկ ձևով գործածենք *Հիսուս* անունը՝ ցույց տալու համար նրա աստվածությունը կամ տարբերությունը սովորական մարդկանցից: Սա շատ լավ երևում է հատկապես Պիղատոսի խոսքերից. «Այս երկուսից որի՞ն էք ուզում, որ ձեզ համար արձակեմ. Հեսու Բարաբբայի՞ն, թէ՞ Հիսուսին՝ Քրիստոս կոչվածին» (Մատթ. 27.17): Զարմանալի է, բայց զուգադիպությամբ Քրիստոսի փոխարեն ազատ արձակվող ավազակ Բարաբբայի անունը ևս Հեսու-Հիսուս էր: Ինչպես նաև Բարաբբայի անվան նմանությունը Տիրոջ անվանը երևում է ավազակի անվան թարգմանությունից: Եբրայերենում *բար* նշանակում է որդի, իսկ *աբբա՝* հայր, հետևաբար, Բարաբբա թարգմանվում է հոր որդի, և Քրիստոս ևս ճանաչվում է որպես Բարձրյալ Հոր Որդի:

Հիսուս անունը Տիրոջ համար պարզ մարդկային ձևով օգտագործում են հատկապես Քրիստոսի անձի մեջ երկու բնություն դավանող քաղկեդոնական վարդապետության հետևորդները՝ կաթոլիկները, ուղղափառ-

ները, բողոքականները, որովհետև նրանց համար արտառոց ոչինչ չկա Փրկչին սովորական մարդու պես կոչելու մեջ: Նրանց վարդապետության համաձայն՝ Քրիստոս ունի երկու բնություն՝ մարդկային և աստվածային, և *Հիսուս* մարդկային անունով ակնարկվում է մարդկային բնությունը: Ղազար Զահկեցին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու քրիստոսաբանության վրա հիմնվելով, սովորեցնում է, որ պետք է անպայման ասենք Տեր Հիսուս կամ Հիսուս Փրկիչ կամ Հիսուս Քրիստոս՝ շեշտելու համար, որ Քրիստոս մարդ է, միաժամանակ նաև՝ Աստված:

Ցավոք, այսօր մի արատավոր երևույթ է տարածված մեր ժողովրդի մեջ: Շատեր, իբրև զարմանքի կամ բացականչության նշան, անփութությամբ օգտագործում են Տիրոջ անունը: Օրինակ՝ երբ մեկն ինչ-որ բանից զարմանում է կամ որևէ երևույթից ազդված պետք է բացականչի, ասում է՝ Հիսո՜ւս Քրիստոս կամ Հիսուս քեզ Քրիստոս: Ոմանք էլ նման դեպքերում ավելին՝ աղավաղված ձևով են ասում՝ Իսո՜ս: Սա հավանաբար առաջացել է բարեպաշտական սովորությունից, որով դժվարության մեջ հայտնվելիս օգնության համար Քրիստոսի անունն են կանչում: Սակայն մարդկային չապաշխարած մեղքերի հետ միասին Աստված շատ մեծ խստությամբ պիտի դատապարտի և պիտի պատժի մեր Տիրոջ անունն այսպես անփութությամբ կամ աղավաղված ձևով գործածելու համար:

ՔՐԻՍՏՈՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ

Փետրվարի 14-ին Հայ Առաքելական Եկեղեցին տոնում է Տեառնընդառաջի կամ քառասնօրյա մանուկ Քրիստոսին տաճարին ընծայման տոնը: Փետրվարի 13-ին՝ երեկոյան ժամերգության ավարտին, կատարվում է նախատոնակի արարողություն, որից հետո բոլոր եկեղեցիների բակերում մեծ խարույկ է վառվում: Մեր ժողովրդի մոտ սովորություն է, որպեսզի այդ օրը իրենց տների բակերում ևս խարույկ վառեն, և հատկապես այն տանը, որտեղ նոր նշանվածներ կամ նոր ամուսնացած զույգեր կան, անպայման հետևում են այս գեղեցիկ սովորությանը: Սակայն հաճախ մարդիկ դա անում են առանց իմաստը հասկանալու, և, հետևաբար, նրանց արածը վերածվում է սնոտիապաշտության, մի բան, որ գովելի չէ քրիստոնյաների համար:

Իսկ ինչու՞ ենք Տեառնընդառաջին հուր վառում: Հին Կտակարանի օրենքն ասում էր. «Եթե որևէ կին հղիանա և արու զավակ ծնի, թող նա անմաքուր համարվի յոթ օր: Ութերորդ օրը թող նա թլփատի իր որդուն: Դրանից հետո երեսուներեք օր էլ նա պիտի սպասի, որպեսզի մաքրվի իր արյունը: Նա անմաքուր բանի ձեռք չպիտի տա և սրբարան չպիտի մտնի, մինչև լրանան նրա մաքրվելու օրերը» (Ղևտ. 12.1-5): Այսպիսով,

քառասուն օր հետո, երբ լրացան Սուրբ Աստվածածնի մաքրվելու օրերը, Հովսեփն ու Մարիամը, վերցնելով մանուկ Հիսուսին, եկան Երուսաղեմ: Երբ նրանք մոտեցան տաճարին, արդեն մութ էր, և տաճարի արևելյան դուռը, որ վաղուց ի վեր փակված էր, Տիրոջ մոտենալու պահին ինքնիրեն բացվեց, որով կատարվեց Եզեկիել մարգարեի խոսքը. «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտնի այնտեղով: Այն փակ է լինելու, որովհետև առաջնորդ Իշխանն է ներսում նստելու՝ Տիրոջ առաջ հաց ուտելու համար: Նա մտնելու է դռան կամարի տակի ճանապարհով և նույն ճանապարհով էլ դուրս է գալու» (Եզեկ. 44.1-3): Այսինքն՝ ըստ մարգարեության՝ տաճարի արևելյան դուռը բացվելու էր միայն Իսրայելի Աստծու առջև, և դա այդպես էլ եղավ: Երբ տաճարի արևելյան դուռն ինքնիրեն բացվեց, ճայթմունք եղավ, քաղաքը դղրդաց, ու մարդիկ ընդառաջ եկան տաճար վառվող լույսերով, քանի որ երեկոյի մթնշաղ էր: Եվ քանի որ հայտնի էր արևելյան դռան մասին Եզեկիելի մարգարեությունը, ասացին՝ Տէր էանց ընդ այս դուռնս, Տէր ընդ այս (Տերն անցավ այս դռնով, Տերն այստեղով [անցավ]): Այս խոսքերի գրաբարյան տարբերակի ձևափոխումով առաջացել է ժողովրդի կողմից առավել հաճախ գործածվող *տրնդեզ* բառը: Ոմանք *տրնդեզ* բառը ստուգաբանում են որպես Տէր ընդ մեզ՝ Տերը մեզ հետ է բառերից առաջացած: Նաև Սուրբ Սիմեոն Ծերունին այդ ժամանակ Տիրոջն ընդառաջ եկավ և Նրան իր գիրկն առավ: Եվ տեառնընդառաջ բառը գրաբարից թարգմանաբար նշանակում է Տիրոջն ընդառաջ:

Սիմեոնն այդ ժամանակ 360 տարեկան էր: Ն.Ք. երրորդ դարում Եգիպտոսի Պտղոմեոս Երկրորդ թագավորը (Ն.Ք. 285-246) իր հիմնած Ալեքսանդրյան գրադարանում բազմաթիվ արժեքավոր գրքեր էր հավաքում և հավաքածուն ի թիվս այլ հրեական գրքերի նաև Հին Կտակարանով հարստացնելու համար հրավիրեց յոթանասուներկու իմաստուն հրեաների՝ յուրաքանչյուր ցեղից վեցական անձ, Հին Կտակարանը եբրայերենից հունարեն թարգմանելու համար: Այդ թարգմանիչներից մեկն էր Սիմեոն Ծերունին, ով Եսայու մարգարեության թարգմանության ժամանակ «կույսը պիտի հղիանա և որդի պիտի ծնի» (Եսայի 7.14) նախադասության մեջ *կույս* բառը վրիպակ համարելով՝ այն *կին* բառով փոխարինեց: Բայց երբ ննջեց, նախադասությունը հրաշքով սրբագրվեց ըստ նախնական տարբերակի, և հրեշտակը հայտնեց Սիմեոնին, թե չպիտի մեռնի, մինչև որ այս մարգարեությունն իրականացված չտեսնի: Եվ ինչպես Հովսեփը և Սիմեոն Ծերունին իրենց գիրկն առան Քրիստոսին, այնպես էլ Տեառնընդառաջին հավատացյալները եկեղեցուց վառված մոմեր են տանում իրենց տները՝ մոմը ձեռքում բռնելով որպես Քրստոսի խորհրդանիշ: Ինչպես մոմի մեջ երեք իր կա՝ հուր, մոմի նյութը և պատ-

րույգը, բայց մոմը մեկն է, նույնպես Քրիստոսի մեջ երեք բան կա՝ աստվածությունը՝ որպես հուր, անապական մարմինը՝ որպես մոմի նյութ, և բանական հոգին՝ որպես պատրույգ, որից լուսավորվեցին բոլոր արարածները, ինչպես և մարգարեացավ Սիմեոն Ծերունին (Ղուկ. 2.32):

Կրակ վառելու արարողությունն առաջին հայացքից կարծես թե հեթանոսական մի արարողության նման լինի: Սակայն մեր Եկեղեցու սուրբ վարդապետները բացատրում են, որ սա բոլորովին հակառակ է հեթանոսական արարողությանը, որովհետև մենք հուրն ընծայում ենք Աստծուն, իսկ հեթանոսներն այսպիսի արարողությամբ պաշտում էին կրակը և ոչ թե Աստծուն: Կրակը նաև Աստծո ներկայության նշանն է Հին Ուխտում: Տիրոջ հրեշտակը երևաց Մովսեսին մորենու միջից կրակի բոցով (Ելք 3.2): Երբ Իսրայելցիները դուրս եկան Եգիպտոսից, Աստված ցերեկը նրանց առաջնորդում էր ամպի սյունով, որպեսզի ճանապարհ ցույց տա նրանց, իսկ գիշերը՝ հրե սյունով կամ հրեղեն ամպով, որպեսզի գիշեր-ցերեկ նրանք ուղեցույց ունենան (Ելք 13.21, Թվեր 9.15): Նաև Տիրոջ փառքի տեսիլքը բորբոքված կրակի նման իջավ Իսրայելի որդիների առաջ լեռան գագաթին (Ելք 24.17): Մովսես մարգարեն շատ անգամներ հիշեցրեց հրեաներին, որ Տերը կրակի միջից խոսեց նրանց հետ (Բ Օր. 4.12,15,36; 5.4,22-26; 10.4): Մովսեսը նաև հարցրեց հրեաներին. «Մի որևէ ազգ կրակի միջից խոսող կենդանի Աստծու ձայնը լսե՞լ է, ինչպէս դու լսեցիր ու կենդանի մնացիր» (Բ Օր. 4.33): Տեառնընդառաջին կրակ ենք վառում որպես խորհրդանիշ՝ հիշելու համար նաև Քրիստոսի խոսքերը, քանի որ Տերն ասաց. «Ես եմ լույսն աշխարհի» (Հովհ. 8.12), «Երկրի վրա կրակ գցելու եկա. և ինչքա՜ն եմ կամենում, որ արդն իսկ բորբոքված լինի» (Ղուկ. 12.49): Կրակը կործանում է այն, ինչը կարելի է կործանել, իսկ ինչ չի ենթարկվում նրա ուժին, ավելի է սրբում այն և մաքրում: Եվ Քրիստոսի ասած կրակը հոգու ուժն է, որը քանդում է աշխարհի ներկա կառույցը, ոչնչացնում նրանում գտնվող ամեն ապականություն, վերափոխում է աշխարհի էությունը՝ պատրաստելով նոր, հավիտենականի ընդունակ գոյության: Այս իմաստով սա նշանակում է նաև Սուրբ Հոգին, որ հրեղեն լեզուներով իջավ (Գործք 2.3):

Չնայած մեր ժողովրդի մեջ արմատացած սովորության՝ եկեղեցական օրացույցի մեջ նշված է, որ կրակի շուրջը պտտվելը խոտելի է: Շատ մարդիկ պտտվում են կրակի շուրջը և թռչում կրակի վրայով այն մտադրությամբ, որ դա կազատի տարբեր տեսակի ցավերից: Այսպիսի մտադրությունը դատապարտելի է, որովհետև տարբեր աստվածահաճո ցանկությունների համար մենք պետք է աղոթքով դիմենք Աստծուն՝ որպես քրիստոնյաներ, և ոչ թե հույսներս դնենք կրակի վրա՝ որպես հեթանոսներ: Եվ ինչպես որ Տեառնընդառաջի կրակը մենք ընծայում ենք Աստծուն,

այդպես էլ նաև մեր սրտերն ու հոգիներն ընծայենք Տիրոջը և շուտով կհամոզվենք, որ Աստված նույնիսկ մեր փոքրիկ ընծայաբերումներին պատասխանում է մեր անձնական կյանքում հայրական հոգատարությամբ հաստատելով սիրո և երջանկություն ջերմությունը:

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոս Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ լեռ բարձրացավ: Քրիստոս երբեմն Իր հետ վերցնում էր տասներկու աշակերտներից միայն երեքին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին (Մատթ. 17.1; Մարկ. 5.37, 9.1, 14.33; Ղուկ. 9.28): Պետրոսը ամենից շատն էր սիրում Քրիստոսին (Հովհ. 21.15-17), Հակոբոսը առաքյալներից առաջին նահատակը եղավ (Գործք 12.1-2), իսկ Հովհաննեսը Քրիստոսի ամենասիրելի աշակերտն էր (Հովհ. 13.23, 19.26, 21.20): Լեռան վրա Քրիստոս առաքյալների առջև պայծառակերպվեց, նրանց հայտնվեցին Մովսեսն ու Եղիան (Մատթ. 17.1-3, Մարկ. 9.1-3, Ղուկ. 9.28-30): Լուսափայլ պայծառակերպությամբ Քրիստոս ցանկացավ նաև ցույց տալ, թե ինչ փառքից զրկվեց Ադամը: Եվ մինչ Քրիստոս խոսում էր Մովսեսի և Եղիայի հետ, մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ. ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրա՛ն լսեցեք» (Մատթ. 17.5, Մարկ. 9. 6, Ղուկ. 9.35): Առաքյալները զարհուրած երեսի վրա ընկան, իսկ երբ աչքները բարձրացրեցին, Քրիստոսից բացի ոչ ոքի չտեսան: Ըստ ավետարանական այս հատվածի մեկնության՝ Մովսեսը ներկայացնում է օրենքը, իսկ Եղիան՝ մարգարեներին: Պայծառակերպությունից հետո միայն Քրիստոսի երևալը աշակերտներին նշանակում է, որ Քրիստոսն է օրեքի և մարգարեությունների լրումը: Մովսեսը եկավ մեռյալների միջից, իսկ Եղիան, որ չէր մեռել, այլ մարմնով համբարձվել էր (Դ Թագավ. 2.11), եկավ երկնքից, որով և Քրիստոս երևաց որպես Տերը երկրի և երկնքի, Տերը ողջերի և մեռածների: Մովսեսն ու Եղիան տկար լինելով՝ հաղթեցին իրենցից հզորներին, Մովսեսը՝ փարավոնին, Եղիան՝ Աքաաբ թագավորին: Այսպես էլ առաքյալները պիտի հաղթեին բռնակալների ու տիրակալների՝ քրիստոնեությունը տարածելով ամբողջ աշխարհում: Նաև Քրիստոսի մասին ասում էին, թե Եղիան է կամ Մովսեսը, բայց նրանք հայտնվեցին՝ ցույց տալով, որ իրենցից ավելի մեծ է Քրիստոս:

Մուսուլմանները չեն ընդունում Քրիստոսի աստվածությունը, այլ Նրան համարում են մարգարե: Նրանց համոզումն այն է, որ Աստված թույլ չէր տա Իր մարգարեին չարչարվելու և խաչվելու, և Հուդան նույնիսկ հերոսական լույսի ներքո է ներկայանում, քանի որ կարծիք կա, թե Քրիստոսի փոխարեն խաչվեց Հուդան, իսկ Քրիստոս համբարձվեց, և

կամ խաչելությունը ոչ թե ճշմարտապես եղավ, այլ առերևույթ: Եվ Քրիստոսի պայծառակերպությունը որպես աստվածության ցուցադրում, ողջերի և մեռյալների Տեր, օրենքների և մարգարեության լրում ներկայանալը իբրև բացատրություն հաճախ անընդունելի է մուսուլմանների, ինչպես նաև Քրիստոսի աստվածությունը մերժող մյուս աղանդավորների՝ Եհովայի վկաների, մորմոնների և այլոց համար:

Պայծառակերպության տոնը մեր ժողովրդի մեջ ավելի շատ հայտնի է Վարդավառ անունով: Եկեղեցու դեմ պայքարած և աթեիզմի գաղափարախոսությունը տարածած կոմունիզմի շրջանում կրթություն ստացած ազգագրագետները մեր եկեղեցական տոները և դրանց անունները փորձում են ներկայացնել իբրև հեթանոսության մնացուկներ և Վարդավառ անունն էլ նմանատիպ մեկնաբանություններով են բացատրում: Սակայն այդ ազգագրագետները տոների մասին իրենց գրքերում կամ գրքույկներում չեն փորձում ցույց տալ նաև եկեղեցական հեղինակների կարծիքները, ովքեր տոների անուններին բոլորովին այլ բացատրություններ են տալիս: Պայծառակերպության տոնը կոչվում է նաև Վարդավառ, որովհետև Քրիստոս պայծառակերպության ժամանակ վարդի պես բացվեց՝ ցույց տալով Իր աստվածությունը: Վարդի հետ կապված այլ հետաքրքիր բացատրություններ ևս կան: Վարդը փշերի մեջ է բուսնում, այսպես նաև մեր Տերը երևաց հրեաների մեջ, որոնցից և խաչվեց: Վարդը մեծանում է և ապա նոր ծաղկում, այսպես և մեր Տերը կատարյալ հասակի հասնելով, այսինքն՝ երեսնամյա դառնալուց հետո, ցույց տվեց Իր աստվածությունը: Վարդը սրտի համար բժշկական է, այսպես և մեր Տիրոջ Մարմինն ու Արյունը՝ Սուրբ Հաղորդությունը, բժիշկ է հոգիների և քավիչ մեղքերի: Վարդը փոքր և նվաստ տունկերի վրա է լինում, այսպես նաև մեր Տերն է ասում. «Ես ու՞մ եմ նայելու, եթե ոչ հեզերին և խոնարհներին և նրանց, ովքեր դողում են Իմ խոսքից» (Եսայի 66.2): Ահա այսքան իրողությունների հիշեցմամբ Պայծառակերպության տոնը նաև Վարդավառ է կոչվում:

Պայծառակերպությունը տոնում ենք Սուրբ Զատկից ամիսներ անց, չնայած որ ժամանակագրական առումով Քրիստոս պայծառակերպվեց խաչելությունից քառասուն օրեր առաջ: Պատճառն այն է, որ Քրիստոս աշակերտներին հանձնարարեց ոչ ոքի չպատմել այս մասին մինչ Հարությունը (Մատթ. 17.9, Մարկ. 9.8): Եվ միայն գերեզմաններից հարուցյալ մեռյալներին տեսնելով, Սուրբ Հոգուց ստացված զորությամբ առաքյալների՝ մարդկանց հարություն տալը տեսնելով՝ մարդիկ կհավատային, որ Քրիստոս պայծառակերպության ժամանակ երկնքից բերեց Եղիային և հարություն տվեց Մովսեսին:

Վարդավառի օրվա ժողովրդական սովորությունն է միմյանց վրա ջուր ցողելը: Նման սովորություն եղել է նաև հեթանոսության շրջանում, սակայն Վարդավառին ջուր ցողելը չպետք է կապել հեթանոսական արարողությունների հետ, քանզի Պայծառակերպության տոնի օրը միմյանց վրա ջուր ցողելը նաև հիշեցումն է համաշխարհային ջրհեղեղի և Նոյի ընտանիքի փրկության:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԱՊԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Ըստ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետության՝ Քրիստոսի մարմինը անապական էր ինչպես Հարությունից հետո, այնպես էլ Հարությունից առաջ: Գիտենք, որ մեր մարմիններն ապականացու են, և ապականությունն առաջացել է մեղքի պատճառով: Իսկ Քրիստոսի մարմինն անապական է, որովհետև Նա ծնվել է աստվածային զորությամբ միայն մեկ ծնողից, մինչդեռ ապականացու մարդկային մարմինները գոյավորվում են հոր և մոր սերմերից: Երկաբնակները կամ քաղկեդոնականները Քրիստոսի մարմինն ապականացու են ասում՝ նկատի ունենալով նաև երկրային կյանքի ընթացքում մահվան ենթակա լինելը, սակայն այլ է մահը, և այլ է ապականությունը: Մահը հոգու բաժանումն է մարմնից, իսկ ապականությունը բանսարկուից է սերմանվել՝ որպես մահվան հետևանք, քանզի Արարիչն Աստված միայն ստեղծում ու գոյավորման է բերում և ոչ թե եղածը տանում է ապականության: Այսպիսով, կարելի է ասել, որ Քրիստոսի մարմինը չարչարելի է և մահկանացու, սակայն չի կարելի Տիրոջ մարմինն ապականացու ասել, քանզի ապականությունը ոչ թե բնությունից է, այլ մեղքից, իսկ Քրիստոսի մարմինը մեղք չկրեց: Այս իրողությունը նկատի ունենալով՝ նաև Պետրոս առաքյալն է վկայում ըստ սաղմոսի խոսքերի. «Նրա մարմինը ապականություն չտեսավ» (Գործք 2.31, Սաղմ. 15.10):

Ոմանք Քրիստոսի անապական մարմնի վերաբերյալ ճշմարիտ ուսուցմանն ընդդիմանալու համար մատնանշում են Քրիստոսի ուտելը, որն իբր ապականության հետ է կապված: Սակայն Քրիստոս կերավ նաև Հարությունից հետո (Ղուկ. 24.43, Գործք 10.41), և Նրա ուտելը մեր ուտելուց տարբերվում է նրանով, որ Քրիստոս երբեք ավելորդ ծորում չի ունեցել, ինչպես ապականացու մարմինները, քանի որ Քրիստոսի մարմինն անապական է: Մենք ևս անապական, բայց նաև փառավորյալ մարմին ենք ունենալու ընդհանրական հարությունից հետո (Ա Կորնթ. 15.52-54): Փառավորյալ մարմինն ունի չորս հատկություն՝ անապական է, թեթև, թափանցող (այսինքն՝ նյութական արգելքների միջով թափանցելու, անցնելու կարողություն ունեցող), պայծառ: Անապականությունը Քրիստոս

ցույց տվեց վերնատանը, երբ Իր Մարմինը տվեց որպես կերակուր (Մատթ. 26.26-28, Մարկ. 14.22-24, Ղուկ. 22.19-20, Ա Կորնթ. 11.24-25), թեթևությունը, երբ քայլեց ծովի վրայով (Մատթ. 14.25-26, Մարկ. 6.48-49, Հովի. 6.19), պայծառությունը ցույց տվեց Թաբոր լեռան վրա, երբ պայծառակերպվեց (Մատթ. 17.2, Մարկ. 9.1, Ղուկ. 9.29), իսկ թափանցողությունը երևաց այն ժամանակ, երբ Քրիստոս ծնվեց Սուրբ Կույս Մարիամից: Ինչպես որ փակ դռներով Քրիստոս մտավ իր աշակերտների մոտ (Հովի. 20.26), այնպես էլ ծնվեց Սուրբ Կույսից՝ անխախտ թողնելով նրա կուսության կնիքը: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու այս վարդապետությունը մենք պետք է մեր մտքում ունենանք հատկապես նաև այն ժամանակ, երբ մոտենում ենք Սուրբ Հաղորդության՝ հաղորդվելու Քրիստոսի անապական Մարմնին և անապական Արյանը:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՏԱՍՎԵԼԸ

Քրիստոս հարություն տվեց չորս օրվա մահացած Ղազարոսին: Երբ Քրիստոս պետք է Ղազարոսի գերեզմանը գնար, Ավետարանն ասում է, որ... Հիսուս արտասվեց (Հովի. 11.35): Հավանաբար այս դեպքից առաջ ոչ ոք Հիսուս Քրիստոսին արտասվելիս չէր տեսել, որովհետև հրեաներն էլ զարմացած ասում էին. «Տեսեք ինչքան էր սիրում նրան» (Հովի. 11.36): Սուրբ Եփրեմ Ասորին ասում է, որ Քրիստոս արտասվում էր առաջին հերթին ոչ թե Ղազարոսի համար, այլ լալիս էր այն բազում մարդկանց համար, ովքեր ապրում են, սակայն մեռելների հարության օրը հոգով մեռնելու են, այսինքն՝ Աստծուց հեռու են լինելու իրենց երկրավոր կյանքում անհավատության կամ էլ չար գործերի պատճառով:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀԸ ԵՎ ԻՋՆԵԼԸ ԴԺՈԽՔ

Ովքեր ցանկանում էին Քրիստոսին ոչնչացնել, իրենք ոչնչացան: Պիղատոսը ձեռքերը լվաց ու մի կողմ քաշվեց (Մատթ. 27.24): Թափված արդար արյան մեղքից զերծ մնալու համար ձեռքերի լվացումը հաստատված էր հինկտակարանյան օրենքով (Բ Օրինաց 21.6-8): Պիղատոսը հավանաբար ծանոթ լինելով այսպիսի սովորության՝ նման ձևով ցույց տվեց իր անպարտ լինելը արդար արյան հեղումից: Այստեղից առաջացավ *ձեռքերը լվանալ* արտահայտությունը, որը նշանակում է մաս և մասնակցություն չունենալ որևէ գործի: Պիղատոսի կինը, ով երազներով տեսավ, որ Քրիստոս Սուրբ է և Աստված է, համոզում էր ամուսնուն ձեռնպահ մնալ Քրիստոսին մահվան դատապարտելուց (Մատթ. 27.19), իսկ Պիղատոսն անհոգաբար ասում էր, որ եթե Աստված է, միևնույն է, մար-

դիկ չեն կարող վնաս պատճառել, քանզի եթե սպանեն էլ, ապա սպանվածը, Աստված լինելով, հարություն կառնի: Պիղատոսը շատ անօրենություններ էր գործել Երուսաղեմում, որի համար բողոքներ էին եղել կայսերը, և այդ անօրենություններին ավելացավ նաև Քրիստսին մահվան մատնելու առնչությամբ բողոքը: Տիբերիոս կայսերը բողոքողներից մեկն էր ի Քրիստս հավատացած մեր անդրանիկ թագավոր Աբգարը: Եղած բողոքների հիման վրա կայսրը Երուսաղեմից ետ կանչեց Պիղատոսին՝ նրա գործը քննելու: Պիղատոսը հեռացավ Երուսաղեմից, բայց վախենալով, որ գործի քննության ընթացքում խայտառակ կլինի, ինքնասպանություն գործեց՝ իրեն ջրախեղդ անելով: Քրիստոսին մահվան մատնած հրեաները ևս կործանվեցին. հռոմեացիների կողմից հրեական տաճարը հիմնահատակ ավերվեց 70 թ., Երուսաղեմը բռնազավթվեց, բազմաթիվ հրեաներ սպանվեցին և բազումներ գերվեցին: Երուսաղեմի կործանումը քրիստոնյաների կողմից դիտվեց որպես պատիժ հրեաներին՝ Տիրոջը խաչելու համար:

Երբ Քրիստոս խաչի վրա մեռավ, հոգով իջավ դժոխք, ավերեց դժոխքը և ազատեց հոգիներին (Ա Պետ. 3.18-19): Ոմանք կատակով ասում են, թե շատերն են գնացել այն աշխարհ, բայց ոչ ոք այնտեղից ետ չի եկել, որպեսզի պատմի, թե ինչպիսին է հանդերձյալ աշխարհը, կամ արդյո՞ք հանդերձյալ կյանք գոյություն ունի: Սակայն կատակով ասված այս խոսքերը այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը: Մենք դժոխքում կատարվածի մասին իմացել ենք ոչ միայն Պետրոս առաքյալի վկայությամբ, այլև ականատեսների պատմածով: Քրիստոսի՝ դժոխք իջնելուց առաջ դժոխքում լույս ծագեց, և Աստծո հետ անմիջական շփում ունեցած մարդիկ՝ Ադամը, Աբրահամը, Մովսեսը և այլք, ասացին, թե սա Աստծո լույսն է, և բոլորը զարմացած սպասում էին, թե ինչ է լինելու: Այս մասին իմանում ենք ականատեսների պատմածից: Ավետարանիչն ասում է, որ երբ Քրիստոս հոգին ավանդեց, «գերեզմանները բացվեցին, և ննջեցյալ սրբերի բազում մարմիններ հարություն առան ու Նրա հարությունից հետո գերեզմաններից ելնելով՝ մտան սուրբ քաղաքը և շատերին երևացին» (Մատթ. 27.52-53): Ահա հենց նրանք էլ՝ որպես ականատեսներ, պատմեցին դժքում կատարվածի մասին, և նրանց պատմածը հետագայում նաև գրի առնվեց և ավանդվեց սերունդներին:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոսի Հարության դրվագը՝ հանդիպումը յուղաբեր կանանց հետ, կամ էլ նման հրաշալեցուն պատմությունները երբեք չեն կարող երևակայական իրադարձություններ լինել: Երբեմն որոշ գիտնականներ

աստվածաշնչյան պատմություն կամ *աստվածաշնչյան ճշմարտություն* արտահայտությունների փոխարեն գործածում են *աստվածաշնչյան առասպել* արտահայտությունը՝ Քրիստոսի վերաբերյալ պատմությունները համարելով մտացածին, երևակայական: Մինչդեռ երևակայական պատմություններ կարող ենք գտնել հենց գիտության մեջ: Գիտենք, որ գիտությունը միշտ գործ ունի հստակ փաստերի և դրանց ուսումնասիրման հետ: Բայց ահա մարդկության կամ տիեզերքի առաջացման հարցին պատասխանելիս գիտությունը շեղվում է այս սկզբունքից և տեսություններ ստեղծելով՝ դուրս է գալիս իր սահմաններից ու մտնում երևակայության սահմանների մեջ: Սակայն Աստվածաշնչի ճշմարտությունները, հատկապես Քրիստոսի Հարության դրվագը հիմնված են միմիայն ճշգրիտ փաստերի վրա: Դեռ Խորհրդային Միության տարիներին շատ հմուտ կերպով սքողում էին աստվածաշնչյան ճշմարտությունները հաստատող բազում պատմական փաստերը: Բայց այդ ժամանակաշրջանում ստեղծված հսկայական հակակրոնական գրականության հեղինակների շարքում չկա ոչ միայն ակնառու, այլև նույնիսկ շարքային գիտնական: Այդ բոլոր գրքերն էլ պնդում են, որ հատկապես Քրիստոսի Հարության ժխտման համար հիմք է ծառայում Հարության մասին պատմական վկայությունների բացակայությունը: Սակայն իրո՞ք դա այդպես է: Ռուս հայտնի լեզվաբան, ակադեմիկոս Ալեքսանդր Բելեցկին (1884-1961) իր աշխատություններից մեկում ներկայացնում է Քրիստոսի Հարության հետևյալ պատմական ապացույցները: Խորհրդային կոմունիստների իդեալները համարվող Ֆրիդրիխ Էնգելսը և Կարլ Մարքսը Քրիստոսի Հարության փաստը վավերական իրողություն են համարել: Նախ Քրիստոսի Հարության մասին է պատմում Ավետարանում նկարագրված դեպքերի ժամանակակից, հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսը: Նա երբեք էլ Քրիստոսի համակիրը չի եղել, սակայն իբրև պատմիչ՝ սերունդներին հաղորդել է այս դեպքի մասին: Եվ պատմական նոր փաստաթղթերի հայտնաբերումից հետո Էնգելսը հավաստի և վավերական էր համարում պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն հրաշքը՝ Քրիստոսի Հարությունը: Իսկ Կարլ Մարքսն ասում էր. «Հավաստի պատմությունը կարող է գրվել միայն այնպիսի փաստաթղթերի հիման վրա, ինչպիսիք են Հովսեփոս Փլավիոսի երկերը»: Հովսեփոս Փլավիոսն իր «Հրեական հնություններ» գրքում նշում է, որ հրաշքներ գործող և մեծ իմաստության տեր մի մարդ՝ Հիսուս Քրիստոս անունով, եթե միայն կարելի է նրան մարդ անվանել, հրեա առաջնորդների սադրանքով Պիղատոսի կողմից խաչվեց, Քրիստոսի հետևորդները երկմտեցին, բայց Քրիստոս երրորդ օրը նորից կենդանի հայտնվեց նրանց: Հարության հակառակորդները նշում էին, որ Հովսեփոսի պատմության մեջ այս հատվածը հետագա դարերում ավելացվել է

քրիստոնյաների կողմից: Սակայն Հովսեփոսի պատմության ավելի հին երեք բնագրերի հայտնաբերումը ցույց տվեց, որ սույն հատվածն առկա է հնագույն տարբերակներում, և ներկայումս գիտնականներից ոչ ոք չի կիսում այն միտքը, թե Հովսեփոսի պատմության մեջ հետագայում ինչ որ բան է ավելացվել: Հաջորդ պատմիչը հույն Հերմիդիոսն է, ով Հրեաստանի կառավարիչների պաշտոնական կենսագիրն է եղել և գրել է նաև Պիղատոսի կենսագրությունը: Նրա շարադրանքի սկզբունքների և ոճի մասին պատմաբանները շատ լավ գիտեն, որ այս պատմիչն ամեն ինչ պատմել է լուսանկարչական ապարատի ճշգրտությամբ: Նրա վկայություններն արժեքավոր են հատկապես նրանով, որ նա Քրիստոսի Հարության ժամանակ մոտ է գտնվել այդ վայրին, երբ ուղեկցելիս է եղել Պիղատոսի օգնականներից մեկին: Նա հայտնում է, որ գերեզման գնալիս տեղանքը հանկարծակի խիստ լուսավորվել է, ամպրոպի ձայն է լսվել ոչ թե երկնքում, այլ երկրի վրա, ու երբ իրենք մոտեցել են գերեզմանին, թաղված մարդու մարմինն այլևս գերեզմանում չի եղել: Մեկ այլ հետաքրքիր հանգամանք. Քրիստոսի դատավարության ժամանակ Պիղատոսի կինը փորձում էր համոզել իր ամուսնուն Քրիստոսին չդատապարտել, որովհետև Քրիստոսի վերաբերյալ գիշերը երազներ էր տեսել և բավականին ազդված էր դրանցից (Մատթ. 27.19): Իսկ Հերմիդիոսը, որ հակառակ տրամադրվածություն է ունեցել Քրիստոսի հանդեպ, ինչպես ինքն է հաղորդում, համոզել է Պիղատոսի կնոջը, որ նա ետ չպահի ամուսնուն Քրիստոսի առնչությամբ մահվան դատավճիռ կայացնելուց: Քրիստոսի Հարության մասին պահպանված մեկ այլ գրավոր հիշատակության հեղինակը Պիղատոսի մտերիմ բարեկամը և անձնական բժիշկն է՝ իր ժամանակի ականավոր մարդկանցից մեկը, սիրիացի՝ էյշու անունով: Այս հանրահայտ բժիշկը մեծ հեղինակություն էր վայելում Արևելքում, հետո նաև՝ Հռոմում, թողել է բժշկագիտական աշխատություններ, որոնք մեծ նշանակություն են ունեցել գիտության մեջ: Գիտնականները համարում են, որ նա՝ որպես բժիշկ, արժանի տեղ է գրավում Հիպոկրատի, Գալենի կողքին, իսկ որպես կազմախոս՝ Լեոնարդո դա Վինչիի: Պիղատոսի հանձնարարությամբ այս բժիշկն իր հինգ օգնականներով Հարությանը նախորդող երեկոյից գտնվել է Քրիստոսի գերեզմանի մոտ: Իմանալով Քրիստոսի Հարությանը վերաբերող մարգարեությունների մասին՝ բժիշկն ու իր օգնականները դրանով հետաքրքրված էին նաև որպես գիտնականներ: Բայց ահա տեսեք, թե նա ինչ է գրում. «Մենք բոլորովին չէինք հավատում, որ մեռածը կարող է հարություն առնել: Բայց Նա, իրոք, հարություն առավ, և մենք դա տեսանք մեր սեփական աչքերով»: Նշվում են նաև Քրիստոսին ժամանակակից այլ հեղինակների աղբյուրներ, որոնցում խոսվում է Քրիստոսի Հարության մասին՝ Եպիփան Ափրիկեցի, Եվ-

սեբիոս Եգիպտացի, Սարդոնիոս Պանիդոր, Հիպոդիտոս Մակեդոնացի, Ամոն Ալեքսանդրացի, Սաբելին Հույն, Իսահակ Երուսաղեմացի և ուրիշներ: Ճիշտ է խոշորագույն գիտնականներից մեկի այն միտքը, թե Քրիստոսի Հարությունը պատմական հայտնագործությունների այնպիսի հավաստիությամբ է հաստատված, ինչպիսին Իվան Ահեղի և Պետրոս Մեծի գոյությունն է: Եթե ժխտենք Քրիստոսի Հարությունը, ապա պետք է ժխտենք Պիղատոսի, Հուլիոս Կեսարի, Ներոնի, Տրայանոսի, Մարկոս Ավրելիոսի և պատմական շատ այլ անձերի գոյությունը: 20-րդ դարի սկզբի ուսումնասիրությունների համաձայն՝ Քրիստոսի Հարության մասին բոլոր գիտնականների համար միանգամայն հուսալի հեղինակների վկայությունների թիվն անցնում է 230-ից:

Իրեն կասկածանքով վերաբերվող փարիսեցիներին Քրիստոս ասաց՝ Քննեցեք գրքերը (Հովհ. 5.39): Քրիստոնեական հավատքը ոչ թե կույր, այլ գիտակցական և խորը ըմբռնված հավատք է, որովհետև Քրիստոս երբեք դեմ չի լինում, որպեսզի մենք էլ թերահավատության դեպքում Թովմաս առաքյալի նման փոխաբերական իմաստով երբեմն ձեռքներս մտցնենք Նրա կողը և շոշափենք Նրա վերքերը:

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՇԱՄԱԿԸ

Հովհաննես Ավետարանիչը մի հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Քրիստոսի թափուր գերեզմանի վերաբերյալ: Երբ Հովհաննեսը Պետրոսի հետ դատարկ գերեզման է մտնում, տեսնում է, որ վարշամակը, որը Քրիստոսի գլխին էր, առանձին ծալված և դրված է մի կողմում (Հովհ. 20.7): Շատ ուշագրավ է այս տեղեկությունը, քանի որ ծալված վարշամակը շատ այլ փաստերի հետ ցույց է տալիս, որ Քրիստոսի մարմինը չեն գողացել, որովհետև գողը չէր ծալի վարշամակը և խնամքով մի կողմ չէր դնի:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԳԵԼՔԸ

Քրիստոս Հարությունից հետո Մարիամ Մագդաղենացուն արգելեց մոտենալ Իրեն (Հովհ. 20.17): Այս արգելքի մասին մի քանի կարծիքներ կան: Ըստ կարծիքներից մեկի՝ Մարիամը խոնարհությամբ չցանկացավ մոտենալ, ինչպես այլ կանայք, ովքեր Քրիստոսի ոտքերը համբուրեցին (Մատթ. 28.9), այլ հպարտությամբ ցանկացավ այտը համբուրել, իսկ Տերը, կամենալով նրան խոնարհություն ուսուցանել, արգելեց մոտենալ: Ցույց տալու համար, որ այսուհետ միայն տղամարդիկ պետք է պատարագեն՝ դիպչելով Քրիստոսի մարմնին, իսկ կանայք՝ ոչ, Քրիստոս արգե-

լեց Մարիամին Իրեն մոտենալ: Ըստ մեկ այլ կարծիքի՝ Քրիստոս բավական համարեց կանանց տված պատիվը, քանի որ առաջինը նրանց էր մոտեցել ծննդյամբ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Քրիստոսի մարդեղության մասին բոլոր հրեշտակները չէ, որ գիտեին: Եվ երբ Քրիստոս երկինք էր բարձրանում, հրեշտակները միմյանց հարցնում էին, թե ով՞ է արդյոք այս հզորը: Հրեշտակները Քրիստոսին չճանաչեցին, որովհետև Նրա մարմինը ծածկում էր Նրա աստվածությունը: Սուրբ Դիոնիսիոսն ասում է, որ երկնայինները Քրիստոսին չէին համարձակվում հարցնել, որովհետև Նրա տեսքը ահեղ և փառավոր էր: Այս հարցումը և դրան տրված պատասխանը մեզ ներկայացնում է 23-րդ սաղմոսը: Քրիստոսին ուղեկցող հրեշտակներն ասում էին. «Բարձրացրեք իշխաններ ձեր դռները, որպեսզի փառքի արքան ներս մտնի», իսկ Քրիստոսի փրկագործությանը անտեղյակ հրեշտակները հարցնում էին. «Ո՞վ է այս փառքի արքան» և լսում էին պատասխանը, թե այդ արքան Տերն է (Սաղմ. 23.7-10): Այս նույն հարցուպատասխանը կարող ենք լսել նաև Պատարագի ընթացքում: Երբ սարկավագը սկիհը փոխանցում է քահանային, ասում է. «Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից, զի մտցէ Թագաւոր փառաց», իսկ քահանան հարցնում է. «Ո՞վ է սա թագաւոր փառաց, Տէր հզօր զօրութեամբ իւրով, Տէր կարող ի պատերազմի»: Վերջում սարկավագը պատասխանում է՝ սա Ինքն է Թագաւոր փառաց: Այս հարցուպատասխանը կարծես հիշեցնում է Քրիստոսի երկինք մտնելը: Քանի որ Սուրբ Խորանը խորհրդանշում է երկինքը, և Քրիստոս Իր զորությամբ Պատարագի ժամանակ երկնային զորություններով ներկա է Սուրբ Խորանին, և Սուրբ Հոգին սրբագործում է Պատարագի հացն ու գինին՝ Տիրոջ Մարմինն ու Արյունը դարձնելով, ապա շատ պատշաճ է այստեղ այդ սաղմոսն ասելը: Երկիրը կարծես թե անարդարությամբ ավելի ցած է բոլոր տարրերից, և մեր մարմինը պատ-ռաստված է այդ երկրից: Մենք ինքներս միշտ տրորում ենք երկիրը՝ հողը, այն տրորվում է նաև բոլոր կենդանիների կողմից: Սակայն Քրիստոս Իր Համբարձմամբ մեր հողեղեն մարմինը վեր բարձրացրեց: Եվ այսօր, ըստ Սուրբ Գրիգոր Նյուսացու, այս առումով մենք կարող ենք ասել, որ երկիրը նույնիսկ ավելի բարձր է, քան երկինքը:

Ժողովրդական լեզվով Համբարձումը կոչվում է նաև Զան-գյուլումի օր: Սրա հետ կապված ժողովրդական տոնախմբությունը վերաբերում է հատկապես աղջիկներին: Նախկինում՝ Համբարձման տոնին նախորդ չորեքշաբթի օրը, աղջիկները դաշտերից, այգիներից ծաղիկներ էին հա-

վաքում, փնջեր կազմում: Ամենամեծ փունջը խաչաձև էր լինում և կոչվում էր Ծաղկամեր: Աղջիկները մի սափորի մեջ ջուր էին լցնում, և ամեն մեկն իրեն պատկանող մի փոքրիկ առարկա էր գցում այնտեղ: Համբարձման տոնի օրը աղջիկները հավաքվում էին սափորի շուրջը, Ձան-գյուլումի երգեր երգում և ջրի միջից հանում էին փոքրիկ առարկաները: Ինչպիսին որ էր երգի տունը, ուրախ կամ տխուր, այդպիսին էլ լինելու էր առարկայի տիրուհու վիճակը: Այժմ ժողովրդական այս սովորույթը գրեթե վերացել է, և Համբարձման օրը միայն երեխաներն են տոնական զգեստներով դուրս ելնում և Ձան-գյուլումի երգեր երգում:

Ի՞նչ է մեզ համար Համբարձումը: Եթե միայն այս կյանքով տարված, ավելի շատ երկրայինի մասին մտածող մարդ ենք, ինչ խոսք, Համբարձումը կամ Համբարձման տոնը մեզ համար կարող է ոչ մի արժեք էլ չունենալ: Սակայն եթե հավատում ենք Աստծուն և հույս ունենք հավիտենական կյանքի արժանանալու և Երկնքի Արքայության մեջ լինելու, ապա Համբարձումը մեզ համար շատ մեծ նշանակություն ունի: ՄԵԾ ուրախություն է մեզ համար Համբարձումը, քանզի ցույց է տալիս, որ մենք ևս ի վերջո այսպես համբարձվելու ենք երկինք: Գուցե զարմանալի լինի ոմանց համար, սակայն դեպի երկինք վերանալը մենք սկսում ենք այս կյանքից. դա է վկայում Հակոբ նահապետի տեսիլքում երևացած սանդուղքը: Սանդուղքի երկու ուղղահայաց փայտերը ցույց են տալիս մարդու երկու տեսակի կենցաղավարությունը՝ հարստությունն ու աղքատությունը: Հարուստներն իրենց հարստության մեջ պետք է չհպարտանան և չմոռանան ողորմությունը, իսկ աղքատները պետք է չձանձրանան աղքատությունից և չտրտնջան Աստծո դեմ, որովհետև Աստված մարդուն փորձության մեջ է գցում՝ նրան ավելի կատարյալ դարձնելու համար: Եթե մարդը անընդհատ տրտնջա և դժգոհի, նրա վիճակն ավելի կվատանա, մինչդեռ Աստծուն փառաբանելը հեռացնում է սատանային և նրա չար գործակիցներին: Այդ սանդուղքը, որով մենք այս կյանքից սկսած երկինք ենք ելնում, պետք է ունենա նաև յոթ աստիճաններ: Առաջին չորսն են՝ խոնարհություն, արիություն, ողջախոհություն և արդարություն: Սակայն այս առաքինությունները սովորական են և մարդուն երկինք չեն հանում: Անհավատ, աթեիստ որևէ մեկը կարող է այս բարոյական սկզբունքներով ապրել, իբրև լավ մարդ շրջապատում մեծ հարգանք վայելել, սակայն նա երբեք չի կարող երկինք ելնել, որովհետև չունի մնացած երեք աստիճանները, որոնք կոչվում են աստվածային առաքինություններ: Դրանք են՝ ճշմարիտ հավատ, հաստատուն հույս և աստվածային սեր:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ ցույց տանք Քրիստոսի աստվածության վերաբերյալ հիմնավորումները ոչ միայն Նոր Կտակարանով, այլև սկսած Հին Կտակարանի հենց ամենասկզբից: Սուրբ Գիրքն ասում է, որ մարդու ստեղծման ժամանակ, ինչպես նաև Բաբելոնի աշտարակաշինության պատճառով մարդկանց պատժելու ժամանակ Աստված խորհրդակցում էր և հետո նոր գործում: Իսկ ու՞մ հետ էր խորհրդակցում Աստված: Այս հարցի պատասխանը տալիս է Եսայի մարգարեն՝ Քրիստոսին անվանելով նաև խորհրդակից, երբ մարգարեանում է Քրիստոսի Ծննդյան մասին՝ ասելով. «Քանզի մեզ համար մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի. Նա պիտի կոչվի Սքանչելի խորհրդակից, Հզոր Աստված, Իշխան խաղաղության, Հայր հավիտենականության» (9.6): Աղանդավորներից Եհովայի վկաները, որոնք չեն ընդունում Քրիստոսի աստվածությունը, ուսուցանում են, որ այստեղ Քրիստոսի վերաբերյալ ասված *Հզոր Աստված* արտահայտությունը ամենևին չի մատնանշում Քրիստոսի աստվածությունը, որովհետև ճշմարիտ աստվածությունը ցույց տալու համար պետք է *Հզոր Աստված*-ի փոխարեն ասվի *Ամենահզոր Աստված:* Սակայն Քրիստոսի աստվածության հաստատման համար պարտադիր չէ նույնիսկ, որ այստեղ *հզոր* բառն էլ լինի, որովհետև, օրինակ, Մովսեսին հայտնվելու ժամանակ Աստված ասում է. ««Ես եմ քո հոր Աստվածը, Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը» (Ելք 3,6), այսինքն՝ չի օգտագործում նույնիսկ *հզոր* բառը: Եսայու մեկ այլ մարգարեություն ավելի է հաստատում Քրիստոսի աստվածությունը «Ահա կույսը պիտի հղանա ու որդի պիտի ծնի, և նրա անունը Էմմանուել պիտի կոչվի, որ նշանակում է Աստված մեզ հետ» (7.14, Մատթ. 1.23): Հետևաբար, այստեղ ևս Քրիստոս Աստված է կոչվում: Հովհաննու Ավետարանի հենց ամենասկզբում ասվում է. «Սկզբից էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր» (1.1): Հրեաները ցանկանում էին Քրիստոսին սպանել, որովհետև Նա Իր անձը Աստծուն հավասար էր դասում (Հովհ. 5.18): Նույնն է ասում նաև Պողոս առաքյալը փիլիպեցիներին ուղղված թղթում. «Որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց» (2.6): Եվ վերջապես Քրիստոս Ինքն է նաև Ավետարաններում միայն մեկ տեղում Իր մարդացած լինելու և չարչարանքների ու նեղությունների մեջ գտնվելու համար նշելով, որ տվյալ պարագային Հայրն ավելի մեծ է (Հովհ. 14.28), բերում է Իր աստվածությունը հաստատող զորեղ խոսքերը. «Ես և Հայրը մի ենք» (10.3) կամ՝ «Ինձ տեսնողը Հորն է տեսնում» (Հովհ. 14.9): Եթե նույնիսկ այս համարներին աղանդավորները կարող են խեղաթյուրված բացատրություններ տալ, ապա հետևյալ խոսքերի դեմ անիմաստ կլինի

առարկելը: Թովմաս առաքյալը, Հարությունից հետո տեսնելով Քրիստոսին, Նրա աստվածությունը դավանելով՝ ասում է. «Տեր իմ և Աստված իմ» (Հովհ. 20.28): Հայտնության գրքում արդեն Քրիստոս Հովհաննես առաքյալին Իր աստվածությունը հաստատող ավելի զորավոր խոսքեր է ասում. «Մի վախեցիր, Ես եմ Սկիզբը և Վախճանը, Ես եմ կյանքը, Ես եմ, որ մեռա. և ահավասիկ կենդանի եմ հավիտյանս հավիտենից» (Հայտն. 1.17-18): Նաև Հայտնության մեկ այլ տեղում՝ «Այսպես է ասում անսկիզբը և անվախճանը, որ մեռավ և կենդանացավ» (2.8), իսկ անսկիզբ և անվախճան կարող է լինել միմիայն Աստված:

ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՎԱԾ ԵՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Հրեշտակները բաժանվում են ինը դասի: Հրեշտակների մեջ եղել է սատանան իր հրեշտակներով, որոնք Աստծո դեմ գործած ապստամբության պատճառով ցած նետվեցին երկնքից: Այս իրողությունից հետո է, որ ամենալուսավոր հրեշտակը ստացավ *սատանա* անունը, որը նշանակում է հակառակորդ: Այս առումով չափազանց տարօրինակ է աղանդավորներից հատկապես Եհովայի վկաների դիրքորոշումը *սատանա* բառի նկատմամբ. հասկանալի չէ, թե ինչու են նրանք իրենց Աստվածաշնչում, Սուրբ Հոգի փոքրատառ գրելով, *սատանա* բառը միշտ գրում են մեծատառով: Իսկ գուցե հենց սա էլ հասկանալի է դարձնում ամեն ինչ:

Հրեշտակապետաց տոնի օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Պատարագ է մատուցվում զանգականտան տանիքի ներքո, իսկ հավատացյալ ժողովուրդը եկեղեցում ունկնդրում է Պատարագը: Պատարագի արարողության ավարտին քահանան վերևից իջնում է եկեղեցի, ընթերցում Ավետարանը և արձակում ժողովրդին:

Հակոբ նահապետը իր եղբորից փախչելու ժամանակ մի տեսիլք տեսավ: Հրեշտակները աստիճանի վրայով իջնում ու բարձրանում էին: Այս տեսիլքը ցույց էր տալիս այն իրողությունը, որ մարդը միայնակ չէ երկրի վրա՝ թողնված աշխարհի ուժերին, այլ հրեշտակները սպասավորում են մարդուն, ինչպես նաև բարձրացնում են աղոթքները և իջեցնում Աստծո ողորմությունները: Պողոս առաքյալը եբրայեցիներին ուղղված թղթում ցույց է տալիս Քրիստոսի գերազանցությունը բոլոր երկրային արարածներից և հրեշտակներից: Նա նաև փիլիպեցիներին ուղղված թղթի 2-րդ գլխի 6-րդ համարում ցույց է տալիս Քրիստոսի հավասարությունը Հայր Աստծուն, ինչը նույնանում է Քրիստոսի *Ես և Իմ Հայրը մի ենք* (Հովհ. 10.30) խոսքերի հետ: Եբրայեցիներին ուղղված թղթում հենց առաջին գլխից սկսած (4-14) առաքյալը ցույց է տալիս, որ Քրիստոս գերա-

զանց է անգամ հրեշտակներից և հրեշտակ չէ, ինչպես որ այսօր մոլորեցնում են որոշ աղանդներ: Պողոս առաքյալն այստեղ բացատրում է նաև Քրիստոսի մեկ այլ խոսքը, ըստ որի Հայրը ավելի մեծ է (Հովհ. 14.28): Սա Քրիստոս ասել էր՝ նկատի ունենալով իր նեղություններն ու նախատեսվող չարչարանքները: Այսպես է բացատրում նաև Պողոս առաքյալը եբրայեցիներին ուղղված թղթի 2-րդ գլխի 9-րդ համարում. «Բայց տեսնում ենք փառքով ու պատվով պսակված Հիսուսին, որ մի փոքր հրեշտակներից ավելի ցած էր դասվել մահվան չարչարանքները հանձն առնելու պատճառով»: Առաքյալը թղթի հենց առաջին գլխում նշում է, որ հրեշտակները երկրպագում են Քրիստոսին (6), և ընդգծում, որ Քրիստոսի մասին Հայրն Ինքը ասել է. «Աստված, Քո աթոռը հավիտյանս հավիտենից է» (8): Եվ այստեղ մի քանի անգամներ առաքյալը, Քրիստոսին Աստված կոչելով, ցուց տալիս Նրա աստվածությունը, ինչպես նաև Նրա կողմից տիեզերքի ստեղծումը (10):

ՔՐԻՍՏՈՍԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐ

Սուրբ Զատկի երրորդ կիրակին կոչվում է Կարմիր կիրակի: Այս անվանումը հիշեցնում է Հիսուս Քրիստոսի արյունը, որով մարդիկ փրկվեցին մեղքի և սատանայի իշխանությունից: Ողջ տիեզերքը փրկվեց Հիսուս Քրիստոսի արյամբ: Այս ճշմարտությունը երբեմն վերացական գաղափարի պես է հնչում: Այդ իսկ պատճառով մեր մեջ ծագում են մի շարք հարցեր, որոնք պատասխաններ են պահանջում: Ինչու՞ Քրիստոս մարդացավ, ծնվեց և չարչարվեց, եթե Աստված Իր ամենակարողությամբ կարող էր մարդկությանը փրկել ավելի հեշտ ձևով: Եկեղեցին դատապարտում է ինքնասպանությունը: Սակայն ինչպե՞ս կարող ենք հասկանալ այն, որ Հիսուս Քրիստոս Իր կամքով Իր անձը մահվան մատնեց: Եվ ինչու՞ է արդյոք աստվածաշնչյան գրվածքներում Քրիստոս համեմատվում գառան կամ մորթվող գառան հետ (Ա Կորնթ. 5.7; Հայտն. 5.6,8, 12-13; 13.8): Այժմ անդրադառնանք այդ հարցերից յուրաքանչյուրին:

Ինչու՞ Քրիստոս մարդացավ, ծնվեց և չարչարվեց, եթե Աստված Իր ամենակարողությամբ կարող էր մարդկությանը փրկել ավելի հեշտ ձևով

Մարդկության պատմության մեջ չեն եղել, չկան և չեն լինելու անհավատ ժողովուրդներ: Կան անհավատ, աթեիստ անձինք, սակայն երբեք անհավատ ժողովուրդներ չեն եղել: Սա ցույց է տալիս, որ մարդկային ցեղն իր բնությամբ աստվածասեր և աստվածապաշտ է: Սակայն մարդիկ հաճախ աստվածացրել են այն ամենը, ինչ համարել են գեղեցիկ և հզոր: Եվ այս բարի հատկությամբ մարդկությունը հաճախ դուրս է եկել

ուղիղ ճանապարհից: Այդ իսկ պատճառով Քրիստոս Աստված մարդացավ և աշխարհ եկավ, որպեսզի մարդիկ Իրեն տեսնեն և այլևս երբեք չշեղվեն ճշմարիտ աստվածպաշտությունից:

Այն մեծագույն հատկությունը, որը կատարյալ է դարձնում սերը, զոհաբերությունն է: Կատարելապես սիրող մեկը պատրաստ է իր սիրելիի համար զոհաբերելու նույնիսկ իր ունեցած ամենաթանկ բանը՝ կյանքը: Երբ սիրո մեջ զոհաբերություն չկա, այն ինչ-որ իմաստով թերի է և նման է այն սիրուն, որով մենք սիրում ենք ուրիշի երեխաներին: Մենք սիրում ենք նրանց գեղեցիկ աչքերը, գեղեցիկ ժպիտը, սակայն օրորոցի մոտ անքուն գիշերներ չենք անցկացնում: Այդ զոհաբերությունը երեխայի համար իրականացնում են միայն նրան անսահմանորեն սիրող ծնողները: Եվ Քրիստոս Իր զոհագործությամբ մեզ ցույց տվեց մեր հանդեպ աստվածային սիրո անսահմանությունն ու կատարելությունը:

Ինչու՞ Քրիստոս խոնարհվեց աստվածային բարձունքներից

Երբ նոր քայլել սովորող երեխան ընկնում է, միայն վերևից ասված խոսքերը նրան չեն կարող ոտքի հանել: Մենք դա շատ լավ գիտենք: Այդ իսկ պատճառով ինքներս ենք խոնարհվում, հավասարվում նրան և մեզ հետ միասին վեր հանում:

Եկեղեցին դատապարտում է ինքնասպանությունը. սակայն ինչպե՞ս կարող ենք հասկանալ այն, որ Հիսուս Քրիստոս Իր կամքով Իր անձը մահվան մատնեց

Երբեմն մարդիկ իրենց կամքով հրաժարվում են կյանքից և գնում դեպի մահ: Այսպիսի մահը կոչվում է անձնիշխան մահ: Այն լինում է երկու տեսակ՝ բարի և չար: Անձնիշխան մահը բարի էր մարտիրոսների մոտ, երբ նրանք Աստծո սիրուց մղված իրենց կամքով իրենց անձերը մահվան մատնեցին: Նրանց մարմինները մեռան, սակայն հոգիները առավել կենդանացան և հավերժ կենդանի են Աստծո մոտ: Անձնիշխան մահը չար է Հուդայի պարագային, երբ նա այդ քայլին դիմեց աստվածմերժությունից: Մեռավ ոչ միայն նրա մարմինը, այլև՝ հոգին, այսինքն՝ հեռացավ Աստծուց: Եվ Քրիստոս, մարդկության հանդեպ անսահման սիրուց մղված, գործածեց անձնիշխան մահը, որը բոլորովին հակառակ է այդ մահվան չար տեսակին, որը մենք կոչում ենք ինքնասպանություն:

Ինչու՞ է արդյոք աստվածաշնչյան գրվածքներում Քրիստոս հաճախ համեմատվում գառան կամ մորթվող գառան հետ

Քրիստոս համեմատվում է գառան հետ հետևյալ պատճառներով: Գառը հեզ կենդանի է. իրեն պաշտպանելու համար նա չի կոտոշահարում և այլ կտրուկ միջոցների չի դիմում, ինչպես մյուս կենդանիները: Նույն կերպ էլ Քրիստոս ոչ ոքի հանդեպ չարիք չգործեց: Գառը հեզությամբ գնում է իրեն մորթել պատրաստվող մարդու ետևից: Նույն կերպ էլ Քրիստոս հեզությամբ գնաց հրեաների ետևից Երուսաղեմ: Գառն ինչ որ ունի օգտակար է և տալիս է մարդկանց: Այդպես էլ Քրիստոս Իր Մարմինը մեզ տվեց որպես կերակուր և իբրև զգեստ տվեց առաքինություններ, ինչպես որ Սուրբ Մկրտության արարողության ժամանակ ենք ասում. «Որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք. ալէլուիա»:

(«Ալէլուիա»-ն եբրայերեն բառ է, որը միանշանակ գործածում են և՛ երկնավորները, և՛ երկրավորները: Հովհաննես ավետարանիչն ասում է. «Լսեցի՝ ինչպես բազմության մի բարձր ձայն երկնքում, որ ասում էր «Ալէլուիա՛...» (Հայտն. 19.1): Իսկ սաղմոսասացությունը մարդկանց երգեցողությունն է: Հետևաբար, «Ալէլուիա»-ն սաղմոսին առընթեր ասելով՝ նշանակում է, որ հրեշտակները և մարդիկ միաբանված օրհնում են Աստծուն: Ուստի՝ երբ «Ալէլուիա» ենք ասում, ապա դրան հաջորդում է սաղմոսասացությունը: Ըստ եբրայական մեկնության՝ «Ալէ» նշանակում է Հայր, «լու»՝ Որդի, «իա»՝ Հոգի: Եբրայեցերեն լեզվում «Ալ» նշանակում է հայտնեց գոյություն, «էլ»՝ Աստված, «Ուիա»՝ օրհնեցե՛ք և գովեցե՛ք Աստծուն: Դարձյալ՝ «Ալէ»՝ օգնիր, «լու»՝ ինձ, «իա»՝ Տեր: Դարձյալ՝ «Ալէ»՝ փրկիր, «լու»՝ ինձ, «իա»՝ Աստված: Աստվածաշնչի յոթանասուներկու թարգմանիչները (Ն.Ք. 3-րդ դար) թարգմանեցին որպես՝ «Գովաբանեցեք Տիրոջը», հույները՝ «Գովաբանեցեք որ Են», իսկ ասորիները՝ «Փառք Քեզ Աստված»: Դարձյալ՝ ըստ ոմանց նշանակում է՝ «Օրհնություն ի բարձրունս», ինչպես նաև՝ «Օրհնեցեք Տիրոջը»):

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ աղանդավորներ պնդում են, որ Սուրբ Հոգին պարզապես աստվածային ուժն է կամ էներգիան: Սակայն Սուրբ Հոգու աստվածությունը և աստվածային անձ լինելը հաստատվում է հետևյալով: Նախ Ծննդոց գրքում նշվող շրջելը ջրերի վրա (Ծննդ. 1.2), հինկտակարանյան մեծ մարդկանց հետ Սուրբ Հոգու լինելը (Դատ. 3.10, 6.34, 11.29, 13.25, 14.6, 19, 15.14, Ա թագավ. 10.6, 10, 11.6, 16.13, 19.20, 23, Բ Թա-

գավ. 23.2, Գ Թագավ. 18.12, Դ Թագավ. 2.16, Բ Մնաց. 15.1, 20.14, 24.20 և այլն): Փորձության ժամանակ Քրիստոս Ինքը չգնաց անապատ, այլ Սուրբ Հոգին Նրան տարավ (Մատթ. 4.1, Մարկ. 1.12, Ղուկ. 4.1), և երբ Անանիան ստեց, Պետրոս առաքյալը, բացահայտորեն Սուրբ Հոգուն Աստված անվանելով, Անանիային ասաց, թե՝ «Ինչու՞ Սուրբ Հոգուն ստեցիր, մարդկանց չստեցիր, այլ՝ Աստծուն» (Գործք 5.4): Սուրբ Հոգին Ինքն է անձամբ խոսում առաքյալների հետ (Գործք 8.29, 10.19, 11.12, 21.11, 28.25, Ա Տիմ. 4.4, Եբր. 3.7, Հայտնութ. 2.7 և այլն) և ասում, թե ում որտեղ պետք է ուղարկեն քարոզչության (Գործք13.2):

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԷՋՔԸ

Մկրտության ժամանակ Սուրբ Հոգին իջավ աղավնու կերպարանքով (Մատթ. 3.16, Մարկ. 1.10, Ղուկ. 3.22)՝ իբրև խաղաղություն և հաշտություն բերող, որովհետև այդ ժամանակ մարդկությունը երես էր թեքել Աստծուց: Իսկ Քրիստոսի առաքելությամբ խաղաղություն հաստատվեց մարդկանց և Աստծո միջև (Եփ. 2.15, 17; Կող. 1.20): Սակայն շատ ուսուցանող է հատկապես Սուրբ Հոգու երևումը հրի ձևով: Հոգեգալստյան օրը Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա կրակե լեզուների տեսքով (Գործք 2.3): Այսօր շատ մարդկանց սրտերը կարծես սառել և կարծրացել են ոչ միայն Աստծո և երկնայինի հանդեպ, այլև այդպիսի սառնություն է զգացվում հաճախ միջանձնական հարաբերություններում: Հուրը հալեցնում է պինդ իրերը, ինչպես օրինակ՝ երկաթը, և թրծում ու ամրացնում է թույլ իրերը, ինչպես օրինակ՝ կավից պատրաստված որևէ իր: Նույն կերպ Սուրբ Հոգին հալեցրեց սատանայի զորությունը և թրծեց առաքյալներին, ովքեր հաստատվեցին հավատքի մեջ: Սուրբ Հոգին կարող է մարդկանց սառած սրտերը ջերմացնել: Դրա համար պետք է, որ Սուրբ Հոգին մեզ վրա ևս իջնի, ինչպես որ նստեց առաքյալների վրա: Որևէ մեկը ցանկանում է նստել հանգիստ և խաղաղ մի տեղ: Եվ այն, որ Սուրբ Հոգին նստեց, հանգչեց առաքյալների վրա, ցույց է տալիս, որ նրանք բոլոր մեղքերից թափուր էին և իրենց պատրաստել էին Աստծո համար:

Առաքյալները Սուրբ Հոգին ընդունեցին երեք անգամ: Առաջին անգամ այն ժամանակ, երբ Քրիստոս նրանց ուղարկեց քարոզելու և իշխանություն տվեց բուժելու բոլոր հիվանդությունները: Երկրորդ անգամ՝ Հարությունից հետո մեղքերի թողության համար, երբ Քրիստոս նրանց վրա փչեց և ասաց. «Առեք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրան ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. 20.22-23): Երրորդ անգամ առաքյալները Սուրբ Հոգին ընդունեցին վերնատանը և այդ զորությամբ գրեթե ողջ աշխարհը քրիստոնյա դարձրեցին, ինչը և ո-

որոշեց մարդկության պատմության, մշակույթի, մտածելակերպի հետագա ընթացքը:

ԿՐԿԻՆ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդկության պատմության մեջ ամենահրաշալի և հիանալի իրադարձություններից մեկը Հոգեգալուստն է, երբ Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա Երուսաղեմում՝ որպես կրակե լեզուներ: Առաքյալները լցվեցին Սուրբ Հոգու շնորհներով և սկսեցին խոսել օտար լեզուներով: Երուսաղեմում այդ ժամանակ բավականին ժողովուրդ կար, որ եկել էր սուրբ քաղաք հրեական տոնի համար: Հոգեգալստյան այդ նույն օրը հրեաները տոնում էին հիշատակը Սինա լեռան վրա Մովսեսի կողմից աստվածային տասը պատվիրանների ստացման: Երուսաղեմ էին եկել նաև տարբեր երկրներում ապրող հրեաներ և լսում էին, որ առաքյալները խոսում են այդ երկրների լեզուներով: Գործք Առաքելոցում գրված է, որ այդ մարդիկ եկել էին Պարսկաստանից, Միջագետքից, Հրեաստանից և այլն (Գործք 2.7-11): Եկեղեցական հեղինակներ Տերտուղիանոսը և Օգոստինոսն ասում են, որ Նոր Կտակարանի այդ հատվածում պետք է ընթերցել Հայաստան Հրեաստանի փոխարեն, որովհետև այդ դրվագում խոսվում է այլ երկրներից Հրեաստան եկած մարդկանց մասին, և Հայաստան ընթերցելը ճիշտ է նաև աշխարհագրականորեն, քանզի Միջագետքի կողքին գտնվում է Հայաստանը և ոչ թե Հրեաստանը:

Սուրբ Հոգու գալուստն իրական է ամեն օր մկրտության արարողությամբ, որի ընթացքում Սուրբ Հոգին Աստված իջնում է մկրտվող մարդու վրա և նրան տալիս Իր աստվածային շնորհները: Մկրտության արարողության ընթացքում արարողությունը կատարող հոգևորականները երգում են *Առաքելոյ աղաւնոյ* շարականը, որ գրաբարից թարգմանաբար նշանակում է ուղարկված աղավնին: Չնայած Սուրբ Հոգին կրակե լեզուների տեսքով հայտնվեց առաքյալներին, այս շարականի մեջ պատմվում է Սուրբ Հոգու աղավնակերպ գալստյան մասին՝ շեշտելով Սուրբ Հոգու խաղաղարար հատկությունը, որով զորացյալ առաքյալները երկրին երկինք հրավիրեցին: Այսինքն՝ առաքյալները մարդկանց սրտերում հաստատեցին ճշմարիտ հավատքը՝ ցույց տալով ճանապարհը, որ առաջնորդում է հավատացյալներին դեպի երկինք հավիտենական կյանքի համար: Բաբելոնի աշտարակաշինության ժամանակ Աստված զայրացավ և մարդկությունը բաժանեց յոթանասուներկու լեզուների: Իսկ Հոգեգալստյան օրը Սուրբ Հոգին կրակե լեզուների տեսքով իջավ և զորացրեց առաքյալներին, ովքեր միավորեցին մարդկությունը քրիստոնեական հավատքի մեկ լեզվի ներքո:

ՇՆՈՐՀՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ

Այսօր բազում մարդիկ մկրտվում են՝ դառնալով քրիստոնյա, սրբվելով ադամական մեղքից, ժառանգելով Երկնքի Արքայությունն ու հավիտենական կյանքը: Մկրտության ժամանակ Սուրբ Հոգին Իր շնորհներն է պարգևում մկրտվողին: Բայց երբեմն տեսնում ենք, որ շատ մկրտվածներ մնում են թերութիւնների և հոգևոր արատների մեջ: Սուրբ Հոգու հանգչելը որևէ անձի վրա կամ շնորհները բաշխելը տեղի է ունենում նաև այսօր: Սակայն հաջողության գաղտնիքն այն չէ, թե մենք ինչ ենք ստանում, այլ այն, թե ինչպես ենք կարողանում օգտագործել ստացածը: Եթե մի անոթ լի է որևէ հեղուկով, ապա այնտեղ չենք կարող այլ բան լցնել, իսկ լցնելիս էլ միևնույն է անոթից դուրս կթափվի: Ճիշտ այդպես էլ, եթե մեկը լցված է մարմնական կրքերով, ունի երկրային մտածելակերպ, չի կարող իր մեջ պահել աստվածային շնորհները:

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մենք ասում ենք, որ պետք է հավատարիմ մնանք մեր հայրերի հավատքին: Սակայն առավել կարևոր է ճշմարտությունը, որովհետև եթե մեր նախնիներն էլ այս սկզբունքով առաջնորդվեին, իրենք էլ ժամանակին քրիստոնյա չէին դառնա՝ պատճառ բերելով իրենց հայրերի հեթանոսական հավատքը: Հետևաբար, մի կողմ թողնելով մեր բարեպաշտ նախնիներին՝ քննենք և տեսնենք, թե իրականում ո՞րն է Աստվածաշնչի ճշմարտությունը, եթե այն է, ինչ քարոզում են աղանդները, ուրեմն թողնենք ամեն ինչ և գնանք նրանց ետևից, իսկ եթե ճշմարտությունը Քրիստոսի առաքյալների կողմից հիմնադրված Սուրբ Եկեղեցու քարոզածն է՝ հիմնված միմիայն Աստվածաշնչի վրա առանց խեղաթյուրումների, ուրեմն չտարվենք աղանդներով և հավատարիմ մնանք մեր Մայր Եկեղեցուն: Որոշ աղանդներ մերժում են Սուրբ Երրորդության գաղափարը, նրանցից հատկապես Եհովայի վկաների առաջնորդներից Ռուտերֆորդը նույնիսկ իր հետևորդներին սովորեցրել է, որ «Սուրբ Երրորդության հեղինակը սատանան է»: Եհովայի վկաները վախեցնում և սարսափեցնում են իրենց միամիտ հեդևորդներին՝ ասելով, որ ի վերջո Երրորդություն դավանող քրիստոնեական աշխարհը պատասխանատվության կկանչվի և կպա-տըժվի: Աղանդավորները Սուրբ Երրորդության դեմ բե-

ռում են հետևյալ վկայությունը. «Լսի՛ր, Իսրայե՛լ, մեր Տեր Աստվածը միակ Տերն է» (Մարկ. 12.29, Բ Օր. 6.4): Սակայն, ըստ քրիստոնեական վարդապետության, պարզապես անմտություն է երեխայի պես Աստծուն պատկերացնել որպես պարզ մեկություն, այլ այստեղ *մեկ* բառը բաղադրյալ մեկություն է նշանակում: Բարդ մեկության այլ օրինակներ ևս կան Աստվածաշնչում: Օրինակ Հին Կտակարանից՝ «Դրա համար այրը պիտի թողնի իր հորը և մորը և իր կնոջը պիտի հարի, ու մեկ մարմին պիտի լինեն» (Ծննդ. 6.24): Կամ էլ մեկ այլ օրինակ Նոր Կտակարանից. «Դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս» (Գաղ. 3.28): Հետևաբար, Տեր Աստված մեկ է բանաձևը ցույց է տալիս Աստծո աստվածային մեկ բնությունը և երբեք չի բացառում այս բաղադրյալ մեկության մեջ Երրորդությունը: Ինչպես որ արեգակը ունի լույս, ճառագայթ և ջերմություն և այս երեքով միասին է արեգակ, ճիշտ այդպես էլ Հայրը Որդին և Սուրբ Հոգին մեկ Աստվածության երեք անձերն են և երեքով միասին մեկ ամբողջություն են: Սա է ապացուցում նաև Հիսուս Քրիստոս՝ նշելով երեք անձերի և ասելով, որ Հայրը մեկ այլ Մխիթարիչ պիտի ուղարկի՝ Սուրբ Հոգին, որը կուսուցանի առաքյալներին և կհիշեցնի Իր ասածները (Հովհ. 14.26): Բացի դրանից Ծննդոց գրքում՝ եբրայերեն բնագրում, *Աստված* բառը հոգնակի թվով է, իսկ նրա հետ գործածվող բայը՝ եզակի, ինչը ևս ցույց է տալիս երեք աստվածային անձերով մեկ աստվածությունը: Եսայու մարգարեության մեջ ակնարկ կա Սուրբ Երրորդության: Սերովբեները, փառաբանելով Աստծուն, երգում են. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զորությունների Տերը» (6.3): Ըստ մեկնության՝ յուրաքանչյուր *սուրբ* բառը ասվում է Սուրբ Երրորդության յուրաքանչյուր անձի համար, և մարգարեության այս հատվածը հիշվում է նաև Պատարագի երգեցողության մեջ: Եսայու մարգարեությունում հիշատակված նման փառաբանության նկարագրություն կա նաև Հայտնության գրքում, որտեղ երկնային զորությունները օրհնաբանության մեջ գործածում են *սուրբ* բառը ինը անգամ (4.8)՝ երեքական *սուրբ* բառ Սուրբ Երրորդության յուրաքանչյուր Անձի համար: Քրիստոս Ինքը տվեց Սուրբ Երրորդության բանաձևը՝ ասելով. «Մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28.19), երեքի համար գործածելով *անուն* բառի եզակի ձևը, ցույց տալով Երրորդության մեկ աստվածություն լինելը: Եվ քանի որ որպես մեկ աստվածության Անձեր նշվում են երեքը, ապա այստեղից էլ հետագայում առաջացել է Երրորդություն տերմինը:

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Երբեմն Եկեղեցու գիրկը նոր դարձած մարդիկ, Սուրբ Երրորդության մասին լսելով, հարցնում են. «Ինչպե՞ս թե, ստացվում է, որ մենք պետք է պաշտենք երեք աստվածների»: Կրոններ կան, որոնց միաստվածությունը հասկանալի է նույնիսկ երեխային, մինչդեռ ըստ քրիստոնեության սխալ է Աստծուն որպես պարզ մեկություն պատկերացնելը: Քրիստոնեության՝ ճշմարիտ կրոնի մեջ Աստված բարդ մեկություն է՝ Սբ. Երրորդություն, մեկ Աստված, մեկ կամք, բայց երեք տարբեր անձեր՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Հայրը, Որդին և Սուրբ Հոգին տարբեր բնություններ չեն, այլ աստվածային մեկ բնություն ունեցող երեք Անձեր: Եկեղեցական հեղինակները մարդկային մտքին Սուրբ Երրորդության և մեկ աստվածության գաղափարը հասանելի դարձնելու համար բացատրում էին ավելի պարզ օրինակներով. ջրի բնությունը մեկ է, սակայն ջուրն ունի երեք հատկություններ, ինչպես օրինակ՝ աղբյուր, գետ և ծով, լիճ կամ օվկիանոս, ծաղիկը մի է, բայց գույնը և հոտը նրանից են: Ինչպես արեգակը անհնար է, որ առանց լույսի և ջերմության լինի, այդպես էլ անհնար է, որ Հայրը առանց Որդու և Սուրբ Հոգու լինի: Որքանով որ հուրը հուր է, և լույսն ու ջերմությունը նրա հետ են, այսպես և Հայրը Հայր է, և Որդին ու Սուրբ Հոգին Նրա հետ են:

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ

Սուրբ Կույսը դեռևս մանուկ հասակից ապրում էր Աստծո տաճարում և իր օրերն անց էր կացնում սրբությամբ և աղոթքներով: Այն ժամանակ դեռ ոչ ոք չգիտեր, որ Աստծո տաճարին ընծայված այս մանուկը հետագայում պետք է լիներ ողջ տիեզերքը ստեղծող Աստծո մայրը: Հավանաբար շատերի համար զարմանալի կլինի այն փաստը, որ մուսուլմանական կրոնի մեջ ևս ընդգրկված է Սուրբ Մարիամը, և ընդհանրապես մուսուլմանների համար Հիսուսի մայր Մարիամը հանդիսանում է ամենակատարյալ կնոջ կերպարը, որից բոլոր կանայք պետք է օրինակ վերցնեն:

Աստվածածինը ծնվեց իր ծնողների երկար տարիների աղոթքով, այսինքն՝ նա եղավ Աստծո պատասխանը այն ջերմեռանդ աղոթքի, որ երկինք էին բարձրացնում երկար ժամանակ զավակ չունեցող նրա ծնողները: Եվ հիանալիորեն Աստվածածինն ինքն է այժմ բարեխոսում Աստծո առաջ մեր աղոթքների և մեր մեծ ցանկությունների իրականացման համար: Մեզ բոլորիս համար կարծես թե մի նվիրական և ջերմ սրբություն է

Սուրբ Մարիամ Աստվածածինը: Շատերս ենք հաճախ կանգ առել կամ ծնկի եկել գեղեցիկ մանկանը իր մայրական գրկում պարուրած այդ հեզ և խոնարհ կնոջ սրբապատկերի առջև և հույսով ու ջերմությամբ լի աղոթքներ շշնջացել: Մոր ու մանկան այդ գեղեցիկ պատկերը չի կարող անտարբեր թողնել որևէ մարդու: Եվ քանի որ հավատացյալները խոնարհվում են այդ նկարի առջև և Սուրբ Մարիամին նաև իրենց գորովագութ մայրը համարում, ապա կարելի ասել, որ այդ սրբապատկերների մեջ մանուկը ձեռք է բերում նաև մեկ այլ իմաստ՝ խորհրդանշելով ողջ մարդկությանը, որին Սուրբ Աստվածածինն իր գիրկն առած խնամում է սիրող մոր պես:

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏԱՐԻՔԸ

4 – Քրիստոնեության իմաստությունը

Սուրբ Մարիամը դուստրն է Հովակիմի և Աննայի: Հոր կողմից նա սերում էր թագավորական ցեղից՝ Դավթի ազգից, իսկ մոր կողմից՝ Ղևիի քահանայական ցեղից. Աստվածածնի մայր Աննան դուստրն էր Մատթան քահանայի՝ Բեթղեհեմ քաղաքից:

Քանի՞ տարեկան էր Սուրբ Մարիամ Աստվածածինը իր և Քրիստոսի կյանքի գլխավոր հանգրվաններին: Մարիամը 3 տարեկան էր, երբ ծնողների կողմից ընծայվեց տաճարին՝ այդուհետ մինչ չափահաս դառնալը Աստծո տաճարում ապրելու, քանի որ այդ էր եղել տարիներ շարունակ զավակներ չունեցող նրա ծնողների ուխտը առ Աստված: Մարիամը 14 տարեկանում հանձնվեց խնամակալության 41 տարեկան Հովսեփին: Հովսեփը Մարիամին տարավ Նազարեթ և բնակեցրեց իր զավակների հետ, իսկ երեք ամիս անց Գաբրիելը Քրիստոսի ծննդյան ավետիսը տվեց: 15 տարեկան էր Մարիամը, երբ Քրիստոս ծնվեց: Քրիստոսի կյանքի 31-րդ տարում Հովսեփը վախճանվեց 72 տարեկանում: Տերունական խաչելության, Հարության և Համբարձման ժամանակ, երբ Քրիստոս 33 տարեկան էր, Մարիամը 48 տարեկան էր: Դրանից հետո Սուրբ Աստվածածինն ապրեց ևս 12 տարի, որով նրա երկրային կյանքի տարիների ընդհանուր թիվը անում է 60:

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

Քրիստոս Հարությունից հետո քառասուն օրերի ընթացքում երևաց Իր աշակերտներին, իսկ Համբարձման ժամանակ աշակերտների հետ եկավ Ձեթենյաց լեռը: Ու երբ կամենում էր համբարձվել, Աստվածածին մայրը կանգնեց իր Միածնի առաջ և ասաց. «Ով Տեր իմ և Աստված իմ, Արարիչ իմ և Որդի իմ: Ահա Դու ելնում ես դեպ Քո հայրենի փառքը, իսկ

ինձ թողնում ես այս կյանքում տարակուսած: Դու գիտես հրեաների ապերախտությունը, որ Քեզ՝ բարերարիդ, չարը հատուցեցին, իսկ ինձ ի՞նչ կանեն»: Եվ Տերն ասաց. «Խաղաղություն քեզ, Իմ քաղցրիկ մայր, չեմ թողնի քեզ, Իմ սուրբ տապանակ և խորան: Բայց մնա մի փոքր ժամանակ Իմ ընտրյալ աշակերտների մեջ, որ քեզ տեսնելով մխիթարվեն: Եվ երբ ելնես քո մարմնից, քեզ մոտ չեմ առաքի հրեշտակների և ոչ հրեշտակապետների կամ սերովբեներից որևէ մեկին, այլ հենց Ես գալով հրաշալի փառքով և պատվով՝ քեզ կտանեմ դեպի իմանալի կյանքը՝ վերին Երուսաղեմ»:

Ատվածածնի Վերափոխման տոնը բոլոր Եկեղեցիները տոնում են օգոստոսի 15-ին, սակայն տոնական շրջանի տևողությունը տարբեր է: Այն Եկեղեցիները, որոնք մեկ օր են նշում, տոնախմբում են Ամենասուրբ Կույսի ննջումը: Իսկ ովքեր երեք օր՝ Կույսի հարությունն են տոնում, քանի որ Սուրբ Մարիամի ննջելուց երեք օր հետո հրեշտակների երգեցողությունը, որ լսվում էր Աստվածամոր գերեզմանից, դադարեց, որով և առաքյալներն իմացան Ամենօրհնյալ Կույսի հարության մասին: Իսկ Վերափոխման տոնը ինն օր տոնողները տոնում են այս մտքով: Նրա Միածին Որդին երկինք համբարձվելուց հետո յուրաքանչյուր օր հրեշտակների ինը դասերից մեկում անցկացրեց: Հրեշտակներն ուրախությամբ տոնա-խմբում էին Քրիստոսի Համբարձումը մինչև տասներորդ օրը, երբ Քրիստոս հրեշտակների վերին զորություններից՝ իշխանություններից ու պետություններից վեր անցավ և մտավ խորհրդանշական վարագույրի ներքին կողմը՝ նստելով Իր Հոր աջ կողմում: Նույպես և Միածնի մայրը երկրից յոթնաստղ լուսեղեն խորան վերափոխվելիս անցավ հրեշտակների ինը դասերի միջով՝ ամեն դասում լինելով մեկ օր: Հրեշտակներն օրհնություն և բարեբանություն էին մատուցում և պատվում Բանն Աստծո մորը և ծնողին: Իսկ տասներորդ օրը Աստվածածինը հրեշտակների ինը դասերից վեր անցնելով՝ մտավ վարագույրի ներքին կողմը և նստեց Միածին Որդու աջ կողմում: Մենք սա սովորեցինք մեր լուսավորչից՝ Սուրբ Գրիգորից, և սա մեզանում հաստատվեց ավանդությամբ, որով և հայերս Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը տոնում ենք ինը օր:

ԿՈՒՅՍ ԵՎ ՄԱՅՐ

Շատերի համար զարմանալի է այն, որ քրիստոնեության մեջ Սուրբ Մարիամը համարվում է հավիտենական կույս: «Ինչպե՞ս կարելի է որդի ունենալ և միևնույն ժամանակ կուսության կնիքը անխախտ պահել»,- մտածում են շատ մարդիկ: Հիսուս Քրիստոսի մասին գիտենք, որ Աստված է և Աստված նաև մարդ դարձավ ու ծնվեց սովորական մարդու

պես՝ բոլոր մարդկանց փրկության համար: Իսկ մարդկանց մասին գիտենք, որ մարդու մարմինը ապականացու է ու անկատար: Սակայն մարդու մարմինն ապականացու է մեղքի պատճառով, իսկ եթե այդ պատճառը չկա, ուրեմն այլ է նաև մարդու մարմինը: Հիսուս Քրիստոս կատարյալ մարդ էր, ամեն ինչով մեզ նման, սակայն մեկ տարբերությամբ՝ նա առանց մեղքի էր: Իսկ սա նշանակում է, որ նաև Նրա մարմինն անապականացու էր և փառավոր: Իսկ փառավորյալ մարմնի հատկություններից են նաև թափանցողությունը, այսինքն՝ որևէ նյութական արգելքի միջով թափանցելու, անցնելու կարողությունը և թեթևությունը: Քրիստոսի մարմնի թեթևությունը երևաց այն ժամանակ, երբ Նա քայլում էր ջրերի վրայով (Մատթ. 14.25, Մարկ. 6.48, Հովհ. 6.19), իսկ թափանցելու կարողությունը՝ այն ժամանակ, երբ փակ դռների միջով անարգել մտավ առաքյալների մոտ (Հովհ. 20.19): Եվ ահա ինչպես որ Քրիստոս փակ դռների միջով մտավ առաքյալների մոտ, ճիշտ այդպես էլ ծնվեց Սուրբ Կույս Մարիամից՝ անխախտ թողնելով նրա կուսության կնիքը:

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը եղել է Հակոբոս Տեառնեղբայրը: Հակոբոսը Տիրոջ եղբայրն է, բայց ոչ Մարիամի որդին: Ըստ ուղղափառ, ճշմարիտ վարդապետության՝ Սուրբ Մարիամը հավիտենական կույս է և բացի Քրիստոսից այլ զավակներ չի ունեցել: Այս ուղղափառ վարդապետությանը հակառակվող աղանդներից են հատկապես Եհովայի վկաները և բողոքականները-ավետարանականները, որոնց հայ ներկայացուցիչները այս հակառակումով մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ սուտ են նրանց պնդումները, թե Առաքելական Եկեղեցու հետ մեկ են: Հակառակվողները հիմնականում իբրև փաստարկ բերում են Մատթեոսի Ավետարանի առաջին գլխի վկայությունը, թե Հովսեփը Մարիամի հետ չհարաբերվեց, մինչև Մարիամը ծնեց իր անդրանիկ որդուն և նրա անունը դրեց Հիսուս (25): Սակայն այստեղ *մինչև* բառը չի նշանակում, թե Քրիստոսի Ծննդից հետո Հովսեփը Մարիամից որդիներ է ունեցել: *Մինչև* բառը երկու իմաստ ունի. նախ՝ մի բան չի եղել և հետո եղել է հակառակը, երկրորդ՝ որևէ բան չի եղել և հետո էլ չէր կարող պատահել: Ավետարանի այս հատվածում այս բառն օգտագործված է երկրորդ իմաստով, այսինքն՝ հետագայում էլ չէր կատարվելու նշված գործողությունը: Մենք բոլորս էլ մեր խոսակցական լեզվում, թեև երբեմն անգիտակից կերպով, *մինչև* բառը գործածում ենք այս երկու իմաստներով: Բայց որպեսզի օրինակներն ավելի հատկանշական ու տպավորիչ լինեն, դրանք բերենք Սուրբ Գրքից: *Մինչև* բառը մեզ հետաքրքրող իմաստով գործածված է

նաև Աստվածաշնչի հետևյալ հատվածներում. «...և ոչ ոք մինչև այսօր չգիտի, թե որտեղ է նրա [Մովսեսի] գերեզմանը» (Երկրորդ օրենք 34.6): Սա չի նշանակում, թե այս տողերի գրությունից հետո Մովսեսի գերեզմանի տեղն իմացել են: «Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստիր Իմ աջ կողմում, մինչև որ Քո թշնամիներին դնեմ Քո ոտքերի տակ իբրև պատվանդան» (Սղմ. 109.1, Մատթ. 22.44, Մարկ. 12.35-37, Ղուկ. 20.41-44). այս նախադասությունը նստելուց հետո կանգնած վիճակ չի ենթադրում: «Սավուղի դուստր Մեղքողը մինչև իր մահվան օրը զավակ չունեցավ» (Բ Թագ. 6.23). սա չի նշանակում, թե մահից հետո զավակներ է ունեցել: Նաև Մատթ. 28.20-ում Քրիստոս ասում է. «Ձեզ հետ եմ և կլինեմ մինչև աշխարհի վախճանը», և սա չի նշանակում, որ աշխարհի վախճանից հետո մեզ հետ չի լինելու:

Երբ Քրիստոս Իր գավառը գնաց և ուսուցանում էր ժողովարանում, փարիսեցիները, դեմ լինելով Նրա ուսուցմանը, հարցրեցին. «Սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչվում. և սրա եղբայրները՝ Հակոբոս, Հովսես, Սիմոն և Հուդա»: Եթե ուշադիր լինենք, կտեսնենք, որ այստեղ էլ միայն Քրիստոսն է կոչվում Մարիամի որդի, իսկ մյուսները կոչվում են Քրիստոսի եղբայրներ (Մատթ. 13.55). նրանք Հովսեփի որդիներն էին առաջին ամուսնությունից:

Աստվածածնի հավիտենական կուսությանը մենք հավատում ենք նաև ըստ ավանդության, որը փոխանցվել է առաքյալների կողմից: Եվ Պողոս առաքյալն ինքն է պատվիրում, որ ամուր պահենք ոչ միայն գրվածը, այլև այն ավանդությունը, որն ավանդվել է բանավոր կերպով. «Հաստատ մնացեք և պինդ պահեցեք այն ավանդությունները, որ սովորեցիք թե՛ խոսքով և թե՛ մեր թղթով» (Բ Թեսաղ. 2.14), «Գովում եմ ձեզ, որ հիշում եք ինձ ամեն ինչում և պահում եք ավանդած բաները, ինչպես որ ավանդեցի ձեզ» (Ա Կորնթ.11.2): Առաքյալի խոսքերը ցույց են տալիս, որ բացի գրավոր հորդորներից եղել են նաև բանավոր ուսուցումներ, որոնք Եկեղեցին պահպանել է և փոխանցել հաջորդ սերունդներին (նաև՝ Ա Կորնթ. 11.23, 34, 15.3):

ԻՐԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ

Աստվածածնին պատկերող շատ սրբապատկերներ ու մանրանկարներ կան: Այս գեղեցիկ նկարների միջից առանձնանում է հատկապես Աստվածածնի մորը՝ Աննային, և Սուրբ Մարիամին ու մանուկ Քրիստոսին պատկերող Վերածննդի ժամանակաշրջանի՝ Լեոնարդո դա Վինչիի նկարը: Նկարում հետաքրքրական է հատկապես Լեոնարդո դա Վինչիի գլուխգործոցներից Ջոկոնդայի միմիկական յուրահատկության կրկնութ-

յունը, որը նկատելի է նաև Լուվրի թանգարանում գտնվող Հովհաննես Մկրտչի նկարում: Զոկոնդայի դեմքի նրբագծերը պարզ նկատելի են Սուրբ Մարիամի դեմքին Սուրբ Աննայի հետ նկարում: Սուրբ Մարիամի և Քրիստոսի հետ նկարում Աստվածածնի մոր՝ Սուրբ Աննայի ժպիտը ևս նույն Զոկոնդայի ժպիտն է, և նույն հայտնի ժպիտը կարծես թե արտանկարված է մեկը մյուսից: Բայց եթե այնտեղ վարպետը վրձնի հմտությամբ Զոկոնդայի ժպիտին հանելուկայնություն է հաղորդել, ապա այստեղ Աննայի ժպիտին՝ խաղաղ երանություն: Այս նկարի առնչությամբ արտասովոր մեկ այլ իրողությունն այն է, որ նկարը բոլորովին տարբերվում է Սուրբ Աստվածածնին և Սուրբ Աննային պատկերող այլ նկարների սյուժեից: Նկարում երիտասարդ Աննան է, գոգին՝ Մարիամը, որ խոնարհվել է դեպի գառան հետ խաղացող Քրիստոս մանուկը: Զարմանալի է, որ այստեղ Աննան և Մարիամը պատկերված են երիտասարդ հասակում, մինչդեռ Աննան պետք է տարիքով պատկերվեր: Սուրբ Աննայի շատ նկարներում Աննան տարիքով կին է՝ ձեռքին Մարիամի և Քրիստոսի փոքրիկ պատկեր, մինչդեռ դա Վինչիի նկարում Աստվածածնի հետ պատկերվող նրա մայրը երիտասարդ կին է: Բացատրություններից մեկն այն է, որ նկարիչը չի ցանկացել պատկերել ծերութուն ու կնճիռներ, և կարող ենք ասել, որ մեծ նկարիչը ցանկացել է նաև մարմնական երիտասարդական գեղեցկության պատկերման միջոցով արտահայտել այս սուրբ կանանց հեգևոր գեղեցկությունը, նրանց ներքին մարդը՝ զարդարված ճշմարիտ գեղեցկությամբ: Այս առումով տեղին է հիշատակել Պողոս առաքյալի խոսքը. «Դրա համար էլ չենք տկարանում. այլ, թեպետև մեր այս արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրե. որովհետև մեր թեթև նեղության առժամանակյա հաճախանքը մեր մեջ առաջ է բերում հավիտենական փառք, որ գերազանցում է ամեն ինչ. քանզի չենք նայում տեսանելի բաներին, այլ՝ անտեսանելիներին, որովհետև տեսանելիները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական» (Բ Կորնթ. 4.16-18):

ԿՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կուսությունը մարդկային ամենամեծ առաքինությունն է: Սա վկայեց նաև Քրիստոս, երբ ասաց. «Այն ժամանակ Երկնքի Արքայությունը պիտի նմանեցվի տասը կույսերի» (Մատթ. 25.1): Այսօր ոմանք այս մեծագույն առաքինությունը հաճախ թերություն են համարում: Մարդիկ կան, հատկապես կանայք, ովքեր կյանքի տարբեր պատճառների բերումով չեն ամուսնանում, շարունակում են իրենց կուսական կյանքը, սակայն դա թերություն են նկատում: Մինչդեռ այդ մեծագույն առաքինությունը շատե-

րին չի տրված տանելու: Հովհան Ոսկեբերանն ասում է, որ հանդերձյալ կյանքում մարդկանց փառքն ու պսակը տարբեր է լինելու: Սա է վկայում նաև Պողոս առաքյալը (Ա Կորնթ. 15.41): Եվ ահա կույսերի տեղը լինելու է բոլորից բարձր՝ հրեղեն երկնքում: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ միայն կույսերն են խառնվելու հրեշտակներին՝ ձևավորելով հրեշտակաց տասներորդ դասը, որովհետև կուսությունը հրեշտակների գործ է: Կույսերի մասին ավետարանական առակում հինգը կույսերը կոչվում են հիմարներ, մերժվում են Քրիստոսի կողմից և չեն կարողանում մտնել Երկնքի Արքայություն: Բայց ո՞րն էր արդյոք պատճառը. չէ՞ որ բոլորն էլ կույսեր էին, բոլորն էլ մեծ ճգնությամբ պահել էին այդ ամենամեծ առաքինությունը: Հիմար կույսերը չկարողացան վառ պահել իրենց լապերները: Լապտերը երեք բաներով է վառվում՝ լույս կամ կրակ, ձեթ և պատրույգ: Եթե սրանցից մեկը պակասի, ապա լապտերը կհանգչի: Լույսը կուսության առաքինությունն է, ձեթը՝ մարդասիրությունը և ողորմությունը, իսկ պատրույգը՝ ճշմարիտ դիտավորությունը: Ահա այսօր շատերն ունեն այս մեծագույն առաքինությունը, դրա հետ մեկտեղ նաև մարդասեր են և ողորմություն են անում, սակայն չունեն ճշմարիտ դիտավորություն: Մինչ շատերի հայացքներն ուղղված են դեպի երկիր, քչերն են իրենց հոգևոր հայացքները երկինք բարձրացնում: Հիմար կույսերը նրանք են, ովքեր մարմնավորը ցանկացան և դրանից էլ զրկվեցին: Բոլորն էլ կույսեր էին, սակայն կեսը մերժվեցին, որովհետև Քրիստոս ասում է. «Այո, կույս եք, բայց հիմար եք, աշխատեցիք, բայց վարձ չունեք, երկնայինին հարսնացաք, բայց զարդերը չպահեցիք»: Եվ այս մեծագույն առաքինությունն ունեցողները պետք է նաև ճիշտ դիտավորություն ունենան, իրենց հայացքներն ու հոգիներն ուղղեն դեպի Աստված: Իսկ մնացած մարդիկ պետք է խոնարհվեն իբրև մարգարիտ ողջախոհությունն ամփոփող այս մեծագույն առաքինությունն ունեցող մարդկանց առջև, որովհետև, ինչպես ասվում է Հայտնության գրքում, նրանք միշտ փառավոր կերպով լինելու են Քրիստոսի հետ, ուր էլ Նա գնա (Հայտ. 14.4):

ԽԱՉ

ԽԱՉԻ ՄԱՍԻՆ

Քրիստոնեության մեջ մեծ տեղ է գրավում Խաչը: Խաչի վրա մեռավ Քրիստոս՝ Իր զոհագործությամբ մարդկությանը ազատելով չարի ու մեղքի իշխանությունից: Բայց ոմանք թերահավատությամբ ասում են, թե ինչպե՞ս կարելի է մեծարել այն գործիքը, որով սպանություն են գործել: Սա-

կայն այդ մահվան գործիքը Քրիստոսի զոհաբերությամբ դարձավ բանալի, որով բացվեցին Երկնքի Արքայության դռները: Ահա սրանով է, որ խաչը մեծ արժեք է ձեռք բերել: Որոշ աղանդավորներ ընդհանրապես մերժում են խաչը՝ կարծես վախենալով դրանից: Այստեղ չենք կամենում ծավալվել և աստվածաշնչյան մեջբերումներով ու պատմական փաստերով ապացուցել, որ այն ժամանակ հռոմեական մեծագույն պատժամիջոցներից մեկը մարդկանց խաչի վրա գամելն էր, այլ պարզապես ցանկանում ենք զգուշացնել, որ չմոլորվեք աղանդների պատճառով, որոնք դեռ մեկ կամ երկու հարյուրամյակ առաջ կազմավորված՝ խոսում են իրենցից դարեր առաջ եղածի մասին՝ չունենալով ո՛չ ճշմարիտ ավանդություն, ո՛չ ճշմարիտ հավատք և ո՛չ էլ ճշմարիտ աստվածպաշտություն: Մինչդեռ Եկեղեցին ոչ թե նոր է ձևավորվել, այլ սկիզբ է առել Քրիստոսի և առաքյալների ժամանակներից և շարունակաբար եկել հասել է մինչև մեր օրերը: Խաչի հանդեպ այս սուրբ զգացումը երևում է ոչ միայն Խաչին վերաբերող եկեղեցական տոների, այլև մեր ճարտարապետության և մեր ժո-ղովրդի վերաբերմունքի միջոցով: Դրա վկան նաև մեր բազում խաչքարերն են, որոնք սփռված են ողջ պատմական Հայաստանով մեկ և քարե լռությամբ, բայց դարերը հաղթահարող իրենց մշտատևությամբ բաց երկնքի տակ ի լուր ամենքի կարծես գոչում են Պողոս առաքյալի խոսքերը. «Քավ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. 6.14):

ԳՅՈՒՏ ԽԱՉԻ

Կոստանդիանոս կայսրը, որ 313 թ. Միլանի հրովարտակով մինչ այդ հալածվող քրիստոնեությունը ազատ դավանվող կրոն էր հռչակել և Աստծո օգնությամբ հաղթել էր պատերազմում, ցանկացավ մի մեծ տաճար կառուցել Քրիստոսի խաչելության վայրում՝ Գողգոթայում: Այս նպատակի համար Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինե կայսրուհին, գնաց Երուսաղեմ: Բայց այս առաքինի կինը ցանկացավ նաև գտնել Քրիստոսի կորած խաչափայտը: Կայսրուհին գիտեր մահապատժի գործիքները մահապատիժն իրականացված վայրում թաղելու հրեաների սովորության մասին: Սակայն ոչ ոք ճշգրտորեն չգիտեր, թե որտեղ է Քրիստոսի խաչը: Երկար որոնումներից հետո Հեղինեն գտավ Հուդա անունով մի հրեայի, ով մոտավորապես գիտեր խաչի տեղը: Կայսրուհին պեղումներ կազմակերպեց, որոնց արդյունքում գտնվեցին երեք խաչեր՝ Քրիստոսինը և երկու ավազակներինը: Գիտենք, որ Քրիստոսի խաչը տարբերվում էր ավազակների խաչից, որովհետև Քրիստոսի խաչի վրա Պիղատոսի կարգադրությամբ եռալեզու գրությամբ մի տախտակ էր փակցված, որի վրա

գրված էր, թե սա հրեաների թագավորն է (Մատթ. 27.37, Մարկ. 15.26, Ղուկ. 23.38, Հովհ. 19.19): Սակայն խաչերը թաղելու ժամանակ տախտակը բաժանել էին խաչից, որի պատճառով էլ Քրիստոսի խաչը որևէ տարբերակիչ նշան չուներ: Պեղումներին ներկա էր նաև Երուսաղեմի եպիսկոպոսը: Նա առաջարկեց խաչերը հերթով մոտեցնել մի հիվանդ կնոջ: Քրիստոսի խաչափայտին դիպչելով՝ կինն առողջացավ: Այդ նույն ժամանակ մի երիտասարդ պատանու էին տանում թաղելու: Եվ այդ խաչը մոտեցրին նաև մեռած պատանուն, և մեռածը հարություն առավ: Այս լուրն անմիջապես սփռվեց Երուսաղեմում և հարևան վայրերում: Բազմաթիվ մարդիկ հավաքվեցին Երուսաղեմում՝ տեսնելու Սուրբ Խաչը: Բայց մարդկանց մեծ բազմության պատճառով ժողովուրդը չէր կարողանում Խաչը տեսնել: Եվ այդ ժամանակ Երուսաղեմի Մակարիոս եպիսկոպոսը վեր բարձրացրեց խաչը՝ ամենքին ցույց տալու համար, և Սուրբ Խաչին նվիրված փառաբանական երգ երգեց: Այնուհետ Գողգոթայում մի հոյակերտ տաճար կառուցվեց և Խաչն այնտեղ դրվեց: Իսկ Խաչը գտնելու համար պեղումներին աջակցած Հուդա անունով հրեան դարձավ քրիստոնյա, մկրտվեց, իսկ հետագայում դարձավ Պաղեստինի թեմերից մեկի եպիսկոպոս, որոշ ժամանակ նաև փոխարինեց աքսորված Երուսաղեմի Պատրիարքին և Հուլիանոս Ուրացող կայսեր հրամանով նահատակվեց հանուն քրիստոնեության:

ԽԱՉԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհում տարածված մոլորեցնող աղանդներից Եհովայի վկաների աղանդն ընդհանրապես մերժում է խաչը՝ պնդելով, որ Քրիստոսին ոչ թե խաչել են, այլ սպանել են ցցի վրա: Ինչ խոսք, անհեթեթություն է նման պնդումը, որովհետև պատմությունից էլ հայտնի է, որ հռոմեացիների խստագույն պատժամիջոցներից մեկը մարդկանց հենց խաչի վրա գամելն էր: Սակայն մեկ այլ նյութական ապացույց էլ կա: Խաչի ամենամեծ տոնը Խաչվերացի տոնն է, որը հիշեցնում է Խաչի հաղթական վերադարձը և խաչի վերացումը, այսինքն՝ վեր բարձրացվելը: 614 թ. Պարսից Խոսրով թագավորը Բյուզանդիայի Մորիկ կայսեր սպանության վրեժը լուծելու համար պատերազմ սկսեց Փոկաս կայսեր դեմ: Մորիկ կայսրը օգնել էր Խոսրով թագավորին գահ բարձրանալ, և այդ էր պատճառը, որ իր մտերիմի սպանությունը առաջ բերեց պարսից թագավորի զայրույթը: Խոսրովը շատ տարածքներ գրավեց բյուզանդական կայսրությունից, գրավեց նաև Երուսաղեմը և իր հետ, որպես գերի, տարավ Երուսաղեմի Պատրիարքին և Քրիստոսի Խաչը: Սա առաջ բերեց քրիստոնյաների զայրույթը, և հաջորդ Հերակլ կայսրը իր հերթին պատերազմ սկսեց՝ վե-

ռադարձնելու Քրիստոսի Խաչը և կայսրությունից գրավված տարածքները: Հերակլ կայսերը հաջողվեց նաև հայոց զորագնդի օգնությամբ Քրիստոսի Խաչը ետ վերադարձնել 629 թ. սեպտեմբերի 14-ին: Եվ Երուսաղեմի Կյուրեղ Պատրիարքի կողմից խաչը վեր բարձրացվեց ի տես հավատացյալ ժողովրդի: Որպեսզի Խաչն այլևս այսպիսի վտանգների չենթարկվի, որոշվեց այն մանր կտորների վերածել և բաժանել բոլոր քրիստոնեական Եկեղեցիներին: Հայ Առաքելական Եկեղեցուն տրված խաչափայտի այդ մասունքը, մի քանի մասերի վերածված, պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Իջման Սուրբ Սեղանի վրա: Խաչի սուրբ մասունքի մի մասն ամփոփված է ճաճանչաձև պատյանում, որ տարվա ընթացքում դրված է լինում Էջմիածնի Մայր Տաճարում Իջման Սուրբ Սեղանի վրա և դրանով է կատարվում անդաստանի՝ երկրի չորս կողմերի օրհնության արարողությունը Սուրբ Խաչի տոնի օրը: Խաչափայտի մասունքի մեկ այլ մաս ամփոփված է թանկագին քարերով ոսկյա խաչի մեջ, որ պատրաստվել է 1651 թ. և նվիրաբերվել Փիլիպպոս Աղբակեցի Կաթողիկոսին: Այս խաչով է նաև օրհնվում սուրբ մյուռոնը յոթ տարին մեկ անգամ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից կատարվող մյուռոնօրհնության արարողության ժամանակ: Մարդկանց բժշկություն ու հարություն պարգևած սուրբ խաչափայտի զորությունը տարածվում է հավատացյալների վրա:

Երբեմն ոմանց անտրամաբանական է թվում քրիստոնեական Եկեղեցում խաչին այդքան մեծ տեղ հատկացնելը: Սակայն Քրիստոսի Սուրբ Արյունը թափվելով խաչի վրա՝ սրբացրեց այն, և մահաբեր խաչով կատարվեց մարդկանց կենսաբեր փրկությունը: Քրիստոս դիպչելով կենդանություն էր պարգևում: Քրիստոս դիպավ հանգուցյալին և կյանք պարգևեց նրան (Մատթ. 9.25, Մարկ. 5.41-42, Ղուկ. 8.54-55): Նույն կերպ էլ Քրիստոս, դիպչելով բորոտին, ոչ թե Ինքը բորոտությամբ վարակվեց, այլ Իր կենդանարար զորությամբ մաքրեց ու բժշկություն պարգևեց (Մատթ. 8.3): Հիվանդ կինը, դիպչելով անգամ Տիրոջ զգեստին, նույն ժամին բժշկվեց (Մատթ. 9.20, Մարկ. 5.27-29, Ղուկ. 8.43-44): Ահա այդ զորությամբ էլ Քրիստոս սրբացրեց Խաչը: Եվ մենք այս գիտակցությամբ է, որ մեծ ակնածանք ենք տածում Խաչի հանդեպ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ

Խաչը փոխաբերական իմաստով դարձել է նաև մեղքերից ազատվելու ճանապարհ: Երբ մարդը հրաժարվում է մարմնի ստոր, բայց հույժ ցանկալի կրքերից, իրեն չարչարանքների է մատնում՝ կարծես ինքն իրեն խաչելով: Սակայն այս նեղ ճանապահը հետագայում դառնում է քաղցր և ցանկալի: Մեր եկեղեցու սրբերից Գրիգոր Տաթևացին ասում է, որ սա-

տանան տարբեր չար սերմեր է ցանում մարդկանց մեջ: Թագավորների և իշխանավորների մեջ սերմանում է գոռոզություն, նախանձ և կռիվ, վաճառականների մեջ՝ խաբեություն, արհեստավորների մեջ՝ ստախոսություն, որպեսզի վատ գործը գեղեցիկ ցույց տան և լավ գնով ծախեն, որովայնամոլների մեջ՝ հարբեցողություն, կանանց մեջ պճնասիրություն, որպեսզի մարդկանց հոգիները գերեն և մատնեն սատանային, շատ կանանց մեջ էլ շատախոսություն, որպեսզի հատկապես եկեղեցում զրուցեն ու աղմուկ հանեն և այլն: Սակայն այս ամենի մեջ ամենամեծ մեղավորը մենք ենք, որ ցանված մեկ սերմի դիմաց բազում անգամ պտուղներ ենք տալիս: Եվ ահա Եկեղեցում կարգված Սուրբ Խաչի տոները մեզ դարձյալ հիշեցնում են խաչով փրկվելու անհրաժեշտությունը, ինքներս մեզ խաչելը, այսինքն՝ մեր ստոր մտքերից ու ձգտումներից մեծ ջանքերի գնով հրաժարվելը:

ԿԵՆԱՑ ԾԱՌ

Քրիստոսի Խաչը համեմատում են նաև կենաց ծառի հետ, որը դրախտի մեջտեղում էր (Ծննդ. 2.9): Դրախտի կենաց ծառը Խաչն է, իսկ դրա պտուղը՝ Քրիստոս, այսինքն՝ կենաց ծառը խորհրդանշում էր Խաչը, որի պտուղը Քրիստոսի Մարմինն է՝ որպես Հաղորդություն, որի ճաշակմամբ մարդն ընթանում է դեպի հավիտենական կյանք: *Կենաց ծառ* արտահայտությունը փոխաբերական այլ իմաստներով գործածվում է նաև Աստվածաշնչի Առակաց գրքում և Հովհաննու Հայտնության մեջ (Առակ. 3.18, 11.30, 13.12, 15.4, Հայտն. 2.7, 22.2):

ԽԱՉԻ ՆՇԱՆԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Մենք խաչապաշտ ժողովուրդ ենք, բայց քանի որ Աստվածաշունչն արգելում է բացի Աստծուց որևէ առարկայի պաշտամունք, երկրպագություն մատուցելը, պետք է իմանանք, որ խաչ ասելով՝ մենք միշտ նկատի ունենք Խաչը Խաչեցյալ, բայց միևնույն ժամանակ նաև Հարուցյալ Քրիստոսի հետ միասին, և մեր խաչապաշտությունը հենց քրիստոսապաշտությունն է: Այս իմաստով խաչը՝ որպես Քրիստոսի խորհրդանիշ, գործածվում է հատկապես եկեղեցիների շինարարության ժամանակ, երբ եկեղեցու գմբեթին խաչ են հաստատում: Գմբեթի խաչը Քրիստոսի և Եկեղեցու միասնությունն է ցույց տալիս, նաև Քրիստոսի՝ Եկեղեցու գլուխ լինելը:

Եկեղեցական Կանոնագիրքը կարևորում է նաև տարբեր նյութերից պատրաստված փոքրիկ խաչերի հանդեպ հարգանք ունենալը: Ըստ կանոններից մեկի՝ եթե հավատացյալը տեսնում է անհավատի ձեռքին այդ-

պիսի մի խաչ անարգվելիս, պետք է ամեն գնով այն ետ վերադարձնի, այլապես նզովյալ կհամարվի: Սա նաև հիշեցնում է Քրիստոսի խաչափայտի գերվելն ու դրա ետ վերադարձվելը յոթներորդ դարում: Հետաքրքրական է, որ ըստ ութերորդ դարի մեր Կաթողիկոսներից Հովհան Օձնեցու համապատասխան կանոնի՝ հատուկ հարգանքի արժանի են միայն օրհնված և օծված խաչերը, որովհետև նրանց վրա կա Սուրբ Հոգու զորությունը, և դրանք մարդկանց պահպանություն և մարմնի ու հոգու ախտերի բժշկություն են բերում: Եվ նույնիսկ այսպիսի խաչի պաշտպանության համար հեթանոսներից սպանվածները մարտիրոսներ են համարվում: Նաև չարի ազդեցությունից պաշտպանվելու փրկարար զորություն ենք ունենում, երբ մեզ վրա խաչի նշանն ենք անում, այսինքն՝ երբ խաչակնքվում ենք:

Հնում շատ էին կախարդությամբ զբաղվողները, որոնք չարի զորությամբ տարբեր կախարդություններ էին անում: Կային կախարդներ, որ հրաժարվելով իրենց չար ընթացքից, դառնում էին քրիստոնեության: Այս պատճառով էլ հատուկ եկեղեցական կանոններ սահմանվեցին այսպիսի անձանց համար, որոնցից մեկի համաձայն կախարդությունից դարձածներին պետք է ընդունել ապաշխարության համար խիստ կանոններ չսահմանելով, որպեսզի այդ խստությունից զարհուրած նորից նույն չարիքին չդառնան, սակայն պետք է խաչանիշ դրոշմ դնել այդպիսի անձանց ճակատին, ուսերին, ձեռքերին և ծնկներին:

Խաչի նշանն ենք անում նաև ուտելիս՝ աղոթքով գոհանում ենք Աստծուց մեզ կերակուր պարգևելու համար և խաչակնքվում ենք: Չար մարդիկ կարող են իրենց ատելիներին կերակրի միջոցով թունավորել: Նաև պարարտ կերակուրները աշխուժացնում են մարմնի շարժումները, որով մարմնական մեղքի հակումն է առաջ գալիս: Եվ ուտելուց առաջ խաչի նշանն ենք անում, կամ քահանան խաչաձև օրհնում է սեղանին դրված կերակուրները, որպեսզի պարարտ կերակուրները մեղքի չտանեն մարդուն: Դրա համար Եկեղեցու Սուրբ Հայրերը բղջախոհության դեմ պայքարելու համար պահեցողությունն են սահմանել:

Աղ ու հաց կիսելու մեջ ևս խաչի խորհուրդը կա: Վերնատանը Քրիստոս հացը խաչաձև կիսեց, նաև հացն այսպես կիսեց Հարությունից հետո: Եվ սրանից հետո քրիստոնյա ժողովուրդների մեջ տարածվեց աղ ու հաց կիսելու սովորույթը՝ իբրև բարեկամության, հյուրընկալության նշան, որի հիմքում ընկած է խաչի խորհուրդը: Նաև նոր կառուցված եկեղեցու դուռը դրոշմում են խաչի նշանով և բացում մտնում, ինչը խորհրդանշում է, որ Խաչով բացվեցին Երկնքի Արքայության դռները:

Հին Կտակարանի հայտնի դեպքերը նախօրինակներն են Նոր Կտակարանի իրադարձությունների: Մովսեսը խաչանիշ գավազանով բացեց

Կարմիր ծովը (Ելք 14.21), և ժողովրդին առաջնորդեց դեպի տասներկու աղբյուրները և յոթանասուն արմավենիները, որեղ ժողովուրդը հանգըստացավ (Ելք 12.27): Նմանապես Քրիստոս Խաչով մարդկությանը ազատեց մեղքի իշխանությունից, տասներկու առաքյալները զովացրին հավատացյալներին Սուրբ Ավետարանի քարոզությամբ, որոնց հետ նաև յոթանասուներկու առաքյալները, աշխարհի տարբեր կողմերում նստելով իբրև եպսիսկոպոսներ, իրենց հոգեշահ գործունեությամբ մարդկանց պարգևեցին հանգստություն, հոգու խաղաղություն, որի բաշխումը այժմ էլ շարունակում է Քրիստոսի առաքյալների կողմից հաստատված Ճշմարիտ Եկեղեցին:

Աստվածաշնչում խաչի այլ խորհրդանշաններ ևս կան: Անապատում Մովսեսը պղնձե օձ բարձրացրեց գավազանի վրա, և օձերից խայթվածները բժշկվում էին՝ նայելով այդ պղնձե օձին (Թվեր 21.9): Նույնպես երբ նայում ենք մեր փրկության համար խաչի վրա գամված Քրիստոսին, այսինքն՝ երբ մեր սրտերում ընդունում ենք Քրիստոսի զոհագործությունը և հավատում Նրան, արժանանում ենք փրկության: Քրիստոս Ինքը համեմատություն արեց Իր և անապատում վեր բարձրացված օձի միջև Հովհաննու Ավետարանում (3.14-15): Անառակ որդու առակի մեջ զղջացած որդին վերադառնում է չար ճանապարհից հոր մոտ, և հայրը գրկում է նրան (Ղուկ. 15.20): Ողջագուրման մեջ խաչի նշանը կա, որովհետև այդ ժամանակ երկու մարդկանց ձեռքերը այդ գործողությամբ խաչի նշանն են պատկերում: Դա նշանակում է, որ զղջալով՝ մենք կարող ենք հաշտվել Աստծո հետ այն ճանապարհով, որ բացված է խաչի շնորհիվ:

ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՆԱԽՕՐԻՆԱԿՆԵՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Քրիստոսի առաքյալների հատկանշական համեմատություններ կան հինկտակարանյան իրողությունների հետ: Հրեական տասներկու նահապետները՝ Հակոբի որդիները, որոնցից սերվեց հրեա աստվածընտիր ազգը, նախօրինակներն էին Քրիստոսի տասներկու առաքյալների, որոնց քարոզչությամբ քրիստոնյա դարձան բազմաբյուր մարդիկ՝ որպես Աստծո ընտրյալ ժողովուրդ: Հրեաները դուրս եկան Եգիպտոսից և անցնելով Կարմիր ծովով՝ եկան անապատ, այնուհետև հասան Եղիմ, ուր կային ջրի տասներկու աղբյուր և յոթանասուն արմավենի (Ելք 15.27), և կարողացան այնտեղ հանգստանալ: Աղբյուրներն ու արմավենիները խորհրդա-նշում են Քրիստոսի տասներկու և յոթանասուներկու առաքյալ-

ներին, որոնց ավանդած քաղցրագույն վարդապետությունը զովացնում է մկրտության ջրի միջով անցած հավատացյալներին: Մովսեսի կողմից քանանացիների երկիրը ուղարկված տասներկու հետախույզները, ովքեր երկրի պտղաբերությունը իսրայելցիներին ցույց տալու համար խաղողի մի մեծ ողկույզ ձողերի վրա դրած տարան (Թվեր 13.2-16, 24, Բ Օր. 1.23-25), նախօրինակն էին տասներկու առաքյալների, ովքեր խաչի լծակներով մեզ բերեցին Քրիստոսի կենաց ողկույզը և հոգևոր կյանքի ապաշխարության բժշկական քաղցր վարդապետությունը: Երբ Հեսուն ժողովրդին անցկացրեց Հորդանան գետով, տասներկու քարեր կանգնեցնել տվեց՝ ի հիշատակ հրաշքով Հորդանանի միջով անցնելու: Այդ տասներկու քարերը խորհրդանիշն էին տասներկու առաքյալների, ովքեր աշխարհական գետերի փորձանքների միջով ցամաք ելան և հաստատեցին Սուրբ Եկեղեցին:

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ

Քրիստոսի առաքյալների խորհրդանիշներ կան Հայտնության գրքում: Հովհաննես առաքյալի տեսիլքում երևում է մի կին՝ արեգակն իր վրա առած, լուսինն իր ոտքերի տակ և գլխի վրա տասներկու աստղերից պսակ (12.1): Ըստ մեկնության՝ կինը Սուրբ Եկեղեցին է, որը Քրիստոսի հարսն է, որ իմանալի արեգակի լույսով է զգեստավորված և վեր է բարձրացել լուսնի՝ ստվերական և փոփոխական օրենքի վրա: Իսկ տասներկու աստղերից բաղկացած պսակը տասներկու առաքյալների քարոզությունն է, որով զարդարված է Եկեղեցին: Հայտնության մեջ խոսվում է նաև Աստծո քաղաքի մասին, որի պարիսպներն ունեին տասներկու դռներ (21.10-12): Աստծո քաղաքը Սուրբ Եկեղեցին է, իսկ տասներկու դռները՝ առաքյալները, ովքեր Երկնքի ճանապարհներն ու դռները բացեցին մեզ համար: Քաղաքի պարիսպն ուներ տասներկու հիմքեր, որոնց վրա գրված էին Գառան՝ Քրիստոսի տասներկու առաքյալների անունները (21.14): Սա ցույց է տալիս, որ Եկեղեցին հիմնված է տասներկու առաքյալների վրա: Հիմք կոչվում է նախ Քրիստոս ըստ առաքյալի. «Ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է» (Ա Կորնթ. 3.11), նաև առաքյալներն են հիմք՝ իբրև Քրիստոսի մերձավորներ, որոնց գործերն ու խոսքերը Եկեղեցու հիմքը կառուցեցին, ինչպես Քրիստոս ասաց Պետրոսին՝ դու ես վեմը (Մատթ. 16.18), այսինքն՝ այն դավանությունը, որով Պետրոսը Քրիստոսին Աստծո Որդի խոստովանեց, քրիստոնեական Սուրբ Եկեղեցու սկիզբը և հիմքն է: Հովհաննես առաքյալն իր տեսիլքում տեսնում է նաև կենաց ծառը, որ տասներկու անգամ պտուղ էր տալիս՝ ամեն ամիս իր պտուղը, և ծառի տերևը ազգերի բուժ-

ման համար էր (22.2): Կենաց ծառը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, որ կյանք է տալիս բոլորին, ովքեր մոտենում են Նրան: Ծառի տասներկու պտուղները առաքյալներն են, որ Կենաց ծառից՝ Քրիստոսից պտղաբերեցին: Իսկ ազգերի բուժման համար ծառի տերևը Քրիստոսի և առաքյալների վարդապետությունն է, որով բոլոր ազգերը զովացան մեղքերի տապից և հոգու վերքերից բժշկվելով՝ առողջացան:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ

Շատ հետաքրքիր տեղեկություններ կան Հովհաննես Ավետարանչի վերաբերյալ: Գիտենք, որ նա Քրիստոսի ամենասիրելի աշակերտն է եղել (Հովհ. 13.23, 19.26, 21.20): Հովհաննեսը Քրիստոսի հետ նաև բարեկամական կապ է ունեցել: Մարիամ Աստվածածնի պապը Մատթան քահանան էր, որն ունեցավ երեք դուստր՝ Աննա, Սովվե և Մարիամ: Աննայի զավակը Մարիամ Աստվածամայր էր, Սովվեինը՝ Հովհաննես Մկրտչի մայր Եղիսաբեթը, իսկ Մարիամինը՝ Զեբեդյանների մայր Սաղոմեն: Այսինքն՝ Մարիամը, Սաղոմեն ու Եղիսաբեթը մորաքրոջ դուստրեր էին: Հետևաբար, այս առաքյալները բարեկամական կապեր են ունեցել Քրիստոսի հետ, և դա համապատասխանում է այն փաստին, որ հենց այս առաքյալները խնդրեցին Քրիստոսին հանդերձյալ կյանքում նստել Նրա աջ և ձախ կողմերում (Մատթ. 20.21, Մարկ. 10.37), իսկ Քրիստոս խաչված ժամանակ Մարիամին հանձնեց Հովհաննես առաքյալին (Հովհ. 19.26-27): Քրիստոսի հետ բարեկամական կապը նշանակում է, որ Հակոբոս և Հովհաննես առաքյալները բարեկամական կապ են ունեցել նաև Հովհաննես Մկրտչի հետ: Եվ իրոք, այդ երեք ընտանիքները բարեպաշտ ընտանիքներ են եղել, հավատարիմ հրեական ավանդույթներին ու տրամադրություններին: Դա է վկայում նաև այն փաստը, որ այս ընտանիքի անդամները կրել են տիպիկ հրեական անուններ:

Ավետարաններում Հակոբոս առաքյալը միշտ նշվում է Հովհաննեսից առաջ: Սրանից կարելի է եզրակացնել, որ Հովհաննեսը Հակոբոսից երիտասարդ է եղել, և նույնիսկ ավանդությունը նրան համարում է բոլոր աշակերտներից ամենակրտսերը: Հակոբոսը նահատակվել է Հերովդես թագավորի կողմից (Գործք 12.1-2): Իսկ Հովհաննես առաքյալը մեծ հեղինակություն է ունեցել, և երկար տարիներ ղեկավարել է Ասիայի եկեղեցիները: Նա Քրիստոսի հանդեպ իր սերն ապացուցել է նաև հանուն Քրիստոսի կրած իր չարչաչանքներով, երբ բանտարկվել և տանջանքների է մատնվել Ներոն և Դոմիտիանոս կայսրերի հալածանքների ժամանակ:

Շատերս այսօր, որևէ դժվարության կամ դժբախտության մեջ ընկնելով, սկսում ենք դժգոհել Աստծուց, շատերն էլ անգամ հայհոյում են, իսկ

մարդիկ էլ կան, որոնք նույնիսկ ընկնում են հիասթափության կամ անհավատության մեջ: Մինչդեռ Հովհաննեսի չարչարանքները և մյուս առաքյալների նահատակությունը հանուն Քրիստոսի մեզ սովորեցնում են, որ կյանքում սերը որևէ մեկի, հատկապես Աստծո նկատմամբ ընդհանրապես պայմանավորված չէ ինչ-որ շահով կամ օգուտով: Գիտենք, որ Քրիստոս որոշ տեղեր գնում էր միայն երեք աշակերտների Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ, ինչպես օրինակ պայծառակերպության ժամանակ (Մատթ. 17.1; Մարկ. 5.37, 9.1, 14.33; Ղուկ. 9.28): Հակոբոսը և Հովհաննեսը առաքյալների մեջ առանձնանում էին նրանով, որ նրանք երկուսն էլ ամուսնացած չէին և ունեին կուսության մեծագույն առաքինությունը: Քրիստոսի հարությունից հետո Պետրոս առաքյալը, Քրիստոսից իմանալով իր նահատակության մասին, ցույց տալով Հովհաննես առաքյալին՝ ասաց. «Տեր, իսկ սա ի՞նչ կլինի»: Քրիստոս ասաց. «Եթե Ես կամենում եմ, որ դա ապրի մինչև որ Ես գամ, այդ քեզ ի՞նչ հոգ, դու արի Իմ ետևից» (Հովհ. 21.22): Եվ ավետարանիչն ասում է, որ առաքյալները կարծեցին, թե նա չպիտի մեռնի, բայց Քրիստոս չասաց, թե չպիտի մեռնի, այլ կամենում եմ, որ դա ապրի, մինչև որ Ես գամ (Հովհ. 21.23)**:** Եվ Հովհաննես առաքյալի վարքից հայտնի է, որ նրա կյանքի վախճանին Քրիստոս երևաց և կանչեց նրան երկնային փառքի: Եկեղեցական ավանդությունն ասում է, որ մահից հետո Հավհաննես առաքյալը նաև մարմնով վերափոխվեց երկինք Սուրբ Աստվածածնի նման:

ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐ

Եկեղեցական նկարչության մեջ ավետարանիչների խորհրդանիշը համարվում են Եզեկիել մարգարեի տեսիլքում նկարագրված քառակերպ կենդանիները (1.5-10)**:** Մատթեոսի խորհրդանիշն է մարդը, որովհետև նա Ավետարանի սկզբում հիշատակում է Քրիստոսի ազգաբանությունը և ըստ դրա ցույց տալիս Նրա սերելը Աբրահամ նահապետի սերնդից: Մարկոսինը համարվում է առյուծը, որովհետև իր Ավետարանի սկզբում նա առյուծի համարձակությամբ հայտարարում է Հիսուս Քրստոսի աստվածությունը, Ղուկասինը՝ եզը, որովհետև իր Ավետարանը սկսում է Զաքարիայի քահանայագործության պատմությամբ (հրեական քահանաները կենդանիների զոհաբերություններ էին անում տաճարում), իսկ Հովհաննեսինը՝ արծիվը, քանի որ նա իր Ավետարանի սկզբում արծվի պես բարձրանում է երկնային բարձունքները և ընթերցողին ներկայացնում Քրիստոսի աստվածությունը:

ԵԿԵՂԵՑԻ

ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑԻՆ

Երբ Ադամը դրախտում թմրեց, նրա կողից շինվեց Եվան, ու աշխարհը լցվեց բազում մարդկանցով: Նույն կերպ էլ Քրիստոս թմրեց խաչի վրա, և Նրա կողից արյուն և ջուր բխեց (Հովհ. 19.34)՝ խորհրդանշելով հաղորդությունն ու մկրտությունը: Եվ եկեղեցում մկրտության ու հաղորդության խորհուրդներին մասնակից դառնալով՝ բազում մարդիկ առաջ են ընթանում փրկության ճանապարհին: Քրիստոս ասում է. «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, Ես այնտեղ եմ՝ նրանց մեջ» (Մատթ. 18.20): Մենք հավատում ենք, որ երբ հավաքվում ենք եկեղեցում Քրիստոսի անունով և աղոթում, Քրիստոս ներկա է մեր մեջ: Շատ կարևոր է հատկապես եկեղեցի գնալը, որովհետև չնայած որ Աստված մեզ կարող է լսել ցանկացած տեղից, սակայն հատկապես եկեղեցում իրականացվող խորհրդակատարությունների միջոցով ենք ստանում աստվածային շնորհները և այն մեծագույն շնորհը, որ է Սուրբ Հաղորդությունը՝ Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Երբ Աբրահամ նահապետը ցանկացավ ըստ Աստծո խոսքի զոհաբերել իր որդի Իսահակին, նրան խոյ տրվեց, որը մորթվեց Իսահակի փոխարեն (Ծննդ. 22.13): Եվ ինչպես որ այս դեպքը նախօրինակն էր Քրիստոսի զոհագործության, ճիշտ այդպես էլ հրեական տաճարը աղոթավայրի իմաստով նախատիպարն էր ճշմարիտ Եկեղեցու, ստվերն էր ճշմարիտ Եկեղեցու:

Եկեղեցուն նվիրված տոների շարքում ամեն տարի մենք տոնում ենք նաև Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակին: Աշխարհամատուռը այն առաջին աղոթավայրն է՝ վերնատունը, ուր առաքյալներն ու առաջին քրիստոնյաները հավաքվում էին և աղոթում (Գործք 1.12-14): Վաղ քրիստոնեության շրջանում մատուռներ՝ փոքր աղոթավայրեր կառուցվում էին մարտիրոսների գերեզմանների վրա: Իսկ կանաչը բնության զարթոնքի, հարության, նոր կյանքի նշանն է, և այս անունը ցույց է տալիս, որ եկեղեցում մարդկանց հոգիները զարթոնք են ապրում ու ծաղկում աստվածային շնորհներով:

Վերնատունը առաջին եկեղեցին է՝ որպես աղոթավայր: Եկեղեցի բառը նշանակում է հավատացյալների ամբողջություն, սակայն եկեղեցի է կոչվում նաև այն շինությունը, որտեղ հավատացյալները հավաքվում են և աղոթում՝ ըստ Վերնատանը համախմբվող առաքյալների օրինակի: *Եկեղեցի* բառը գործածվում է տարբեր իմաստներով՝ որպես հավատացյալների հավաքականություն, տեղական եկեղեցի և կամ կառույց աղոթելու համար:

Եկեղեցին շատ գեղեցիկ կերպով համեմատում են նոյյան տապանի հետ, որով փրկվեցին Նոյն ու իր ընտանիքը, երկրի գազաններն ու կենդանիները: Սակայն բացի այս փրկարար հատկությունից Եկեղեցին մեկ այլ հրաշալի և զորավոր հատկություն ունի: Նոյյան տապանն ընդունում էր գայլ և գայլ բաց էր թողնում, ընդունում էր ագռավ և բաց էր թողնում ագռավ: Մինչդեռ եկեղեցին ընդունում է գայլ, բայց բաց է թողնում անմեղ գառ, եկեղեցին ընդունում է ագռավ և բաց է թողնում մաքուր աղավնի: Եկեղեցի ասելով՝ մենք նախ հասկանում ենք նաև հավատացյալ ժողովրդի հավաքականությունը, ապա՝ եկեղեցական կառույցը: Ճշմարիտ Եկեղեցին այն Եկեղեցին է, որը հիմնադրվել է Քրիստոսի առաքյալների, Քրիստոսի ճշմարիտ հետևորդների կողմից, և ճշմարիտ քահանան այն անձն է, ով իր քահանայությունը ստացել է Քրիստոսից, այսինքն՝ Քրիստոսի և առաքյալների կողմից փոխանցված հաջորդական ձեռնադրությամբ: Երբ մի մարդ իրեն որևէ բան է հռչակում, իրեն ինքն իրենից կոչումներ է տալիս, ապա մենք այդպիսի մարդուն համարում ենք ինքնակոչ: Ճիշտ նույն

երակում դնենք ճշմարիտ Եկեղեցու և ինքնակոչ եկեղեցու, ճշմարիտ քահանայի և ինքնակոչ քահանայի միջև: Հայերիս համար մեր Մայր Եկեղեցին այն Եկեղեցին է, որը բացի Քրիստոսի առաքյալների կողմից հիմնադրված լինելուց, երկու հազար տարի շարունակ եղել է հայ ժողովրդի ապավենը, զարգացրել և կատարելության է հասցրել ազգային մշակույթը և այսօր էլ փրկության և ազգային ինքնագիտակցության պահպանման ճշմարիտ գրավականն է: Այդ Եկեղեցու անունն է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Պապ թագավորը որոշ տարաձայնություններ է ունեցել Ներսես Մեծ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Կարծիք կա, որ տարաձայնությունների պատճառներից մեկն էլ աղքատանոցների և անկելանոցների առկայությունն էր, որովհետև ըստ թագավորի՝ բազում մարդիկ ընկնում էին անհոգության մեջ և ծուլության մատնվում: Այսօր շատ մարդիկ Եկեղեցին հաճախ շփոթում են սոցապնախարարության հետ: Ոմանք ասում են. «Ինչու՞ Եկեղեցին ինձ նյութապես չի օգնում»: Պետք է բոլորս էլ իմանանք, որ Եկեղեցին առաջին հերթին զբաղվում է մարդու հոգուն և ոչ թե մարմնին վերաբերող հարցերով: Սակայն, ինչ խոսք, ծայրահեղ անհրաժեշտության դեպքում Եկեղեցին միշտ էլ պետք է օգնության ձեռք մեկնի նաև նյութական իմաստով: Հիսուս Քրիստոս Պետրոս առաքյալին երեք անգամ հարցրեց՝ սիրու՞մ ես ինձ, և դրական պատասխան ստանալուց հետո ասաց՝ հովվիր Իմ հոտը: Ըստ Սուրբ Գրիգոր Տաթևացու՝ Քրիստոս

սրանով ցույց տվեց հոտը հովվելու երեք ձևերը, որոնք նախ վերաբերում են թեմի առաջնորդ եպիսկոպոսներին: Եպիսկոպոսներն առաջին հերթին պետք է նյութական օգնություն ցույց տան իրենց թեմի կարիքավորներին ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, որովհետև բոլորի համար անխտիր հոգալը հնարավոր չէ և վտանգ կա, որ մարդիկ կընկնեն ծուլության ու անհոգության մեջ՝ ցանկանալով ապրել ուրիշների հաշվին: Այսօր էլ շատ մարդիկ ենք տեսնում, ովքեր մուրացկանի հոգեբանություն են ձեռք բերել և ծուլության մեջ ընկնելով՝ մուրացկանությունը դարձրել են մասնագիտություն կամ էլ փող վաստակելու հեշտ ճանապարհ: Այսինքն՝ շատ դեպքերում մուրացկանությունը ոչ թե աղքատության նշան է, այլ՝ հոգեբանություն կամ էլ նույնիսկ հոգեկան հիվանդություն: Երկրորդ՝ եպիսկոպոսը պետք է հոգա իր թեմի մարդկանց հոգևոր պետքերը: Եվ երրորդ՝ եպիսկոպոսը պետք է իր կյանքով ու գործերով մյուսների համար օրինակ լինի: Եթե Եկեղեցին ավելի շատ զբաղվի նյութական պետքերով, ապա դրանով կխախտի նաև Քրիստոսի պատվիրանը, որն ասում է. «Հոգ մի՛ արեք, ձեր հոգու համար, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք, և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ի՛նչ պիտի հագնեք, որովհետև հեթանոսներն են այդ բոլորը որոնում: Նախ խնդրեցեք Աստծո արքայությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. 6.25, 32, 33): Եկեղեցուց նյութական օգնություն ակնկալելուց առաջ նախ ինքներս մեզ անկեղծորեն մի հարց տանք. «Փնտրե՞լ ենք արդյոք ամենից առաջ Աստծո արքայությունն ու արդարությունը»: Եթե ոչ, ուրեմն հետևենք Քրիստոսի այս կոչին և հաստատապես պիտի համոզվենք, որ Աստված երբեք չի ստում:

ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աստված մեզ լսում է ամեն տեղից և Աստված ամենուրեք է, սակայն Աստված ամեն տեղ չի իջնում: Աստված չի իջնում տարատեսակ սրահներ ու կինոդահլիճներ, որովհետև դրանք նաև մեղավոր տեղեր են: Մինչդեռ եկեղեցին օրհնված և օծված վայր է՝ մաքրությամբ և սրբությամբ լի: Հենց այստեղ է, որ կատարվում է մեր հաշտությունն Աստծո հետ, այստեղ է, որ քահանայի ձայնը բացում է երկինքը, և երկնային հրեշտակները Քրիստոսի գլխավորությամբ իջնում են եկեղեցու խորան, ուր Սուրբ Հոգով սրբագործվում են Պատարագի հացն ու գինին: «Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել ի Քրիստոս, ողորմելի ենք, քան բոլոր մարդիկ»,- ասում է Պողոս առաքյալը (Ա Կորնթ. 15.19): Բայց եթե ուզում եք հավիտենական կյանք ունենալ, լսեք, թե ինչ է ասում Քրիստոս.

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չըմպեք նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա» (Հովհ. 6.54):

Այսօր շատ մարդիկ ասում են. «Ես իմ մեջ հավատում եմ Աստծուն, աղոթում եմ, էլ ինչի՞ համար եկեղեցի գնամ»: Եվ հենց այս պատճառով որոշ մարդիկ հազվադեպ են եկեղեցի գալիս կամ ընդհանրապես եկեղեցում չեն լինում: Բայց մենք առաջին հերթին եկեղեցի չենք գնում աղոթելու համար: Իրոք, եթե ուզում ենք աղոթել, կարող ենք աղոթել նաև ցանկացած տեղում, և ամեն տեղից էլ մեզ Աստված կլսի, չնայած որ աղոթելը շատ ավելի արդյունավետ է եկեղեցում: Եվ նույն կերպ, եթե ուզում ենք մոմ վառել, ապա կարող ենք մոմ վառել նաև մեր տանը մի որևէ սրբապատկերի առաջ: Եվ եթե ուզում ենք քարոզ լսել, ապա հատկապես այսօր կարող ենք որոշակի ժամերի միացնել ռադիոընդունիչն ու հեռուստացույցը և քարոզ լսել: Հետևաբար, մենք եկեղեցի ենք գնում առաջին հերթին ոչ թե ինչ-որ բան անելու կամ տալու, այլ ստանալու համար: Աստված մարդուն փնտրում է ոչ թե նրանից վերցնելու, այլ տալու համար: Իսկ որտե՞ղ է արդյոք Աստված ավելի մոտ լինում մարդկանց հատկապես Պատարագի օրերին, եթե ոչ եկեղեցում: Քրիստոս ասում է, որ Իր հիշատակի համար սրբագործվող հացն ու գինին Իր Մարմինն ու Արյունն են: Եվ մենք հաստատապես գիտենք ու հավատում ենք, որ Պատարագի ժամանակ Սուրբ Սեղանի վրա օրինական հոգևորականի կողմից սրբագործվող հացն ու գինին աստվածային զորությամբ դառնում են Հիսուս Քրիստոս, ով Իրեն ամբողջովին բաշխում է հավատացյալներին: Եվ, հետևաբար, մենք առաջին հերթին եկեղեցի ենք գնում աստվածային շնորհներ ստանալու, հատկապես ստանալու այն մեծագույնը՝ Սուրբ Հաղորդությունը, որով Քրիստոս Աստված Իրեն տալիս է մարդկանց: Մարդիկ կան, ովքեր աղանդավորների, հերետիկոսների նման ասում են, որ այդ հացն ու գինին մարմին և արյուն չեն, այլ պարզապես մարմնի ու արյան խորհրդանիշ և, հետևաբար, դրա համար էլ պետք չէ եկեղեցի գնալ, կարելի է այլ տեղում էլ հավաքվել: Բայց Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին ասում է. «Եթե Քրիստոս Ինքն ասաց, որ դրանք Իր Մարմինն ու Արյունն են, ապա ո՞վ կհամարձակվի հակառակը ասել»: Ուղղափառ, ճշմարիտ հավատքի հետևորդները բազում անգամներ տեսիլքներ են տեսել, որոք ցույց են տվել, ապացուցել են, որ այդ հացն ու գինին Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արյունն են, մինչդեռ հակառակը պնդողներից ոչ ոք մինչև այսօր տեսիլք չի տեսել, որը ցույց կտար, թե դրանք մի պարզ խորհրդանիշ են: Մարդը չի կարող փրկվել միայն Ավետարանի քարոզչությամբ, որովհետև, օրինակ, եթե քաղցած որևէ մեկի հետ մենք խոսենք հացի մասին, ասենք, թե ինչ գեղեցիկ, կենդանարար հատկություններ ունի հացը, նա, միևնույն է, վերջ ի վերջո սովից կմեռնի: Այդ իսկ պատճա-

ռով էլ եկեղեցիներում Աստված ոչ միայն Իր պաշտոնյաների միջոցով քարոզում է Իր վարդապետությունն ու արքայությունը, այլև Իրեն է ամբողջովին տալիս հավատացյալներին: Քրիստոսի Մարմինն ու Արյունը նման են թթխմորի, որն աստիճանաբար փոխում է ադամական մարմինը, մաքրում մեղքերից, թերություններից, արատներից, ինչպես որ մի փոքրիկ թթխմորը փոխում և իրեն է նմանեցնում խմորի ողջ զանգվածը: Եվ եթե շատերդ անգիտության պատճառով արդեն երկար ժամանակ է, ինչ չեք հաղորդվել Քրիստոսի սրբարար Մարմնին ու Արյանը, ապա մի կորցրեք այս գեղեցիկ հնարավորությունը, գնացեք եկեղեցի և ճաշակեցեք Հաղորդությունը, որովհետև միայն եկեղեցիներում է հնարավոր Աստծո հետ հաղորդակցությունը ոչ միայն հոգեպես, այլև նյութապես: Հաղորդություն ստանալու պայմաններն են նախ մկրտված լինելը, այնուհետև սեփական մեղքերի համար զղջալն ու ապաշխարելը և Պատարագից առաջ կամ Պատարագի ընթացքում քահանայի միջոցով մեղքերի թողություն ստանալը:

ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՁՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցին, եկեղեցականները Աստծուն ծառայելուց և ժողովրդի հոգևոր կարիքներին սպասավորելուց բացի նաև հանդես են գալիս որպես միջնորդ հավատացյալի և Աստծո միջև, ինչպես, օրինակ, մեղքերի թողությամբ, մկրտության միջոցով Երկնքի Արքայության և հավիտենական կյանքի ժառանգորդ լինելու շնորհի փոխանցմամբ, եկեղեցական խորհրդակատարություններով հավատացյալին Աստծո շնորհներին հաղորդակից լինելու գործում:

«Օրինեալ լինի նա Տիրոջից, որ իր գութը չպակասեցրեց ողջերից եւ մեռածներից» (Հռութ 2.20),- ասվում է Հռութի գրքում ողորմություն տված մարդու մասին: Նաև Աստվածաշնչում մեկ այլ տեղ՝ Մակաբայեցիների գրքում, նշվում է մեռյալների հարության հույսով մեռածների համար աղոթելը. «Սթափ մտածելով՝ նա չորս սատեր արծաթ հավաքեց և տվեց, որ տանեն, Երուսաղեմում զոհեր մատուցեն կատարված մեղքերի համար: Դա խիստ իմաստուն քայլ էր, որովհետև ինչ որ անում էր, մեռելների հարության մասին մտահոգվելով էր անում: Եթե պատերազմում ընկածների հարության ակնկալություն չունենար, զուր կլիներ մեռելների համար աղոթք մատուցելը: Նա ճիշտ էր հասկացել, որ գեղեցիկ մահով ընկածները շնորհների են արժանանում: Նա հավատում էր, որ քաջությամբ ընկածները մեղքերի թողություն կստանան» (Բ Մակաբ. 12. 43-46): Եվ մենք էլ մեր գութը չպակասեցնելով ողջերից և մեռածներից և մեռյալների հարության ակնկալությունն ունենալով՝ Պատարագի ընթացքում ա-

ղոթում ենք մեր ննջեցյալների համար՝ խնդրելով նաև հոգևորականի աղոթքը ննջեցյալի համար եկեղեցում կատարվող հոգեհանգստյան արարողության ընթացքում: Այսինքն՝ Եկեղեցին նաև ննջեցյալի հետ կապված հարցում, նրա համար աղոթելով և Աստծո ողորմությունը խնդրելով, հանդես է գալիս որպես միջնորդ:

Եկեղեցու և հոգևորականության միջնորդական դերը չեն ընդունում աղանդավորները, բաղոքական-ավետարանականները: Եկեղեցու միջնորդական դերի մերժումը սկսվեց հատկապես 16-դ դարում բողոքականության առաջնորդների կողմից: Հռոմի Կաթլիկ Եկեղեցում տարածում էր գտել ինդուլգենցիան՝ մեղքերի թողության թղթերի վաճառքը, որը 13-րդ դարից սկսած հոգևորականների հարստացման հիմնական միջոցներից մեկն էր, որովհետև Եկեղեցի էին մուտք գործել մարդիկ, որոնց նպատակը ոչ թե Աստծուն և մարդկանց ծառայելն էր, այլ՝ սեփական որովայնին և մամոնային: Սրա դեմ առաջինը պայքարեց Լյութերը, ով, սակայն, ընկավ հակառակ ծայրահեղության մեջ՝ բոլորովին մերժելով Եկեղեցու և հոգևորականության դերը հավատացյալի կյանքում: Այդ ժամանակամիջոցը պատմության մեջ հայտնի է ռեֆորմացիայի (բարեփոխման) ժամանակաշրջան անունով: Ռեֆորմացիայի հայրենիքը Գերմանիան էր, իսկ դրա սկիզբը համարվում է Մարտին Լյութերի (1483 – 1546) ելույթը Վիտտենբերգում 1517 թ.՝ ինդուլգենցիայի դեմ ներկայացված 95 թեզիսներով: Ռեֆորմացիայի երկրորդ կենտրոնը Շվեյցարիան էր, որտեղ բողոքական հայացքները ձևավորվեցին ֆրանսիացի Ժան Կալվինի (1509-1564) միջոցով: Ռեֆորմացիայի ընթացքը պատմաբանները բնորոշում են հատկա-նշված 3 հետևյալ ուղղություններով:

1. Բուրժուական (ավելացնենք նաև՝ կրոնական), որի գաղափարախոսները՝ Լյութերը և Կալվինը, ասում էին, որ հավատացյալին աստվածային շնորհներին հաղորդակից են դարձնում ոչ թե Եկեղեցու խորհուրդները, այլ հավատը, մերժում էին հոգևորականությունը և նրա միջնորդական դերը: Դրա համար Լյութերը ապացուցում էր, որ պետք է աշխարհիկացնել եկեղեցապատկան հողերը, վանքերը, հիվանդանոցները, դպրոցները:

2. Սոցիալական անհավասարության դեմ պայքարողներ. – Սրանք գյուղացիներն էին, ովքեր խիստ շահագործումից ճնծված՝ հանդես էին գալիս խոշոր հողատերերի դեմ, իսկ Եկեղեցին ևս հողատեր էր: Այս պայքարողների շարքում էին նաև անաբապտիստները, ովքեր անհարաժեշտ էին համարում երկրորդ մկրտությունը գիտակցական տարիքում:

3. Հասարակության վերին խավը. - Հողատերեր, ովքեր իրենց տիրույթները ցանկանում էին ընդլայնել Եկեղեցու հողերի հաշվին:

Այսպիսով, հասարակության տարբեր խավերի մոտ տարբեր միտումներով դժգոհություն էր առաջացել Եկեղեցու դեմ, և ստեղծվել էր այնպիսի մթնոլորտ, որում բողոքականության գաղափարներն արագորեն ընդունվեցին մեծ թվով մարդկանց կողմից:

Սակայն միջնորդությանն անդրադառնալով՝ Սուրբ Պողոս առաքյալը խոսում է Քրիստոսի փրկչական քավության մասին՝ ասելով. «Որովհետև կա... մեկ Միջնորդ Աստծո և մարդկանց միջև՝ Հիսուս Քրիստոս Մարդը, Ով Իրեն իբրև փրկանք տվեց բոլորի համար» (Ա Տիմ. 2.5): Սուրբ Հովհաննես առաքյալը նույնպես նման միտք է արտահայտում քավության և դրա հետ կապված միջնորդության մասին: Նա ասում է. «Եթե մեկը մեղանչի, Աստծո առաջ բարեխոս ունենք Հիսուս Քրիստոսին՝ արդարին և անարատին: Նա է մեր մեղքերի քավությունը, և ոչ միայն մեր, այլև ամբողջ աշխարհի» (Ա Հովհ. 2.1-2): Հետևաբար, այն միջնորդությունը, որի մասին Պողոս առաքյալը խոսում է, վերաբերում է փրկագործությանը: Իսկ այն բարեխոսությունը, որի մասին Սուրբ Հովհաննես առաքյալն է խոսում, վերաբերում է քավությանը: Մինչդեռ բողոքականները, նկատի ունենալով այս երկու տեսակի միջնորդությունները, Եկեղեցու դեմ հանդես գալով՝ իրենց մերժումը տարածեցին միջնորդության ողջ հասկացության վրա: Նրանք պնդում էին, և հիմա էլ նրանց հետևորդները հավաստում են, որ հավատի միջոցով ենք հաղորդակից դառնում շնորհներին: Սակայն որտեղի՞ց է հավատը: Պողոս առաքյալն ասում է. «Ինչպե՞ս հավատան, ում մասին չլսեցին. կամ՝ ինչպե՞ս լսեն առանց մեկի քարոզելուն. կամ՝ ինչպե՞ս քարոզեն, եթե չառաքվեցին» (Հռոմ. 10.14): Նշանակում է՝ Եկեղեցին այն միջնորդն է, որի միջոցով մարդիկ հասնում են առ Աստված հավատին: Սուրբ Պողոս առաքյալն այս մասին բացատրում է կորնթացիներին, կապված իր և Ապողոսի սպասավորության հետ, ասելով. «Իսկ արդ՝ ո՞վ է Պողոսը կամ ո՞վ է Ապողոսը. սպասավորներ, որոնցով հավատացիք» (Ա Կոր. 3.4-5): Նույնն է ասվում նաև Հովհաննես Մկրտչի վերաբերյալ. «Նա եկավ վկայելու համար, որպեսզի վկայի Լույսի մասին, որպեսզի ամենքը հավատան նրա միջոցով» (Հովհ. 1.7): Բայց երբ մարդկանց հավատի են բերում, նրանց չեն լքում, այլ ուղղություն են ցույց տալիս, առաջնորդում, որպեսզի չմոլորվեն: Երբ Պենտեկոստեի օրը Պետրոսի ճառից հետո երեք հազար հրեաներ հավատացին և հարցրեցին՝ ի՞նչ անենք, առաքյալները չասեցին, թե հավատը բավական է, այլ հորդորեցին մկրտության (Գործք 2.37-38): Երեք հազար հոգուն մկրտելը բավականին դժվար պիտի լիներ, բայց առաքյալները մկրտեցին նրանց, որովհետև դա էր ճիշտը: Փիլիպպոսը, երբ դարձի բերեց եթովպացի ներքինուն, նրան նաև մկրտեց, միջնորդ եղավ՝ նրան հաղորդակից դարձնելու մկրտության փրկարար խորհրդին (Գործք 8.38): Հե-

տևաբար, Եկեղեցին միջնորդ է մարդկանց հավատի բերելու և նրանց հովվելու, առաջնորդելու իմաստով և իրեն չի վերագրում Քրիստոսին վերաբերող միջնորդությունները: Այսպես Եկեղեցին իր վարդապետությամբ զգուշացնում է ծայրահեղություններից, որից ոմանք չկարողացան զերծ մնալ՝ պայքարելով Եկեղեցում առկա թերությունների դեմ: Եվ Ճշմարտության պահպանումով ու քարոզմամբ Եկեղեցին սովորեցնում է հավատի ոսկե միջինը, որպեսզի մարդիկ պահեն ոսկե օրենքը (Մատթ. 7.12)՝ հանդերձյալ կյանքում մտնելու Հայտնության գրքում հիշվող Աստծո ոսկե քաղաքի (Հայտն. 21.18) ոսկե դարպասներով:

ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ

Եկեղեցին Երկնքի Արքայությունն է երկրի վրա: Եկեղեցին՝ իբրև շինություն, այն միակ վայրն է, որտեղ առավել արդյունավետ են լինում մարդկային աղոթքները, և դարձյալ՝ եկեղեցին այն միակ վայրն է, որտեղ մարդը կարողանում է հաղորդակցվել Աստծո հետ ոչ միայն հոգեպես, այլև նյութապես՝ Սուրբ Հաղորդության՝ Քրիստոսի Սուրբ Մարմնի և Արյան ճաշակմամբ: Եկեղեցուն բամբասողները, հայհոյողները իրենց վրա մեծ մեղք են բարդում, որով և մեծ պատիժ են ստանալու, եթե այստեղ չապաշխարեն և թողություն չստանան: Եթե քահանան առաքյալներից փոխանցված իշխանությամբ այստեղ մեղքը չի թողնում, այն չի թողնվում նաև Աստծո կողմից, և եթե այստեղ մեղքը չի թողնվում, այնտեղ էլ չի թողնվում նաև պատիժը, ինչպես որ ասաց նաև մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս (Հովհ. 20.23):

Քրիստոսի և Եկեղեցու միասնությունը հաճախ համեմատում են Պսակի խորհրդի հետ: Այսպես ուսացանողներից է հատկապես Սուրբ Պողոս առաքյալը, ով ասում է, որ ինչպես Եկեղեցին հնազանդ է Քրիստոսին, այդպես էլ կանայք պետք է հնազանդ լինեն իրենց ամուսիններին (Եփ. 5.24): Ամուսնության մասին Աստվածաշնչում նշվում է, որ «Դրա համար տղամարդը պիտի թողնի իր հորն ու մորը և պիտի գնա իր կնոջ հետևից» (Ծննդ. 2.24, Մարկ. 10.7, Եփ. 5.31): Եվ սրա իրագործումը լինում է հենց ամուսնության ժամանակ, երբ փեսան թողնում է իր հորն ու մորը և գնում հարսի ետևից: Այսպես նաև Քրիստոս հանուն հարսի՝ Եկեղեցու, նախ թողեց Իր Հորը և մարդացավ, մարմնացավ, աշխարհ եկավ, այնուհետև, երբ խաչի վրա էր, թողեց իր մորը: Սակայն ծնողներին թողնելու և ընտրյալի ետևից գնալու աստվածաշնչյան խոսքերը վերաբերում են ոչ միայն փեսային՝ տղամարդուն, այլև կնոջը, ով ևս ամուսնանալիս թողնում է իր հորն ու մորը և գնում ամուսնու ետևից: Այսպես նաև Եկեղեցին՝ իբրև հարս, Քրիստոսին միանալով՝ թողեց իր հայրական սովորութ-

յունը՝ կռապաշտությունը, և մայրական սովորությունը՝ անընդհատ մեղանչելը, և այժմ գնում է փեսայի՝ Քրիստոսի ետևից նրա Հայրական տուն, այսինքն՝ Երկնքի Արքայություն: Եկեղեցին երբեմն համեմատում են նաև Քրիստոսի պատմուճանի հետ: Երբ հրեաները հռոմեացիների ձեռքով խաչեցին Քրրստոսին, Նրա պատմուճանը չպատռվեց ու չբաժանվեց (Հովհ. 19.23), ու թեև այսօր որոշ կազմակերպություններ, աղանդներ, կրոններ պայքարում են Եկեղեցուն դեմ, այն, այնուամենայնիվ, Քրիստոսի պատմուճանի պես մնալու է անբաժանելի:

Հավատացյալներին դեպի եկեղեցի՝ արարողությանը մասնակցելու է կանչում եկեղեցու զանգը իր ղողանջով: Հնում սովորություն կար եկեղեցու զանգը երեք անգամ հնչեցնել, որպեսզի եթե մարդը առաջին երկու անգամները ծուլանար, ապա երրորդ անգամ մարմնական հակումները հաղթահարելով՝ հետևեր հոգու կանչին և գնար եկեղեցի: Այս երեք անգամ հնչեցնելը կարգվել էր Պետրոս առաքյալի հետ տեղի ունեցած դեպքի նկատառումով: Պետրոս առաքյալը Քրիստոսին ուրանալուց ետ չդարձավ աքաղաղի երկու անգամ կանչելու ժամանակ (Մարկ. 14.72), բայց աքաղաղի երրորդ կանչի ժամանակ առաքյալն արդեն դուրս էր եկել սխալ ընթացքից՝ դառնապես լաց լինելով: Այդ երեք անգամները խորհրդանշում են մարգարեներին, առաքյալներին և վարդապետներին, ովքեր մարդկանց հետ խոսում էին Աստծո մասին և հորդորում ճիշտ կյանքով և հավատքով ապրելու: Մարգարեները հիմնականում գործում էին իրենց ժողովրդի մեջ, առաքյալները քրիստոնեությունը տարածեցին ամբողջ աշխարհում, բայց նրանց օրոք դեռ շատերը հեռու մնացին Քրիստոսից: Սակայն այժմ շարունակվում է քրիստոնյա վարդապետների քարոզչությունը, որով ի վերջո քրիստոնյա է դառնալու նաև ողջ աշխարհը, ինչպես մարգարեանում է Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված իր նամակում (11.25):

Որպես ճշմարիտ հավատացյալներ՝ մենք պետք է մեր հավատքը վկայենք և մարդկանց դեպի եկեղեցի բերենք, նկատի ունենալով եկեղեցին լայն իմաստով, այսինքն՝ հավատքի ճշմարիտ գիտակցություն չունեցողներին ճշմարտության բերելով միացնել հավատացողների խմբին: Սակայն բացի դրանից մենք ինքներս պետք է օրինակելի գործեր անենք, առաքինությամբ ապրենք, այլապես կնմանվենք քիչ առաջ հիշված եկեղեցու զանգին, որը մարդկանց դեպի եկեղեցի է կանչում, բայց ինքը միշտ մնում է դրսում: Եվ այս իմաստով պետք է ոչ միայն զանգ լինենք, այսինքն՝ մեր հավատը հնչեցնող, մարդկանց եկեղեցի բերող, այլև պետք է նմանվենք եկեղեցու մշտավառ կանթեղին, այսինքն՝ մեր սրտերում և հոգիներում միշտ վառ պահենք հավատքի լույսը մեր բարի կյանքով և առաքինություններով:

ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Նոր կառուցվող եկեղեցու հիմնօրհնեքի ժամանակ հիմքի մեջ տեղադրվում են տասնվեց քարեր՝ ըստ Քրիստոսի առաքյալների և չորս ավետարանիչների թվի: Տասներկու առաքյալներից երկուսը՝ Մատթեոսն ու Հովհաննեսը, ավետարանիչներ են, և քանի որ նրանք հիշվում են որպես ավետարանիչներ, մյուս առաքյալների տասներկու թիվը լրացվում է Պողոս առաքյալի և Գրիգոր Լուսավորչի անունների հիշատակումով: Հիմնօրհնեքի արարողության ընթացքում քարերը լվանում են նախ ջրով, հետո՝ գինով, այնուհետ օծում մեռոնով, որից հետո քարերը տեղադրվում են հիմքի մեջ հատուկ նախատեսված վայրերում: Քարերի ջրով լվացումը հիշեցնում է ոտնլվան և ակնարկում մկրտությունը, գինով լվացումը՝ վերնատանը Վերջին Ընթրիքը և հաղորդությունը, իսկ մյուռոնով օծումը՝ այն, որ Աստծո Հոգով օծվեցին առաքյալները և զորություն առան Սուրբ Հոգով մկրտելու:

Եկեղեցին կառուցվում է տարբեր չափսերի քարերից՝ դառնալով մեկ ամուր կառույց: Սա խորհրդանշում է տարբերի տարիքի մարդկանց, ինչպես և տղամարդկանց ու կանանց միությունը՝ ըստ առաքյալի խոսքի. «Խտրություն չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի և ո՛չ էգի. որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս» (Գաղ. 3.28): Գեղեցիկ խորհրդանիշ է նաև եկեղեցու ներքին կառուցվածքը: Եկեղեցու սյուները խորհրդանշում են առաքինությունները, սյուները միացնող կամարները՝ սերը, որով գործվում են առաքինի գործերը, խաչով զարդարված երկնասլաց գմբեթը՝ հավատքով և խաչի զորությամբ դեպի երկինք բարձրանալը: Եկեղեցին համեմատվում է երեք մասից բաղկացած նոյյան տապանի հետ: Եկեղեցին ևս եռամաս է՝ նախամուտք-գավիթ, եկեղեցու բուն մասը և խորանը, որտեղ մատուցվում է Սուրբ Պատարագը: Նոյյան տապան մտնողները փրկվեցին ջրհեղեղից: Այսպես էլ եկեղեցի մտնողները փրկվում են մեղքերի ալեկոծություններից: Նոյը տապանից բաց թողեց սև ագռավին, որ հեռանալով՝ այլևս չվերադարձավ (Ծննդ. 8.7): Այսպես էլ Քրիստոս եկեղեցուց՝ հավատացյալներից, հեռացրեց սևացած սատանային: Ձրհեղեղի ջրերի ցամաքելուց հետո Նոյը զոհասեղան կանգնեցրեց և զոհ մատուցեց (Ծննդ. 8.20): Նույն կերպ էլ մարդն իր մեղքերի ցամաքելուց հետո իր բարի գործերը դարձնում է զոհասեղան և ընծա մատուցում իր մտքի աղոթքները: Եկեղեցին համեմատվում է նաև բաբելոնյան աշտարակի հետ, սակայն՝ դրական իմաստի նկատառումով: Եթե բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ մարդիկ հպարտությամբ էին ցանկանում աշտարակ շինել

և դեպի երկինք բարձրանալ (Ծննդ. 11.4), ապա Եկեղեցու պարագային այն իբրև աշտարակ կառուցվում է Քրիստոսի վեմի վրա, և մարդը դեպի Աստված է բարձրանում խոնարհությամբ և պատվիրանների աստիճաններով: Ամբարտավան աշտարակաշինության պատճառով մարդիկ բաժանվեցին յոթանասուներկու ազգերի և ցրվեցին տարբեր կողմեր, իսկ Քրիստոսի յոթանասուներկու առաքյալները ազգերին միավորեցին ի Քրիստոս հավատով:

Եկեղեցում արարողությունների ժամանակ առավել հաճախ գործածվող եկեղեցական սպասքներից են քշոցը, բուրվառը, խնկամանը: Քշոցը բոլորակ մետաղյա թիթեղ է բոժոժներով և երկար կոթով, որը շարժելով հնչեցնում են եկեղեցական արարողությունների հանդիսավոր պահերին: Այն խորհրդանիշն է եկեղեցում ներկա անտեսանելի երկնային զորությունների և հիշեցնում է Դանիելի մարգարեության մեջ հիշատակվող, Աստծուն պաշտող հազար-հազարավոր հրեշտակներին (Դան. 10.7): Խնկամանը խորհրդանշում է Աստվածածնին՝ լի անուշավետ շնորհներով, բուրվառը՝ խունկ ծխելու և խնկարկելու մետաղյա, չորս երկար շղթաներով եկեղեցական անոթը, և դրանով խնկարկությունը հիշեցնում են Գաբրիել հրեշտակապետի անուշաբեր ավետիսը: Խնկարկությունը և անուշահոտ ծխի ելնելը վեր խորհրդանշում է նաև եկեղեցում ի մի հավաքված հավատացյալների աստվածահաճո աղոթքների երկինք բարձրանալը: Պատարագի արարողության նախատեսված ժամանակամիջոցում քահանայապետի նստելը խորանին դրված հատուկ աթոռին հավատացյալներին հիշեցնում է Քրիստոսի փառավոր գալուստը:

Ե՛վ եկեղեցական շինությունը, և՛ հավատացյալները եկեղեցի են, առաջինը՝ որպես աղոթավայր, իսկ երկրորդը՝ հոգևոր իմաստով: Եվ երկուսի մեջ էլ ներկա է Աստված. եկեղեցի-աղոթավայրում նաև պատարագումով ներկա է Քրիստոս, իսկ հավատացյալները հաղորդությամբ միանում են պատարագյալ Քրիստոսին, զորանում որպես Աստծո հոգեղեն տաճարներ, ինչպես առաքյալն է ասում. «Չգիտէ՞ք, որ Աստծու տաճար էք դուք, և Աստծու Հոգին է բնակվում ձեր մեջ» (Ա Կորնթ. 3.16): Նորակառույց եկեղեցին օրհնվում է Աստծո անունով և օծվում: Նույնպես հավատացյալը օրհնվում է, մկրտվում Սուրբ Երրորդության անունով և օծվում Քրիստոսի անունով: Եկեղեցում Սուրբ Հաղորդության ճաշակումը հիշեցնում է Քրիստոսի խոսքերը. «Ուտեք և խմեք Իմ սեղանից Իմ արքայութեան մեջ» (Ղուկ. 22.30):

ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՎԱՅՐ

Եկեղեցին տարբեր մարդկանց կողմից դիտվում է տարբեր տեսանկյուններով: Ոմանք եկեղեցին դիտում են որպես միայն ճարտարապետական կոթող: Սակայն եկեղեցական շինությունն առաջին հերթին պետք է ընդունել աղոթավայր լինելու, Աստծո պաշտամունքի վայր լինելու իր նշանակությամբ:

Եկեղեցական մեր տոնացույցում Սուրբ էջմիածնի տոնին նախորդում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապից ելնելու հիշատակությունը: Այս հաջորդականությունը ճիշտ է նաև պատմականորեն: Խոր Վիրապից դուրս գալուց հետո Սուրբ Գրիգոր Լուսավորիչը տեսիլք տեսավ, ըստ որի՝ Քրիստոս իջավ Հայոց աշխարհ և ցույց տվեց այն տեղը, որտեղ պետք է տաճար կառուցեին Աստծուն պաշտելու համար: Եվ դրա համար էլ այդ վայրը կոչվեց էջմիածին, որ գրաբարից թարգմանաբար նշանակում է իջավ Միածինը, այսինքն՝ Աստծո Միածին Որդին այստեղ իջավ: Սուրբ Գրիգորի տեսիլքը ցույց է տալիս, որ Աստված Ինքը հատուկ ուշադրության արժանի է համարում այն կառույցը, որտեղ մարդիկ պետք է Աստծուն պաշտեն:

Այսպես նաև Հին Կտակարանում Աստված հատուկ ուշադրության է արժանացնում այն կառույցը, որտեղ պետք է պաշտամունք կատարվեր: Աստված հրամայեց Մովսեսին շինել տապանակը՝ հաղորդելով դրա համար անհրաժեշտ չափսերն ու պարագաները (Ելք 25.10): Դարձյալ Մովսեսին հրամայեց պատրաստել տալ պաշտամունքի համար նախատեսված վրանը, խորանը, զոհասեղանը և պաշտամունքային սպասքները՝ հայտնելով պատրաստության մանրամասները, նույնիսկ ցույց տալով այն արհեստավորին և արհեստավորի օգնականին, ովքեր կարող էին այդ գործն իրականացնել (Ելք 26, 27, 31.1-11): Աստված նաև Դավիթ թագավորի հետ խոսեց տաճարի կառուցման մասին (Բ Թագ. 7.4-13), Սողոմոնին գովեց տաճարի կառուցման համար (Գ Թագ. 6.11): Եվ ահա նույն կերպ Աստված Սուրբ Գրիգոր Լուսավորչին ցույց տվեց, թե որտեղ պետք է կառուցվի Սուրբ էջմիածնի Մայր Տաճարը: Սա ակնհայտորեն վկայում է, որ Աստված հետաքրքրված է աղոթավայրերով ու դրանց շինությամբ և կարևոր է համարում այնտեղ մատուցվող պաշտամունքը: Ահա հենց այս պատճառով էլ աստվածպաշտության կամ հոգևոր արարողությունների համար մենք աղանդավորների նման չենք հավաքվում պատահական դահլիճներում, կինոթատրոններում, թատերական սրահներում, այլ համախմբվում ենք եկեղեցիներում: Եկեղեցական կանոնագիրքն անգամ անվավեր է համարում խիստ անհարկի պատճառներով եկեղեցուց դուրս կատարված արարողությունները, ինչպես օրինակ, եկեղեցուց դուրս պսակ կատարած քահանային պատվիրում է կարգալույծ անել՝ քահանայական աստիճանից զրկել, պսակը համարել անվավեր և

պատշաճ արարողությամբ զույգին պսակել եկեղեցու ներսում (Կանոններ Հովհան Իմաստասերի, ԺԵ): Նման կանոններով մեր հայրերն առաջնորդվել են դարեր շարունակ: Սակայն երբեմն հարգելի կամ մասնահատուկ պատճառներով արարողությունները կատարվում են նաև եկեղեցական կառույցներից դուրս: Օրինակ՝ երբ երեխան հիվանդ է, և բժիշկները խորհուրդ չեն տալիս նրան տանից կամ հիվանդասենյակից դուրս հանել կամ երբ մարդիկ կան, ովքեր ցանկանում են ամուսնանալ, բայց իրենց հիվանդության պատճառով անկարող են տեղից տեղ շարժվել, ապա այսպիսի մարդկանց վերաբերող արարողությունները կատարվում են նրանց գտնվելու վայրում: Սակայն հավատացյալներն իրենք պետք է փափագեն իրենց առնչվող կրոնական արարողությունները եկեղեցական կառույցներում կատարելու, որովհետև, ինչպես նաև վերոնշյալ օրինակներով տեսանք, Աստված այնքան նախանձախնդիր է աստվածպաշտական նպատակներով կառուցված շինությունների համար:

Այսպիսով, աղոթավայր եկեղեցին պետք է ընդունել իր խորհրդաբանական իմաստով՝ այն համարելով ավելին, քան ճարտարապետական կառույց ու շինություն:

ՀԻՆ ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ

Աստված Մովսեսին պատվիրեց շինել մի տապանակ անփուտ, կարծր փայտից՝ երկու կողմերից ոսկով պատած: Այդ տապանակը պարունակում էր հրեաների ամենանվիրական իրերը՝ տասնաբանյա պատվիրանների երկու քարե տախտակները, Ահարոնի ծաղկած գավազանը, մանանայով լի ոսկե սափորը: Տապանակն ուներ երկուսուկես կանգուն երկարություն, կանգունուկես լայնություն, կանգուն և կես բարձրություն (Ելք 25.10, 37.1): Հին Ուխտի այս տապանակը նախատիպն է Նոր Ուխտի տապանակի, այսինքն՝ Եկեղեցու: Ըստ Եկեղեցական Հայրերի՝ տապանակը նաև Աստվածածնի խորհուրդն ունի: Անփուտ փայտը անապական կուսությունն է, ներսի և դրսի ոսկին՝ Սուրբ Աստվածածնի հոգու և մարմնի մաքրությունը, տասնաբանյայի երկու քարե տախտակները՝ Քրիստոսի միավորյալ հոգին և մարմինը, մանանան՝ Քրիստոսի անապական մարմինը, իսկ Ահարոնի ծաղկած գավազանը՝ Հեսսեի արմատը, այսինքն՝ Դավիթ թագավորի հոր՝ Հեսսեի շառավիղը, որից սերեց Քրիստոս: Ճիշտ այսպես էլ երբեմն պատկերացրել են միջնադարյան մանրանկարիչները. Հեսսեի սերունդներին նկարելիս մեջտեղում պատկերել են ծաղկած գավազանը: Ըստ Սուրբ Կյուրեղի՝ տապանակը նաև Հիսուս Քրիստոսի խորհրդանիշն է: Անփուտ փայտը Քրիստոսի անապական մարմինն է, իսկ ոսկին՝ հոգու և մարմնի միավորությունը: Այժմ հրեաները

զրկված են ուխտի տապանակից: Երեմիա մարգարեն իր աշակերտի հետ տապանակը գիշերով տարել է այն լեռը, որտեղ բարձրացել էր Մովսեսը Աստծո ժառանգությունը տեսնելու համար, և այն փակել է մի վեմի մեջ՝ ասելով. «Անհայտ պիտի մնա այդ վայրը, մինչև որ Տերերի Տերը բարեհաճ վերաբերմունք ցույց տա իր արարածների նկատմամբ, և Աստված հրամայի ի մի հավաքել իր ժողովրդին» (Բ Մակ. 2.1-8):

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սուրբ Եկեղեցու հավատքի բանաձևի՝ «Հաւատամքի» մեջ, որն արտասանվում է հատկապես Սուրբ Պատարագի արարողության ընթացքում, նշվում է. «Հաւատամք և ի միմիայն, ընդհանրական և յառաքելական Սուրբ Եկեղեցի (հավատում ենք նաև մեկ, ընդհանրական և առաքելական Սուրբ Եկեղեցուն): *Ընդհանրական* բառի փոխարեն երբեմն գործածվում է *կաթուղիկե* բառը, քանի որ *կաթուղիկե, կաթողիկե* կամ *կաթոլիկ* նշանակում է ընդհանրական: Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հոգևորականները դարեր շարունակ փորձել են իրենց գերիշխանությունը տարածել այլ Եկեղեցիների վրա՝ պնդելով, որ Հռոմի Եկեղեցին է Ընդհանրական Եկեղեցին, և մյուսները պետք է միանան իրենց՝ ընդունելով պապի իշխանությունը: Այս կարծիքը հիմնված է եղել այն իրողության վրա, որ Կաթոլիկ Եկեղեցու հիմնադիրը Սուրբ Պետրոս առաքյալն է, ով Քրիստոսի տասներկու առաքյալներից առաջինն էր (Մատթ. 10.2), ինչպես նաև Քրիստոս հենց Պետրոսին ասաց. «Դու վեմ ես, և այդ վեմի վրա պիտի շինեմ Իմ Եկեղեցին» (Մատթ. 16.18): Սակայն առաքյալներն իրենք Պետրոս առաքյալին չէին վերագրում այնպիսի եզակիություն, ինչպես դա հետագայում սկսեց անել Կաթոլիկ Եկեղեցին՝ նշելով նաև, որ Կաթոլիկ Եկեղեցին պիտի դատի մյուս Եկեղեցիներին: Սակայն իրականում Պետրոս առաքյալն ինքն է դատվել մյուս տասնմեկից և երբեք նրանց չի դատել: Հեթանոսներին քրիստոնեություն քարոզելուց հետո Պետրոսը սկսեց մեղադրվել, որ անթլփատների մոտ մտավ: Ուստի Պետրոս առաքյալը Երուսաղեմում մյուս տասնմեկի առջև զեկուցեց իր գործունեության մասին, որից հետո առաքյալները փառավորեցին Աստծուն, որ Իր շնորհներին է արժանացնում նաև հեթանոսներին (Գործք 11.1-18): Նաև բացի տասնմեկ առաքյալներից Պողոս առաքյալը ևս մեղադրանքով հանդես եկավ Պետրոսի դեմ, ով Անտիոքի նորադարձ եկեղեցում մինչև հրեաների գալը հեթանոսությունից դարձածների հետ էր ուտում, բայց երբ հրեաները եկան, նա մի կողմ քաշվեց՝ վախենալով թլփատության կողմնակիցներից: Եվ Պողոսը մեղադրեց Պետրոսին կեղծավորության

մեջ և ասաց. «Եթե դու, որ հրեա ես, հեթանոսի նման ես ապրում և ոչ հրեայի նման, ինչո՞ւ ես ստիպում հեթանոսներին, որ հրեայի նման լինեն» (Գաղ. 2.11-14):

Քրիստոս Պետրոսին երեք անգամ հարցրեց. «Սիրո՞ւմ ես Ինձ», և երեք անգամ էլ դրական պատասխան ստանալուց հետո, Պետրոսին ասաց. «Արածեցրու Իմ ոչխարներին» (Հովհ. 21.15-17): Այս բառերի հիման վրա Կաթոլիկ Եկեղեցին պնդում էր, որ Պետրոս առաքյալը և նրա հիմնած Եկեղեցին ճշմարիտ հովիվն է, և հոտ արածեցնելու պատվերը տրվել է հենց նրան: Սակայն այս կարծիքը ճիշտ չէ, որովհետև Պետրոս առաքյալն ինքը երբեք այպիսի բացառիկ իշխանություն չվերագրեց իրեն և իր թղթում այս գործի համար կարգվածներին կոչում է երիցակից ու նրանց հորդորելով՝ ասում. «Արածեցրեք Աստուծո այդ հոտը, որ ձեզ է հանձնըված» (Ա Պետ. 5:1-2): Քրիստոս Իր հանդեպ Պետրոսի սիրո մասին երեք անգամ հարցնելով՝ բուժեց նրան երեք անգամ ուրացության մեղքից:

Ինչ վերաբերում է Պետրոսին ուղղված Քրիստոսի խոսքին, թե՝ «Ես քեզ ասում եմ, որ դու վեմ ես, և այդ վեմի վրա պիտի շինեմ Իմ եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն» (Մատթ. 16.18), ապա պետք է իմանալ, որ Քրիստոս Պետրոսին *վեմ* կոչեց ոչ թե իր ճիշտ դավանության համար, այլ քանի որ հենց սկզբից էլ նա կոչվել էր Սիմոն Վեմ (Հովհ. 1.40): Հովհան Ոսկեբերանն ասում է, որ իր ճշմարիտ դավանության ժամանակ Պետրոսը խոսեց բոլոր առաքյալների կողմից: Եվ այս դավանությունը նորություն չէր: Այս դեպքից առաջ Քրիստոսին այսպես դավանել էր Նաթանայելը՝ «Դու ես Աստծո Որդին, Իսրայելի թագավորը» (Հովհ.1.49): Եվ դարձյալ Պետրոսն ինքը վկայել էր, որ Քրիստոսին այսպես դավանում են բոլոր աշակերտները. «Եվ մենք հավատացինք և ճանաչեցինք, որ դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին» (Հովհ. 6.70): Երբ Քրիստոս քայլում էր ծովի ջրերի վրայով և Պետրոսը, ուզենալով նույնն անել, թերահավատ գտնվեց, նավում մյուս առաքյալները Քրիստոսին Աստծո Որդի դավանեցին (Մատթ. 14.25-33): Ուստի, որպեսզի Պետրոս առաքյալը մյուսներից ետ չմնա, Հայր Աստված նրան մղեց Քրիստոսին Աստծո Որդի դավանելու: Եվ Քրիստոս *վեմ* կոչեց առաջին հերթին ճշմարիտ դավանությունը, որի վրա է շինվում Եկեղեցին: Իսկ կաթոլիկների պնդումը, թե Պետրոսն է վեմը, և նրա հիմնած Եկեղեցուն որպես գլուխ պիտի ընդունեն նաև մյուս Եկեղեցիները, ճիշտ չէ, բացի դրանից այլ բան է գլուխը, և այլ բան է վեմը, որը կառույցի ստորին, ներքևի մասում է լինում: Իրականում *վեմ* ասելով՝ Քրիստոս նկատի ունեցավ այն ճշմարիտ դավանությունը՝ Պետրոսի կողմից ասված, որի վրա պիտի հիմնվեր Եկեղեցին, և Պետրոսն ինքը երբեք իրեն այդպիսի բացառիկ հեղինակություն չնկատեց՝ միշտ համարելով և իր աշակերտներին էլ ուսուցանելով, որ

ճշմարիտ Վեմը միմիայն Քրիստոսն է (Ա Պետ. 2.1-10): Եվ Քրիստոս նույնպես ճշմարիտ վեմ համարեց հենց Իրեն՝ ասելով. «Եվ ով այս վեմի վրա ընկնի, կփշրվի, և ում վրա որ այն ընկնի, կճզմի» (Մատթ 21.44): Եվ Եկեղեցու գլուխը ոչ թե Պետրոսն է կամ Կաթոլիկ Եկեղեցին, այլ միմիայն Քրիստոս, ինչպես շեշտում է նաև Պողոս առաքյալը (Կողոս. 1.18): Իսկ վեմ՝ որպես եկեղեցու հիմք, ոչ միայն Պետրոս առաքյալն է և նրա ուսուցումը, այլև մարգարեները և մյուս առաքյալները, նրանց քարոզությունը, որով և Սուրբ Եկեղեցին կառուցված է «առաքյալների և մարգարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Քրիստոս Հիսուսն է» (Եփես. 2.20): Հետևաբար, Պետրոս առաքյալն այս հարցում որևէ առավելություն չունի:

Ի հավելումն այս ամենի նշենք, որ Քրիստոս դատապարտեց առաքյալների ձգտումը մեկը մյուսից մեծ լինելու, հանդիմանեց նրանց այսպիսի վեճի համար և ասաց. «Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասավորը պիտի լինի» (Մարկ. 9.32-34): Ինչպես նաև Քրիստոս պատվիրեց. «Գիտեք, որ ազգերի իշխանավորները տիրում են ազգերի վրա, և մեծամեծները իշխում են նրանց վրա: Ձեր մեջ ևս չպետք է այդպես լինի. այլ ձեզնից ով կկամենա մեծ լինել, ձեր ծառան պիտի լինի. և ձեզնից ով կկամենա առաջին լինել, ձեր ծառան պիտի լինի. ինչպես որ մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու» (Մատթ. 20.25-28, Մարկ. 10.43-45):

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Եկեղեցի հազվադեպ եկող մարդը գուցե չի նկատել այս զարմանալի իրողությունը. երբ մարդ մտնում է եկեղեցի, եկեղեցու դռան ետևում է մնում ողջ աշխարհն իր մտահոգություններով, հոգսերով ու անհանգստություններով, և եկեղեցում կարծես սկիզբ է առնում մի այլ աշխարհ, որտեղից սկսվում է հավիտենությունը:

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գիտենք, որ քրիստոնեական կրոնը քարոզում է հնազանդություն իշխողների նկատմամբ, որովհետև ըստ Աստվածաշնչի՝ յուրաքանչյուր իշխանություն տրվում է Աստծո կողմից (Հռ. 13.1): Սակայն շատ սրբերի արարքների մեջ տեսնում ենք անհնազանդություն և նույնիսկ ըմբոստություն հեթանոս իշխողների հրամանների ու կարգադրության դեմ: Ինչպե՞ս կարող ենք հասկանալ քրիստոնեական հնազանդության կոչը և այս սրբերի արարքները: Մեզ հաճախ թվում է, թե հնազանդությունը ազա-

տության սահմանափակումն է: Եվ մեր ժամանակների պատկերացումներն էլ ազատության մասին հասել են անհեթեթության իրենց բարձրակետին: Այսօրվա մարդկանց մեծամասնության մտածելակերպով ազատություն նշանակում է ամեն ինչ անելու կարելիություն: Բայց մի պահ կանգ առնենք և մտածենք՝ մի՞թե ազատություն նշանակում է սանձարձակություն: Երևի կզարմանաք, սակայն իրական ազատությունը կայանում է հնազանդության և սահմանափակության մեջ, և իրողությունն էլ մեզ դա է հուշում: Օրինակ՝ եթե մեզանից մեկը չհնազանդվի պետության օրենքներին, ապա վաղ թե ուշ կկորցնի իր ազատությունը բանտարկությամբ: Եթե որևէ մեկը մարմնով առողջ է, սակայն հոգեկան հիվանդություն ունի, ապա այդպիսի մարդուն մենք երբեք առողջ չենք համարում: Ճիշտ այդպես էլ առանց մեղքի իշխանությունից հոգևոր ազատության՝ մարդկանց ազատ լինելը համարժեք է դառնում անբարոյականության:

Բայց որևէ մեկը կարող է բողոքել, թե շատ սահմանափակումներ կան Աստվածաշնչում: Հետևաբար, ինչպե՞ս կարելի է ազատ լինել սահմանափակումներով: Երբ մենք ծնող ենք դառնում, հասկանում ենք, թե ինչ է նշանակում ծնողական հոգատարություն և նվիրվածություն: Պատկերացրեք, որ ձեր երեխայի հետ հանգստանում եք բնության գրկում: Ձեր երեխան խաղում է, վազվզում մի գեղեցիկ պարտեզում, որից քիչ հեռու մի ահավոր անդունդ կա: Չէ՞ որ դուք խիստ կպատվիրեք ձեր երեխային չմոտենալ անդունդին: Հետևաբար, սահմանափակումը նշանակում է ազատության ապահովություն և հոգածություն՝ կործանումից փրկելու համար: Մինչդեռ այսօր շատ մարդիկ նետվում են այդ անդունդը, գերի են դառնում մեղքի օրենքին և հետևում են անբարոյական թվացյալ ազատությանը:

Ճշմարիտ ազատությունը, որը մեծ չափով բխում է հնազանդությունից, լինում է աշխարհիկ և հոգևոր: Աշխարհիկ և հոգևոր հնազանդությունները միշտ իրար միացած պետք է լինեն և բաժանվեն միայն այն դեպքում, երբ աշխարհիկ հնազանդությունը կարող է սպառնալ հավատքի և հոգու կորստյանը: Այս ամենն իմանալուց հետո մեզ համար հասկանալի է դառնում որոշ սրբերի ըմբոստությունն ու պայքարը:

ՀԱՅՐԵՐ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ

Ի՞նչ կարող են սովորել մեր երեխաները այն սրբերի կյանքի պատմությունից, ովքեր անհնազանդ են եղել իրենց հեթանոս ծնողներին: «Հայրը պիտի բաժանվի որդու դեմ և որդին՝ հոր, մայրը՝ աղջկա դեմ, և աղջիկը՝ մոր» (Մատթ. 10.35, Ղուկ. 12.53, հմմտ. Միք. 7.6),- ասում է Աստվածաշունչը: Հայրերի և որդիների միջև տարաձայնություններ եղել

են բոլոր ժամանակներում, սակայն դրանց բնույթը բոլորովին էլ գովելի չէ: Անհամաձայնությունները միշտ եղել են ծնողների կարծիքների, կամքի և երեխաների նախասիրությունների միջև, մի երևույթ, որ հիմա էլ շարունակվում է մեզանում: Բայց սրբակենցաղ անձանց պարագային իրենց ծնողների կամ պետության հետ հակառակությունները եկել են հիմնականում քրիստոնեական լույս հավատքի հանդեպ նախանձախնդրությունից: Եվ երանի թե այժմ էլ ծնողների և որդիների միջև լիներ տարաձայնության այն տեսակը, որից սրբեր են ելնում:

Ասում են, որ հույն հայտնի փիլիսոփա Դիոգենեսը, մի անգամ տեսնելով մի շատ չարաճճի երեխայի, անցավ նրա կողքով և հասնելով դաստիրարակին՝ գավազանով հարվածեց նրան, քանզի երեխայի չարության առաջին պատճառը նրան սխալ դաստիարակողն է: Հետաքրքիր է, թե քանիսի ծնողներին այսպես կհարվածեր Դիոգենեսը, եթե այսօր անցներ մեր փողոցներով: Դուք բոլորդ էլ տեսել եք, թե ինչ է կատարվում ամեն տարի բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության քննությունների ժամանակ: Հատկապես իրարանցում է սկսվում ծնողների մոտ. նրանք վազվզում են այս ու այն կողմ և անհանգստանում են իրենց երեխաներից հազար անգամ ավելի: Գրեթե բոլորը մտածում են իրենց երեխաներին կրթությամբ, մասնագիտությամբ կամ հագուստնեռով ɑառուառեւու մասին. սակայն շատ-շատեր առաջին հերթին չեն լ *6– Քրիստոնեության խնդրությունը* ւ հոգիները զարդարելու մասին: Մարդիկ փորձում են իրենց երեխաներին մտցնել որևէ հաստատությունից ներս, սակայն ոչ ոք չի անհանգստանում այն բանի համար, որ իր երեխան կտրված է Եկեղեցուց, և դրանով իսկ նրա մոտ բացակայում են ճշմարիտ առաքինություններն ու բարոյականությունը: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է. «Ոչ թե երեխայի ծնունդն է մարդուն հայր դարձնում, այլ ճիշտ կրթությունը, և ոչ թե որովայնում կրելն է մայր դարձնում, այլ բարի դաստիարակությունը»: Եվ մեծ թվով մարդիկ իրենց փոքրիկ երեխաներին երես տալով՝ շատ հազվադեպ են հանդիմանում, և երեխաները մեծանալով պատուհաս են դառնում ծնողների և հասարակության համար: Այսպես և ֆրանսիացի մտածող Ժան Ժակ Ռուսոն այն տեսակետն ուներ, որ երեխան հրեշտակի պես է ծնվում, և հասարակական կյանքն է, որ հետո փչացնում է նրան: Սակայն ահա թե ինչ է ասում Աստվածաշունչը. «Եթե գավազանով քո երեխային ծեծես, չի մեռնի, դու նրան կհարվածես գավազանով, բայց նրա հոգին կփրկես մահվանից» (Առակ. 23.13): Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսն ասում էր. «Երեխաները հրեշտակներ չեն, երեխաներն էլ մարդիկ են և իրենց փոքր հասակից նույնիսկ ապագա թերությունների կորիզն ունեն»: Իսկ Սուրբ Բարսեղ Կեսարացին նշում է, որ երեխաները փափուկ մոմի նման են, ինչ դրոշմ որ դնես

նրանց վրա մանկության ժամանակ, այն էլ հետագայում մնալու է անջնջելի կերպով: Այս իսկ պատճառով Սուրբ Հովհան Ոսկեբերանն իր քարոզներից մեկում կոչ է անում. «Խնդրում եմ ձեզ, ծնողներ, առաջին հերթին ձեր փոքր երեխաների մասին մտահոգվեք»: Անդաստիարակ և չար երեխաների կամ ապագա հանցագործների առկայության պատճառը, ասում է Սուրբ Հայրը, ուրիշ բան չէ, այլ միմիայն ծնողների անմիտ կապվածությունը կենցաղին և իրենց գործերին: Այդպիսի ծնողների մասին Ոսկեբերանն ասում է, որ նրանք երեխաներին սպանողներից ավելի վատն են. մանկասպանները հոգին են բաժանում մարմնից, իսկ սրանք երկուսը միասին գցում են դժոխքի կրակը: Աստվածային իմաստությամբ լցված Սուրբը նշում է, որ ամենից առաջ երեք բաների համար պետք է զգուշանալ երեխայի դաստիարակության գործում: Դրանք են՝ լեզուն, ձեռքերը և մարմինը: Ծնողների մեծ մասը մտածում է, որ այսպիսի դաստիարակության դեպքում իրենց երեխան կմեծանա խեղճ և անճար: «Ինչ է, իմ երեխան չկարողանա՞ պատասխան հարված տալ, երբ իրեն հարվածեն, կամ երբ նեղացնեն, ում ինչ որ պետք է ասի»: Ահա այսպիսի հեթանոսական կամ հինկտակարանյան սկզբունքներ ունեն շատ մարդիկ: Սակայն իրար կողքի դնենք երկու տեսակի դաստիարակությունները և տեսնենք դրանց արդյունքը: Ագրեսիվ երեխան կարող է իրեն պաշտպանել, հայհոյել, սակայն դրա պատճառով նա կյանքում կունենա շատ թշնամիներ, և հայհոյանքի պտուղը կլինի սրտի և մտքի անմաքրությունը: Սուրբ Հովհան Ոսկեբերանի խոսքերն են. «Մի ասա, թե երկար ժամանակ է պետք արդեն հայհոյանք կամ անպատշաճ խոսքեր սովորած երեխային ուղղելու համար, երկու ամիսն էլ բավական է»: Անհոգ ծնողները կպատժվեն ոչ միայն իրենց մեղքերի համար, այլև իրենց երեխաների վրա ունեցած վատ ազդեցության կամ իրենց պարտականության թերացման համար: Առաջին հերթին երեխայի հոգին պետք է զորացնել ու պարարտացնել և ոչ թե մարմինը: Իսկ ինչպիսի՞ն էին քրիստոնեական ոգով դաստիարակված սրբերը: Իրենց հոգևոր իմաստության և ուժի շնորհիվ անգամ գազանները նրանց չէին վնասում և առյուծները ծառայում էին նրանց: «Եթե հայրերը քրիստոնեաբար դաստիարակեին իրենց երեխաներին, ապա պետք չէին լինի ո՛չ դատարաններ և ո՛չ էլ պատիժներ ու զրկանքներ»,- ասում է Հովհան Ոսկեբերանը: Ահա այսպիսի ոգով դաստիարակված երեխաները ծնողների կամ պետության հանդեպ որոշ սրբերի անհնազանդությունից չար վարվելակերպ երբեք չեն սովորի և միայն մեկ կարևոր բան կիմանան՝ Աստված ավելի վեր է քան պետությունը և ավելի բարձր է, քան ծնողը:

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հռոմեական կայսրությունում քրիստոնյաների վիճակը վատացավ, երբ գահ բարձրացավ Հուլիանոս Ուրացող կայսրը (361-363): Նա անվանվեց Ուրացող, որովհետև նախկինում քրիստոնյա էր, բայց հետո ջանաց կայսրությունում վերականգնել հեթանոսությունը: Գրիրգոր Աստվածաբանը Հուլիանոս Ուրացող կայսեր դեմ իր գրություններում հայտնում է, որ երիտասարդության տարիներին Հուլիանոսն իր եղբայր Գալլի հետ մասնակցում էր մարտիրոսներին նվիրված մի տաճարի շինարարությանը, որի ընթացքում Հուլիանոսի եղբոր ջանքերը պսակվում էին հաջողությամբ, իսկ Հուլիանոսի աշխատանքը չէր ստացվում: Գրիգոր Նազիանզացին համարում էր, որ դեռ այն ժամանակ Հուլիանոսի ձեռքի գործերն անընդունելի էին Աստծո համար: Գրիգոր Աստվածաբանի և Հուլիանոսի առաջին հանդիպումը եղել է Աթենքի համալսարանում: Այս առաջին հանդիպումից իսկ Սուրբ Գրիգորը կանխատեսեց Հուլիանոսի վատ ընթացքը նախ նրա տեսքից, քանի որ Հուլիանոսը տգեղ ու այլանդակ էր, նաև խոսվածքից, քանի որ խոսում էր ոչ կապակցված և կցկտուր: Գրիգորը հայտնում է, որ Հուլիանոսը եկել էր Աթենք երկու նպատակով. առաջինի մասին շատերը գիտեին՝ այցելելու ուսումնական հաստատությունները, իսկ այցի երկրորդ նպատակը քչերին էր հայտնի՝ Հուլիանոսը եկել էր այցելելու գուշակներին, նրանցից տեղեկություններ հարցնելու իր ապագայի մասին: Ահա այս ամենից Գրիգոր Աստվածաբանը կանխատեսեց, որ Հուլիանոսի իշխանությունը վատ ընթացք կունենա քրիստոնյաների համար: Սակայն Սուրբ Գրիգոր Աստվածաբանը Հուլիանոսի հալածանքներն առաջին հերթին համարում է Աստծո պատիժ քրիստոնյաներին, քանի որ այդ ժամանակ քրիստոնյաները հոգևոր-բարոյական բարձրության վրա չէին: Երրորդ դարի սրբերից Կիպրիանոս Կարթագենացին նույնպես պատիժ է համարել քրիստոնյաների դեմ ուղղված հալածանքները, որ եղան Դեկոս կայսեր օրոք: Այդ ժամանակ էլ քրիստոնյաները հոգևոր-բարոյական անկյալ վիճակում էին. սկզբնական հալածանքներին նախորդած խաղաղ ժամանակաշրջանում պակասել էր քահանաների բարեպաշտությունը, իսկ եպիսկոպոսներն անգամ քաղաքից քաղաք էին շրջում նյութական շահի ակնկալիքով: Իր ժամանակի հոգևորականների դեմ այս իմաստով քննադատաբար է խոսում նաև Գրիգոր Աստվածաբանը: Նա նաև այն միտքն է արտահայտում, որ բարեպաշտ Կոստանդիանոսի օրոք պետությունում բարօրություն էր և մարդկանց համար խաղաղություն, ինչը վերջ գտավ ուրացող Հուլիանոսի օրոք: Հետևաբար, Գրիգոր Աստվածաբանը պետության բարօրությունը կապում է նաև տիրակալի բարեպաշտության հետ: Այսպիսի միտք նրանից առաջ արտահայտել է եկեղեցական հայտնի պատմիչ Եվսեբիոս

Կեսարացին, ով Կոստանդիանոսի օրոք եկեղեցական և պետական գլխավոր գաղափարախոսն էր: Հետևաբար, այսօր էլ պետության զարգացման համար մեծապես կարևոր է երկրի ղեկավարի կամ ղեկավարների բարեպաշտությունը և ժողովրդի հոգևոր բարոյական բարձ աստիճանին գտնվելը, որովհետև միայն այդ դեպքում Աստված Իր օրհնությունը կբերի այդ երկրին ու ժողովրդին՝ բազմապատկելով և հարյուրապատիկ անգամ ավելացնելով ստացվող բոլոր արդյունքները:

ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԵՐԸ

Երկրի ղեկավարների դերը մեծ է ժողովրդի հավատքի, բարոյականության հաստատման և ճիշտ ուղիով ընթանալու հարցում: Կարծիքներ կան, որ ղեկավար անձանց կյանքն ու օրինակն այդքան էլ մեծ ազդեցություն չունեն ամբողջ ժողովրդի վրա, և ժողովուրդը ներքևից պետք է սկսի ընթանալ դեպի բարին ու ճշմարիտը: Սակայն այս կարծիքն ամբողջությամբ չի կարող վավերական լինել: Օրինակ՝ երբ հրեաների առաջնորդը՝ Մովսես մարգարեն, մի քանի օր բացակայեց ժողովրդի միջից, ժողովուրդը հակվեց կռապաշտության և սկսեց կուռք պաշտել (Ելք 32.7-8): Դավիթ թագավորի կատարած սխալի համար ժողովուրդը տուժեց և պատժվեց: Դավիթը, հակառակ Աստծո կամքի, Հրեաստանում մարդահամար անցկացրեց (Բ Թագ. 24.1-9), որի պատճառով Աստված բարկանալով՝ հայտնեց թագավորին. «Ընտրի՛ր որն ուզում ես. կա՛մ քո երկրում երեք տարի սով պիտի լինի, կա՛մ երեք ամիս դու պիտի փախչես քո թշնամիների առաջից, ու քեզ պիտի հալածեն, կա՛մ էլ երեք օր մահ պիտի լինի քո երկրում: Եվ Դավիթն ընտրեց մահը: Եվ Տերն Իսրայելին մահ ուղարկեց առավոտից մինչև ճաշի ժամ: Մահ սկսվեց ժողովրդի մեջ» (Բ Թագ. 24.13-15):

Փոքրամասնությունն իրականում շատ ավելի մեծ ազդեցություն ունի ժողովրդի վրա: Հրեա ժողովրդին Եգիպտոսից դուրս բերեց և մինչև Ավետյաց երկիր հասցրեց Մովսես մարգարեն: Քրիստոսի փոքրաթիվ առաքյալները քրիստոնյա դարձրին ամբողջ աշխարհը: Սոցիալական հոգեբանության ուսումնասիրություն կատարած գիտնականները հաստատում են, որ փոքրամասնության ազդեցությամբ փոխվում է մեծամասնությունը, ինչպես օրինակ, առանձին գյուտարարներ իրենց հայտնագործություններով մեծապես ազդեցություն ունեցան մարդկության կյանքի վրա, կամ խրոխտ մի քանի անձեր ոգևորեցին ու պայքարների հանեցին ժողովուրդների, և կամ մեկ-երկու հանճարեղ փիլիսոփաներ հեղաշրջում առաջացրին մարդկային մտքերի ընթացքի մեջ: Հետևաբար, երկրի ղեկավարները քաղաքական, տնտեսական, հասարակական հարցերով

զբաղվելուց բացի պետք է նաև մեծ հավատքի և բարձր բարոյականության տեր մարդիկ լինեն, քանի որ իրականում առաջնայնորեն դրանից է կախված երկրի և ժողովրդի բարօրությունն ու առաջընթացը:

ԵԿԵՂԵՑԻ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցու և պետության բարձրաստիճան ներկայացուցիչների հակամարտության օրինակ է Հուսիկ Կաթողիկոսի և Հայոց Տիրան թագավորի միջև ծագած հակառակությունը: Հուսիկ Կաթողիկոսը Տիրանին և պալատականներին շատ անգամներ հանդիմանել է քրիստոնյային ոչ վայել վարքուբարքի համար: Եվ մի անգամ, երբ Տիրանը գտնվում էր Ծոփաց Բնաբեղ բերդում և եկեղեցական տոնի առիթով ցանկանում էր եկեղեցի մտնել, Հուսիկը արգելում է նրա մուտքը՝ ասելով. «Արժանի չես, ինչու՞ ես ներս մտնում»: Տիրանը, չկարողանալով այսպիսի անպատվություն հանդուրժել, հրամայում է բրածեծ անել Կաթողիկոսին, որի պատճառով էլ Հուսիկը մեռնում է:

Ազատությունը, որքան էլ զարմանալի լինի, կայանում է նաև սահմանափակության մեջ, քանզի եթե մի մարդ կամ մի ոլորտ իր իրավունքները տարածի այլ ասպարեզի վրա, ապա բռնություն կգործադրի: Սակայն Հուսիկի միջամտությունն այդպիսին չէր, որովհետև նա չէր խառնվում երկրի ղեկավարության կամ քաղաքականության գործերին, այլ նրա հանդիմանանքը հոգևոր-բարոյական բնույթի էր:

Եկեղեցու և պետության հակասության մեկ այլ ձև տեսնում ենք Ռուս Եկեղեցու պատմության մեջ: 17-րդ դարը շատ ծանր ժամանակաշրջան եղավ Ռուս Եկեղեցու համար: Անհրաժեշտ էին եկեղեցական բարեփոխումներ՝ նաև արարողությունների մեջ միօրինակություն հաստատելու, արարողությունների համար կարգված ընթերցվածները կանոնավորելու համար: Ժամանակի պատրիարք Նիկոնը, ունենալով պետության և թագավորի՝ Ալեքսեյ Միխայլովիչի հովանավորությունը, կարողացավ իրականացնել բարեփոխումները՝ Հույն Եկեղեցու սովորույթներին հետևելով: Բայց ռուս հոգևորականության որոշ մասը դեմ դուրս եկավ՝ պնդելով, որ պետք է պահվեն հին ավանդույթները: Այս պաճառով 17-րդ դարում Եկեղեցում պառակտում եղավ, և Ռուս Եկեղեցին բաժանվեց երկու մասի: Նիկոն պատրիարքն իր բարեփոխումներից հետո սկսեց նաև միջամտել պետության վարած արտաքին քաղաքականության գործերին, քանի որ այն մտքին էր, թե Եկեղեցին բարձր է պետությունից, և քահանայությունը՝ միապետությունից: Այս պատճառով հակառակություն եղավ թագավորի և պատրիարքի միջև, ժողով գումարվեց, որով պատրիարքը գահընկեց հայտարարվեց և արտաքսվեց:

Եկեղեցու և պետության ներկայացուցիչների հակասության տարբեր ձևեր են Հուսիկ Կաթողիկոսի և Նիկոն պատրիարքի հակառակությունները պետության ղեկավարի հետ: Նիկոն պատրիարքն անմիջականորեն խառնվում էր թագավորի վարած քաղաքականությանը, մինչդեռ Տիրանի պարագային միայն հոգևոր կյանքին ու հավատքին վերաբերող հանդիմանություն էր հնչում: Եկեղեցու և պետության հակասությունը սրվել է հատկապես հեղափոխությունների ժամանակ, որոնցից պատմության մեջ ամենանշանավորներից մեկը Ֆրանսիական մեծ հեղափոխությունն էր՝ սկսված 1789 թ.: Հեղափոխականները բացասաբար էին տրամադրված ոչ միայն թագավորական կարգերի, այլ նաև Եկեղեցու դեմ, և հեղափոխության հաղթանակի առաջին իսկ օրերին, ինչպես 1917 թ. բոլշևիկյան հեղափոխության ժամանակ, բռնագրավեցին եկեղեցական կալվածքները, ունեցվածքը և եկեղեցական ամեն ինչ հայտարարեցին ազգային սեփականություն, նույնիսկ հոգևորականներին զրկեցին իրենց տիտղոսներից: 17-18-րդ դարերը պատմության մեջ կոչվում են լուսավորականության կամ լուսավորչության դարաշրջան, որովհետև այդ ժամանակ ի հայտ եկան մարդիկ, ովքեր փորձում էին իբր թե լուսավորել ժողովրդին առաջադեմ գաղափարներով: Նրանք կոչվեցին լուսավորիչներ, որոնցից էր Ժան Ժակ Ռուսոն (1712-1778): Ռուսոն իր հայացքները շարադրել է «Հասարակական պայմանգրի մասին» աշխատության մեջ, որտեղ ասում է, թե հասարակությունը պայմանգրով իշխանությունը հանձնել էր թագավորներին, միապետներին, բայց քանի որ նրանք չարաշահում են այդ իշխանությունը, ապա հասարակությունը պատք է այն ետ վերցնի և ստեղծի դեմոկրատական, հանրապետական պետություն: Այդպիսի պետության մեջ յուրաքանչյուր լիիրավ անդամ պետք է անմիջական մասնակցություն ունենա երկրի ղեկավարության, օրենսդրության ու դատարանի մեջ: Այսպիսով ձեռք կբերվի քաղաքացիական հավասարություն:

Վերջին ժամանակներում Ռուս Եկեղեցու հրատարակչական մարմնի կողմից շրջանառության մեջ դրված մի գրքի հեղինակը անդրադառնում է ժողովրդավարությանը և ցույց տալիս նրա բացասական կողմերը: Ժողովրդավարական պետության մեջ իշխանությունը բաժանված է հասարակության անդամներին անսահմանելիորեն փոքր մասնիկներով, որոնք առանձին իրենցից ոչ մի ուժ չեն ներկայացնում և ուժ են դառնում միայն համախմբման դեպքում, իսկ այդ համախմբումը լինում է ժողովրդի կողմից ընտրված մի քանի անձանց մոտ, ովքեր երբեմն իրենց օգտին են այն գործածում: Ժողովրդավարության գեղեցիկ գաղափարներն անթերի կգործեին՝ իրականություն դառնալով, եթե մարդիկ կատարյալ լինեին և կարողանային իրենց անձնական շահերը զոհել հանուն հասարակության

շահերի: Սակայն մենք տեսնում ենք, որ նույնիսկ ամենաառաջադեմ դեմոկրատական երկրներում այս իմաստով բազմաթիվ բողոքներ են լինում:

Ռուսոյին ժամանակակից մեկ այլ փիլիսոփա՝ Վոլտերը, երկրի ղեկավարման խնդրի լուծումը տեսնում էր միապետություն ստեղծելու մեջ՝ պայմանով, որ միապետը պետք է լինի փիլիսոփայորեն կրթյալ, որով կկարողանա իմաստությամբ առաջնորդել իր երկիրն ու ժողովրդին դեպի բարգավաճում: Եկեղեցին քաղաքականությամբ չի զբաղվում և չի ասում, թե լավ է կառավարման այս կամ այն ձևը: Բայց հաստատորեն կարող ենք ասել, որ ինչպիսին էլ այն լինի, դատապարտված է ձախողման, եթե մարդիկ հեռու են Աստծուց և Նրա պատվիրանների իրագործումից:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ժողովրդավարական պետություն հաստատելու կողմնակից լուսավորականության փիլիսոփաների սխալն այն էր, որ իշխանությունը համարում էին ժողովրդինը, և այսօր էլ դեմոկրատիայի գաղափարախոսության համաձայն՝ ժողովուրդն է իշխանություն տվողը: Այս միտքն ուղղակիորեն հակասության մեջ է մտնում իշխանության վերաբերյալ Աստվածաշնչի հայտնած մտքի հետ, ըստ որի՝ «չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. և եղած իշխանությունները Աստծուց են կարգված: Հետևաբար, ով հակառակում է իշխանությանը, Աստծու հրամանին է հակառակում» (Հռ. 13.1-2): Հեղափոխականները քարոզում էին եղբայրություն, ազատություն և հավասարության, բայց իշխանության գալով՝ արյունահեղ սպանություններով ու ահաբեկչություններով դաժան հաշվեհարդար էին տեսնում իրենց հակառակորդների հետ, ինչպես եղավ Ֆրանսիական հեղափոխության ժամանակ, որի առնչությամբ ֆրանսիացի գրողներից մեկը գրում է. «Ցավով ենք հաստատում մեր դարի սանձարձակ հարձակումները քրիստոնեության դեմ: Դեռ երկար կհիշվեն այն օրերը, երբ արյունարբու մարդիկ հավակնեցին առաքինության կոթողներ բարձրացնել քրիստոնեության փլատակների վրա»: Աստվածաշունչը չի հորդորում եղբայրություն ու հավասարություն հաստատել հեղափոխության միջոցով, այլ՝ միմյանց հանդեպ սիրո ու խոնարհության զգացումներով վարվել: Պողոս առաքյալն ասում է. «Ծառանե՛ր, հնազա՛նդ եղեք ձեր մարմնավոր տերերին ահով և դողով և անկեղծ սրտով, ինչպես հնազանդ եք Քրիստոսին. ո՛չ թե հսկողության տակ ծառայելով, որպես մարդահաճո անձեր, այլ՝ որպես Քրիստոսի ծառաներ՝ կատարելու համար Աստծու կամքը: Հոժարությա՛մբ ծառայեցեք, ինչպես պիտի ծառայեիք Տիրոջը և ոչ թե՝ մարդկանց: Իմացե՛ք, որ յուրաքանչյուր ոք՝ թե՛ ծառա և թե՛ ազատ,

ինչ բարի բան որ անի, նույնն էլ կստանա Տիրոջից: Եվ դուք, տերե՛ր, նո՛ւյնն արեք նրանց հանդեպ՝ մի կողմ թողնելով սպառնալիքները. իմացե՛ք, որ և՛ նրանք, և՛ դուք Տեր ունեք երկնքում, և Նրա առաջ աչառություն չկա» (Եփես. 6.5-9): Պետրոս առաքյալը պատվիրում է հնազանդ լինել նույնիսկ դաժան իշխանավորներին. «Ծառանե՛ր, ամեն ինչում երկյուղով հնազա՛նդ եղեք տերերին, ոչ միայն բարիներին և հեզաբարոներին, այլև դաժաններին, քանի որ Աստծուց է այն շնորհը, երբ մեկը հանիրավի վիշտ է կրում բարի խղճով» (Ա Պետ 2.18): Այսինքն՝ Աստված մարդու համբերատարության ու դրսևորած սիրո համար նրան բազմապատիկ կվարձատրի, և մարդն այսպես կարող է սիրո լիակատար հաղթանակ տանել, որովհետև գոռոզությունն ու ամբարատավանությունը պարտվում են սիրուց: Հպարտությունը ոչնչանում է, երբ հանդիպում է սիրո և խոնարհության: Այսպիսի հարաբերություններով է, որ կհաստատվի եղբայրություն ու հարաբերություններում սիրո հավասարություն: Եկեղեցին երբեք չի հորդորել հեղափոխությունների, այլ, ընդհակառակը, աղոթքներ է կարգել երկրի թագավորների, իշխանների համար, որպեսզի նրանք դառնան ավելի լավը, և հանուն ժողովրդի ու պետության շահերի նրանց ջանքերը պտղավորվեն հիանալի արդյունքներով: Այդ աղոթքներն ասվում են ժամերգությունների և պատարագների ժամանակ, որոնցից է հետևյալ աղոթքը. «Տէ՛ր Աստուած, օգնեա՛ թագաւորաց քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով ի խաղաղութեան»: Նաև Պողոս առաքյալն է աղաչում աղոթել իշխանավորների համար (Ա Տիմ. 2.1-2):

ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի սկզբնական հակառակության մեջ երևում է այն ժամանակվա պետության և քրիստոնյաների միջև հարաբերությունները. քրիստոնյաներին հալածում էին և ահավոր չարչարանքների մատնում: Սակայն քրիստոնյա դառնալուց հետո Տրդատը նպաստեց Եկեղեցու զորացմանն ու պայծառացմանը՝ Գրիգոր Լուսավորչի հետ միասին դառնալով պետության և Եկեղեցու արդյունավոր համագործակցության վառ խորհրդանիշ: Մեր Սուրբ Եկեղեցին միշտ բարի հարաբերություններ է պահպանել պետության հետ՝ աշխարհիկ գործերի համար որպես սկզբունք դիտելով չմիջամտելը պետության վարած քաղաքականությանը: Սակայն ի հոգևորս պետական պաշտոնյաները, ծառայողները, աշխատավորները, բոլորը ենթակա են Եկեղեցուն, որովհետև Եկեղեցին է հոգևոր ոլորտում աստվածաշնորհ իշխանությամբ առաքելություն իրականացնողը, բայց միևնույն ժամանակ եկեղեցականներն իրենք ենթակա են պետության սահմանած օրենքներին, որովհետև,

ըստ Աստվածաշնչի, նույն աստվածաշնորհությամբ է այն իշխանությունը, որով պետությունը վարում է աշխարհիկ գործերը մարդկանց բարօրության համար: Այս իմաստով շատ հատկանշական է Սուրբ Պողոս առաքյալի ուսուցումը. «Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից. բարի՛ն գործիր և նրանից գովասանք կստանաս, որովհետև նա Աստծու պաշտոնյա է քեզ՝ բարի գործերի համար. իսկ եթե չար գործես, վախեցի՛ր. քանի որ սուրը մեջքին ի զուր չէ կապված. Աստծու սպասավոր է նա, վրեժխնդիր՝ բարկության համար, նրա դեմ, որ չարն է գործում. դրա համար պետք է հնազանդվել ոչ միայն բարկության համար, այլ նաև խղճմտանքի պատճառով. ահա թե ինչու հարկեր եք վճարում. որովհետև նրանք Աստծու սպասավորներ են՝ այդ բանին կանխապես նշանակված: Արդ, հատուցեցե՛ք յուրաքանչյուրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկյուղ՝ երկյուղը, որին պատիվ՝ պատիվը» (Հռոմ. 13.3-7):

ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Օրենքների տարբեր տեսակներ կան: Բացի պետության օրենքներից կան նաև բնության և բարոյականության օրենքներ: Բնության օրենքները նկարագրվում են որպես օրենքներ, որոնց համաձայն ամեն ինչ տեղի է ունենում, իսկ բարոյական օրենքները օրենքներ են, որոնց համաձայն ամեն ինչ պետք է տեղի ունենա: Օրինակ՝ մենք չենք կարող ասել, որ գետը պետք է հոսի այսպես կամ այնպես, կամ շրջանը պետք է ունենա այս կամ այն հատկանիշները, այլ միայն ասում ենք, որ իրականում գետը հոսում է այսպես, և շրջանն ունի այս հատկանիշները: Մինչդեռ մարդու մասին ասում ենք, որ նա պետք է վարվի բարոյական և առաքինի կերպով: Եվ քանի որ մարդն ունի բանական գիտակցություն և իր սեփական կամքով է ընտրում չար կամ բարի գործելը, ապա ի տարբերություն բնության՝ հիմնականում մարդն է, որ պատասխանատվություն է կրում իր գործած արարքների համար:

Քրիստոնեության մեջ առանձնահատուկ դիրքորոշում կա օրենքի հանդեպ: Հին աշխարհի մեծ փիլիսոփա Սենեկան ասում էր, որ իմաստուն մարդը չի պատժում արդեն կատարված վատ արարքի համար, քանզի պատժի նպատակն է կանխել մեղավոր արարքի կրկնությունը: Իսկ Պլատոնի մի ստեղծագործության հերոսը անհրաժեշտ է համարում հետա-պնդել սպանություն գործածին նույնիսկ եթե նա ամենահարազատ անձն է, և բերել պատասխանատվության՝ ըստ օրենքի: Նշանավոր մտածողներից մեկն ասել է, որ օրենքի միակ նպատակը վախեցնելն է ուրիշի իրավունքները խախտելուց կամ քրեական պատժի նպատակը

հանցագործության նկատմամբ վախ պատճառելն է: Հետևաբար, պատժի սահմանումով օրենքը նկատի ունի ապագան: Այս միտումով տարբերություն կա պատժի և վրեժխնդրության միջև: Հանցանքի համար յուրաքանչյուր պատիժ առանց ապագայի նկատառման վրեժխնդրություն է, որի միակ նպատակն է զրկանքի ենթարկված անձի մխիթարությունը զրկանք պատճառած մարդու չարչարանքների դիտումով: Սա նշանակում է, որ մարդկանց արարքներին վերաբերող օրենքները պետք է գործադրվեն առանց վրեժ-խնդրության:

Պատմության մեջ եղել են շատ կայսրություններ, որոնց անկման պատճառը, չնայած պետության օերնքների համակարգին, եղել է տարածված անբարոյականությունը, մինչդեռ կրոնը կասեցնում անբարոյականության և պիղծ վարքուբարքի տարածումը: Տրդատ արքան Հայաստանի պետական կրոն հռչակեց քրիստոնեությունը: Նույնպես Կոստանդիանոս կայսրը ջանքեր ներդրեց Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեությունը պետական կրոն դարձնելու, որովհետև նաև գիտեր, որ այդ հսկա կայսրությունը, որի միապետն էր ինքը դարձել, կարող է պահել միայն քրիստոնեական կրոնի բարոյականությամբ:

Կրոնը լրացնում է պետության գործունեությունը: Պետության օրենսդրությունն ասում է, որ արդարություն պետք է լինի ամենքի հանդեպ, իսկ քրիստոնեությունն ուսուցանում է, որ ամենքը պարտավոր են արդարություն գործել: Նմանապես տարբեր են իրավաբանների և քրիստոնեական բարոյագետների տեսակետները: Իրավաբանը կարող է ասել, որ պարտատերերը պետք է ետ ստանան իրենց տվածը, իսկ բարոյագետները նույն դեպքի համար կասեն, որ պարտապանները պետք է կատարեն իրենց պարտավորությունները: Սա նշանակում է, որ Եկեղեցին մեծապես նպաստում է պետության հասարակության մեջ քաղաքացիների կողմից և՛ պետական օրենքների գործադրմանը, և՛ հասարակության ներդաշնակ ու հաստատուն կյանքի ապահովմանը: Հետևաբար, նաև այս նկատառումով պետությունը պետք է նեցուկ լինի Եկեղեցուն հոգևոր առաքելության իրագործման համար:

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

Այսօր մեր ժողովրդի պատկերացման մեջ հոգևորականը՝ եկեղեցու սպասավորը, պատկերվում է իբրև մի անձնավորություն, որն անպայմանորեն պետք է ունենա բարոյական բարձր արժեքներ ու հոգու մաքրութ-

յուն և կոչված է ծառայելու Աստծուն և ժողովրդին: Ոմանք էլ, սակայն, չեն գիտակցում, որ իր հույժ պատասխանատու ծառայության մեջ հոգևորականը խիստ կարիքն ունի իր համար արված ժողովրդի աղոթքների և աջակցության: Քահանային տրված է այնպիսի իշխանություն, որ երբեմն հատուկ է նույնիսկ միայն Աստծուն, այսինքն՝ մեղքեր սրբելը, հրաշագործությունը, Սուրբ Հոգով մկրտելը և այլն: Այդ իսկ պատճառով էլ սայթաքելու դեպքում քահանան ավելի խիստ է պատժվելու, քան նույնիսկ անկյալ հրեշտակները: Եվ այս պատասխանատու գործունեության համար մեղքերի պատճառով իրենց անարժան համարելով՝ որոշ հոգևորական սրբեր սկզբնապես խուսափել են քահանայական աստիճանից:

ԱՂՈԹՔ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սուրբ Պատարագի արարողության ընթացքում սարկավագները հորդորում են աղոթել նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի և եպիսկոպոսների համար, որովհետև նրանք մեր հոգիների տեսուչներն են: Խոսրով Անձևացին իր Պատարագի մեկնության մեջ բացատրում է, որ նրանց համար մեր խնդրվածքները առավելաբար մեզ համար են, որովհետև եթե հատկապես բարձրաստիճան հոգևորականը ջանասեր լինի վարդապետության մեջ, վերակացությունը քաջապես կկատարի և կքննի բոլորի հոգիները, թե ինչ վիճակում են. ու եթե տեսնի, որ այս կամ այն մարդիկ ծույլ են բարեգործության մեջ և կամ իրենց հոգիներում որևէ արատ կամ բիծ ունեն, չի ծուլանա լիակատար արթնությամբ նրանց համար աղոթել նաև խրատել ու զգուշացնել՝ իր շահից առավել իր հավատավոր հոտի շահը պաշտպանելով: Պետք է աղոթել հոգևորականների համար, քանզի հավատացյալները պարտական են նաև աղոթքներով հատուցել իրենց համար աղոթող եկեղեցականներին, քանզի այսպես հոգևորականների խնդրվածքները, որ հավատացյալների համար են, առավել լսելի են Աստծուն այն ժամանակ, երբ նաև հավատացյալները նրանց՝ հոգուտ իրենց աղոթողների են խնդրում: Պողոս առաքյալն էլ կորնթացիներին այսպիսի խրատ է տալիս. «Մեր բերանները բաց են ձեզ պատգամելու համար և մեր սրտերը լայն, բայց մենք չենք նեղում ձեզ» (Բ Կորնթ. 6.11-12): Սա նշանակում է, որ թեպետև դուք բազում եք, և ուրիշներ էլ կան, որ հոգս են մեզ համար, սակայն մեր սրտերը չեն նեղվում և մեզ մղում որևէ մեկին մոռանալու և խրատից ու աղոթքից անտեսելու: Բայց դուք, ասում է, ձեր սրտերում նեղվում եք և իմ՝ մեկիս մասին չեք հոգում այնքան, որքան ես ձեր ու ամենքի, և ավելացնում է. «Արդ, դուք էլ նույն հատուցումն անելով,- որդիների տեղ եմ դնում ձեզ,- լայնորեն բաց արեք ձեր սրտերը» (Բ. Կորնթ. 6.13): Այսպես կարևոր է նաև հոգևորականի համար աղո-

թելը: Այդ պատճառով առաքյալը բոլոր թղթերում հրամայում է իր համար աղոթել՝ նրանց օգուտի համար առավել հոգալով, քան իր: Պողոսը նրանց աղոթքների կարիքն ուներ, բայց կամենում էր, որպեսզի նրանցից ինքը օգտվելով, նրանք ևս օգտվեն, և այդ պատճառով աղոթքի վերաբերյալ խոսելիս չէր ասում՝ որպեսզի շահեմ, այլ՝ «որպեսզի խոսքի գերազանցություն լինի մարդկանց փրկության համար» (հմմտ. Ա Կորնթ. 2.1):

ՃՇՄԱՐԻՏ ԵՎ ԻՆՔՆԱԿՈՉ ՔԱՀԱՆԱ

Առաքյալները Քրիստոսի կողմից արժանացել են հոգևոր աստիճանների: Նրանք դպիներ եղան՝ ժողովրդին սպասավորելով, սարկավագներ՝ հիվանդներին օծելով: Առաջին բերքը ըստ օրենքի պետք է քահանաներն ուտեին, և երբ Քրիստոս առաքյալներին ուտելու տվեց առաջին պտուղը (Մատթ. 12.1), նրանց քահանաներ դարձրեց: Հարությունից հետո նրանց դարձրեց եպիսկոպոսներ, իսկ Ձիթենյաց լեռը հանելով և նրանց օրհնելով՝ կաթողիկոսներ (Գործք 1.8): Այս բոլոր հովվական շնորհները առաքյալները փոխանցեցին ձեռնադրությամբ: Միայն Կաթողիկոսները կարող են եպիսկոպոսներ ձեռնադրել, և միայն Կաթողիկոսներն ու եպիսկոպոսները կարող են քահանաներ կամ սարկավագներ ձեռնադրել: Այս ձեռնադրության միջոցով են փոխանցվում այն լիազորությունները, որոնք Քրիստոս տվեց առաքյալներին: Հետևաբար, վերջերս առաջ եկած աղանդավորական հովիվները կամ երեցները ինքնակոչ են և մարդկանց տանում են մոլորության ճանապարհներով: Ճիշտ է, այսպես առանձին սկսեց գործել նաև Պողոս առաքյալը, պնդելով, որ Քրիստոս իրեն երևացել է և պատվիրել է Ավետարանը տարածել հեթանոսների մեջ: Պողոսը առաքյալը նաև եպիսկոպոսներ ձեռնադրեց իր հիմնած եկեղեցիների համար, և նրա գործունեությունն այնքան արդյունավետ էր, որ հետո նրան սկսեցին կոչել 13-րդ առաքյալ: Սակայն Պողոս առաքյալը երբեք հակառակ չեղավ վաղ Քրիստոնեական Եկեղեցու պետերին՝ 12 առաքյալներին, և առաքյալներն իրենք ընդունեցին նրան՝ իբրև իրենց հավասար մեկի: Հետևաբար, նրանց ձևավորած Եկեղեցուց դուրս որևէ մեկը երբեք չի կարող փրկվել բոլորովին վերջերս առաջ եկած, այսպես կոչված, մասնավոր եկեղեցիներում: Եկեղեցին այս իմաստով որևէ կազմակերպություն կամ մասնավոր ուսումնական հաստատություն չէ, որպեսզի պետության կողմից լիազորություն ստանալով օրինական համարվի և գործի: Հետևաբար, եթե իրոք ցանկանում ենք փրկության արժանանալ, պետք է լավ մտածենք, թե ում ենք հետևում և ուր ենք գնում:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Շատերդ զբաղվում եք կյանքի տարբեր հոգսերով, որևէ գործի անհրաժեշտության համար գնում եք այս կամ այն մարդու մոտ, սակայն ավելի առաջնային համարելով մարմնականը՝ հաճախ եք մոռանում հոգևորականի հետ զրուցելն ու խորհրդակցելը: Եվ ձեզ բոլորիդ համար շատ օգտակար կլինի Սուրբ Եկեղեցու մեծագույն Հայրերից մեկի՝ Սուրբ Բարսեղ Կեսարացու խորհուրդը. «Հիվանդություն ունեցողներն իրենք են գնում բժշկի մոտ, ծանր հիվանդներն իրենց մոտ են կանչում բժիշկներին, իսկ անբուժելի հիվանդները նույնիսկ բժշկին մոտ չեն թողնում: Դա թող չլինի ձեզ հետ, մի փախեք նրանցից, ովքեր ճիշտ են դատում»:

ՊԱՏԻԺ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

Հին Կտակարանում Աստված պատվիրում է, որ քահանան՝ Աստծո սպասավորը, պետք է լինի առանց մարմնական արատների (Ղևտ. 21.17-23): Հրեաները, ուղիղ իմաստով հասկանալով այս խոսքը, քահանայագործելու պատիվն ունեցող Ղևիի ցեղից այն անձանց, ովքեր արատներ ունեին, արգելում էին քահանայություն անել: Սակայն եկեղեցական Սուրբ Հայրերը ճշմարտապես ընկալմամբ աստվածային պատվերը բացատրեցին փոխաբերական իմաստով՝ կաղը ճշմարիտ ընթացքով կաղացողը և մեղավոր ճանապարհներով գնացողն է, կույրը ճշմարտության առջև կուրացածն է, սապատավորը՝ մեղքերով ծանրաբեռնվածը և այլն: Միևնույն ժամանակ կանոններ կարգվեցին արատավոր վարք ու բարք ունեցող եկեղեցականներին պատժելու համար, որոնցից նշենք մի քանիսը: Հարբեցողության մեղքը գործած հոգևորականներին արգելվում էր որոշ ժամանակաշրջան, իսկ ըստ մեկ այլ կանոնի՝ յոթը օր եկեղեցական արարողությունների ընթացքում Ավետարան ընթերցել և խորհուրդ կատարել: Խոստովանության գաղտնիքները հայտող հոգևորականները կարգալույծ են լինում, և եկեղեցական կանոնը նույնիսկ նրանց վրա է դնում խոստովանություն չկատարող բոլոր անձանց մեղքերը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ

Ավարայրում և մնացյալ մեր բոլոր ճակատամարտերում, երբ եկեղեցականները եղել են մեր զորքի հետ և ոգևորել ու քաջալերել, հոգևորականներն ու զինվորականները միմյանցից տարբերվել են իրենց զգեստներով: Եկեղեցական կանոնն արգելում է հոգևորականներին զինվորական զգեստ հագնել, որովհետև հոգևորականի զգեստը հատուկ խորհուր-

դանիշ ունի, և պետք չէ այն փոխել այլ ասպարեզների մարդկանց համազգեստով: Քահանայի ձեռնադրության կանոնում Սուրբ Պատարագի համար նախատեսված քահանայական զգեստներն անվանվում են աստվածաստեղծ, որովհետև նման են այն զգեստներին, որոնք Աստված պատվիրեց Մովսեսին պատրաստել Ահարոնի և քահանաների համար (Ելք 28), իսկ քահանայական գեղեցիկ պատմուճանը խորհրդանշում է այն պատմուճանը, որ Հակոբը հորինել էր իր սիրելի որդի Հովսեփի համար (Ծննդ. 37.3): Քահանայական ամենօրյա զգեստը սև գույնի է, այն չունի աչքը, տեսողությունը զվարճացնող երանգներ: Աբեղայի՝ կուսակրոն քահանայի վեղարի օրհնության կարգում նշվում է, որ մեր Հայրերը այսպիսի զգեստ հագնելը հաստատեցին հատուկ խորհրդով՝ ի ցույց խոնարհության, և այդ զգեստը կոչվում է մեռելության զգեստ, ինչը նշանակում է, որ քահանան մեռած է աշխարհիկ ու մեղավոր կրքերի, հաճույքների ցանկությունների, զվարճությունների համար:

ՔԱՀԱՆԱ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավարայրում, մեր ճակատագրական պայքարներում մարտնչել են նաև հոգևորականներ: Բայց հոգևորականները հիմնականում պայքարել են աղոթքով, իրենց ոգով ու խոսքով զինվորներին քաջալերելով: Չնայած եղել են հոգևորականներ, ովքեր օրհասական պահերին զենքները ձեռքներին ուս-ուսի կռվել են հայոց բանակի զինվորների հետ, սակայն ընդհանուր առմամբ հոգևորականի զենքը աղոթքն ու հավատքն է եղել: Պատճառն այն է, որ եկեղեցական կանոնի համաձայն՝ քահանային արգելվում է ոչ միայն մարդու, այլև նույնիսկ կենդանու սպանություն գործել (Կանոնք Աթանասի ԼԲ) և անգամ մատաղի կենդանի մորթել, որովհետև սպանություն ու մահ գործած քահանան այլևս չի կարող նախկին մաքրությամբ ավետարանել կյանք հանդիսացող Քրիստոսին կամ առավել ևս՝ մատուցել կյանք տվող Քրիստոսի Սուրբ Պատարագի ահեղ խորհուրդը:

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում մեր Եկեղեցու մեծ դեմքերից Շնորհք Պատրիարք Գալուստյանի մտորումները ճգնավորության և վանականության վերաբերյալ: Արդի ժամանակների մեջ, երբ աշխարհայնությունը և բար-

քերի թուլությունը տիրապետող են դարձել ամենուրեք, մարդիկ արհամարհանքով են նայում ճգնավորությանը կամ հիշում այն: Բայց պետք է գիտենալ, որ սա իր ժամանակի ամենից տրամաբանական հոգևոր ուղին էր և բարոյապես ու ֆիզիկապես ամենից առողջ կենցաղային վիճակը: Սա հաստատելու համար մի ակնարկ նետենք այն ժամանակների վրա, երբ ծնունդ առավ ճգնավորությունը: Երբ 313 թ. Կոստանդիանոս կայսեր «Միլանի հրովարտակով» Եկեղեցին ազատվեց հալածանքներից, բարիների հետ խոտան մարդիկ էլ սկսեցին մուտք գործել Եկեղեցուց ներս, քանի որ այլևս քաջություն չէր պահանջում քրիստոնյա լինելը, ինչպես հալածանքների շրջանում էր: «Սա ճակատագրական սկզբնավորությունը եղավ Եկեղեցու վատառողջ գիրացումի, և, հետևաբար, մասնակի այլասերման»,- ասում է Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը: Եկեղեցին գրավեց այն դիրքը, որը հեթանոսությունն ուներ նախապես: Նախորդ դարերին հեթանոսությունն էր հալածողը, այժմ Եկեղեցին սկսեց հալածել հեթանոսությանը: (Նշենք, որ այստեղ Եկեղեցի ասելով պատրիարքը նկատի ունի Եկեղեցի մուտք գործած տարբեր անձանց և տիրող մթնոլորտը): Բացի դրանից հատկապես արևելքում Ավետարանի քարոզությանը և քրիստոնեական կրոնի տարածմանը նվիրվելուց ավելի քրիստոնյաներն ընկղմվեցին աստվածաբանական անհատնում վեճերի մեջ: Բարդ ու ծաղկյալ պաշտամունքային արարողությունները, որքան էլ մարդկային զգայարանների համար գրավիչ էին և գեղարվեստական մեծ արժեք ունեին, հետզհետե վերածվեցին ավելի ձևականության և արվեստականության, քան թե Քրիստոսի պահանջած «Հոգով և ճշմարտությամբ» պաշտամունքը, ինչն այսօր երբեմն տեսնում ենք արարողությանը մասնակցող տարբեր անձանց մեջ: Երբ խաղաղություն ու ազատություն տիրեց քրիստոնեության մեջ, հեթանոս բարքեր էլ սկսեցին մուտք գործել Եկեղեցի, և ստեղծվեց կենցաղային շփոթ կացություն, ուր այլևս դժվար էր իրարից զանազանելը հեթանոսականը և քրիստոնեականը: Նույնիսկ կյանքի անմեղ կոչված երևույթներից՝ կերուխումից, երգուպարից, խնջույքներից, խաղերից, հաճույքներից որքա՞նը քրիստոնեական կարող էր նկատվել և որքանը հեթանոսական, վիճելի հարց էր: Այնպես որ քրիստոնեական կյանքը և մտայնությունը շատ բան էր կորցրել իր մաքրությունից, պարզությունից և բարոյական բարձրությունից: Եվ մի շարք քրիստոնյաներ, տեսնելով հեթանոսության և քրիստոնեության այս անսուրբ խառնուրդը, հեռացան հասարակությունից, քաշվեցին անաղարտ բնության ծոցը՝ պահելու համար իրենց կյանքի բարոյական մաքրությունը Աստծո մշտական ներկայության մեջ: Նրանց շնորհիվ քրիստոնեությունը կարողացավ մաքրվել և անցնել հաջորդ սերունդներին: Այս իրագործելու համար նրանք գործի դրեցին գերմարդկային ճիգեր, այդ իսկ

պատճառով էլ կոչվեցին ճգնավորներ: Ինչո՞վ է արդյոք մեր դարը տարբերվում այն ժամանակվա ապականությունից: Բազում քրիստոնյա երկրներում այսօր ևս տեսնում ենք բարքերի նույն ապականությունը, անաստվածությունը կամ էլ հեթանոսությունը: Իսկ ի՞նչ օգուտ կարող են տալ ճգնավորները կամ վանականները այսօրվա մարդկությանը: Հոգևոր կյանքում կատարելության հասած մարդկանց աղոթքներով բազում ժողովուրդներ կարող են փրկվել, ինչպես որ իսրայելցիների հաղթանակը կամ պարտությունը կախված էր Մովսեսի աղոթելուց (Ելք 17.11): Նրանց ազնիվ օրինակը տեսնելով՝ բազմաթիվ անհավատ մարդիկ կարող են հավատալ և Երկնքի Արքայության արժանանալ: Սուրբ Գրիգոր Նազիանզացին ասում է. «Ինձ այնպէս է թվում, թե ամեն էակներից փոփոխական ու բազմակողմանի մարդուն հովվելը և ուղղելը արվեստների արվեստն է և գիտությունների գիտությունը»: Եվ եթե մենք համաձայն ենք, որ ստեղծվեն մշակույթի, արվեստի կենտրոններ՝ դրանք ծաղկեցնելու համար, եթե համաձայն ենք, որ ստեղծվեն գիտության կենտրոններ՝ գիտությունը ավելի զարգացնելու համար, ուրեմն ինչու՞ չպետք է ստեղծվեն վանական կենտրոններ, ուր մարդիկ զբաղված են արվեստների արվեստով և գիտությունների գիտությամբ, ուր ամեն օր և ամեն ժամ աղոթքներ են բարձացվում առ Աստված մարդկանց փրկության և հոգևոր խաղաղության համար, և որտեղ եկած ուխտավոր մարդիկ կկարողանան տեսնել կյանքի մեծագույն բարոյականության և ճշմարիտ սիրո հիանալի օրինակներ, որոնցով զորացած կվերադառնան իրենց ընտանիքները՝ առավել կատարելագործելու իրենց կյանքը, երջանկություն և խաղաղություն հաստատելով իրենց ընտանիքներից ներս: Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, խոսելով տարբեր երկրների վանքերի մասին ասում է, որ շատ վանքեր դարձել են ինչ-որ գործունեության կամ մշակութային հաստատություններ, որի համար բացարձակ անհրաժեշտություն չկա կուսակրոնության, այսինքն՝ կյանքի ամբողջական ողջակիզման, քանի որ աշխարհիկ մարդիկ էլ նույն պայմանների տակ կարող են նույն գործը անել: Հետևաբար, հոգևորականին հոգևորական է դարձնում կամ մարդուն հոգևոր է դարձնում ամենաառաջին հերթին ոչ թե գիտական ինչ-որ աշխատություն, այլ Քրիստոսի պատվիրած ամենժամյա անդադար աղոթքը, որով կարող են զբաղվել հատկապես վանականները և ճգնավորները: Հոգսերով ու հաճույքներով ծանրաբեռնված այս աշխարհը չի կարողանում կամ չի ուզում հասկանալ ճգնավորների և վանականների մեծագույն կարևորությունը: Սա բացատրելու համար Շնորհք Պատրիարքը գեղեցիկ օրինակներ է բերում: Երբ Հիսուս Քրիստոս Գալիլեական ծովակի փոթորիկը դադարեցրեց (Մատթ. 8.23-27, Մարկ. 4.35-41, Ղուկ. 8.22-25), դրանից օգտվեց ոչ միայն նավը, որի մեջ գտնվում

էին Քրիստոս և Իր աշակերտները, այլ նաև այն բոլոր մյուս նավերը, որոնք այդ պահին գտնվում էին ծովակի մեջ և տագնապի էին մատնվել Քրիստոսի աշակերտների պես: Եվ այդ տասնյակներով նավերի մեջ գտնվող հարյուրավոր մարդիկ երբեք չիմացան, թե ու՞մ էին պարտական փոթորկի հանկարծակի դադարեցման համար: Նույնպես, երբ Եվրոպա ներխուժող ասպատակիչ բանակները կասեցվեցին այս կամ այն ճակատամարտում մի քանի քաջարի գնդերի կողմից, իրենց ետևում գտնվող բազմաթիվ երկրների միլիոնավոր մարդիկ երբեք չանդրադարձան, թե ինչ ահավոր պատուհասներից փրկված եղան: Նույնն է պարագան ճգնավորների և բոլոր սրբերի մղած հոգևոր պատերազմի: Քրիստոնեական Եկեղեցին և իր միջոցով համայն մարդկությունը այնքան շատ բաներով պարտական է այս քչերին:

ՃԳՆԱՎՈՐ, ՔԱՀԱՆԱ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ

Ճգնավորները կոչվում են նաև միայնակյացներ: Միայնակյաց նշանակում է ոչ միայն միայնակ ապրող, այլև միայնակ աղոթող, որովհետև ճգնավորներն առանձին ապրելով՝ առանձին էլ աղոթում էին: Քրիստոս ասաց՝ ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, այնտեղ եմ Ես, նրանց մեջ (Մատթ. 18.20): Երեքը վերաբերում է ընդհանրական աղոթքին, իսկ երկուսը՝ առանձնական, որի ընթացքում միաբանվում են երկուսը, այսինքն՝ հոգին և մարմինը, որի շնորհիվ էլ միտքը կարողանում է մտնել աղոթական վիճակի մեջ: Հավանաբար շատերն են ձեզանից հետևյալ հարցը տվել. «Մենք հիմա ապրում ենք քսանմեկերորդ դարում, ի՞նչ կարիք կա միջնադարյան ճգնավորների, վանականների կամ էլ թեկուզ կուսակրոն քահանաների»: Այսպիսի հարց տվողներն ուշադրությամբ չեն խորասուզվել այն աստվածային հայտնության մեջ, որը բովան-

ճգնավորները հենց միայն իրենց աղոթքներով մեծ օգուտ են տվել ողջ մարդկությանը, ինչպես որ ժամանակին Մովսես մարգարեն աղոթում էր, և իսրայելացիների հաղթանակն ու պարտությունը կախված էին միմիայն նրա աղոթքներից (Ելք 17.11): Քրիստոս Երկնքի Արքայությունը նմանեցրեց կույսերի: Պողոս առաքյալը գովելի համարեց ամուսնությունը, սակայն ավելի գովելի՝ կուսության ողջախոհությունը (Ա Կորնթ. 7.1-2, 8-9, 32-35): Եկեղեցու Հայրերն ասում են, որ Երկնքի Արքայության մեջ միմիայն կույսերն են արժանի համարվելու անկյալ հրեշտակների ամենաբարձր տեղին: Սակայն եթե մի կողմ դնենք և՛ Հայրերի ասածները, և՛ նշված վկայությունները, ապա դարձյալ մնում է Հովհաննու Հայտնության մեջ նկարագրված ճշմարտությունը, ըստ որի,

անմիջականորեն Քրիստոսի ներկայությունը հավիտյանս վայելելու են այդ մեծ առաքինությունն ունեցողները (Հայտն. 14.4):

Հետքրքիր կլինի իմանալ ճգնավորի կամ հասարակ վանականի և քահանայի տարբերությունը: Եկեղեցում աղոթքի ժամանակ վանականը կանգնում է ձեռնադրված քահանայից հետո, որովհետև չնայած մեծ ողջախոհությամբ է ապրում, սակայն չունի մեղքեր կապելու և արձակելու, մկրտելու, պատարագելու աստվածապարգև իշխանությունը: Տարբերություն կա նաև հագուստների մեջ: Քահանան սքեմ է հագնում, իսկ վանականը կամ ճգնավորը հաճախ միայն՝ պատմուճան, որն անպայման պետք է գոտի ունենա: Այդ գոտին խորհրդանշում է մարմնական և ընդհանրապես ստոր ցանկությունների ու կրքերի զսպումը: Քահանաները կարող են պատարագի ժամանակ բեմ բարձրանալ և իրենց ձեռքով հաղորդություն ստանալ առանց պատարագիչ քահանայի միջնորդության, իսկ վանականները հաղորդություն ստանում են միայն քահանայի ձեռքից: Հնում հանգուցյալին գերեզման տանելուց նախ դնում էին եկեղեցում, քահանան կատարում էր նաև եկեղեցու կարգը, որից հետո արդեն հանգուցյալին տանում էին գերեզմանատուն: Եվ ահա հստակ տարբերություն կա, թե եկեղեցու որ մասում պետք է դրվի հանգուցյալ օծյալ հոգևորականը, հանգուցյալ վանականը և այն աննշեցյալը, որը ժողովրդի միջից է: Հոգևորականները դրվում են խորանին մոտ, վանականները խորանից քիչ հեռու, իսկ ժողովրդից եղող հանգուցյալը՝ ավելի մոտ եկեղեցու դռանը: Սա պայմանավորված է ոչ թե հավատի, այլ առաջին հերթին Աստծուց ստացած իշխանության և Աստծո հանդեպ պատասխանատվության չափով: Քահանան Աստծո առջև պիտի պատասխան տա իրեն հանձնված ողջ ժողովրդի համար: Այդ իսկ պատճառով էլ ժողովրդի համար արվող հոգևոր այս պատասխանատու սպասավորության մեջ քահանան մեծ անհրաժեշտությունն ունի ժողովրդի աղոթքների և աջակցության:

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՐՔԵՐ

Եկեղեցին ամեն տարի տոնում է Եգիպտոսի անապատաբնակ սուրբ ճգնավորների տոնը: Հաճախ վիճահարույց է ճգնավորների հետ կապված հարցը. ոմանք ասում են, որ սխալ է առանց ամուսնական կյանքի ապրելը և սերնդագործելու բնական մղումն ու ցանկությունը ճնշելը՝ եզրակացնելով, որ այդպիսի ընթացքը մեծ դժվարությունների ու մարմնական անառողջ վիճակների պիտի հանգեցնի: Սակայն կրոնական մոտեցումը բոլորովին այլ է: Պողոս առաքյալն ասում է. «Ով կին չունի, հոգում է, թե ինչպես հաճելի լինի Տիրոջը: Իսկ ով կին ունի, աշխարհի մասին է հոգում, թե ինչպես հաճելի լինի իր կնոջը: Եվ այսպես տարբերվում

են իրարից ամուսնացած կինը և կույսը. քանի որ կույսը հոգում է Տիրոջ գործերի մասին, որպեսզի սուրբ լինի մարմնով և հոգով: Իսկ ամուսնացած կինը հոգում է աշխարհի մասին, թե ինչպես հաճելի լինի իր մարդուն» (Ա Կորնթ. 7.32-34), այսինքն՝ չամուսնացած բարեպաշտ մարդիկ ավելի մեծ հնարավորություն ունեն առ Աստված ամբողջական նվիրումի: Ամուսնացողներն ապրում են բնական կյանքով՝ նմանվելով Աբրահամին, մյուս նահապետներին, Պետրոս առաքյալին և Քրիստոսի մյուս ամուսնացյալ առաքյալներին: Իսկ ովքեր չեն ամուսնանում՝ պահպանելով իրենց կուսության առաքինությունը, ապրում են գերբնական կյանքով՝ նմանվելով Եղիա մարգարեին, Հովհաննես Մկրտչին, Պողոս առաքյալին և մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Հայտնի փիլիսոփա Շոպենհաուերը մարդկային կրքերը բաժանել է երեք խմբի: Նրա նման մենք էլ առանձնացնենք կրքերի, հաճույքների երեք տեսակները: Առաջին խմբում կյանքի համար խիստ անհրաժեշտ կրքերն ու ցանկություններն են՝ ուտելը, խմելը, քնելը և հանգստանալը: Երկրորդ խմբում կյանքի պահպանության համար ոչ անհրաժեշտ կրքերն են՝ ճանապարհորդություն, մարզաձևեր, որսորդություն, պարեր և այլն: Երրորդը մտավոր-զգացական հաճույքներն են՝ հայեցողություն, մտածողություն, զգացողություններ, արվեստ, բանաստեղծություն, երաժշտություն, ուսուցում, ընթերցանություն, փիլիսոփայություն: Եկեղեցին կյանքի համար անհրաժեշտ կրքերի առաջին տեսակի համար սահմանել է կանոններ, հրահանգներ հատկապես պահքի և ուտիքի օրերի առնչությամբ և երկրորդական համարելով վերոնշյալ երկրորդ խումբը՝ հիմնական ուշադրության արժանի է համարել երրորդը՝ աղոթքի, խոկումի, ընթերցանության, մտքի աշխատանքի հորդորելով: Մեր եկեղեցական հեղինակներից Առաքել Սյունեցին իր «Ամենայն չար տանջելի է» աշխատության մեջ նշում է, որ մարդկային բնությունը զորավոր է, և կամքը չի կարող հակառակվել բնությանը, հակառակ պարագային կդադարի մարդու կյանքը: Այսինքն՝ կամքն է բնությանը հետևող և ոչ թե բնությունը կամքին: Եվ քանի որ կյանքի շարունակության համար խիստ անհրաժեշտ են կարևոր կրքերը, կարիքները, ապա մարդկային կամքը այս պարագաներում չի կարողանում հակառակվել բնությանը: Օրինակ՝ որևէ մեկը չի կարող երկար ժամանակ առանց ուտելու կամ խմելու ապրել, և կյանքի պահպանության համար կամքը հետևում է բնության պահանջներին: Բայց քանի որ խիստ անհրաժեշտ չէ ամուսնական կյանքը, այլ այն կարգված է մարդկային սերունդը շարունակելու համար, մարդն իր ցանկությամբ, կամքը համաձայնեցնելով բնության հետ, կարողանում է կուսական առաքինի կյանք վարել: Այդպես է, որ մենք ունենք ճգնավորներ և

բազում այլ սրբեր, ովքեր ապրել են ողջախոհության այս մեծագույն առաքինութամբ:

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՐ

Հունարեն լեզուն իմաստությամբ սիրո գաղափարը, մարդկանց միջանձնական հարաբերություններում միմյանց հանդեպ սերը արտահայտում է երկու բոլորովին տարբեր բառերով՝ ագապե և էռոս: Այս վերջինը այն սերն է, որով մարդն ուրիշի մեջ իր համար հաճույք է փնտրում: Սիրո հենց այս տեսակն էր տարածված անտիկ աշխարհում: Պլատոնի մի ստեղծագործության մեջ խնջույքի տարբեր մասնակիցներ գովերգում են սերը: Եվ պարզվում է, որ ամենագովելի սերը ոչ թե սերն է տղամարդու և կնոջ միջև, այլ սերն է տղամարդկանց միջև՝ իր զգացական և մարմնական դրսևորումներով: Ի դեպ, Պլատոնի ստեղծագործություններում քիչ չեն այսպիսի գաղափարները: Պատմությունը ցույց է տալիս, որ սիրո անվան տակ հանդես եկող այդ արատը նախ տարածված է եղել Պարսկաստանում, և հետագայում, երբ աշխուժացել են հարաբերությունները Պարսկաստանի տերության և Հունաստանի միջև, այդ արատն անցել է նաև Հունաստան: Հայտնի հոգեբան Զիգմունդ Ֆրոյդը, որ սխալմամբ մարդկային հոգեբանության մեջ մեծ և առաջնային դեր է տալիս սեռականությանը և անգամ զվարճալի օրինակով բացատրել էր սեռական հակումների ճնշման անցանկալի լինելը, իր մեկ այլ աշխատության մեջ մեծապես գնահատում է ճգնավորների դերը՝ ասելով, որ նրանց ողջ կյանքը եղել է պայքար կրքերի դեմ, և հատկապես ճգնավորները սիրո գաղափարին տվեցին հոգեբանական այն անգնահատելի խորությունն ու իմաստը, որ երբեք մարդկությանը չէր կարող տալ անտիկ, հեթանոսական աշխարհը:

Ոմանք մեղադրում են ճգնավորներին, որ նրանք ապրել են մարդկային հասարակությունից հեռու, մենակ և միայն իրենց համար: Սակայն այսօր հաճախ ընտանիքներում միևնույն ընտանիքի անդամները բնակվում են միասին, կողք-կողքի՝ իրականում ապրելով միմյանցից առանձին, ամփոփված յուրաքանչյուրն իր խնդիրներով, ներաշխարհով: Մինչդեռ ճգնավորները մշտապես մտածել ու աղոթել են ողջ մարդկության համար: Եվ ստացվում է, որ ճգնավորները, բոլորից հեռու ապրելով, միևնույն ժամանակ ապրում էին բոլորի հետ՝ հոգևոր իրական միասնության ու սիրո մեջ:

ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը կոչվում է նաև արմատ հավատո: Լուսավորիչ է ասվում նրա համար, որ մարդկանց հեթանոսության խավարից բերեց ճշմարիտ լույսի: Նաև Գրիգոր Լուսավորչի գերեզմանի մոտ շատ կույրեր բժշկվում էին և լուսավորվում: Արմատ հավատո է կոչվում Լուսավորիչը, որովհետև մարդկանց փոխանցեց աստվածային շնորհները: Ինչպես որ ծառի արմատը սկզբում է և օգտակարն իր միջով փոխանցում է ճյուղերին ու տերևներին, ճիշտ այդպես էլ Գրիգոր Լուսավորիչը աստվածային շնորհները փոխանցեց հայ ժողովրդին:

ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Շատ մեծ և չափազանց դժվարին առաքելություն կատարեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Նրա գործի ծանրությունը հասկանալու համար տեսնենք, թե ինչ են ասել եկեղեցական նշանավոր հեղինակները հոգևորականի ծառայության վերաբերյալ: Սուրբ Հովհան Ոսկեբերանը հովվությունը կամ ավետարանական պաշտոնեությունը կոչում է փոթորիկ մտաց: Հատկապես դժվար է ավելի մեծ պարտականություններ ունեցող հոգևորականների ծառայությունը: Սուրբ Գրիգոր Նազիանզացին ասում է, որ եպիսկոպոսն ավելի է հուզված հոգսերով և արհավիրքներով, քան ծովը՝ հողմերով և մրրիկներով: Իսկ Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ այժմ, երբ չկան հալածանքներ, որոնց ընթացքում եպիսկոպոսը առաջինն էր նետվում նահատակության՝ հանուն Քրիստոսի, եպիսկոպոսը չպետք է մտահոգվի հարուստ ու փարթամ ապրելով, այլ առաջին հերթին՝ Եկեղեցու պայծառությամբ, մարդկային հոգու փրկությամբ: Տաթևացին նշում է, որ երբ Մովսեսը լեռը ելավ, թեպետ և Ահարոն քահանային թողեց ժո-ղովրդի հետ, ժողովուրդը, այնուամենայնիվ, մոլորվեց: Եվ եկեղեցական այս մեծ Սուրբը նշում է, որ այդ իսկ պատճառով, եպիսկոպոսը պետք է լուրջ հսկողություն հաստատի ու ինքը ևս ժամանակ առ ժամանակ շրջի ժողովրդի մեջ և ուսուցանի: Ահա այսպես դժվարին էր նաև Սուրբ Գրիգոր Լուսավորչի գործունեությունը, որի արդյունքում քրիստոնյա դարձավ ողջ հայ ժողովուրդը: Հայոց հողում Քրիստոսի իջման վերաբերյալ Լուսավորչի տեսիլքի մեջ շողի կաթելը նշանակում էր Ավետարանի քարոզությունը, այսինքն՝ ճշմարտության լույսով մեր երկրի լուսավորումը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ ԿԱՄ

ՀՈԳԻՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Ոմանք կարծում են, որ քրիստոնեության տարածումը Հայաստանում անբարենպաստ եղավ մեր հին շրջանի մշակույթի համար, որովհետև Գրիգոր Լուսավորիչը, Հայաստանում քրիստոնեությունը տարածելով, ոչնչացնում էր հայոց հեթանոսական շրջանի մշակույթի գեղեցիկ և ինքնատիպ արժեքները: Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում շատ կուռքերի, մեհյանների տեղում հաստատել է քրիստոնեական եկեղեցիներ կամ դրանք վերածել է եկեղեցիների: Սակայն իրականում, ինչպես հայտնում է Ագաթանգեղոս պատմիչը, Տրդատ թագավորն է իր զորքի և հավատացյալ ժողովրդի հետ ավերել մեհյանները՝ դրանց հարստությունները բաժանելով աղքատներին, մի մասն էլ ընծայելով Եկեղեցուն: Հեթանոսական տաճարների քրմական դասը, դարձի գալով, անցել է եկեղեցական սպասավորության: Կռապաշտական տաճարների կործանման ժամանակ Տրդատի հետ շրջում էր նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Գրիգոր Լուսավորչի անձնապես և անմիջական մասնակցությունը տաճարների կործանմանը, ըստ պատմիչի, եղել է միայն մեկ անգամ, ուղեկցվել հրաշքով: Արտաշատում Անահիտ դիցուհու տաճարի դևերի դիմադրության ժամանակ Սուրբ Գրիգորը բարձր պահել է խաչը, որի զորությունից տաճարը քանդվել է: Մինչդեռ հեթանոսական, կռապաշտական առարկաներ ոչնչացնելու ուշագրավ դեպքեր կան Աստվածաշնչում և սրբերի կյանքում: Երբ Մովսես մարգարեն լեռը բարձրացավ՝ Տիրոջ պատվիրանները ստանալու, հրեաները նրա բացակայության ժամանակ մի ոսկե հորթ ձուլեցին և սկսեցին պաշտել այդ կուռքին: Վերադառնալով և այս ամենը տեսնելով՝ Մովսեսը ջարդուփշուր արեց կուռքը և ոչնչացրեց (Ելք 32.1-20): Այս պատմությունը գրեթե բոլորն էլ գիտեն, սակայն մինչև այսօր ոչ ոքի մտքով անգամ չի անցել Մովսես մարգարեին մեղադրել մշակութային արժեքների ոչնչացման մեջ: Մեր ժողովրդի կողմից ամենասիրված սրբերից են Սուրբ Գևորգը և Սուրբ Սարգիսը: Երբ նրանց ստիպեցին կուռքերին զոհ մատուցել, նրանք ոչ միայն հրաժարվեցին զոհ մատուցելուց, այլև կործանեցին կուռքերը: Եվ մեր ժողովուրդը, այս սրբերին սիրելով, մինչև այսօր նրանց չի մեղադրել մշակութային արժեքների ոչնչացման մեջ: Եվ ահա Սուրբ Գրիգոր Լուսավորիչն արեց այն նույն բանը, ինչ արեցին Մովսես մարգարեն և մյուս սրբերը:

Բազում ուսումնասիրություններ, փորձառություններ, զգացողություններ ցույց են տալիս, ապացուցում են, որ մարդը մարմնից և հոգուց կազմված մի ամբողջություն է: Երբ մարմնի վրա վերք է լինում, ապա բժշկության մեջ վերքը բուժում են առաջին հերթին ախտահանիչ որևէ միջոցով, որովհետև հակառակ դեպքում վերքը բորբոքվում է և մարդուն

նույնիսկ մահվան է հասցնում: Այս նույն ձևով էլ հոգևոր իմաստով կան առարկաներ, որոնք սրբություն և կենդանություն են տարածում: Օրինակ՝ Քրիստոսի խաչափայտի շնորհիվ հարություն առավ մեռած պատանին, Եղիսե մարգարեի ոսկորներին դիպչելով՝ հարություն առավ մեռածը (Դ Թագավ. 13.21): Նույն կերպ էլ չարին նվիրված առարկաները մահ և պղծություն են սփռում: Չարի մասին հայտնի է, որ նա նյութական աշխարհի վրա կարողանում է ազդել հատկապես կուռքերի և նրանց նվիրված տաճարների միջից ու դրանց միջոցով: Երբ մի մարդ պատերազմի ժամանակ ականազերծ է անում ականապատված մի դաշտ, որպեսզի իր ետևից եկող զորքն ապահով անցնի և մահ չլինի, ապա այդպիսի մեկին չեն մեղադրում մարդու կողմից ստեղծված առարկաները, այն էլ այդպիսի հնարամիտ առարկաները ոչնչացնելու համար, այլ ընդհակառակը, գովում են և նույնիսկ շքանշաններ ու հերոսի կոչում տալիս: Եվ մենք այսօր էլ պետք է շնորհակալ լինենք Սուրբ Գրիգոր Լուսավորչից, որ Հայաստանը դիտելով իբրև հոգևոր դաշտ՝ այնտեղից արմատախիլ արեց թույնը և հաստատեց կյանք տվող եկեղեցիներ: Այս ամենն իմանալուց հետո մեզ համար հասկանալի է դառնում, թե ինչու էին սրբերը ոչ միայն հրաժարվում կուռքերին զոհ մատուցելուց, այլև կործանում էին դրանք: Այս արարքն իր մեջ երկու նպատակ ուներ: Սրբերը նախ ցանկանում էին ցույց տալ, որ դրանք աստվածներ չեն, և մարդը կարող է դրանք կործանել, և երկրորդ, որ ամենակարևորն է, սրբերը ցանկանում էին, որքան հնարավոր է, սահմանափակել չարի ազդեցության ոլորտները մարդկության վրա:

Խորհրդային Միության փլուզումից հետո նախկինում նրա կազմի մեջ մտնող բազմաթիվ երկրներ ոչնչացրեցին նախկին հասարակարգի առաջնորդների արձանները, վերացրեցին նրանց անունները փողոցների, մշակութային, հասարակական հաստատությունների վրայից: Եվ այսօր այդ ոչնչացումները չեն դիտվում որպես մշակութային արժեքների ոչնչացում:

ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊՆ

Եկեղեցում մեծ շուքով է նշվում Սուրբ Գրիգոր Լուսավորչի սոսկալի չարչարանքների և Խոր Վիրապ մուտքի հիշատակը: Գրիգոր Լուսավորիչը տասներեք կամ այլ վկայություններով տասնհինգ երկար տարիներ անցկացրեց բանտում՝ Խոր Վիրապում՝ խորը փոսի մեջ, և միայն Աստծո ողորմության շնորհիվ կարողացավ կենդանի մնալ: Ըստ ավանդության՝ երկնային հրեշտակը հայտնվում էր նրան, զորացնում և քաջալերում:

Մինչև բանտ նետվելը Լուսավորչին մատնեցին ահավոր չարչարանքների՝ տանջելով բոլոր հնարավոր միջոցներով: Սակայն Սուրբն անդրդվելի մնաց Աստծո հանդեպ իր հավատքի և իր սիրո մեջ: Չենք կարող ասել, որ բանտարկության այդ տարիների ընթացքում Լուսավորիչը եղել է տխրության մեջ, որովհետև ներքին քրիստոնեական ուրախություն կա, որը միշտ հաստատուն է մնում: Այն նման չէ արտաքին ուրախությանը, որը տատանվում է հուսահատություններից և կյանքի դժվարություններից: Հոգևոր ուրախությունը միշտ անսասան է մնում: Պողոս առաքյալն ասում է, որ ոչինչ չի կարող մեզ բաժանել Քրիստոսի սիրուց՝ ո՛չ տառապանքը, ո՛չ անձկությունը, ո՛չ հալածանքը, ո՛չ սովը, ո՛չ մերկությունը, ո՛չ վտանգները և ո՛չ էլ սուրը (Հռ. 8.35): Եվ Քրիստոսի հանդեպ այս սերը միշտ ներկա էր Սուրբ Գրիգորի սրտում, իսկ որտեղ Քրիստոսի սերն է, այնտեղ անփոփոխելի հոգևոր ուրախությունն է:

Չարչարանքների մեջ մենք պետք է աղոթենք, որովհետև աղոթքի ուժը կարող է դադարեցնել չարչարանքները և կամ փոխել չարչարողներին, ովքեր իրենք կդադարեն տանջանք պատճառելուց: Այսպես նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչն իր աղոթքներով փոխեց Տրդատ թագավորին, ով հետագայում քրիստոնյա դարձավ:

Մեր մեծագույն Կաթողիկոսներից Սիմեոն Երևանցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասին ասել է. «Թեպետ ուրիշ ազգերի հավատացյալները ևս սուրբ հովվապետներ և լուսավորիչներ ունեն, սակայն նրանք երկար տարիներ բազմատեսակ չարչարանքներով փորձության բովում չեն մաքրվել, ինչպես մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը»:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Սուրբ Գրիգոր Լուսավորչին նվիրված տոն ունեն նաև մյուս Եկեղեցիները: Որոշ Եկեղեցիների կողմից մեր Եկեղեցին կոչվել է Գրիգորյան, բայց ոչ թե նրա համար, որ ավելի պանծացվի Լուսավորչի հիշատակը, ով նաև իրենց համար տոնելի սուրբ է, այլ առավել նսեմացնելու մեր Եկեղեցին: Այսպիսով ցանկանում էին *առաքելական* բառը հանել մեր Եկեղեցու անունից՝ շեշտելով, թե այն Լուսավորիչն է հիմնադրել, և ոչ թե առաքյալները: Ահա այստեղից է առաջացել մեր Եկեղեցու Գրիգորյան անվանումը:

Գրիգոր Լուսավորիչը կոչվում է երկրորդ Լուսավորիչ, որովհետև նախքան Սուրբ Գրիգորը Հայաստանում կային եպիսկոպոսական աթոռներ, հոգևոր առաջնորդներ, բազմաթիվ քրիստոնյաներ: Մեր առաջին լուսավորիչներ են համարվում Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, ովքեր հիմնեցին քրիստոնեական Եկեղեցին Հայաստանում:

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կյանքի վերջին տարիներին Սուրբ Գրիգոր Լուսավորիչը ճգնում էր Սեպուհ լեռան այն այրում, որտեղ ճգնությամբ ապրել էր Սուրբ Մանե կույսը: Սրբի վախճանվելուց որոշ ժամանակ անց մի քանի հովիվներ գտան նրան՝ ծնկի եկած, ձախ ձեռքին գավազան: Հովիվները չգիտեին, թե ով է այդ սուրբը, և իմանալով, որ նա վախճանված է, ամփոփեցին մարմինն ու հեռացան: Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակ Աստված Գառնիկ անունով ճգնավորին տեսիլքով հայտնեց Սրբի մասունքների տեղը: Սրանից հետո Լուսավորչի նշխարներն ամփոփեցին Թորդանում: 5-րդ դարում Լուսավորչի աջ ձեռքի սուրբ մասունքներն ամփոփվել են բազկի և մատների ձև ունեցող արծաթե պատյանում: Լուսավորչի Աջի առկայությամբ է կատարվում սուրբ մյուռոնի օրհնության սրբազան արարողությունը: Լուսավորչի մասունքների գյուտի օրը էջմիածնի Մայր տաճարում են դրվում Սրբի մասունքները, որպեսզի հավատացյալները մոտենան և խոնարհվեն իրենց մեջ զորություն ունեցող մասունքների առջև:

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

ՍՐԲՈՒԹՅԱՆ ՉԳՏՈՒՄ

Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է. «Սրբության ձգտումը տեսնում ենք ոչ միայն կենդանի մարդու մեջ, այլև անկենդան աշխարհի տարրերի մեջ: Ծովերն ու գետերը ավելորդ ու աղտեղի իրերը իրենցից հեռացնում են և ալիքներով ափ գցում: Նույնպես և կերակուրները եփվելիս ավելորդը բաժանում են իրենցից: Նաև մեր տներից ավելորդը ավլում ենք, փոշին թափում և անոթները լվանում»: Նույնպես և սրբերի օրինակներով մեր հոգիները պետք է մաքրենք մեղքերից որպեսզի արժանի լինենք Աստծուն:

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԽՈՀԱՆՈՑԻՑ ԴՈՒՐՍ

Ֆրանսիացի մեծ գրող Անատոլ Ֆրանսը հետաքրքրական և արժեքավոր գեղավերստական ստեղծագործությունների հեղինակ է: Սակայն հավանաբար շատ քչերը գիտեն նրա մանկության ժամանակաշրջանի մի հետաքրքիր դեպքի մասին: Անատոլ Ֆրանսը փոքր տարիքում հիացմունքով էր կարդացել Սիմեոն Սյունակյացի պատմությունը, ով 30 տա-

րիներ շարունակ ապրել է 60 ոտնաչափ բարձրությամբ մի սյան գագաթին՝ Ասորիքում: Ինքն էլ ուզեց նույնն անել. գնաց խոհանոց, խոհանոցի պահարանի գագաթը ելավ և մի ամբողջ առավոտ այնտեղ անցկացրեց: Կեսօրվա ճաշի ժամանակ ցած իջավ: Մայրն ասաց նրան. «Մի՛ նեղվիր, ամեն ոք չի կարող սուրբ լինել: Դու գոնե ճիգ և փորձ արեցիր, բայց միշտ հիշիր, որ գրեթե անկարելի է, որ մարդ սուրբ լինի իր խոհանոցի մեջ...»: Յուրաքանչյուրը միայն իր կյանքի հարմարավետ պայմաններ չպետք է որոնի, չպետք է սահմանափակվի միայն իր «խոհանոցով», այլ նախ և առաջ պետք է փնտրի երկնային արժեքներ ու կգտնի նաև երկրային բարիքներ:

ՍՐԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Սուրբ Բարսեղի դասընկերն է եղել հետագայի Հուլիանոս Ուրացող կայսրը: Պատմում են, որ նրա մահից հետո Բարսեղ Մեծը Ամանորին Հուլիանոս Ուրացող կայսեր ողջ հարստությունը բաժանել է ժողովրդին: Սուրբ Բարսեղի եղբայրը՝ Գրիգոր Նյուսացին, ամուսնացած է եղել և սկզբնապես ցանկություն չի ունեցել հոգևորական լինելու: Սակայն հետո իր կնոջ հետ փոխադարձ համաձայությամբ կինը մտել է կուսանոց, իսկ Գրիգորը դարձել է Նյուսա քաղաքի եպիսկոպոսը: Նրա քույրը՝ Մաքրինան, ևս ընտրել էր կուսական կյանքը: Մեր Եկեղեցու նշանավոր հոգևորականներից Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը շատ գեղեցիկ համեմատությամբ ասում է. «Բարսեղի ընտանիքը ամբողջական նվիրումի սքանչելի օրինակ է, նման մեր Նարեկացու ընտանիքին, ուր երեք եղբայրներ և իրենց հայրը ամբողջությամբ նվիրված են եղել հոգևոր ասպարեզին իրենց մորեղբոր հետ»:

ՍՐԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՐԲԵՐ

Ճիշտ կլինի ասել, որ Եկեղեցին սուրբ չի հռչակում, այլ արձանագրում, հաստատում կամ հայտարարում է այս կամ այն անձի սրբությունը, որովհետև Եկեղեցու հռչակելուց կամ չհռչակելուց սրբի տեղը երկնքում չի փոխվում: Բուդդայականությունն ուսուցանում է, որ սրբությունը հրաժարում է ցանկություններից և անցում դեպի ոչինչ: Սակայն հնարավոր չէ ազատվել բոլոր ցանկություններից, որովհետև ի վերջո բոլոր ցանկություններից հրաժարվելու համար էլ դրա ցանկությունն է պետք: Իրականում սրբության հասնելու համար պետք է հրաժարվել ոչ թե ցանկություններից, այլ վատ մտադրություններից, որովհետև վատ մդադրությամբ նույնիսկ լավ արարքը կարող է մեղք դառնալ, ինչպես օրինակ,

ողորմությունը կարող է վերածվել ցուցամոլության, խոնարհությունը՝ քծնողության ու երեսպաշտության, համարձակությունը՝ հանդգնության, գիտությունը՝ հպարտության և այլն:

Եկեղեցին բոլոր ժամանակներում էլ ունեցել է սրբեր և այժմ էլ մեր Եկեղեցում սրբեր կան, որոնց մասին չգիտենք: Շատերն են երևում իբրև Եկեղեցու համար գործող, ուսուցանող, լավ քարոզիչ և այլն: Սակայն կան մարդիկ, ովքեր համեստ, պարզ քրիստոնյայի ճշմարիտ կյանքով են ապրում, և դրանում է նրանց մեծ սրբությունը, ինչպես հայտնի է դառնում նաև Մակար անապատականի կյանքի մի դրվագից: Մի անգամ Սուրբ Մակարին Աստված ասաց, որ այսքան տարի ճգնում է, բայց դեռ չի հասել ցանկալի սրբության, և ճգնավորին պատվիրեց գնալ մի արհեստավորի մոտ՝ նրանից դաս սովորելու: Արհեստավորը մեծապես զարմացավ Սուրբ Մակարի պատմածից՝ հայտնելով, որ առանձնակի ոչինչ չի անում, աշխատում է, ընտանիք պահում, և ինքն ու իր կինը երբեք միմյանց չեն վիրավորել վատ բառերով: Վատ խոսքերից հեռու մնալը նշանակում է մաքուր պահել միտքն ու սիրտը, քանզի վատ բառերը մտքից ու սրտից են գալիս, ինչպես Ավետարանում է ասվում, թե՝ սրտի ավելցուկից է խոսում բերանը (Ղուկ. 6.45): Այսօր էլ շատեր երևում են, և բազումներ չեն երևում, ինչպես ծովն ու նրա գանձերը: Հայտնիները նման են ծովի գեղեցիկ ալիքների ու մակերևույթի, բայց ծովի հատակին այնքա՜ն թանկարժեք մարգարիտներ կան, որ չեն երևում: Այդ անձինք, Աստծո կողմից սրբության պատվին արժանանալով, համալրում են շարքը այն սրբերի, որոնց տոնը մեր Սուրբ Եկեղեցում տոնվում է Հին և նոր, հայտնի և անհայտ սրբերի տոն անունով:

ՍՐԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐԲՆԱԿԱՆԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Քրիստոնեական սրբություններին պետք է վերաբերվել այնպես, ինչպես Սուրբ Հեղինե կայսրուհին: Նա հավատաց, որ Քրիստոսի Խաչափայտը զորություն ունի, և իմանալու համար, թե որն է Գողգոթայում իր կողմից կազմակերպված պեղումների ընթացքում հայտնաբերված երեք խաչերից՝ Քրիստոսի և երկու ավազակների խաչերից տերունական խաչը, իր հետ եղող մյուս հավատացյալների հետ հերթով խաչերին մոտեցրին մի մեռած պատանու, և երբ դիակը դիպավ Քրիստոսի խաչին, պատանին կենդանացավ:

Չպետք է կարծել, որ քրիստոնեական սրբությունները՝ սուրբ առարկաները, մասունքները, միայն նյութ են, այլ պետք է հավատալ, որ նյութի մեջ առկա է աստվածապարգև օրհնաբեր զորություն: Այս հարցում հաճախ չի կարելի վստահել սեփական տրամաբանությանն ու զգացողութ-

յուններին, քանզի անսահմանափակ չէ մեր միտքը, և մեր զգացողությունները հաճախ են լինում պատրանքի և անստուգության մեջ: Օրինակ՝ ձայնի հնչելիությունը ունի սահման, որից այն կողմ մարդու լսելիքը չի ընկալում ձայնը, որը լսելի է կենդանիների համար: Գույները մարդկանց աչքերին երևում են բոլորովին այլ երանգներով, և նույն գույներն ամբողջովին այլ կերպ են տեսնում միջատներն ու մեղուները: Պատրանքի տեսակ կարելի է համարել գեղանկարչությունը, հեռուստացույցը, երբ հարթ տարածության վրա երևում են խորություն և բարձրություն:

Այսօր հոգևոր զգացողության բթություն է նկատվում մարդկանց մեջ: Դրա համար էլ բազում մարդիկ ավելի շատ հավատում են չար աչքին, փողոցով անցնող սև կատվի բերած անհաջողությանը, փոխանակ հավատալու, որ Աստված Իր նախախնամությամբ պահպանում է մարդկանց: Շատեր հավատում են, որ իրենց նախնիները առաջացել են կապիկից, փոխանակ հավատալու, որ Աստված է ստեղծել մարդուն Իր պատկերով ու նմանությամբ: Շատեր հավատում են այլմոլորակայիններին գոյությանը, դրանց վերաբերող ֆանտաստիկ պատմությունների, բայց դժվարանում են հավատալ, որ Քրիստոս Աստված մարդացավ, մարմնացավ և ծնվեց Սուրբ Կույսից: Շատ գիտնականներ աշխատություններ են գրում այն մասին, որ տիեզերքը առաջացել է հանկարծակի, մի պայթյունից, իսկ մարդկությունը՝ մանրէներից, փոխանակ հավատալու, որ եթե իրենց այդպիսի աշխատությունների համար ուղեղ է պետք, ապա ուրեմն որքան առավել ևս գերբնական բանականություն էր պետք ամբողջ տիեզերքը արարելու համար:

ՀԱՎԱՏՔ ԵՎ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

Ոմանք երբեմն դժվարանում են հավատալ սրբերին, նրանց կրած ահավոր տառապանքներին և նրանց գործած զարմանալի հրաշքներին: Սակայն հետևյալ իմաստուն խոսքն ասում է. «Ես հավատում եմ սրբերին, որովհետև հավատում եմ սրբությանը»:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԵՐ ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Սուրբ Մակարը, վաղ այրիանալով, հեռացել է անապատ և այնտեղ ապրել ճգնակեցությամբ: Մինչև մեր օրերը պահպանված նրա իմաստուն զրույցները մեծապես օգտակար են բոլոր քրիստոնյաների ներքին հո-

գևոր կյանքի համար: Մի անգամ իր խցում մի գողի հայտնաբերելով՝ Մակարը չի հայտնում իր անձը և օգնում է գողին հավաքել իրերը ու սիրով ճանապարհ է դնում՝ ասելով. «Ես ոչինչ չեմ բերել այս աշխարհ և ոչինչ էլ չեմ տանելու»: Այսպիսի հեզությամբ Սուրբ Մակարը կարողանում էր մարդկանց սրտերը դարձի բերել ի Քրիստոս՝ ապացուցելով, որ ճշմարիտ է Քրիստոսի այն խոսքը, թե միմիայն թշնամիներին սիրելով կարելի է կատարելապես հաղթել նրանց:

Մեկ ուրիշ անապատական՝ Հովհաննես կարճահասակը, իր Պիմեն անունով ուսուցչի հրահանգով անապատում ճգնության տարիներին երեք տարի անընդմեջ ջրում է մի չորացած ծառ, որն ի վերջո պտղակալում է՝ ստանալով *հնազանդության ծառ* անվանումը: Այս դեպքը մեզ սովորեցնում է, որ Քրիստոսի պատվիրած խոնարհությամբ ապրելը միշտ բարի արդյունք է ունենում, նույնիսկ եթե մենք հաճախ այդ խոնարհությունը համարում ենք անտեղի և անօգուտ:

ԻՆՔՆԱՄԵԾԱՐՈՒՄ

Մեր օրերում մեծության պատկերացումը շատ է աղավաղվել: Շատեր իրենց մեծ են համարում՝ իրականում չափազանց փոքր լինելով: Որքան ճիշտ է ասված, թե մտքի աղքատութեան նշան է միշտ, երբ մարդիկ փորձում են իրենք իրենց մեծ ձևացնել, քանզի նրանք, ովքեր իրապես մեծ են, ոչինչ չգիտեն իրենց մեծության մասին:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եթե ձեզ հարցնեն, թե ինչ է խոնարհությունը, որն է դրա սահմանումը, հավանաբար կդժվարանաք պատասխանել: Իսկ ինչպե՞ս կարող եք լինել այն, եթե դրա մասին չգիտեք, թե այն ինչ է: Խոնարհությունը լինում է երեք տեսակի՝ բնական, տեսական և գործնական: Բնականը այնն է, որ մարդ հիշելով իրերի բնական ընթացքը, թե որտեղից է սկսվել, և ուր է գնալու, հեռու է մնում հպարտությունից: Խոնարհության այս տեսակը կա սաղմոսերգուի մոտ, որն ասում է. «Անօրենությամբ հղիացավ և մեղքերի մեջ ծնեց ինձ մայրն իմ» (Սաղմ. 50.7): Նաև Աստվածաշնչի խոսքը, թե՝ հող էիր և դարձյալ հող պիտի դառնաս (Ծննդ. 3.19): Տեսական խոնարհությունն այն է, որ մարդ անդրադառնալով իր ամոթալի մեղքերին տեսնում է, որ անարժան է այն բարիքներին, ուրախություններին, որոնց իրեն արժանի է դարձնում Աստված: Իհարկե, չպետք է անտեսենք մեր արժանիքները, որպեսզի թերարժեքության բարդույթի մեջ ընկնենք, սակայն միևնույն ժամանակ նաև չպետք է ինքնակարծիք կամ ինքնագնահատա-

կան ունենանք, որովհետև մարդու գնահատականը իր արժանիքների մասին գրեթե միշտ չափազանցված է լինում, ինչը և տանում է հպարտության: Օրինակ՝ Պողոս առաքյալը, իր թղթերում ապացուցելով իր առաքելական արժանիքները, իր հավասարությունը մյուս տասներկու առաքյալներին, միևնույն ժամանակ նաև ասում է. «Ես իսկ եմ առաքյալների տրուպը» (Ա Կորնթ. 15.9), նաև՝ «ես եմ գլուխը մեղավորների» (Ա Տիմ. 1.15): Նույնպես Աստծո կողմից ընտրված Աբրահամն ասում է. «Ես հող եմ ու մոխիր» (Ծննդ. 18.27), նաև Դավիթ թագավորը, ով Աստծո ողորմության շնորհիվ արժանացել էր մեծության, ասում էր՝ աղքատ և տնանկ եմ ես (Սաղմ. 69.6): Գործնական խոնարհությունն այն է, երբ մարդ իրեն ենթարկելով իմաստավոր զրկանքների՝ աղոթքի, պահքի, իրենից հեռու է վանում ամեն չար մտածում և հակում, հետևաբար նաև՝ հպարտությունը և կարողանում է խոնարհ վիճակ ձեռք բերել:

Երբ մարդը, գիտակցելով իր հպարտությունը, գնում է խոստովանահոր մոտ, խոստովանահայրը պետք է ճիշտ դեղ նշանակի հպարտությունը վերացնելու համար: Եթե որպես դեղ նշանակվում է ողորմություն, կամ կերակրի չափավորություն, պահք, ապա դրանից հպարտությունը չի վերանա, որովհետև հատկապես կերակրի չափավորությունը դրվում է հիմնական երկու մեղքերի դիմաց՝ որկրամոլության և բղջախոհության, իսկ հպարտության դիմաց դրվում է խոնարհությունը, և բարկության դիմաց՝ հեզությունը:

Հպարտ և խոնարհ մարդու արտաքին դրսևորումները ցույց են տալիս բնության գեղեցիկ օրինակները: Հպարտները նման են բարդիների, որոնք դեպի վեր են ձգտում և գլուխները վեր ցցում, իսկ խոնարհները նման են վարդի թփերի, որոնց վրա բացվում է վարդի գեղեցիկ ծաղիկը: Սա է ցույց տալիս նաև Աստծո խոսքը. «Ես ու՞մ եմ նայելու, եթե ոչ հեզերին ու խոնարհներին» (Ես. 66.2): Նաև հպարտ մարդու օրինակ են անպտուղ ծառերը, որոնց ճյուղերը վեր են ցցվում դատարկությունից, իսկ խոնարհ մարդու օրինակ են պտղաբեր ծառերը, որոնց ճյուղերը գեղեցիկ կերպով խոնարհվում են բերքերի առատությունից:

ՀԵԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

Անտոն Անապատականի կյանքից մի դրվագ մեզ հեզության դաս է տալիս: Անտոնը լսում է մի ճգնավորի մասին, որը կատարյալ էր դարձել առաքինությունների մեջ, և խնդրում ճգնավորին իր մոտ բերել, որ տեսնի և զրուցի: Երբ բերում են, Անտոնը խցում չի լինում: Քիչ հետո մտնում է խուց և ոչ ոքի ուշադրություն չդարձնելով՝ իր գործերն է անում, խուցը

դասավորում, դուրս գալիս, նորից մտնում: Ի վերջո առաքինությամբ հայտնի ճգնավորը չի դիմանում, պոռթկում է և ասում. «Ցանկացար ինձ տեսնել, և այսքան երկար ճանապարհ կտրեցի, մինչդեռ հիմա ոչ մի ուշադրություն չես դարձնում»: Այդ ժամանակ Անտոնը նրան խրատում է և ասում. «Թեև ասում են, թե կատարյալ ես դարձել առաքինությունների մեջ, բայց իրականում դու նման ես ավերված գյուղի, որովհետև մի փոքրիկ արհամարհանքին անգամ չկարողացար դիմանալ»: Սա խոնարհության ու հեզության մեծ դաս է մեզ համար, որովհետև եթե մենք էլ կյանքում այս կամ այն պարագային չենք կարողանում տանել արհամարհանքը, ապա ինչպե՞ս կարող ենք առավել ևս իրագործել թշնամիներին սիրելու և նույնիսկ նրանց համար աղոթելու Քրիստոսի պատվիրանը (Մատթ. 5.44):

Ոմանք հեզություն և խոնարհություն գրեթե նույն բանն են համարում, սակայն սրանց մեջ տարբերություններ կան, որովհետև խոնարհությունը միշտ դուրս է գալիս հպարտության դեմ, իսկ հեզությունը՝ բարկության: Սակայն կատարյալ խոնարհ կարող ենք լինել միայն այս երկուսի առկայությամբ, որովհետև Քրիստոս ևս սրանք միասին է ասում. «Սովորեցեք Ինձանից, որ հեզ եմ և սրտով խոնարհ» (Մատթ. 11.29): Եկեղեցական հեղինակների գրվածքները նկատի ունենալով՝ փորձենք տալ հեզության և խոնարհության սահմանումները: Հեզությունը մարդկային հոգու անվրդով վիճակն է թե՛ փառքի և թե՛ անփառունակության մեջ, ինչը տեսանք , որ պակասում էր առաքինությամբ հայտնի ճգնավորին, որովհետև Անտոնի կողմից դրվելով անփառունակության մեջ, չկարողացավ դրան դիմանալ: «Իսկ խոնարհությունն այն է,- ասում է Սուրբ Գրիգոր Տաթևացին,- երբ մարդ խոնարվում է իրենից ավելի փոքրին»: Սակայն խոնարհության այս սահմանումը ավելի կատարյալ դարձնելու համար նկատի ունենանք նաև հետևյալ մտածումները: Խոնարհությունը նաև այն է, երբ մարդ խոնարվում է իրենից ավելի մեծին, ավագին, վերադասին: Եվ եթե սա արվում է Աստծո պատվիրանը կատարելու համար և սիրով, ապա այս արարքից բացառվում են քծնողությունն ու երեսպաշտությունը:

Մենք տեսնում ենք, որ մենք նույն կայուն ձևով չենք ներկայանում տարբեր մարդկանց: Օրինակ՝ իշխանավորների առջև հլու հնազանդ ենք, փոքրերի հետ ինքներս ենք ավելի համարձակ և ինքնավստահ, իսկ երեխաների առջև գտնվելիս և նրանց սիրելիս ինքներս այնպիսի ձևեր ենք անում և այնպիսի ձայներ հանում, որ ուրիշ ոչ մի տեղ մեզ այդպես չէինք պահի: Եվ մեր այս բոլորովին տարբեր ու նույնիսկ հակասական վարմունքները տեսնելով, ինքներս մեզ հարցնում ենք՝ լավ, ինչպիսի՞ն եմ ես իրականում: Սակայն եթե խոնարհ մարդ ենք, ապա այս բոլոր դեպքերում էլ նույնիսկ հակառակ վարմունքներով դրսևորվում է մեր խոնար-

հությունը: Եվ մեր կյանքում խոնարհությունն ավելի ամբողջական դրսևորելու համար պետք է միշտ հիշենք հետևյալ ճշմարտությունը. «Խոնարհ լինելը քեզանից գերադասների հանդեպ պարտականություն է, քեզ հավասարների հանդեպ կենցաղագիտություն, իսկ քեզանից ցածրերի հանդեպ՝ ազնվականություն»:

ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ

«Մեծամասնության փոքրոգությունը ստիպում է ոչ շատ հանճարեղներին տեսք ընդունել, թե իբր չեն նկատում ո՛չ իրենց սեփական արժանիքները, ո՛չ էլ ուրիշների ոչնչությունը, որովհետև միայն այդ պայմանով ամբոխը պատրաստ է դիմանալ ուրիշի արժանիքներին: Եվ ահա այդ բռնությունից առաքինություն են սարքել, որը կոչվում է համեստություն»: Այս դատողությունը տրամաբանական է, բայց ոչ ճիշտ, որովհետև եսասիրական ինքնագնահատատականը մարդուն բերում է հպարտության, որը սատանայի մեղքն է, և դրանով մարդը կորցնում է իր հոգու փրկությունը: Պողոս առաքյալն ասում է. «Ինքս ինձ էլ չեմ դատում, որովհետև ինքս իմ մասին բան չգիտեմ: Բայց սրանով չեմ արդարանում, որովհետև նա, որ դատում է ինձ, Տերն է» (Ա Կորնթ. 4.4): Պողոս Առաքյալը նշանակություն չի տալիս իր մասին ուրիշների դատողությանը, նույնիսկ ինքը գնահատական չի տալիս իր գործունեությանը, որովհետև նույնիսկ իր համար ինչ-որ ծածուկ բան կա իր ներքին էության մեջ: Եվ մարդը չափազանց հաճախ չի կարող անկողմնակալությամբ դատել իր և իր արարքների մասին: Իսկ համեստությունը մարդուն օգնում է հեռու մնալ պարծենկոտությունից և իրեն ուրիշներից ավելի բարձր դասելու մոլորությունից: Միայն Դատաստանի ժամանակ Տերը պիտի վերջնական գնահատական տա բոլորի կյանքին ու գործերին (Հռոմ. 2:16):

ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԾՈՒՂԱԿԸ

Խոնարհությունը հաճախ խորամանկ հնազանդություն է, որի նպատակն է իրեն ենթարկել մյուսներին: Դա իրեն խոնարհեցնող հպարտության թակարդ է՝ բարձրանալու համար, և չնայած հպարտությունն ունի հազարավոր կերպարանքներ, բայց նրանցից ամենահմուտը և ամենախաբուսիկը խոնարհությունն է: Երբեմն նաև այնպես է լինում, որ մարդը խոնարհությամբ ապրելով՝ հանկարծ սկսում է հպարտանալ նրանով, որ ինքը խոնարհ է: Հետևաբար, պետք է զգոն լինել անգամ խոնարհության մեջ:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ ՄԵԿԴ ՄՅՈՒՍԻՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀԱՄԱՐԵՑԵՔ

«Մի՛ արեք որևէ բան հակառակության ոգով, ոչ էլ որևէ բան՝ սնապարծությամբ, այլ խոնարհությամբ մեկդ մյուսին ավելի լավ համարեցեք, քան ինքներդ ձեզ: Միայն ձեր շահը մի փնտրեք, այլ յուրաքանչյուր ոք՝ ընկերոջ շահն էլ» (Փիլ. 2.3-4): Առաքյալը զգուշացնում է մեզ հակառակությունից և սնապարծությունից, ըստ սեփական շահերի գործելուց: Նաև հորդորում է, որ մեզանից բարձր դասենք մյուսներին: Այս հորդորը գուցե արտասովոր է թվում, բայց սա լինում է խոնարհությամբ, և սրանով է նաև արտահայտվում խոնարհությունը: Սակայն մեկը կարող է հարցնել. «Արդյո՞ք արդարացի է ամեն դեպքում ուրիշների առաջ ինքնաստորացումը, որովհետև գուցե ես իմ արժանիքներով իրականում ավելի բարձր եմ, քան իմ մերձավորը կամ մեկ ուրիշը»: Առաքյալի հորդորը պետք է հասկանալ այն իմաստով, որ մարդը հաճախ պետք է գիտակցի, որ ամբողջովին չի օգտագործել իր հնարավորություններն ու ձիրքերը, որով կարող էր շատ ավելի բան անել, քան մյուսը, ով գուցե իր ողջ ուժերն է ներդրել բարի իրագործումների համար: Բացի այդ ինքնագնահատականը հաճախ հպարտության է տանում: Իսկ ընկերոջ շահը փնտրելու հորդորով առաքյալը ոչ թե դեմ է մարդու՝ ինքն իր հանդեպ սիրուն և սեփական շահի համար գործելուն, այլ՝ նեղ իմաստով էգոիզմին, որով մարդն իր շահերի պատճառով չի ուզում տեսնել մերձավորի կարիքները:

ՓԱՌՔԻ ԵՎ ՓԱՌԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զմյուռնիայի պատրիարքներից է եղել առաքինազարդ մի անձնավորություն՝ Նիկողայոս Սքանչելագործ անունով: Նա ծնվել է 280 թ.: Նիկողայոսը ավելի շատ ցանկանում էր ապրել առանձնացած կյանքով, աղոթքներով: Ծնողների մահից հետո նա իր ունեցվածքը բաժանում է աղքատներին և գնում Երուսաղեմ: Այստեղ ցանկանում է վանական կյանքով ապրել, սակայն նրան լսելի է դառնում Աստծո ձայնը, որն ասում է. «Նիկողայո՛ս, այստեղ չէ, որ դու Ինձանով պետք է պտուղ տաս, այլ գնա ժողովրդի մեջ»: Նիկողայոսը հետագայում դառնում է Զմյուռնայի եպիսկոպոս՝ բոլորի համար հանդիսանալով խոնարհության և հեզության օրինակ: Դիոկղետիանոս կայսեր հալածանքների ժամանակ նա բանտարկ-

 իայն Կոստանդիանոս կայսեր օրոք:

Նիկողայոսի կյանքից մենք կարող ենք փառքին վերաբերող գեղեցիկ օրինակ վերցնել: Երբեմն մենք էլ Նիկողայոսի նման կանգնած ենք լինում ընտրության առջև. կամ պետք է ընդհանուրի համար բարի գործ

անենք, որը մեզ ճանաչում կբերի, կամ պետք է առանձնանանք, նույնպես բարի և արդար կյանքով ապրենք շատերի աչքից հեռու: Երբեմն դժվարանում ենք ընտրություն կատարել, բայց Աստված իր նախախնամությամբ մշտապես ուղղում է մարդկանց քայլերը: Եվ փառքի ու անփառունակության միջև ընտրության կողմնորոշմանը մեզ կօգնի փառքի վերաբերյալ երկու ճգնակյաց մարդկանց խոսակցության մասին իմանալը:

Երկու ճգնակյաց մարդիկ՝ Աբրահամ և Թեոդորոս անուններով, զրուցում են փառքի մասին: Աբրահամը հարցնում է իրենից ավելի փորձառու Թեոդորոսին. «Ո՞րն է ավելի լավ և օգտակար, փառքի՞ ձգտելը, թե՞ անփառունակության»: Թեոդորոսը պատասխանում է. «Ես ավելի փառք եմ ցանկանում, քան թե անպատվություն, քանզի եթե բարի բան անեմ և փառքի արժանանամ, շատերին նաև օրինակ կլինեմ, իսկ եթե փառասիրությամբ մեղանչեմ, միայն ինձ պետք է մեղադրեմ և ոչ թե մարդկանց»: Աբրահամը տալիս է երկրորդ հարցը. «Իսկ ինչու՞ բոլոր մեծ Հայրերը ոչնչից այդքան չէին վախենում, որքան փառքից»: Եվ սրան հետևում է իմաստուն պատասխանը. «Նրանք վախենում էին ոչ թե փառքից, այլ կեղծ փառքից, կամ ավելի լավ է ասել՝ նրանք զգուշանում էին, որ իրենց սրտերը չվարակվեն փառասիրությամբ: Բարի գործերին հետևող փառքի և Աստծո պատվիրանները աշխարհի ունայնությամբ փոխարինող փառասիրության միջև մեծ տարբերություն կա: Բարիք գործիր միայն Աստծուն հաճելի լինելու համար, և այն ժամանակ Աստված ոչ միայն չի դատապարտի փառքը, որը մարդ ձեռք է բերել առանց դրան ձգտելու, այլև այս փառքին կգումարի նաև այն փառքը, որը Նա աշխարհի սկզբից պատրաստել է Իրեն սիրողների համար»: Այսպիսի բարի փառքի արժանացավ նաև Նիկողայոս Սքանչելագործը: Հետևաբար, ընդունելի է, երբ բարի գործերը նպատակ ունենալով, որպես արդյունք լինում է նաև ճանաչումը, սակայն Աստծո կողմից խիստ դատապարտելի է, երբ նպատակ ես ունենում փառքը, հանուն որի բարի գործեր ես անում:

ՓԱՌՔ ԵՎ ՊԱՏԻՎ

Մեկն իմաստությամբ ասել է, որ պատիվը արտաքին խիղճ է, իսկ խիղճը՝ ներքին պատիվ: Տարբերություն կա փառքի և պատվի միջև: Փառքը անմահ երկվորյակն է մահկանացու պատվի: Սակայն պատիվն ավելի կարևոր է, քան փառքը: Փառքը մարդուն նշանավոր և հանրաճանաչ է դարձնում, և փառքի բացակայությունը հռչակի, համբավի պակասն է, սակայն պատվի պակասը հաճախ մարդու անբարոյականությունն է:

ՀԱՎԱՏՔ

ՀԱՎԱՏՔԻ ԶԳԱՑՈՒՄԸ

Մեր օրերում կան մարդիկ, որ իրենց կոչում են աթեիստներ, այսինքն՝ պնդում են, թե չեն հավատում Աստծուն: Նման պնդումը շատ զարմանալի է հավատացյալների համար: Միևնույն ժամանակ, ընդհակառակը, հավատացյալների պնդումն է զարմանալի անհավատների համար: Վերջիններս ասում են, որ տրամաբանությամբ և շատ այլ փաստարկներով կարելի է ցույց տալ, թե ավելի խելացի է Աստծուն չհավատալը: Մինչդեռ հավատք ունեցողների համար տարբեր տրամաբանական մտածողությունները բացարձակորեն էական չեն, քանի որ հավատքը բացի գիտելիքից նաև զգացում է, որ մարդը զգում է իր սրտի մեջ և անհավատին հանդիպելով՝ զարմանում է, թե ինչպես կարելի է ողջ լինել և նման զգացում չունենալ: Ոմանք ասում են, որ անհավատները զուրկ են հավատի այդ կարևոր զգայարանից, ինչպես որ կույրը զուրկ է տեսողական զգայարանից և զարմանում է, երբ որևէ մեկը խոսում է լույսի մասին կամ հիանում է գույների երփներանգությամբ: Այնպես որ բացի մտքին առնչվելուց հավատքը նաև ջերմ զգացում է, որը մարդիկ ավել կամ պակաս չափով զգում են իրենց սրտերի մեջ, և նույնիսկ գրող աթեիստների մեծածավալ աշխատությունները չեն կարող այդ զգացումն արմատախիլ անել հավատացյալ քրիստոնյայի սրտից, ինչպես որ հալածանքները չկարողացան նահատակներին ստիպել ուրանալու Քրիստոսին: Եկեղեցական հեղինակներից մեկն ասում է, որ միայն զղջումը կարող է ստիպել քարացած սրտին ջերմանալու և իր ջերմությունը նաև մտքին փոխանցելու: Հպարտությունը կամ սեփական ներքին չափազանցված ինքնարժեքության լուրջ զգացումը փակված պատուհանի պես խանգարում են աստվածային լույսը տեսնելուն: Եվ Ավետարանում այս մասին է ասվում. «Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5.8):

ԱՆԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Օգտակար չէ հետևել քրիստոնեությունը քննադատող մարդկանց, որովհետև մարդն իր կյանքում միշտ էլ տուժում է անաստվածությունից: Սրա վերաբերյալ քրիստոնեական մեծ գրողներից մեկը հիանալի մտո-

ռումներ ունի: Հավատալը օգնում է թշվառներին, որովհետև թշվառությունից ազատվելու կամ հանդերձյալ կյանքի հույսը թեթևացնում է նրանց կյանքը: Երջանիկ մարդը ևս ոչ մի շահ չունի անհավատ լինելու մեջ: Նրա համար անչափ քաղցր է մտածել, թե իր օրերը կշարունակվեն նաև մահվանից հետո: Ինչպիսի հուսահատությամբ նա կբաժանվեր այս աշխարհից, եթե հավատար, թե ընդմիշտ բաժանվում է իր երջանկությունից: Անաստվածությունը ոչ մի տեսակետից պիտանի չէ նաև պատերազմի ժամանակ, որովհետև ռազմի դաշտում անհավատը շատ ավելի է հակված վախկոտության և նահանջի, քան հավատացյալ զինվորը: Կրոնը դատողություններ է անում՝ հիմնվելով երկնային կարգավորության, տիեզերքի օրենքների վրա: Նա տեսնում է բնության ներդաշնակությունը, կենդանիների սքանչելի բնազդները և դրանց համապատասխանությունը մարդու հետ: Անաստվածությունը, սակայն, ձեզ տալիս է միայն շփոթեցնող բացատրություններ, բնության մեջ նա տեսնում է անկարգություններ, հրաբուխներ, վնասակար անասուններ, դիմում է սողուններին և միջատներին, որպեսզի Աստծո դեմ ապացույցներ հայթայթի իր համար:

Այսօր շատ գիտնականներ ապացուցելու համար, որ մարդուն Արարիչը չի ստեղծել, երկար տարիներ շարունակ հնադարյան կապկանման մարդու կմախքներ են որոնում՝ իրենց կարծիքները հաստատելու համար: Եվ որքան զավեշտալի է այս իրողությունը. բազմաթիվ մարդիկ Աստծուն փնտրելու փոխարեն կապիկ են փնտրում: Կրոնը խոսում է միայն մարդու մեծության և գեղեցկության մասին: Կրոնն իր փաստարկները վերցնում է հոգու զգայությունից, կյանքի ամենաքաղցր զգացումներից՝ որդիական հարգանքից, ամուսնական սիրուց, մայրական գորովից, մինչդեռ անաստվածությունը ամեն ինչ վերածում է անասնական բնազդի: Այդ է պատճառը, որ երկնայինի վերաբերյալ ստեղծագործությունները արմատապես տարբերվում են երկրայինով տարված մարդկանց ստեղծագործություններից: Այսպիսին են նաև նկարները: Այն նկարները, որոնք թեև պատկերում են սրբերին, բայց միևնույն ժամանակ մեծ նպատակ ունեն ցույց տալու մարդկային մարմնի գեղեցկությունը մեզ բոլորիս զարմացնում են իրենց հիացնող ոճով, բայց չեն հուզում, ինչպես մանրանկարները կամ սրբանկարները, որոնք աղոթքի ժամին առանց մեր ուշադրությունը շեղելու մեր մտքերը միանգամից բարձրացնում են դեպի հոգևորը:

ԱՆՀԱՎԱՏԻ ԿՐՈՆԸ

Ճիշտ է այն դիտարկումը, որ քրիստոնեական կրոնը մխիթարում է մեզ, վստահեցնում, որ մեր ցավերը, դժվարություններն ու զրկանքները

վերջ պիտի ունենան, սրբում է մեր արցունքները և մեզ խոստանում մի այլ երանելի կյանք: Այս առումով շատ դժվար է անհավատների՝ աթեիստների համար: Անաստվածությունը ևս ինչ-որ իմաստով կարելի է յուրահատուկ կրոն կոչել, և քրիստոնեական գրողներից Շատոբրիանն ասում է, որ անաստվածի կրոնի մեջ մարդկային վշտերը խունկ են ծխում. մահը զոհարանն է, դագաղը՝ զոհասեղանը և անէությունը՝ նրա աստվածը:

ՀԱՎԱՏԱԼ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Դարավոր փորձառությունն ապացուցել է, որ երջանկությունն այս աշխարհից չէ, որովհետև ամեն բարիք և վայելք իրենց վախճանն ունեն: Եվ մարդկային իմաստությունը սրա դեմ ոչ մի դարման ցույց չի տալիս: Միայն կրոնն է մարդուն խոստանում և երաշխավորում այնպիսի ապագա, որը վարձատրում է ներկա թշվառությունները: Մեզ բոլորիս երբեմն զարմանալի է թվում սրբերի պատրաստակամությունը մահվան գնալու: Սակայն սրբերը մեծագույն հավատքով գիտեին, որ իրենք ոչ թե մահվան էին գնում, այլ մահվան միջոցով գնում էին հավիտենական երջանկության: Մենք բոլորս էլ վաղ թե ուշ մեռնելու ենք, և այս մասին միտքը երբեմն վախեցնում է մեզ: Սակայն, ինչպես ասում է մեծ մտածողը, Աստված այս կյանքի սահմանից այն կողմ դրել է մի կախարդանք, որը քաշում, հրապուրում է մեզ, որպեսզի պակասեցնի մեր սարսափը գերեզմանից: Նույնպես երբ մի մայր ուզում է իր երեխային անցկացնել մի արգելքի վրայից, նա մյուս կողմից նրան մեկնում է գրավիչ մի առարկա, որպեսզի ստիպի համարձակ անցնելու այդ արգելքը: Երբեմն կրոնի կամ Աստծո գործունեության մեջ մեզ համար շատ բաներ անհասկանալի են, սակայն հետևյալ հիանալի խոսքերը բացատրում են շատերիս անհասկացողության պատճառը. «Տեր իմ, ես չեմ փորձում թափանցել Քո վեհությանդ մեջ, քանզի իմ հասկացողությունն այդչափ բարձր չէ: Սակայն փափագում եմ որոշ չափով հասկանալ Քո ճշմարտությունը, որին հավատում եմ և որը սիրում է սիրտս: Որովհետև ես չեմ ջանում հասկանալ՝ հավատալու համար, սակայն հավատում եմ, որպեսզի կարողանամ հասկանալ: Որովհետև հավատում եմ նաև այն բանին, որ մինչև չհավատամ, չեմ հասկանա»:

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԱՄՔ

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկանց միշտ էլ հուզում են ճակատագիր հասկացության հետ կապված հարցերը: Եկեղեցական հեղինակները ևս անդրադարձել են այս թեմային՝ հերքելով ճակատագրի առկայությունը մարդկային կյանքում և հաստատելով ազատ կամքի իրողությունը: Քրիստոնեական ուսուցումներից մեկը՝ նախասահմանության մասին վարդապետությունը, բավականին նման է ճակատագրի հասկացությանը, սակայն հեթանոսական հավատալիքների կամ սնոտիապաշտության ոլորտը կարող ենք անցնել՝ նախասահմանությունը նույնացնելով ճակատագրի հետ: Նախասահմանության մասին խոսում է Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված թղթում. «Նրանց, որ առաջուց գիտեր, նախասահմանեց կերպարանակից լինելու Իր Որդու պատկերին, որպեսզի Նա լինի անդրանիկը բազում եղբայրների մեջ. և որոնց որ նախասահմանել էր, նրանց էլ կանչեց. և որոնց որ կանչեց, նրանց էլ արդարացրեց. և որոնց որ արդարացրեց, նրանց էլ փառավորեց» (9.29-30): Այսինքն՝ Աստված ի սկզբանե արդեն նախասահմանել էր այն մարդկանց, ովքեր պիտի քրիստոնյա լինեին, և նրանց, ովքեր պիտի արդարացվեն ու փառավորվեն: Բողոքականության հիմնադիրներ Լյութերը և Կալվինը այն տեսակետն առաջ քաշեցին և հաստատեցին բողոքական վարդապետության մեջ, որ ամեն ինչ տեղի է ունենում Աստծո ծրագրի համաձայն, և մարդն իր ազատ կամքով չի կարող հակադրվել աստվածային նախասահմանված ծրագրին: Հետևաբար, ըստ բողոքականների, Աստծո նախասահմանումով քրիստոնյաներն արդեն իսկ փրկված են, քանի որ քրիստոնյաների հավատքը վկայում է, որ նրանք ընտրված են փրկության համար Աստծո ծրագրով, և փրկության համար կարևոր է հավատքը, և ոչ թե՝ գործերը: Կաթոլիկները, փրկության համար առավելաբար նաև գործերի կարևորությունը շեշտելով՝ բողոքականների վերոնշյալ վարդապետությունը նողկալի են համարում՝ պնդելով, որ ոչ ոք չի կարող վստահ լինել իր վերջնական փրկության արժանանալու մեջ, բացի այն դեպքից, երբ Աստված դա հայտնում է առանձնահատուկ հայտնությամբ: Որպես օրինակ բերվում է Քրիստոսի խաչելության ժամանակ աջակողմյան ավազակին տրված լուրը, թե նույն օրն իսկ դրախտում պիտի լինի (Ղուկ. 23.43): Կաթոլիկ Եկեղեցու մեծագույն սրբերից երանելի Օգոստինոսը նախասահմանությունը նույնացնում է Աստծո նախագիտության կամ ամենագիտության հետ, որով էլ Աստծո կողմից մարդկանց արդարացման և փառավորման նախասահմանելը նշանակում է, որ Աստված Իր ամենագիտությամբ գիտի, թե ովքեր պիտի արժանանան այդ պարգևներին: Այս ճանապարհին մարդն առաջ է շարժվում իր ազատ կամքով: Շնորհք արքեպիսկոպոս Գա-

լուստյանն իր «Տեղիք աստվածաբանության» աշխատության մեջ մեկ այլ տեսանկյունով է բացատրություն տալիս Աստծո կանխագիտության և նախասահմանության մասին: Նա տարբերակում է դնում այդ երկուսի միջև՝ պարզաբանելով, որ Աստծո կանխագիտությունը երբեք պատճառ չէ մարդու ազատ կամքի սահմանափակման կամ ազատ կամքի վրա բռնանալու: Այլ Աստված գիտի, թե ովքեր պիտի արժանի լինեն Իր շնորհներին և իրենց բանականությունն ու ազատ կամքը ճիշտ գործածելով՝ պիտի ընդունեն այդ շնորհները և նրանցով արդարանան ու փրկվեն: Աստված նախատեսում է ամեն ինչ, բայց չի նախասահմանում ամեն ինչ. Աստված նախասահմանում է այն բաները, որոնք մեր կամքից չեն կախված, և կապ ունեն Աստծու հավիտենական և ընդհանուր ծրագրի հետ: Պողոս առաքյալի խոսքերի հետ ներդաշնակ լինելով՝ կարելի է ասել, որ Աստված, քանի որ գիտեր, թե ովքեր իրենց ընթացքով պիտի փրկության արժանանան, այդ իսկ պատճառով էլ Իր նախագիտությամբ այդպիսիններին նախասահմանեց արդարացման և փառավորման:

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ԱԶԱՏ ԿԱՄՔ

Ճակատագրի հասկացությունը հակադրվում է ազատ կամքի հասկացությանը: Ճակատագրի իրական լինելն ընդունելու դեպքում խախտվում են բարոյականության հիմքերը, քանի որ եթե կա ճակատագիր, ուրեմն մարդն այլևս պատասխանատու չէ իր գործողությունների համար: Մարդու բոլոր արարքներն արդեն ի վերուստ որոշված են, և, հետևաբար, մեղքերի, հանցանքների ողջ պատասխանատվությունն ընկնում է ճակատագիրը հաստատողի և ոչ թե մարդու վրա: Ճակատագրի ընդունումով և ազատ կամքի ժխտումով աղավաղվում է նաև Աստծո մասին ճշմարիտ պատկերացումը, Աստծո մասին Սուրբ Գրքի բերած հայտնությունը: Աստված այլևս չի ընկալվում որպես արդար դատավոր, քանի որ անարդար է մարդուն դատելը ի վերուստ սահմանված արարքների կատարման համար, ինչպես նաև այս ընկալումով Աստված Ինքն է դառնում մեղքի հեղինակը: Երկնքի Արքայության մասին Քրիստոսի խոսքերը, թե «Երկնքի Արքայությունը բռնադատվում է. և հզորներն են հափշտակում այն» (Մատթ. 11.12), նույպես վկայում են ազատ կամքի մասին: Այսինքն՝ մարդն է իր ազատ կամքով ընտրած ճանապարհով, ազատ կամքով կատարած գործերով, աստվածային շնորհին գործակից լինելով ձեռք բերում Երկնքի Արքայությունը:

Աստվածաշնչում խոսվում է կյանքի գրքի մասին, որտեղ գրված են փրկության արժանացածների անունները: Տպավորություն է ստեղծվում, որ արդեն նախապես որոշված է ամեն ինչ: Սակայն Քրիստոսի վերոնշ-

յալ խոսքերով սա բացատրվում է ազատ կամքի ընտրության և աստվածային ամենագիտության իրողությամբ: Ծննդոց գրքում Մովսեսը խնդրում է Աստծուն ներել ոսկե հորթին երկրպագած հրեաներին՝ ասելով. «Իսկ եթե չես ներելու, ուրեմն իմ անունը ջնջիր Քո մատյանից, ուր գրել ես ինձ» (Ելք 32.32): Տիրոջ դեմ ըմբոստացածների մասին սաղմոսերգուն ասում է. «Թող նրանք ջնջվեն կյանքի Քո մատյանից, և Քո արդարների շարքում չարձանագրվեն» (Սաղմ. 68.29): Ղուկասի Ավետարանում Քրիստոս ասում է. «Մի՛ ուրախացեք այն բանի համար, որ դևերը ձեզ հնազանդվում են, այլ ուրախացեք, որ ձեր անունները գրված են երկնքում» (10.20): Եկեղեցական հեղինակներից մեկի խոսքով՝ բոլոր մարդկանց անունները գրված են կյանքի գրքում, քանի որ Աստված ցանկանում է բոլորի փրկությունը: Սակայն մարդու՝ մեղքերի և դրանց մեջ մինչև երկրային կյանքի վերջը հարատևելու պատճառով հետագայում նրա անունը ջնջվում է հիշյալ գրքից, որի մեջ անվան գրառումը փոխաբերականորեն նշանակում է փրկության արժանացածների շարքում լինել:

Երբեմն ոմանք հակադրություն են փորձում տեսնել ազատ կամքի և աստվածային ամենագիտության միջև: Սակայն Աստծո ամենագիտությունը չի ոչնչացնում ազատ կամքը և չի նշանակում, որ Աստված է որոշված կյանքի ծրագիր հաստատել մարդու համար: Պողոս առաքյալը Հակոբի և Եսավի օրինակով խոսում է Աստծո ամենագիտության մասին. «Որովհետև քանի դեռ տղաները չէին ծնվել, և քանի դեռ բարի կամ չար բան չէր գործվել (որպեսզի Աստծո ծրագիրը ըստ ընտրության հաստատվի, ոչ թե գործերից, այլ՝ նրանից, ով կոչեց),- նրան ասվեց, թե ավագը կրտսերին պիտի ծառայի. ինչպես գրված էլ է, թե՝ «Հակոբին սիրեցի և Եսավին ատեցի» (Հռ. 9.11-13, Ծնն. 25.23, Մաղաք. 1.2): Ոսկեբերանն ասում է, որ չնայած Հակոբն ու Եսավը դեռ գոյություն չունեին, սակայն Աստված արդեն գիտեր, թե նրանք ինչպիսին պիտի լինեն: Իր կանխագիտությամբ Աստված ոմանց ընտրում է և մոտեցնում իրեն (Ա Պետր. 1.2): Բայց սա չի նշանակում, որ Աստծո ամենագիտությունը կամ կանխագիտությունն է պայմանավորում մարդու կամքը: Այլ Աստված, քանի որ ամենագետ է, նախապես գիտի նաև, թե մարդն իր ազատ կամքով, ազատ ընտրության հնարավորությամբ ինչ արարքներ է գործելու:

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ

Նախախնամության մասին հստակ չիմանալու դեպքում կարելի է այն շփոթել ճակատագրի հետ: Իր նախախնամությամբ Աստված ուղղորդում է մարդու կյանքը՝ այն ավելի լավ հանգրվանի բերելով: Սակայն սա չի նշանակում, որ Աստված Իր խնամքով մարդուն պարտադրում է աստվածային կամքը, այլ մարդկային կամքով կատարված սխալ ընտրությունը իրադարձությունների զարգացման ընթացքում աստվածային կամքով ուղղվում է հօգուտ մարդու: Նախախնամությունը աստվածային կամքի այն ներգործությունն է, որով արարածները երկնային կանխորոշմամբ խնամվում են և պահպանում իրենց գոյությունը: Ներսես Լամբրոնացին իր «Պատարագի մեկնության» մեջ ասում է, որ նախախնամության այս հատկությամբ է բնորոշվում *Աստված* բառը, որը արարչության և նախախնամության անուն է, այլ ոչ թե բնության:

Աստվածային նախախնամությամբ էր, որ մանուկ Մովսեսը փրկվեց փարավոնի աղջկա ձեռքով, չնայած եգիպտացիները գարշում էին հրեաներից: Փարավոնի դուստրը տեսավ երեխայի շնորհով լցված դեմքը և բնական գեղեցկությունը, խղճաց նրան և միանգամից որդեգրեց՝ դարձնելով իր բարօրության ժառանգորդը (Ելք 2.2-10): Այսպես նաև Հովսեփը իր եղբայրների դավաճանությամբ հեռացվեց հայրական տնից, վաճառվեց ստրկության, հետո բանտարկվեց, բայց վերջում մեծ փառքի արժանացավ և փրկություն բերեց սովի մատնված իր ողջ ընտանիքն ու շատ ժողովուրդների (Ծնն. 37.18-36, 39.20-23, 41.37-44, 45.1-11): Նույն կերպ նաև Դանիելը և իր ընկերները փորձությունների ու տանջանքների մատնվեցին թշնամիներից, բայց դրանք հաղթահարելով՝ հենց չարչարողների կողմից մեծ հարգանքի ու պատիվների արժանացան (Դան. 3.19-23, 91-97, 6.17-28): Նաև Պողոս առաքյալը տանջվում էր հիվանդության պատճառով և աղոթում էր, որ Աստված իրեն ազատի այդ դժվարություններից, բայց Տերը նրան պատասխանեց, որ նրա իսկ օգտի համար է այդ կացության մեջ գտնվելը (Բ Կորնթ. 12.7-9): Նաև վտանգի հնարավորությամբ ճանապարհորդությունների պարագային մենք հույս ենք դնում Աստծո նախախնամության վրա, հավատալով, որ Աստված Իր բարի խնամքով հաջող ավարտի կհասցնի մեր ընթացքը, ինչպես և ասվում է Աստվածաշնչում.«Թեև նավը ստեղծվել է շահի ցանկությունից, և ճարտարապետն էլ իմաստությամբ է կառուցել, սակայն Քո նախախնամությունն է, Հա՛յր, որ վարում է այն, որովհետեւ Դու ես, որ ծովի մեջ ճանապարհ և ալիքների մեջ ապահով շավիղ ես տվել» (Իմաստ. 14.2-3): Այսպիսով, Աստված վեր չէ մարդկային կյանքից ու պատմությունից, այլ միշտ ներկա է աշխարհում Իր նախախնամությամբ, մարդկային ազատ կամքի սխալները բարիքների բերելու, մարդկանց բարօրությունն ապահովելու, իսկ մարդու՝ երկրավոր կյանքը այս կամ այն պատճառով

ավարտվելու դեպքում նրան լուսե օթևան տալու հավիտենության մեջ: Ահա Աստծո այս մշտական խնամքի մասին է Քրիստոսի խոսքը. «Իմ Հայրը մինչև այժմ գործում է» (Հովհ. 5.17): Աստծո նախախնամությունը ճանաչում է փրկվածներին, տալիս է այն կերպն ու միջոցը, որով ընտրյալները փրկվում են: Իսկ մարդիկ անձնիշխան կամքով և գործերով հասնում են այդ փրկությանն ու շնորհներին:

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Աստվածային նախախնամությունը լինում է ընդհանուր և առանձնակի: Ընդհանուր է Արարչի կողմից ստեղծված և բոլորին բաշխվող արևի լույսն ու ջերմությունը, բնության բարիքները, որ հասանելի են ամենքին: Առանձնակի նախախնամություն է Աստծո հատուկ խնամքը որոշակի անձի համար և այն լինում է ոչ միայն բարերար ազդեցություններով, այլև զրկանքներ պատճառելով: Օրինակ՝ եթե մարդու ունեցած իշխանությունն է նրան մեղքի տանում, Աստված զրկում է այդ իշխանությունից, եթե՝ փարթամությունն ու ճոխությունը, ապա Աստված աղքատացնում է: Եթե առողջությունն է մեղքի պատճառ, հիվանդություն է տալիս, ինչպես նաև փիլիսոփա Կանտն է ասում. «Մարդն ուզում է երջանկություն, բայց որքան հաճախ է մարմնի թուլությունը նրան ետ պահել շվայտությունից, որի մեջ նրան կարող էր գցել հիանալի առողջությունը»: Եթե ուտելն ու խմելն են մեղքի տանում, Աստված սով և սուղ պայմաններ է բերում: Եթե մտքով ենք մեղանչում, Աստված հոգս է տալիս մտքին: Եթե մեղք ենք գործում մարմնով, աչքով, լեզվով կամ ձեռքով, մարմնի այդ մասերին հարված է տալիս, որպեսզի դրանով ուղղվենք մոլորությունից: Դրա համար էլ այս խրատներն են միշտ աշխարհի վրա՝ սով, սուր, մահ կամ հիվանդություն, որպեսզի նաև ոմանք հեռվից լսեն և խրատվեն, ոմանք փոքր նեղություն կրելով մեծ դժբախտություններից ազատվեն, ոմանք տեսնեն և զղջան իրենց չար գործերի համար: Այսպես է վարվում նաև հմուտ բժիշկը՝ տեսնելով մարդու ցավը: Եթե մարդու մարմինը տաք է կամ սառը չափից ավելի, այդ վիճակին հակառակ ազդեցություն բերող դեղն է տալիս և դրանով առողջությունը վերականգնում: Նույնպես և Աստված. ինչով մեղանչում ենք դրա հակառակ իրողությամբ տանջում է և առողջ վիճակի բերում:

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՀ

Մարդու մահը լինում է տարբեր պատճառներով, որոնցից մեկն է Աստծո նախախնամությունը: Մահը լինում է բնությամբ, երբ մարդը ծերանում է, տկարանում և մեռնում: Մահը լինում է նաև պատահմամբ՝ որոգայթից, գազաններից, ավազակներից, ագահությունից, չարչարանքներից և այլ պատահարներից: Մահը լինում է նաև անձնիշխանությամբ, երբ մեկը սպանում է իրեն կամ այլ մարդու: Սակայն մահը նաև լինում է Աստծո նախախնամությամբ, որ պատահում է մարդուն նրա օգտի համար: Օրինակ՝ երեխան մեռնում է, որպեսզի չարիքի մեջ չընկնի: Այսինքն՝ Աստված Իր ամենագիտությամբ իմանում է, որ այդ երեխայի կյանքի հետագա ընթացքը նրան չարիքներ է բերելու, և թույլ է տալիս, որ երեխան մահանա և փոխադրվի հավիտենություն: Ծերը մեռնում է, որ ազատվի մարմնի չարչարանքներից: Արդարը մեռնում է, որ իր արդար գործերի մեջ հանգչի: Մեղավորը մեռնում է, որպեսզի չավելանան նրա մեղքերը: Իսկ անզեղջ հանցավորները մեռնում են և հավիտենական տանջանքներ կրում, ինչպես սոդոմացիները:

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ, ՍԿԻԶԲ ԵՎ ՎԵՐՋ

Մարդն ունի ազատ կամք և տերն է իր գործերի, իշխանություն ունի դրանք անելու կամ չանելու: Սակայն երբեմն գործերի սկիզբը լինում է մեզանով և դրանց կատարումը, վերջը՝ Աստծո նախախնամությամբ: Երբեմն էլ գործերի սկիզբն է լինում Աստծուց և կատարումը՝ մեզանով: Մեզանով սկսվող և Աստծո խնամքով վերջացող գործերը նրանք են, որոնք սկսվում են մեր կողմից իբրև բարի գործեր, և Աստված հաստատուն է պահում դրանց ընթացքն ու պարգևում բարի ավարտը: Իսկ եթե չար սկիզբ է ունենում մեր գործը, Աստված այն փոխում է ի բարին՝ ըստ Իր բարի խնամքի: Երբեմն երկուսն էլ՝ գործերի սկիզբը և վերջը Աստծուց են լինում: Դրանք կատարվում են աստվածային ներգործությամբ և սքանչելիքներն ու հրաշքներն են:

ՀՐԱՇՔՆԵՐ

ՀՐԱՇՔԻ ՍԿԻԶԲԸ

Մենք պետք է պատրաստակամ լինենք բարի գործերի, քանի որ բարեգործության և որոշ դեպքերում հրաշագործության համար հաճախ անհրաժեշտ է միմիայն մարդկանց օգնելու մի պարզ և անկեղծ ցանկություն:

ՀԱՎԱՏ ՀՐԱՇՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Սրբերի վկայաբանությունները, տարբեր հրաշքների մասին պատմությունները կարծես թե այս աշխարհից չլինեն, որովհետև առաջին հայացքից չեն առնչվում մեր սովորական առօրյայի, կենցաղի հետ և ինչ-որ տեղ օտար են թվում մեզ: Աստվածաշունչը, սակայն, շեշտում է, որ աշխարհն իր իմաստությամբ չճանաչեց Աստծուն Նրա իմաստությամբ, և այս աշխարհի իմաստությունը հիմարություն է Աստծո առաջ (Ա Կորնթ. 1.21, 3.19): Նախկինում մարդկանց իմաստություն էր տրված, որպեսզի ամեն ինչ՝ և՛ բնության երևույթները, և՛ տիեզերքը, և՛ մարդկային ներաշխարհի յուրահատկությունները քննելով հասնեին ճշմարիտ աստվածճանաչողության: Սակայն մարդիկ, իրենց տրված այդ իմաստությունն օգտագործելով, չկարողացան Ճշմարտությանը հասնել և հիմարության մեջ ընկան: Ո՞վ կար արդյոք ավելի իմաստուն և միևնույն ժամանակ ավելի հիմար, քան հույները: Հույները մեծ իմաստության էին հասել գիտության, փիլիսոփայության և այլ բնագավառների մեջ, սակայն իրենց այս իմաստությամբ հանդերձ ընկել էին ամենամեծ հիմարության մեջ աստվածճանաչողության հարցում և պաշտում էին կուռքեր ու բնության տարբեր երևույթներ: Այդ իսկ պատճառով հիմա աստվածճանաչողության հարցում բանականությունը մղված է ետին պլան: Այժմ Աստծուն ճանաչելու համար առավել կարևոր է սիրտը, ներքին վստահությունն ու հավատը: Սրա համար էլ աստվածային իմաստությունը, հրաշքները, հայտնությունները կարծես չեն համապատասխանում մեր մարդկային գիտության, մտածողության և ըմբռնողության չափանիշներին: Սակայն հավատքով, սրտի վստահությամբ մարդը կարողանում է ճանաչել երկնայինը: Եվ այս վստահությունը մարդուն երբեք հուսախաբ չի անում: Աստված ապացուցում է մարդկանց, որ իրենց այս հավատքն ու վստահությունը դատարկ կամ անիրական հույսերի վրա չեն հիմնված, անկախ այն բանից համապատասխանու՞մ են մարդկային իմաստության կամ տրամաբանության չափանիշներին, թե՞ ոչ: Հետևաբար, մարդկային իմաստության չափանիշներին անհամապատասխան գտնվելը երբեք չի կարող մեզ համար արգելք հանդիսանալ, որպեսզի մենք կորցնենք մեր սրտի վստահությու-

նը, մեր հավատքը առ Աստված: Եվ ինչպե՞ս կարող է աստվածայինը տեղավորվել մարդկայինի չափանիշների մեջ. չէ՞ որ այն անհամեմատորեն ավելի մեծ է և ավելի ընդգրկուն: Եվ ահա երբ որ աստվածային իմաստությունը ձեզ երբևէ անհեթեթություն թվա, այդ պահին մտածեցեք, որ դրանում երևում է ոչ թե անտրամաբանությունը, այլ երկրայինի շատ նեղ չափանիշներից աստվածայինի անհամեմատորեն շատ ավելի վեր ու շատ ավելի բարձր գտնվելը:

ՀՐԱՇՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսօր շատերին հուզող մի մտահոգություն կա. «Այն ժամանակ հրաշքներ եղան և բազում մարդիկ տեսան ու հաստատվեցին իրենց հավատքի մեջ: Այսօր մենք տեսնում ենք, որ բազում մարդիկ ընկղմված են բազմաքանակ մեղքերի մեջ: Ուրեմն թող որ հիմա էլ այդպիսի հրաշքներ լինեն, որպեսզի մենք էլ հավատանք»: Երբ փարիսեցիները Քրիստոսից հրաշքներ ուզեցին՝ Նրան հավատալու համար, Քրիստոս ասաց. «Չար և շնացող ազգը նշան է փնտրում» (Մատթ. 12.39): Երբեք չպետք է մոռանալ, որ ոչ թե հավատքն է հրաշքից, այլ հրաշքն է հավատքից: Ոչ թե հրաշք է լինում, և մարդիկ սկսում են հավատալ, այլ հրաշքը լինում է հենց այն պատճառով, որ մարդիկ հավատում են: Միայն հրաշքի վրա հիմնված հավատքը սին և դատարկ է և առաջին իսկ առիթի դեպքում ոչնչանալու է ու կորչելու: Դա շատ լավ երևում է հրեաների պատմության մեջ Աստվածաշնչի Ելից գրքում: Հրեաները հրաշքով դուրս եկան Եգիպտոսից, հրաշքով անցան Կարմիր ծովի միջով, հրաշքով կերակրվեցին անապատում, սակայն հենց առաջին իսկ առիթով ոսկե հորթ ձուլեցին և սկսեցին պաշտել նրան: Հետևաբար, հրաշքի մեր ցանկությունը ոչ թե հավատքի ձգտում է, այլ առաջին հերթին մեր թերահավատությունը և մարմնական զգացմունքներին ու կրքերին կապված լինելն է ցույց տալիս: Երբ մարդու սիրտը լցված է չարությամբ և մարմնական կրքերով, ոչ մի հրաշք չի կարող նրան հավատացյալ դարձնել: Ճիշտ այդպես, երբ դժոխքում տանջվող մեծահարուստը աղաչանքով խնդրեց Աբրահամին, որ դրախտից Ղազարոսին ուղարկի իր հոր տունը, որտեղ հինգ եղբայրներ ուներ, որպեսզի նրանք փոխեին իրենց չար կյանքը և մահից հետո դժոխք չընկնեին, Աբրահամը պատասխանեց. «Եթե Մովսեսին և մարգարեներին չեն լսում, մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն» (Ղուկ. 16.31):

Սակայն ո՞վ է ասում, թե այսօր հրաշքներ չեն լինում: Բայց մեր օգտի համար բազում հրաշքներ ծածուկ են կատարվում: Բազում մարդիկ կարող են հիշել իրենց կյանքում կատարված հրաշքներ, երբ հրաշքով

փրկվել են մահից, ոմանք հրաշքով փրկվել են կործանումից, ոմանք էլ հրաշքով առողջացել են և այլն:

ՀՐԱՇՔԻ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻՑ

Քրիստոնեության տոների պատմությունները լի են հրաշքների հիշատակությամբ, որին ոմանք թերահավատությամբ են նայում՝ մտածելով, թե շատ բաներ հորինված են քրիստոնեության մեջ: Բայց եթե կա Աստված, ուրեմն մտացածին չեն քրիստոնեության մեջ հիշվող հրաշքները, իսկ Աստծո գոյության ամենահզոր ապացույցներից մեկը մարդու խիղճն է. որտեղի՞ց է գալիս այն սարսափը, որ պղտորում է մարդու մեղապարտ երջանկության օրերը: Որքան հիանալի է ասված՝ վագրը պատառոտում է իր որսը և հանգիստ քնում, մարդը դառնում է մարդասպան և մնում անքուն:

ՀՐԱՇՔԻ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչու՞ մեր ժամանակներում արտասովոր հրաշքներ հաճախ չեն լինում: Նախկինում մարդիկ ընկած էին կռապաշտության մեջ, և միայն ցնցող երևույթները նրանց կարող էին պոկել նյութականից և բարձրացնել դեպի հոգևորը: Մինչդեռ հիմա մարդիկ նման ցածր մակարդակի վրա չեն, և այսօրվա մարդկանց տրված է ամենաազդեցիկ միջոցը, որն է Աստծո խոսքը: Հրաշքի վրա հիմնված հավատքը հաստատուն չէ, և հրաշքով հավատացած մարդիկ առաջին իսկ առիթի դեպքում կարող են երես դարձնել Աստծուց: Սա է ցույց տալիս հրեաների պատմությունը, որոնց մեջ բազում հրաշքներ եղան, սակայն նրանք հավատարիմ չմնացին Աստծուն: Եկեղեցական հեղինակներից մեկը նշում է, որ այլ կերպ է մարդու վրա ազդում հրաշքը, և այլ կերպ՝ Աստծո խոսքը: Աստծո խոսքը ազդում է միանգամից մարդու մտքի և սրտի վրա: Հրաշքը ևս ազդում է մտքի և սրտի վրա, սակայն ազդում է զգայարանների միջոցով, և այսպիսի միջնորդավորված ազդեցությունը ցանկալի արդյունք չի տալիս: Այդպիսին են նաև աստվածաշնչյան թեմաներով նկարահանված նույնիսկ ամենաազդեցիկ ֆիլմերը, որոնք դիտելիս ազդվում են առաջին հերթին մարդու զգայարանները, բայց որոշ ժամանակ անց մարդը նորից սկսում է ապրել իր սովորական կյանքով՝ առանց հավատքի մեջ կատարելագործված լինելու: Այսօր մեզ տրված ամենամեծ հրաշքներից մեկը Աստծո խոսքն է, որը գրված է Աստվածաշնչում և որը կարող է փոխել մարդուն, տանել դեպի կատարելություն: Զարմանալի է, որ Սուրբ Գիրքը, այդքան դարեր արտագրվելով և փոխանցվելով սերնդեսերունդ, պահ-

պանել է իր անաղարտությունը և այժմ էլ այնպիսին է, ինչպիսին որ էր հազարավոր տարիներ առաջ: Այդ են ապացուցում հատկապես նախկին Հրեական թագավորության տարածքում՝ Քումրանի քարանձավներում, 1947 թ. հայտնաբերված Սուրբ Գրքի հնագույն ձեռագրերը: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, թե հնարավոր չէ, որ չփրկվի նա, ով անընդհատ վարժվում է Սուրբ Գրքի ընթերցանության մեջ: Ըստ ժողովրդական մի առածի՝ կարդալ իմացող և չկարդացող մարդն ավելի լավը չէ, քան կարդալ չկարողացող մարդը: Հետևաբար, սիրելիներ, եթե երկար ժամանակ է, որ ձեր ձեռքը չեք վերցրել Աստվածաշունչը և կամ ընդհանրապես չեք ընթերցել այն, մի հապաղեք, ընթերցեք Սուրբ Գիրքը և կզգաք, թե Աստծո խոսքն ինչպես է փոխում ձեզ և ձեր կյանքը, կտեսնեք, որ թեև արտաքին արտառոց նշաններով հրաշքներ չեն լինում ձեր շուրջը, բայց կատարվում է ամենահիանալի բանը՝ երեխայի պես նետվում եք Աստծո գիրկը՝ գտնելով հոգևոր խաղաղություն և բացահայտելով երջակության գաղտնիքը:

ՀՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԵՆ

Հովնան մարգարեի պատմությունը, կենդանի կետի ներսում մարգարեի երեք օր գտնվելը շատերի մոտ կարող է անհավատալի իրողության տպավորություն թողնել, որովհետև կետերի մասին հայտնի է, որ նրանք, չնայած որ լինում են 1,5 – 3,3 մ երկարության, ունեն միայն կերակրափողի փոքր բացվածք և սնվում են փոքր ձկներով ու փափկամորթներով: Սակայն մարգարեության շարունակության մեջ ձուկը կոչվում է ոչ թե կետ, այլ վիշապ ձուկ (Հովն. 2.11): Սրանով հասկանալի է դառնում, որ անվանումը պարզապես ցույց է տալիս ձկան չափսերի զարմանալի մեծությունը: Այս դեպքը կարելի է նաև հրաշք համարել:

Երկու տեսակի են լինում հավատացյալները: Մարդիկ կան, ովքեր քննում են ամեն ինչ և նոր են հավատում, ինչպես որ Թովմաս առաքյալը, այսինքն՝ հավատում են փոխաբերական իմաստով ձեռքները Քրիստոսի կողը մխրճելուց հետո, և կան մարդիկ, ովքեր իրենց կյանքում, տիեզերքում, բնության մեջ արդեն զգացած լինելով աստվածային ներկայությունն ու գործունեությունը, անվերապահորեն հավատում են Աստծո ամեն մի խոսքին, Աստվածաշնչի յուրաքանչյուր գրքին: Այս նույն ձևով Կաթոլիկ Եկեղեցու մի հոգևորական, խոսելով Հովնան մարգարեի մասին, ասել է. «Եթե նույնիսկ Աստվածաշնչում գրված լիներ, որ ոչ թե կետն է կուլ տվել Հովնանին, այլ Հովնանը կետին, ես դարձյալ կհավատայի»: Շատերն ասում են, որ հրաշքները հակառակ են բնության օրենքներին: Բայց հրաշքը պատճառի և հետևանքի օրենքի խախտումը չէ. այն նոր

հետևանք է, որը պետք է որ ծագած լինի նոր պատճառից: Եվ այդ պատճառը հանդիսանում է Աստված: Հովնանի հետ կատարվածն իրոք պատմական դեպք է, որովետև այն հիշատակում է նաև Քրիստոս՝ դա համարելով իբրև նախանշան Իր երեքօրյա թաղման (Մատթ. 12.39-41, 16.4, Ղուկ. 11.29-30):

ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԸ

Ըստ ավանդության՝ Թադեոս առաքյալն իր հետ Հայաստան է բերել այն գեղարդը, որով խոցեցին խաչված Քրիստոսին, իսկ Բարթուղիմեոս առաքյալը՝ Տիրամոր պատկերը: Մինչև 1900-ական թվականների սկզբները տարածված հիվանդությունների և համաճարակների ժամանակ հրաշագործ Գեղարդը պարբերաբար դուրս է հանվել Մայր Աթոռից, տարվել հիվանդության տարածված վայրերը, որով և հրաշքով դադարել են հիվանդությունները: Այս նպատակով Սուրբ Գեղարդը վրաց ժողովրդի խնդրանքով տարվել է նաև Վրաստան: Սուրբ Գեղարդը նախապես պահվում էր Գեղարդավանքում, սակայն հետո այն տեղափոխել են Մայր Աթոռ, և այժմ Քրիստոսի կողը խոցված Գեղարդը ցուցադրվում է Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանում: Նաև այդ գեղարդով է կատարվում մյուռոնօրհնության սրբազան արարողությունը:

ՍՐԲԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ

Եղիսե մարգարեի հետ կապված պատմությունը հիմնավորում է սրբերի մասունքներին մեծ տեղ հատկացնելը քրիստոնեական Եկեղեցում: Սրբերն իրենց սուրբ և առաքինի կյանքով հասնում էին հոգու մաքրության, աստվածատեսության, սակայն միևնույն ժամանակ սրբանում էին նաև նրանց մարմինները, որոնք հրաշագործելու շնորհ էին ունենում նույնիսկ մահից հետո: Եղեսե մարգարեի մահից մեկ տարի հետո մովաբացիները հարձակվում են հրեաների վրա: Հենց այդ հարձակման ժամանակ հրեաները մի մարդու էին թաղում Եղիսե մարգարեի գերեզմանի մոտ: Երբ հուղակավորություն կատարողները տեսնում են կողոպտիչ զորքին, մեռած մարդուն շտապ գցում են գերեզմանը: Եղիսեի ոսկորներին դիպչելուն պես հանգուցյալը կենդանանում է և ոտքի կանգնում (Դ Թագ. 13.20-21): Ճիշտ այսպես բազում սրբեր մարդկային հիվանդությունները բուժում էին ոչ միայն կենդանի ժամանակ, այլև սրբերի մահից հետո նրանց սուրբ մասունքներին դիպչելով՝ հիվանդներն առողջանում էին, կամ էլ այլ հրաշքներ էին տեղի ունենում:

Սրբերի տոներին եկեղեցիներում պահվող սուրբ մասունքները դուրս են բերվում, որպեսզի հավատացյալները սուրբ համբույրով դրանց դիպչելով՝ ամեն մեկն ըստ իր հավատքի բժշկության կամ էլ հոգևոր խաղաղության ու ներքին անդորրության արժանանա:

Երբ եկեղեցում տոների առիթով դուրս են բերում սուրբ մասունքներ, ինքներս մեզ չզրկենք սրբություններից և օրհնություն բաշխող սրբերի նշխարներին մոտ գտնվելուց: Այսպիսի եզակի հնարավորություններն օգտագործելով՝ մի պահ կտրվենք նյութականից և մարմնով դիպչելով շոշափելիին, զգանք նյութականի միջոցով մեր հոգու մեջ հոսող հոգևոր ուժն ու կարողությունը, որպեսզի աշխարհի տարբեր նեղությունները հաղթահարելով՝ ի վերջո մենք էլ կարողանանք ասել այս հանրահայտ խոսքերը. «Ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. 16.33):

ԵԹԵ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՌԱՆՑ ՀՐԱՇՔԻ

Փիլիսոփաներից մեկն ասում է, որ Աստծո գոյությունն ապացուցելու համար հին աշխարհը հրաշքներ էր հորինում՝ զոհելով իր խիղճը, իսկ նոր աշխարհը՝ տարբեր տեսակի ապացույցներ՝ զոհելով բանականությունը: Սակայն ի հեճուկս այս մտքի՝ կան նաև հրաշքների մասին պատմական վկայություններ, ինչպես Կյուրեղ Երուսաղեմացու նամակը՝ ուղղված կայսերը երուսաղեմյան երկնքում Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռը ձգվող լուսեղեն խաչի նշանի երևման մասին, Քրիստոսի խաչելության ժամանակ արեգակի խավարման վերաբերյալ այդ ժամանակի պատմիչների վկայությունները և այլն: Այսօր ևս հրաշքները շարունակվում են, ճիշտ է՝ հաճախ ոչ թե բնական երևույթների արտասովոր դրսևորումով, այլ մարդու ներաշխարհում: Եվ հանրահայտ «Աստվածային կատակերգության» հեղինակ Դանթեն հիանալիորեն է ասել, որ եթե նույնիսկ աշխարհը քրիստոնեացավ առանց հրաշքի, ապա դա այնպիսի հրաշք է, որ մյուսներին գերազանցում է բյուրակի:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿՐՈՆ

Ասում են, որ ոչ մի կրոն այնքան չի տուժի իրենից հրաշքները հեռացնելու դեպքում, որքան քրիստոնեությունը: Սակայն եթե նույնիսկ քրիստոնեությունից հանենք և դուրս նետենք ֆիզիկական հրաշքները, այսինքն՝ բժշկումները, հացի բազմացումը, փոթորկի խաղաղեցումը և այլն, ապա քրիստոնեության մեջ մնում են բարոյական հրաշքները՝ այն վեհ մտքերն ու գաղափարները, որոնք չկան որևէ այլ կրոնի մեջ: Այստեղ

 և մեծ գրողներից մեկի խելացի տրամաբա-

նությունը. «Քրիստոնեությունը կատարյալ է, մարդիկ են անկատար: Իսկ կատարյալ որևէ բան չի կարող անկատարից առաջանալ: Հետևաբար, քրիստոնեությունը կատարյալից առաջացած, այսինքն՝ աստվածային կրոն է»:

ՀՐԱՇՔՆԵՐ, ԱՂԵՏՆԵՐ, ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դարեր ի վեր մարդկությունը հետաքրքրված է նաև երկու կարևոր հարցերով՝ հրաշքներ և աղետների ու դժբախտությունների վերացում:

Քրիստոսի երկրային կյանքի ընթացքում հրեաները հաճախ նրանից հրաշքներ էին պահանջում: Եվ հրաշքների առնչությամբ Քրիստոս ասաց, որ ոչ մի նշան չի տրվի բացի Հովնան մարգարեի նշանից՝ դրանով ակնարկելով Իր մահը և երեք օր հետո Հարությունը, քանզի ինչպես Հովնանը երեք օր մնաց կետի փորի մեջ, այդպես էլ մարդու Որդին երեք օր ու գիշեր պիտի մնար երկրի ընդերքում (Մատթ. 12.39-40): Սուրբ Եփրեմ Ասորին Ավետարանների իր մեկնության մեջ նշում է, որ Հովնանի լինելը հսկա ձկան փորում և այնուհետև լույս աշխարհ դուրս գալը խորհրդանշում է նաև հեթանոսների դուրս գալը խավարից դեպի ճշմարիտ աստվածգիտության լույսը: Որոմների առակով Քրիստոս ցույց տվեց, որ բարին և չարը միասին են լինելու մինչև աշխարհի վախճանը (Մատթ. 13.30, 39-42):

Մարդկությանը տրված Աստծո մեծագույն պարգևներից մեկը ազատությունն է կամ հնարավորությունը ազատ ընտրության և ազատ կամքի: Բայց ազատությունը ենթադրում է նաև հնարավորություն չար և մեղավոր արարքների: Մարդն ինքը կարող է ընտրել, թե որ ճանապարհով գնա. ճանապարհներից մեկը տանում է դեպի բարին, իսկ մյուսը՝ դեպի չարը: Սակայն ինչու՞ Աստված չոչնչացրեց չարը՝ թողնելով միայն բարին: Պատասխանը հետևյալն է՝ բարին իրական է միայն այն ժամանակ, երբ ընտրված է ազատ կամքով: Պարտադրված բարիքը չի կարող իրական բարիք լինել, այլ կվերածվի չարիքի: Մենք դրա օրինակն ունենք Կաթոլիկ Եկեղեցու պատմության մեջ: Հավատքի տեսանկյունից ի՞նչ ավելի հիանալի բան կա աշխարհում, քան քրիստոնեական ճշմարիտ կրոնը և դրա մեջ ներառնված բարոյական բարձր սկզբունքներն ու ուսուցումները: Սակայն նույնիսկ երբ այս կրոնն է պարտադրվում, պարտադրանքը պատճառ է դառնում աղետների, ինչպես որ միջնադարում բազում մարդիկ մեռան խարույկների մեջ վառվելով՝ ենթարկվելով ինկվիզիցիայի: Մեր օրերում ևս նման օրինակներ ունենք: Երբ առաջադեմ հասարակական կյանքի սկզբունքները պարտադրվում են ոչ զարգացած երկրներին, որպես արդյունք լինում են ողբերգություններ, սպանություն-

ներ, արյունահեղություններ և զինված բախումներ: Երբ Քրիստոս խաչի վրա էր, ժողովուրդն ասում էր. «Թող այդ խաչից իջնի, և դրան կհավատանք» (Մատթ. 27.42, Մարկ. 15.32): Այսպես նաև մարդկության պատմության մեջ լինելու էին շատ դժբախտություններ, և մարդիկ ցանկանալու էին չարից ազատվելու արտասովոր հրաշքներ տեսնել: Բայց Քրիստոս այն ժամանակ խաչից չիջավ, որովհետև չուզեց մարդկային հոգուն հրաշքով պարտադրել հավատքը: Հավատքով են սկսվում հրաշքները, և ոչ թե իրական հավատքը ծնվում է հրաշքի պատճառով:

Մարդը երբեմն առանց հավատքի ցանկանում է ճանապարհ գտնել աղետների ու դժբախտություններ վերացման: Ինչու՞ են բազում աղետներ ու ավերածություններ, սպանություններ լինում աշխարհում: Քրիստոսի երկրային կյանքի ընթացքում Պիղատոսը շատ գալիլիացիների սպանեց հենց այն ժամանակ, երբ նրանք զոհ էին մատուցում: Եվ գալիլիացիներն այնքան դաժանությամբ սպանվեցին, որ նրանց արյունը խառնվեց նրանց զոհերի արյանը: Բացի դրանից նաև մի մեծ աշտարակ փուլ եկավ Սիլոամում և սպանեց միանգամից տասնութ մարդկանց: Քրիստոս, այս դեպքերի մասին իմանալով, այսպես ասաց. «Կարծում եք, թե այն գալիլիացիները, որոնք այդպիսի պատահարների ենթարկվեցին, ավելի՞ մեղավոր էին, քան բոլոր գալիլիացիները: Ոչ, ասում եմ ձեզ, սակայն եթե չապաշխարեք, ամենքդ էլ նույնպես պիտի կորչեք: Կամ նրանք՝ այն տասնութ մարդիկ, որոնց վրա Սիլոամում աշտարակը փուլ եկավ և սպանեց նրանց, կարծում եք, թե ավելի մեղապա՞րտ էին, քան Երուսաղեմում բնակվող բոլոր մարդիկ: Ոչ, ասում եմ ձեզ, սակայն եթե չապաշխարեք, ամենքդ էլ պիտի կորչեք» (Ղուկ. 13.1-5): Ավետարանիչը մեզ պատմում է նաև Բեթղեհեմի մանուկների սպանության մասին (Մատթ. 2.16): Եթե չկա Աստված, հավիտենություն և հավիտենական կյանք, ուրեմն նաև կատարյալ արդարություն գոյություն չունի, որովհետև ո՞վ է վարձատրելու չարչարված ու սպանված երեխաներին նրանց արցունքների և տանջանքների համար կամ հատկապես եղեռնահար ժողովուրդներին՝ նրանց կրած վշտերի համար: Բայց Աստծո և հավիտենական կյանքի գոյությունը նշանակում է, որ կա բացարձակ, կատարյալ արդարություն և չարչարյալներն ու տառապյալները փոխհատուցվելու են եթե ոչ այս, ապա արդեն հանդերձյալ կյանքում: Սա է այն պատասխանը, որին հանգել են շատ փիլիսոփաներ ու մտածողներ՝ խորհելով մարդկանց վշտերի և երեխաների արցունքների ու մահվան մասին:

ՀՐԱՇՔՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ՉԵՆ

Մենք նկատում ենք, որ տարբերվում ենք առաքյալներից ու սրբերից՝ համեմատելով նրանց մեծությունն ու վեհությունը և մեր մեղքերի շատությունը: Եվ մտածում ենք, որ նրանք հատուկ շնորհներ ունեին և հատկապես՝ հրաշքներ գործելու շնորհը: Այս առնչությամբ Սուրբ Հովհան Ոսկեբերանը շատ իմաստուն կերպով մեզ բացատրություններ ու խրատներ է տալիս: Մի՛ ասա, որ առաքյալները հրաշքների զորություն ունեին, քանզի նրանք հիմնականում մեծ էին առաքինություններով: Հովհաննես Մկրտիչը բազում մարդկանց դեպի իրեն էր ձգում, սակայն նա ոչ մի հրաշք չէր գործել (Հովհ. 10.41): Նույնպես և Եղիան հրաշալի էր դարձել թագավորի առջև իր համարձակությամբ, Աստծո հանդեպ նախանձախընդրությամբ: Եղիա մարգարեն հրաշքները այս ամենից հետո արեց: Իսկ Հոբը ինչո՞վ զարմացրեց սատանային: Նա ոչ մի հրաշք չգործեց, այլ միայն օրինակելի կյանք և համբերություն ցույց տվեց: Իսկ ի՞նչ նշան արեց դեռ պատանի Դավիթը, երբ Աստված նրան Իր սրտին հաճելի այր կոչեց (Ա Թագ. 13.14, Սաղմ. 88.21, Գործք 13.22): Իսկ Աբրահամը, Իսահակը, Հակոբը արդյոք դևեր հանե՞լ են, մեկին մեռելներից հարություն տվե՞լ են, մաքրե՞լ են բորոտությունից:

Եթե քեզ առաջարկեին Քրիստոսի անունով մահացածին հարություն տալ կամ մեռնել հանուն Քրիստոսի, ի՞նչ կնախընտրեիր, չէ՞ որ վերջինը: Եվ կամ եթե քեզ առաջարկեին կա՛մ խոտը ոսկի դարձնել կա՛մ կամքի այնպիսի ուժ ունենալ, որպեսզի արհամարհես յուրաքանչյուր հարստություն որպես խոտ, չէ՞ որ վերջինը կնախընտրեիր: Հետևաբար, կարևոր են սուրբ հավատքից բխող առաքինի գործերը:

Առաքինություններից կարևոր է սերը, հեզությունը և ողորմությունը, որը գերազանցում է նույնիսկ կուսությանը, ինչպես երևում է տասը կույսերի մասին ավետարանական առակից (Մատթ. 25. 1-13): Այդ իսկ պատճառով ոչ ոք չպետք է հետաձգի առաքինություններում իր սխրանքը մինչև հրաշագործության շնորհի ստացումը:

Հրաշագործության շնորհը մեր անհոգության դեպքում մեզ կարող է վնասել: Սակայն եթե սիրո մեջ վարժվենք, հրաշագործության ոչ մի կարիք չենք ունենա, իսկ եթե սիրո մեջ չվարժվենք, հրաշագործությունից ոչ մի օգուտ չենք ստանա: Քրիստոս մեզ պատվեր չտվեց հրաշագործության, այլ ասաց. «Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. 5.16): Նույնպես Պետրոսին չասաց, եթե Ինձ սիրում ես հրաշք գործիր, այլ պատվիրեց՝ հովվիր Իմ հոտը (Հովհ. 21.17): Եվ եթե Տերը Հակոբոսին, Հովհաննեսին և Պետրոսին նախընտրում էր մյուս աշակերտներից, մի՞թե հրաշքի համար, մի՞թե բոլորը նույն կերպ չէին հրաշքներ գործում, քանզի Տերը բոլորին նույն իշխանությունն էր տվել (Ղուկ.

10.17-20): Այլ նրանց առավելությունը հոգևոր սխրանքն էր, առավել նվիրումն ու առաքինությունը: Հետևաբար, կարևորը հավատավոր կյանքն է ու գործը:

ՀՐԱՇՔ ԱՌԱՆՑ ՀԱՎԱՏՔԻ

Մի մարդ, որ մեր ընկալած իմաստով հավատք չուներ, իր դիվահար որդուն բուժելու համար առաքյալների անկարողությունը տեսնելով՝ դիմեց Քրիստոսին և ասաց. «Օգնիր իմ անհավատությանը» (Մարկ. 9.23): Քրիստոս հանդիմանեց Իր աշակերտներին, որովհետև նրանք բավականաչափ հավատք չցուցաբերեցեին հիվանդին բուժելու համար, և Ինքը բուժեց դիվահար երեխային:

Հաճախ հրաշագործի հավատը բավական է հրաշք գործելու համար, թեկուզ նրա մոտ եկածները հավատ չունենան: Եվ երբեմն հոգևոր իրողություններում խնդրողի հավատը բավական է, որ ցանկացածը ստանա, նույնիսկ եթե նա, ումից խնդրվում է և ով լիազորություն ունի տալու, հավատ չունի: Այսպես Քրիստոս բուժեց հավատք չցուցաբերող մարդու դիվահար որդուն, նաև Եղիսե մարգարեի աճյունը հարություն տվեց իրեն դիպած մեռելին առանց թաղողների հավատքի, որովհետև նրանք մահացածին հանկարծակի փոսը գցեցին թաղման ժամանակ թշնամիների հարձակման պատճառով (Դ Թագ. 13.21): Նաև Կոռնելիոսի տնեցիներն իրենց հավատով Սուրբ Հոգու շնորհները ստացան (Գործք 10.44), և ոչ թե նրանց մոտ եկած Պետրոս առաքյալը տվեց, ով իր հետ եղող հրեա հավատացյալների հետ չէր հավատում, որ հեթանոսները կարող են Հոգու շնորհներին արժանանալ (Գործք 10.45):

ՄԵՆՔ՝ ՀՐԱՇԱԳՈՐԾՆԵՐ

Մենք ինքներս էլ կարող ենք սքանչելագործներ, հրաշքներ կատարողներ լինել, եթե միայն ճիշտ պատկերացում ունենանք հրաշքի մասին: Իսկ ի՞նչ է հրաշքը: Ոմանք հումորով ասում են, թե հրաշքը այն է, երբ համրը ասում է խուլին, թե ինչպես է կույրը տեսել ի ծնե կաղին ծովի վրայով վազելիս: Բայց միայն այդպիսի արտառոց նշանները չեն հրաշքները: Հրաշք է, երբ կույրը տսնում է, բայց ավելի մեծ հրաշք է, երբ կարողանում ես բացել հոգևորի առջև կուրացածի աչքերը: Հրաշք է, երբ կաղը քայլում է, բայց ավելի մեծ հրաշք է, երբ սխալ ճանապարհով կաղացողին բերում ես ուղիղ ճանապարհի, որով նա այլևս ընթանում է առանց կաղալու: Եվ մեծ հրաշք է նաև, երբ ներում ես քո թշնամուն քո մի պարզ արարքով և խոսքով կամ հայացքով կարողանում ես ջերմացնել մեկի հո-

գին և ժպիտ նկարել նրա դեմքին: Ահա այսպես բարի կյանքով, Աստվածաշնչի ընթերցանությամբ Աստծո պատվիրաններն իմանալով և գործադրելով դուք հաճախ կհամոզվեք, որ իսկական հրաշքները միայն հեքիաթներում չէ, որ դառնում են գեղեցիկ իրականություն:

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ԱՂՈԹՔ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Մարդիկ հաճախ են բուժվել և բուժվում աղոթքներով կամ դիպչելով նաև սուրբ մասունքների: Այս մասին Օգոստինոս Երանելին ասում է, որ չնայած լինում են սուրբ առարկաներ, որոնց միջոցով մարդիկ բժշկվում են, բայց միշտ չէ այդպիսի բան պատահում, որպեսզի մարդիկ դեպի կրոնն ընթանան ոչ թե այդպիսի հրաշքի, այլ Աստծո համար: Նաև հոգևորականների աղոթքներով մարդիկ բուժվում են երբեմն նույնիսկ շատ ծանր հիվանդություններից: Բայց այս մասին պետք է իմանալ, որ, ինչպես նշում է Սուրբ Գրիգոր Տաթևացին, հիվանդությունները լինում են մի քանի պատճառներով: Անբարենպաստ եղանակը, օրգանիզմի տարրերի խառնումը հիվանդություն են առաջացնում: Սակայն հիվանդությունը լինում է նաև Աստծո հատուկ խնամքի և հոգու զորության տկարանալու պատճառով: Այլ պատճառներով հիվանդությունները կարող են բուժվել նաև դեղերով, բժիշկների օգնությամբ: Իսկ վերջին երկուսը բուժվում են միմիայն հոգևորականների աղոթքների և անձնական աղոթքների ու դեպի Աստված դառնալու շնորհիվ:

ԱՂՈԹՔ ԵՎ ԲԺՇԿՈՒՄ

Քրիստոսի խաչափայտը գտնվեց 327 թ. Կոստանդիանոս կայսեր մոր՝ Հեղինեի կողմից Գողգոթայում: Պեղումներից հայտնաբերվեցին երեք խաչափայտեր, և որոշելու համար, թե որն է Քրիստոսի խաչափայտը, մի մահացած պատանու դիակը դրեցին դրանց վրա: Երբ դիակը դիպավ Քրիստոսի խաչափայտին, պատանին կենդանացավ: Հայտնի է, որ այսպիսի սուրբ մասունքներին դիպչելով կամ սրբերի աղոթքներով մարդիկ առողջանում էին, և այժմ էլ բազում մարդիկ եկեղեցի գալով՝ խնդրում են հոգևորականների աղոթքը բուժման համար:

Նախ անդրադառնանք երեխաների, ապա մեծահասակների առողջությանը, այնուհետև մարդկային գիտակցության աղոթական վիճակի մասին տեղեկություններին՝ հաստատված գիտական հետազոտություն-

ներով: Խաչափայտի գյուտի պատմությունից տեղեկացաք, որ այդ փայտի զորությունից մեռած պատանին հարություն առավ: Նույնպիսի բուժող և պահպանող զորություն ունեն նաև այսօր հոգևորականի կողմից օրհնված հատկապես մկրտության խաչերը, որոնց վրա դրոշմված է այն պահպանիչ օրհնությունը, որն աստվածապարգև իշխանությամբ տալիս է հոգևորականը: Կրոնական որոշ խմբավորումներ պնդում են, որ մարդիկ պետք է մկրտվեն միայն հասուն տարիքում իրենց կամքով: Բայց ինչպես որ մարմնավոր խնամք ենք տանում երեխաների հանդեպ ծնված օրվանից, ճիշտ այդպես էլ պետք է մտածենք երեխաների հոգևորի մասին: Չմկրտված երեխաները շատ ավելի են ենթակա փորձությունների և հիվանդությունների: Մարդիկ իմանալով, որ աղոթքի միջոցով ևս բուժումներ են լինում, գալիս են եկեղեցի և ցանկանում են մեծամեծ հրաշքներ տեսնել: Բայց նախ նշենք, որ մարդու համար շատ բան կախված է հենց իրենից: Օրինակ՝ եթե ծնողները չեն աղոթում, դրանից առաջին հերթին տուժում են երեխաները: Նույնիսկ խորհուրդ է տրվում, որ հղի կանայք ավելի հաճախ աղոթեն և Սուրբ Հաղորդություն ստանան, քանի որ մոր հոգևոր խաղաղ վիճակը չափազանց կարևոր է և օգտակար երեխայի համար: Քրիստոնյա Եկեղեցու Սուրբ Վարդապետները իրենց գրվածքներում շեշտում են հատկապես աղոթքի կարևորությունը: Հոգևորականների աղոթքներով մարդիկ բուժվում են երբեմն նույնիսկ շատ ծանր հիվանդություններից:

Այս ամենը կարելի բացատրել նաև գիտականորեն: 1999 թ. ԱՄՆ-ում՝ Արիզոնայի համալսարանում կայացած համաշխարհային գիտական համագումարի ժամանակ հրապարակվեցին ռուս գիտնականների ուսումնասիրությունները գլխուղեղի կեղևի գործունեության, մարդու գիտակցության նոր վիճակի հայտնաբերման մասին: Մինչ այս ուսումնասիրությունը գիտությանը հայտնի էին մարդկային գիտակցության միայն երեք վիճակներ: Դրանք են արթուն, դանդաղ և արագ քնի վիճակները: Որոշ կրոններում, ինչպես և հոգեբանության մեջ նաև բուժման համար ավելի մեծ տեղ է հատկացվում արևելյան կրոններին հատուկ մեդիտացիային: Ուսումնասիրելով մեդիտացիայով կամ ինքնահիպնոսով զբաղվող մարդու գլխուղեղը՝ գիտնականները տեսել են, որ այդ ժամանակ գլխուղեղի կեղևը սկսում է գրգռվել, արագ գործել: Սակայն քրիստոնյա մարդու աղոթքի ժամանակ հատուկ սարքերը գլխուղեղի կեղևի ոչ մի ազդակ չեն արձանագրել: Գիտնականները նշում են, որ հայտնաբերել են մինչ այս գիտությանն անհայտ մարդկային գիտակցության չորրորդ վիճակը, որի ընթացքում մարդու գլխուղեղի կեղևը չի աշխատում, արձանագրվում է գլխուղեղի կեղևի հանդարտ վիճակ մարդու արթուն և սթափ գիտակցության ժամանակ: Եվ աղոթքի զորությամբ բուժումը այս տե-

սանկյունով արդեն բացատրվում է նաև հետևյալ կերպ: Գիտակցության չորրորդ վիճակի բացակայությունը բացասական է անդրադառնում մարդու օրգանիզմի վրա, իսկ ներկայությունը, ընդհակառակը, վերականգնում է ներդաշնակությունը: Եկեղեցական արարողության ժամանակ հոգևորականը հաճախ դառնում է դեպի ժողովուրդը և ասում՝ խաղաղություն ամենեցուն: Առանց աղոթական վիճակի անհնարին է հաստատել հոգու խաղաղությունը, որը բարերար է նաև մարդու ֆիզիկական կյանքի համար: Այսպիսով, սուրբ մասուքներին դիպչելով և հատկապես աղոթքներով բուժումը ունի նաև իր գիտական բացատրությունը, ինչը ևս մեզ հորդորում է աղոթքի՝ ձեռք բերելու նաև հոգևոր խաղաղություն և ներդաշնակություն:

ԱՌՈՂՋՆԵՐԻՆ ԲԺԻՇԿՆԵՐ ՊԵՏՔ ՉԵՆ

Քրիստոնեությունը, կարևորելով աղոթքը նաև բուժման համար, միևնույն ժամանակ չանտեսեց բժշկությունը և դրա կարևորությունը մարդկային կյանքում: Դա է վկայում Եկեղեցու կողմից բժիշկ անձանց սրբացումը, որոնցից են Պանդալեոն բժիշկը, Կոզմա և Դամիանոս անարծաթ բժիշկները, որոնց հիշատակը մենք ամեն տարի նշում ենք եկեղեցիներում: Նրանք մարդկանց բուժել են առ Աստված աղոթքներով և ժամանակի բժշկագիտության իրենց իմացությամբ: Ոմանք անվանվել են նաև անարծաթ բժիշկներ, որովհետև իրենց օգտաշատ գործունեության համար մարդկանցից դրամ չեն գանձել: Ղուկաս ավետարանիչը ևս մասնագիտությամբ բժիշկ էր: Եվ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, նույնպես Իրեն համեմատեց բժշկի հետ:

Նոր Կտակարանում շատ անգամներ է օգտագործվում *բժշկել* բառը, սակայն բժիշկ բառը գործածված է ընդամենը մի քանի անգամ: Երեք անգամներ *բժիշկ* բառը հանդիպում է համատես Ավետարաններում՝ այն դրվագում, երբ Քրիստոս Իրեն համեմատում է բժշկի հետ՝ ասելով. «Առողջներին բժիշկ պետք չէ, այլ՝ հիվանդներին» (Մատթ. 9.12, Մարկ. 2.17, Ղուկ. 5.31), այնուհետև արյունահոսություն ունեցող հիվանդ կնոջ մասին հատվածում՝ նշումով, որ նա շատ էր տառապել բժիշկների ձեռքից (Մարկ. 5.25-26), և վերջին անգամ *բժիշկ* բառը երևում է Պողոս առաքյալի՝ կողոսացիներին ուղղված թղթում, որտեղ առաքյալն ասում է, թե նրանց ողջունում է նաև Ղուկասը՝ բժիշկը և սիրելին (4.14): Հետևաբար, կարևորելով աղոթքով բժշկությունը՝ պետք է նշել, որ մարդկային կյանքում միևնույն ժամանակ մեծապես անհրաժեշտ և օգտակար է բժիշկների նվիրյալ գործունեությունը:

ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Երբեմն Ավետարանի հեղինակներն իրենց Ավետարաններում բերում են այնպիսի մանրամասներ, որոնք առավել շատ են տպավորվել իրենց հիշողության մեջ նախկին զբաղմունքի կամ մասնագիտության բերումով: Օրինակ՝ Մատթեոս ավետարանիչը, ով մաքսավոր էր, հիշում է դրամական մանրամասնություններ, որպիսիք չկան մյուս Ավետարաններում: Մատթեոսն է, որ պատմում է տաճարի տուրքի վճարման մասին, հայտնում, թե որտեղից ձեռք բերվեց փողը՝ տուրքը վճարելու համար (Մատթ. 17.23-26): Եվ մինչ մյուս ավետարանիչները նշում են, որ Քրիստոսի մատնության համար Հուդային դրամ խոստացան (Մարկ. 14.10-11, Ղուկ. 22.3-5), միայն Մատթեոսն է, որ հաղորդում է դրամի չափը՝ երեսուն արծաթ (Մատթ. 26.15): Այսպես նաև Ղուկաս ավետարանիչը՝ որպես բժիշկ, հիշում է իր մասնագիտությանը վերաբերող մանրամասներ, ինչպես օրինակ՝ ժամանակի առածը՝ բժիշկ բժշկիր ինքդ քեզ (Ղուկ. 4.23), որ ասեց Քրիստոս, երբ Նա Նազարեթ գնաց: Միայն Ղուկաս ավետարանիչն է հաղորդում, որ Գեթսեմանի պարտեզում աղոթելիս Քրիստոսի քրտինքը հոսում էր արյան կաթիլների պես (Ղուկ. 22.44):

ԱՌՈՂՋԱՑՈՒՄ ՀՈԳԵՎՈՐՈՎ

Եկեղեցական հեղինակները հաճախ են համեմատություններ արել հոգևորականի և բժշկի ու նրա գործունեության միջև: Ինչպես մենք գնում ենք բժշկի մոտ, ասում մեր ցավը և բուժում ստանալով առողջանում, այդպես էլ հոգևորականի մոտ պետք է խոստովանել մեղքերը և հոգևոր բժշկում ստանալ: Նեղությունների ու փորձությունների վերաբերյալ բացատրությունները ևս արվել են բժշկի գործելակերպի հետ համեմատությամբ, ով հաճախ դառը դեղերով է բուժում է հիվանդին:

Բայց մենք՝ որպես հավատացյալներ, բժշկության համար ու՞ր պետք է գնանք, հիվանդանո՞ց, թե՞ եկեղեցի, բժշկի՞ մոտ, թե՞ հոգևորականի: Հոգեվերլուծաբանության հիմնադիրներից մեկը, իր երկարամյա ուսումնասիրության արդյունքներից ելնելով, հաստատում է, որ որևէ հիվանդության ախտանշանները կարող են ծագել նաև հոգևոր ապրումների, ցնցումների պատճառով, օրինակ՝ մարմնի անդամի կաթվածահարություն, աչքերի շլություն և այլն: Հոգեվերլուծաբաններն իրենց փորձը ցույց տալով ասում են, որ երբ հոգեվերլուծության շնորհիվ բացահայտում են հիվանդության և հոգևոր ցնցումի ներքին կապը, հիվանդը լավանում է, վերանում են անգամ վերը հիշված հիվանդագին նշանները: Հոգեվերլուծությունը, որ հաճախ ծաղրանմանությունն է քահանայի մոտ մեղքերի խոստովանության, կարելի է ասել՝ միայն ցավազրկող, ցավն ու հիվանդությունը մի կողմ տանող միջոց է, որովհետև շատ իրողություններ դի-

տում է միայն մարդու անձի ներսում: Մինչդեռ հոգևորականի կողմից քրիստոնեական ճշմարիտ կրոնի լույսի ներքո ամեն ինչ քննվում է նաև մարդու՝ առ մյուս մարդիկ և առ Աստված հարաբերություններում, իրապես բուժվում է նաև հոգին, և Աստծո օրհնությունն է իջնում մարդու վրա: Եվ քանի որ հիվանդությունը կարող է լինել նաև հոգևոր պատճառով, ապա խորհուրդ է տրվում, որ բժշկության կարոտները նաև եկեղեցի գան և կամ համաձայն լինեն հանդիպելու հիվանդանոց այցելող հոգևորականներին, քանզի հատուկ բժշկության համար աղոթքներ և ավետարանական ընթերցումներ կան կարգված, որոնց հաղորդակցվելը բարիք կլինի մարդու համար, և առավել շուտափույթ կգա առողջությունը:

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բժշկությունը գիտություն է, իսկ որևէ գիտության սկզբնաղբյուրը Աստված է: Նա է գիտությունը շնորհել մարդկությանը առանձին հանճարեղ մարդկանց միջոցով, և հիմա այս գիտությունը զարգանում է: Դեռ անտիկ շրջանից սկսած Սոկրատը, Պլատոնը և նրանց հետևորդ փիլիսոփաներն ուսուցանում էին, որ բժշկությունը միայն գիտություն կարելի է համարել: Օրինակ՝ բժշկություն սովորած, ուսանած մարդը բժիշկ է, բայց արդարության մասին իմացողը, կարող է և արդար չլինել, քաջության մասին իմացողը կարող է քաջ չլինել: Սա նշանակում է, որ առաքինությունները շնորհ են Աստծո կողմից, մինչդեռ բժշկությունը գիտություն է, որ կարելի է սովորել: Եվ քանի որ գիտությունը պարգևողը Աստված է, ապա մենք հարկավորության դեպքում կարող ենք օգտվել Աստծո շնորհած գիտության բարիքներից, պտուղներից: Բժշկությունը հաճախ դեղերով է առողջություն հաստատում: Փոխաբերական և հոգևոր իմաստով դեղ է նաև Աստվածաշունչը, դրա ընթերցանությունը, նաև Պատարագամատույցի մեջ՝ քահանայի ծածուկ աղոթքներում, Սուրբ Հաղորդությունը կոչվում է մարմնի և հոգու դեղ, որն ընդունելով կարող ենք ոչ միայն հոգու խաղաղություն, այլ նաև մարմնի առողջություն ունենալ:

ԱՆԴԱՄՆԵՐ ՄԵԿ ՄԱՐՄՆԻ

Բժիշկը դեղ է դնում ցավեցող անդամին՝ այն բուժելու համար: Նույն կերպ Աստված միջոցներ է գործի դնում՝ մարդկանց հատկապես մեղքերից բուժելու համար: Մտքով մեղանչողներին Աստված հաճախ տալիս է մտահոգություն, որպեսզի միտքը շեղվի մեղավոր մտածումներից, տեսողությամբ մեղանչողներին Աստված տալիս է աչքի տկարություն, ձեռքով մեղանչողներին՝ մարմնի այդ անդամի տկարություն և այլն:

Մեր մարմնի անդամները մեզ խրատ են տալիս ճիշտ կյանքի. ոտքերն ու ձեռքերը չեն նախանձում իրենցից վեր գտնվող աչքերին, և աչքերն էլ իրենց լույսից չեն զրկում մարմնի մյուս անդամներին, որ նշանակում է, թե սոցիալապես կամ գիտելիքով անհավասարության դեպքում չպետք է նախանձել առավել ունեցողներին, և ունևորներն էլ իրենց ունեցվածքից պետք է բաժին հանեն կարիքավորներին: Այսպես նաև մեծ բժիշկ Հիպոկրատի խոսքն է վկայակոչում Սուրբ Գրիգոր Տաթևացին. «Մարմնի մի անդամի ցավը մեղմացնում է մյուս անդամի ցավը»: Այս վկայակոչումը համընկնում է Պողոս առաքյալի խոսքի հետ. «Ուրախացողների հետ ուրախանալ. լացողների հետ լալ» (Հռ. 12.15), որ նշանակում է, թե զորակցության դրսևորմամբ, քրիստոնեական վարմունքով պետք է օգնել մյուս մարդկանց: Այսպես մեր մարմնի անդամների օրինակով մենք էլ իբրև անդամներ մեկ այլ մարմնի՝ Քրիստոսի խորհրդական մարմնի, որն է Եկեղեցին (Ա Կորնթ. 12.27; Եփես. 1.23, 4.12; Կող. 1.24, 2.19), միմյանց չնախանձենք և միշտ զորակցենք՝ որպես անդամներ մեկ մարմնի Աստծուն փառավորելով ոչ միայն խոսքերով, այլև գործերով:

ԱՂՈԹՔ

ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Գրիգոր Նազիանզացին մի առիթով Սուրբ Բարսեղ Կեսարացուն ասել է. «Ինձ համար ամենամեծ գործը անգործությունն է»: Այս անգործությունը չի նշանակում պարապություն, սա առաջին հերթին մարմնական անգործությամբ մտքի և սրտի անընդհատ գործելն է և բարձրանալը դեպի Աստված: Ամեն մեղք, որը մարդու բարոյականության պարտությունն է, սկսվում է մտքից և սրտից: Եվ Ավետարանն էլ մտքով շնանալը համարժեք է համարում մարմնով շնանալուն (Մատթ. 5.28): Մինչդեռ յուրաքանչյուր հաղթանակ առաջին հերթին մարդկային մտքի և սրտի հաղթանակն է: Այսօր բոլորս էլ ցանկանում ենք խաղաղ և երջանիկ կյանք ունենալ: Հետևաբար, հենց դրա համար էլ պետք է մեր սրտերն ու մտքերը բարձրացնենք առ Աստված, պետք է որ մենք էլ ժամանակ առ ժամանակ տարվենք այս ամենամեծ գործով, որը Սուրբ Գրիգոր Աստվածաբանը կոչում է անգործություն:

ԱՂՈԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Երբեմն մենք այնպիսի հոգեվիճակ ենք ունենում, որ դժվարանում ենք նույնիսկ աղոթել: Սաղմոսներն իրենց մեջ այնպիսի ուժ ունեն, որ Եկեղեցու Հայրերը խորհուրդ են տալիս նրանց, ովքեր դժվարանում են աղոթել, սաղմոսներ ընթերցել. այդ ընթերցումն աղոթքի տրամադրություն և հոգևոր խաղաղություն է բերում:

ԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ԱՂՈԹԵՑԵՔ (Ղուկ. 21.36)

Ինչպե՞ս կարող ենք Քրիստոսի պատվերի համաձայն ամենայն ժամ աղոթել: Մարդկային ջերմ աղոթքը նաև սեր է Աստծո հանդեպ, և սերը երբեմն նման է ջութակի: Մեղեդին կարող է ժամանակ առ ժամանակ դադարել, սակայն լարերը միշտ էլ մնում են: Եվ այս համեմատությամբ եթե չենք կարող անդադար աղոթել, գոնե մեր սիրտը պետք է լցված լինի Աստծո հանդեպ ձգտումով, և մարդկային հոգուց սրտի լարերի օգնությամբ մտքերի և զգացումների ձևով առ Աստված բարձրացող երաժշտությունն է, որ կոչվում է աղոթք:

ԻՆՉՈՒ՞ ԱՂՈԹԵՆՔ

Ինչու՞ պետք է աղոթենք Աստծուն, եթե Աստված ամենագետ է և միշտ գիտի, թե մենք ինչ ենք ուզում: Նույնպես նաև երեկոյան ժամերգության աղոթքի մեջ է ասվում. «Զի դու, Տէ՛ր ամենակալ, գիտես զպէտս մեր եւ զկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք», այսինքն՝ մեր կարիքներն ու պետքերը ավելի լավ գիտես, քան մենք գիտենք և իմանում ենք: Եթե Աստված պատվիրում է աղոթել, ապա ոչ թե նրա համար, որ կարիքը ունի մեր հիշեցման, այլ որպեսզի իմանանք, որ միայն Նրա օգնությամբ ենք ամեն ինչ անում և որպեսզի անընդհատ աղոթքով Նրան հաճելի լինենք: Աղոթելը պետք է, որ անդադար աղոթքով հիշենք մեր մեղքերը, հաշտվենք Աստծո հետ և միանանք Նրան:

ԱՂՈԹՔԻ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՄՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Սուրբ Հակոբը պատանի հասակից ապրել է ճգնությամբ և իր սրբակենցաղ կյանքի համար Աստծուց ստացել է մարգարեության, հրաշագործության և այլ շնորհներ: Նա ինչ որ Աստծուց խնդրել է, դա անմիջապես տրվել է նրան: Մենք ինքներս էլ երբեմն ցանկանում ենք, որ այդպիսի մեծ կարողություն ունենանք, և մարդկանցից շատերն ուզում են, որ իրենց երազանքներն ու ցանկություններն անմիջապես կատարվեն: Սակայն մենք երբեմն ինքներս էլ չենք գիտակցում, թե որն է մեզ օգուտ և ո-

ը վնաս: Մի ցանկալի բան, ըստ մեր մարդկային հայացքի, թվում է, թե ուրախություն և թեթևություն կբերի մեր կյանքի մեջ, բայց հնարավոր հետևանքների մասին մենք ճշգրտությամբ երբեք չենք կարող իմանալ: Եվ Ամենատես Աստված, իմանալով, թե որն է մեզ օգուտ և որը՝ վնաս, երբեմն չի պատասխանում մեր խնդրանքներին մեր օգտի համար, ճիշտ այնպես, ինչպես որ բժիշկը ուշադրություն չի դարձնում հիվանդի ցանկություններին, այլ ամեն ինչ անում է նրան բուժելու համար՝ շատ հաճախ նույնիսկ դառը դեղ տալով: Եթե մենք բոլորս մեր ներկայիս հոգեվիճակով այնպիսի կարողություն ունենայինք, ինչպիսին որ ուներ Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետը, ապա մեր ցանկությունների անհապաղ իրագործմամբ հաճախ կվնասեինք և՛ ինքներս մեզ, և՛ մեր շրջապատին: Մինչդեռ Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետն իր սրբակենցաղությամբ վեր էր այս ամենից:

Մեզ բոլորիս համար այս առնչությամբ շատ օգտակար կլինի մեր Եկեղեցու մեծագույն սրբերից մեկի՝ Սուրբ Ստեփանոս Սյունեցու խրատը. «Խնդրեցեք այն փնտրելին, որը ձեզ պետք է գտնել», այսինքն՝ միայն այնպես, ինչպես հաճելի է Աստծուն: Իսկ թե ինչպես է հաճելի Աստծուն, մեզ բոլորիս սովորեցրել է Քրիստոս՝ ասելով. «Նախ խնդրեցեք Աստծու արքայությունը և Նրա արդարությունը, և մնացած ամեն ինչ Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. 6.33):

ՄԵԾ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստոս աղոթքի մասին ասաց. «Ինչ որ ուզեք Իմ անունով, այն կանեմ» (Հովհ. 14.13): Նաև ասաց. «Մինչև հիմա Իմ անունով ոչինչ չխնդրեցիք. խնդրեցե՛ք և պիտի ստանաք, որպեսզի ձեր ուրախությունը լիակատար լինի» (Հովհ. 16.24): Հետևաբար, բացի աղոթքից մեծ զորություն ունի նաև Քրիստոսի անունը: Այս առումով շատ հետաքրքրական է Հին Կտակարանից ամաղեկացիների դեմ հրեաների պատերազմի պատմությունը, երբ Մովսեսը լեռան վրա ձեռքերը տարածած աղոթում էր, իսկ Հեսուն, որի անունը հունարեն Հիսուս ձևի եբրայական Հեսու ձևն է, գլխավորում էր բանակը: Սրա վերաբերյալ Հուստինոս Փիլիսոփան ասում է, որ Իսրայելցիները հաղթեցին ոչ միայն նրա համար, որ Մովսեսը աղոթում էր, այլև նրա համար, որ Մովսեսը խաչի նշանն էր անում, իսկ բանակի առջևում Հիսուսի անունն էր:

ՀԱՆՈՒՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ

Հավատացյալները մեկ կարևոր նրբություն պետք է իմանան՝ առաջին հերթին չպետք է առաքինություն գործել ինչ-որ նպատակի հասնելու համար: Օրինակ՝ չպետք է այն ակնկալիքով ողորմություն կամ բարերարություն անես, որպեսզի հետագայում քո արած բարիքին իբրև վարձատրություն Աստծո օրհնությամբ քո գործերն ու կյանքը ավելի հաջող լինեն: Չպետք է եկեղեցի գնաս և աղոթես առաջին հերթին այն մտադրությամբ, որ քո անձնական ցանկություններն իրականանան: Դու վիրավորում ես առաքինությունը, եթե չես անում հանուն առաքինության: Ճիշտ նույն կերպ մենք էլ ենք վիրավորվում, երբ մեզ սիրում են ոչ թե մեզ համար, այլ հանուն ուրիշների: Սա նշանակում է, որ առաքինությունը չպետք է դարձնենք միջոց մեր անձնական նպատակների համար, այլ պետք է ապրել հենց նպատակ ունենալով առաքինությունը, իսկ մնացած ամեն ինչը կլինի առաքինության արդյունքը:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոչ՛ Քրիստոսի Ծնունդը և ո՛չ էլ Քրիստոսի Ծննդյան տոնակատարությունները մեզ համար ոչ մի արժեք չունեն, եթե մեր սրտերում հավատք և ջերմեռանդ սեր չկա Քրիստոսի հանդեպ: Այսպիսի զգացմունքների և հավատքի ամրապնդմանը նպաստում է հատկապես Սուրբ Գրքի ընթերցանությունը: Հատկանշական է մեր Եկեղեցու մեծագույն եպիսկոպոսներից Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադյանի միտքը Աստվածաշնչի ընթերցանության մասին. «Աստվածաշունչը կարող են կարդալ ամեն դասակարգի մարդիկ: Կրոնը անհատական է, ուստի և ամեն անհատ պարտավոր է անձամբ կարդալ Սուրբ Գիրքը: Հոմերոսի Իլիականը կամ Ոդիսականը մենք չենք կարող մանուկների ձեռքը տալ: Բայց Ավետարանը մանուկը կարող է կարդալ և հասկանալ»: Քրիստոնեական մեծ գրողներից Շատոբրիանը ճիշտ է նկատել, որ «Ավետարանը գոյություն ունեցող ամենահստակ գիրքն է աշխարհում: Նրա գահը չի հաստատված մարդու գլխում, այլ՝ նրա սրտում. նա չի սովորեցնում վիճել, այլ՝ լավ ապրել: Աստվածաշնչի մեջ իսկապես անբացատրելի է այն, որ նա շարունակական մի խառնուրդ է խորագույն խորհուրդների և ծայրագույն պարզության, հատկանիշներ, որոնցից ծնվում են սրտառուչն ու վսեմը»: Սուրբ Եփրեմ Ասորին Հոբի գրքի իր մեկնության մեջ ասում է, որ ինչպես ճաշակելիք բաները բռնությամբ չեն մտնում մարդու բերանը, այլ մարդն ինքն է իր կամքով դրանք ընդունում և վայելում, ճիշտ այդպես էլ գրքերում ե-

ղած բարի բաները պետք է մարդու կամքով իմաստություն պարգևեն մարդկային մտքին: Ամերիկացիներից մեկը մտահոգությամբ ասել է. «Մենք դարձել ենք աստվածաշնչային անգրագետների ազգ: Արագընթաց մի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թեև ամերիկացիների 90 տոկոսն ունի սեփական Աստվածաշունչ, սակայն քրիստոնյաների միայն 11 տոկոսն է այն ամեն օր կարդում»: Ցավոք, մեր ազգը այս տեսակետով նույն անմխիթար վիճակի մեջ է: Որքան դիպուկ է նկատել մի մեծ մտածող. «Ուր Սուրբ Գիրքը բաց չէ, այնտեղ անսահման խավար է տիրում, ուր Սուրբ Գիրքը միայն մասամբ է բաց, այնտեղ միայն օրվա արշալույսն է բացված, և ուր Սուրբ Գիրքն իր ազատական էջերը բացել է ժողովուրդների առջև, այնտեղ տիրապետում է քաղաքակրթության լուսավորումը»: Եվ Սուրբ Գրքի ընթերցանության հետ կապված խավարը կամ լուսավորությունը ոչ միայն ժողովուրդներին է վերաբերում, այլև առանձին անհատներին և հատկապես ընտանիքներին: Աշխարհում բազմաթիվ ընտանիքներ այսօր տարբեր տեսակի նեղությունների մեջ են: Եվ մարդիկ կգտնվեն, ովքեր կհարցնեն. «Եթե Սուրբ Գիրք ընթերցեմ, արդյո՞ք այդ դեպքում երկնքից բարիքներ պիտի թափվեն իմ և իմ ընտանիքի վրա»: Ավետարանը անպայման պատրաստի պատասխաններ չի տալիս մարդկանց խնդիրներին: Այն ավելի շուտ լուծում է այդ խնդիրները՝ նախ մարդուն փոխելով: «Բայց իմ ուզածը դա չէ,- կպատասխանի մարդը,- ինձ անհապաղ շոշափելի արդյունքներ են պետք»: Սակայն նման առարկության պատասխանը տալիս է չինական իմաստուն ասացվածքը, որն ասում է. «Մարդուն ձուկ տուր, և կկերակրես նրան մեկ օր: Սովորեցրու մարդուն ձուկ որսալ և կկերակրես նրան ամբողջ կյանքի ընթացքում»: Այսպես մարդուն փոխելով՝ մարդու ողջ կյանքն է ապահովում Աստվածաշունչը և Եկեղեցին: Եվ իմանալով այս հիանալի իրողությունը՝ ընթերցեք Աստվածաշունչը, եթե, իրոք, ցանկանում ենք հոգևոր խաղաղություն ու երջանկություն ունենալ:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՀԱՄԱՐՀՈՒՄ

Աստվածաշնչի հեղինակությունն իջել կամ բարձրացել է պատմության ընթացքում: 16-րդ դարում բողոքականությունն առավել ընդգծեց Աստվածաշնչի հեղինակությունը՝ նվազեցնելով Եկեղեցու հեղինակությունը: Բողոքականները, պայքարելով Կաթոլիկ Եկեղեցու դեմ, հայտարարեցին, որ հավատացյալների համար հեղինակությունը պապի հրովարտակները չեն, և մարդն Աստծո պարգևները ստանում է իր անձնական հավատքի շնորհիվ ու ոչ թե Եկեղեցու արարողությունների, հետևաբար, նաև հոգևոր կյանքի համար հոգևորականների անհրաժեշտություն

չունենք: Իհարկե, Ուղղափառ Եկեղեցիները մերժեցին եկեղեցական արարողությունների, հոգևորականների առաքելության արհամարհման և միայն հավատքով փրկվելու տեսակետները: Աստվածաշնչի հեղինակությունը նվազեց 18-րդ դարի սկզբում, երբ գյուղացիները կամ քաղաքների աղքատ մարդիկ հարստահարվում էին շահամոլ հոգևորականների և ազնվականների կողմից:

Դժբախտաբար, երբեմն Աստվածաշունչն արհամարվում է նույնիսկ մեր օրերում, և այդ արհամարհանքն իր պատճառներն ունի: Դրանցից մեկը հետևյալն է: Կապիտալիզմի և սոցիալիզմի առաջին շրջանում բանվոր դասակարգը գերակշռող մեծամասնություն էր կազմում զարգացող երկրներում: Այժմ բանվոր դասակարգը շատ փոքր է, որովհետև փոխվել է աշխատողների բնույթը: Հիմա մարդիկ հիմնականում աշխատում են տեղեկատվական ծառայություններում: Եվ նույնիսկ շատ գործարաններում աշխատողները նստում են հատուկ ծրագրավորված մեքենաների առջև և աշխատում համակարգիչներով: Այսպիսով, աշխատողների արտաքին ապրելակերպը, ինչպես նաև նրա ընտանիքի և իր անձնական կյանքի ձևը փոխվել են: Սակայն այս երևույթը նաև ճգնաժամ բերեց, և արդյունաբերության մեջ մեքենաների գործածության պատճառով շատ աշխատողներ հեռացվեցին՝ մնալով առանց օրական աշխատանքի: Այսօր աշխարհում գործազրկությունը խնդիրներից մեկն է, և նույնիսկ զարգացած երկրներում մեծ թվով գործազուրկներ կան, իսկ աշխատանք ունեցողներն էլ ջանում են ներկա պայմանների մեջ ապահովել իրենց սեփական հարմարավետությունն ու բարեկեցությունը: Նման իրավիճակում արդեն նոր ձևով նյութականը հոգևորից ավելի կարևոր է թվում, և Աստվածաշնչի ընթերցանությունը հաճախ մոռացության է մատնվում: Սակայն մեր Սուրբ Թարգմանիչները թարգմանեցին Սուրբ Գիրքը երազանքով փափագելով, որ հայ ժողովուրդը Աստվածաշնչի պատգամներին հաղորդ դառնալով կամ Սուրբ Գրքի ընթերցանությամբ հոգևոր ուժ ստանա՝ նաև իր կյանքն ավելի ծաղկուն դարձնելու:

Ներկայիս աշխարհը պայքարում է մարդկության դժբախտությունների, թշվառությունների, աղետների դեմ: Սակայն կարող ենք ասել, որ հնարավոր չէ որևէ արդյունքի հասնել առանց կարգավորելու մարդկային էակների հոգևոր վիճակը: Եվ այս նպատակի իրագործման համար պետք է պահպանեք կապը Եկեղեցու հետ և ձեր, ձեր ընտանիքի, ազգի հոգևոր վիճակը կարգավորելու համար պետք է գոնե ժամանակ առ ժամանակ Աստվածաշունչ ընթերցեք:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԽԻԹԱՐԻՉ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը հայտնի է թարգմանությունների թագուհի անունով: Սակայն մուսուլմանները առարկություններ ունեն Աստվածաշնչի թարգմանության հետ կապված ոչ միայն հայերեն, այլև այլ լեզուներով թարգմանությունների առնչությամբ: Մահմեդականներն ասում են, որ քրիստոնյաները աղավաղել են Սուրբ Գրությունները և Քրիստոսի Ավետարանը, իսկ իսլամը պահպանել է Սուրբ Գրքի ճշմարիտ իմաստը Ղուրանի մեջ: Ղուրանի ռուսերեն թարգմանությունը մի ծանոթագրություն ունի Ղուրանի երկրորդ գլխի՝ սուրահի մի համարի վերաբերյալ: Այս գլխում ակնարկ կա այն մասին, որ Ղուրանն ընդունում է Մովսեսի օրենքը և Քրիստոսի Ավետարանը: Սակայն մուսուլմանները վիճաբանում են հատկապես Հովհաննու Ավետարանի 15.26-ում նշված Քրիստոսի խոսքերի դեմ՝ Սուրբ Հոգին ուղարկելու վերաբերյալ: Այս խոսքերը Քրիստոս ասում է նաև Ղուրանում, սակայն այնտեղ խոսքը մխիթարիչ Սուրբ Հոգին ուղարկելու մասին չէ, այլ Ահմեդին կամ Մուհամեդին ուղարկելու:

Նոր Կտակարանի այս հատվածում Սուրբ Հոգու համար գործածված է *մխիթարիչ* բառը, որը թարգմանությունն է հունարեն *պարակլետոս* բառի: Սակայն մուսուլման աստվածաբանների կարծիքով այստեղ պետք է գործածված լիներ հունարեն *պերիկլիտոս* բառը, որը նշանակում է փառավոր, ինչը Մուհամեդ մարգարեի անվան նշանակությունն է: Իհարկե, մենք համաձայն չենք մուսուլմանների հետ, քանզի նման հորինովի փաստարկների դեմ մենք ունենք մեր թարգմանիչ Սուրբ Վարդապետների անսուտ կյանքն ու շնորհառատ գործունեության վավերականությունը:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՆԴԵՊ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ է Աստվածաշունչը թարգմանվել հայրեն նախ ասորերենից, ապա հետագայում թարգմանությունն ավելի է ճշգրտվել հունարեն բնագրերի համեմատությամբ: Պետք է ասել, որ քիստոնեության վաղ շրջանում բացի Աստվածաշնչի բուն գրքերից եղել են նաև պարականոն գրքեր, որոնք գրվել են կեղծ հեղինակների կողմից: Եկեղեցին լուրջ քննությունից հետո հաստատել է Աստվածաշնչի կանոնը և Սուրբ Գրքի անաղարտությունը դարեդար պահելով՝ հասցրել է մինչև մեր օրերը: Այսինքն՝ Եկեղեցին ինքն է Սուրբ Հոգու ներշնչմամբ հաստատել Աստվածաշնչի

գրքերի կազմությունը: Այսօր, սակայն, բազում աղանդավորներ, օգտագործելով Եկեղեցու ծոցում կազմավորված և Եկեղեցու ծոցում պահպանված Աստվածաշունչը, փորձում են ապացուցել, թե ճիշտ չէ հենց այդ Եկեղեցին կամ էլ նրա որոշ դիրքորոշումներ: Հետաքրքիր է, թե որտեղ էին նրանք, երբ քրիստոնեական Եկեղեցու ներսում գրվում էին Նոր Կտակարանի գրքերը, կամ որտեղ էին, երբ Եկեղեցին այդ Աստվածաշունչը սրբությամբ պահելով հասցնում էր հետագա սերունդներին: Իսկ որոշ աղանդներ էլ աղավաղում են Աստվածաշնչի շատ և շատ նախադասություններ՝ իրենց հետևորդներին մոլորեցնելու համար: Մինչդեռ Հայ Առաքելական Եկեղեցու թարգմանությունը՝ կատարված Սուրբ Սահակ Պարթևի և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների կողմից, ողջ աշխարհում ճանաչված է որպես Թարգմանությունների թագուհի: Սա նշանակում է, որ Եկեղեցին է նախանձախնդիր ճշմարտության պահպանմանն ու տարածմանը, և ճշմարտությանը հետևելու համար պետք է անդամ լինել ոչ թե տարա-բնույթ աղանդների, այլ առաքելահաստատ Սուրբ Եկեղեցու:

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ

ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Սուրբ Գրքի քարոզչության համար խորապես մտահոգված, քանի որ հայերեն լեզվով Աստվածաշունչ չկար, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը գնաց Սուրբ Սահակ Պարթև Կաթողիկոսի մոտ և նրան գտավ նույն մտահոգության մեջ: Դանիել եպիսկոպոսի մոտից բերված հայոց նշանագրերը, որոնցով Մեսրոպն ու Սահակը փորձում էին ուսուցանել իրենց աշակերտներին՝ հետագայում նաև Սուրբ Գիրքը հայերեն հատուկ նշանագրերով փոխադրելու, բավարար չգտնվեցին այս կարևոր գործի համար: Ուստի Մեսրոպ Մաշտոցը գնաց Եդեսիա Պլատոն անունով հեթանոս ճարտասանի մոտ, որը շատ ջանալուց հետո իր անկարողությունը խոստովանեց: Պլատոնը խորհուրդ տվեց Մեսրոպին գնալ Եպիփան անունով իմաստուն քրիստոնյայի մոտ: Սակայն Մեսրոպն իմանում է, որ Եպիփանը վախճանվել է՝ թողնելով Հռոփանոս անունով մի աշակերտ, ով Սամոսում էր և մեծապես հմուտ էր հելլեն գրչության արվեստի մեջ: Բայց Հռոփանոսը ևս նոր տառերի ստեղծման գործում Մեսրոպին չկարողացավ օգնել: Այդ ժամանակ Սուրբ Մեսրոպը, մարդկանցից հույսը կտրած, ապավինեց աղոթքների և այդ մտհոգության ու աղոթական վիճակի մեջ, ինչպես ասում է Մովսես Խորենացին, ոչ այն է քնի մեջ՝ երազում, ոչ այն է

արթմնի, տեսավ մի աջ ձեռք, որ գրում էր տառերը վեմի վրա: Եվ Սուրբ Մեսրոպը ոչ միայն տեսավ այդ տառերը, այլև դրանք ամրապնդվեցին նրա հիշողության մեջ: Սուրբ Մեսրոպ Մաշտոցը գրեց այդ տառերը, դրանք հղկեց Հռոփանոսի հետ, փորձի համար Առակաց գրքից թարգմանություն կատարեց իր մոտ եղող աշակերտների հետ և վերադարձավ Վաղարշապատ: Հայ ժողովուրդը Մեսրոպ Մաշտոցին դիմավորեց առավել ցնծությամբ, քան հրեաները՝ տասնաբանյա պատվիրանները բերող Մովսեսին:

Ընդհանրապես գրերի գյուտը առաջընթաց է համարվում մարդկության պատմության մեջ: Սակայն զարմանալի է, որ գրերի գյուտին նաև ժխտական գնահատական է տրվել: Եգիպտական գրերի գյուտն արել է Տեվտ կամ Տոտ անունով մեկը, և նրա գյուտը թագավորի բացասական վերաբերմունքին է արժանացել այն հիմնավորումով, որ գրերի գործածությունը պիտի պատճառ դառնա մարդկանց հիշողության թուլացման:

Հայ իրականության մեջ, սակայն, մեծ հաղթանակ համարվեց գրերի գյուտը, հայոց գիր ու գրականության ստեղծումը: Մեծ նկարիչներից Լեոնարդո դա Վինչիի մասին ասում են, որ նա իր աշակերտներին ընտրում էր ոչ թե ուշիմության ու խելացի լինելու հատկություններով, այլ գեղագիտական իր հակումից ելնելով՝ աշակերտ էր ընտրում արտաքինից համակրելիներին, և դրա համար էլ իր նման հանճարեղ հետևորդներ չունեցավ: Մինչդեռ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը նաև մտավոր մեծ կարողություններով օժտված արժանի աշակերտներ, հետևորդներ ունեցան, ովքեր նոր ձեռքբերումներով զարդարեցին իրենց ուսուցիչների սկսած գործը:

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սուրբ Գրքի մեր Թարգմանիչները մեծ ծառայություններ մատուցեցին մեր ժողովրդին, բայց նրանց մատուցած ծառայություններից մեծագույնը երկուսն են. նրանք լուսավորեցին հայ ժողովրդի խիղճը և բացեցին նրա հոգևոր աչքերը:

Լուսավորյալ խիղճը հուշում է բարի և առաքինի ապրելու սկզբունքները, բայց մեղքերի մեջ հարատևողները կորցնում են այդ հատկությունը: Փիլիսոփաների միջև վեճ է եղել այն հարցի շուրջ, թե արդյոք ո՞ր արարքներն են ավելի արժեքավոր, բանականությունի՞ց, թե՞ խղճից բխողները: Մեկն ասում էր, թե առավել արժեքավոր են բանականության արարքները, իսկ մյուսը պնդում էր, որ խղճից դրդված արարքներն ավելի գնահատելի են, որովհետև բանականությամբ մարդը կարող է լավ մտածված կերպով վրեժ լուծել, բայց եթե նա իր խղճից դրդված ետ է

դառնում չար արարքից, ապա դա առավել արժեքավոր է: Նաև բանականությամբ ոչ զարգացած՝ քիչ գիտելիքներ ունեցող մարդկանց մոտ հաճախ անսահման բարություն է լինում: Եվ մեր Թարգմանիչները Սուրբ Գրքի լույսով լուսավորեցին մեր ժողովրդի խիղճը, որով մեր ազգի գործերը դարձան առավել արժեքավոր:

Սուրբ Գրքի քարոզչությամբ Թարգմանիչները բացեցին նաև մեր ժողովրդի հոգևոր աչքերը: Աստվածաշնչում գրված է, որ երբ առաջին մարդիկ մեղք գործեցին, բացվեցին նրանց աչքերը, և նրանք հասկացան, որ մերկ են (Ծննդ. 3.6-7): Եկեղեցական մեծանուն հեղինակներից Որոգինեսն ասում է, որ մեղքից հետո բացվեցին առաջին մարդկանց մարմնական աչքերը, և փակվեցին հոգևոր աչքերը: Իսկ Թարգմանիչները, Սուրբ Գրքի հրաշալի և ամբողջական գանձերը մատուցելով, Աստվածաշնչի խրատներով սովորեցրին նորադարձ հայ ժողովրդին մաքրել սրտերը հեթանոսական մեղքերից և հոգու աչքերով տեսնել ճանապարհը ճշմարիտ աստվածպաշտության, ըստ այն խոսքի, թե՝ երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն (Մատթ. 5.8):

ԱՐԻՍՏՈԿՐԱՏ ԴԱՌՆԱԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Պատմաբանների միջև երկար վեճեր են եղել այն մասին, թե որտեղից է սերում Մեսրոպ Մաշտոցը՝ սովորական գյուղացու ընտանիքի՞ց, թե՞ ազնվական ծագում ունի: Առավել գերակշռում է այն կարծիքը, որ Մեսրոպ Մաշտոցը ազնվական ընտանիքի զավակ է, որովհետև այն ժամանակ գյուղացին չէր կարող այնպիսի հիմնավոր կրթություն ապահովել իր զավակի համար, որպիսին ուներ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը:

Ճիշտ է այն դիտարկումը, որ աշխարհում գոյություն ունեն ազնվականության կամ արիստոկրատիայի երեք տեսակներ՝ 1. ծննդյան և պաշտոնի, 2. դրամի, այսինքն՝ այդ կոչումը դրամով ձեռք բերված, 3. մտքի և տաղանդի: Եվ եթե առաջին կետով վիճելի է համարվում Մեսրոպ Մաշտոցի ազնվականությունը, ապա ոչ ոքի համար առարկելի չէ նրա արիստոկրատ, ազնվական լինելը մտքի և տաղանդի տեսակետից: Եվ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կողմից մեզ ավանդված ժառանգությունը մենք այսօր պետք է արժևորենք՝ նաև մեր սովական կենցաղում հայ լեզուն անաղարտ պահելով և Սուրբ Մեսրոպի նման լինելով արիստոկրատներ մտքի և հավատքի, որի բացարձակ հնարավորությունը տրված է մեզ ամենքիս:

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը հիմնեցին դպրոցներ՝ հայ գրերն ու Աստվածաշունչը ուսուցանելու համար: Այնուհետ նրանց մեծ հետնորդները հիմնեցին նաև համալսարաններ: Մեր համալսարաններն առաջացել այն ժամանակ, ինչ Եվրոպայում առաջին համալսարանները: Միջնադարը մանավանդ արևմտյան Եվրոպայի համար երեք հիմնական ժամանակաշրջաններ ունի՝ վաղ միջնադար՝ 5-11-րդ դարեր, դասական միջնադար՝ 11-15-րդ դարեր, և ուշ միջնադար՝ 15-18-րդ դարեր: Եվրոպայում առաջին համալսարաններն ի հայտ եկան դասական միջնադարի շրջանում: Մեր հայագետները, համեմատություն կատարելով հայկական և նույն շրջանի եվրոպական համալսարանների միջև, հաստատել են, որ հայոց համալսարանները ոչ մի բանով չեն զիջել եվրոպական համալսարաններին և ունեցել են նույնպիսի հագեցած կրթական ծրագրեր: Մեր համալսարաններում նույնիսկ դասավանդվել է առարկա, որ երբեք չի մատուցվել եվրոպական համալսարաններում: Խոսքը հեթանոսական դիցաբանության մասին է: Հատկանշական է, որ այս առարկայի դասավանդումը կատարվել է հայ հեղինակների՝ Մովսես Քրեթողի, Եզնիկ Կողբացու գրվածքներով:

ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կան գրավոր մարգարեություններ թողած աստվածաշնչյան տասնվեց մարգարեներ, որոնցից տասներկուսը կոչվում են մեծ, իսկ չորսը՝ փոքր: Մեծ կամ փոքր անվանումները պարզապես ցույց են տալիս նրանց գրավոր մարգարեությունների ծավալը: Եկեղեցին տասներկու մարգարեների տոնը տոնում է առանձին և մյուս չորսինը՝ առանձին: Սակայն բացի այս մարգարեներից Աստվածաշնչում հիշվում են նաև այլ մարգարեներ, ովքեր, սակայն, գրավոր մարգարեություններ չեն թողել, այլ ծավալել են մարգարեական եռանդուն գործունեություն Իսրայելի պատմության այս կամ այն ժամանակահատվածում:

Քրիստոնեության վաղ շրջանում առաջացած մի հերձված պնդում էր, որ այլ էր Հին Կտակարանի մարգարեներին ներշնչող ոգին, և այլ՝ առաքյալներին ներշնչող ոգին: Սրա դեմ հանդես եկան եկեղեցական մեծագույն հեղինակությունները՝ հերքելով այս թյուր կարծիքը, հաստատելով, որ նույն Սուրբ Հոգին էր ներշնչում թե՛ մարգարեներին և թե՛ առաքյալներին: Հին Կտակարանի հեղինակները ևս մարգարեներ են: Եվ նույն Հոգուց ներշնչվելով՝ մարգարեները գրեցին Հին Կտակարանը, իսկ ա-

ռաքյալները՝ Նոր Կտակարանը: Սուրբ Պետրոս առաքյալն ասում է. «Մարգարեությունները ոչ թե ըստ մարդկանց կամքի տրվեց երբևէ, այլ Սուրբ Հոգուց մղված է, որ խոսեցին Աստծու սուրբ մարդիկ» (Բ Պետր. 1.21): Իսկ եկեղեցական հեղինակներից Սեբերիանոսը նշում է, թե ինչպես որ եղեգը, որը չի կամենում գրել, այլ գրում է այն, ինչ ձեռքն է հրամայում, այդպես էլ մարգարեների լեզուն ասում էր այն, ինչ Սուրբ Հոգու իշխանությունն էր հրամայում:

Մարգարեները մարդկանց ազատեցին վախից: Վախը գալիս է վտանգավոր բաներից և ծագում է ոչ թե անցյալի կամ ներկայի դժբախտություններից, այլ գալիք վնասաբեր երևույթների ակնկալությունից, քանի որ վախը գալիք աղետների ակնկալությունն է: Մարգարեները հայտարարում էին, որ Աստծո հանդեպ հավատարմությունն ազատում է դժբախտություններից, և կամ մարդն Աստծո օգնությամբ կարող է հաղթահարել բոլոր դժվարությունները:

Հինկտակարանյան մարգարեները մարգարեացան մինչև Հովհաննես Մկրտիչը (Մատթ. 11.13), որովհետև նրանք մարգարեանում էին Քրիստոսի գալստյան, փրկագործության մասին, մարդկանց հիշեցնում Աստծո կամքի համաձայն ապրելու մասին: Եվ այս ամենն իր լրումին հասավ Քրիստոսով, երբ իրականացան Տիրոջ մասին մարգարեությունները, և մարդկանց տրվեցին քրիստոնական վարդապետությունն ու աստվածային շնորհները՝ աստվածահաճո կյանքով ապրելու: Քրիստոսն է օրենքների և մարգարեությունների լրումը: Սա երևում է հատկապես պայծառակերպության դրվագում, երբ Քրիստոսին երևացած Մովսեսն ու Եղիան՝ օրենքի և մարգարեության ներկայացուցիչները, վերջում անհետանում են, և աշակերտներին երևում է միայն Քրիստոս՝ որպես լրում օրենքների և մարգարեությունների (Մատթ. 17.1-8, Մարկ. 9.1-7): Սակայն վաղ շրջանի Եկեղեցում դեռ խոսվում է մարգարեության անհրաժեշտության մասին. Սուրբ Պողոսն առաջին կարևոր շնորհ է համարում առաքելությունը, երկրորդը՝ մարգարեությունը՝ հորդորելով. «Նախանձախնդիր եղեք մանավանդ մարգարեություն անելու» (Ա Կորնթ. 14.1): Բայց պետք է իմանալ, որ քրիստոնեության վաղ շրջանում մարգարեանալ նշանակում էր Աստծո մասին ավետարանել, քարոզել, հավատավոր կյանքով ու գործով Աստծո գաղափարը և Նրա պատվիրանները հասցնել մարդկանց: Իհարկե, հատկանշական դեպքերում Աստված նաև իր հատուկ պատգամն էր հայտնում որևէ անձի միջոցով, ինչպես Պողոս առաքյալը իր վախճանի մասին իմացավ Ագաբոս մարգարեից (Գործք 21.10-11): Հին ժամանակների մարգարեության շնորհն իր նախնական տեսքով այլևս գոյություն չունի և վերածվել է քարոզչության շնորհի, որովհետև հիմա քարոզչությունն ավելի անհրաժեշտ է Եկեղեցում, քան մարգարեութ-

յունը: Պատճառն այն է, որ Քրիստոսի քաղցր և ճշմարիտ վարդապետությամբ ու առաքյալների ուսուցումներով հոգևոր կյանքի համար անհրաժեշտ ամեն ինչ բացահայտված է մարդու համար, և պետք է քարոզչությունը՝ մարդուն զգաստ պահելու հավատքի մեջ, հորդորելու առավել կատարելագործվելու, մեղքերի համար զղջալու ու ապաշխարելու և իրական քրիստոնեական կյանքով ապրելու:

Առաքյալը խոսում է նաև կանանց մարգարեանալու մասին. «Ամեն կին, որ աղոթքի կանգնի կամ մարգարեանա գլխաբաց, անպատվում է իր գլուխը» (Ա Կորնթ. 11.4): Կնոջ մարգարեանալը վերոնշյալ իմաստով առաքյալն իհարկե նկատի ուներ ոչ թե հրապարակային վայրերում, այլ տանը, քանի որ Պողոսն արգելում էր կանանց խոսել աստվածպաշտական արարողությունների ժամանակ (Ա Կորնթ. 14.34): Պատճառն այն էր, որ դրախտից անկումից հետո կինը դրվեց տղամարդու իշխանության տակ (Ծննդ. 3.16), դրա համար էլ պաշտամունքների ժամանակ պետք է քող դնի իր գլխին (Ա Կորնթ. 11.5-10), որը խորհրդանշում է տղամարդու իշխանությունը կնոջ հանդեպ, ինչն էլ իր հերթին գեղեցիկ խորհրդանիշ է արարածների վրա աստվածային իշխանության:

Քրիստոս ևս կոչվեց մարգարե. «Սա Հիսուս մարգարեն է, որ Գալիլիայի Նազարեթ քաղաքից է» (Մատթ. 21.11), «Եվ նրանք ասացին Հիսուս Նազովրեցու մասին, ող եղավ մարգարե մարդ» (Ղուկ. 24.19): Հետաքրքրական է, որ Քրիստոս, ով Աստված է, մարդացավ ու կոչվեց մարգարե, և մարգարեները, որ մարդիկ էին, կոչվեցին աստվածներ (Ելք 7.1, 22.28):

ՊՐՈՄԵԹԵՎՍ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Մարգարեության գաղափարը հատուկ է ոչ միայն հրեաներին. հեթանոս այլ ժողովուրդներ ևս ունեցել են մարգարե-գուշակողներ: Հեթանոս ժողովուրդներն իմաստության հասան գիտության տարբեր բնագավառներում, բայց հիմարացան հավատքի մեջ, քանի որ պաշտում էին մարդկային կրքերը կամ բնության ուժերը: Սակայն շեղված հավատքի մեջ միևնույն ժամանակ մարդկային իմաստություն ունենալով՝ նրանք ճիշտ ուսուցումներ էին տալիս ընկերության և առաքինության սկզբունքների մասին: Օրինակ՝ մի անգամ քաղդեացիներն ընծաներ ուղարկեցին Դելֆի Ապոլլոնի և Արտեմիդի համար և հարցրեցին դելֆյան գուշակին, թե արդյո՞ք պետք է հավասարապես բաժանեն ընծաները՝ հիշյալ չաստվածներին ընծայելու համար: Եվ գուշակը պատասխանեց, որ ընկերների միջև ամեն ինչ ընդհանուր է: Անձնազոհության և բարեգործության գեղեցիկ օրինակ է նաև հեթանոսական առասպելը Պրոմեթևսի մասին: Նա

կրակը պարգևեց մարդկանց, որի պատճառով դատապարտվեց գամվելու ժայռին և չարչարանքների ենթարկվելու: Ասում են, որ Պրոմեթևս անունը թարգմանվում է կանխատեսող: Հին Կտակարանի մարգարեները ևս կանխատեսողներ էին ճշմարիտ կերպով, և հավանաբար Պրոմեթևսի կյանքը ցույց էր տալիս մարգարեների ճակատագիրը: Նրանք ևս խորհրդանշական կրակը բերեցին մարդկանց՝ Աստծո պատվիրանների և կամքի համաձայն ապրելու ջերմեռանդությունը, և մարգարեները սպանվեցին՝ հետապնդումների ու հալածանքների ահավոր դառնություն ճաշակելով:

ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է

Աստված հայտնեց Իրեն մարդկությանը, խոսեց մարգարեների հետ, տեսիլքներով հաղորդակցվեց սրբերի հետ՝ տալով Իր պատգամներն ու պատվիրանները: Այսօր մարդիկ կան, ովքեր ասում են, թե իրենք լսում են Աստծո, հրեշտակների ձայները և երբեմն նույնիսկ տեսնում նրանց: Այս երևույթը շատ է հետաքրքրում նաև հոգեբաններին, ովքեր բավականին ուսումնասիրություններ են արել և պատասխաններ տվել: Որոշ հոգեբաններ ասում են, որ այս կյանքից դժգոհ և հիասթափություններ ունեցող մարդիկ իրենց երևակայության մեջ ստեղծում են իրենց սեփական աշխարհը, որտեղ նրանք պայքարում են չարի դեմ և հաղթում: Սակայն կրոնական տեսակետի համաձայն՝ այս տեսակի մարդիկ նախանձախընդրություն ունեն Աստծո հանդեպ, իրենց միամտության մեջ ուզում են տեսնել և լսել Աստծուն, և չարն օգտագործում է այս առիթը՝ մարդկանց գցելով իր ազդեցության տակ: Հոգեբանները հաճախ հաջողություններ չեն ունենում նման մարդկանց բուժելու գործում, որովհետև նրանք չեն տեսնում խնդրի հոգևոր կողմը և փորձում են բժշկել որևէ մեկին՝ այդպիսի վիճակը բացատրելով միայն ֆիզիկական տեսանկյունից՝ ուղեղի վրա ուռուցքներ, գլխուղեղի կեղևի ֆունկցիաների խախտում, գլխուղեղի արյունատար անոթներում արյան շրջանառության վատթարացում և այլն: Բազում մարդիկ պատրանքներ, հալյուցինացիաներ են ունենում, նրանք լսում են ձայներ, տեսնում հրեշտակների կամ տարբեր անձեր ու պատկերներ: Հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երկրի վրա ապրող հարյուր մարդուց մեկը այսպիսի մղձավանջային վիճակի մեջ է: Սակայն մենք կսխալվենք, եթե մարգարեների, սրբերի վարքն ու բարքը բացատրենք հոգեկան հիվանդությամբ: Մարգարեներն իրականում լսել են Աստծո ձայնը և հրաշքներով, իրենց մեծ գործունեությամբ ապացուցել են, որ նրանք ընտրյալներ են Աստծո կողմից:

Այն փաստը, որ մենք մարգարեներ չենք, և Աստված Ինքը չի խոսում մեզ հետ, չի նշանակում, որ Աստված անտեսում է մեզ կամ ավելի քիչ սիրում, քան մարգարեներին: Օրինակ՝ Աստված խոսեց Մովսեսի հետ Վկայության վրանի, դրանում դրվելիք սպասքի, քահանաների զգեստների պատրաստության մասին (Ելք 26-30), բայց Մովսեսը պիտանի չէր վրանի կառուցման և մյուս պիտույքների պատրաստման համար: Դրա համար Աստված ցույց տվեց այն արհեստավորներին, ովքեր կարող էին կատարել այդ գործը (Ելք 31.1-6): Նման երևույթ կարող ենք տեսնել նաև բնության մեջ: Տանձենին չի կարող անգամ մի փտած խնձոր պտղաբերել, իսկ խնձորենին չի կարող տանձ ունենալ իր ճյուղերին: Նույն կերպ մշակույթի որևէ բնագավառում տաղանդավոր մարդը չի կարող իր տանը հմտություն պահանջող անգամ փոքր կենցաղային գործ անել, որն իրականացվում է մի պարզ արհեստավորի կողմից: Նաև մենք մարգարեներ չենք, որոնց հետ Աստված խոսեց, սակայն յուրաքանչյուրն արժեքավոր է իր բնագավառում, և Աստված սիրում է մեզ նույն հոգատարությամբ և խոսում ամենքիս հետ Սուրբ Գրքի և այլ աղբյուրների միջոցով:

ՊԱՀՔ

ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ

Եկեղեցին բացի տոնական օրերից ունի նաև պահոց օրեր, որոնք թվով հարյուր հիսունութն են և բաժանվում են օրապահքերի, շաբաթապահքերի և հիսնակաց պահքի: Օրապահքերը՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերի պահքը, կարգվել է ի հիշատակ Քրիստոսի չարչարանքների և խաչելության, շաբաթապահքերը հիմնականում առաջացել են հիսնակաց պահքերի տրոհումից: Եկեղեցական Հայրերը, տեսնելով, որ աշխարհականների համար դժվար է տարվա մեջ մի քանի անգամ հիսուն օրեր պահք պահելը, կարգ հաստատեցին, որ հատկապես աշխարհականները պահեն հիսնակաց պահքերի միայն սկզբի, միջին և վերջին շաբաթները: Շաբաթապահքերը հինգ օր տևողությամբ են, բացառությամբ Ծննդյան պահքի, որ յոթ օր է: Նախկինում կային պահոց երեք հիսնյակներ Ծննդից, Զատկից, Վարդավառից առաջ, մինչև որ հետո սահմանվեց պահել միայն Զատկից առաջ եղող հիսնյակը:

Պահք, ծոմ պահելու անհարժեշտությունը նշեց նաև Քրիստոս (Մատթ. 6.16, 9.15; Մարկ. 2.20, Ղուկ. 5.35)՝ ասելով. «Երբ փեսան նրանցից վերցվի, այն ժամանակ ծոմ կպահեն»: Առաքյալները ևս անհրաժեշտ էին համարում պահեցողությունն ու ծոմապահությունը: Սուրբ Հոգին խոսեց և ասաց, որ առանձնացնենք Սողոսին և Բառնաբասին հատուկ ա-

ռաքելության համար: Եվ առաքյալները պահեցողությամբ ու աղոթքով ձեռք դրեցին նրանց վրա և ուղարկեցին (Գործք 13.2-3): Երբ Պողոսն ու Բառնաբասը եկան Դերբեից Իկոնիոն, Լյուստրա և Անտիոք, մխիթարեցին քրիստոնյաներին, ովքեր նեղությունների մեջ էին: Եվ «նրանց համար յուրաքանչյուր եկեղեցու վրա երեցներ ձեռնադրեցին, պահեցողությամբ հանդերձ աղոթք արեցին» (Գործք 14.22):

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՀՔ

Սուրբ Գրիգոր Տաթևացին պահքի անընդունելի չորս տեսակ է նշում՝ դատապարտյալների պահքը, ովքեր հարկադրաբար զրկված են ճոխ կերակուրներից, ցուցամոլների պահքը, ովքեր պահեցողությունն օգտագործում են իրենց բարեպաշտությունը ցույց տալու համար, արծաթասերների պահքը, ովքեր ժլատությամբ գումար խնայելու համար առատ կերակուրներից հեռու են մնում, և բնությամբ թույլ մարդկանց պահքը, ովքեր ի վիճակի չեն պարարտ կերակուրներ ուտելու: Այսպիսի պահքերն անընդունելի են, քանի որ պահքի հիմքում պետք է լինի զղջումը, ապաշխարությունը և մեղքերի համար սուգը:

ՊԱՀՔ, ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՈՒՆ ԵՎ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցական հեղինակները պահքի մասին արտահայտվում են տարբեր տեսանկյուններից: Ստեփանոս Սյունեցին նշում է, որ աղոթքն ավելին է, քան պահքը և ողորմությունն ավելին, քան աղոթքը, որովհետև Աստված ասում է՝ ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ (Օսեե 6.6, Մատթ. 12.7), նաև՝ «ողորմածությունը բարձրագլուխ պարծենում է դատաստանի դիմաց» (Հակ. 2.13): Տաթևացին պահքն անբաժան է համարում խոստովանությունից և ասում, որ անմիտ են նրանք, ովքեր առանց խոստովանության պահք են պահում, քանզի մի օրվա խոստովանությամբ պահքն ավելին է, քան քառասուն օրերինն առանց խոստովանության: Պահքը և աղոթքը հոգևոր կերակուրներ են, իսկ կերակուրները պատրաստելուց և օգտագործելուց առաջ պետք է միշտ լվանալ: Եվ հոգևոր իմաստով խոստովանությունը հանդիսանում է այդ խորհրդանշական լվացումը: Գրիգոր Տաթևացին աղոթքն ավելի բարձր է դասում պահքից և բարեգործությունից, որովհետև պահքն ու ողորմությունը ժամանակ առ ժամանակ են լինում, իսկ աղոթքը՝ ամեն ժամ, ինչպես ասում է Քրիստոս. «Ամեն ժամ աղոթք արեք» (Ղուկ. 21.36), կամ առաքյալը, թե՝ անդադար աղոթեցեք (Ա. Թեսաղ. 5.17): Նաև մարգարեն է ասում. «Ամեն ժամ Տիրոջը կօրհներգեմ» (Սաղմ. 33.2): Բացի դրանից աղոթքն ավելի հեշտությամբ է կատարվում, քան պահքը, որովհետև եթե մարդը տկար է կամ ծեր պահք չի պահում: Նաև աղոթքն ավելի հեշտ է կատարվում,

քան ողորմությունը, որովհետև աղքատը ողորմության գործեր չունի: Իսկ աղոթքի պարագային բոլորը՝ ծեր թե մանուկ, առողջ թե հիվանդ, հարուստ թե աղքատ, միշտ կարող են այն կատարելու պատրաստ լինել: Նաև՝ պահքը և ողորմությունը առաջին հերթին արտաքին իրողություններ են, մինչդեռ աղոթքը ներսում սուրբ սրտից և անձից է որպես պատարագ ընծայվում Աստծուն, իսկ մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում (Սաղմ. 50.19):

ԱՂՈԹՔԸ ՊԱՀՔԻՑ ԵՎ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՎԵԼ

Աղոթքը պահքից և ողորմությունից առավել է, քանզի պահքով կարգավորում ենք մեզ, ողորմությամբ օգնում ուրիշներին, իսկ աղոթքով կարգավորում ենք մեր հարաբերություններն Աստծո հետ և Աստծո հետ խոսում: Պահքը սուգ է մեղքերի համար, ողորմությունը երբեմն լինում է տրտմությամբ, ինչպես մեծահարուստը տրտմած գնաց՝ ողորմության հորդոր ստանալով (Մատթ. 19.21-22), իսկ աղոթքը, որքան երկարում է, այնքան ուրախանում է աղոթողը, որովհետև անճառելի խնդություն, լույս և սեր է ծագում աղոթողի մտքում, որի համար էլ Դավիթ մարգարեն ասում է. «Թող ուրախ լինի սիրտը նրանց, ովքեր փնտրում են Տիրոջը» (Սաղմ. 104.3 նաև՝ 39.17, 69,5): Նաև պահքի ընթացքում սատանան չի փախչում, ինչպես որ Քրիստոսի քառասնօրյա ծոմի ընթացքում չփախավ և փորձեց Տիրոջը (Մարկ. 1.12, Ղուկ. 4.2), քանզի սատանան էլ միշտ պահքի մեջ է, այսինքն՝ մարմնական կերակուրներից հեռու է, ու մոտ է նաև ողորմության ժամանակ, որպեսզի խափանի: Իսկ աղոթքից սատանան փախչում է, երբ հիշում ենք Աստծո կամ այլ սրբերի անունը և կամ երբ խաչակնքվում ենք, և ինչպես խավարն է հալածվում լույսից, այնպես էլ ցրվում են չարի որոգայթները: Եթե պահք պահես, քեզ է օգուտ, ողորմությունը օգուտ է նրանց, որոնց տալիս ես, իսկ աղոթքը օգուտ է քեզ, ուրիշների և ամբողջ աշխարհի, արդարների և մեղավորների, ողջերի և մեռածների համար: *Աղոթք* բառը *աղ* բառի հետ է կապվում. ինչպես աղը ամեն ինչի խառնվում է և համի բերում, այնպես էլ աղոթքը ամեն բարի գործերի խառնվում է և քաղցր ու ընդունելի է անում Աստծո համար:

ԱՌԱՋԱՎՈՐԱՑ ՊԱՀՔ

Առաջավորաց պահքը համարվում է Հայոց առաջին ազգային պահքը: Այս պահքն Առաջավորաց է կոչվում՝ որպես առաջին պահք, կամ էլ որպես Մեծ Պահքի առաջընթաց: Առաջավորաց պահքի ընթացքում եկեղեցիներում արարողություններին Սուրբ Գրքից ընթերցումներ չեն լի-

նում, և Պատարագ չի մատուցվում, որովհետև այս պահքի մեջ խորհրդաբար Ադամի անկումն է նաև հիշատակվում, իսկ Ադամի ժամանակ Գիրք և մարգարեներ գոյություն չունեին:

ՊԱՀՔ ԿԱՄ ԴԻԵՏԱ

Եկեղեցական պահքի մեջ կենտրոնական տեղ է գրավում առաջին հերթին ոչ թե որևէ ուտելիքից, այլ վատ սովորույթներից հրաժարվելը: Սա շեշտում է Աստված հատկապես Եսայու մարգարեության մեջ (58.3-6): Այսօրվա մարդկանց համար նշենք, որ եթե որևէ մեկը չափից ավելի է կապված հեռուստացույցի կրքահարույց ֆիլմերին կամ այլ ներկայացումներին կամ էլ որևէ վատ սովորություն ունի, ապա պահքի ընթացքում խիստ պետք է սահմանափակի իր ցանկությունները հենց այս ոլորտում՝ այդուհետ վատ իրողություններից հեռու մնալու որոշումով: Եթե պահքի մեջ հոգևոր մտադրություն չկա, ապա այն դադարում է պահք լինելուց, քանի որ նաև գիրության հետ կապված խնդիրներից ելնելով՝ շատեր հրաժարվում են տարբեր տեսակի պարարտ կերակուրներից: Այդ իսկ պատճառով մեր ժողովուրդը պետք է կարողանա հստակ տարբերություն տեսնել պահք պահելու և պարզ դիետա պահելու միջև:

ՊԱՀՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարմնի չափավոր սնումը, որքան էլ ոմանց համար զարմանալի լինի, ավելի է պայծառացնում միտքը և զորացնում է հոգու գործունեությունը: Բացի մարմնավոր պահքից կա նաև հոգևոր պահք, որը հրաժարումն է վատ արարքներից, կրքերից և մտքերից: Սակայն նշենք, որ առանց մարմնավոր պահքի երբեմն շատ դժվար է լինում միայն հոգևոր պահք պահելը: Այսօր շատեր փորձում են պահել միայն պահքի հոգևոր կողմը, այսինքն՝ ջանում են հեռու մնալ վատ սովորություններից, հակումներից, մեղավոր հաճույքներից: Սակայն շատ հաճախ չափազանց դժվար է առանց պահքի մարմնավոր կողմը պահելու պահքի հոգևոր կողմը պահել և զարգացնել: Սրա պատճառն այն է, որ երբ մարդը սնվում է պարարտ կերակուրներով, մարմնի մեջ ավելի են աշխուժանում բնական շարժումներն ու սովորական կրքերը, և միտքն ու գիտակցությունը մեծապես դժվարանում են զսպողություն սահմանելու մեջ: Իսկ պահքի օգնությամբ միտքը հեշտությամբ կարողանում է սանձել մարմինն ու նրա ցանկությունները:

Պահքը մեծապես կապված է զղջման և ապաշխարության հետ: Երբ մարդ զղջում է իր մեղքերի համար, նա տխրում է, որ ամոթալի արարք-

ներ է գործել: «Եվ այդ սուգը,- ասում է մեր Եկեղեցու մեծ հեղինակներից Հովհան Մանդակունին,- պահք է սովորեցնում, պահքը աղոթքի է բերում, աղոթքը՝ ողորմության, և կամաց-կամաց, աստիճանից աստիճան հեշտությամբ երկինք ես ելնում»: «Այս ամենի միայն սկսելն է դժվար,- դարձյալ մեզ խրատում է Հովհան Մանդակունին,- բայց այնուհետև գործը հեշտանում է և դառնում քաղցր ու ցանկալի»: Այսպիսի ներքին պահքի կարիքն ունեն ոչ միայն սովորական անձինք, այլ հատկապես մեր քաղաքական-հասարակական գործիչները և գիտության մարդիկ: Այդ իսկ պատճառով նրանց առաջարկում ենք մեկ այլ հեղինակի խորհուրդները: Լինում է հոգևոր պահք, որը ենթադրում է հրաժարում եսասիրական և իշխանատենչ գործողություններից, հրաժարում մարդկային փառասիրական նկրտումներից: Այս պահքն առանձնապես անհրաժեշտ է հասարակական գործիչներին: Այս պահքի կարգն է՝ մի փնտրիր իշխանություն և առավելություն, եթե կոչվել ես իշխանության և ղեկավարման, այլ նայիր դրանց որպես ծառայություն: Ամեն անգամ, երբ հարկ է լինում մարդկանց անտեղի հիշեցնել քո մասին, ցույց տալ քո առավելություններն ու ուժը, զսպիր քեզ: Մի տրվիր երեսպաշտությանը: Մտավոր պահքը հրաժարումն է մտքի միակողմանի գործողությունից, վերջ չունեցող անիմաստ ու աննպատակ հարցերի առաջադրումից: Սա անհրաժեշտ է գիտության մարդկանց, որոնք մոռացության են տվել Հերակլիտի խոսքերը. «Բազմիմացությունը խելք չի սովորեցնում»: Մտավոր այս պահքի պայմանն է՝ մի փնտրիր գիտելիքներ հանուն գիտելիքների, որոնք անիմաստ են մարդկանց և Աստծո գործի համար: Մի փնտրիր գաղափարական նորույթներ ու յուրօրինակություններ: Չափից ավելի մեծ արժեք մի տուր գիտական իմացություններին, քանզի գիտությունն ունի սահման՝ կապված գիտնականների կանխակարծ մտքերի և գիտական ոչ լիարժեք նյութի հետ: Այս շրջանում հատկապես մտավոր գործունեությունդ ենթարկիր բարոյական պահանջներին:

ՊԱՀՈՑ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պահքի հետ կապված մեր կենցաղում երբեմն տարբեր խնդիրներ են առաջանում, և շատեր չեն կարողանում կողմնորոշվել, թե ինչպես վարվեն: Օրինակ՝ երբ պահքի մեջ ենք, և հյուր է տուն գալիս, արդյո՞ք կարող ենք նրան սեղանակից լինել և ուտել պահքին ոչ հատուկ կերակուրներ: Կամ երբ Ամանորին, որ Ծննդյան պահքի շրջանում է լինում, գնում ենք մարդկանց տները և շնորհավորում Նոր Տարին, ու մեզ հյուրասիրում են, կարո՞ղ ենք արդյոք պահքի պատճառով մերժել հյուրասիրությունը: Այսպիսի խնդրիների քրիստոնյաները բախվել են դեռևս քրիստոնեության

վաղ շրջաններում: Այդ իսկ պատճառով գումարված եկեղեցական ժողովները փորձել են նաև պատասխան տալ այսպիսի հարցերի: Օրինակ՝ 6-րդ դարում՝ 554 թվականին, գումարված Դվինի երկրորդ եկեղեցական ժողովն անդրադարձել է նաև նման հարցերի և իր 29-րդ կանոնով հրահանգել. «Ոչ ոք չհամարձակվի քառասնորդական կամ Առաջավորաց պահքը լուծել հյուրերի պատճառով», այսինքն՝ այս կանոնի հստակ արգելքը վերաբերում է Առաջավորաց պահքին և Մեծ Պահքին: Սակայն երբեմն պատահում է, որ մեզ հյուրասիրող մարդիկ մեծ խանդավառությամբ են սպասել մեզ կամ էլ գիտենք, որ նյութական սուղ միջոցներով ինչ-որ տեղից որևէ բան են ճարել, հյուրասիրություն կազմակերպել: Ինչպե՞ս վարվենք նման դեպքերում, քանի որ այսպիսի հանգամանքում չուտելը, մեկ մեղքից հեռացնելով, միևնույն ժամանակ երկու մեղք է բերում. նախ՝ բոլորի առջև հայտարարում ենք մեր պահեցողությունը, ինչը խստիվ արգելեց Քրիստոս (Մատթ. 5.17-18), և երկրորդ՝ վիրավորում ենք դիմացինին՝ մերժելով հյուրասիրությունը: Այսպիսի առանձնահատուկ դեպքերը ցույց են տալիս, որ մենք միշտ պետք է հավատարիմ մնանք օրենքի ոգուն և ոչ թե կառչած լինենք օրենքի տառից, քանզի «օրենքը, որ գիր է, սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում» (Բ Կորնթ. 3.6): Սակայն եթե բոլոր մարդիկ ճշմարիտ քրիստոնեական կյանք վարեին, հետևեին Եկեղեցու կարգած բոլոր կանոններին, ապա այսպիսի խնդիրներ շատ քիչ կլինեին:

ՀԻՍՆԱԿԱՑ ՊԱՀՔ ԵՎ ԲՈՒԴԱՅԱԿԱՆ ՊԱՀԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Տարվա մեջ պահքի երեք առանձին հիսուն օրերով՝ երեք հիսնյակներով, Եկեղեցին պատվում է երեք մեծ տոներ՝ Սուրբ Ծնունդը, Սուրբ Հարությունը և Պայծառակերպությունը՝ Վարդավառը: Առաջին հիսնյակը՝ Սուրբ Ծնունդին նախորդող Հիսնակաց պահքը, խորհրդանշում է նահապետների աստվածպաշտությունը մինչև Մովսես: Երկրորդ հիսնյակը՝ Մեծ Պահքի շրջանը, խորհրդանշում է մարգարեների աստվածպաշտությունը մինչև Հովհաննես Մկրտիչ, իսկ երրորդ հիսնյակը՝ Վարդավառին նախորդող հիսուն օրերը, խորհրդանշում է քրիստոնյաների աստվածպաշտությունը մինչև Տիրոջ Երկրորդ գալուստը: Ծննդյան հիսնյակը խորհրդա-նշում է նաև մեր այս կյանքից ելնելը և ծնվելը հոգևոր աշխարհում, Հարության հիսնյակը՝ մեր հարությունը, իսկ Վարդավառի հիսնյակը՝ պայծառ փառքով հավատացյալների երկինք վերանալը: Սուրբ Ծննդյան հիսնյակի մեջ մտնում են՝ Հիսնյակի շաբաթապահքը, վերջին շաբաթը՝ Ծննդյան շաբաթապահքը, և այդ միջակայքում գտնվող Սուրբ Հակոբի շաբաթապահքը:

Երկրորդ հիսնյակը Զատկին նախորդող Մեծ պահքի շրջանն է և կոչվում է «Աղուհացից»: Այս շրջանում և՛ աշխարհականներին, և՛ հոգևորականներին թելադրվում է պահել ամբողջ հիսնյակը: Իսկ երրորդ հիսնյակը Վարդավառին նախորդող հիսուն օրերն են, որոնցից այժմ միայն երեք շաբաթն ենք պահում՝ առաջին՝ Եղիական, միջին՝ Լուսավորչի և վերջին՝ Վարդավառի:

Մեծ տարբերություն կա մեր և այլ կրոնների պահեցողության միջև: Օրինակ՝ բուդդայական պահքն իրականում ոչ թե պահեցողություն է, այլ բուսակերութուն: Բուդդայականության հետևորդներին միս ուտելն արգելված է այն պատճառով, որ ըստ բուդդայական ուսուցման՝ մարդիկ մեռնելուց հետո վերամարմնավորվում են այլ մարդկանց կամ կենդանիների մարմիններում, որի համար էլ միս ուտողն անզգուշաբար կարող է ուտել վերամարմնավորված իր նախնիներից մեկին: Սակայն բուդդայականությունն ուսուցանում է նաև, որ մահվանից հետո մարդը վերամարմնավորվում է նաև բույսերի մեջ, և ոչ ոք չի կարող երաշխավորել, որ իր նախնիներից որևէ մեկը կանաչի չի դարձել: Եվ բնական է, որ այդ կրոնը չի զարգացնում այս տեսակետը, որովհետև այդ դեպքում բուդդայականներն արդեն ստիպված սովամահ պիտի լինեին:

Աստվածաշունչը, ընդհակառակը, արգելք չի դնում մսակերության համար՝ նշելով, որ միս ուտելը կարգել է Աստված (Ծնն. 9.3): Թեև հիշատակություն չկա, թե Քրիստոս ինչ կերավ Կանայի հարսանիքի ժամանակ, սակայն միանգամայն հասկանալի է, որ օգտվել է հյուրասիրությունից, իսկ հարսանիքների ժամանակ հիմնականում մսեղեն կերակուրներ են լինում: Քրիստոս Ինքը պատվիրեց Վերջին Ընթրիքը պատրաստել, ըստ սովորության հրեական զատիկը՝ եգիպտական գերությունից ազատվելու հիշատակությունը տոնելու համար, որի հատուկ կերակուրը, աստվածային պատվերի համաձայն, գառան կամ ուլի միսն էր (Ելք 12.3-5): Նաև Քրիստոս Ինքն էր Իր մասին ասում, որ ուտում է և խմում, որի համար էլ իր մասին ասում են՝ ահա ուտող և խմող մարդ (Մատթ. 11.19): Պողոս առաքյալը ոչ միայն անընդունելի չի համարում միս ուտելը, այլ նույնիսկ թույլատրելի է համարում անգամ կուռքերին զոհաբերված միսը ճաշակելը՝ որպես պարզ ուտելիք, բայց պատվիրում է հրաժարվել դրանից, եթե նորադարձ քրիստոնյային գայթակղեցնելու վտանգ կա (Ա Կորնթ. 8.8-13): Քրիստոս ևս ասում է. «Լսեցե՛ք և իմացե՛ք. ոչ թե՝ ինչ որ բերանով է մտնում, ա՛յն է պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է բերանից՝ ա՛յն է պղծում մարդուն» (Մատթ. 15.10-11), այսինքն՝ չար, վատ խոսքերը:

Մեր այսօրվա իրականության մեջ քրիստոնեական երկրներ են ներթափանցում արևելյան կրոններին հատուկ գաղափարներ, և նույնիսկ հե-

ռուստատեսությամբ հայտարարություններ են լինում, թե բուդդայական կենցաղավարությունը, մեդիտացիան շատ օգտակար է, և այն կարող են կիրառել նաև քրիստոնյաները: Պողոս առաքյալն ասում է. «Եթե նույնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ավելին, քան այն, որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովյա՛լ լինի» (Գաղ. 1.8): Հետևաբար, ըստ առաքյալի խոսքի, նզովյալ են բոլոր նրանք, ովքեր քրիստոնյաներին այլ հավատալիք կամ կրոն են ուսուցանում: Նաև առաքյալն ասում է, որ Աստված նախասահմանությամբ ընտրեց մեզ (Հռ. 8.28-30, Եփես. 1.12, Ա Թեսաղ. 5.9, Բ Տիմ. 1.9): Եվ մենք գոհություն պետք է հայտնենք Աստծուն, որ Իր նախախնամությամբ ծնվել ենք քրիստոնյա երկրում և պետք է արժևորենք մեզ տրված այդ պարգևը՝ իրապես հետևելով ուսուցումներին ճշմարիտ կրոնի, որն է քրիստոնեությունը:

ԽՄԻՉՔ ԵՎ ԽՆՁՈՒՅՔ

Տարբեր նշանակալի առիթներով տոնական սեղաններին լինում են ուտելիքներ, ինչպես նաև զովացուցիչ և ոգելից, զվարթացուցիչ խմիչքներ: Որոշ աղանդներ մոլորեցնում են իրենց միամիտ հետևորդներին՝ ասելով, թե դատապարտելի է սեղաններին խմիչքներ դնելը, իսկ ոմանք էլ ավելի ծայրահեղության գնալով՝ արգելում են անգամ տոնական որևէ առիթ նշելը: Սակայն այդպիսի սխալ ուսուցումները հիմնված չեն Աստվածաշնչի վրա: Քրիստոս Ինքը պատվիրեց առաքյալներին, որ զատկական ընթրիքը պատրաստեն (Մատթ. 26.19, Մարկ. 14.16, Ղուկ. 22.8, 13), և այդ ժամանակ, ըստ հինկտակարանյան պատվերի (Ելք 12.3-5), սեղանին կար պատրաստված գառ և խմիչք, որից օգտվեցին Քրիստոս և առաքյալները: Քրիստոս Իր ներկայությամբ պատվեց Կանայի հարսանիքը (Հովհ. 2.1-3)՝ դրանով ցույց տալով, որ դատապարտելի չէ և ընդունելի է նման առիթներով խնջույքների կազմակերպումը: Քրիստոս կերավ ու նաև խմեց ոչ միայն Իր երկրային կյանքի ընթացքում, այլ նաև Իր Հարությունից հետո (Ղուկ. 24.42), որի մասին Գործք Առաքելոցում հաղորդում է Պետրոս առաքյալը. «Կերանք ու խմեցինք նրա հետ մեռելներից Նրա հարություն առնելուց հետո» (10.41): Իսկ սեղանին խմիչք դնելը ևս կատարում ենք ըստ Աստվածաշնչի: Երբ Կանայի հարսանիքում խմիչքը պակասեց, Քրիստոս հրաշք գործեց՝ ջուրը գինի դարձրեց, որպեսզի հյուրասիրության նպատակով հյուրերի համար սեղանին խմիչք լինի (Հովհ. 2.1-11): Անշուշտ, այս ամենը նշելով՝ չպետք է մոռանանք, որ խիստ դատապարտելի է որկրամոլությունը, շվայտությունը, հարբեցողությունը:

ՊԱՀՔ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒԹՈՒՆ

Սուրբ Սարգսի տոնի օրվան սպասում են հատկապես դեռ չամուսնացած երիտասարդներն ու երիտասարդուհիները, որովհետև այդ օրը սովորություն է աղի բլիթ պատրաստել և ուտել՝ երազում իմանալու համար, թե ով է ապագա հարսնացուն կամ փեսացուն: Թե երբվանից է սկսվել այս սովորույթը, հստակ հայտնի չէ: Շատ հավանական է նաև, որ այն հին հեթանոսական գուշակության արարողությունների մաս լինի, որը մուտք է գործել քրիստոնեության մեջ: Աղը և հացը հավանաբար կապվում են պահքի հետ, որի շրջանը երբեմն կոչվում է նաև աղուհացի օրեր: Այսօր աղաբլիթի հետ կապված արարողությունը երիտասարդների կողմից դիտվում է որպես գուշակություն: Սուրբ Եղիշե պատմիչը հայտնում է, որ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը և այլ հոգևորականներ, ինչպես նաև քրիս-տոնյաները պահքի և աղոթքի մեջ էին՝ իրենց անձերը հոգեսպան վնասներից հեռու պահելու համար: Մինչդեռ այսօրվա քրիստոնյաները հաճախ անգիտությամբ պահքին կամ տոներին կապում են նաև գուշակություններ, որոնց հետևելը վայել չէ քրիստոնյաներին: Կա սատանայապաշտության գիտակցական և ոչ գիտակցական ձև: Իրավամբ է արտահայտված այն տեսակետը, որ մոգությամբ, աստղագուշակությամբ, ձեռնագուշակությամբ կամ որևէ այլ գուշակությամբ զբաղվելը մարդուն ներքաշում է սատանայական էներգիաների ոլորտը, որը դուրս է աստվածային լույսի սահմաններից, և այստեղից միայն հրաշքը կարող է փրկել մարդուն:

Այդպիսին է նաև այսպես կոչված ժողովրդական որոշ բժիշկների գործելակերպը, որոնք տարբեր միջոցներով, նաև ինչ-որ աղոթքներով բուժում են մարդկանց և բժշկության վերջին փուլի համար մարդուն ուղարկում են եկեղեցի՝ մկրտվելու, որովհետև, նրանց պնդումով, առանց դրա չի կարելի շարունակել բժշկությունը: Ցավոք, այսպիսի դեպքեր նաև մեզ մոտ են լինում: Եվ պատահում է, որ մկրտության եկած ընտանիքի անդամները անկեղծորեն խոստովանում են, որ իրենց մկրտության է ուղարկել այսպես կոչված բժիշկը բուժման հաջորդ փուլին անցնելու համար: Սա հասկանալի է, որովհետև սատանային շատ ավելի ցանկալի է գայթակղել մկրտված մարդու, քան թե չմկրտվածին: Այսպիսին են նաև որոշ ժողովրդական կոչվող բուժման տարօրինակ միջոցներ, որոնք գործածելուց քրիստոնյաներին խորհուրդ ենք տալիս հեռու մնալ:

Վերադառնանք աղաբլիթին: Աստվածաշնչում ոչ մի տեղ չենք հանդիպում, որ Աստծուն հավատարիմ մարդը գուշակության դիմեր՝ իմանալու համար իր ապագա կողակցին: Սակայն Իսահակի համար կին ընտրելու մեկնած Աբրահամի ծառան աղոթում է, որպեսզի Աստված իրեն հասկացնի, թե որն է այն աղջիկը, որին ինքը պիտի ընտրեր Իսահակի

համար (Ծննդ. 24.12-14): Հետևաբար, եթե հետաքրքրված ենք այս հարցով, մենք կարող ենք աղոթել, սակայն, ըստ Աստվածաշնչի, ով որ գուշակություն է անում, պիղծ է Աստծո առաջ: Այս մասին հենց Աստված Ինքն է ասում իսրայելցիներին. «Ձեր մեջ թող չգտնվի այնպիսի մեկը, որը ... կախարդությամբ կամ գուշակությամբ զբաղվի, կանխագուշակումներ անի, ... ոգեհարցությամբ զբաղվի, որովհետև Տիրոջ համար պիղծ է նա, ով զբաղվում է այդպիսի բաներով. ... մարդիկ հավատում են հմայություններին ու կախարդություններին, բայց քո Տեր Աստվածը քեզ այդպես վարվելու հրաման չի տվել» (Բ Օրինաց 18.10-14):

ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Որևէ բան լավ է դառնում արժանիքով, իսկ արժանիքը ոչնչից չի ստեղծվում, այլ՝ կարգավորությունից և չափից: Նույնպես մարդկային հոգին արժանիք է ձեռք բերում կարգավորության և չափավորության շնորհիվ, որոնք հաստատվում են մարդու մեջ պահքի միջոցով: Մենք միշտ խուսափում ենք զեխությունից և անմաքրությունից՝ մարմնական հիվանդություններից հեռու լինելու համար: Նույն կերպ պետք է խուսափենք հոգևոր անմաքրությունից՝ հոգևոր հիվանդությունների և վշտերի մեջ չընկնելու համար:

Մարդկային հասարակության զարգացման արգելքներից մեկը մարդկային վատթար սովորությունն է, որով մեծամասնությունը լսում է ոչ թե նրանց, ովքեր ավելի խելացի են, քան մյուսները, այլ ունկնդրում է նրանց, ովքեր ամենից բարձր են խոսում: Օրինակ՝ Եկեղեցին առ Աստված հավատքով առաքինի կյանքի պայմաններն է քարոզում, սակայն հեռուստատեսային ծրագրերը, շոուները, ֆիլմերը և նույնիսկ փողոցներում տեղադրված գովազդային հսկա պաստառները մեղսալի կյանքն են քարոզում: Դրանք տարբեր բովանդակություններ ունենալով՝ միևնույն ժամանակ մեկ ընդհանուր գաղափար են արտահայտում, որն է՝ հաճույք վայելիր, նույնիսկ եթե այն մեղսալի է: Իսկ քրիստոնեությունը հորդորում է հեռու լինել մեղավոր հաճույքներից՝ ապրելով օգտակար չափավորության և ողջախոհության մեջ:

Ասում են, որ Պլատոնի դպրոցի՝ Ակադեմիայի վերևում գրված էր. «Նա, ով երկրաչափություն չգիտի, թող ներս չմտնի»: Եվ նրանք, ովքեր երկրաչափություն գիտեին, մտնելով այդ դպրոցը՝ մեծ իմաստության հաճույքն էին վայելում: Նույն կերպ խորհրդանշական կերպով կարող ենք ասել, որ Երկնքի Արքայության դարպասների վերևում գրված է լինելու. «Նա, ով ողջախոհություն, չափավորություն, ժուժկալություն չի իմացել իր կյանքում, չի կարող ներս մտնել»: Հունական իմաստուն ասացվածքն

ասում է. «Չափը լավագույնն է» կամ «Ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ»: Նույնիսկ երաժշտությունն իր հատուկ չափն ունի, որը կորցնելով՝ երաժշտությունը կորցնում է նաև իր ներդաշնակությունը՝ վերածվելով աղմուկի: Նույն կերպ հոգին այլաբանորեն ասված աղմուկի է վերածվում, եթե չունի չափավորություն և պահեցողություն:

ՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Փորձության մասին Սուրբ Գրիգոր Տաթևացին նշում է, որ փորձություն է համարվում նաև այն, երբ մարդու աչքը հանկարծակի մեղավոր բաներ է տեսնում, կամ ականջը մեղավոր բաներ լսում: Եվ ժամանակակից եկեղեցական հեղինակներից մեկն ասում է, որ մեր օրերում մարդը այս հանկարծակի փորձության մեջ է ընկնում՝ դիտելով հեռուստաֆիլմեր կամ այլ ներկայացումներ, որոնցում մեղավոր բաներ է տեսնում և մեղսալի խոսքեր լսում: Մեր հռչակավոր Կաթոսիկոսներից Սուրբ Ներսես Շնորհալին իր «Հաւատով խոստովանիմք» աղոթքներից մեկում խնդրում է Աստծո պահպանությունը իր աչքերին՝ չնայելու արատավոր, մեղսահարույց բաների, իր ականջներին՝ չլսելու չար խոսքեր:

Գիտենք, որ պահքը միայն որոշ տեսակի կերակուրներից հրաժարումը չէ, այլ նաև վատ սովորույթներից ու կրքերից հրաժարումը: Մարդկային վատ սովորույթներից մեկն է հետաքրքրության կամ հաճույքի համար սրա, նրա հագուստներին կամ տեսքին նայելը: Ոմանք ասում են՝ ի՞նչ կլինի, որ միայն նայեմ: Բայց քեզ վրա հուսալով՝ մեղքի մեջ կընկնես, կանայք և տղամարդիկ կտարվեն բամբասկոտությամբ կամ բղջախոհությամբ: Հովհան Ոսկեբերանն ասում է, որ ինչպես երեխային, որն առանց վատ մտադրության դանակ է բռնել, պատժում ենք, որովհետև առանց վատ մտադրության իր արարքը հետո կարող է վնասի բերել, նույնպես և Տերը սահմանափակում դրեց նայելու մեջ: «Ով սիրում է գեղեցիկ դեմքեր,- ասում է Հովհան Ոսկեբերանը,- նա ինքն է ավելի շատ իր մեջ կրքի կրակ վառում և շուտով շնանում»: Իհարկե, նայելու մասին Ավետարանում միայն տղամարդուն ուղղված պատվեր կա (Մատթ. 5.28), սակայն Քրիստոս կնոջը պատվերներ չի տալիս, որովհետև սեռի տարբերություն չի դնում, քանի որ մարդը և կինը մի մարմին են, և պատվեր տալով գլխին՝ պատվեր է տալիս նաև ողջ մարմնին:

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԻՐԱԿԻՆԵՐ

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է արտաքսման կիրակի՝ հիշեցնելով առաջին մարդկանց՝ Ադամի և Եվայի արտաքսումը դրախտից (Ծննդ. 3.22-24): Արտաքսման կիրակիի նախորդ կիրակին կոչվում է Բուն Բարեկենդան՝ բարի կենդանություն, ուրախություն բառից, որը հիշատակն է դրախտում առաջին մարդկանց երանության:

Դրախտը իրական դրախտ էր ոչ թե այն գեղեցիկ պարտեզի առկայությամբ (Ծննդ. 2.8-10), ուր ապրում էին առաջին մարդիկ, այլ՝ առաջին հերթին աստվածային ներկայությամբ, այդ ներկայությունը մարդկանց կողմից վայելելու և դրանով երանություն զգալու իրողությամբ: Դրախտից արտաքսելով մարդկանց՝ Աստված հրամայեց քերովբեներին ու բոցեղեն սրին շուրջանակի հսկել դեպի կենաց ծառը տանող ճանապարհները (Ծննդ. 3.24) և անիծեց Ադամին՝ ասելով. «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը, և դու դաշտային բույսերով սնվես: Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդ. 3.17-19): Քրիստոսի փրկագործությամբ վերացվեց անեծքը, և մարդկության առջև բացվեց դրախտի, Երկնքի Արքայության ճանապարհը: Վերջին ընթրիքից հետո Քրիստոս աղոթեց Գեթսեմանի պարտեզում, որպեսզի պարտեզից վտարված Ադամին և նրա սերնդին դրախտի պարտեզ վերադարձնի: Ղուկասի ավետարանում նշվում է, որ աղոթքի ժամանակ «Նրանից քրտինքը հոսում էր արյան կաթիլների նման՝ շիթ-շիթ գետին թափվելով» (22.44): Քրիստոս այսպես քրտնեց՝ բուժելու Ադամին այն անեծքից, որով ասվեց, թե՝ քո երեսի քրտինքով պիտի ուտես քո հացը (Ծննդ. 3.19): Քրիստոս աղոթելիս ասում էր. «Այս բաժակը Ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թե Իմ կամքը, այլ Քո՛նը թող լինի» (Ղուկ. 22.43): Մարդուն հատուկ է մահից վախենալը: Սակայն այս արարքով Քրիստոս դարձյալ վարվեց Ադամի անհնազանդությանը հակառակ: Ադամը մերժեց Աստծո կամքը և կատարեց սատանայի կամքը, մինչդեռ Քրիստոս մերժեց մարմնի կամքը՝ հաստատելու համար մարմնի Արարչի կամքը: Աստծո կողմից մարդկանց արտաքսելը աստվածային խստասրտություն չէ, այլ կրկին մարդկանց հանդեպ սիրո արտահայտություն, ինչպես որ ծնողը պատժում է երեխային՝ միևնույն ժամանակ սիրելով նրան և ջանալով ճիշտ ուղու վրա կանգնեցնել: Աստվածաշունչը ևս ասում է. «Տերը ում սիրում՝ նրան խրատում է և պատժում նրան, ում ընդունում է որպես որդի» (Առակներ 3.12): Օրինակ՝ կինը, որ անտեսեց Աստծո կամքը, զրկումով բերվեց ճշմարիտ աստվածճանաչողության և իր սպանված որդու կորստյան համար ոչ թե դժգոհեց Աստծուց, այլ հետո գոհություն հայտ-

նեց, որ Աստված իր մեռած որդու փոխարեն իրեն նոր որդի տվեց (Ծննդ. 4.25):

Պահքի մեջ մենք պահում ենք այն պատվիրանը, որ խախտեցին առաջին մարդիկ (Ծննդ. 2.16.17), այսինքն՝ չուտելու պատվիրանը, որով հրաժարվում ենք որոշ տեսակի կերակուրներից՝ ի նպաստ հոգևորը զորացնելու և աստվածային կամքի կատարման մեջ հաստատվելու: Աստված տեսնելով, որ ուտելու պատճառով մարդիկ զրկվեցին դրախտից, այնպես կարգեց, որ նույն ուտելու միջոցով, այսինքն՝ Սուրբ Հաղորդությունը ճաշակելով վերարժանանանք դրախտային երանության և հավիտենական կյանքի, ինչպես որ ասում է Հիսուս Քրիստոս. «Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կապրի. և այն հացը, որ Ես կտամ, Իմ Մարմինն է, որը Ես կտամ, որպեսզի աշխարհը կյանք ունենա» (Հովհ. 6.51-52):

ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի երրորդ կիրակին կոչվում է Անառակի կիրակի՝ այդ օրն ընթերցվող Անառակ որդու մասին առակի անունով (Ղուկ. 15.11-32): Մեծահարուստի երկու որդիներից կրտսերը հորից պահանջում է իրեն հասանելիք ժառանգությունը, գնում հեռու երկիր, վատնում ունեցվածքը, ընկնում աղքատության մեջ և տարածված սովի պատճառով ստիպված է լինում մի քաղաքացու ագարակում խոզեր արածեցնել: Այս թշվառության մեջ նա հիշում է, որ նույնիսկ ծառաներն իր հոր տանը ավելի լավ կացության մեջ են, և որոշում է վերադառնալ հոր մոտ և ներողություն խնդրել: Հայրը, տեսնելով վերադարձող որդուն, վազում է ընդառաջ, փարվում որդու պարանոցին և հրահանգում նրան հագցնել նախկին պատմուճանը, կոշիկներ և մատանի դնել մատին:

Ըստ արտահայտված մի կարծիքի՝ առակի ավագ որդին խորհրդանշում է հրեաներին, իսկ կրտսերը՝ հեթանոսներին, ովքեր հետո դարձան ճշմարիտ աստվածպաշտության: Սակայն այս կարծիքը հիմնավոր չէ, որովհետև առակում հայրն ասում է ավագ որդուն. «Որդյա՛կ, դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ, որ իմն է, քոնն է» (31), իսկ պատմությունից գիտենք, որ հրեաները միշտ չեղան Աստծո հետ, այլ հաճախ շեղվեցին Աստծո ուղենշած ճանապարհներից: Ավելի ընդունելի է այն մեկնությունը, ըստ որի, ավագ որդին խորհրդանշում է աղոթքով, առաքինի կյանքով ապրող, սակայն հպարտ քրիստոնյաներին, ովքեր հակակրանքով են վերաբերվում մեղքերով աղտոտվածներին: Ավագ եղբոր արհամարհանքը երևաց նաև նրա խոսքերից, երբ եղբոր մասին խոսելով՝ հորն ա-

սաց՝ քո այդ որդին (30), փոխանակ ասելու՝ իմ եղբայրը: Այստեղից պետք է դաս քաղենք՝ սիրով ու հարգանքով լինելու բոլորի հետ:

Առակում ամեն ինչ իմաստալի խորհրդանիշ է: Մեծահարուստ հայրը Աստվածն է, հարստությունը՝ առաքինության հարստությունները, որ տրվեցին մարդկանց, սակայն մարդիկ կորցրեցին առաքինությունները՝ մեղքերի մեջ ընկնելով: Առակում հիշվող սովը Աստծո խոսքը լսելու սովն է, քաղաքացին, ում մոտ աշխատում էր անառակ որդին, սատանան է: Ագարակը, որտեղ խոզեր էին արածեցնում, սատանայի ագարակն է, իսկ խոզերը՝ մարմնամոլները: Անառակ որդու վերադարձը խորհրդանշում է մեղավոր մարդու զղջումը, հոր կողմից ընդունումը՝ Աստծո կողմից մեղավորներին ներելը: Առակի մեջ հիշվող մատանին և կոշիկները, որ տրվեցին կրտսեր որդուն, ազատ մարդու նշանն են, քանի որ ստրուկները բոբիկ էին լինում: Կոշիկները նաև հիշեցնում են այն փոխաբերական կոշիկները, որ առաքյալը պատվիրում է հագնել Ավետարանի քարոզչության համար (Եփ. 6.15):

Սակայն ինչու՞ հայրը թույլ տվեց, որ որդին հեռանա և փորձության մեջ ընկնի, ինչու՞ է Աստված մարդկանց փորձության մեջ գցում: Այս հարցում Աստծո հանդեպ մեղադրանք հնչեցնողները պետք է փոխեն իրենց կարծիքը, քանի որ Աստված միշտ վարվում է իբրև բարի, քաջ հովիվ, ում հետ իրեն համեմատեց Քրիստոս (Հովհ. 10.11-16): Երբ հովիվը ձայնում է, ոչխարները հավաքվում են նրա շուրջը: Սակայն երբ հովիվը տեսնում է, որ հոտից ոմանք մոտենում են անտառին, որտեղ նրանց գայլերի հարձակման և այլ պատճառներով մահ է սպասում, բաց է թողնում շներին, որոնք հեռացած ոչխարներին հալածելով՝ ետ են բերում խաղաղ ու ապահով վայր:

Առանց Աստծո թույլտվության սատանան չի կարող դիպչել մարդուն, ինչպես երևում է գերգեսացի դիվահարների դրվագից, երբ չար ոգիները Քրիստոսից թույլտվություն են խնդրում անգամ խոզերի մեջ մտնելու համար (Մատթ. 8.31): Աստված իր կանչերը մեզ է ուղղում հոգևորականների քարոզների, Սուրբ Գրքի միջոցով, եկեղեցու աղոթքներով ու պատգամներով, և երբ չենք լսում, թույլ է տալիս, որ փորձությունները վրա հասնեն մարդկանց, ինչպես վերոնշյալ օրինակում հովիվն է բաց թողնում հալածող շներին: Եվ ըստ Սուրբ Հովհան Ոսկեբերանի խրատի՝ նեղության մեջ դժգոհություն արտահայտելու փոխարեն պետք է գոհություն և փառաբանություն հայտնել Աստծուն, որից չարը կփախչի, և Աստծո օգնությունը շուտով կգա:

ԿՐԿԻՆ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ

Փոխաբերական իմաստով անառակ որդիներ ենք մենք ամենքս, որովհետև մեր կյանքի որոշ ժամանակ Աստծո հետ ենք, հետո մեղքերով հեռանում ենք և կրկին ետ դառնում զղջումով: Անառակ որդի է մարդկությունը, ինչպես որ կորած ոչխարի մասին առակի մեջ է ակնարկվում (Մատթ. 18.12-14, Ղուկ. 15.3-7): Հարյուր ոչխար ունեցող մարդը, կորցնելով իր ոչխարներից մեկին, թողնում է իննսունիններին և գնում այդ մեկի հետևից: Ըստ մեկնությունների՝ կորուսյալ ոչխարը մարդկային կուրուսյալ հոգին է, իննսունինները՝ հրեշտակների երկնային դասերը, որոնց Քրիստոս թողեց և աշխարհ եկավ՝ փրկելու մարդկային կորած հոգին:

Անառակի կիրակին նշվում է պահքի շրջանում: Անառակ որդին էլ իր կյանքի ճգնաժամային շրջանում հեռու էր պարարտ կերակուրներից, որովհետև իր ունեցվածքը վատնելով՝ աղքատացավ և սկսեց խոզեր արածեցնել մի քաղաքացու մոտ: Նա այնքան քաղցած էր, որ ցանկանում էր ուտել նույնիսկ խոզերին տրվող կերակուրը, բայց նրան ոչ ոք չէր տալիս (Ղուկ. 15.15-16): Սակայն անառակ որդու՝ պարարտ կերակուրներ չուտելը չի կարելի պահք համարել, որովհետև ստիպողաբար կամ հանգամանքների բերումով պահքը պահեցողություն չի համարվում: Առաքինագործությունների համար ահնրաժեշտ է ճշմարիտ դիտավորություն, առանց որի արարքն արժեք չի ունենում: Օրինակ՝ ծառերը միշտ ողորմություն են անում, այլև ընտանի շատ անասուններ հրաժարվում են միս ուտելուց, և ինչպես նաև Սուրբ Գրիգոր Տաթևացին է ասում, էշերն էլ մշտական պահքի մեջ են, այսինքն՝ ամեն օր խոտ են ուտում, բայց դա իհարկե պահեցողություն չէ: Այլ ճշմարիտ պահեցողությունն այն է, երբ պահք ենք պահում հատուկ մտադրությամբ, ապաշխարության, ինքնամաքրման, բարիով կատարելագործվելու հոգևոր նպատակի համար:

Երբ որդին զղջումով վերադառնում էր հոր մոտ, հայրը նրան հեռվից տեսավ, ընդառաջ վազեց և փարվեց նրա պարանոցին (Ղուկ. 15.20): Սրանով Աստված մեզ ասում է. «Ինչքան որ կարող ես, արի դեպի Ինձ, իսկ մնացած ճանապարհը Ես Ինքս կգամ դեպի քեզ»: Հայրը հեռվից տեսավ իր որդուն: Հեռվից տեսնելու մասին նշենք հետևյալը: Ընդհանրապես առարկաները փոխաբերական իմաստով սիրում են, որ իրենց հեռվից նայեն: Եվ մենք, երբ նայում ենք մի առարկայի, շատ սերտ չենք մոտենում դրան, որովհետև նայելու համար հարմար է դիտել որոշակի հեռավորությունից: Այսպես էլ մարդիկ առարկաների նման սիրում են, որ իրենց դիտեն որոշակի հեռավորությունից: Ոչ ոք չի սիրում որ իր նեղ անձնականի մեջ այլ մարդիկ մտնեն, որովհետև մեր խիստ անձնական կյանքում կան նաև ամոթալի մտքեր, վարմունքներ ու գործեր, և մեզ համար ամոթ է այդ մասին հայտնի դարձնելը: Եվ ահա պահքը մի գեղեցիկ

առիթ է, որպեսզի զղջումով, խոստովանությամբ ու ապաշխարությամբ կարողանանք զղջման արտասուքներով մաքրել մեր մեղքերը:

ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի չորրորդ կիրակին կոչվում է Տնտեսի կիրակի: Այս օրն ընթերցվում է Անիրավ տնտեսի մասին առակը (Ղուկ. 1-8):

Քրիստոս հաճախ մարդկանց ուսուցանում էր առակներով: Երբ առաքյալները Տիրոջը հարցրեցին. «Ինչո՞ւ ես առակներով խոսում նրանց հետ», Քրիստոս պատասխանեց և ասաց նրանց. «Քանի որ ձե՛զ է տրված իմանալ Երկնքի Արքայության խորհուրդները, իսկ նրանց տրված չէ» (Մատթ. 13.10-11): Իր քարոզչության սկզբում Քրիստոս խոսում էր ավելի պարզ, առանց առակների, ինչպես օրինակ Լեռան քարոզը (Մատթ. 5-7), որտեղ պարզությամբ ու հստակությամբ ասված է խոսքը: Բայց դրանից հետո Քրիստոս սկսեց առակներով խոսել, որպեսզի նաև կատարվի մարգարեի խոսքը, ինչպես Քրիստոս Ինքն է նշում. «Եվ նրանց վրա կատարվում է Եսայու մարգարեությունը, որ ասում է՝ պիտի լսեք, պիտի լսեք ու պիտի չիմանաք, պիտի նայեք, պիտի նայեք ու պիտի չտեսնեք. որովհետև այս ժողովրդի սիրտը կարծրացավ, և իրենց ականջներով ծանր են լսում. և փակեցին իրենց աչքերը, որպեսզի երբեք աչքերով չտեսնեն ու ականջներով չլսեն և սրտով չիմանան և դարձի չգան, ու Ես նրանց չբժշկեմ» (Մատթ. 13.14-16, Եսայի 6.9): Քրիստոս նաև ասում էր. «Նրանց հետ առակներով եմ խոսում նրա համար, որ նայում են և չեն տեսնում, լսում են և չեն իմանում ու չեն հասկանում» (Մատթ. 13.13): Պատճառն այն էր, որ շատ մարդիկ անտեսում էին ուսուցումը՝ առավել հետաքրքրված հրաշքներով կամ արտասովոր իրադարձություններով: Օրինակ՝ երբ Քրիստոս պատմեց վերջացրեց Սերմնացանի առակը, միայն առաքյալները մոտեցան և հարցրեցին, թե որն է առակի իմաստը, մինչդեռ ժողովրդից ոչ ոք չմոտեցավ (Մատթ. 13.36):

Անիրավ տնտեսի առակը պատմում է մի տնտեսի մասին, որի անիրավությանը տեղյակ դառնալով՝ նրան աշխատանքից ազատելուց առաջ Տերը հաշիվ է պահանջում: Իսկ տնտեսը մարդկանց բարեհաճությանն արժանանալու և նրանց հարկերի տակ ընդունելություն գտնելու համար տիրոջ պարտապաններին զիջում է նրանց պարտքի մի մասը, որի համար տերը տնտեսին գովում է: Զարմանալի է, որ մեծահարուստ մարդը գովեց իր տնտեսին, որովհետև նա կրկին մի քանի մեղքեր գործեց՝ խաբեց իր տիրոջը, կեղծեց պարտամուրհակները, ուրիշների հաշվին հետագայում ապրելու ծրագրեր ունեցավ:

Ըստ արտահայտված կարծիքների՝ տնտեսը պարտատերերին զիջեց միայն գործարքից իրեն հասանելիք դրամը, այսինքն՝ նա նաև ի բարին փոխեց իր մտքերը: Նախկինում անիրավ տնտեսի համար մարդը միջոց էր դրամի, իսկ հիմա հակառակը, նա գործածում է նյութականը՝ մարդկանց բարիք անելով: Դրա համար է, որ տերը գովում է տնտեսին: Առակի խորհուրդն այն է, որ մարդը տնտես է այս աշխարհում, Աստված աշխարհի բարիքները տվել է մարդուն, և մարդն իր ձեռքի տակ եղածից պետք է օգնի նաև ընկերոջը, մարդկանց բաժին հանի իր ունեցվածքից և ողորմություն անի: Քրիստոս խոսում է մամոնայի, այսինքն՝ դրամի, նյութականի խելացի օգտագործման մասին և շեշտելու համար առակի բուն իմաստը, այն պատմելուց հետո ասում է. «Եվ ես ձեզ ասում եմ. անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ» (Ղուկ. 16.9): Իսկ մեկ այլ տեղ ասում է. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կա՛մ մեկին կատի և մյուսին կսիրի, կա՛մ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և՝ մամոնային» (Մատթ. 6.24, Ղուկ. 16.13): Ժողովրդական խոսքն ասում է. «Ավելի լավ է ունենալ հարյուր բարեկամ, քան հարյուր դահեկան»: Բայց մեկը, հեգնելով այս խոսքը, ասել է, որ եթե ունենաս հարյուր դահեկան, կունենաս նաև հարյուր բարեկամ, որոնք, իհարկե, կեղծ բարեկամներ կլինեն՝ շահ քաղելու նպատակով: Մենք պետք է հստակ գիտակցենք միջոցի և նպատակի տարբերությունը, որպեսզի նաև նյութական հարցերում դրամը լինի ոչ թե նպատակ, այլ միջոց բարեգործության: Մինչդեռ ոմանք նույնիսկ բարեգործությունը դարձյալ միջոց են դարձնում դրամի ձեռքբերման նպատակի համար: Առակին հաջորդող տերունական խոսքերն են. «Այս աշխարհի որդիները ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ» (Ղուկ. 16.8): Լույսի որդիներ են կոչվում փարիսեցիները, ովքեր իրենց մասին կարծում էին, թե արդարությամբ լուսավորյալ են: Իսկ աշխարհի որդիներն են մաքսավորներն ու մեղավորները, հեթանոսները, սակայն նրանք ավելի հնարամիտ գտնվեցին՝ ընդունելով քրիստոնեությունը: Կարծեցյալ լուսավորյալների սերնդի մասին խոսքով Քրիստոս ակնարկում է նաև այն տեսակի մարդկանց, ովքեր փարիսեցիաբար իրենց արդար են կարծում, բայց իրականում չեն ապրում ճշմարիտ քրիստոնեական կյանքով:

Առակի խորհուրդները մեր կյանքում գործադրելով՝ ողորմությամբ, բարեգործությամբ, ներելով, կապրենք ոչ թե որպես անիրավ տնտեսներ, այլ Տիրոջ հավատարիմ տնտեսներ՝ արժանի հավիտենական հարկերի տակ ընդունվելու:

ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ

Շատ հետաքրքիր և առաջին հայացքից ինչ-որ առումով նույնիսկ տարօրինակ է Քրիստոսի պատմած առակը անիրավ տնտեսի մասին: Տերն իմանում է, որ իր տնտեսը վատնում է իր ունեցվածքը և նրանից տնտեսության հաշիվն է պահանջում: Իսկ տնտեսը մտածում է այնպես անել, որ աշխատանքից հեռացվելուց հետո մարդիկ իրեն ընդունեն իրենց տները, և ինքը նրանց հաշվին ապրի, քանի որ նա այլ աշխատանք անել չէր կարող, իսկ մուրալ ամաչում էր: Եվ նա Տիրոջ պարտապաններին կանչում է իր մոտ և նրանց մուրհակներից պարտքի կեսը ջնջում է և այդ պարտքը նրանց շնորհում: Եվ ահա հենց այստեղ է ամենազարմանալին: Քրիստոս ասում է, որ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց: Սակայն մեզ համար զարմանալի է այս գովեստը: Մաղաքիա Պատրիարք Օրմանյանը, այս առակին անդրադառնալով, հետևյալ իրավացի հարցն է տալիս. «Տիրոջ ունեցվածքի դեմ խարդախելը մեկ հանցանք, մուրհակներ փոխել տալը մեկ այլ հանցանք, անիրավ շահ պատրաստելը ևս հանցանք և հետագայում ուրիշների հաշվին ապրելու մտադրությունը մեկ ուրիշ հանցանք: Ուրեմն ինչի՞ համար տերը գովեց նրան»: Այս ամենը պարզ է դառնում առակի բացատրությունից: Մեծահարուստը Աստված է, իսկ տնտեսը՝ մարդը, որն իրեն տրված կյանքը հաճախ Աստծո պատվիրաններին հակառակ ապրելով մեղանչում է Տիրոջ դեմ: Տիրոջ պարտապաններին ներելը մարդու ներելն է իր դեմ մեղանչածներին: Երբ որևէ մեկը մեղք է գործում մեր դեմ, նա առաջին հերթին մեղք է գործում Աստծո դեմ, ինչպես որ որևէ մեկի դստեր դեմ ուղղված վիրավորանքը առաջին հերթին վիրավորանք է նրա հոր հանդեպ: Եվ հետևաբար, եթե մարդը ներում է իր դեմ մեղք գործածներին, ներում է առաջին հերթին Աստծո դեմ մեղանչածներին: Եվ մարդկանց ներելու Աստծո պատվիրանն իրագործելով՝ մարդն իր համար տեղ է պատրաստում Երկնքի Արքայության մեջ՝ արժանանալով նաև Աստծո հավանությանը:

Աստծո արդարությունը բոլորովին նման չէ մեր մարդկային արդարությանը: Օրինակ՝ եթե ավետարանական մեկ այլ առակում հիշվող փարիսեցին և մաքսավորը (Ղուկ. 18.9-14) տաճարի փոխարեն դատարան գնային, և ամեն մեկն ասեր այն, ինչ ասացին տաճարում, ապա անկասկած փարիսեցուն պատվով կճանապարհեին դատարանից, իսկ մաքսավորին կդատապարտեին տարիների ազատազրկման: Մինչդեռ Քրիստոս ասում է, որ մաքսավո՛րը իր տուն գնաց արդարացած և ոչ թե փարիսեցին (Ղուկ. 18.14): Այսինքն՝ Աստծո արդարությունը վեր է մարդկային արդարությունից: Եկեղեցու մեծ դեմքերից Իսահակ Ասորին ասում է՝ Աստծուն չի կարելի արդար կոչել, որովհետև մեզ դատում է ոչ թե արդա-

ության օրենքներով, այլ՝ գթության: Եկեղեցական մեկ այլ հեղինակ նշում է՝ Աստված միայն մի ցանկություն ունի ներել և ներել: Ահեղ դատաստանի ժամանակ ևս չի ցանկանալու դատել, այլ արդարացնել բոլորին: Եվ կարդարացնի բոլորին, միայն թե մի փոքր հնարավորություն լինի: Շատերս մեր հոգուն ծանրացած այնպիսի մեղքեր ունենք, որոնք հաճախ բարձրաձայն ասելու դեպքում մեծ և ահավոր ամոթ ենք զգում: Սակայն մենք էլ, իբրև անիրավ տնտեսներ, ներենք մեր պարտապաններին, մեր դեմ մեղանչածներին, որպեսզի Աստված էլ մեզ արդարացնի և արժանացնի Երկնքի հավիտենական Արքայության:

ԿՐԿԻՆ ԱՆՐԻԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ

Առակում գործող գլխավոր անձը՝ տնտեսը, իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով, առաջինին ասում է. «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եվ սա ասում է. «Հարյուր տակառիկ ձեթ»: Եվ տնտեսը նրան ասում է. «Ա՛ռ քո մուրհակը և նստի՛ր ու անմիջապես գրի՛ր՝ հիսուն»: Ապա դարձյալ մյուսին ասում է. «Դու ինչքա՞ն պարտք ունես». և սա ասաց. «Հինգ հարյուր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասաց. «Ա՛ռ քո մուրհակը և նստի՛ր ու գրի՛ր՝ չորս հարյուր»: Երբ Տերն իմանում է տնտեսի արածը, ոչ թե զայրանում է, այլ ընդհակառակը, գովում է տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց (Ղուկ. 16.5-8): Առակի իմաստը հաճախ անհասկանալի է, երբ այն դիտարկում ենք իբրև պատմություն մարդկանց միջև հարաբերությունների մասին, սակայն ըմբռնելի է դառնում, երբ այն դիտում ենք իբրև հարաբերություններ մարդկանց և Աստծո միջև: Առակում հիշվող տերը Աստված է, տնտեսը՝ մարդը, տնտեսությունը՝ այս աշխարհի բարիքները: Մարդն իր ձեռքի տակ եղող բարիքներից ուրիշներին բաժին հանելով գովեստի է արժանանում:

Առակի մեջ Տիրոջ և նրա պարտապանի պարտքի ներման գործում առկա է մեկ այլ մարդ: Ելնելով առակի ենթատեքստից՝ մեղքերի ներման գործում էլ հոգևորականն է միջնորդ Աստծո և մարդու միջև: Աղանդավորները, բողոքականները-ավետարանականները սա ընդունելի չեն համարում՝ շեշտելով, թե միայն զղջումը բավական է Աստծո կողմից ներման արժանանալու համար: Հայ ավետարանչականների վերնախավը, իրենց հետևորդներին անհիմն կերպով սովորեցնում է, թե նույն եկեղեցին են, ինչ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, սակայն նույնիսկ այս հարցում էլ նմանություն չեն դրսևորում: Իրականում մարդը մեղք է գործում մի քանի ուղղություններով: Եթե մարդը միայն Աստծուց ներում հայցի և չգնա ու ներողություն չխնդրի այն անձից, ում վիրավորել է կամ այլ վնաս

պատճառել, ինչքան էլ զղջա, Աստված նրա ներումը չի ընդունի, ինչպես որ Տերունական աղոթքում է ասվում. «Ներիր մեզ, ինչպես որ մենք ենք ներում մեր պարտապաններին»: Մարդը մեղք է գործում հիմնականում երեք ուղղություններով՝ Աստծո, Եկեղեցու և մարդու դեմ: Հետևաբար, նրա զղջումն էլ պետք է լինի այս երեք ուղղությունների նկատառումով: Եկեղեցու դեմ մեղքը Եկեղեցու կողմից կարգված կանոնների խախտումով է նաև ընկալվում, և բացի Աստծո առջև զղջումից ներվում է հոգևորականի առջև խոստովանումով: Իսկ այլ մարդու դեմ մեղքը ներվում է նրանից ներում խնդրելով և արած չարիքի փոխարեն բարիք հատուցելով: Սակայն, բացի այդ, հոգևորականի միջոցով մեղքերի թողությունը հիմնված է Քրիստոսի խոսքերի վրա, և սա անտեսող մյուսներն են շեղվում Ավետարանից: Քրիստոս առաքյալներին ասաց. «Ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում» (Մատթ. 18.18): Ոմանք կարող են ասել, որ կապելն ու արձակելը փոխաբերական իմաստ ունի: Բայց Հովհաննես Ավետարանիչը, մեղքերի թողության մասին խոսելով, ավելի հստակ է ասում այս մասին: Քրիստոս առաքյալներին իշխանություն տվեց դևեր հանելու, բժշկելու, սակայն հենց մեղքերի թողության իշխանությունը մեծապես կարևորելով, ինչպես ասում է Ավետարանիչը, այս շնորհը տալիս փչեց առաքյալների վրա՝ ասելով. «Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (20.22-23):

ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի հինգերորդ կիրակին կոչվում է Դատավորի կիրակի անիրավ դատավորի մասին առակի անունից (Ղուկ. 18.1-5): Մի այրի կին այնքան է խնդրում անիրավ դատավորին իր դատը տեսնել, որ դատավորը, իրեն խնդրանքներով ձանձրացնող կնոջից ազատվելու համար, նրա խնդրանքը կատարում է: Քրիստոս ասում է, որ եթե նույնիսկ անիրավ դատավորն այսպես վարվեց, ապա առավել ևս Աստված իսկույն արդարություն կանի Իրեն գիշեր-ցերեկ աղաղակող ծառաներին (Ղուկ. 18.6-7): Քրիստոս այս առակով հորդորում է հավատացյալներին տևական աղոթքի՝ ուսուցանելով, որ աղոթքի խնդրանքները չկատարվելու դեպքում հուսահատության մեջ չընկնեն և անձանձրույթ լինեն աղոթքի մեջ: Աստված երբեմն իրականություն չի դարձնում աղոթական խնդրանքները՝ Իր ամենատեսությամբ իմանալով, թե ինչն է տվյալ պահին մարդու համար օգտակարը:

Քրիստոս պատվիրում է ամեն ժամ կամ միշտ աղոթել և չձանձրանալ (Ղուկ. 18.1,7; 21.36): Սակայն ամեն ժամ կամ միշտ աղոթելը պետք է փոխաբերական իմաստով հասկանալ, ինչպես որ *միշտ* բառը փոխաբերորեն գործածված է Սուրբ Գրքում. «Իմ ցավերը միշտ առջևս են» (Սաղմ. 37.18) կամ «Եվ միշտ տաճարում էին, գովաբանում և օրհնաբանում էին Աստծուն» (Ղուկ. 24.53), ինչը չի նշանակում, թե տաճարից ընդհանրապես դուրս չէին գալիս:

Պողոս առաքյալը կարծես ավելի շեշտեց միշտ աղոթելու պատվիրանը՝ թեսաղոնիկեցիներին ուղղված թղթում հորդորելով անդադար աղոթելու (Ա Թեսաղ. 5.17): Անդադար աղոթելը հիմնականում Օրթոդոքս Եկեղեցիները նաև ուղիղ իմաստով հասկացան և պատվիրեցին իրենց հավատացյալներին օրվա ընթացքում մտքում անդադար աղոթել՝ ասելով Հիսուսի աղոթքը՝ մեկ նախադասությունից բաղկացած, ուսուցանելով, որ տարիների փորձառությունից հետո Տիրոջ ողորմությունը խնդրող աղոթքը կամրագրվի մարդու սրտում ու հոգում, և այդուհետ, քնած թե արթուն, մարդու մեջ կհնչի այդ աղոթքը: Մեր եկեղեցական Հայրերը, սակայն, այսպիսի պատվեր չտվեցին մեզ: *Անդադար աղոթք անել* արտահայտությունը ևս փոխաբերորեն գործածված է Աստվածաշնչում. «Պետրոսը բանտում մնում էր հսկողության ներքո, իսկ եկեղեցում անդադար աղոթքներ էին արվում առ Աստված» (Գործք 12.5): Սա չի նշանակում, որ աղոթքը մեկ վայրկյան իսկ չէր դադարում, այլ՝ բավականին հաճախակի էին աղոթում հավատացյալները Պետրոս առաքյալի համար:

Տարբեր Եկեղեցիների՝ աղոթքի, պահքի և այլ առաքինագործությունների պատվերների մեջ տարբերություններ կան, չնայած որ դրանք բոլորն էլ հիմնված են Հիսուս Քրիստոսի ուսուցումների վրա: Մենք ուրիշներինը չենք մերժում, բայց առաջին հերթին պարտավոր ենք մեր եկեղեցական Հայրերի պատվիրածները պահել: Մեր Հայրերը լավ գիտեին, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն հատուկ բնավորությունը, հոգեբանությունը: Ուստի և մեզ աղոթքի, պահքի այնպիսի կանոններ տվեցին, որոնք առավել օգուտ են մեր ժողովրդի համար: Օրինակ՝ որոշ Եկեղեցիների հոգևորականներ ասում են, թե շատ խիստ է ձեր պահեցողությունը, բայց մեր Հայրերը այսպիսի պահք պատվիրեցին, և մենք վստահ ենք, որ դա է մեզ օգուտ: Նույնպես նաև հոգևորականը տարբեր անձանց տարբեր պատվերներ է տալիս հոգևորի մեջ կատարելագործվելու համար՝ նկատի առնելով նաև անձի հակումներն ու բնավորությունը: Այսպես, եթե մեկը սխալմամբ հակված է միայն խիստ ինքնադատության, ինքնախարազանման և յուրաքանչյուր մեղքից հետո ընկնում է խորը հուսահատության մեջ, խոստովանահայր հոգևորականը նրան սկզբնապես չի հանձնարարի ընթերցել ճգնավորական գրականություն,

որտեղ առաջին տեղում ինքնաքննադատությունն է, մեղքերի համար խորը զղջումը, այլ առավել կիորդորի բարեգործության, ողորմության, որպեսզի մարդը կարողանա հոգևոր ուրախություն զգալ իր արածից: Նրան, ով աշխույժ է, եռանդուն և քիչ է հակված լուռ մտորումների ու աղոթքի, հոգևորականն առաջին հերթին կհանձնարարի եկեղեցանպաստ գործերի, միջոցառումների կազմակերպում: Միայնության, խոհերի հակված անձին հոգևորականը աղոթասացություն կհանձնարարի: Այսպես յուրաքանչյուրին ըստ իր բնավորության տալով համապատասխան պատվերներ՝ հոգևոր հայրն աստիճանաբար կատարելության կբերի իր հավատացյալներին քրիստոնեական բոլոր առաքինությունների մեջ: Նույնպես էլ մեր Սուրբ Հայրերը մեզ պատվիրեցին այն, ինչն առավել համապատասխանում է և օգտակար է մեր ժողովրդի խառնվածքին և հոգեբանությանը:

Անիրավ դատավորի առակը մեզ հարատև աղոթքի է հորդորում: Եվ այն մարդիկ, ովքեր հարգելի պատճառներով չեն կարողանում հաճախակի եկեղեցի այցելել՝ ընդհանրական աղոթքին մասնակցելու համար, սակայն ցանկանում են կատարել Քրիստոսի միշտ աղոթելու օգտակար պատվիրանը, պետք է այսպես վարվեն: Երբ արթնանում են քնից, գոհություն հայտնեն Աստծուն խաղաղ քուն և հանգիստ պարգևելու համար, երբ հագնվում են, գոհանան, որ Տերն իրենց մերկ չի թողնում, երբ ճանապարհ են գնում, աղոթեն որ Տերն ուղղի իրենց ընթացքը խաղաղության ճանապարհներով ապահովության մեջ, երբ աշխատանք են սկսում, աղոթեն աշխատանքի հաջողության համար, ամեն անգամ կերակուր ուտելիս գոհանան տիեզերքի Արարչից իրենց կերակրելու և լիացնելու համար, երեկոյան քնելիս աղոթեն, որ հավատացյալների պահապան Քրիստոս Աստված Իր Աջի հովանու ներքո պահպանի Իրեն հավատացողներին: Այսպես մարդն ամբողջ օրը աղոթքի մեջ կլինի և կկարողանա կատարել միշտ աղոթելու հույժ օգտակար պատվիրանը:

ԿՐԿԻՆ ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ

Անիրավ դատավորի մասին առակը, որը փոխաբերորեն միշտ աղոթելու պատվերն է տալիս, պարզաբանումների անհրաժեշտությունն է նաև բերում աղոթելու ձևի և մտադրությունների մասին: Մեր Սուրբ Եկեղեցու ակնառու հոգևորականներից Ներսես Լամբրոնացին պատկերավոր կերպով ասում է, որ աղոթքը շարժումն է այն պարանի, որի ծայրին կապված զանգը հնչում է երկնքում: Իսկ մեր նշանավոր վարդապետ մատենագիրներից Սուրբ Եզնիկ Կողբացին շեշտում է աղոթողի մտքերի մաքրության կարևորությունը՝ ասելով. «Ավելի լավ է հստակ խորհրդով

ննջել, քան պիղծ խորհդով աղոթքներ մատուցել»: Առակում այրի կինը խնդրում է իր օգտի համար: Սակայն մենք պետք է աղոթենք ոչ միայն մեզ, մեր սիրելիների, այլ նաև թշնամիների համար, ինչպես որ պատվիրեց նաև Քրիստոս (Մատթ. 5.44): Մարդկանց համար հաճախ բավականին դժվար է թշնամու համար սիրով աղոթելը: Երբ մտագարությամբ հիվանդները բժշկին հարվածում են և վնասում, բժիշկներն այդ ժամանակ ավելի են խղճում նրանց և ջանում նրանց բուժելու համար՝ իմանալով, որ այդ ամենը գալիս է նրանց հիվանդությունից: Նույնպիսի վերաբերմունք պետք է ունենանք նաև մենք մեզ վիրավորողների և թշնամիների հանդեպ և աղոթենք նրանց համար: Սակայն եթե Աստված ամենագետ է, ինչի՞ համար են ան-հրաժեշտ աղոթքները. չէ՞ որ Աստված գիտի, թե մեզ ինչ է հարկավոր: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ աղոթելը պետք է, որպեսզի խոնարհեցնենք Աստծուն, անդադար աղոթքով միանանք Նրան, զղջմամբ հիշենք մեր մեղքերը և հաշտվենք Նրա հետ: «Եթե Աստված պատվիրում է աղոթել,- ասում է եկեղեցական Սուրբ Հայրը,- ապա ոչ թե նրա համար, որ կարիք ունի մեր հիշեցման, այլ որպեսզի իմանանք, որ միայն Նրա օգնությամբ ենք ամեն ինչ անում, և որպեսզի անընդհատ աղոթքով Նրան հաճելի լինենք»:

Անիրավ դատավորի առակը նաև ակնարկում է մի խնդրի մասին, որ գոյություն ունի դարեր ի վեր: Խոսքը մարդկային հասարակության մեջ անիրավ դատավորների առկայության մասին է: Դեռևս Հին Կտակարանում արձանագրված կարևոր պատվիրաններից են սուտ վկայություն չտալը (Ելք 20.16, Բ Օր. 5.20, 19.16-19) և կողմնակալությամբ, անարդարությամբ դատ չանելը (Բ Օր. 1.16, 16.18-20): Սա ցույց է տալիս, որ նույնիսկ հնագույն ժամանակներից եղել են անիրավ և կաշառք վերցնող դատավորներ: Այս խնդրի լուծման համար այսօր տարբեր քաղաքական, հասարակական գործիչներ առաջարկում են բարձրացնել դատական համակարգում աշխատողների աշխատավարձը, որպեսզի դատավորները նյութապես բավարարված լինեն և շահագրգռված չլինեն կաշառք վերցնելու: Միակողմանի է այս մոտեցումը, որովհետև առանց մարդու բարոյականը բարձրացնելու, աշխատավարձը ինչքան էլ ուզում ես բարձրացրու, անիրավ դատավորը էլի մնալու է անիրավ դատավոր: Սա մեզ հուշում է, որ մեր կյանքում անիրավությամբ գործեր չանենք, որպեսզի երբ հետո՝ Դատաստանի օրը, կանգնենք Ամենաարդար Դատավորի առջև, մեր դատապաշտպանները՝ մեր լուսավոր հավատքը, խիղճը և մեր առաքինի գործերը, արդարացնեն մեզ, և երկնավոր Դատավորը մեզ արժանի դարձնի մուտք գործելու Երկնքի Արքայություն:

ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին կոչվում է Գալստյան կիրակի՝ մեզ հիշեցնելով Քրիստոսի գալուստը աշխարհ: Քրիստոս եկավ և մարդկությանը բարձրացրեց հոգևոր-բարոյական ավելի բարձր հարթակի: Նախքան դա մարդկությունն ավելի շատ գնում էր կրքերի հետևից: Եվ Քրիստոս Իր ուսուցմամբ ոչ միայն ցույց տվեց ճիշտ ճանապարհը, այլև մարդկությանը շնորհներ տվեց՝ Իր ավանդած պատվիրանները կատարելու համար:

Քրիստոսի գալստյան մասին մարգարեությունները եղել են Մովսես մարգարեից առաջ և հետո: Հուդայի օրհնության ժամանակ Հակոբը ասում է. «Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև որ գա նա, ում պատկանում են հանդերձյալները: Նրա՛ն են սպասում ժողովուրդները» (Ծննդ. 49.10): Եվ Քրիստոս եկավ հենց այն ժամանակ, երբ հրեաների թագավորն այլևս Հուդայի ցեղից չէր, այլ թագավորում էր Հերովդեսը, ով նույնիսկ ազգությամբ հրեա չէր: Իսկ Մովսեսը, Քրիստոսի մասին մարգարեանալով, ասել էր. «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածը ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի, նրա՛ն կլսեք»(Բ Օր. 18.15): Փիլիսոփայությունը պահանջում է տրամաբանություն, կրոնը՝ հավատ: Սակայն հավատը հատկապես Քրիստոսի գալըստյան հանդեպ հիմնված չէ վերացականի վրա, այլ այն տեսնված, վկայված և նույնիսկ շոշափված իրականություն է: Հովհաննես առաքյալն իր Ավետարանում ասում է. «Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և տեսանք նրա փառքը» (1.14): Առաքյալը նաև իր Ընդհանրական առաջին թղթի հենց ամենասկզբում ասում է. «Խոսում ենք Նրա մասին, որ սկզբից էր, որի մասին լսեցինք, որին ականատես իսկ եղանք, որին նայեցինք, և որին մեր ձեռքերը շոշափեցին, այսինքն՝ Կենաց Բանը» (1.1): Եվ առաքյալը եզրակացնում է իր թղթի վերջին՝ հինգերորդ գլխում, որ «Նա՛ է ճշմարիտ Աստված և հավիտենական կյանք» (5.20):

Գալստյան կիրակին մեզ հիշեցնում նաև Քրիստոսի երկրորդ գալստյան մասին, որին հաջորդելու է աշխարհի վախճանը, ինչպես նշում է Մաղաքիա մարգարեն և հայտնում, որ Տիրոջ փառավոր գալստյան ժամանակ նրա կարապետը լինելու է Եղիա մարգարեն (Մաղ. 4.4): Փիլիսոփա Կանտը, խոսելով աշխարհի վախճանի մասին, սովորեցնում է աշխարհի վախճանը փնտրել ոչ թե մեզանից դուրս, այլ մեր մեջ: Ինչ որ իմաստով այս դատողությունը ճիշտ է, որովհետև մարդու մահով նրա համար դադարում է այս աշխարհը, և նա փոխադրվում է հանդերձյալ աշխարհ: Սակայն աշխարհի վախճանին անդրադառնում են նաև պատմաբանները՝ խոսելով արդեն աշխարհի իրական և ոչ թե փոխաբերական վախճանի մասին: Պատմությունը ցույց է տալիս, որ տարբեր ժամանակաշրջաններ-

րում եղել են շատ զարգացած քաղաքակրթություններ, որոնք, սակայն, ոչնչացել են ծագած խնդիրների պատճառով: Պատմաբանները նշում են, որ մեր օրերում քաղաքակրթության մեծ մասը կանգնած է ոչնչացման վտանգի առջև: Բայց պատմաբանների մյուս մասը գալիս է այն եզրակացության, որ հին ժամանակներում ոչնչացել են առանձին քաղաքակրթություններ, որովհետև ոչնչացման պատճառ հանդիսացող խնդիրները կրել են միայն տեղական բնույթ, մինչդեռ հիմա այդ խնդիրները կրում են ոչ թե տեղական, այլ համամոլորակային բնույթ, և հետևաբար ոչնչացում սպառնում է ողջ մոլորակին: Այսօր մարդկային քաղաքակրթության և հասարակությունների մեջ առկա խնդիրները լուծելու համար ներդրվում են բավականին նյութական միջոցներ: Սակայն նման խնդիրների լուծման համար բավարար չեն նյութական միջոցները, այլ ավելի շատ անհրաժեշտություն է զգացվում նաև հոգևոր միջոցների: Իսկ հոգևորի զորացման համար անհրաժեշտ է Քրիստոսի գալուստը նաև մեր ներաշխարհ, որով և Քրիստոսի գալուստը պետք է ակնկալենք ոչ միայն մեզանից դուրս, այլև մեր մեջ: Քրիստոս Ինքն է ասում. «Ահա՛վասիկ Ես դռան առաջ եմ և բախում եմ» (Հայտն. 3.20): Եվ եթե մենք բացենք մեր սրտի դուռը, Քրիստոս կիյուրընկալվի մեզ մոտ՝ ուրախություն և զորություն բերելով մեր հոգիներին:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Պատարագի արարողության համապատասխան հատվածում պատարագիչ հոգևորականը, երկու ձեռքով սկիհը բարձր պահած, շրջվում է դեմքով դեպի ժողովուրդը և ասում. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»՝ Օրհնյալ լինես Տիրոջ անունով եկածդ, սրան նաև ավելացնում է՝ «Օրհնեալ, որ գալոցդ ես»՝ Օրհնյալ լինես Դու, որ գալու ես: Նշված առաջին խոսքով հիշատակվում է Քրիստոսի առաջին գալուստը, իսկ մյուսով՝ երկրորդ գալուստը: Քրիստոսի երկրորդ գալստյան վերաբերյալ նման հիշատակություն կա նաև Ղազարու հարության ժամամուտի, ինչպես նաև Պատարագի երեքսրբյան երգեցողության մեջ: Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստների հիշեցումն է արվում նաև Սուրբ Զատկին նախորդող կիրակիին՝ Ծաղկազարդի օրը: Ծաղկազարդի օրը առաջին հերթին հիշատակվում է Քրիստոսի փառավոր մուտքը Երուսաղեմ (Մատթ. 21.1-11, Մարկ. 11. 1-11, Ղուկ. 19. 28-40, Յովհ. 12. 12 -19): Սակայն Ծաղկազարդի օրվա արարողությունները խորհրդանիշն են նաև Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստների: Առավոտյան ժամերգության ժամանակ հոգևորականները հավաքվում են եկեղեցու ատյանում՝ Սուրբ Խորանի դիմաց, երբ երգվում է Տեր հերկնից շարականը, որ տերունական առաջին գալստյան անդրադարձով պատմում է Երուսաղեմ մուտքի մասին: Իսկ երեկոյան Դռնբացեքի արարողություն կատարող հոգևորականները

բարձրանում են խորան՝ այս խորհրդանշական արարողությամբ հիշատակելով Քրիստոսի երկրորդ գալուստը:

Ծաղկազարդի օրը եկեղեցիները զարդարվում են արմավենու և ձիթենու ճյուղերով՝ ի հիշատակություն Քրիստոսի Երուսաղեմ մուտքի, երբ մարդիկ Նրա ճանապարհին արմավենու և ձիթենու ճյուղեր էին սփռում: Քանի որ Հայաստանում արմավենիներ և ձիթենիներ չկան, հայաստանյան եկեղեցիներն այդ օրը զարդարվում են ուռենու ճյուղերով: Եկեղեցական մեր Հայրերի կողմից ուռենին պատահականորեն չի ընտրվել Ծաղկազարդին եկեղեցիները զարդարելու համար, այլ հատուկ խորհրդով: Ուռենու կտրված ճյուղը, հողի մեջ տնկվելով, արմատակալում է և աճում: Այդպես էլ քրիստոնյաները կտրվելով նախկին հեթանոսական սովորույթներից արմատավորվեցին ճշմարիտ հավատքին: Ուռենու ճյուղերը ոչ թե վեր են բարձրանում, այլ խոնարհվում են: Սա ցույց է տալիս, որ նույնպես քրիստոնյաները պետք է խոնարհ լինեն: Երբ կտրում են ուռենու գագաթը, այն կրկին առատ շիվեր է տալիս: Այսպես նաև շատ մարտիրոսներ գլխատվեցին և երկնային անթառամ պսակների արժանացան:

Այս օրը պատկերն է նաև արարչության առաջին օրվա, երբ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկինքը կատարելությունների և

Աստծու մերձավորներն են և Նրան անդադար փառաբանողները, իսկ երկիրը՝ մարմնավորների ու անկատար անասունների, որոնք, զուրկ լինելով բանականությունից, հեռու էին Աստծուց: Այս երկուսի մեջտեղում դրախտն էր, որը տեղն էր բանական մարդկանց, ովքեր գտնվում էին հրեշտակների և անասունների միջև: Եվ Տերն այնպես կարգեց, որ եթե մարդը երկնքի բնակությունը ցանկանա, երկնայիններին նմանվի, իսկ եթե երկրի բնակությունը ցանկանա, անասուններին նմանվի: Մարդը անկում ապրեց դրախտից, և այսօր հատկապես Ծաղկազարդի արարողությունները հորդորում են աստվածահաճո կյանք ապրելով՝ փափագել երկնային բնակության:

ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՏՐՏՈՒՆՁԻ ՓՈԽԱՐԵՆ

Երբ մարդը դժվարության կամ թշվառության մեջ է, նրա վիճակն ավելի է վատացնում անընդհատ տրտնջալը: Հովհան Ոսկեբերանն այսպես է ասում. «Ինչպես շունն է սեղանի մոտ, երբ պատառ ես գցում, մնում է և սպասում, որ էլի տաս ու չի գնում, այդպես էլ սատանան է միշտ

կանգնում մեր առաջ բաց բերանով: Եթե աստվածանարգ, հայհոյող ու տրտունջ պարունակող բառ գցես, դա բռնելով նորից կգա, բայց եթե միշտ գոհություն մատուցես Աստծուն, քաղցի կմատնես նրան և կստիպես փախչել»: «Չե՞ս կարող լռել,- խորհուրդ է տալիս Հովհան Ոսկեբերանը,- ասա, բայց ոչ հայհոյանք, այլ շնորհակալություն, տրտունջի փոխարեն՝ օրհնություն: Աղաղակիր Տիրոջը, գոչիր՝ Նրան փառաբանելով: Դրանից նաև տանջանքդ կթեթևանա, քանի որ երախտագիտության հետևանքով սատանան կփախչի, իսկ Աստծո օգնությունը արագ կհասնի քեզ»: Մեզ համար շատ ուսուցանող են Հոբի, Աբրահամի, Հովսեփի օրինակները, ովքեր մի որոշ ժամանակ ահավոր աղքատության ու թշվառության մեջ ապրեցին, բայց քանի որ նույնիսկ նեղությունների մեջ օրհնում էին Աստծուն, ապա ի վերջո կարողացան Աստծո օգնությամբ դուրս գալ նեղություններից և ապրել խաղաղ ու փառավոր: Դուք ևս ապրեք այնպես, ինչպես Աստված է պատվիրել, և կտեսնեք, թե ինչպես է աստվածային օրհնությունը լցվում ձեր սրտերից և ձեր ընտանեկան հարկից ներս:

ՄԵԾ ԶՈՀՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քրիստոնեական սրբերից Յուղիտան այրի, բարեպաշտ կին էր, որը քրիստոնյա լինելու համար մահվան է դատապարտվում: Մինչ տանջում էին այս կնոջը, նրա փոքրիկ որդին՝ Կիրակոսը, որին դատավորն իր գիրկն էր առել, կրկնում է, որ ինքն էլ է քրիստոնյա: Դատավորը զայրանալով՝ երեխային ցած է նետում աստիճանների վրա: Երեխան մահանում է: Մայրը, սա տեսնելով, ուրախանում է:

Մեզ այսօր զարմանք է պատճառում որդու մահվան համար ուրախացող այս մայրը: Ճիշտ է, իբրև կին, իբրև որդուն անսահմանորեն սիրող մայր, նրա սիրտը պատռվում էր ցավից, սակայն իբրև մեծ հավատ ունեցող մարդ, Յուղիտան ուրախանում է նրա համար, որ իր որդին իրենից առաջ ընդունեց մարտիրոսության պսակը՝ ցույց տալով իր սերը Աստծո հանդեպ և արժանանալով հավիտենական երանելի կյանքի: Այս ամենն ավելի լավ հասկանալու համար մեծ հավատք է պետք, ինչին բոլորս էլ պետք է ձգտենք:

ՆԵՂՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք հավատացյալ ժողովուրդ ենք եղել և ենք, սակայն մեր պատմության ընթացքում մենք հաճախ ավելի շատ փորձությունների ենք ենթարկվել, քան այլ հեթանոս ազգեր, որոնք տիրողի և թագավորողի դիրքում են եղել: Եվ սա կարելի է ասել նաև մարդկանց մասին առանձին վերցրած: Ո՞րն է սրա պատճառը: Երբ այս մասին հարցնում են մի փորձառու հավատացյալի, նա ասում է. «Տեսե՞լ եք, թե ինչպես է որսորդը թռչուններ որսում: Որոնք արդեն սպանված ընկած են, նրանց այլևս ձեռք չի տալիս, անցնում է նրանց կողքով, որովհետև գիտի որ իրենն են, և ընկնում է կենդանի թռչունների ետևից: Ահա այդպես էլ սատանան երբեք չի պատերազմում մեղքի մեջ կորածների, անհավատների հետ, որովհետև գիտի, որ իրենն են, և տարբեր փորձություններով պատերազմում է հավատացյալների դեմ՝ նրանց հոգիները կորստյան մատնելու համար»: Աստված, սակայն, սատանայի գայթակղություններն ու նեղությունները փոխակերպում է մարդկանց համար օգտակար փորձության, որպեսզի մարդկանց հայացքը դեպի երկինք դարձնի: Սա է ցույց տալիս նաև բնության օրինակը: Եթե դաշտում միայն արև լինի, ապա ցանված սերմերը կփչանան, որովհետև անձրև է պետք: Եթե անընդհատ միայն անձրև լինի, սերմերը կփտեն, որովհետև նաև քամի է պետք: Այսպես էլ մարդուն այս ամենն օգտակար է լինում, որովհետև մարդը փոփոխական է:

ՆԵՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԼԻՈՒԹՅՈՒՆ

Շատ սրբերի վարքից տեսնում ենք, որ նրանք մատնվել են ահավոր տանջանքների: Այսօր էլ բազմաթիվ մարդիկ նյութական կամ այլ տեսակի նեղությունների մեջ են: Աստվածաշունչն ասում է. «Աստված ում սիրում է, խրատում է» (Եբր. 12.6): Իհարկե, այս խոսքը ոմանց կարող է վրդովեցնել, որովհետև մենք բոլորս էլ ուզում ենք, որ մեզ հետ միայն լավը լինի, մանավանդ եթե Աստծուն սիրում ենք և հավատարիմ ենք, ապա սպասում ենք միայն Նրա պարգևներին: Եվ այս իմաստով ինչ-որ տեղ ընդունելի չէ, որ Աստված մեզ պետք է խրատի դժվարություններով: Սակայն մարդ-Աստված հարաբերությունները դիտենք հայր-որդի հարաբերությունների միջով, որպեսզի ավելի լավ հասկանանք աստվածային մտադրությունը: Երբ հայրը կամ մայրը սիրում են իրենց երեխային, ապա ցանկանում են, որ նա մեծանա խելացի և դաստիարակված: Եվ եթե երեխան որևէ անպատեհ բան է անում, ծնողները զայրանում են և ծայրահեղ դեպքում հարվածում՝ երեխային արատից զերծ պահելու համար: Եվ հակառակը, երբ ծնողներն անտարբեր են երեխայի նկատմամբ կամ շատ են զբաղված և երեխայով հետաքրքրվելու ժամանակ չունեն, ապա չեն պատժում, չեն զայրանում, փոքրիկը դրանից օգտվելով բավարա-

րում է իր բոլոր քմահաճույքներն ու արդյունքում ձևավորվում է թերի մարդ՝ բոլոր առումներով: Այսինքն՝ սահմանափակումներ և զրկանքներ դնելը օգտակար է հենց մարդու համար: Ոմանք դժգոհում են, որ ճոխությամբ չեն ապրում: Սակայն նույն կերպ էլ այգեգործը թույլ չի տալիս, որ ծառը փարթամությամբ աճի, այլ գարնանը կամ երբեմն աշնանը էտում է ծառի ճյուղերը, որպեսզի այն առողջ լինի, շատ բերք տա և երկար ապրի: Ճիշտ նույն կերպ էլ Աստված որոշ զրկանքներով մարդուն կատարելության է հասցնում և հետո բարիքներ տալիս՝ վայելելու: Հիշենք, որ նույնպիսի տանջանքների մեջ էր նաև Հոբը: Աբրահամը, որ հարուստ էր, տարածված սովի պատճառով երբեմն քաղցած շրջում էր Եգիպտոսով (Ծննդ. 12.10), նույն կերպ էլ Հակոբը, Հովսեփը և Դավիթը երկար օրեր պանդխտության ու նեղության մեջ էին (Ծննդ. գլ. 29-30, 39-40, Բ Թագ. 15.14-37, 16.1-14): Սակայն նրանք բոլորն էլ նեղություններից ու վշտերից հետո մեծեմեծ բարիքների և երջանկության հասան: Քրիստոս շատ պարզ ասում է. «Հոգ մի՛ արեք, ձեր հոգու համար, թե ի՛նչ պիտի ուտեք կամ ի՛նչ պիտի խմեք, և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ի՛նչ պիտի հագնեք: Նախ խնդրեցեք Աստծո արքայությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. 6.25, 33): Գուցե մեր բոլոր դժվարությունների ու դժբախտությունների պատճառն այն է, որ մենք Երկնքի Արքայությունը թողած այլ բաներ ենք փնտրում: Գուցե ոմանք չեն հավատում, որ այս պատվիրանը իրականացնելու դեպքում հրաշքներ կկատարվեն: Սակայն սա փորձեք բարի հույսով, ամեն պարագայի ձեզ համար առաջին տեղում համարելով միայն Աստծուն, և կտեսնեք, որ հրաշքները միայն հեքիաթներում չէ, որ դառնում են գեղեցիկ իրականություն:

ՆԵՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Երբեմն մենք ասում ենք, որ Աստված թույլ է տալիս մեղավոր մարդկանց ընկնելը նեղությունների մեջ՝ նրանց խրատելու համար: Սակայն սրբերն ինչու՞ չարչարվեցին, եթե բազում մարդկանցից ավելի արդար էին: Մենք հաճախ չարչարվում ենք, որպեսզի մեղքերից սրբվենք, իսկ սրբերը չարչարվում էին, որպեսզի արդարություն և պսակ ընդունեն, նաև այդ չարչարանքների միջոցով հայտնի էր դառնում նրանց մեծագույն սերը Աստծո հանդեպ: Եթե ոմանք նեղությունների մեջ են, թող չվհատվեն և չկարծեն, թե Աստված իրենց մոռացել կամ անտեսում է: Նեղությունները լինում են երկու տեսակի՝ հավատացյալների նեղություն և անհավատների: Հավատացյալների նեղությունը հույսով է և համբերությամբ, իսկ անհավատներինը՝ հուսահատությամբ: Հավատացյալների նեղության վախ-

ճանը հանգիստ է և փառք, ըստ այն խոսքի, որ եթե Քրիստոսի չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու և փառքին (Հռոմ. 8.17): Մխիթարվելու համար հիշենք Հովսեփին, ով բանտ նետվելով՝ հույսով և համբերությամբ կրեց բոլոր նեղությունները և վերջում հասավ մեծ փառքի և հանգիստ ու խաղաղ վիճակի: Մինչդեռ անհավատների նեղության դեպքում հանգիստ և փառք չկա:

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Խոր Վիրապից դուրս գալով՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը քարոզեց քրիստոնեությունը և ծանր պարտականություններ չդրեց նորադարձ ժողովրդի վրա, այլ մեղմությամբ խրատեց և իր հատկանշական բացատրությունները տվեց հավատքի վերաբերյալ: Աստված ստեղծեց հրեշտակներին և մարդկանց անձնիշխան կամքով, որով այս արարածներն իրենց կամքով կարող են հրաժարվել Աստծո կամքի իրագործումից: Հրեշտակների համար մեծ պայման դրվեց Աստծո կողմից՝ Տիրոջն ուղղված անդադար փառաբանությունը, ինչպես Եսայի մարգարեի տեսիլքից է նաև հայտնի դառնում (6.3), և որը հիշում ենք Սուրբ Պատարագի երգեցողության մեջ. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զորությունների Տերը, և ամբողջ երկիրը լի է Նրա փառքով»: Հայտնության գրքում ևս նշվում է հրեշտակների կողմից այս անդադար փառաբանության մասին (Հայտն. 7.11): Սակայն մարդկանց համար Աստված փոքր պայման դրեց՝ չուտել ծառի պտղից, այսինքն՝ Աստծո կամքին հակառակ չգնալ: Մենք պետք է պահենք այս պատվիրանը՝ Աստծո կամքին հակառակ չվարվելը, որովհետև այլ ընթացքը բերում է հոգևոր և նյութական վնասներ, ինչպես որ առաջին մարդիկ զրկվեցին Աստծո անմիջական ներկայությունը վայելելուց և իրենց հատկացված հիանալի դրախտից:

Ոմանք բողոքում են, թե Աստվածաշնչում շատ պատվիրաններ կան, որոնք դժվար է հիշել, էլ ուր մնաց թե կատարել: Սակայն Քրիստոս Իր կենարար վարդապետությամբ ցույց տվեց, որ այդ բոլոր պատվիրաններն ամփոփվում են ընդամենը մեկ պատվիրանի մեջ, այն է՝ սիրեցեք միմյանց: Եվ Գրիգոր Լուսավորիչը, հակառակ իրեն հասցված տանջանքների ու փորձությունների, Աստծո կողմից պատվիրված այդ սիրով կարողացավ հաղթահարել բոլոր դժվարությունները, քրիստոնյա դարձրեց հայ ժողովրդին: Եվ Լուսավորչի օրինակով մենք էլ, թեկուզ երբեմն ունենում ենք նեղություններ, փորձենք ամեն պարագայի սեր սերմանել մեզ շրջապատող անձերի հոգիներում:

ԿՅԱՆՔԻՑ ԷԼ ԱՎԵԼԻ

Հակոբոս Տեառնեղբայրը (Տիրոջ եղբայրը) եղել է Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը և նահատակվել հանուն Քրիստոսի: Այս սրբի օրինակը մեզ սովորեցնում է, որ հանուն Աստծո պետք է պատրաստակամ լինենք զրկվելու անգամ կյանքից, ինչպես որ Քրիստոս Իր կյանքը տվեց մեզ համար: Շատերին նման զոհաբերությունն անհասկանալի է թվում, բայց կյանքում էլ լինում են դեպքեր, երբ մարդիկ իրենց սիրելիների համար անհրաժեշտության դեպքում կյանքն էլ են տալիս: Եվ եթե այդպիսին է մեր վերաբերմունքը մեզ նման մարդկանց նկատմամբ, ապա որքան առավել պետք է լինի Աստծո նկատմամբ:

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԶՐԿՈՒՄՈՎ

Մարդիկ ավելի շատ դժվարության պահերին են հիշում Աստծուն՝ Նրանից օգնություն խնդրելու կամ ավելի հաճախ Նրա դեմ տրտնջալու համար՝ ասելով. «Ես ի՞նչ էի արել, որ ինձ այս վիճակի մեջ գցեցիր»: Մենք հաճախ Աստծուն արդար ենք համարում միայն այն ժամանակ, երբ բարիքներ ենք ունենում: Սակայն Աստծո պարագային ոչ միայն տալը, այլև խլելն է մեծ մարդասիրության նշան: Օրինակ՝ Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ եթե Կայենը, արտաքսումը և Աստծո բարկությունը տեսնելով, այդպիսի բան արեց, ապա ինչ ահավոր բան կաներ դրախտում, երբ Աստծո զայրույթի հետևանքները չէր տեսել և ավելի մեծ պատիժ կստանար: Եվան նույնպես արտաքսումից հետո Աստծո պատվիրանը գերադասեց: Նա երբեք չբողոքեց Աստծուց իր սպանված որդու համար, այլ, ընդհակառակը, Եվան շնորհակալություն հայտնեց փոխարենը մեկ ուրիշ որդի ունենալու համար (Ծննդ. 4.25): Մենք հաճախ ենք եղել գեղեցիկ բնության գրկում, բայց ոչ մի տեղ մեզ դրախտում չենք զգացել, որովհետև ծառերը և ծաղիկները չեն դրախտը, այլ՝ Աստծո ներկայությունը: Հետևաբար, Եվայի օրինակով էլ կարող ենք տեսնել, որ զրկումով ու արտաքսումով կինը բերվեց աստվածճանաչության և ձեռք բերեց ավելին, քան կորցրել էր:

ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մարդիկ աղքատ և հարուստ են լինում աստվածային հատուկ դաստիարակչական և փրկչական ծրագրով: Սոցիալական անհավասարու-

թյուններին իմաստուն կերպով անդրադարձել են եկեղեցական տարբեր հեղինակներ, որոնց մտքերն էլ ներկայացնում ենք ձեզ: Ինչպես որ հրով փորձվում է ոսկին, նույնպես էլ աղքատությամբ փորձվում է մարդը՝ համբերո՞ղ է, թե՞ ոչ: Աստված աղքատացնում է նաև լավ մարդուն, որպեսզի փորձի, թե արդյո՞ք միայն իր ունեցվածքի համար է սիրում Աստծուն, որովհետև շատերը, երբ խնդիրներ չունեն, հաշտ են Աստծո հետ, իսկ երբ ընկնում են դժվարությունների մեջ, սկսում են Աստծուն մեղադրել և նույնիսկ հայհոյել: Աստված աղքատացնում է նաև այն մարդուն, որի շատ գործեր բարի են, սակայն նաև մի մեծ մեղք ունի, որպեսզի աղքատությամբ չարչարվելով՝ վճարի իր մեղքի համար և հավիտենական կյանքի ժառանգորդ դառնա: Հետևաբար, աղքատությունը լինում է միայն մարդու օգտի համար և բարի նպատակով. մնում է, որ մարդը դա հասկանա և դասեր քաղի ու ոչ թե հոգու հակառակությամբ ավելի վատ վիճակի մեջ ընկնի:

Հարստությունը մարդկանց տրվում է երեք պատճառներով: Հարուստ մարդկանց դիտելով՝ տեսնում ենք, որ նրանցից շատեր բարի են, շատերը չար ու ամբարտավան, իսկ շատերն էլ՝ անարժան: Ինչ վերաբերում է բարիներին, ապա Աստված նրանց հարստություն է տալիս, որպեսզի նրանք կարոտյալներին օգնեն և շատերին օգուտ տան: Աստված հարըստություն է տալիս նաև չարերին ու ամբարտավաններին, որպեսզի Դատաստանի ժամանակ, երբ իրենց չար գործերի և Աստծուն չսիրելու համար դատապարտվեն, արդարանալու ոչինչ չունենան և Աստծուն չասեն, թե ինձ ինչ տվեցիր, որ քեզ սիրեի: Աստված անարժանին մեծություն է տալիս, որպեսզի նա նյութական իրերով Աստծուն դառնա և իր մտքում ասի. «Ես անարժան եմ, և ահա Աստված ինձ այսքան մեծացրեց»: Ուրեմն, ինչպես աղքատությունը, այնպես էլ հարստությունը մարդուն տրվում է միմիայն մեկ բանի համար, որպեսզի մարդ Աստծուն դառնա: Այս կյանքի ապրելակերպով մարդ իրական հարստություն է դիզում հանդերձյալ կյանքում: Հետևաբար, ասում է Հովհան Ոսկեբերանը, հարստությունը և աղքատությունը նման են թատրոնի դիմակներին, ներկայացումից հետո թագավոր չես համարում նրան, ով թագավորի դիմակ էր հագել:

ԿՐԿԻՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԻ ՄԱՍԻՆ

Ամեն տարի մենք տոնում ենք Հովհաննես և Ալեքսիոս կամավոր աղքատների տոնը: Նրանք հարուստ մարդկանց որդիներ էին, և իրենց հասուն տարիքում որոշեցին ապրել քրիստոնեությունը աղքատության մեջ ու երկար տարիներ հեռացան իրենց հարուստ տներից: Պետք է ընդու-

նենք, որ մեր օրերում դժվար է գտնել աղքատների, ովքեր կամավոր են այդ վիճակի մեջ: Այսօր բազմաթիվ մարդիկ ստիպված են ապրում աղքատության պայմաններում, և աշխարհը շատ միջոցներ է ձեռնարկում աղքատության դեմ պայքարելու համար: Կարո՞ղ է արդյոք աշխարհը վերացնել աղքատությունը: Քրիստոս ասաց. «Աղքատներին ամեն ժամ ձեզ հետ ունեք» (Մատթ. 26.11, Մարկ. 14.7, Հովհ. 12.8): Տիրոջ այս խոսքը հիմք է տալիս ենթադրելու, որ աղքատությունն աշխարհում միշտ էլ լինելու է:

Երբեմն աղքատությունը մարդուն տրվում է Աստծուց դաստիարակչական նպատակներով: Մենք պետք է աղոթենք, աղոթքի համար ժամանակ կամ հատկացված օրեր ունենանք: Սակայն բազում մարդիկ՝ զբաղված իրենց առօրյա գործերով, հաճախ մոռանում են աղոթել: Նրանք արժևորում են հատկապես գործը և լքում աղոթքը: Տեսնելով այս սխալ ընթացքը՝ Աստված վերցնում է գործը՝ ժամանակ և առիթ տալով աղոթելու համար: Աստված բուժում է այն ճանապարհով, որով մենք մեղանչում ենք: Այս վարմունքը նման է բժշկի գործունեությանը: Երբ բարձր տաքություն ունենք, բժիշկը դեղ է տալիս՝ իջեցնելու այն, իսկ երբ լինում է այնպես, որ հիվանդի տաքությունը չափից ավելի է իջնում, բժիշկները ջանում են բարձրացնել այն: Նույն կերպ Աստված միջոցներ է գործի դնում՝ մարդկանց հատկապես մեղքերից բուժելու համար: Մտքով մեղանչողներին Աստված հաճախ տալիս է մտահոգություն, որպեսզի միտքը շեղվի մեղավոր մտածումներից, տեսողությամբ մեղանչողներին Աստված տալիս է աչքի տկարություն, ձեռքով մեղանչողներին՝ մարմնի այդ անդամի տկարություն, մարմնով մեղանչողներին՝ հիվանդություն և այլն: Նույնպես և աղքատությունը հաճախ միջոց է Աստծո համար՝ մարդկանց խրատելու և դեպի իրեն դարձնելու:

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ

Աղքատներն ու չքավորները պետք է հիշեն Ավետարանի աղքատ Ղազարոսին, ով չքավորության ու թշվառության մեջ էր, սակայն ոչ մի բառ չասաց Աստծո դեմ և իր մահից հետո գնահաց Աբրահամի գոգը, այսինքն՝ Երկնքի Արքայություն: Մինչդեռ աղքատ Ղազարոսին արհամարհած հարուստը զցվեց դժոխք՝ մեծ չարչարանքների մեջ: Հարուստը, ծարավից պապակվելով, ցանկանում էր գոնե ջրի մեկ կաթիլ ունենալ իր շուրթերին, բայց չստացավ, որովհետև ողորմության արժանի չէր դարձել (Ղուկ. 16.19-26):

Մենք պետք է օգնենք կարիքավորներին և ողորմություն տանք աղքատներին: Իմաստունն ասում է. «Հացդ ջրի՛ն տուր՝ թող տանի, շատ օրեր անց պիտի նորից գտնես այն» (Ժող. 11.1): Եկեղեցական հեղինակ-

ներից մեկը բացատրում է այս խոսքը՝ ասելով, որ երբ մարդն իր հացը նույնիսկ ջուրն է գցում, այն չի կորչում, այլ ձկներն ուտում են հացը, և Ամենակարողն Աստված, տեսնելով մարդու հոգատարությունը անգամ կենդանի արարածների հանդեպ, գնահատում է մարդուն և օրհնության արժանացնում: Եվ եթե Աստված գնահատում է մարդու հոգատարությունը կենդանիների հանդեպ, որքան առավել բարձր կգնահատի հոգատարությունը կարիքավոր մարդկանց հանդեպ: Եկեղեցական հեղինակն ասում է, որ Քրիստոս քո դուռն է գալիս աղքատի կերպարանքով, և ինչ տալիս ես աղքատին, դնում ես Քրիստոսի ձեռքի մեջ: Դրա համար է ասվում, որ «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, և ըստ նրա տվածի էլ Աստված պիտի հատուցի նրան» (Առակ. 19.17): Իրականությունը ցույց է տալիս, որ մեր այս կյանքի օրերն անթիվ չեն, և մեր կյանքի ճանապարհը պետք է զարդարենք ողորմություններով, բարիքով, առաքինություններով և աստվածահաճո գործունեությամբ:

ՀԱՑԻ ԽՆԴԻՐ

Քրիստոս բազում հրաշքներ գործեց Իր երկրային կյանքի ընթացքում՝ հիվանդների բուժեց, մեռելների հարություն տվեց, սակայն երկրային, նյութական բարիքներով ավելի հետաքրքրված լինելու պատճառով մարդկանց վրա ոչ մի հրաշք այնքան մեծ ազդեցություն չունեցավ, որքան հացի բազմացումը: Հացի բազմացումից հետո էր, որ ժողովուրդը հավաքվելով՝ ցանկանում էր Քրիստոսին թագավոր դարձնել (Հովի. 6.14-15): Ցավոք, այսօր էլ մարդիկ, առաջին հերթին ավելի շատ նյութականի, քան հոգևորի մասին մտածելով, ցանկանում են իրենց թագավոր տեսնել այն մարդուն, ով իրենց ուտելու հաց կտա: Սա է պատճառը, որ ոմանք բողոքում են Եկեղեցուց, թե Եկեղեցին իրենց ուտելու և սնվելու բան չի տալիս՝ մոռանալով Եկեղեցու իրական առաքելությունը, և սա է պատճառը, որ շատ մարդիկ էլ վազում են աղանդների հետևից՝ օգուտներ ունենալու նպատակով: Սակայն Քրիստոս ժամանակին Իր մերժումով (Հովի. 6.15) ցույց տվեց, որ Ինքը երբեք թագավորը չէ շահախնդիր մարդկանց:

Երբ Ադամն արտաքսվեց դրախտից, նա նաև անիծվեց Աստծուց՝ իր հանապազօրյա հացը վաստակելու իր երեսի քրտինքով (Ծնն. 3.19): Եվ մարդկությունն այդ ժամանակից սկսյալ չարչարվել է՝ իր հացը քրտինքով վաստակելով: Երբ մարդն անիծվեց, երկիրը նույնպես անիծվեց նրա հետ միասին: Աստված ասաց. «Թող երկիրը անիծյալ լինի քո արածի պատճառով» (Ծնն. 3.17): Սա ցույց է տալիս մարդու սերտ կապը տիեզերքի հետ. երբ մարդն անկում է ապրում, նրա հետ անկում է ապ-

րում նաև ողջ տիեզերքը: Երկրի անիծված լինելն ի հայտ եկավ նրա պտղաբերության զորության նվազումով: Մարդը պետք է տանջալի աշխատեր, հողը մշակեր՝ որոշ պտուղներ և արդյունքներ ստանալու համար: Մենք կարող ենք ավելի լավ պատկերացնել մարդկանց չարչարանքը՝ իմանալով, որ մանգաղը գերանդիով փոխարինվեց միայն 18-րդ դարում:

Հնում բնակչության մեծամասնությունն ապրում էր գյուղերում, որովհետև միջին դարերում միայն սակավաթիվ քաղաքներ կային և քաղաքները մեծ դեր չունեին բնակչության համար: Օրինակ՝ 18-րդ դարում Անգլիայում կային ընդամենը երկու քաղաքներ, իսկ 19-րդ դարում Անգլիայում քաղաքների թիվը մի փոքր աճեց՝ հասնելով ութի: Մեր օրերում, ընդհակառակը, մարդկային բնակչության մեծ մասն ապրում է քաղաքներում, և բազում մարդիկ չեն աշխատում հողագործության մեջ: Սակայն նրանք այլ աշխատանք ունեն և նույնպես պետք է շատ աշխատեն՝ իրենց հացը իրենց երեսի քրտինքով վաստակելու:

Երբ Քրիստոս աղոթում էր Գեթսեմանի պարտեզում, Նրա քրտինքը հոսում էր արյան կաթիլների պես, որի մասին մեզ հայտնում է մասնագիտությամբ բժիշկ Ղուկաս Ավետարանիչը (Ղուկ. 22.44): Այս կերպ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, բուժեց մեզ Ադամին տրված և նրանով իր սերունդներին փոխանցված անեծքից՝ զոհագործությամբ նաև մեր առջև բացելով դռները Երկնքի Արքայության, որտեղ մենք հանապազօրյա հացի համար այլևս չենք չարչարվելու, ինչպես այս աշխարհում, այլ երկնային լուսեղեն օթարաններում վայելելու ենք հավիտենական երանությունն ու երջանկությունը:

ԱՆՇԱՀԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Հայրերն ասում էին, որ մարդը պետք է հիշի իր մահը, դժոխքի չարչարանքները, Ահեղ Դատաստանի օրը, որպեսզի հոգևորապես զգոն և արթուն լինի իր կյանքի ընթացքում: Սակայն Պողոս առաքյալն ասում է, որ պետք է փափուկ կերակուր տանք նոր դարձած քրիստոնյաներին, ինչպես փոքրիկ երեխաներին կաթ ենք տալիս և ոչ այլ ուտելիք (Ա Կորնթ. 3.2): Եվ մեռնելու, Դատաստանի օրվանից վախենալու հիշեցումը, որով և չարչարանքներից խուսափելու ու երանության հասնելու փափագը միայն այն քրիստոնյաների համար են, ովքեր իրենց առաջին քայլերն են անում դեպի կատարելություն: Առավել կատարյալ դառնալով՝ քրիստոնյաները պետք է հասկանան, որ պարտավոր են ապրելու առանց հոգևոր իմաստով շահի փնտրելու այստեղ կամ հանդերձյալում, այլ պետք է ապրել հավատքով, որովհետև դա ապրելու միակ ճիշտ ճանա-

պարհն է, և ինպես Պողոս առաքյալն է ասում, մենք առաջին հերթին պետք է ամեն ինչ անենք Աստծո փառքի համար (Ա Կորնթ. 10.31):

ՀՈԳԵՎՈՐ ԿԵՐԱԿՈՒՐ

Մարդիկ աշխատում են մարմնավոր կերակրի համար՝ հաճախ մոռանալով հոգևոր կերակրի համար աշխատելը: Մարդը միայն մարմնի սնումով չի կարող իրապես ապրել, այլ պետք է նաև սնի իր հոգին: Քրիստոս մեր Տերն Ինքն է պատվիրում. «Գնացեք աշխատեցե՛ք ոչ թե կորստյան ենթակա կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է հավիտենական կյանքի համար, և որը մարդու Որդին կտա ձեզ» (Հովհ. 6.27): Հաճախ շատ մարդիկ տքնաջան աշխատանքով դարձյալ դառը կարիքների ու նեղությունների մեջ են մնում, քանի որ նյութականն են իրենց համար առաջնային ու կենսական համարում: Մինչդեռ Տերունական աղոթքում նշվում է հերթականությունը՝ նախ Աստծո կամքի կատարման մասին հոգալ, հետո նոր մտածել հացի մասին. «Սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ՛ արքայութիւն քո: Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհա՛ց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր» (Մատթ. 6.9-11): Քրիստոս նաև ասում է. «Այսուհետև հոգ մի՛ արեք ու մի՛ ասեք՝ ի՛նչ պիտի ուտենք կամ ի՛նչ պիտի խմենք կամ ի՛նչ պիտի հագնենք, որովհետև հեթանոսներն են այդ բոլորը որոնում. քանի որ ձեր երկնավոր Հայրը գիտի, թե այդ բոլորը ձեզ պէտք է: Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. 6.33):

Երբ Ադամը արտաքսվեց դրախտից, դատապարտվեց քրտինքով վաստակելու իր հացը (Ծնն. 3.19): Նույնպես ջանքերով նաև հոգևոր հացն է վաստակվում, այսինքն՝ աղոթքով, ծոմապահությամբ, առաքինությունների գործադրմամբ: Ճգնավորները մեծ ջանքեր գործադրեցին՝ ապրելու աղոթքներով, սրբությամբ, և ճգնավորներ կոչվեցին նրա համար, որ ճիգ, ջանք գործադրեցին: Նրանք մեզ օրինակ եղան, որպեսզի մենք էլ ճգնավորներ լինենք, այսինքն՝ ճիգ և ջանք գործադրենք ոչ միայն մարմնավոր հացի համար, այլև աշխատենք հոգևոր կերակրի համար: Ով միայն մարմնավորի համար է աշխատում նման է դռան, որ ծխնիների վրա ետ ու առաջ է գնում, շարժվում է աշխատում, բայց հոգևորի մեջ չի առաջանում: Եվ կամ նման է ծույլ մարդու, ով անընդհատ շարժվում է պառկած տեղը այս ու այն կողմ, բայց նշանակալի ոչ մի օգուտ չի ունենում:

Ճիշտ է ասված, թե ով ամռանը շրջում է կռնեկուռ, ձմռանն ընկնում է դռնեդուռ: Մենք այնպես պետք է ապրենք, որ մեր կյանքի ձմռանը, այ-

սինքն՝ երկրային կյանքի ավարտին մեր աստվածահաճո ընթացքի շնորհիվ գանձեր ամբարած լինենք երկնքում: Շատերս այնպես ենք ապրում, կարծես թե մեր երկրային կյանքը վերջ չունի, բայց հաճախ հիշենք մեր մահը, ինչպես նաև հավատքի, բարի գործերի, Սուրբ Գրքի ընթերցանության, հոգևոր արժանիքների կարևորությունը, առանց որոնց փրկության չենք հասնի, որպեսզի այս առօրյայի մեջ աշխատենք ոչ միայն մարմնավորի, այլև հոգևորի համար:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Փիլիմոնի նամակը Պողոս առաքյալի գրություններից ամենափոքր նամակն է, բայց տալիս է մարդկությանը հուզող ամենամեծ հարցերից մեկի՝ հասարակության մեջ սոցիալական անհավասարությանն առնչվող հարցի պատասխանը: Որոշ պատմաբաններ այն կարծիքին են, որ հռոմեական կայսրության սահմաններում քրիստոնեությունն արագորեն տարածվեց, որովհետև քրիստոնեությունն ուսուցանում էր, որ Աստծո առջև բոլոր մարդիկ հավասար են: Կայսրության տարածքում սկսվել էին ստրուկների ապստամբությունները, որոնք դաժանությամբ ճնշվում էին, և տասնյակ հազարավոր մարդիկ ենթարկվում էին մահապատժի: Բացի դրանից իրենց վիճակից դժգոհ ցածր խավի բազմաթիվ մարդիկ կային: Եվ ահա այս պայմանները նպաստեցին, որպեսզի բոլոր մարդկանց հավասարության մասին հայտարարող քրիստոնեությունը լայնորեն ընդունելություն գտներ: Սակայն այս կարծիքը հիմնավոր չէ, որովհետև քրիստոնեությունն ընդունեցին նաև կայսերը մոտ կանգնած անձինք, ինչպես Պողոս առաքյալն է վկայում՝ «ովքեր կայսեր տնից են» (Փիլիպ. 4.21): Իսկ հետագայում էլ նաև կայսրերը քրիստոնյա դարձան:

Ավետարանի քարոզչությունը միտված չէր առաջին հերթին սոցիալական անհավասարությունը վերացնելուն: Պողոս առաքյալն ասում է. «Ծառանե՛ր, ամեն ինչում հնազա՛նդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ոչ թե մարդահաճո կերպով, ցուցադրական ծառայությամբ, այլ սրտի անկեղծությամբ՝ երկյուղ կրելով Տիրոջից: Տերե՛ր, ծառաների հետ վարվեցե՛ք ուղղամտությամբ և արդարությամբ. իմացե՛ք, որ դուք էլ Տեր ունեք երկնքում» (Կող. 3.22, 4.1): «Ծառանե՛ր, ամեն ինչում երկյուղով հնազա՛նդ եղեք տերերին, ոչ միայն բարիներին և հեզաբարոներին, այլև դաժաններին, քանի որ Աստծուց է այն շնորհը, երբ մեկը հանիրավի վիշտ է կրում բարի խղճով»,- ասում է Պետրոս առաքյալը (Ա Պետ. 2.18): Ստրկության մեջ լինելը, դժվարություններին ու չարչարանքներին դիմանալը ինչ-որ իմաստով սխրանք էր համարվում, Քրիստոսին չարչարանակից լինելու վարմունք: Սակայն քրիստոնյա հասարակության մեջ

ներքնապես վերացվում էր հին աշխարհին հատուկ տիրոջ և ստրուկի ախտավոր հոգեբանությունը, ինչպես որ առաքյալը պատվիրում էր ստրկատեր քրիստոնյա Փիլիմոնին քրիստոնյա դարձած իր ստրուկին ընդունել արդեն որպես հոգևոր եղբոր (Փիլ. 16): Եվ ստրկությունը, վերացվելով ներքնապես, վերանում էր նաև արտաքնապես, քանզի մարդկային բոլոր նման խնդիրներն իրենց լուծումը կարող են գտնել՝ սկսած մարդու ներաշխարհից: Հեղափոխությունները, ընդհակառակը, ցանկացան սոցիալական հավասարությունն ուժով հաստատել: Նման հեղափոխությունների նշանաբանն էր՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն: Բայց ինչպես կարող ենք տեսնել Ֆրանսիական մեծ հեղափոխությունից՝ սկսված Բաստիլի բերդի գրավումով 1789 թվականին կամ 1917 թվականի բոլշևիկյան հեղափոխությունից, ազատության, հավասարության, եղբայրության բոլոր բարի նպատակները և նշանաբանները խեղդվեցին արյունահեղության ու դաժանության մեջ, և շահամոլներ եկան իշխանության՝ մարդկանց վստահությունն օգտագործելով իրենց սեփական նպատակների բավարարման համար: Քրիստոնեության մոտեցումը տառացիորեն հասկացվող հավասարությունը չէր: Հասարակական կյանքում մենք բոլորս չենք կարող հավասար լինել. բոլորս չենք կարող տնօրեններ լինել առանց աշխատողների, մեզանից մեկը պետք է գործի կազմակերպողը լինի, իսկ մյուսները՝ կազմակերպված գործի համար աշխատողներ: Եվ եթե բոլորը արդար մարդիկ են, միմյանց համար դժգոհության առիթներ չեն ստեղծի:

Եթե քրիստոնեական սեր չկա, այսօրվա ամենաժողովրդավարական երկրում էլ կարող ենք փոխել ցուցանակները և դնել հին ցուցանակներ՝ հողատարածք ունեցողներին անվանելով ֆեոդալ կամ կալվածատեր, ձեռնարկություն ունեցողներին և նրանց աշխատողներին շահագործողներ և շահագործվողներ կամ ավելի ընդհանուր բառերով տերեր և ծառաներ կամ տիրակալներ և ստրուկներ: Ցավոք, աշխարհի շատ պաշտոնյաներ իրենց պաշտոնական աթոռներին իրենց զգում են իբրև տիրակալներ՝ մոռանալով կամ գուցե բոլորովին չիմանալով, որ պաշտոնյա նշանակում է ծառայող, սպասավոր, բայց ոչ թե հոգուտ իրեն, այլ հոգուտ ընդհանուրի: Ունևորը չունևորին օգնելու և չունևորը իր ստացածի դիմաց երախտագիտությամբ ծառայություն մատուցելու մղումը պետք է իրագործել քրիստոնեական սիրով: Միայն այս կերպ առանց խիստ դժգոհությունների և խռովությունների կարող է բարգավաճել որևէ երկրի հասարակական կյանքը՝ հիմնված քրիստոնեական սիրո վրա:

ՏՆԵՐԻ ՉԱՓՍԵՐԸ

Տները տարբեր չափսեր ունեն: Հարուստ մարդկանց տները շատ մեծ են, իսկ աղքատ մարդկանց տները շատ փոքր են: Այս իրողությանն անդրադառնալով՝ եկեղեցական հեղինակն ասում է, որ հարուստ մարդիկ պետք է հիշեն, որ բոլորս սերում ենք մեկ նախահորից՝ Ադամից, բոլորս ստեղծված ենք հողից և մահից հետո դառնալու ենք նույն հողը: Եվ թեկուզև հիմա մենք տների տարբեր չափսեր ունենք, սակայն մահից հետո հողի տակ մենք ունենալու ենք նույն չափսերի գերեզմանավայրեր:

ՀՐԱԺԱՐՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՉԻՑ

Նահատակների պարագային հետաքրիր մի երևույթ ենք տեսնում, որն ամոթի է մատնում այսօրվա բազմաթիվ մարդկանց: Հեթանոսները, ովքեր երկրային հարստություն ունեին, թողեցին ամեն ինչ հանուն Քրիստոսի, մինչդեռ մեր ժամանակներում բազմաթիվ քրիստոնյաներ թողնում են Քրիստոսին՝ հանուն երկրային բարիքների: Մարդիկ կան, ովքեր առաջին հերթին փնտրում են հավիտենականը, և մարդիկ էլ կան, ովքեր առաջին հերթին փնտրում են երկրային բարիքներ, դրամ, շքեղ առարկաներ՝ դրանք ավելի վեր դասելով աստվածային հավիտենությունից: Կյանքի այն շինարարության մեջ, որտեղ մարդիկ հիմքի փոխարեն տանիքից են սկսում, երբեք հաստատունություն չի լինում կամ երջանկության, կամ էլ երկրային բարիքների ձեռքբերման մեջ: Եվ մեր պայմաններում, երբ չկան քրիստոնյաների կյանքին և հավատքին սպառնացող մեծ հալածանքներ, հանուն Քրիստոսի ամեն ինչից հրաժարումը պետք է դրսևորվի առաջին հերթին երկնայինը, Աստծուն փնտրելով և Նրա կամքն իրագործելով:

ՊԱՅՔԱՐ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Այսօր աշխարհում բազմաթիվ մարդիկ ապրում են նեղության մեջ: Մի շարք հաստատություններ, միջազգային կազմակերպություններ աղքատության դեմ պայքարելու համար մշակում են ծրագրեր՝ սրա հիմնական պատճառ համարելով սոցիալական, տնտեսական ինչ-ինչ նախապայմաններ: Այս խնդրին անդրադառնում է նաև Սուրբ Գիրքը, բայց ի տարբերություն աշխարհիկ կերպով մտածողների, Աստվածաշունչը մարդկային աղքատության հիմնական պատճառներից մեկը համարում է նաև մարդու կրոնաբարոյական անկյալ վիճակը, որի վերահաստատման դեպքում մարդը կարող է հաղթահարել և ետևում թողնել բոլոր նեղությունները: Շատ մարդիկ նեղության մեջ են ոչ միայն քաղաքում, այլ նաև

գյուղերում, որտեղ բնակիչները մեծ սեփականություններ, հողատարածքներ ունեն, սակայն հաճախ ջրի պակասության, կարկտահարության և այլ պատճառներով չեն կարողանում իրենց ցանկալի արդյունքը ունենալ և դարձյալ նեղության են մատնվում: Աստված մարգարեի միջոցով շատ գեղեցիկ խոստումներ և միևնույն ժամանակ խիստ սպառնալիքներ տվեց մարդկությանը՝ ասելով. «Եթե լսեք մեր Տեր Աստծու ասածները, Տերը քեզ համար կբացի իր բարիքների շտեմարանը՝ երկինքը, որպեսզի ժամանակին անձրև տա քո երկրին, կօրհնի քո ձեռնարկած բոլոր գործերը, փող փոխ կտաս շատ ազգերի, բայց ինքդ նրանցից փոխ չես առնի: Իսկ եթե չլսես քո Տեր Աստծու ասածը՝ չպահես ու չկատարես նրա բոլոր պատվիրանները, որ ես այսօր պատգամում եմ քեզ, ապա այս անեծքները կթափվեն քո գլխին, կհասնեն քեզ: Անիծյալ կլինես դու քաղաքում և անիծյալ՝ դաշտում: Անիծյալ կլինեն քո շտեմարաններն ու քո ամբարները: Տերը քեզ աղքատ ու կարիքավոր կդարձնի և ձեռնարկած ու ձեռնարկելիք բոլոր գործերդ անհաջողության կմատնի» (Բ Օր. 28.1,12,15-17, 20):

Երբ հրեաները դուրս եկան Եգիպտոսից, աստիճանաբար սկսեցին երես դարձնել Աստծուց, տրտնջալ և ասել, որ Եգիպտոսում թեկուզ գերության մեջ էին, բայց կուշտ էին, միս էին ուտում, մինչդեռ հիմա սոված են (Ելք 16.2): Լսելով այս տրտունջը՝ Աստված բազմաթիվ լորամարգիներ ուղարկեց (Ելք 16.13), և հրեաներն այնպես շռայլությամբ ապրեցին, որ բազմաթիվ մարդիկ իրենց այդ ապրելակերպի պատճառով մեռան և գերեզման մտան: Եվ հրեաներն այդ վայրը կոչեցին Ցանկության գերեզմաններ (Թվեր 11.31-33), որովհետև բազում մարդիկ իրենց կյանքում կարևորեցին առաջին հերթին ոչ թե Աստծուն, այլ իրենց մարմնական և նյութական կարիքների գոհացումը, ինչի պատճառով էլ մեռան: Աստված մեզ նեղությունների է մատնում մեր իսկ օգտի համար, որոնցով ցանկանում է մեզ հասկացնել, որ սխալ է մեր կյանքի ու մտածելակերպի ընթացքը, կամ էլ մի նեղությամբ մեզ փրկում է շատ ավելի մեծ դժբախտություններից: Սա է ցույց տալիս նաև բնության գեղեցիկ օրինակը: Այգեգործը հաճախ չի թողնում, որ ծառը փարթամությամբ աճի, այլ էտում է ծառի ճյուղերը, նրան զրկում փարթամ աճումից, ճոխությունից, որպեսզի դրանով ծառի համար հետագայում ավելի շատ բերքատվություն և ավելի երկար կյանք ապահովի: Երբ հրեաները աստիճանաբար երես դարձրին Աստծուց, նրանց երկիրը կորցրեց պտղաբերությունը, իրենք զրկվեցին իրենց վայելած ապահովությունից ու խաղաղությունից: Ներկայիս Իսրայելի և Պաղեստինի տարածքը, որ մի ժամանակ կաթ ու մեղր բխեցնող երկիր էր (Ելք 3.8, 17; 13.5; 33.3), պայթում էր բերքի առատությունից ու լիությունից, այժմ դարձել է մի անապատ վայր և պատերազմների ու

կռիվների թատերաբեմ: Այսպես էլ յուրաքանչյուրիս կյանքում են իրականանում Աստծո խոստումներն ու սպառնալիքները՝ կախված նրանից, թե մենք որքանով ենք իրագործում աստվածային պատվիրանները:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Անտիկ աշխարհում տաղանդ բառը դրամի միավոր էր, իսկ այժմ այդ բառի իմաստի տակ շատեր հասկանում են կարողությունը հայտնի դառնալու, և, իհարկե, դրանով նաև դրամ վաստակելու: Սուրբ Հռիփսիմեն մերժեց հարստությունը, փողը, շքեղությունը, հասարակության մեջ ազդեցիկ դիրքը: Նույն բանն արեց Սուրբ Սանդուխտ կույսը: Նա թագավորի դուստր էր, ուներ մեծ հարստություն, իշխանություն, սակայն այս ամենից հրաժարվեց: Իսկ հիմա համեմատենք այս սրբուհիներին մերօրյա երիտասարդուհիների հետ: Մերօրյա կանանց ու աղջիկների գերակշռող մեծամասնությունը ձգտում է այն ամենին, ինչից հրաժարվեցին Սուրբ Հռիփսիմեն և Սուրբ Սանդուխտը:

Այսօր շատ երիտասարդուհիներ ձգտում են նորաձևության, սիրում են շքեղ մեքենա վարել և ամեն ինչում բարօրություն ունենալ: Սակայն Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է. «Մարդիկ երջանիկ են համարում նրան, ով ունի երթևեկության շքեղ միջոցներ, գեղեցիկ կին կամ ամուսին, հարստություն կամ բարօրություն: Սակայն եթե այս ամենը նրանից հեռացնենք, նա ամբողջովին դատարկ և միայնակ կմնա»: Եվ իրոք, եթե սահմանենք, որ երջանկությունը մարդուն շրջապատող իրերը կամ առարկաներն են, ապա այդպիսի սահմանումը ծիծաղելի և անհեթեթ կթվա: Իսկ սրբերն իրենց մերժումով մեզ սովորեցնում են, որ իրական երջանկությունը գալիս է մեկ այլ աղբյուրից՝ Աստծուց, հանուն որի իրենք հրաժարվեցին ամեն ինչից: Հետևաբար, իրենց ընտրությամբ նրանք մեզ բոլորիս կարծես ասում են. «Երջանկություն գտնելու համար նախ պետք է գտնենք Աստծուն»:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՐԴՅՈՒՆՔ

Սկզբնական շրջանում Կաթողիկոսներն ամուսնանում էին, որովհետև այն ժամանակ հատուկ ուշադրություն էին դարձնում տոհմի շարունակելիությանը: Մեր պատմիչները, սակայն, նշում են այն փաստը, որ Կաթողիկոսներն ամուսնանում էին որդեծնության համար և հոգևոր գոր-

ծունեության անցնելուց հետո ապրում էին այնպես, ինչպես հրահանգում էր Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված թղթում. «Նրանք, որ կին ունեն, թող այնպես ապրեն, որպես թե ունեցած չլինեին» (Ա Կորնթ. 7.29): Մեր սուրբ Կաթողիկոսներն ավելի շատ հետևել են կյանքի այն ձևին, որով ապրեցին մարգարեները, Հովհաննես Մկրտիչը և Հիսուս Քրիստոս, և որը քարոզում էր Պողոս առաքյալը՝ այն ավելի բարձր դասելով ամուսնությունից: Շատ մարդկանց համար սա կարող է անհասկանալի թվալ: Սակայն մեկ բան բոլորն էլ կարող են հասկանալ՝ ինչ էլ լինի, Աստծուն պետք է ամեն ինչից և բոլորից վեր դասել: Այսօր հաճախ ենք, դժբախտաբար, ականատես լինում հետևյալ իրողությանը: Տեսնում ենք ընտանիքներ, որոնք կարծես թե երջանիկ են, կան խելոք և գեղեցիկ երեխաներ, ապահով աշխատանք: Բայց մեկ էլ հանկարծ տեսնում ես, որ մի չնչին պատճառից ամուսինները բաժանվում են, ընտանիքը քայքայվում է, և երեխաների աչքերը լցվում են տխրությամբ: Հաճախ էլ ամուսինները ներքնապես արդեն բաժանված են լինում նույնիսկ միասին ապրելով: Ի՞նչն է դրա պատճառը: Մարդկանց համար նպատակ է դարձել երջանկությունը և լավ ապրելը, մինչդեռ նպատակը պետք է լինի Աստված, իսկ երջանկությունը դեպի Աստված այդ ձգտման արդյունքը: Ինչպես որ առանց կրակի չկա ջերմություն և առանց արևի՝ լույս, այնպես էլ առանց Աստծո չկա երջանկություն: Հաճախ մտածեք այս մասին և ճշմարտությունն ընդունելու դեպքում երջանկությունը ձեզ համար արդեն այլ իմաստ կստանա:

ԴՐԱԽՏ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Դրախտ բառը մեր մարդկային մտածողության մեջ համարժեք է դարձել երջանկություն և երանություն բառերին: Եվ դրախտի կորուստը մարդկության համար կարծես թե անխախտ և անփոփոխ երջանկության ու երանության կորուստն էր: Ըստ մի մտածողի շատ հետաքրքիր սահ-
ւ *13 – Քրիստոնեության իսկությունը* յու կոչումն է: Իրոք, եթե դիտենք ինքներս մեզ և մյուս մարդկանց, կնկատենք, որ մեր և մնացած բոլորի ողջ կյանքի որոնումներն ու փնտրտուքներն ունեն միայն մեկ նպատակ՝ երջանկություն: Եվ չնայած մեր բոլոր ջանքերին՝ շատերիս հաճախ այնպես է թվում, թե այդպես էլ չենք կարողացել հասնել մեր երազած երջանկությանը: Եվ կարծես թե Ադամից ժառանգաբար մեզ է փոխանցվել ոչ միայն անհնազանդության ադամական մեղքը, այլև դրախտային երջանկության կամ երանության կորստի ցավը և այն վերագտնելու տենչալի բաղձանքը: Երբեմն մենք, հոգնելով կյանքի առօրյայից ու միապաղաղությունից, հոգսերից ու դժվարություններից, ինքներս մեզ ասում ենք. «Այնպես կուզեի, որ

դրախտում լինեի»: Բայց միևնույն ժամանակ մեր մտքի մեջ դրախտը պատկերվում է իբրև հեքիաթային կանաչ տարածություն՝ մեղմ ու շոյող քամուց հեզությամբ այս ու այն կողմ օրորվող գեղեցիկ ծառերով, իրենց գեղեցիկ գլխիկները սիրահարների նման միմյանց մոտեցնող և տարածության մեջ բազմերանգ գույներ սփռող սքանչելի ծաղիկներով: Ահա թե մոտավորապես ինչ ենք պատկերացնում մենք, երբ արտասանում ենք *դրախտ* բառը: Բայց ամեն տեղ էլ խոտեր, ծառեր և ծաղիկներ կան, և մենք էլ շատ անգամներ ենք այդպիսի վայր տեսել կամ նման տեղում հանգստացել, սակայն ոչ մի անգամ մենք չենք զգացել, թե ինչ է դրախտը: Եվ եթե նույնիսկ հիանալի տրամադրություն ունեցող մեկի համար բնության այդ գեղեցիկ տեսքը կարող է հեքիաթային թվալ, ապա դառը դժբախտություն ճաշակած և հոգու խորքում նոր բացված վերք ունեցող մեկին այդ ամենը կարող է միայն մռայլ մի տեսարան թվալ: Հետևաբար, դրախտը դրախտ էին դարձնում ոչ թե խոտերը, ծառերն ու ծաղիկները, այլ՝ աստվածային ներկայությունը: Եվ երջանկության մեր ձգտումը կամ դրախտի տենչանքը, ինչքան էլ որ ինքներս չգիտակցենք դա, այնուամենայնիվ, աստվածային ներկայության ներքին և հոգևոր փափագն է, մի ներկայություն, որը մեզ բերում է հոգու անդորրություն, խաղաղություն և ներդաշնակություն: Իսկ ի՞նչ է երջանկությունը, եթե ոչ՝ հոգու խաղաղ և ներդաշնակ վիճակ: Բայց մենք ինչպե՞ս կարող ենք զգալ՝ սիրու՞մ ենք Աստծուն, թե՞ ոչ, և այդ սիրո պատճառով արդյո՞ք Աստված բնակվում է մեր մեջ: Սերը մի այնպիսի զգացմունք է, որը կարելի է միայն զգալ սրտի որոշ թրթիռներով և սրտի բոցավառ ջերմությամբ: Սակայն այսօր մեր սրտերը կարծես ընդդարմացել են, և շատ բան ինքներս չենք կարողանում զգալ: Այդ անզգայության հիմնական պատճառներից մեկն այն է, որ մենք այսօր ավելի շատ շփվում ենք անշունչ առարկաների հետ, իսկ մարդկանց հետ մեր հարաբերություններն էլ իջեցրել ենք սխալ մակարդակի վրա: Երբեմն մեզանից ոմանք ցանկանում են զգալ Աստծո հանդեպ իրենց սրտի ջերմությունը, սրտի այնպիսի երանելի ջերմություն, որն ունենում է խելահեղորեն սիրահարված մարդը: Սառած կամ անզգայացած սրտերը վերստին զգայուն դարձնելու և մեր մեջ աստվածային բնակությունը հաստատապես իմանալու համար լսենք, թե ինչ է ասում Հակոբոս առաքյալն իր ընդհանրական թղթում. «Եթե միմյանց սիրենք, Աստված բնակվում է մեր մեջ, և Նրա սերը մեր մեջ կատարյալ է» (Ա Հովհ. 4.12): Հետևաբար, եթե միմյանց սիրում ենք, Աստված բնակվում է մեր մեջ անկախ նրանից մենք դա երբեմն զգում ենք, թե ոչ, և սրտերը զգայուն դարձնելու պայմանն էլ առաքյալը շեշտում է՝ եթե միմյանց սիրենք: Այս պայմանը ենթադրում է ատելության բացակայություն, որովհետև եթե մեկն ատում է կամ արհամարհում է իր եղբորը, իր հարազատին կամ իր

բարեկամին, որոնց տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսնում (Ա Հովի. 4.20):

ԿՐԿԻՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սրբերի, նրանց ճգնությունների և զրկանքներով լի կյանքի մասին լսելով՝ շատերը կարող են հարցնել. «Ինչպե՞ս են այդ մարդիկ հրաժարվել այս կյանքում երջանկություն վայելելուց և ապրել են խստակյաց ճգնավորական կյանքով»: Սակայն մարդ արարածն ինքն էլ չի կարող հստակ պատասխանել այն հարցին, թե ինչ է երջանկությունը: Այս կյանքում կարող է լինել հարաբերական երջանկություն, որը ոմանց համար բարօրությամբ ապրելն է, մյուսների համար զավակներ ունենալը և նրանց առողջ ու ապահով տեսնելը և այլն: Ֆրանսիացի հայտնի մտածող Շատոբրիանը նշում է, որ եթե ուշադիր լինենք, կնկատենք, որ մեր բոլոր կրքերն ու ցանկություններն այս արեգակի տակ կարող են հեշտությամբ հագեցում գտնել, սերը, փառատենչությունը, բարկությունը լիովին բավարարվելու հնարավորություն ունեն: Բայց երջանկության պահանջը միակն է, որ հագեցում չունի: Մեր հոգին անընդհատ պահանջում է: Հազիվ իր տենչանքի առարկան ձեռք բերած՝ նա էլի է պահանջում: Ամբողջ աշխարհը չի գոհացնում նրան: Կենդանիները երբեք չեն խռովվում այն հույզով, որը խռովում է մարդու սիրտը: Նրանք վայրկենապես հասնում են իրենց գերագույն երջանկությանը. մի քիչ խոտ գոհացնում է գառանը, մի քիչ արյուն հագեցնում է վագրին: Ուրեմն, միակ արարածը, որ որոնում է իրենից դուրս և ինքն իրենով ամբողջություն չի կազմում, մարդն է: Եվ սրբերը հենց այդ գերագույն երջանկությանը՝ Աստծո հետ միավորությանն են ցանկացել հասնել դեռ այս կյանքի ընթացքում: Երանելի Օգոստինոսը դիպուկ է ասել. «Աշխարհն ունի որոշակի ցավեր, որոշ հաճույքներ, տագնապալից հանգստություն, թշվառությամբ լեցուն բաներ և … երջանկության դատարկ հույս»: Երջանկության մեր մարդկային պատկերացումները հաճախ չեն համապատասխանում իրականությանը և իրական երջանկության հասնելու համար պետք է նախևառաջ միավորություն Աստծո հետ:

ՉԱՐԻՔ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ Աստծուն հավատարիմ մարգարեները և Քրիստոսի առաքյալները այս կյանքում դաժան հալածանքների են ենթարկվել և սպանվել են: Այս իրողությունը ոմանց կարող է հուսահատության մեջ գցել, որովհետև եթե Աստծուն այդքան նախանձախնդիր մարդիկ նման

հալածանքներ են ունեցել, ապա ուրեմն ի՞նչ կլինեն սովորական հավատացյալները, ուրեմն Աստված է թույլ տալիս չարիքի ազդեցությունը: Եվ զարմանալի է, որ Աստվածաշնչում էլ ասված է. «Չարիք կպատահի՞, եթե Տերը չի արել այն» (Ամոս 3.6): Սակայն *չար* բառը երկու իմաստ ունի. առաջինը՝ անառակություն և այլ արատներ, բայց նաև չարիք են կոչվում քաղցը, մահը, հիվանդությունը և այլն, որոնք չեն կարող իսկական չարիք լինել, որովհետև դրանք պատճառ են դառնում առաքինության: Եկեղեցական սրբերից մեկը մի գեղեցիկ համեմատությամբ ասում է, որ նույնպես բժիշկը լավն է ոչ միայն այն ժամանակ, երբ հիվանդին տանում է բնության մեջ, կամ մեկ այլ հաճելի տեղ, այլ նաև այն ժամանակ, երբ տանջում է քացախով, ծարավով, զրկելով լույսից՝ ծածկում է սենյակը: Մարդիկ ցանկանում են երջանկություն: Բայց երջանկության հասկացությունն այնքան անորոշ հասկացություն է, որ չնայած յուրաքանչյուր մարդ ձգտում է դրան, սակայն երբեք չի կարող որոշակիորեն ասել, թե ինչ է ցանկանում: Ընդհանուր գծերով երջանկություն ասելով՝ մարդիկ հասկանում են մարմնական և հոգևոր բարիքներ վայելելու մշտական երանելի վիճակ: Սակայն աշխարհահռչակ փիլիսոփաներից մեկն ասում է. «Մարդն այդ պատկերացմամբ ուզում է երջանկություն, բայց որքան հաճախ է մարմնի թուլությունը նրան ետ պահել շվայտությունից, որի մեջ նրան կարող էր զցել հիանալի առողջությունը»: Այդ իսկ պատճառով երջանիկ լինելու համար առաջին հերթին անհրաժեշտ է գործել ըստ իմաստուն վարվելակերպի՝ կարևորելով պահքը, ժուժկալությունը, աղոթքը, հարգանքը, զսպվածությունը և այլն: Սրանց առնչվող ողջ մարդկության հարուստ փորձը ցույց է տալիս, որ, որպես կանոն, դրանք ամենից ավելի են նպաստում մարդու անձնական կյանքում իրական բարիքների ձեռքբերմանը:

ՄԱՀ

ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Երբեմն որևէ մեկի մահը մեր առջև որոշ հարցեր է դնում, որոնց պատասխանները մենք երկար ժամանակ չենք կարողանում գտնել: Աստված Իր էությամբ բարի է: Այդ իսկ պատճառով Նա երբեք չի կարող չարի պատճառ լինել: Երբ արեգակը ծագում է, նրանից չի կարող խավար ելնել, և երբ կրակը վառվում է, ապա հնարավոր չէ, որ նրանից սառնություն առաջանա: Ճիշտ այսպես էլ չարը կամ մահը երբեք չեն կարող Աստծուց լինել, որովհետև Աստված սեր է (Ա Հովհ. 4.8, 16): Երբ մարդն իր

սխալ ընտրությամբ մեղավոր եղավ, փոխվեց նաև նրա բնությունը, և մարդը դարձավ մահկանացու: Եվ մահվան պատճառները լինում են առաջացած տարիքը, պատահարները կամ էլ հիվանդությունները: Սակայն Աստված Իր բարի բնությամբ ցանկանում է այդ չարիքը ևս մարդու համար բարիք դարձնել, և եթե այս պատճառներից որևէ մեկի բերումով մահ է լինում, ապա Աստված արդար ու բարի ննջեցյալների հոգիները վերցնում և բնակեցնում է երկնային լույսերի ու խաղաղության մեջ մինչև ընդհանրական հարությունը: Մեր պարտքն է այդ օրերին ոչ միայն գերեզմաններ գնալը, այլ հատկապես առաջին հերթին եկեղեցում նրանց համար հոգեհանգիստ պատվիրելը: Քրիստոսից ստացած իշխանությունը առաքյալները ձեռնադրությամբ փոխանցեցին Եկեղեցու սպասավորներին, և քահանան, այդ աստվածային իշխանությամբ աղոթելով, խնդրում է Աստծուն ներել ննջեցյալների կամա և ակամա գործած մեղքերը ու նրանց հոգևոր հանգստություն և երանություն շնորհել:

ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀ

Քանի որ մարտիրոսների պարագային երբեմն հարցեր են առաջանում, թե ինչու էին նեղությունների մատնվում և շուտ մեռնում, եթե Աստված սիրում է նրանց, կամ ընդհանրապես ինչու են հիմա էլ որոշ մարդիկ վաղաժամ մահանում, ապա պարզաբանենք այս հարցերը: Աստվածաշունչն ասում է. «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց» (Սաղմ. 115.15): Այսինքն՝ մեզ համար անիմաստ և հաճախ անարդար է թվում այդպիսի մահը, սակայն Տիրոջ համար այն պատվական է: Ինչպես որ աշխարհիկ գիտնականները հայտնաբերում են ֆիզիկական աշխարհում գործող բնության տարբեր օրենքները, այդպես էլ սրբերը, որոնց այս իմաստով կարելի է կոչել հոգևոր գիտնականներ, աստվածային հայտնություններով և ներշնչումով հայտնաբերել են հոգևոր աշխարհում նույն զորեղությամբ գործող հոգևոր օրենքները: Շատ ուշագրավ է հատկապես վաղաժամ մահվան բացատրությունը: Ահա մի քանի պատճառներ: Կա մարմնի ծերություն և հոգու ծերություն: Մարմնի ծերությունը նշանակում է, որ մարդը, երկար տարիներ ապրելով, հասել է որոշակի իմաստության և անմեղության: Իսկ մարմնով երիտասարդ, բայց հոգով ծերը առ Աստված հավատքով և դրանով ձեռք բերված իմաստությամբ ունի մաքուր և անարատ վարք: Եվ ինչպես որ հոգին առավել է քան մարմինը, ճիշտ այդպես էլ հեգով ծերերն առավել են, քան մարմնով ծերերը, և բնական է, որ մեռնում են նրանք, ովքեր ավելի ծեր են: Նույնն է նաև բնության մեջ. որ պտուղը որ շուտ է հասնում, այն էլ առաջինն է ընկնում ծառից: Երկրորդ պատճառ. մեր օրերում տեսնում ենք, որ երբեմն մարդիկ վիճելիս

սպանում են միմյանց: Սակայն սրա հետ մեկտեղ նաև խորը ցավով ենք տեսնում, որ շատ ազնիվ, առաքինի և նորաստեղծ ընտանքի տեր մարդիկ հանկարծ մահանում են տարբեր պատահարներից: Բարիներին Աստված վաղահաս մահով խնամում է բազմափորձ կյանքի որոգայթներից, քանի որ մարդու հետագա կյանքը շատ ավելի ահավոր կլիներ հենց նրա համար: Գուցե այժմ մեծ վշտով համակված, խորը թախծի մեջ ընկղմված մարդիկ այսպես ասեն. «Թող Աստված գնա ու այդպես մեր թշնամիներին խնամի»: Սակայն Սուրբ Գրիգոր Տաթևացին, ցույց տալու համար, որ վաղահաս մահը երբեք պատահական չի լինում, այլ լինում է Աստծո ընտրությամբ, հետևյալ օրինակն է բերում: Երբ Դավիթ թագավորը և հրեա ժողովուրդը մեղքերի մեջ էին, Աստված ասաց թագավորին՝ պատուհաս պիտի լինի և քեզ հնարավորություն եմ տալիս ընտրելու երեքից մեկը. կամ երեք տարի սով պիտի լինի, կամ երեք ամիս սուր և գերություն, կամ երեք օր մահ: Եվ Դավիթն ընտրեց երեք օրվա մահը (Բ Թագ. 24.11-14)՝ ստույգ իմանալով, որ վաղաժամ մահը երբեք պատահական չի լինում, և առաջին հերթին մեռնելու են մեղսալից մարդիկ: Սակայն չէ՞ որ երբեմն բարիներն էլ են շուտ մեռնում: Նշեցինք, որ Աստծո նախախնամությամբ դա ևս մարդու բարիքի համար է լինում: Այս մասին Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է. «Մի՛ տարակուսիր ասելով, թե արդար երիտասարդը ամբարիշտի հետ է մեռնում: Թեպետ մահվան ճանապարհը մեկ է, որով երկուսն էլ ընթանում են, բայց նրանց հույսը զանազան է. բարին գնում է դեպի հանգիստ, իսկ չարը՝ դեպի նեղություն և տրտմություն, ճիշտ այնպես, ինչպես երկու երիտասարդներ գնում են թագավորի մոտ: Մեկը լի է խնդությամբ, որովհետև նրա սիրելին է, իսկ մյուսը, որ չարագործ է, լի է տրտմությամբ, որովհետև գնում է տանջանքի և մահվան»: Այսինքն՝ Աստված ամեն ինչ անում է բարիների օգտի համար, իսկ չարերին մահվան մատնելով՝ վերացնում է նրանց չարիքները: Վաղաժամ մահվան երրորդ պատճառը կարելի է տեսնել մարտիրոսների օրինակով: Մարտիրոսները, ովքեր հոժարակամ էին մեռնում երիտասարդ հասակում, տենչում էին դուրս գալ այս աշխարհից և ելնել երկինք: Ճիշտ այսպիսի մղում ուներ նաև Դավիթ թագավորը, երբ ասում էր. «Հոգիս ծարավ է Քեզ, Աստված հզոր և կենդանի. ե՞րբ պիտի գամ ու երևամ Աստծու առաջ» (Սաղմ. 41.3): Նույն կերպ նաև Պողոս առաքյալն էր ասում. «Մարմնից դուրս գալը և Քրիստոսի հետ լինելը ավելի լավ եմ համարում» (Փիլիպ. 1.23): Ինչպես նաև նրա հետևյալ խոսքերը բացահայտում են հավիտենականության անհամեմատելիությունը ժամանակավորի հետ. «Ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլիպ. 1.21): Սակայն մի հարց ևս մեզ կարող է հանգիստ չտալ. «Բայց չէ՞ որ այդ մարդիկ երեխաներ ունեն, մի՞թե անարդարացի չէ նրանց զրկել ի-

րենց խնամակալներից»: Մեր Եկեղեցում հիշատակվող սրբերից մեկին՝ Երանոս եպիսկոպոսին, ընկերները համոզում էին իր երիտասարդությունը և հատկապես իր երեխաներին խղճալով հրաժարվել հավատից, որպեսզի ինքը երիտասարդ հասակում չմեռնի, ու նաև իր երեխաների կողքին լինի: Երանոսը պատասխանում է. «Իմ երեխաներն Աստված ունեն, որը կհոգա նրանց մասին: Ինձ ոչինչ չի ստիպի հրաժարվելու իմ Քրիստոսից»: Այս մեծ սրբի արարքը մեզ ստիպում է հիշել Քրիստոսի խոսքերը, թե՝ ով որևէ մեկին սիրում է Ինձնից առավել, Ինձ արժանի չէ (Մատթ. 10.37, Ղուկ. 14.26): Ըստ Աստվածաշնչում արձանագրված երկարակեցության օրենքի՝ Տիրոջ երկյուղը, Աստծո պատվիրանների իրագործումը մարդու համար ապահովում են երկար և խաղաղ կյանք (Ելք 20.12, Առակաց 3.1-2, 4.10, 10.27, Մատթ. 15.4, Եփես. 6.2-3): Իսկ երբեմն նաև բարի մարդկանց հասնող վաղաժամ մահվան մասին իմանալով, որ ամեն ինչ լինում է մարդու հավիտենական երջանկության համար, փառք տանք Աստծուն և հաճախ մարտիրոսների հիշատակի համար արտասանվող խոսքերը գործածենք նաև նրանց համար, ովքեր վաղաժամ հեռացել են այս աշխարհից՝ անցնելով դեպի հավիտենություն. «Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի. ամեն»:

ԿՐԿԻՆ ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Հոբը, ահավոր վշտերի մեջ ընկնելով, դարձյալ չմեղանչեց Աստծո դեմ: Եվ իր այս արդարության համար Աստված նրան առաջվանից ավելի մեծ օրհնությունների արժանացրեց: Դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող է մարդն այսքան դժբախտությունների մեջ չընկնել հուսահատության գիրկը: Սակայն պետք է իմանալ, որ նույնիսկ վաղաժամ մահվան պարագային Աստված գործում է ըստ Իր աստվածային իմաստության՝ անօրենություններից հեռու մարդկանց օգտին ամեն ինչ անելով միմիայն բարիքի համար: Աստված է կյանք պարգևողը: Այս ճշմարտության շեշտումով Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է. «Երբ Աստված Իր տվածն է առնում, ոչ ոք չի կարող մեղադրել, որովհետև Իրենն է և իշխանություն ունի: Երբ մեզ պարտքով փող են տալիս, շնորհակալություն ենք հայտնում այն ժամանակահատվածի համար, որ տալիս են, և չենք մեղադրում այն բանի համար, որ վերցնում են մեզանից իրենց սեփականությունը: Մի՞թե պիտի մեղադրենք Աստծուն, որ Իր սեփականությունն է վերցնում»: Մահը մենք այլ ձև ենք ընդունում, քան անհավատները: Ինչպես գրվածքի նյութն է անգետի համար, որ միայն տառերն է տեսնում, իսկ գրագետը հասկանում է իմաստը, այդպես էլ մահը, որի մեջ մենք տեսնում ենք հարությունը, հոգու անմահությունը և հավիտենական կյան-

քի հույսը:

ԲԵԹՂԵՀԵՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Հերովդեսը հրամայեց սպանել Բեթղեհեմում գտնվող երկու տարեկան և դրանից ցածր բոլոր երեխաներին՝ հուսալով, որ Քրիստոս սպանված երեխաների մեջ կլինի (Մատթ. 2.16): Այս մասին պատմելով՝ Մատթեոս ավետարանիչն ասում է. «Այն ժամանակ կատարվեց Երեմիա մարգարեի բերանով ասվածը, թե՝ Ռամայում մի ձայն գուժեց. ողբ ու լաց ու սաստիկ կոծ. Ռաքելը լալիս էր իր զավակների վրա և չէր ուզում մխիթարվել, քանի որ նրանք այլևս չկային» (Մատթ. 2.17-18): Այս բառերն առաջին հայացքից դեպքի հետ առնչություն չունեն, քանզի ի՞նչ կապ կա Ռամայի և Բեթղեհեմի միջև, և ինչու՞ է Ռաքելը հիշատակվում այստեղ: Սա հասկանալու համար պետք է որոշ տեղեկություն իմանալ: Մեկնիչ Ստեփանոս Սյունեցին ասում է, որ Ռաման թարգմանվում է Բարձր վայր: Ռաման Իսրայելի քաղաքներից մեն էր: Երբ հրեաները Հեսուի առաջնորդությամբ անցան Հորդանան գետը և մտան իրենց խոստացված երկիրը, Աստծո պատվերի համաձայն երկիրը բաժանեցին Իսրայելի տասներկու ցեղերի միջև (Հեսու 13-19): Ռաման բաժին ընկավ Հակոբ նահապետի կին Ռաքելից ծնված Բենիամինին (Հեսու 18.25): Ըստ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի՝ Ռաքելը, ով իր վերջին զավակին՝ Բենիամինին ծննդաբերելու ժամանակ երկունքի ցավերից մեռավ (Ծննդ. 35.16-19), Բեթղեհեմացի վշտակիր մայրերի օրինակը եղավ: Ռաքելի որդեծնության ցավը Բեթղեհեմի որդեկորույս մայրերի ցավի և ողբի նախատիպն է ներկայացնում: Ավետարանչի կողմից ասված խոսքերը՝ Ռաքելի և Ռամայի հիշատակումով, մեջբերում են Երեմիայի մարգարեությունից: Երեմիան 586 թ. Բաբելոն տարվող գերված հրեաների մեջ էր: Ռամա քաղաքով անցնելիս բաբելոնացիներն իմանում են, որ Երեմիան սուրբ մարդ է համարվում հրեաների մեջ, և Ռամայում ազատ են արձակում մարգարեին (Երեմ. 40.1-5): Այդ ժամանակ մարգարեն ասում է այս խոսքերը՝ նկատի ունենալով, որ եթե Ռաքելը վեր կենար և տեսներ հրեա ազգի զավակներին այս վիճակում, լաց կլիներ և չէր մխիթարվի: Եվ Մատթեոս ավետարանիչն այս խոսքերը հիշատակում է Բեթղեհեմի մանուկների կոտորածի առնչությամբ, քանի որ Ռաքելը թաղված է Բեթղեհեմում (Ծննդ. 35.19):

Բեթղեմի մանուկների հետ պատահածը ահավոր ողբերգություն է: Բեթղեհեմի մանուկները անմեղ նահատակներ էին, ովքեր անգիտակից կերպով իրենց արյունը թափեցին Քրիստոսի համար: Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է հետևյալը: Մեր կյանքի նպատակը այստեղ մեղսալի հաճույքների մեջ ապրելը չէ, այլ ապրելը հավատքով և առաքինությամբ՝

արժանանալու հավիտենական կյանքին, հասնելու հավիտենության խաղաղ ափը: Եվ Բեթղեհեմի մանուկները հասան այդ խաղաղ և ուրախալի վայրը, սակայն այսպիսի ողբերգական ճանապարհով:

ՄԵՌՆԵԼԸ ՇԱՀ Է

Հատկապես այն օրերին, երբ մենք հիշում ենք մեր ննջեցյալներին, կամ գլխիկոր կանգնում ենք մեր հարազատների, ազգականների կամ բարեկամների գերեզմանների առջև, տարբեր տխուր ու թախծոտ մտքեր ենք ունենում երբեմն մեր թերահավատության պատճառով: Մենք մտածում ենք՝ մի՞թե սա է նրանց և մեր բոլորի վերջը, կա՞ արդյոք կյանք մահից հետո, եթե այո, ապա ի՞նչ է լինում մարդկային հոգին՝ բաժանվելով մարմնից: Ահա այս և նման հարցերի պատասխանները: Հիսուս Քրիստոս ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի բազում արդյունք կտա» (Հովհ. 12.24): Ավետարանի այս հատվածը հեգևորականներն ընթերցում են հոգեհանգստյան արարողության ժամանակ՝ մեկ անգամ ևս վկայելով, որ ըստ Քրիստոսի խոսքի կամ էլ ըստ Պողոս առաքյալի հաստատման՝ մեռնելը շահ է (Փիլիպ. 1.21): Գուցե զարմանալի է նման պնդումը, սակայն այն ավելի լավ հասկանալու համար պետք է իմանալ հետևյալը: Թեպետ մարդը երկար է ապրում, սակայն նրան պատկանող օրերը երկուսն են՝ ծննդյան և մահվան: Այն, որ դրանց միջինն է, մերը չէ, այլ ըստ պատահման, որովհետև շատ բաներ են մեզ պատահում այդ ընթացքում: Այս երկու օրերից թվում է, թե ծննդյան օրն է լավ, որի համար էլ ուրախանում ենք: Սակայն Սողոմոնը, ընդդեմ մեր կարծիքի, ասում է. «Մահվան օրը լավ է ծննդյան օրից» (Ժող. 7.2): Պատճառն այն է, որ ծնվելիս գալիս ենք այս ցավալի աշխարհ, իսկ մահով ազատվում ենք այս աշխարհից: Այս կյանքը բազմահոգ է, իսկ այն կյանքը՝ առանց հոգնության և կարոտության: Դարձյալ՝ ծնունդը մահվան է բերում մեզ, իսկ մահը՝ հավիտենական կյանքի, հետևաբար «լաւ է օր մահու, քան օր ծննդեան»: Այս կյանքում չար մարդկանց և անհավատների ենք ընկերակիցներ ունենում, իսկ մահից հետո՝ սուրբ մարդկանց և հրեշտակների:

Եթե մենք ուշադիր լինենք, կտեսնենք, որ ննջեցյալին թաղողները ճիշտ և ճիշտ նույն գործն են անում, ինչ հողագործները: Հողագործը երկար ժամանակ քրտնաջանորեն աշխատելով սերմեր է հավաքում, այնուհետև, երբ գալիս է ցանելու ժամանակը, իր մեծ աշխատանքով հավաքած սերմերը գետին է նետում: Եվ ոչ միայն այս, դեռ ավելին, սերմերը հողին նետելով՝ նա միևնույն ժամանակ երբեմն-երբեմն հայացքը եր-

կինք է բարձրացնում և աղոթում, որ անձրև գա և հողի մեջ փտեցնի տքնաջան աշխատանքով իր կողմից վաստակած այդ սերմերը, որպեսզի ինքը շատ ավելի մեծ շահ և արդյունք ստանա: Իսկ նրանք, ովքեր այդպես չեն վարվում, շատ շուտով սպառում են իրենց պաշարը և մատնվում են սովի, աղքատության և կործանման: Ահա ճիշտ այդպես էլ, երբ գալիս է մարդու երկրային կյանքի վախճանը, մենք նրան հողին ենք հանձնում, որպեսզի մարդն ինքը դրանից ավելի մեծ շահ ունենա: Մարդու հոգին անմահ է և մահից հետո բաժանվում է մարմնից, հեռանում այս երկրից ու սպասում մեռելների ընդհանրական հարության: Պողոս առաքյալը մեզ սովորեցնում է, որ մարդու թաղվելը շահեկան է նրանով, որ հողին է հանձնվում ապականացու մարմին, բայց մարդը հարություն է առնելու անապական, հոգևոր և կատարյալ մարմնով (Ա Կորնթ. 15.42-49): Շատեր դժվարանում են հավատալ այս ճշմարտությանը, և Աստվածաշնչի նման պնդումները համարում են պարզապես մխիթարիչ պատասխան վշտացած սրտերի համար: Սակայն եկեք քննենք և տեսնենք, թե արդյո՞ք մարդկային հարությունը բոլորովին անհնար է: Գիտնականներն այդպես էլ մինչև օրս չեն կարողանում գիտականորեն հասկանալ և բացատրել, թե որտեղից է սկիզբ առել ողջ տիեզերքը: Այն ամենը, ինչ կարողացել են անել նրանք այս հարցի ուսումնասիրման համար այն է, որ առաջ են քաշել մի քանի տեսություններ տիեզերքի առաջացման վերաբերյալ՝ միևնույն ժամանակ անպատասխան թողնելով դրա և ընդհանրապես նյութի ծագման հարցը: Դրա համար էլ արդեն մեր օրերում բազում գիտնականներ ի լուր ողջ աշխարհի բացահայտ խոստովանում են ամեն ինչի սկզբնական ծագման համար գերբնական բանականության անհրաժեշտությունը: Փորձեք վերացնել նյութը և կտեսնեք, որ չեք կարողանա: Նյութը հնարավոր չէ վերացնել, այն չի ոչնչանում, այլ պարզապես մի վիճակից վերափոխվում է մեկ այլ վիճակի: Եվ Նա, ով ոչնչից ստեղծեց ողջ տիեզերքը, մի՞թե չի կարող արդեն գոյություն ունեցող տարրերից վերականգնել սկզբնականը: Մարմնի մահը և փտումը կարելի է անվանել նաև արատ և թերություն: Բայց ահա արատը երբեք ամբողջական լինել չի կարող: Դեռևս չորրորդ դարի մեր եկեղեցական Հայրերից մեկը հետևյալն էր ուսուցանում. «Արատն իր բնությամբ սահմանափակված է անհրաժեշտ սահմաններով: Օրինակ՝ երկնային երևույթի գիտակներն ասում են, որ ողջ աշխարհը ողողված է լույսով, իսկ մութը լինում է այնտեղ, որտեղ երկրային մարմնի վրա ստվեր է ընկնում: Արեգակը երկրից բազում անգամներ մեծ լինելով՝ ողջ երկիրը լույսով է ողողում, և եթե որևէ մեկը կարողություն ունենա գնալ և անցնել ստվերից այն կողմ, ապա անպայման դարձյալ կհայտնվի լույսի մեջ: Ճիշտ այդպես ենք նաև մենք. որևէ մեղքից հետո զղջում ենք և դարձյալ որոշ ժամանակ լույսի մեջ ապրում»: Բնութ-

յան օրենքի համաձայն՝ իր մեջ ինչ-որ չափով կենդանություն պարունակող որևէ սերմ հողի մեջ ընկնելուց հետո անպայման հարություն է առնում նոր և կատարյալ մարմնով: Եվ քանի որ մարդու մարմնի կենդանությունը՝ հոգին, անմահ է, ապա այդպես էլ հարություն է առնելու նաև մարդը, և բնության այսպիսի երևույթները մեզ ուսուցանում են այս մասին: Սա ապացուցեց նաև Քրիստոս՝ հարություն տալով տարբեր մարդկանց, և մեռյալներից աստվածաբար հարություն առավ նաև Ինքը:

ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒ ՄԱՀՎԱՆ ՀԱՄԱՐ

Սրբերից երկուսի մասին պատմությունը, որը հիմա ձեզ ենք ներկայացնելու, շատերիդ մեջ նախապես գուցե բողոք և մեծ զայրույթ առաջացնի: Ադրիանոսը հեթանոս զինվորական էր: Նա ամուսնացած էր քրիստոնյա մի բարեպաշտ կնոջ հետ, որի անունն էր Անատոլա կամ Նատալիա: Ադրիանոսն իր պաշտոնի բերումով ականատես էր եղել շատ նահատակությունների, զարմացել քրիստոնյաների նվիրվածության վրա, աստիճանաբար իմացել էր քրիստոնեության մասին ու հավատացել Քրիստոսին: Նա իմանում է նաև, որ հանուն Աստծո նահատակությունը համարվում է հավատքի և սիրո մեծագույն ապացույց, որը մարդուն տանում է Երկնքի Արքայության մեջ հավիտենական երանության: Եվ Ադրիանոսն իր անունը գրել է տալիս կալանավորների ցուցակի մեջ: Ատյանի առջև նա հայտնում է իր արարքի մասին, բանտարկվում և մահվան դատապարտվում: Կինը, նահատակ ամուսին ունենալու բերկրանքից երջանկացած, գնում է բանտ՝ իր ամուսնու շղթաները համբուրելու: Նահատակությունից առաջ Ադրիանոսը երաշխավորագրով տուն է գալիս, որպեսզի կնոջը հայտնի իր մահապատժի օրը: Անատոլան կարծում է, թե ամուսինն ուրացել է Քրիստոսին, և մերժում է դուռը բացել: Բայց երբ տեղեկանում է կատարվածի մասին, երջանկությամբ ընդունում է ամուսնուն: Մահապատժի ժամանակ կանանց թույլ չէին տալիս մոտ գտնվել: Բայց Անատոլան, տղամարդու հագուստներ հագնելով, բարձրանում է դահճի մոտ և վախով ու երկյուղածությամբ բռնում ամուսնու ոտքերը, մինչ դահիճը կիրականացներ մահապատիժը:

«Ի՜նչ անհեթեթություն, ի՜նչ խելագարներ են սրանք,- կմտածեն շատ մարդիկ առաջին հերթին,- մի՞թե սիրող կինը կուրախանա իր ամուսնու մահվան համար, դեռ ավելին, մի՞թե կօգնի իր ամուսնուն նահատակվելու»: Հիմա խաղաղ ժամանակներ են, և նման նահատակության անհրաժեշտություն չկա, բայց նախկինում՝ հալածանքների շրջանում, մարդիկ ավելի լավ էին համարում հանուն Քրիստոսի մեռնել, քան թե ուրանալ ու ապրել առանց Քրիստոսի: Առաջ մահը սարսափ էր պատճառում, բայց քրիստոնեության մեջ, ինչպես նշում է Պողոս առաքյալը, մեռնելը շահ է

(Փիլիպ. 1.21), որովհետև ճշմարիտ քրիստոնյային տանում է միացնելու Քրիստոսին, տանում է միացնելու Նրան, ում սիրում են ամբողջ հոգով, ամբողջ մտքով և ամբողջ էությամբ: Բայց շատեր կհարցնեն՝ ինչպե՞ս կարող է սիրող կինը համակերպվել այս ամենի հետ: Ո՞րն է սերը, ամբողջովին վերցնե՞լ, թե՞ ամբողջովին տալ: Չէ՞ որ ճշմարիտ սերը առաջին հերթին ամբողջական նվիրաբերումն է և ոչ թե ամբողջական նվիրաբերում պահանջելը: Այսօրվա մարդկանց սիրո հասկացողության մեջ մեծ տեղ է գրավում եսասիրությունը: Մենք ցանկանում ենք, որ մեզ ուշադրություն դարձնեն, մենք ցանկանում ենք, որ մեզ տան, մենք ցանկանում ենք, որ մեզ երջանկացնեն, մինչդեռ իրական սիրո մեկ հատկությունը նույնիսկ սեփական տառապանքների հաշվին սիրած էակին երջանիկ տեսնելու կարողությունն է: Ահա այս իրական սերն ուներ նաև Անատոլան, ով համաձայն էր ամուսնու նահատակությանը, ամբողջ սրտով հավատալով, որ ամուսինն այդ նահատակությամբ ձեռք է բերելու հավիտենական երանություն: Նա համաձայն էր իր տառապանքների հաշվին իր ամուսնուն երանության մեջ տեսնելու: Եվ Անատոլան մի անգամ տեսիլքում տեսնում է ամուսնուն, ով նրան անվանում է մարտիրոսների քույր, որովհետև Անատոլան գնում էր բանտերը և խնամում մահվան դատապարտված քրիստոնյաներին: Անատոլան խաղաղ վախճան է ունենում: Նա իր հոգին ավանդում է աղոթելու պահին:

ՄԱՀՎԱՆ ՊԱՏԻԺԸ

Որոշ մարդիկ մահը պատկերացնում են որպես մի կմախք՝ ձեռքին գերանդի, որը հնձում է կենդանի մարդկանց՝ խլելով նրանց կյանքը: Մահվան նման նկարագրություն կա նաև Զաքարիա մարգարեի մարգարեության մեջ: Հրեշտակը հարցնում է մարգարեին. «Ի՞նչ ես տեսնում»: Եվ մարգարեն պատասխանում է. «Թռչող գերանդի եմ տեսնում՝ քսան կանգուն երկարությամբ և տասը կանգուն լայնությամբ»: Եվ հրեշտակը բացատրում է. «Դա այն անեծքն է, որ տարածվում է ամբողջ երկրի երեսին, որովհետև ամեն գողի մահացու պատիժը դրանով պիտի իրագործվի» (5.1-3):

Մարդկության պատմությունը ցույց է տալիս, որ ոչ մի բռնակալ չի մեռել հանգիստ մահով, այլ՝ ահավոր չարչարանքներով: Մարգարեության մեջ հրեշտակի խոսքերը զգաստության ու ապաշխարության են կոչում այսօրվա գողերին ու ավազակներին, ովքեր իրենց հեղինակությունը փորձում են սպառնալիքներով հաստատել, քանզի նրանք էլ կմեռնեն նույնպիսի ահեղ չարչարանքներով, եթե չզղջան և ետ չդառնան իրենց մեղսալի ճանապարհից:

ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՏՈՒՄ

Մենք մխիթարվում ենք՝ իմանալով, որ մեր ննջեցյալների հոգիները երկնքում են, բայց տխրում ենք, իմանալով, որ նրանց մարմինները փտելու են երկրի վրա՝ հողի տակ: Սակայն սրա համար, ինչպես ասում է Սուրբ Հովհան Ոսկեբերանը, ուրախանալ է պետք: Քանզի եթե մարմինները չփտեին, մարդիկ կապված կմնային իրենց սիրելի հարազատների մարմիններին, կսարքեին դամբարաններ, ուր կզետեղեին գեղեցիկ իրեր, դրանք կզարդարեին տարբեր զարդերով, և կառաջանային մեռյալների քաղաքներ, ինչը մարդկանց կշեղեր ճշմարիտ աստվածպաշտությունից: Նաև մարմինները փտելով հող են դառնում, որպեսզի մարդիկ հավատան, որ Աստված մարդուն հողից է ստեղծել (Ծնն. 2.7; 3.19, 23): Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ գերեզմաններից մարդիկ հարություն են առնելու նոր, անապական, փառավորյալ մարմիններով (Ա Թեսաղ. 4.15, Ա Կորնթ. 15.42-44, 53), որով և մեռյալների մարմինների փտելու համար պետք է ուրախանալ, ինչպես ուրախանում են խարխուլ տան մեջ ապրող մարդիկ, որոնց դուրս են հանում տանից՝ այն քանդելու և նրանց բնակության համար առավել շքեղ, նոր տուն կառուցելու համար:

ՎՇՏԻ ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցական կանոնն արգելում է մահացածի համար տևական սուգ անելը: Եթե մեռածի հարազատները շարունակում են երկար ժամանակ ողբալ ննջեցյալի վրա, ապա, ըստ եկեղեցական կանոնի, այդ մարդիկ զրկվում են եկեղեցում Հաղորդություն ստանալուց, և հոգևորականն իրավունք չունի նրանց խնդրանքով այդ ննջեցյալի համար հոգեհանգստյան արարողություն կատարել: Սակայն քահանան պարտավոր է իր նախաձեռնությամբ հիշել ննջեցյալին մեռելոցի օրերին՝ հոգեհանգստյան արարողությունը կատարելու ժամանակ: Նման մի կանոն կա մեկ այլ պարագայի համար: Երբ մահացող մարդը պատվիրում է իր հարազատներին ողբալ իր մահը արցունքերով, լաց ու կոծով, և երբ հետո հարազատները չեն հետևում մահացածի այս ցանկությանը, որ հատուկ է հեթանոսներին կամ անհավատներին, մահացածի հարազատներն ու մերձավորները չեն զրկվում Հաղորդությունից, սակայն քահանան իրավունք չունի որևէ արարողություն կատարելու այդ ննջեցյալի առնչությամբ:

Երբ մեր վիշտը սահմաններ չունի, դա նշանակում է, որ մերժում ենք Քրիստոսի Հարությունը, հարության հույսը բոլոր մահացածների, հոգու անմահությունը և հույսը հանդերձյալ կյանքի:

Հին Կտակարանում օրենքներ կային, որոնք արգելում էին նույնիսկ դիպչելը դիակին, որովհետև դիպչելու դեպքում մարդն անմաքուր էր համարվում (Թվեր 6.6-7, 19.11-13): Մաքրվելու համար նա պետք է իրեն լվար հատուկ ջրով, որ հրեաների կողմից գործածվում էր մաքրման կրոնական արարողությունների համար: Եվ գուցե սրա հիշատակումով է հայերիս մոտ տարածվել նման մի սովորություն: Երբ թաղման օրը կամ դրան անմիջապես հաջորդող օրերին վերադառնում են գերեզմանոցից, ձեռքները լվանում են տան մուտքի առջև: Հավանաբար սա նշանակում է նաև վիշտը տանից դուրս թողնելը և քրիստոնեական չափավորությունը սգի և տխրության մեջ:

ԱՌԱՔԻՆԻ ՄԱՀ

Սրբերի կյանքի պատմություններից տեսնում ենք, որ նրանք բոլորն էլ առաքինի ապրելով նաև առաքինի մահ են ունեցել՝ արժանանալով հավիտենական կյանքի: Եվ մենք ինքներս, սա իմանալով, մեր ազատ կամքով ընտրենք միայն բարին՝ միշտ հիշելով այս իմաստուն խոսքերը. «Առաքինի մահը գանձ է, և յուրաքանչյուր ոք բավականաչափ հարուստ է, որպեսզի ձեռք բերի այն»:

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՆՆՁԵՑՅԱԼԻ

Քրիստոնեությունը հորդորում է իր հետևորդներին չափավոր լինել վշտի մեջ, որովհետև մահն ինչ-որ իմաստով նաև ուրախություն է, քանզի ննջեցյալի հոգին ժամանակավորից անցնում է հավիտենություն և բնակվում Աստծո շնորհած երանելի խաղաղության մեջ: Սակայն կան մարդիկ, որոնք իրենց կյանքն անցկացրել են անհավատությամբ և մեղքերով ծանրաբեռնված: Այդպիսիների համար հոգեհանգստյան արարողությունը շատ քիչ բանով կարող է օգտակար լինել: Եվ միայն մեկ հնար է մնում՝ աղոթել ու ողորմություն անել ննջեցյալի հիշատակի համար: Ինչու՞ հենց ողորմություն. որովհետև ողորմությունն ավելին է, քան մեռյալին հարություն տալը, քանի որ մեռածին հարություն տալով պարտական ենք լինում Աստծում, որովհետև այդ հրաշքը աստվածային զորությամբ է լինում, մինչդեռ երբ ողորմություն ենք անում, մեզ պարտական ենք դարձնում հենց Աստծուն Իրեն:

ՀԱՆՈՒՆ ՆՆՁԵՑՅԱԼՆԵՐԻ

Եթե ինքներս մեզ հետ անկեղծ լինենք, ապա կխոստովանենք, որ ննջեցյալների պարագային հիմնականում ամեն ինչ անում ենք առաջին հերթին ոչ թե մահացածների, այլ մեզ համար: Ֆրանսիացի մեծանուն փիլիսոփա Ֆրանսուա դը Լարոշֆուկոն հետևյալ ճիշտ դիտարկումն է արել. «Թաղման ճոխ արարողությունները ոչ այնքան հավերժացնում են մեռածների արժանիքները, որքան բավարարում են ողջերի սնափառությունը»: Խիստ է ասված գուցե, բայց այս խստության մեջ մեծ ճշմարտություն կա: Նույնիսկ երբեմն մենք ողբալով մերձավոր մարդու կորուստը՝ իրականում ողբում ենք ինքներս մեզ, մենք տխրում ենք մեր հաճույքների, մեր հանդեպ բարի վերաբերմունքի կորստի համար: «Այսինքն,- ասում է այս իրողությունը նկատած փիլիսոփան,- մենք արցունք ենք թափում ողջերի ճակատագրի համար և դա համարում մեռածների հաշվին»: Անգամ գերեզման գնալը առաջին հերթին անում ենք մեզ համար. գնում ենք գերեզմանատներ, որպեսզի ննջեցյալի հանդեպ մեր պարտքը կատարենք և այդ պարտքի զգացումից թեթևացած՝ տուն ենք գալիս: Իսկ ի՞նչ պետք է անենք հենց ննջեցյալների համար: Մեռելոցի օրերին բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ, որի ավարտին կատարվում է հոգեհանգստյան արարողություն: Գերեզմանատուն գնալուց առաջ նախ պետք է Պատարագին մասնակցենք և նախքան Պատարագի սկսվելը մեր ննջեցյալների անունները փոխանցենք պատարագիչ քահանային: Հոգեհանգստյան արարողության ժամանակ քահանան բարձրաձայն ընթերցում է ննջեցյալների անունները և աղոթում նրանց հոգիների հանգստության և խաղաղության համար: Եվ մենք էլ, եկեղեցում միանալով քահանայի աղոթքներին, շատ ավելի մեծ բան արած կլինենք ննջեցյալների համար, քան նրանց մահվան հիշատակի օրերին կերակուրներով ու խմիչքներով միմյանց պատվելը:

ԱՂՈԹՔ ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծապես կարևոր է ողջերի աղոթքը ննջեցյալների համար: Մակաբայեցիների գրքում նշվում է մեռյալների համար աղոթքի անհրաժեշտությունը նաև նրանց մեղքերի թողության համար (Բ Մակաբ. 12.43-46): Եկեղեցական կանոնագրքի կանոններից մեկում նշվում է, որ Աստված լսում է ողջերի աղոթքները և թեթևացնում մեռյալների հոգիների բեռը: Կանոնը վկայակոչում է Սուրբ Գրքից Եղիա մարգարեի կողմից կնոջ խնդրանքով նրա մեռած որդու հարության փաստը (Գ Թագ. 17.17-23), ինչպես նաև Տաբիթայի հարությունը, ում հարություն տվեցին առաքյալները՝ տեսնելով մարդկանց արտասուքը (Գործք 9.36-42): Եկեղեցական կանոնն ասում է, որ եթե ողջերի աղոթքներով աստվածային զորությունը

մեռելությունից կենդանության է բերում, կարող է նաև ողջերի աղոթքով մեղքերի թողություն շնորհել հույսով ննջեցյալներին: Նաև Տերը, անդամալույծին բերող մարդկանց հավատքը տեսնելով, անդամալույծին բժշկում և մեղքերի թողություն շնորհեց (Մատթ. 9.2-7, Մարկ. 2.3-12, Ղուկ. 5.18-25):

Սակայն աղոթքները և հոգեհանգստյան արարողությունները օգուտ չունեն այնպիսի ննջեցյալի համար, ով ապրել է մեծամեծ մեղքերի մեջ և մեռել առանց զղջալու, ինչպես որ չորացած ծառի համար անօգուտ է ջուրը: Մեր Եկեղեցու հեղինակներից Բարսեղ Մաշկևորցին ասում է, որ այդպիսիների պարագային թերևս օգուտ լինի նրանց անունով ողորմություն անելը, «քանզի ողորմությունը բարձրագլուխ պարծենում է դատաստանի դիմաց» (Հակ. 2.13):

ԳԵՐԵԶՄԱՆ ԳՆԱԼԸ

Ննջեցյալի թաղումից հետո նաև առաջին յոթ օրերը գնում են գերեզման: Այս առնչությամբ եկեղեցական հեղինակները իմաստուն բացատրություններ են տվել, որոնցից հետաքրքրական են հատկապես առաջին, երրորդ, հինգերորդ և յոթներորդ օրվա վերաբերյալ բացատրությունները՝ ըստ Սուրբ Գրիգոր Տաթևացու:

Այգալուց

Թաղման առաջին օրը կոչվում է այգալուց: Այս օրը պետք է նախ կանայք գնան գերեզման, հետո՝ տղամարդիկ, և հոգևոր տեսությամբ ուրախանան, ինչպես յուղաբեր կանայք նախ եկան գերեզման և տեսան հարուցյալ Քրիստոսին, ապա՝ առաքյալները (Մատթ. 28.9-10, Մատթ. 16.9-11, Հովհ. 20.11-18): Նախորդ օրը մեռածի համար մեծ սուգ արեցինք, սակայն այսօր թեթևացած գալիս ենք գերեզման և գոհանում Աստծուց: Երեկվա օրը թաղման խորհուրդն էր, և այս առավոտը՝ հարության առավոտի խորհուրդը: Արեգակի ծագելը մեր ծնվելն է նշանակում, իսկ մուտը՝ գերեզման մտնելը: Իսկ այդ առավոտը ընդհանրական հարությունն է նշանակում: Այգալուցի օրը ևս հոգևորականը գերեզմանի վրա եկեղեցական արարողություն է կատարում, քանզի մարդը մեղքով է կապվում երկրում և երկնքում, իսկ քահանայական աղոթքով կրկին կապանքների արձակումն ենք խնդրում (Մատթ. 18.18):

Երրորդ օր

Մեղքերի թողությունը լինում է երեք բաներով՝ զղջմամբ, խոստովանությամբ և ապաշխարությամբ, որ լինում է մտքով, խոսքով և գործով: Նաև երեքն են հոգիների տեղերը՝ հոգիների կայան, դժոխք և արքայություն: Մահից հետո հոգիները հանգրվանում են հոգիների կայանում, իսկ Դատաստանից հետո լինելու են կա՛մ դժոխքում, կա՛մ Երկնքի Արքայության մեջ:

Քրիստոսի թաղումից երեք օր հետո առաքյալները և կանայք գերեզման եկան և տեսան հարուցյալ Փրկչին: Նույնպես և մենք, երեք օր հետո գալով ննջեցյալների գերեզման, հարության ավետիսն ենք տալիս և հոգով ուրախանում ենք:

Հինգերորդ օր

Հինգերորդ օրը թռչունները ստեղծվեցին և երկինք բարձրանալով զվարճացան (Ծննդ. 1.20-23): Այսպես և բաժանված հոգին թռչելով երկինք՝ ուրախանալով բերկրում է կատարյալների հոգիների հետ, որի համար նաև մենք, այս օրը գերեզման գալով, սրբերի հիշատակությամբ խնդակից ենք լինում նրանց: Քրիստոս շաբաթվա հինգերորդ օրը մարմնով բարձրացավ առ Հայր, դրա համար թաղման հինգերորդ օրը գալիս ենք գերեզման և այսպիսի փրկավետ խորհուրդը հիշատակում ննջեցյալներ համար:

Յոթներորդ օր

Աստված վեց օր գործեց և յոթներորդ օրը հանգստացավ (2.2): Դրա համար աղաչում ենք, որ ննջեցյալի հոգին հանգստացնի այս օրը: Տերը, շաբաթվա յոթներորդ օրը հոգով դժոխք իջած լինելով, ազատեց գերյալ հոգիներին: Նմանապես այս օրը հավաքվելով՝ մենք խնդրում ենք, որ լուծի ննջեցյալի մեղքերի ապականությունը և ազատի նրա հոգին օդային չար իշխանություններից (Եփես. 2.2; 6.12): Հոգին բաժանվելով մարմնից՝ յոթ աստիճանով է մտնում յոթնաստեղյան լուսո խորանը, սրա համար, ըստ յուրաքանչյուր աստիճանի, յոթ օր աղոթում ենք և օգնական լինում նրան:

Հակոբը, ասորիների Միջագետքից ելնելով, վեց օր փախստական

նգստացավ Գաղաադ լեռան վրա (Ծննդ. 31. 20-23), մինչ Լաբանը, նրա հետևից ընթանալով, նրա կացարանում կուռքերը և իր ունեցվածքից որոնեց, և երբ չգտավ, ձեռնունայն ետ դարձավ (55): Միջագետքը նշանակում է մարդկանց բնակության երկիրը: Հակոբի ելնելը Միջագետքից՝ Բաբելոնից, իր բոլոր ինչքերով և ստաց-

վածքով, նշանակում է մեր ելնելն այս աշխարհից ամենայն բարեգործությամբ, որ այստեղից տանում ենք: Եվ ասորի Լաբանը յուրայիններով դևերի գունդն են, որ հոգու ետևից գնում են վեց օր, մինչ հոգին յոթներորդ օրը հասնում է օթևան, այսինքն՝ հոգիների կայանը:

ՍԱՐՍԱՓ ՄԱՀԻՑ ԵՎ ՄԵՌԱԾՆԵՐԻՑ

Անցյալում մարդը սարսափում էր մահվանից: Ներկայումս տարբեր հեռավոր երկրներում բնակվող պրիմիտիվ ցեղերը, որ ապրում են նախնադարյան պատկերացումներով, հեռու զարգացած քաղաքակրության կյանքից ու գաղափարներից, մահվան հանդեպ նույն սարսափն ունեն: Պրիմիտիվ ցեղերը մեռած մարդկանց վերաբերյալ սնոտիապաշտություններ ունեն: Նրանք կարծում են, որ մեռածները ցանկանում են վրեժխնդիր լինել իրենց մահվան համար և որպես հոգիներ գալով կենդանի մարդկանց մոտ՝ երկյուղ և աղետներ են բերում: Այս սնոտիապաշտությամբ մահը հաճախ պատկերվում է որպես մեռած մարդ՝ իր ոսկորներով: Որոշ ցեղեր կարծում են, որ նրանք մեռածների հարձակումներից կպաշտպանվեն և ապահովության մեջ կլինեն, եթե իրենց և մեռածների միջև ջրային տարածություն լինի: Դրա համար էլ նրանք իրենց ննջեցյալներին թաղում են հարևան կղզիներում, ուր հասնում են իրենց նավակներով: Ցեղերի անդամները վախենում են նաև մահացածների անուններից: Նրանք փոխում են բոլոր այն անունները, որոնք նման են մահացած մարդու անվանը, լինեն դրանք երեխաների, մեծահասակների, նույնիսկ կենդանիների, առարկաների և այլ անուններ: Սակայն երկար ժամանակ անց այդ անունով են կոչում երեխաներին՝ խորհրդանշելով մեռած մարդու վերածնունդը: Իսկ քրիստոնեության մեջ մենք հարգում ենք ննջեցյալներին, աղոթում նրանց համար՝ իմանալով, որ նրանց հոգիները կենդանի են և դուրս են այս երկրային կյանքից ու չեն կարող վերադառնալ մինչև Վերջին Դատաստանի օրը, երբ գերեզմաններից հարություն առնելով կատարյալ մարմիններով՝ ստանալու են պարգևներ կամ պատիժներ հավիտենության մեջ՝ ըստ իրենց ապրած կյանքի ու հավատքի:

ՄԵՌԱԾՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեռնելուց հետո մարդու հոգին ժամանում է երկնքում հոգիների կայանները, սակայն այդ ճանապարհին մարտ է լինում դևերի հետ, որոնք երկնքի ներքևում են (Եփես. 2.2; 6.12): Չար ոգիները վախեցնում են, հուր բորբոքում, տանջարան կազմում և բոլոր մեղքերը հիշեցնում, մինչ

ավանդող հրեշտակը սաստում է նրանց և ապա հոգին հասցնում հոգիների կայան, որտեղ հոգիները մնում են մինչև դատաստանի հատուցումը:

Բաժանված հոգին երկրի արտաքին խորանում է, մտնում է միջին սրբություն, ուր հոգիների կայաններն են: Հարությունից հետո Քրիստոս խորհրդաբանորեն ասված վարագույրի ներքին կողմը (Եբր. 6.19)՝ հրեշտակների դասերին նրանց կխառնի, ինչպես ասաց. «Ուր Ես եմ, այնտեղ կլինի և Իմ ծառան» (Հովհ. 12.26):

Պետք է իմանալ, որ բոլոր ննջեցյալները կարոտ են քահանայական աղոթքին և պաշտամունքին. մեղանչածները մեղքերից թեթևանալու համար, իսկ սրբերը՝ փառքի պսակները ավելանալու համար: Անմեղ երխաներին առավել պետք են աղոթքները, որովհետև ո՛չ չար են գործել և ո՛չ բարի, ո՛չ տանջանք ունեն և ո՛չ պսակ, քանզի բարուց և չարից են հատուցումները, իսկ ննջեցյալների համար կատարվող պաշտոնը՝ արարողությունը, ողորմությունը և այլն նրանց համար լինում են պսակների առիթ:

Ոմանք ո՛չ կդատվեն և ո՛չ կդատապարտվեն, որոնք են կատարյալ սրբերը: Ոմանք ո՛չ դատվում են և ո՛չ դատապարտվում, ինչպիսին են բոլորովին մեղավորները: Սրանց երկուսին էլ քննության դատաստան պետք չէ, քանի որ հայտնի է, թե ընտրյալներ են կամ դատապարտվածներ, ինչպես և Տերը ոմանց համար ասում էր, թե չպիտի դատապարտվեն, և ուրիշների համար, թե՝ արդեն իսկ դատապարտված են (Հովհ. 3.18; 5.24): Այլ քննության գալիս են միջակները, ովքեր ունեն մեղքեր և բարի գործեր, և սրանք երեքի են բաժանվում այսպես՝ առավել չար գործեր ունեցողներ, առավել բարի գործեր ունեցողներ և չարն ու բարին հավասարապես ունեցողներ: Նրանք, որոնց չարն առավել է, քան բարին, դատվում են և դատապարտվում: Նրանք, ովքեր առավել ունեն բարի, քան չար, դատվում են և չեն դատապարտվում: Ովքեր հավատ ունեն և ոչ գործեր, չեն փրկվում, ինչպես չար հավատացյալները: Եվ ովքեր գործեր ունեն և ոչ հավատ, դարձյալ չեն փրկվում, ինչպես անհավատ բարեգործները: Իսկ ովքեր չափավոր են երկուսի մեջ, փրկվում են:

ԵՂԵՌՆ

ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

Այսօր Հայոց Ցեղասպանության անմեղ զոհերի առջև գլուխ խոնարհելով, շատ մարդիկ հարցնում են. «Ինչի՞ համար Աստված թույլ տվեց, որ այդքան անմեղ զոհեր լինեն»: Մեր ամենամեծ սխալն այն է, որ հատկապես վաղաժամ մահվան դեպքում առաջին հերթին մեղադրում ենք Աստծուն: Աստված, բնությամբ բարի լինելով, երբեք չարի և մահվան պատճառ չէ: Մահվան պատճառներն են՝ մարդկանց չար կամքը, մարմնի տկարությունն ու հիվանդությունը և ծերությունը: Եվ եթե այս պատճառներից մեկի բերումով մահ է լինում, ապա Աստված չարիքը միշտ փոխում է մարդու համար բարիքի և մահվան դեպքում էլ վերցնում է ննջեցյալի հոգին ու բնակեցնում անճառելի, անպատմելի ու երանելի երջանկության մեջ: Քրիստոս երբեք չասաց Իր հետևորդներին, թե պետք է անհոգ, խաղաղ և ապահով կյանք ունենան, այլ ընդհակառակը, Նա ասաց. «Իմ անվան համար պիտի հալածվեք» (Հովհ. 15.20-21): Դա հաստատեց նաև Պողոս առաքյալը՝ ասելով. «Բազում նեղություններ կրելով է, որ մենք պետք է մտնենք Աստծու արքայությունը» (Գործք 14.21): Քրիստոս Ինքը չարչարանքներով մեռավ: Նրա գրեթե բոլոր առաքյալները չարչարանքներով մեռան: Քրիստոսի բազում հետևորդներ, բազում քրիստոնյաներ այդպիսի չարչարանքներ ունեցան: Ժողովրդական իմաստությունն ասում է. «Ավելի լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք»: Եվ ցեղասպանության ժամանակ բազում կույսեր ու կանայք իրենց զոհեցին, որպեսզի չպղծվեն այլահավատների կողմից, բազում մայրեր անապատներում մեռնելիս նույնիսկ վերջին շնչի մեջ իրենց զավակներին սովորեցրին հայոց տառերն ու քրիստոնեական հավատը: Սարսափելի է Հայոց Եղեռնը: Սակայն եթե այն ժամանակվա Եղեռնը ահավոր էր, այսօր շատերի հոգու ահավոր վիճակը այլ տեսակի եղեռն է: Սուրբ Եփրեմ Ասորին ասում է, որ հալածանքների ժամանանակ քրիստոնյաները հավիտենություն անցան իրենց նահատակությամբ, բայց նահատակություն է նաև կյանքի ընթացքում պայքարելը չարի դեմ՝ հանուն Երկնքի Արքայության: Այսօր դադարած են հայոց կոտորածները, մինչդեռ շարունակվում են չարի հալածանքները արդեն հոգևոր իմաստով: Եվ երանելի են նրանք, ովքեր ողջ և կենդանի մնալով՝ միևնույն ժամանանակ նահատակվում են՝ արժանանալով հավիտենական կյանքի և Երկնքի Արքայության:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏՔԸ

Ինչու՞ տեղի ունեցավ Հայոց Ցեղասպանությունը, եթե Աստված կա և տեսնում էր Իրեն հավատացողների կոտորածը: Ահա այն հարցը, որ հուզում է բազում մարդկանց: Գիտությունն այս աշխարհում ամեն ինչի համար պետք է բացատրություն գտնի: Սակայն կրոնը, պատասխանելով տիեզերքի ստեղծման և դրա հետ կապված բոլոր հարցերին, պետք է բացատրի միայն մեկ բան՝ տառապանքի գոյությունը այս աշխարհում: Գուցե շատերիս ամենամեծ սխալն այն է, որ մահվան պատճառը անմիջապես Աստծուն ենք համարում: Մինչդեռ Աստված Իր էությամբ բարի է: Այդ իսկ պատճառով Նա երբեք չի կարող չարի պատճառ լինել: Այս իմաստով զարմանալի և օրինակելի ժողովուրդ ենք մենք՝ հայերս. բազում ու բազում նեղություններ ենք տեսել, սակայն երբեք չենք դադարել հավատացյալ ժողովուրդ լինելուց: Թվում է, թե հակառակը պիտի լիներ. հերոսական պատմության մեջ նաև ահավոր վշտեր տեսնելով՝ հայ ժողովուրդը պիտի մեղադրեր Աստծուն և դադարեր Քրիստոսին հավատալուց: Սակայն հենց այստեղ է անիմանալի հրաշքը: Սուրբ Հովհան Ոսկեբերանն է ասում Եսայու մարգարեության իր մեկնության մեջ. «Եվ այս իսկ է Եկեղեցու զարմանալին, որ այսպես է հաղթում. հալածվելով, մերժվելով, պեսպես նեղություններով կոփվելով՝ Եկեղեցին ոչ միայն նվազում է, այլև է՛լ ավելի է աճում ու բազմանում»: Այսպիսին է նաև հայոց հավատքը, և պատմական այս հրաշալի իրողության դեմ ոչ ոք չի կարող առարկել:

Աստված, քննելով յուրաքանչյուր մարդու կյանքը, տալիս է այն, ինչ մարդուն ավելի է օգտակար. հալածանքների ժամանակ, եթե հարկավոր է, տալիս է ժամանակավոր կյանքի շարունակություն, իսկ ում որ պետք է, միանգամից է արժանացնում հավիտենական կյանքի: Չարչարանքների միջոցով էր հայտնի դառնում մեծագույն սրբերի սերը Աստծո հանդեպ: Եվ այսպես էր նաև, որ հայտնի եղավ հայերի սերն ու հավատարմությունը առ Աստված. ոմանք մեռան և փոխվեցին հավիտենական երանելի կյանքի՝ ըստ Աստծո հայեցողության, ոմանք փրկվեցին և ապրեցին ծնողներ դառնալով հաջորդ սերունդների, և գուցե սակավաթիվներ էլ պարզապես պատժվեցին իրենց վատընթաց կյանքի համար: Հայ ժողովուրդը երանելի Հոբի նման երբեք չկորցրեց իր հավատքը և այսօր էլ շարունակում է ապրել ու հավատալ այն Աստծուն, ով ամեն ինչ անում է մարդու ոչ թե ժամանակավոր, այլ հավիտենական երջանկության համար:

ՀՈԳԻ

ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Որոշ աղանդներ մերժում են մարդու բանական և անմահ հոգու գոյությունը՝ միևնույն ժամանակ մոլորեցնելով բանից անտեղյակ իրենց հետևորդներին: Քրիստոս Խաչի վրա ավազակին ասաց. «Այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. 23.43): Հոգու անմահության մասին է վկայում նաև աղքատ Ղազարոսի առակը (Ղուկ. 16.19-31): Բայց եթե ոմանք դարձյալ չեն համոզվում, ապա հետևյալը կասենք: Նախկինում բժշկությունը մեռած էր համարում այն մարդուն, ում սիրտը կանգնում էր, և ուղեղը դադարում էր գործելուց: Մինչդեռ այսօր բժիշկներն ավելի եռանդուն են գործում այն ժամանակ, երբ մարդու սիրտը դադարում է աշխատելուց՝ փորձելով հաջորդող րոպեների ընթացքում շտկել իրավիճակը: Մարդու այսպիսի վիճակը կոչվում է կլինիկական մահ: Եվ այս վիճակի մեջ գտնված աշխարհի բազմաթիվ մարդիկ իրենց զարմանալի զգացողություններն են պատմում՝ պնդելով, որ գտնվել են մարմնից դուրս, ինչը շատ գիտնականներ համարում են անմահ հոգու գոյության ապացույցներից մեկը:

Մեռելոցի օրը եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ, որից հետո կատարվում է հոգեհանգստյան արարողություն: Արարողության ընթացքում քահանան ընթերցում է իրեն փոխանցված ննջեցյալների անունները և նրանց հարազատների հետ միասին աղոթում նրանց հոգիների փրկության համար: Քրիստոս հարություն տվեց չորս օրվա մահացած Ղազարոսին (Հովհ. 11.43-44): Ավանդությունն ասում է, որ դրանից հետո Ղազարոսն իր ողջ կյանքի ընթացքում այլևս երբեք չծիծաղեց՝ հիշելով այն ամենը, ինչ տեսել էր մեռած ժամանակ: Ձեր ննջեցյալներն իրենց հիշատակի համար ձեր ողորմությունների և ձեր աղոթքների կարիքն ունեն: Ուրեմն, սիրելիներ, հատկապես մեռելոցի օրը եկեղեցի եկեք և աղոթեցեք ձեր ննջեցյալների հոգիների խաղաղության համար:

ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Եհովայի վկաները և մորմոնները շատ զարմանալի տեսակետներ ունեն մարդու մահվան մասին: Եհովայի վկաներն իրենց հետևորդներին ամեն ջանքով փորձում են համոզել, որ մարդն անմահ հոգի չունի և մեռնելով ոչնչանում է, սակայն Աստված կարող է հետո նրան վերաստեղծել: Իսկ մորմոնները երկնքի մոլորակները բաժանել են իրար միջև՝ ասելով, որ փրկված մորմոնը դառնում է մի նոր աստված ու տեղափոխվում ան-

ծայրածիր տիեզերքի որևէ մոլորակ, հիմք է դնում մի նոր քաղաքակրթության, դառնալով Ադամ այդ աշխարհի համար: Անշուշտ, անհեթեթ են նման տեսակետները, և պարզապես միամիտ աղանդավորներն են մոլորվում դրանցով: Իրականում Աստվածաշունչը հենց Ծննդոց գրքից մեռնողների մասին ասում է, որ նրանք գնացին ու միացան իրենց նախնիներին: Այսպես է ասվում Աբրահամի (Ծննդ. 15.15, 25.8), Իսմայելի (Ծննդ. 25.17), Իսահակի (Ծննդ. 35.29), Հովսեփի (Ծննդ. 49.29, 32) և մյուսների համար, իսկ Մովսեսին Աստված Ինքն է ասում, որ երբ բարձրանա լեռը, այնտեղ պիտի մեռնի և միանա իր նախնիներին (Թվեր 27.13): Սա ցույց է տալիս, որ Հին Ուխտի վաղ ժամանակներում մարդիկ հանդերձյալ կյանքի և հոգու անմահության հանդեպ մեծ հավատ ունեին:

Այսպիսով, որոշ աղանդներ չեն հավատում բանական հոգու գոյությանը կամ հոգու անմահությանը: Բայց Աստվածաշունչը, ընդհակառակը, հատկապես խոսում է այն մասին, որ մարդը մեռնելիս իր հոգին ավանդում է Աստծո ձեռքը: Այդ իսկ պատճառով էլ Մովսեսն ու Ահարոնը, երեսնիվայր ընկնելով Աստծո առջև, Նրան ասում են. «Ո՛վ Աստված, հոգիների ու բոլոր մարմինների Աստված» (Թվոց 16.22): Սաղմոսաց գրքում ևս Դավիթն ասում է. «Դու ես պաշտպանն իմ, Տե՛ր, և քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին» (Սաղմ. 30.6): Քրիստոս ևս խաչի վրա բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Հա՛յր, Քո ձեռքն եմ ավանդում Իմ հոգին»: Եվ երբ այս ասաց, հոգին ավանդեց (Ղուկ. 23.46): Նույն կերպ, երբ քարկոծում էին Ստեփանոս սարկավագին, նա աղոթում էր և ասում. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին» (Գործք 7.58): Աբրահամի և Իսահակի մասին ևս գրված է, որ նրանք իրենց հոգիներն ավանդեցին ու մեռան երջանիկ ծերութեան մեջ (Ծննդ. 25.8, 35.29): Բացի այս վկայություններից Հին Կտակարանում նաև նշվում է, որ Հուդայի անդրանիկ որդի էրը, հետո էլ մյուս որդին՝ Օնանը, հաճելի չթվացին Տիրոջը, և Աստված առավ նրաց հոգիները (Ծննդ. 38.7, 10): Նկատելի է, որ Աստվածաշունչը չի խոսում մարմնի հետ նաև հոգիների ոչնչացման մասին, այլ շեշտում է հոգին Աստծուն ավանդելու, կամ Աստծո կողմից հոգին առնելու մասին: Այսպիսին է նաև անմիտ մեծահարուստի մասին առակը, երբ նրան ասվում է. «Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու» (Ղուկ. 12.20): Քրիստոս, պատմելով աղքատ Ղազարոսի և մեծահարուստի մասին առակը, ասում է, որ մահից հետո Ղազարոսը գնաց Աբրահամի գոգը, իսկ մեծահարուստը գնաց դժոխք (Ղուկ. 15.22-23): Նաև Խաչի վրա Քրիստոս ավազակին ասաց. «Այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. 23.43): Քրիստոս ավելի բացահայտ է ասում. «Հոգին է կենդանարար. մարմինը ոչ մի բան չի կարող անել» (Հովհ. 6.64), «որովհետև հոգին առավել է, քան կերակուրը» (Ղուկ. 12.23), «Եվ

մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. այլ դուք առավել վախեցե՛ք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին և մարմինը» (Մատթ. 10.28): Ավետարաններում բացահայտ երևում է, որ մահից հետո հոգին անջատվում է մարմնից: Այս է ապացուցում հատկապես Հայրոսի դստեր հարության պատմությունը: Քրիստոս բռնեց նրա ձեռքից, գոչեց և ասաց. «Վե՛ր կաց, կանգնի՛ր, ո՛վ մանուկ»: «Եվ նրա հոգին վերադարձավ,-ասում է ավետարանիչը,- և մանուկը իսկույն կանգնեց: Հիսուս հրամայեց, որ նրան ուտելու բան տան: Եվ նրա ծնողները զարմացած մնացին» (Ղուկ. 8.54-56): Նման պատմության հանդիպում ենք նաև Գործք Առաքելոցում: Երբ Պողոս առաքյալի խոսելու ընթացքում Եվտիքոս անունով պատանին ընկնում է պատուհանից և մեռնում, Պողոսը, ցած իջնելով, ընկնում է նրա վրա, նրան իր գիրկը վերցնում ու ասում. «Մի՛ խռովվեք, քանի որ սրա հոգին վրան է» (20.10): Աղանդավորներն ասում են, որ հոգին սովորական շունչն է, իսկ ինչպե՞ս կարող է այդ շունչը ինքնուրույն գոյություն ունենալ: Սակայն իրականում հոգին անմահ Աստծո պատկերով ստեղծված և բանականությամբ է օժտված և այն, որ հոգին սովորական շունչ չէ, ապացուցում է Պողոս առաքյալը՝ սրանք բոլորովին տարբերակելով: Թեսաղոնիկեցիներին ուղղված թղթում նա ասում է. «Եվ խաղաղության Աստվածն Ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապես, և ձեր ամբողջ հոգին, շունչը և մարմինը թող անարատ պահվի մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը» (Ա Թեսաղ. 5.23): Եվ այս մեջբերումները ցանկանում ենք ավարտել Քրիստոսի խոսքերով .«Դուք չէ՞ք կարդացել Մովսեսի գրքում, մորենու դրվագում, թե ինչպես Աստված ասաց նրան. "Ե՛ս եմ, - ասում է, - Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը": Իսկ Աստված մեռելների Աստվածը չէ, այլ՝ ողջերի. ուստի, դուք խիստ մոլորված եք» (Մարկ. 12.26-27):

ՀՈԳՈՒ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տարբեր կրոններ պնդում են, որ մարդու հոգին վերամարմնավորվում է տարբեր մարմինների մեջ: Ոմանք ասում են, թե հոգին առաջանում է մարմնի ձևավորվելուց հետո, ոմանք էլ դրանից առաջ: Սակայն ճշմարիտ քրիստոնեական տեսակետի համաձայն, որը նշում է նաև Սուրբ Գրիգոր Նյուսացին, ինչպես ցորենի սերմի մեջ կա ցողունը, հասկը, պտուղը և այն ոչ հետո է ոչ էլ առաջ, այդպես էլ հոգին է մարդու մեջ պտղավորման ժամանակ:

Հոգու գոյությունը հնուց ի վեր ապացուցել են հետևյալ օրինակներով: Օգտագործողը և օգտագործվողը տարբեր են, ինչպես, օրինակ,

կոշկակարն ու իր գործիքները նույնը չեն, նույնպես երաժիշտը և իր երաժշտական գործիքը նույնը չեն, նրանք պարզապես օգտվում են իրենց գործիքներից: Նույն կերպ մարդը քայլելու համար օգտվում է իր ոտքերից, բռնելու համար՝ ձեռքերից, տեսնելու համար՝ աչքերից և այլն, և եթե օգտագործողը և օգտագործվողը նույնը չեն, ուրեմն նաև մարդը իր մարմինը չէ, որովհետև մարդն օգտվում է իր մարմնից: Նույնպես առարկաները իրենք իրենց չեն շարժվում, այլ շարժվում են մեկ ուրիշի ազդեցությամբ: Այսպես և մարդը շարժվում է հոգու ուժով: Պյութագորյանները ուսուցանում էին, որ հոգին բանտարկված է մարմնում, և հին փիլիսոփաներն ասում էին, որ մարդը հոգին է, որ փակված է մարմնում և ազատություն է գտնում մահից հետո՝ դուրս գալով մարմնից: Պյութագորյանների այս ուսմունքն արտահայտված է նաև Պլատոնի ստեղծագործություններում: Պլատոնը հունարեն մարմին՝ *սոմա* բառը ստուգաբանում է հետևյալ կերպ: Այն առաջացել է *սեմա-գերեզման* կամ *գերեզմանաքար* բառից, ցույց է տալիս, որ մարմինը հոգու գնդանն է, և մարմնի մահով հոգին ազատություն է գտնում: *Սեմա* բառը, որից, ըստ Պլատոնի, առաջացել է *սոմա՝* մարմին բառը, նաև արտահայտում է նշան իմաստը, այսինքն՝ հոգին մարմնով, որպես թե նշանով, ցույց է տալիս այն, ինչ իրեն պետք է արտահայտել: Եվ քանի որ մարմինը դիտարկվում էր որպես հոգու բանտ կամ գերեզման, հույները, որ ուշադրությամբ լսում էին Պողոսի ճառը Արիսպագոսում, սկսեցին ծաղրել, երբ առաքյալը խոսեց հարության մասին (Գործք 17.32): Ծաղրի պատճառն այն էր, որ հարությունը ամենահիմար բանն էր հույների համար, քանի որ մարդը, ազատվելով իր բանտից, չի վերադառնա այդ բանտը: Քրիստոնությունը սովորեցնում է, որ մարդը միայն մարմինը չէ կամ միայն հոգին չէ, այլ այս երկուսի միավորությունը, և սա ապացուցում է առաջին հերթին ոչ թե փիլիսոփայական հիմնավորումներով, այլ պատմական եղելությամբ: Երբ Քրիստոս Հարությունից հետո հայտնվեց աշակերտներին վերնատանը, ասաց. «Տեսե՛ք Իմ ձեռքերն ու ոտքերը, որովհետև նույն Ինքն Ես եմ. շոշափեցե՛ք Ինձ և տեսե՛ք, որովհետև ոգին մարմին և ոսկորներ չունի. ինչպես տեսնում եք, Ես ունեմ» (Ղուկ. 24.39): Քրիստոնեությունն ուսուցանում է, որ ինչպես սերմի հատիկը, հողի մեջ ընկնելով, վեր է հառնում այլ՝ կատարյալ մարմնով (Հովհ. 12.24, Ա Կորնթ. 15.37-38), այդպես էլ բոլոր մարդիկ ընդհանրական հարության ժամանակ ելնելու են գերեզմաններից՝ հոգիները միացած մարմիններին, հարություն են առնելու կատարյալ մարմիններով (Ա Թեսաղ. 4.15, Ա Կորնթ. 15.42-44, 53):

ՎԱՐԴԱՆԱՆՔ

ՆԵՐԲՈՂՅԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Հերոսությունը ծնվում է ոչ թե անհրաժեշտությունից, այլ համարձակների քաջագործությունից: Բազմաթիվ մարդիկ են ապրում, բայց նրանցից հերոսանում են միայն քչերը, և բազում քրիստոնյաներ են եղել, բայց սուրբ են դարձել սոսկ սակավները: Ժողովուրդը, կարծես, բնության ճանապարհն է՝ մի քանի մեծ մարդկանց հասնելու համար, և քրիստոնեությունն էլ, կարծես, կրոնի ճանապարհն է՝ երբեմն լոկ սակավաթիվ սրբեր կերտելու համար: Սակայն պատմության մեջ եղավ մի պահ, երբ նախախնամությունը, արդեն հոգնած ընտիրը կաթիլ-կաթիլ քամելուց, որոշեց խախտել այս օրինաչափությունը, և հայ ժողովրդի սրբության ու հերոսության ծառը միանգամից պտղաբերեց բազում սրբեր և հազար երեսունվեց հերոս-նահատակներ, որոնց կոչում էին Վարդանանք:

ՎԱՐԴԱՆԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ

Կարո՞ղ ենք արդյոք նախարարների դիվանագիտական քայլն ուրացում համարել այս բառի բուն իմաստով: Ո՛չ, որովհետև ուրացումը սոսկ անունով քրիստոնյա լինելն է, ուրացումը գառան մորթիով գայլ լինելն է և դարձյալ, ուրացումը քրիստոնյա լինելով հանդերձ Քրիստոսի պատվիրանները խախտելն ու չկատարելն է: Նախարարների այս քայլը խորամանկ քաղաքականություն էր, և Վարդան Մամիկոնյանն էլ այդպես էր համարում, որովհետև իր ճառում ասում է. «Մանավանդ ես չեմ մոռացել, թե ինչպես այն ժամանակ անօրեն իշխանին խաբեցինք-մոլորեցրինք: Բայց Տերն Ինքը վկա է մեզ, թե ծածուկ մտադրություններով ինչպես անբաժան ենք մնացել Նրանից»:

ՄԻ ՍՊԱՆԻՐ

Այժմ պատկերացնենք Ավարայրի դաշտը, հավաքված զորքի բազմությունը, հոգևորականներին և զորավարներին: Վարդան Մամիկոնյանն իր ճառով քաջալերում է զորքին, բայց զինվորները տարակուսած են, նրանք շփոթմունքի մեջ են: Նրանք ելել են պաշտպանելու իրենց հայրենի կրոնը, սակայն այդ նույն կրոնն ասում է՝ «Մի՛ սպանիր», «Սիրի՛ր թշնամուդ», «Եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյուսն էլ դարձրու»: Ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել: Եվ ահա այդ ժամանակ իր ճա-

ռով հանդես եկավ խրոխտ Ղևոնդ Երեցը: Նա օրինակ բերեց Աստվածաշնչում հիշվող Մովսեսին, մեծ քահանա Փենեեզին, Սուրբ մարգարե Եղիային, ովքեր սպանություն գործեցին (Ելք 2.12, Թվեր 26.7-8, Գ Թագավ. 18.40, Դ Թագավ. 1.9-10): Բայց քանի որ նրանց նպատակը սպանությունը չէր, այլ Աստծո հանդեպ նախանձախնդրությունը և իրենց ազգից պղծության վերացումը, ապա Աստված այդ նախանձախնդրության համար նրանց մեծ անուն տվեց և Իր ժողովրդի առաջնորդ դարձրեց:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Ահեղ ճակատամարտը սկսվեց 451 թ. մայիսի 26-ին՝ շաբաթ օրը: Ընդունված է ասել, որ Սուրբ Վարդանանք պարտվեցին և միայն բարոյական հաղթանակ տարան: Սակայն Վարդանանաք իրապես հաղթանակ տարան, որովհետև այս ճակատամարտով սկսված հետագա տարիների պայքարի արդյունքը եղավ հայերի կրոնական ազատությունն ու ինքնավարությունը: Եվ Սուրբ Վարդանանաց շարականի մեջ էլ նրանք կոչվում են հաղթո՛ղ զորականներ:

Պատերազմում հաղթանակ բերող առաջին զենքն աղոթքն է: Աղոթքով հաղթեց Դավիթը Գողիաթին (Ա Թագ. 17.45-50): Եվ ամաղեկացիների դեմ կռվում էլ իսրայելացիներն աղոթքի զորությամբ հաղթեցին, որովհետև երբ աղոթող Մովսեսը ձեռքերը երկինք էր բարձրացնում, հաղթում էին, իսկ երբ իջեցնում էր, սկսում էին պարտվել (Ելք 17.11): Վարդանանց պատերազմի մասին գրել է պատմիչ Եղիշեն: Եվ կարող ենք ասել, ճակատամարտի ժամանակ նա անդադար աղոթելիս է եղել, որովհետև նրա պատմությունը կարդալիս այդ անցուդարձի, ճակատամարտի ահեղ շառաչյունի, ծխի ու փոշու ամպերի միջից հնարավոր չէ չտեսնել Մովսեսի նման ձեռքերը երկինք կարկառած աղոթող Եղիշեի կերպարը:

ԱՖՈՐԻԶՄ

Պատերազմում նահատակվեցին Վարդանանց հազար երեսունվեց քաջերը՝ արժանանալով մարտիրոսների սուրբ պսակին, սակայն ահավոր է ամեն պատերազմ, նույնիսկ եթե նրանից սրբեր ու մարտիրոսներ են ելնում:

ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎԸ

Ղևոնդյան քահանաներն այն հոգևորականներն են, ովքեր Վարդանանց պատերազմից հետո գերվեցին և տարվեցին Պարսկաստան, այն-

տեղ հրաժարվեցին պարսիկների կրոնն ընդունելուց և նահատակվեցին 454 թվականին: Պատմությունը պահպանել է նահատակված հոգևորականների անունները: Նրանք են՝ Հովսեփ Կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս, Ղևոնդ երեց, Մուշե քահանա, Արշեն երեց, Քաջաջ սարկավագ: Սուրբ Եղիշե պատմիչն ասում է, որ Հովսեփ Կաթողիկոսը, Ղևոնդ Երեցը և մյուս քահանաները ևս պատերազմի եկան, որովհետև սա ոչ թե մարմնական կռիվ էին համարում, այլ հոգևոր առաքինություն: Չափազանց հուզիչ է Ղևոնդյան քահանաների նահատակության վկայությունը: Պատմիչը հաղորդում է, որ երբ Ղևոնդ Երեցը տեսավ, որ իրենց չեն կամենում առանձին-առանձին հարցաքննել և դատել, այլ միանգամից սպանելու հրաման է եղել, Հովսեփ Կաթողիկոսին ասաց. «Առաջինը դու մոտեցիր սրին, որովհետև դու աստիճանով բոլորից բարձր ես»: Այսինքն՝ Քրիստոսի համար նահատակվելը մեծագույն պատիվ էր, և այդ պատիվը առաջին հերթին տրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Հնարավոր չէ, որ նույնիսկ ամենաքար սիրտը չազդվի Վարդանանց պատմությունից: Եվ եթե ձեր կյանքում երբևէ չեք կարդացել Եղիշե Վարդապետի պատմությունը Վարդանանց պատերազմի մասին, ապա ընթերցելով կհամոզվեք, որ ոչ միայն մարդկության պատմության, այլ նաև մեծ հավատքի վկայության մի լուսավոր էջ պիտի բացահայտեք ձեզ համար, որն անպայմանորեն ամրապնդելու է և ավելի է մեծացնելու ձեր հավատը:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԶՈՀՈՂՈՒԹՅՈՒՆ

Վարդանանց պատերազմի միջից ելած թևավոր խոսքն ասում է՝ գիտակցված մահը անմահություն է: Սակայն այս արտահայտությունը որոշ լրացումներ է պահանջում: Քանի դեռ պարզ չէ մարդու նպատակը, չենք կարող ասել՝ նրա կամավոր մահը ինքնազոհողությու՞ն է, թե՞ ինքնասպանություն, որովհետև ինքնասպանությունը ևս գիտակցված մահ է: Ինքնասպանը գնում է գիտակցված մահվան: Բայց չէ՞ որ այդ քայլին դիմող բոլոր մարդկանց չենք կարող ինքնասպան համարել: Չէ՞ որ Սուրբ Վարդանանք ևս հոժարակամ հարձակվեցին մահվան վրա, չէ՞ որ Քրիստոս ևս Իր կամքով խաչը ելավ: Հետևաբար՝ վեհ գաղափարների համար գիտակցված մահն է անմահությունը:

Սուրբ Վարդանանք սոսկ այս մտահոգությունն ունեին. «Միայն թե քաջությամբ մեռնենք, միայն թե անուն և հոգի ժառանգենք»: Եվ եթե այստեղ մի պահ կանգ առնենք և մտովի, անկեղծորեն համեմատենք նրանց գլխավոր մտահոգությունը մեր մտահոգության հետ, անկասկած շատերս ամոթից գլխահակ պիտի լինենք՝ տեսնելով նրանց մտահոգության վեհությունը և մեր մտահոգություններում գերիշխող եսասիրությունը: Վար-

դանանց անձնազոհությունը մեզ մեծ հիացմունք ու զարմանք է պատճառում, և հենց այս զարմանքն էլ ցույց է տալիս, թե մենք դեռ որքան հեռու ենք նրանցից: Վարդանանք հերոսաբար պայքարեցին ու նահատակվեցին՝ իրենց օրինակով ցույց տալով, որ ոչ թե ուժը, այլ բարձրագույն զգացումների տևականությունն է ստեղծում բարձրագույն մարդկանց:

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բազում քրիստոնյաներ են սպանվել իրենց անխախտ հավատքի համար ոչ միայն քրիստոնեության վաղ շրջանում, այլև մեր ժամանակներում, երբ հատկապես համայնավարության տարիներին բազմաթիվ հոգևորականներ բանտարկվեցին և հերոսաբար նահատակվեցին՝ հավատարիմ մնալով քրիստոնեական իրենց հավատքին: Ընդունելի չէ մարդասպանությունը. այն խախտումն է աստվածային *մի՛ սպանիր* պատվիրանի: Աստվածաշնչի վրա հիմնված եկեղեցական կանոնները ևս դատապարտում են սպանությունը և նույնիսկ պատվիրում անգամ խաղաղ ժամանակ իր վրա հարձակված մարդկանց սպանող քահանային կարգալույծ անել, որովհետև քահանային արժան չէ մարդ և անգամ անասուն սպանել: Սրբերի պարագային տեսնում ենք, որ նրանց դաժանաբար խոշտանգում ու սպանում էին հեթանոսները հավատքի պատճառով: Սակայն պատերազմների ժամանակ սպանություն գործած քրիստոնյա զինվորի վերաբերյալ եկեղեցական կանոնը նշում է, որ Եկեղեցու Հայրերը դա մեղք չեն համարել, բայց այդպիսի մարդն իր անձը մաքրելու համար երեք տարի, ըստ եկեղեցական կանոնի, պետք է հեռու մնա Սուրբ Հաղորդությունից:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավետարաններում Հիսուս Քրիստոսի ուրվագծած կատարյալ մարդը նա է, ով լի է բոլորի հանդեպ սիրով և երբեք սպանություն չի գործում, ինչպիսին որ եղավ Քրիստոս Ինքը: Սակայն ճակատագրական պահերին զենքի դիմելու թույլտվությունը տրվել է մարդկանց խստասրտության պատճառով, ինչպես որ Քրիստոս ապահարզանի մասին հրեաներին ասաց, որ այդ օրենքով Մովսեսը ոչ թե աստվածային կատարյալ կամքն է արտահայտել, այլ հրեաների խստասրտության պատճառով է թույլ տվել

կանանց արձակելը (Մատթ. 19.8, Մարկ. 10.5): Իսկ պատերազմի ժամանակ ինքնապաշտպանության նպատակով զենքի դիմելու արդարացիությունը կարող ենք ցույց տալ նաև Նոր Կտակարանով: Երբ Հովհաննես Մկրտչի մոտ մկրտության եկած զիվորները նրան հարցրեցին՝ իսկ մենք ի՞նչ անենք, Հովհաննեսը պատասխանեց նրանց. «Ոչ ոքի մի նեղեք, ոչ ոքի մի զրպարտեք, ձեր ռոճիկը թող ձեզ բավարար լինի» (Ղուկ. 3.14), և ոչ թե ասաց՝ զենք վերցնել չի կարելի, բանակը վատն է, թողեք և հեռացեք: Նաև Պողոս առաքյալը, խոսելով այն մասին, որ ինքը փորձել է նեղություն չտալ ոչ ոքի, ասում է. «Ո՞վ երբևէ զինվորություն կանի իր ծախսով» (Ա Կորնթ. 9.7): Ինչպես նաև եբրայեցիներին ուղղված իր թղթում առաքյալն ասում է, թե հավատքի շնորհիվ էր, որ Սամսոնը, Դավիթը և այլ զորականներ կարողացան հաղթել օտար բանակների (Եբր. 11.32-34): Սակայն թշնամին ևս մարդ է, նա գուցե մի փոքրիկ աղջնակի կամ տղայի հայրն է, ինչ-որ մեկի սիրեցյալ ամուսինը, մեկի սիրելի զավակը: Բացի դրանից յուրաքանչյուր մարդ ստեղծված է Աստծո պատկերով: Այդ իսկ պատճառով նույնիսկ պատերազմի ժամանակ սպանություն գործած մարդը պետք է դիմի Եկեղեցու կողմից կարգված ինքնամաքրման: Ոմանք գուցե համաձայն չեն այս մտքի հետ, սակայն հոգեբանները կարող են ապացուցել, որ անգամ պատերազմների ժամանակ անընդհատ սպանող մարդը կարող է շատ լուրջ հոգեբանական խնդիրներ ունենալ: Հովհան Մանդակունին իր ճառերում ասում է, որ կապ չունի՝ որևէ մեկը թագավորին է սպանել, թե աղքատին, ծեր մարդու, թե երեխայի. դրանք բոլորն էլ սպանություններ են: Եվ նույնիսկ ինքնապաշտպանության նպատակով կամ պատահաբար սպանություն կատարած մարդու զղջման և ապաշխարության անհրաժեշտությունը շեշտվում է եկեղեցական կանոններով, որոնք ընդգրկված են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեջ: Նշենք այդ կանոններից մի քանիսը: «Եթե մի անմեղ մարդ միայնակ ճանապարհ է գնում, և ճանապարհին նրա դեմ են ելնում գողերն ու ավազակները, և այս մարդն սպանում է նրանց, ապա Սուրբ Եկեղեցին նրան թող չդատի իբրև սպանողի: Բայց Ահեղ Սեղանին, այսինքն՝ Սուրբ Հաղորդությանը մոտենալու համար սպանություն կատարած այդ մադը թող սակավ օրերի ընթացքում սրբի իր անձը՝ մտածելով, թե ինչու այս ամենը հենց իր հետ պատահեց»: Ներկայացնենք նաև տարբեր պատճառներով սպանություն կատարած քահանաների վերաբերյալ մի քանի կանոններ: Հետևյալ կանոնը կազմված է հարց ու պատասխանից: «Եթե մեկը ձիով ամբոխի մեջ գնալիս լինի և պատահաբար դիպչի մի մարդու և սպանի, արդյո՞ք հետագայում, եթե նա ուզենա քահանա դառնալ, կարող է քահանայության արժանանալ»: Պատասխանն այս է. «Մարդու կյանքի և վարքի մասին պետք է քննել, թե արդյո՞ք սրբությամբ են»: Իսկ սպա-

նության առնչությամբ՝ կանոնը, հստակ չպխատասխանելով, այս հարցն է տալիս. «Ինչ վերաբերում է սպանությանը, ինչու՞ աստվածային շնորհը նրան չպահպանեց դրանից»: «Եթե մի քահանա իր պարտեզը քարերից մաքրելու ժամանակ քարը մի կողմ գցի, և այն պատահաբար մի մարդու դիպչի և նա մեռնի, ի՞նչ պետք է անել նրա քահանայական պաշտոնի համար, և նա ինչպե՞ս պետք է ապաշխարի»: Պատասխանն այն է, որ նա սպանող է, պետք է ապաշխարի ինչպես սպանողները և քահանայության կարգին այլևս չմոտենա, որովհետև քահանային արժան չէ մարդ սպանելը: Կանոնագրքում նշվում են այն մեծ և փոքր մեղքերը, որոնք գործած մարդկանց պետք է խոստովանության բերել: Սպանողների պարագային նշվում են այն մարդիկ, ովքեր սպանել են կամ նախանձից, կամ իշխանությամբ, կամ արբեցությամբ, կամ պատերազմի ժամանակ և այլն: Սակայն հոգևորականները միշտ պատերազմի են ելել ճակատագրական պահերին, մարդկանց ոգեշնչելու ու քաջալերելու, երբ, ինչպես նշում է Եղիշե պատմիչը Հովսեփ Կաթողիկոսի, Ղևոնդ Երեցի և մյուս հերոս հոգևորականների պարագային, պատերազմը բացի մարմնական կռիվ լինելուց համարվել է նաև հոգևոր առաքինություն: Եվ այսօր ևս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևորականները շարունակում են մեր հայ զինվորների կողքին լինել, օգնում են նրանց իրենց սիրով, աղոթքով, խրատներով և խորհուրդներով, որպեսզի մեր զիվորները երբեք չմոռանան Վարդանանց քաջարի օրինակը և նրանց սխրանքից ծնված խոսքերը՝ չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ

Որևէ արարք առաքինություն կամ մեղք, արատ է դարձնում հիմնականում մարդկային մտադրությունը: Օրինակ՝ ողորմությունը կարող է դառնալ ցուցամոլություն, սերը, խոնարհությունը՝ քծնողություն, երեսպաշտություն: Նույնպես սեփական կամքով մահվան գնալը հուսահատության դեպքում դառնում է ինքնասպանություն, իսկ վեհ և աստվածահաճո նպատակների համար՝ անձնազոհություն: Օրինակներ բերենք Հին և Նոր Կտակարաններից: Սավուղը և իր զինակիրը թշնամիների ձեռքը չընկնելու համար հուսահատությունից ինքնասպանություն գործեցին (Ա Թագ. 31.5), իսկ Ռաքսը ինքնասպանություն գործեց Աստծո վերահաս պատիժը թշնամիներին հիշեցնելու համար (Բ Մակաբ. 14.37-46): Սեփական կամքով կյանքից հրաժարվելու հակադիր մղումներ տեսնում ենք երկու առաքյալների մոտ՝ Հուդան հուսահատությունից (Մատթ. 27.5), իսկ Պողոսը Քրիստոսի հետ լինելու ցանկությունից (Փիլիպ. 2.23):

Ինքնասպանությունը լինում է հետևյալ երեք հիմնական մղումներով: 1. հուսահատություն, որի դրսևորումն ունեցան Սավուղը, իր զինակիրը և Հուդան: 2. Կեղծ պատրանքներ, որ այսօր տեսնում ենք աղանդավորների մոտ, ովքեր կարծում են, թե այդ ճանապարհով պիտի ընկնեն Երկնքի Արքայություն: Այդպիսին են հատկապես այսօրվա ինքնասպան-ահաբեկիչները, որոնք հիմնականում ներկայացուցիչներն են մուսուլմանական վահաբիստական աղանդի: 3. Վեհ նպատակի իրագործման համար:

Ըստ Կանոնագրքի՝ ինքնասպանի համար թաղում կամ հոգեհանգիստ չեն անում, բայց եթե ինքնասպանության փորձից հետո մարդը ողջ է մնում և զղջումով մեռնում, ապա նրա համար կատրում են եկեղեցական համապատասխան արարողություններն ու աղոթքները: Սուրբ Գրիգոր Տաթևացին, խոսելով սեփական կամքով մահվան գնալու մասին, ասում է, որ դա կոչվում է անձնիշխան մահ, որը լինում է բարի և չար: Անձնիշխան մահը չար էր Հուդայի պարագային, իսկ այդպիսի մահվան բարի տեսակը հանուն մարդկության փրկության գործածեց Քրիստոս, որը և մենք կոչում ենք անձնազոհություն:

ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճգնողական կյանքի նեղություններին գնալը ոմանք համարում են պասիվ ինքնասպանություն: Բայց ի տարբերություն հուսահատ ինքնասպանների՝ ճգնավորների պարագային տեղի է ունենում հակառակը: Ինքնասպանը ոչ թե հրաժարվում է կյանքի կամքից, այլ դժգոհում այն պայմաններից, որոնցում իրեն տրվել է այդ կյանքը: Այն մեկ պատճառով, որ ինքնասպանության գնացող մարդը չի կարողանում դադարել ուզելուց, դադարում է ապրելուց: Իսկ սրբերը, իշխելով իրենց կամքին և ցանկություններին, կարողանալով զսպել ցանկությունները, ժառանգեցին կյանքը և հատկապես՝ հավիտենական կյանքը:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐ ԵՎ ՎԱՅՐԻ ՑԵՂԵՐ

Շատ սրբեր սպանվեցին հռոմեացիներից: Վաղ քրիստոնեության շրջանում հռոմեացիները հեթանոս էին և հալածում էին քրիստոնյաներին: Թվում է, թե այն ժամանակ այդ ազգի մեջ մթագնել էր խիղճը, որովհետև խիղճը մարդկային ներքին աշխարհից գոչում է Աստծո պատվիրանը՝ մի՛ սպանիր: Սուրբ Հովհան Ոսկեբերանը Աստծո տասը պատվիրանների մասին ասում է, որ եթե նույնիսկ Աստված դրանք գրած չլիներ քարե տախտակների վրա և Մովսեսի միջոցով փոխանցած, մարդկությունը, այնուամենայնիվ, կիմանար այդ պատվիրանները, որովհետև դրանք

գրված են մարդկանց հոգիներում և սրտերում: Եվ սա ճիշտ է, որովհետև յուրաքանչյուրը կարող է լսել իր հոգուց եկող ձայնը, որն ուսուցանում է, որ չպետք է ստենք, գողանանք, սպանենք, շնանանք և այլն:

Նույնիսկ ներկայիս քաղաքակրթությունից հեռու վայրի ցեղերն առավել հարգանք ունեն այն պատվիրանի հանդեպ, որն արգելում է սպանությունը: Սա ծիծաղելի է թվում, որովհետև մենք գիտենք, որ այդ ցեղերն ապրում են որպես վայրենիներ, մեր հասկացություններից բոլորովին տարբերվող կենցաղով: Բայց առավել ծանոթանալով նրանց ավանդույթներին՝ կարող ենք տեսնել բավականին խելացի ուսուցումներ: Հռոմեացիները սպանում էին քրիստոնյաներին և գնում իրենց առօրյա կյանքին, մինչդեռ վայրի ցեղի անդամը, մարդ սպանելով, պետք է որոշ ժամանակաշրջան զղջման մեջ լինի: Նա իրավունք չունի կանանց մոտենալու, միս ուտելու, այլ ուտում է բույսերից պատրաստված կերակուրներ: Եվ սպանողը պետք է ապաշխարի, նույնիսկ եթե սպանությունը պատահել է պատերազմի ժամանակ: Մեր եկեղեցական կանոններում նման կանոններ կան: Պատերազմի ժամանակ սպանություն գործած մադը մարդասպան չի համարվում, բայց Սուրբ Հաղորդությանը մոտենալու համար պետք է ապաշխարի քահանայի կողմից նշանակված ժամանակահատվածում: Հռոմեացիները չարչարեցին քրիստոնյաներին տարբեր ձևերով՝ կտրտելով, կենդանի մարդուն մաշկազերծ անելով, կախելով, խաչելով և այլն: Հարավային Ամերիկայում ապրող ցեղերը ևս նման սովորություն ունեն, հանում են իրենց թշնամու գանգամաշկը: Բայց եթե նման դեպքերում հռոմեացի տանջարարները մարդուն կենդանի մաշկազերծ անելուց հետո հանգիստ գնում էին իրենց գործերին, վայրի ցեղայինները, կորցնելով իրենց ներքին խաղաղությունը, մտնում են զղջման շրջանի մեջ: Նույնիսկ երիտասարդ զինվորները, ովքեր առաջին անգամ են սպանել և մաշկել թշնամուն, պետք է ապաշխարեն վեց ամիս՝ այս ընթացքում ուտելով միայն բույսեր, և ոչ մի իրավունք չունեն լվալու իրենց գլուխը: Այս սովորությունը նման է Հին Կտակարանում հիշվող հրեաների սովորությանը, ովքեր վշտերի ժամանակ իրենց գլուխներին մոխիր կամ հող և մոխիր էին լցնում (Նեեմի 9.1, Եսթ. 14.1-3, Մակ. 3.47 և այլն): Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում, Նոր Գվինեայում ապրող ցեղերը սովորություն ունեն իրենց թշնամիների կտրած գլուխները բերելու իրենց բնակավայրերը: Այնտեղ նրանք մի արարողություն են կազմակերպում, որի ընթացքում պարելով, երգելով և աղոթելով սպանված թշնամիների համար, ասում էին. «Մի զայրացիր մեզ վրա: Մեզ հաջողվեց հաղթանակ տանել, բայց մենք նաև զոհաբերություն ենք անում քեզ համար: Եթե մարտում դու հաջողություն ունենայիր, ապա այդ ժամանակ արդեն մեր գլուխները կախված կլինեին քո գյուղում: Ինչու՞ մեր թշնամին դարձար:

Եթե մեզ հետ չթշնամանայիր, այս պատերազմը չէր լինի, և քո գլուխը չէր կտրվի»: Այս սովորույթները ցույց են տալիս, որ վայրի ցեղերը վախենում են սպանելուց, և եթե դա պատահում է, նրանք զղջում են համապատասխան արարողություններ կատարելով: Հռոմեացիներն իմաստուն ու խելացի էին համարվում, սակայն միևնույն ժամանակ կարող էին սպանել բազում քրիստոնյաների առանց զղջման զգացում ունենալու: Հռոմեացիների և վայրի ցեղերի այս համեմատությունը ցույց է տալիս, որ տասը պատվիրանները փոխաբերական իմաստով գրված են մարդու հոգում, բայց մարդը կարող է խլացնել իր հոգու ձայնը՝ դառնալով ավելի վայրի, քան նախնադարյան համարվող ցեղերը:

ՍՈՒՐԲ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Մեր Եկեղեցու տոնացույցում ընդգրկված են սրբերի տոներ, ովքեր զինվորական են եղել: Սա ցույց է տալիս Եկեղեցու դիրքորոշումը զինվորականության և հայրենիքի պաշտպանության նվիրական գործի հանդեպ: Աղանդներից հատկապես Եհովայի վկաներն ուսուցանում են, թե անթույլատրելի է զինվոր լինելը, զենք վերցնելը անգամ հայրենիքի պաշտպանության համար: Սակայն Նոր Կտակարանում հստակորեն նշված է բանակի կամ զորքի անհրաժեշտությունը, իհարկե, հայրենիքի, մարդկանց, սրբազան արժեքների պաշտպանության նպատակով: Երբ զինվորները Հովհաննես Մկրտչին հարցրեցին, թե իրենք ինչ պետք է անեն, Հովհաննեսը սխալ չհամարեց նրանց զինվորական ծառայությունը, այլ ասաց. «Ոչ ոքի մի նեղեք, ոչ ոքի մի զրպարտեք, ձեր ռոճիկը թող ձեզ բավարար լինի» (Ղուկ.3:14): Պողոս առաքյալն իր անշահախնդիր գործունեության մասին խոսելիս համեմատություն է անում զինվորի ծառայության հետ՝ ասելով. «Ո՞վ զինվորություն կանի իր ծախսով» (Ա. Կորնթ. 9:7)։ Պողոս Առաքյալը նաև հավատքի մասին խոսելով՝ ասում է, որ հավատքով էին Սամսոնը, Դավիթը, Սամուելը (նաև Գեդեոնը, Բարակը, Հեփթայեն) անպարտելի դառնում պատերազմում և հաղթում օտարների բանակներին (Եբր. 11. 32-35): Եկեղեցական Սուրբ Հայրերը նաև զինվորի ծառայության գովելի օրինակն են գործածել հավատքի հետ առնչված իրողություններ բացատրելու և նույնիսկ սուրբգրական մեկնությունների համար: Օրինակ՝ Հովհան Ոսկեբերանն այսպես է բացատրում Պողոս առաքյալի՝ գաղատացիներին ուղղված թղթի հետևյալ նախադասությունը.«Այսուհետև ոչ ոք թող ինձ նեղություն չտա, որովհետև ես իմ մեջ եմ կրում Քրիստոսի չարչարանքները» (6:17): Ոմանք մեղադրում էին Պողոս առաքյալին հավատքի այլակերպ ընկալման համար: Հովհան Ոսկեբերանը, առաքյալի նշյալ խոսքի արտահայտած մտքի վե-

ռաբերյալ ասում է, որ եթե շարքից դուրս եկած և ետ մնացած զինվորին տեսնեին անհամար, արյունոտ վերքերով, մի՞թե նրան կմեղադրեին վախկոտության ու դավաճանության մեջ: Իրականում այդ զինվորն իր մարմնի մեջ է տանում իր քաջության ապացույցը: Ըստ Ոսկեբերանի՝ Պողոս առաքյալն ասում է, որ այդպես պետք է դատել նաև իր մասին, որովհետև իր վերքերը բառերից էլ ուժեղ և իր նամակից էլ ավելի ընդարձակ ապացույց են, և Քրիստոսի հավատքի համար ստացած իր մարմնի վերքերն ու սպիները բավարար են՝ ապացուցելու իր հավատարմությունը Քրիստոսին:

Եկեղեցում տոնական հիշատակություն ունեցող սուրբ զորականներից են Ղունկիանոսը, ով Քրիստոսի խաչի մոտ դարձի եկավ և հավատաց Նրան (Մատթ. 27.54, Մարկ. 15.39, Ղուկ. 23. 47), Եփեսոսի քառասուն զինվորները, սուրբ Սարգիսը, Սուրբ Գևորգը, Պարսկաստանում նահատակված հայ զորախումբը՝ սուրբ Ատոմյանները, Սուրբ Վարդանանք: Ավետարանում գովեստով է խոսվում հարյուրապետի մասին, ով խնդրեց Քրիստոսին աստվածային զորությամբ խոսքով բուժել իր ծառային՝ ասելով. «Տե՛ր, ես արժանի չեմ, որ դու իմ հարկի տակ մտնես» (Մատթ. 8.8, Ղուկ. 7.6): Եվ Քրիստոս ոչ թե մեկ այլ մասնագիտություն անեցող անձի, այլ հենց այս մարդու՝ զինվորականի մասին ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Իսրայելի մեջ անգամ այսչափ հավատ չգտա» (Մատթ. 8.10, Ղուկ. 7.9): Աղանդները, որոնք Սուրբ Գրքի բազում խոսքեր ծուռ են մեկնում իրենց սխալ ուսուցումներին համապատասխանեցնելու համար, ասում են, թե Քրիստոս գովեց հարյուրապետին այն ժամանակ, երբ նա արդեն դադարել էր զինվորական գործ անելուց: Բայց հարյուրապետն ինքն է վկայում, որ զինվորական ծառայության մեջ է, ասելով. «Ես էլ իշխանության տակ եղող մարդ եմ, ինձ ենթակա զինվորներ ունեմ. սրան ասում եմ՝ գնա՛, և գնում է, և մի ուրիշին, թե՝ ե՛կ, և գալիս է» (Մատթ. 8.9, Ղուկ. 7.8): Քրիստոսահիմն Սուրբ Եկեղեցին սրբացրել է մեծ հավատքով ապրած զինվորներին ու զորականներին: Եվ մեր եկեղեցիներում ամեն տարի նշում ենք նրանց հիշատակը՝ որպես օրինակ և խանդավառություն այսօրվա մեր զինվորների համար, ովքեր պետք է նաև հավատքով զորանան՝ պաշտպանելու մեր սրբազան արժեքները, մեր հայրենիքն ու ժողովրդին:

ՍԱՏԱՆԻԶՄ

ՍԱՏԱՆԱՅԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Ավետարանում հետևյալ մարգարեությունը վերաբերում է նաև մեր ժամանակներին. «Օրեր կգան, երբ շատերի սերը պիտի ցամաքի» (Մատթ. 24.12): Եկեք իրատես լինենք. մեր օրերում շատ մարդիկ կարծես թե չեզոք դիրք են գրավել հավատքի նկատմամբ: Մինչդեռ իրականում հավատքի մեջ չեզոք դիրք չկա: Շատերս ենք լսում սատանայապաշտների մասին: Զայրանում ենք դրանց անբարոյականության, սպանությունների, սանձարձակությունների համար: Բայց ինչպես որ որևէ գործողություն կարող է ունենալ և՛ ակտիվ, և՛ պասիվ կատարող, այդպես էլ նույնն է սատանային պաշտելը: Շատ հետաքրքիր և ճիշտ դիտարկում է արել այս առումով անգլիացի մեծ գրող Բայրոնը իր մի ստեղծագործության մեջ: Սատանան հայտնվում է Կայենին և առաջարկում իրեն պաշտել: Կայենն ասում է. «Ես ընդհանրապես ոչ ոքի չեմ պաշտում»: Այս դիմադրությանը չարն այսպես է պատասխանում. «Միևնույն է, դու Աստծուն չպաշտելով հենց ինձ ես պաշտում, Նրան չխոնարհվելով, ինձ ես խոնարհվում»: Եվ այս իմաստով հաստատապես կարելի է ասել, որ Աստծուն չպաշտողները կամ Եկեղեցու ցույց տված ուղուց բոլոր շեղվածները պասիվ սատանայապաշտներ են: Մինչդեռ Եկեղեցին, մեծապես կարևորելով հանուն Քրիստոսի իրենց կյանքը զոհած սրբերի հիշատակի տոնակատարումը, դրանով ուսուցանում է, որ մարդն Աստծուն պետք է սիրի իր անձից ավելի:

ՍԱՏԱՆԱՅԻ ԵՎ 666-Ի ՄԱՍԻՆ

Շարականներից մեկը պատմում է այն մասին, թե ինչպես հրեաների ետևից ընթացող փարավոնն իր զորքով հանդերձ ընկղմվեց Կարմիր ծովի ջրերը: Շատ գեղեցիկ համեմատություն կա այստեղ. իսրայելցիների ջրով անցնելը խորհրդանշում է քրիստոնյաների մկրտությունը, փարավոնը խորհրդանշում է սատանային, իսկ փարավոնի և նրա զորքի ընկղմվելը՝ սատանայի ու նրա զորքի պարտությունը:

Այժմ խոսենք սատանայի և հակաքրիստոսի ու չարի վերջնական պարտության մասին: Հայաստանում եղավ մի շրջան, երբ որոշ թերթերում հոդվածներ երևացին և շատ մարդիկ էլ սկսեցին խոսել հակաքրիստոսի և նրա նշանի մասին: Սրա պատճառը հիմնականում վերջերս կատարված սոցիալական քարտերի և դրանում մարդուն տրվող համարների նորամուծությունն էր հայ հասարակության մեջ՝ պնդումով, որ առանց այդ քարտի հնարավոր չի լինի տարեցների համար թոշակ, աշխատողների համար աշխատավարձ ստանալ, նույնիսկ բանկերում կոմունալ վճարումներ կատարել: Առանց սոցիալական քարտի թոշակների պահման և վճարումների արգելման որոշումը գործադրվեց մի կարճ ժամա-

նակ, քանի որ այն հետագայում չեղյալ հայտարարվեց Սահմանադրական դատարանի կողմից: Ոմանք սոցիալական քարտերի կիրառումը նույնացրին Հովհաննու Հայտնության մեջ նկարագրվածի հետ, որտեղ նշվում է, որ մարդկանց վրա պիտի դրոշմվի հակաքրիստոսի նշանը, առանց որի մարդիկ չեն կարող ոչ գնել և ոչ էլ վաճառել (Հայտ. 13.17): Սակայն խուճապի պատճառը հիմնականում Աստվածաշնչի և հոգևոր գրականության ոչ լավ իմացությունն է:

Հեռուստաընկերություններից մեկի կողմից արված հարցումների համաձայն՝ Հայաստանի բնակչության զգալի մասը Աստվածաշունչ գրեթե չի կարդում: Մարդիկ պարզապես զբաղված են իրենց առօրյա գործերով, իրենց մարմնի կերակուրը հայթայթելով և այս ամենի մեջ մոռանում են հոգևոր կերակրի մասին: Ու այս վիճակով մարդիկ որոշ լուրեր են լսում, սատանայի և հակաքրիստոսի մասին ֆիլմեր են դիտում, այդ իսկ պատճառով առաջին իսկ առիթի դեպքում ընկնում են խուճապի մեջ: Կարծես թե սնահավատության է սպառնում վերածվել նաև 666 թիվը, որը, ըստ Հովհաննու Հայտնության, նեռին բացահայտող թիվ է (13.18): Կան մարդիկ, որ անմիջապես ետ են դառնում ճանապարհից, երբ սև կատու են տեսնում, ոմանք էլ անբարենպաստ են համարում 13 թիվը: Ահա այսպիսի վերաբերմունք է արդեն նկատվում նաև 666 թվի հանդեպ: Ինչ խոսք, սա անտրամաբանական է, որովհետև, օրինակ, շատ մարդկանց մեքենաների համարներ կարող են երեք վեց պարունակել, և Հայաստանի ու ոչ միայն Հայաստանի, այլև ողջ աշխարհի բազում մարդկանց հեռախոսահամարները կարող են հերթականությամբ երեք վեցեր ունենալ: Բայց սա չի նշանակում, որ մենք այդպիսի մարդկանց պետք է համարենք չարի ազդեցության տակ գտնվողներ, և խզենք մեր կապերը նրանց հետ: Եթե այսպիսի տրամաբանությամբ վարվենք, ապա պետք է մի կողմ դնենք նաև Աստվածաշունչը, որովհետև հայերեն տպագիր Աստվածաշունչն առաջին անգամ լույս է տեսել 1666 թվականին: Գրիգոր Տաթևացին նեռի թիվը բացատրում է հայոց այբուբենի թվային արժեքի համեմատությամբ՝ ՈԿԶ - 666, որտեղ Ո-ն 600-ն է, Կ-ն՝ 60-ը, իսկ Զ-ն՝ 6-ը: Տառերի այս հապավումը նշանակում է՝ **ո**ւրանամ **կ**ամավ **զ**Աստուած, այսինքն՝ Աստծուն կամովին ուրացողներն են նեռեր և չարի հետևորդներ: Տաթևացու բացատրությունը համընկնում է նաև Հովհաննես առաքյալի թղթերում նշվածի հետ. «Ինչպես լսել եք, Նեռը գալու է. բայց արդեն իսկ եկել են բազում նեռեր» (Ա Հովհ. 2.18), «Նա՛ է Նեռը, ով ուրանում է Հորը և Որդուն» (Ա Հովհ. 2.22) «Եվ ամեն մի հոգի, որ չի դավանում Հիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա Աստծուց չէ: Եվ այդ հոգին Նեռինն է, որի մասին լսել եք, թե գալու է և արդեն իսկ աշխարհում է» (Ա Հովհ. 4.3), «Բազում մոլորեցնողներ են երևան եկել աշխարհում. ով որ չի խոստո-

վանում Հիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա մոլորեցնող է և Նեռ» (Բ Հովհ. 1.7): Եփրեմ Ասորին նշում է, որ ողջ մարդկությունը, բացառյալ Քրիստոսին հավատարիմ քչերի, ուրախությամբ պիտի ընդունի Նեռի թագավորությունը: Հովհաննու Հայտնության մեջ նշվում է, որ մարդկանց վրա Նեռի նշանը դրոշմվելու է այն ժամանակ, երբ մարդիկ գիտակցաբար պաշտեն հակաքրիստոսին (13.14-15): Եվ քանի դեռ Նեռի թագավորությունը չի եկել, և ողջ մարդկության մեծամասնությունը հակաքրիստոսին գիտակցաբար չի պաշտում, ավելորդ խուճապի պատճառ չկա: Շատերը կարող են համաձայն չլինել այս կարծիքի հետ: Այդ իսկ պատճառով մենք հիմա կներկայացնենք Ընդհանրական Եկեղեցու մեծագույն Հայրերից մեկի՝ Սուրբ Հովհան Ոսկեբերանի տեսակետը սատանայի մասին, ըստ որի այնքան էլ պետք չէ վախենալ և սարսափել սատանայից: Մարդկությունը պարզապես պետք է զգոն և սթափ լինի Նեռի թագավորության ժամանակ, որովհետև այն օրերին սատանայի իշխանությունն ավելի է հզորանալու: «Թույլ կամքի տեր մարդը,- ասում է Հովհան Ոսկեբերանը,- կարող է նույնիսկ առանց սատանայի մեղքի անդունդն ընկնել: Այդպիսի մարդը կարող է վնաս ստանալ նույնիսկ Պողոս առաքյալից»: Այդ մասին նշում է նաև ինքը՝ Պողոս առաքյալը, կորնթացիներին ուղղված իր երկրորդ նամակում (Բ Կորնթ. 10.9-10), ինչպես նաև՝ Պետրոս առաքյալը (Բ Պետրոս 3.15-16): Շատ հետաքրքիր և մեզ համար արտասովոր ու զարմանալի հրահանգների ենք հանդիպում Պողոս առաքյալի թղթերում: Պողոս առաքյալը հրահանգում, կարգադրում է, որպեսզի մեղավոր մարդուն մատնեն սատանային: Խոսելով Կորնթոսի մեղավորի մասին՝ Պողոս առաքյալն ասում է. «Մատնեցե՛ք այդպիսի մեկին սատանային՝ նրա մարմնի կորստյան համար, որպեսզի հոգին ապրի» (Ա Կորնթ. 5.5): Իր սիրելի աշակերտին՝ Տիմոթեոսին ուղղված առաջին նամակում Պողոս առաքյալը, խոսելով երկու աստվածհայհոյողների մասին, ասում է, թե նրանց մատնեց սատանային, որպեսզի խրատվեն և այլևս չհայհոյեն (Ա Տիմ. 1.20): Ինչպես որ հմուտ բժիշկը կարողանում է օձի թույնից դեղ պատրաստել և հիվանդներին բուժել, ճիշտ այդպես էլ Պողոս առաքյալը հմտությամբ կարողանում է գործածել սատանային՝ մարդկանց հոգիները բուժելու համար: Սատանան կուրությամբ ցանկանում է բոլորին չարիք պատճառել, առանց իմանալու դա իրեն օգու՞տ է, թե՞ վնաս: «Հավատքի տեր և իմաստուն մարդը,- համոզված է Սուրբ Հովհան Ոսկեբերանը,- կարող է սատանայից նույնիսկ օգուտ ստանալ՝ նոր հայտնագործումներ անելով և նոր հաղթանակներ ձեռք բերելով»: Հունարենը *սատանա* բառի համար ունի *դիաբոլոս* բառը: Այս բառն առաջացել է հունարեն *դիաբալլո* բայից, որը նշանակում է բամբասել, անպատվել, չարախոսել: Այդ իսկ պատճառով հայերենում *սատանա* բառին իբրև

հոմանիշ ունենք նաև *բանսարկու* բառը: Սա ցույց է տալիս, որ սատանան չի կարող բռնությամբ որևէ մեկին ստիպել, որպեսզի նա մեղք գործի: Սատանան պարզապես հնարքներ է բանեցնում, գայթակղիչ առաջարկություններ է անում, որպեսզի մեզ իր ձեռքը գցի: Հովհան Ոսկեբերանն ասում է, որ սատանան ցանկանում է, որպեսզի մարդիկ իրենց մեղքերը սատանայի վրա գցեն և ներում չստանան, ինչպես որ Եվան վարվեց: Սակայն մեր մեղքերի համար հիմնական մեղավորը մենք ենք, որովհետև համաձայնվում ենք սատանայի գայթակղիչ առաջարկություններին, մտքերին ու գաղափարներին, ընդունում ենք դրանք և զարգացնում՝ գործակից դառնալով սատանային: «Տիեզերական անխախտ օրենք կա,- պնդում է Սուրբ Հովհան Ոսկեբերանը,- եթե մարդն ինքն իր դեմ ոչինչ չանի, ապա ոչ ոք չի կարող նրան վնաս պատճառել, ո՛չ նրա թշնամիները, ո՛չ ողջ մարդկությունը, ո՛չ տիեզերքն իր զորությամբ, ո՛չ էլ սատանան իր չար հրեշտակներով հանդերձ: Եվ ոչ էլ այս բոլորը, եթե միաբանվեն, դարձյալ չեն կարող մարդուն վնաս պատճառել, եթե մարդն ինքն իր դեմ ոչինչ չանի»: Եվ սա իմանալով՝ մենք պետք է ուշադրություն դարձնենք մեր հոգևոր կյանքին: Ե՞րբ եք արդյոք վերջին անգամ եկեղեցի գնացել, ե՞րբ եք վերջին անգամ Սուրբ Հաղորդություն ստացել, ի՞նչ է Հաղորդությունը, ի՞նչ է ասում Քրիստոս այս մասին: Ահա նաև նման կարևոր հարցերի պատասխանների իմացությանը և մեր հոգևոր կյանքին մենք պետք է ուշադրություն դարձնենք: Եվ եթե ապրենք որպես պարզ և անկեղծ հավատացյալներ, ապա մեր օրերում խուճապ առաջացնող ոչ մի լուր կամ խոսակցություն չեն կարող խաթարել մեր հոգու խաղաղությունը, որովհետև մեզ հետ է Հիսուս Քրիստոս, մեզ հետ է Աստված, որին փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

ՉԱՐԻ ՄԱՍԻՆ

Մարդիկ այժմ ավելի շատ հակված են կատարվող իրադարձությունները բացատրելու՝ միայն նկատի ունենալով բնական երևույթները, մարդկային դիտավորությունները: Դրա համար էլ ոմանց հեքիաթային է թվում սատանայի կամ չարի առնչությամբ զգուշացումը: Սակայն եկեղեցական Հայրերն ասում են, որ ոչ մի չար միտք կամ արարք չի լինում առանց սատանայի մասնակցության: Եթե փորձենք ամեն ինչ բացատրել միայն բնության կամ դիտավորության ընթացքով, ապա սխալ եզրակացությունների կհանգենք: Ասվածի ապացույցներից մեկն այն է, որ մեր մարդկային գիտակցությունը երբեք չի կարող նախորդել նույնիսկ մեզ համար սովորական մի առարկայի, այլ այդ առարկան է, որ նախորդում է մեր գիտակցությանը և մեր մտածողության մեջ մտնում է միայն մեր զգա-

ցողություններից որևէ մեկի՝ լսողության, տեսողության կամ այլ մեկի վրա ազդելով: Եվ միայն մեր փորձի վրա հիմնվելով՝ մենք չենք կարող ճշմարտության հասնել: Օրինակ՝ փորձով չենք կարող որոշել՝ աշխարհը հավիտենակա՞ն գոյություն ունի, թե՞ ունի սկիզբ, արդյոք տիեզերքն ունի՞ սահման, թե՞ անսահման է: Հետևաբար, միայն մեր տեսնելով, լսելով կամ զգալով, այսինքն՝ միայն զգացողության չափանիշով հնարավոր չէ ճիշտ պատասխան գտնել բազում երևույթների համար: Եվ այս իմաստով քրիստոնեությունը աստվածային հայտնության հիման վրա բացատրում է աշխարհում չարի գոյությունը: Սատանան նախկինում մեծ իշխանություն ուներ աշխարհում, սակայն Քրիստոսի փրկագործությունից հետո սատանայի իշխանությունը շատ խիստ սահմանափակվեց: Աստվածաշունչն ասում է, որ սատանան կապվեց և նետվեց անդունդը խորհրդանշական հազար տարով (Հայտն. 20.2-3): Սատանան ազատ է արձակվելու միայն աշխահի վախճանին՝ Նեռի իշխանության ժամանակ, և հետո վերջնական պարտության է մատնվելու (Հայտն. 20.7, 9-10):

ԳՈՒՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Պատարագի արարողության ժամանակ ընթերցումներ են կատարվում մարգարեություններից, այնուհետև՝ Նոր Կտակարանից: Ընթերցումների հերթականությունն այսպիսին է, որովհետև նախ մարգարեները մարգարեացան, և ապա Քրիստոս ծնվեց, ու իրականացան մարգարեությունները: Սա ևս մեկ ապացույց է Քրիստոսի աստվածության, որովհետև Նրա Ծննդյամբ և գործունեությամբ իրականացավ այն ամենը, ինչ կանխագուշակվել էր Նրանից բազում և բազում տարիներ առաջ: Մարգարեն մեծավ մասամբ հայտնում էր նաև հեռավոր ժամանակվա իրադարձությունները, իսկ ով միմիայն հայտնին ու մոտ ժամանակինն է հայտնում, նա մարգարե չէ: Մարգարեությունները լինում են նաև դիվական, ինչպես որ հեթանոսության ժամանակ կուռքերի մարգարեների մարգարեությունները: Այսպիսի բան երևում է նաև այսօր կախարդների կամ գուշակների պատասխանների մեջ: Այս առումով երբեմն շատ անհոգ են լինում քրիստոնյաները: Մարդիկ կան, ովքեր մկրտված են, քրիստոնյա են, սակայն միևնույն ժամանակ նաև հաճախում են գուշակների, վախ չափողների և նման այսպիսի «անհատ ձեռներեցների» մոտ: Որևէ մարդ չի կարող հոգեպես առողջ լինել՝ շփվելով և՛ Աստծո, և՛ սատանայի կամ սատանայական ուժերի հետ, ինպես ասում է նաև Պողոս առաքյալը. «Չեք կարող խմել և՛ Տիրոջ բաժակը, և՛ դևերի բաժակը: Եվ չեք կարող վայելել և՛ Տիրոջ սեղանից, և՛ դևերի սեղանից» (Ա Կորնթ. 10.20-21): Գուշակները, վախ չափողները և այլք նմաններ իրենց գործունեությունն

օրինական ցույց տալու համար իրենց սենյակներում հաճախ սրբապատկերներ են կախում կամ էլ ցանկանում են շեշտել իրենց կապը Եկեղեցու հետ: Երբեմն պատահում է, որ երբեմն մարդիկ եկեղեցի են գալիս մեռոնաջուր ուզելու: Եվ նրանց արված հարցումների արդյունքում պարզվել է, որ ինչ-որ բժշկություն անող մի գուշակ կամ նման մեկն է նրանց ուղարկել եկեղեցուց ջուր բերելու՝ իր այսպես կոչված արարողությունը կատարելու համար: Այդ իսկ պատճառով եկեղեցիներում նաև քահանաները պետք է շատ ուշադիր լինեն, որպեսզի իրենք ևս առանց իմանալու չնպաստեն նման չարիքների տարածմանը: Որևէ քրիստոնյայի համար ամոթ և խայտառակություն է այսպիսի վարմունք ունենալը: Եկեղեցում յուրաքանչյուր դեպքի համար հստակ սահմանված կանոն կամ աղոթք կա, և քրիստոնյան պետք է քահանայի աղոթքը խնդրի ու ոչ թե սնոտիապաշտությամբ չարի ուժով գործող գուշակի կամ նման մեկի մոտ այցելի: «Մի՛ շնացիր»,- ասում է տասնաբանյա պատվիրաններից մեկը, և քրիստոնյայի շեղվելը ճշմարիտ աստվածպաշտությունից և հետևելը այլ ուժերի ու ուղղությունների կռապաշտություն է, ինչը, ըստ մարգարեների, հոգևոր իմաստով անառակություն է ու շնություն (Երեմ. 3.1-2, 9, Եզեկ. 6.9, 16.16, 20.30,), որի համար քրիստոնյան շատ վնասներ կունենա:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշնչում ընդգրկված են 16 մարգարեների մարգարեություններ, որոնցից 4-ը կոչվում են մեծ, իսկ մնացած 12-ը՝ փոքր: Այս անվանումը ցույց է տալիս պարզապես մարգարեությունների ծավալը: Կան մարգարեություններ, որոնք Աստվածաշնչում ընդամենը մի քանի էջ են զբաղեցնում, և կան մարգարեություններ, որոնք ավելի մեծ տեղ են գրավում: Բայց իրենց նշանակությամբ բոլոր մարգարեներն էլ մեծ են: Մարգարեությունները կարելի է կոչել նաև կանխագիտություն ապագայի մասին: Ի՞նչ տարբերություն կա, սակայն, մարգարեության և գուշակության, մարգարեների և գուշակների միջև: Այսօր մեծ տարածում ունի աստղագուշակությունը, և բազում մարդիկ կարծես թե վարակված են հորոսկոպային հիվանդությամբ: Այս երևույթի՝ աստղագուշակության դեմ պայքարել են Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոցում», Օգոստինոսն իր «Խոստովանություններում» և բազմաթիվ եկեղեցական հեղինակներ: Աստղագուշակությունը, որն իբր թե ցույց է տալիս մարդու ճակատագիրը և բնավորությունը, բավականին հեռու է ճշմարտություն լինելուց: Օրինակ՝ միևնույն օրը, միևնույն ամսին և միևնույն ծնողներից ծնված երկվորյակները բավականին տարբեր են լինում: Բնության կարծես թե անխախտ օրենքն է այն, որ միասին մեծացած երկվորյակներն ունենում են բոլորո-

վին տարբեր բնավորություններ, տարբեր մտածելակերպ, ըստ որի էլ ունենում են տարբեր ճակատագրեր: Նշենք, որ ճակատագիր բառը մենք գործածում ենք փոխաբերական իմաստով: Եզնիկ Կողբացին նշում է նաև, որ պատերազմների ժամանակ մարդիկ անգործ չեն նստում, և ոչ ոք չի ասում, թե ճակատագրով ինչպես որոշված է, այնպես էլ կլինի, այլ մարդիկ զենք են վերցնում և ելնում են պայքարելու: Եվ այս երևույթն էլ ցույց է տալիս, որ մարդն ինքն է իր ճակատագրի տերը, մարդն ինքն է իր ճակատագիրը կերտողը: Մարդու կյանքում ամեն ինչ տեղի է ունենում մարդու անձնական կամքով ու գործունեությամբ և Աստծո գիտությամբ ու թույլտվությամբ: Մարգարեները գուշակներից տարբերվում են նրանով, որ նրանք փոխանցել են այն, ինչ նրանց ասել է Աստված: Այս փաստը մարգարեներն ապացուցել են իրենց անբասիր կյանքով, բազում նշաններով, մեծ հրաշքներով և իրենց մարգարեությունների իրականացումներով: Գուշակություններն իրենցից ներկայացնում են միմյանց հետ կապ չունեցող գրվածքներ կամ ասված խոսքեր: Մինչդեռ աաստվածաշնչյան մարգարեություններն անքակտելիորեն կապված են միմյանց հետ և լրացնում են միմյանց: Գուշակությունները վերաբերում են առավելաբար ներկային մոտ ժամանակներին, մինչդեռ աստվածաշնչյան մարգարեությունը տարածվում է մինչև օրերի վերջը: Գուշակություններն առանձին անձանց կամ ժողովուրդների մասին են, մինչդեռ աստվածաշնչյան մարգարեությունն իր հայացքով ընդգրկում է ողջ մարդկությունը: Մարգարեությունները մեզ համար կարևոր են հատկապես նրանով, որ նրանցում Հիսուս Քրիստոսին վերաբերող շատ հատվածներ կան, որոնք կատարվել են և կատարվելու են իրենց ժամանակին:

ՄՈԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԽԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Առաքյալները դարձի բերեցին մարդկանց Աստծո շնորհի զորությամբ և ոչ թե մոգությամբ կամ կախարդությամբ: Տարբերություն կա մոգության ու կախարդության միջև: Կախարդության նպատակն է ազդեցություն ունենալ տարբեր ոգիների վրա՝ խլելով նրանց ուժը, զորությունը կամ նրանց հեռու քշել: Երբ գոռալով ոգիներ են քշում, դա կախարդության գործածում է, բայց երբ ուզում են այդ ոգիներին մարդկային կամքին ենթարկել, դա մոգություն է: Մոգության նպատակն է մեկի կամքը տարածել հոգևոր աշխարհի վրա կամ որևէ բան իրագործել մոգության այդ ուժով: Օրինակ՝ մոգություն գործածող մարդիկ իրենց թշնամուն պատկերող տիկնիկ են սարքում, և իրական մարդը ենթարկվում է այն նույն չարչարանքներին, որին ենթարկվում է նրան պատկերող խաղալիքը: Եվ Հին Կտակարանում դեմքեր պատկերելու կամ քանդակելու ար-

գելքը (Ելք 20.4) ոչ թե մերժումն է ստեղծագործ արվեստի, այլ դրա նպատակն էր նաև հեռու պահել աստվածպաշտներին հատկապես այն ժամանակ հեթանոս աշխարհում մեծապես տարածված մոգության նմանատիպ զենքերի հետ առնչությունից:

ԹՈՒՂԹՈՒԳՐԻ ՄԱՍԻՆ

Այսօր էլ շատ մարդիկ հեթանոսների նման դիմում են կախարդանքների՝ ինչ-որ բանի հասնելու համար: Այդ կախարդանքներից մեկը թուղթուգիրն է, որին վերաբերող զրույցները բոլորս էլ լսել ենք: Կան թուղթուգիր անողներ, կան նաև թուղթուգիր քանդողներ, որոնք իբր վերացնում են այդ կախարդանքի չար ազդեցությունը: Ոմանց համար սա պարզապես փող աշխատելու միջոց է: Սակայն ոմանք էլ իրոք գործում են չարի զորությամբ:

Սատանան նախկինում մեծ իշխանություն ուներ աշխարհում, սակայն Քրիստոսի փրկագործությունից հետո սատանայի իշխանությունը շատ խիստ սահմանափակվեց: Աստվածաշունչն ասում է, որ սատանան կապվեց և նետվեց անդունդը խորհրդանշական հազար տարով (Հայտն. 20.2): Սատանան ազատ է արձակվելու միայն աշխահի վախճանին՝ Նեռի իշխանության ժամանակ (Հայտն. 20.7): Եվ իրոք, աշխարհի այսօրվա վիճակն էլ ցույց է տալիս սատանայի իշխանության սահմանափակությունը: Ոմանք գուցե այս պահին ծիծաղելի համարեն ասվածը, նկատի ունենալով աշխարհում մոլեգնող պատերազմները, անարդարությունները, սակայն հիմա աշխարհն ամենևին էլ այն չէ, ինչ նախկինում էր: Քրիստոնեությունը շատ մեծ բան տվեց աշխարհին. աշխարհը կանգնեց բարոյական այլ մակարդակի վրա: Նախկինում սատանան մեծ իշխանություն ունենալով՝ ողջ աշխարհում տարածել էր կռապաշտությունը: Կուռքերի առջև մարդկային զոհաբերություններ էին արվում, խելացնոր ծնողները զոհաբերում էին իրենց երեխաներին, սեռական այլանդակությունը դիտվում էր որպես սովորական երևույթ, մարդիկ անզուսպ էին իրենց կրքերի և մոլուցքների մեջ: Նույնիսկ հրեաները մոլորվեցին և սկսեցին անգամ երեխաների զոհաբերություններ անել, որի համար Աստված նրանց դատապարտում է մարգարեության մեջ (Եզեկ. 16.20-21, 36, 20.31, 23.37, 39): Քանի որ այժմ սատանայի իշխանությունը շատ սահմանափակ է, ապա վերացել են նաև կռապաշտությունը, մեծահասակ մարդկանց կամ երեխաների զոհաբերությունները, անբարոյականությունը, սեռական այլանդակությունը դատապարտվում են բոլորի կողմից, և նույնիսկ այդպիսի քայլի դիմող մարդիկ հստակ գիտեն, որ անօրինական և մարդկային հասարակության կողմից անընդունելի բան են անում: Ճիշտ է, դժբախ-

տաբար, մնացել են պատերազմներն ու անարդարությունները: Այժմ քանի որ սատանան կապված է, իշխանություն չունի որևէ քրիստոնյայի վրա, եթե քրիստոնյան գործադրում է Քրիստոսի պատվիրանները: Սատանան իշխանություն ունի միայն այնպիսի մարդկանց վրա, ովքեր թե՛ իրենց կյանքով ու գործերով, թե՛ իրենց սրտերով հեռու են ճշմարտությունից: Հետևաբար, սնահավատ մարդկանց մեջ խուճապ առաջացնող թուղթուգիրը քրիստոնյայի համար ճշմարիտ հավատքի դեպքում որևէ ազդեցություն չի կարող ունենալ: Եկեղեցու կողմից ընդունելի չեն նաև այսպես կոչված թուղթուգիր քանդողները, որովհետև սատանան կարող է որոշ ժամանակ քնած ձևանալ շատ ավելի մեծ որս հափշտակելու համար: Պետք է պարզապես հոգևորականին խնդրել տնօրհնեք կատարել, անձնապես եկեղեցի հաճախել և քահանայի աղոթքը խնդրել: Բոլորս էլ պետք է իմանանք, որ մարդու մեջ առողջ հոգեվիճակ ձևավորում է միայն ճշմարիտ աստվածպաշտությունը:

Ո՞ՐՆ Է ՃՇՄԱՐԻՏ ԿՐՈՆԸ

Երբեմն եկեղեցուց հեռու որոշ մարդկանց մեջ հարց է առաջանում. «Լավ, այսքան կրոններ կան, ի՞նչ իմանանք, թե որն է ճշմարիտ կրոնը»: Իսկ ոմանք էլ ավելի են առաջ գնում՝ ասելով. «Բոլոր կրոններն էլ լավն են, պաշտում են նույն աստծուն՝ տիեզերքի արարչին, միայն թե ամեն մեկն իր ձևով»: Այսպիսի կարծիքը մարդկանց կարող է գցել ահավոր մոլորության մեջ: Քրիստոնեությունը երբեք չի կարող նույնանալ որևէ այլ կրոնի հետ, որովհետև մյուս կրոնները լի են ահավոր թերություններով: Եկեղեցու սրբերից Հուստինոս Վկան, որն ապրել է երկրորդ դարում, նախքան քրիստոնյա դառնալը, ճշմարտություն էր փնտրում այլ կրոններում: Նա փայլուն կրթություն ստացած մարդ էր և հիմնավոր ուսումնասիրելով շատ կրոններ եկավ այն եզրակացության, որ կատարելությունը միայն քրիստոնեության մեջ է: Նույն կերպ և Օգոստինոս Երանելին, ուսումնասիրելով հունական փիլիսոփայությունը և տարբեր ուսմունքներ, ի վերջո եկավ ճշմարիտ Եկեղեցու գիրկը: Քրիստոնեությանը լավ ծանոթ մարդը երբեք չի կարող ավելի լավ համարել մեկ այլ կրոն: Բերենք օրինակներ: Բուդդայականությունն արդարացիորեն կոչում են նաև աթեիստների կամ աթեիստական կրոն, որովհետև այնտեղ ընդհանրապես չկա հետաքրքրություն Աստծո նկատմամբ: Այդ կրոնին հետևող մարդու նպատակը միայն երանելի վիճակին՝ նիրվանային հասնելն է, իսկ թե Աստված գոյություն ունի, թե չունի, ինչ է ասում կամ պատվիրում, դրանք երրորդական հարցեր են: Բացի դրանից բուդդայականությունը մարդուն գցում է ներքին ահավոր հպարտության մեջ՝ ուսուցանելով, թե մարդն

ինքն իրենով կարող է հասնել փափագելի երանությանը, փրկությանը: Մուսուլմանությունը, որը, կարելի է նույնիսկ ասել, առաջացել է քրիստոնեությունից, ամբողջությամբ օգտվել է քրիստոնեությունից, ընդունում է Հին Կտակարանը, Հիսուս Քրիստոսին իբրև մեծագույն մարգարեներից մեկը, իսկ այդ կրոնի մեջ ամենակատարյալ կնոջ կերպար համարվում է Հիսուս Քրիստոսի մայրը՝ Մարիամը: Հնդկական կրոնը՝ հինդուիզմը, որ ըստ մի քանի աղբյուրների ունի երեք հարյուր միլիոնից ավելի աստվածներ, իր անընդհատ և անիմաստ վերամարմնավորումների գաղափարով բացառում է մարդու ներաշխարհի ճշմարիտ լուսավորումը: Այլ կրոնները լի են այսպիսի ակնհայտ և բազմաթիվ թերություններով: Կարող եք հարցնել. «Իսկ այդ դեպքում ի՞նչ են ուրեմն մյուս կրոնները»: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ նեռը կամ հակաքրիստոսը գալստից առաջ ունենալու է մի շարք կարապետներ: Եվ այս մեծագույն սուրբը նրանցից նշում է և՛ հերձվածողներին, աղանդավորներին, քանի որ մարդկանց հեռացնում են ճշմարտությունից, և՛ նրանց, ովքեր չեն խոստովանում Հիսուս Քրիստոսին: Նույն կերպ և Սուրբ Հովհաննես առաքյալն է ասում իր թղթում. «Եվ ամեն մի հոգի, որ չի դավանում Հիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա Աստծուց չէ: Եվ այդ հոգին նեռինն է, որի մասին լսել եք, թե գալու է և արդեն իսկ աշխարհում է» (Ա Հովհ. 4.3): Սակայն հարց է առաջանում. «Բայց չէ՞ որ տարբեր կրոններում այնքան բարոյական և առաքինի բաներ կան»: Սրան կպատասխանենք այս պատկերավոր առարկությամբ. «Աղվեսը քնած է ձևանում, իսկ սատանան՝ ողջախոհ, մեկն իր զոհին բռնելու, իսկ մյուսը՝ մարդկային հոգին կորստյան մատնելու համար»:

ՃՇՄԱՐԻՏ ԿՐՈՆԸ

Աշխարհում շատ կրոններ կան, որոնցից յուրաքանչյուրը հավակնում է միակ ճշմարիտը լինելու ճանաչմանը: Բազում մարդիկ, անծանոթ կամ էլ մակերեսայնորեն ծանոթ լինելով որոշ կրոնների, հակված են այն կարծիքին, որ բոլոր կրոններն էլ պաշտում են միևնույն Աստծուն, բայց տարբեր անվանումներով, և բոլոր կրոններն էլ ունեն գրեթե նույն բարոյական պահանջները: Հետևաբար, կարելի է կարծել, որ բոլոր կրոններն էլ բարոյական են ու ճշմարիտ՝ ամեն մեկն իրեն հատուկ ձևով: Որևէ կրոնի ուսումնասիրումը բազում տարիների և փորձառության կարիք ունի, դրա համար էլ մենք չենք կարող մեր ուսումնասիրությունից ելնելով որևէ հիմնավոր բան ասել: Այդ իսկ պատճառով կօգտագործենք այն նյութերը, որոնք կրոնների մասնագետների աշխատանքների արդյունքն են՝ փորձելով հնարավորին չափ անկողմնակալ լինել: Եթե երեխան կրկնում է իր

հոր ասած մի ճշմարտություն (օրինակ՝ երկիրը պտտվում է արևի շուրջը), ապա ստացվում է, որ նա առանց փորձի և դեռ առանց համապատասխան մտային հասունության նույնպես ճշմարտությունն է ասում: Նույն կերպ էլ վարվելու ենք այս խնդրի ուսումնասիրման գործում՝ ներկայացնելով մի քանի կրոնների դիրքորոշումները տարբեր հարցերի վերաբերյալ:

ՄԱՐՄԻՆ **-** Անտիկ փիլիսոփայությունը մարմինը համարում է մի բանտ, որի մեջ բանտարկված է մարդկային հոգին: Պլատոնը նույնիսկ մարմինը գերեզման է համարում, որի մեջ թաղված հոգին պետք է ազատություն գտնի: Ըստ հին հնդկական փիլիսոփայության, որին հետևում է նաև հնդկական կրոնը՝ հինդուիզմը, հոգին անընդհատ մարմնավորվում է այլ մարմինների մեջ՝ թողնելով հին մարմինը իբրև մաշված զգեստ: Քրիստոնեությունը մարդուն համարում է հոգուց և մարմնից կազմված մի ամբողջություն: Եթե որոշ կրոններ մարմինը համարում են մի անպետք բան և փրկություն խոստանում միայն հոգուն, ապա քրիստոնեությունը մարդուն փրկում է ոչ թե մասնակիորեն, այլ ամբողջովին: Քրիստոս հայտարարում է, որ Ինքը մարդուն բուժում է աբողջապես (Հովհ. 7.23): Երբ Պողոս առաքյալը քարոզում էր հույներին, ապա նրանք առաքյալի ասածները հանգիստ լսում էին, բայց ընդվզեցին, երբ լսեցին հարության մասին (Գործք 17.22-33): Հույների համար հարությունը ամենաանհեթեթ բանն էր, որովհետև մարմնից՝ բանտից ազատվածն այլևս չպետք է վերադառնա՝ իրեն բանտարկելու համար: Դա նույնպիսի անհեթեթություն էր հույների համար, ինչ մեզ համար կլիներ, եթե Դյումայի հերոսներից Մոնտե Քրիստոն բանտից այդքան տառապանքների գնով փախչելուց հետո նորից վերադառնար Իֆ ամրոցը: Քրիստոնեության մեջ հոգու և մարմնի պատերազմը ընդգծված կերպով պայքար է ոչ թե հենց մարմնի դեմ, այլ մարմնական ստոր կրքերի դեմ, որոնց հաղթահարումը Աստծո օգնությամբ մարդուն կանգնեցնում է բարոյական բարձր մակարդակի վրա: Ի տարբերություն այլ կրոնների՝ քրիստոնեությունը մարմինը համարում է ոչ թե մաշվող զգեստ կամ անպետք իր, այլ նույնիսկ Սուրբ Հոգու տաճար (Ա Կորնթ. 6.19): «Փառավորեցե՛ք Աստծուն ձեր մարմինների մեջ»,- ասում է Պողոս առաքյալը (Ա Կորնթ. 6.20): Եվ բոլոր մարդիկ էլ գեղեցիկ են համարում իրենց երեխաների կամ սիրելիների աչքերը, աչքերի գույնը, շարժուձևը, որոնք նույնն են մնում նույնիսկ խոր ծերության մեջ:

ՀՈԳԻ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ – Հինդուիզմի մեջ հոգին անանձ աստծո ճառագայթումն է: Հոգին բազում կյանքեր անցնելուց հետո պետք է նորից ծուլվի նրա հետ: Սակայն այս կրոնը պատասխան չի տալիս թե ինչու է հոգին երկնքից գալիս ու նորից գնում: Ըստ հինդուիզմի, մարդկության գլխավոր խնդիրն այն է, որ մարդը չգիտի իր աստվածային լինելու մա-

սին և սխալ է գործում՝ կապվելով իր *ես*-ին, ցանկություններին, այդ իսկ պատճառով էլ նա ենթարկվում է կարմայի օրենքին, այսինքն՝ անընդհատ մարմնավորվում է: Գրեթե նույն գաղափարը կա նաև բուդդայականության մեջ: Հետևաբար, ըստ այդ կրոնների, այս կյանքը ոչ թե պարգև է, այլ տանջանք ու պատիժ: Մարդու նպատակն է դուրս պրծնել կյանքի, մահվան ու ծննդյան անընդհատ կրկնվող շրջանից: Բուդդիզմի հետևորդը պետք է փրկության հասնի այն ըմբռնումով, որ իր սեփական *ես*-ը պատրանք է և գոյություն չունի: Հինդուիզմի հետևորդը պետք է ազատվի իր *ես*-ից և ձուլվի աստվածության հետ: Իսլամի հետևորդը փրկության հասնելու համար պետք է այնպես ապրի, որ իր բարի գործերը չար գործերից շատ լինեն: Շատ կրոններ գտնում են, որ մարդու հոգևոր աշխարհում շատ բան կարգին չէ, բայց մենք մեր ուժերով կարող ենք շտկել ամեն ինչ: Այդպես են կարծում հատկապես հինդուիզմի և բուդդայականության հետևորդները: Սակայն ըստ քրիստոնեության, մարդու հոգևոր վիճակն առանց Աստծո ողբալի է և այն բնորոշվում է «հոգևոր մահ» անվանումով: Այլ կրոններում մարդն ինքն է միայն իր ջանքերով հասնում փրկության. այստեղ աստված պասիվ է և գործուն է մարդը: Այսինքն՝ մարդու փրկիչը ոչ թե աստվածն է, այլ մարդն ինքը: Բայց քրիստոնեության մեջ մարդը միայն իր ջանքերով չի կարող փրկվել, չնայած որ միշտ պետք է ձգտի ավելի ու ավելի կատարյալ լինելու: Քրիստոնեության մեջ ավելի շատ գործում է Աստված և հենց Նա է մարդկության Փրկիչը:

ԿԻՆ - Հետաքրքիր է, որ կինը շատ կրոններում անտեսված է և երկրորդական է համարվում: Բուդդայականության մեջ նույնիսկ կնոջ նկատմամբ շեշտված թշնամական վերաբերմունք կա: Կինը տանջանքներով լի նյութական աշխարհի՝ սանսարայի մարմնացումն է: Բուդդայականությունը կնոջը փրկություն չի խոստանում. դրա համար կինը պետք է վերածնվի որպես տղամարդ: Այս կրոնը կնոջը դատապարտում է տղամարդուն իր հետ ամուր կապելու և դրանով նրա փրկությանը խանգարելու համար: Բուդդայականության շատ հետևորդների կարծիքով, ընտանիքի հետ կապերը չխզած տղամարդը չի կարող փրկվել: Դրա օրինակը Բուդդան է, որը թողեց իր ընտանիքը: Ըստ իսլամի, կնոջ, երեխաների հոգսերը հավատացյալին խանգարում են աստծո առջև պարտականությունները կատարել: Չնայած որ իսլամի մեջ հատկապես երկու կանայք կատարյալ են համարվում (նրանցից մեկը Հիսուսի մայր Մարիամն է), այնուամենայնիվ, բազմակնության ընդունումը կնոջը ստորակարգ էակ է դարձնում: Քրիստոնեությունը, շեշտելով տղամարդու գլխավորող դերի մասին, միևնույն ժամանակ դրանով չի նսեմացնում կնոջ դերը: Քրիստոս և՛ Ծննդյան, և՛ Հարության ժամանակ առաջինը հայտնվեց կանանց:

ԱՇԽԱՐՀ – Ըստ բրահմանիզմի (հինդուիզմ), աշխարհը Բրահմանի՝ արարչի երազն է և մենք գտնվում ենք նրա երազում: Այս կրոնի հետևորդները սա բացատրում են հետևյալ օրինակով: Գիշերվա մեջ սովորական պարանը կարող է մեզ օձ թվալ, սակայն ուշադիր դիտումը ցույց է տալիս, որ օձ չկա: Եթե այդպես ուշադիր լինենք, կտեսնենք, որ իրականում աշխարհը գոյություն չունի և պատրանք է: Ըստ իսլամի, աշխարհը ստեղծել է Ալլահը, և այս աշխարհում մարդը հնարավորություն ունի մեղքերի թողություն ստանալ միայն ապաշխարհությամբ, այսինքն՝ որևէ քավության անհրաժեշտություն չկա: Ըստ բուդդայականության, այս աշխարհը կազմված է միայն տանջանքներից, և կրքերը մարդուն չեն թողնում դրանցից ազատվել: Հետևաբար մարդը պետք է ազատվի իր բոլոր ցանկություններից, որպեսզի հասկանա, որ իր *ես*-ը գոյություն չունի, և հաստատուն վիճակ ձեռք բերի: Քրիստոնեության համաձայն, Աստծո կողմից ստեղծված աշխարհը բարի է, և տանջանքների աղբյուրը ոչ թե ցանկությունների առկայությունն է, այլ դրանց ոչ ճիշտ ուղղվածությունը:

ՄԵՂՔ – Ղուրանում նշվում է, որ Ալլահը չի սիրում մեղավորներին, չի սիրում նրանց, որվքեր դավաճան են և մեղքեր ունեն: Նա ուղարկեց Մուհամեդին, որ մարդկանց զգուշացնի ահեղ դատաստանի մասին: Բուդդայականության և հինդուիզմի մեջ մարդիկ անարդարացիորեն տանջվում են իրենց նախորդ կյանքի մեղքերի համար, անարդարացիորեն, որովհետև բոլորովին չեն հիշում և չգիտեն, թե ինչ մեղքերի համար են չարչարվում: Քրիստոնեության մեջ Քրիստոս Իր վրա վերցրեց մարդկության բոլոր մեղքերը՝ մարդկանց ներում և սեր շնորհելով: Նույնիսկ Հին Ուխտում Աստված ասում է. «Մի՞թե Ես մեղավորի մահն եմ տենչում» (Եզեկ. 18.23), «Եթե ձեր մեղքերը արյան պես կարմիր են, ապա Ես ձյան պես ճերմակ կդարձնեմ» (Ես. 1.18):

ՏԵՐ – Ի տարբերություն քրիստոնեության, այլ կրոններում աստված տեր է, միակ էներգիա, կարմա, նիրվանա, աստվածային սկզբունք, անդեմ Բրահմա և այլն: Ոչ մի կրոնում չկա այն մասին, որ Աստված Սեր է: Եվ միայն Քրիստոս մարդկությանը հայտնեց ճշմարիտ Աստծո անունը: Պետք է այստեղ ուշադրություն դարձնենք *հայտնել* բառի վրա. հայտնեց և ոչ թե մարդիկ գտան կամ հորինեցին: Քրիստոս ասում է՝ Քո անունը հայտնեցի մարդկանց (Հովհ. 17.6): Մուսուլման աստվածաբանը կարող է ասել՝ սերը աստծո իննսունինը անուններից մեկն է, սեր է, որովհետև ստեղծել է աշխարհը, իր օրենքն է տվել մարդկանց, ուղարկել է իր մարգարեներին, սակայն այդ ամենը Ալլահի համար բոլորովին դժվար բան չէ, որովհետև աշխարհը չափազանց փոքր է արարչի կարողության համեմատ: Ալլահը արել է բաներ, որոնք բոլորովին էլ դժվար չեն եղել, մինչդեռ Քրիստոս զոհաբերվել է: Ալլահի սերը զոհաբերվող չէ: Հինդո-

ւիզմի հետևորդներն ասում են, որ գոյության բարձրագույն ուժը անանձ ուժ է, իսկ անանձ որևէ բան ընդունակ չէ սիրո: Աստվածաշունչը կասկածի տակ է դնում այլ ժողովուրդների Տիրոջ՝ Աստված լինելը: «Երանի այն ժողովրդին, որի Տերն Աստված է»,- ասում է Աստվածաշունչը (Սաղմ. 143.15):

ԱՆՀԵԹԵԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Ըստ բուդդայականության, այս աշխարհը լի է տանջանքներով, և բոլոր տանջանքների աղբյուրը մարդկային ցանկություններն են: Հետևաբար, տանջանքներից ազատվելու համար պետք է ազատվել սեփական բոլոր ցանկություններից: Ակնհայտ է, որ այս նպատակին հասնելը դժվար է, որովհետև դրա ներքին հակասությունն այն անհեթեթ է դարձնում, ինչպես որ մաթեմատիկայի մեջ մինուս երկու գումարած երկու հավասար է ոչնչի: Այս անհեթեթությունը գալիս է նրանից, որ բոլոր ցանկություններից ազատվելու համար բոլոր ցանկություններից ազատվելու ցանկություն պետք է ունենալ, այսինքն՝ այնուամենայնիվ մեկ ցանկություն մնում է, որից ոչ մի կերպ հնարավոր չէ ազատվել: Աթեիզմի ջատագովներից մեկի սահմանումով, բուդդայականության բարոյական իդեալը եսամոլն է, գիտակցաբար ու կանխամտածված կերպով երկրի հետ ամեն մի կապ խզած, իր մեջ ամեն մի մարդկային զգացմունք խեղդած անհատը: Իր էությամբ եսամոլական բուդդայական բարոյականությունը շատ հեռու է համամարդկային բարոյականություն լինելուց, ինչը չի կարելի ասել քրիստոնեության մասին: Երբ որևէ բուդդայական ցանկանում է վանական դառնալ, ապա նրան քննում են՝ համոզվելու համար կի՞ն է, թե՞ տղամարդ, մա՞րդ է, թե՞ մարդու կերպարանքով չար ոգի: Հինդուիզմում մարդն ի վերջո ձուլվելով աստվածությանը՝ ոչնչանում է, կորցնում է իր *ես*-ը, անհետանում է, ինչպես ջրի կաթիլը օվկիանոսում: Չնայած որ բուդդայականությանը չի հետաքրքրում Աստծո գոյության կամ չգոյության գաղափարը, Բուդդան երբեք չի արգելել աստվածներին աղոթելը, բայց զգուշացրել է, որ դա միայն ժամանակավոր թեթևություն է բերում և նպատակին՝ նիրվանային, չի հասցնում: Ներկայիս դալայ-լաման ասում է. «Մենք ինքներս ենք մեր փրկիչը: Արարածների դժբախտությունն ու երջանկությունը նրանց ձեռքում է, կախված է նրանց գործերից և կախված չէ բուդդաներից»: Բուդդայականության մեջ կենդանի էակներին վնաս չհասցնելը դարձել է ծայրահեղություն՝ չի կարելի չթորած ջուր խմել, որովհետև ջրի մեջ աննկատելի էակներ կան, որոնց արգելված է վնասել, չի կիարելի հողը վարել, որովհետև հողի մեջ գտնվող որդերը հնարավոր է վնասվեն: Բուդդայականությունը շատերի կողմից համարվում է աթեիստական կրոն, որովհետև այս կրոնի մեջ ընդհանրապես Աստծո մասին որևէ հասկացողություն չկա: Մուհամեդը մինչև հիսունհինգ տարեկան հասակը գինի է օգտագործել, որից

հետո այն համարել է անմաքուր: Ղուրանը քաջալերում է հավատի համար սրբազան պատերազմը, որից էլ ներշնչված մուսուլմանները հաճախ դաժանությամբ սպանում են «անհավատներին»: Ըստ մի քանի աղբյուրների, հինդուիզմում գոյություն ունեն երեք հարյուր միլիոնից ավելի աստվածներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ – Մուսուլման աստվածաբանները կարող են հաստատել, որ մուսուլմանությունը հիմնականում զբաղվում է մարդու արտաքին վարվելաձևով, մինչդեռ քրիստոնեությունը՝ մարդու ներքինով, որի կարգավորումից հետո է միայն կարգավորվում մարդու արտաքին վարվելակերպը: Տարբեր կրոններ ուսումնասիրող գիտնականներն անկեղծության դեպքում անպայման կասեն, որ մարդկային մարմնի, հոգու, աշխարհի, կնոջ ու այլ հարցերի և ամենագլխավորը Աստծո մասին ամենակատարյալ գաղափարներն ու մտքերն ամփոփված են քրիստոնեության մեջ: Ասում են, որ ոչ մի կրոն այնքան չի տուժի իրենից հրաշքները հեռացնելու դեպքում, որքան քրիստոնեությունը: Սակայն եթե նույնիսկ քրիստոնեությունից հանենք և դուրս նետենք ֆիզիկական հրաշքները, այսինքն՝ բժշկումները, հացի բազմացումը, փոթորկի խաղաղեցումը և այլն, ապա քրիստոնեության մեջ մնում են բարոյական հրաշքները՝ այն վեհ մտքերն ու գաղափարները, որոնք չկան որևէ այլ կրոնի մեջ: Քրստոնյաները համոզված են, որ Քրիստոսից դուրս փրկություն չկա: Եվ Քրիստոս Ինքն է ասում. «Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ Ինձանով» (Հովհ. 14.6): Իսկ ի՞նչ են ուրեմն մյուս կրոնները: «Ամեն մի հոգի, որ չի դավանում Հիսուս Քրիստոսին, նա Աստծուց չէ: Եվ այդ հոգին Նեռինն է, որի մասին լսել եք, թե գալու է և արդեն իսկ աշխարհում է» (Ա Հովհ. 4.3), և ով ուրանում է, թե Հիսուսը Քրիստոսն է, նա է Նեռը (Ա Հովհ. 2.22): Բայց չէ՞ որ տարբեր կրոներում բարոյական շատ բաներ կան: Հիշենք, որ սատանան Քրիստոսին փորձության ենթարկեց մեջբերումներ անելով հենց Սուրբ Գրքից, և այս հարցին կարող ենք պատասխանել միայն հետևյալ կերպ. գիտենք, որ աղվեսը քնած է ձևանում, իսկ սատանան՝ ողջախոհ, մեկն իր զոհին բռնելու, իսկ մյուսը մարդկային հոգին կորստյան մատնելու համար: «Բայց ինչպե՞ս կարելի է այսպես վիրավորել մյուսներին»,- հավանաբար կզայրանան շատերը: Սակայն մենք մեզանից ոչինչ չավելացրեցինք, պարզապես արձանագրեցինք եղածը՝ մնացյալը թողնելով ձեր ընտրությանը:

ԱՂԱՆԴՆԵՐ

ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐ

Մակաբայեցիների մասին պատմվում է Աստվածաշնչում՝ Մակաբայեցիների գրքում: Այստեղ ներկայացվում է հրեա ժողովրդի պայքարը Սելևկյան իշխանների դեմ Ալեքսանդր Մեծի տիրապետությունից հետո: Ազատության համար մարտնչող հրեաները կոչվում են մակաբայեցիներ իրենց ղեկավար Հուդա Մակաբեի անունով, ով որդին էր ժողովրդին պայքարի հանած Մատաթիա քահանայի: Ավարայրի ճակատամարտում Վարդան Մամիկոնյանը հենց այս մակաբայեցիների օրինակով էր քաջալերում իր զինվորներին: Այս պայքարի ընթացքում հրեաները շատ նահատակներ ունեցան. եղան մարդիկ, ովքեր հրաժարվեցին իրենց հայրերի սկզբնական ճշմարիտ հավատքն ու օրենքներն ուրանալուց: Դրանցից մեկն էր Եղիազար ծերունին, ում մի քանի հրեաներ խոստացան խորամանկությամբ ազատել, սակայն նա պատասխանեց. «Ոչ արժան է, ոչ էլ պատշաճ, որ այս տարիքի հասած մարդը կեղծավորություն անելով մտնի սուրբ դատաստան» (Բ Մակաբ. 6.24): Աստվածաշնչում շատ հուզիչ կերպով է նկարագրված հրեա կնոջ և նրա յոթ որդիների նահատակությունը (Բ Մակաբ. 7): Երբ նրանցից պահանջում են հրաժարվել իրենց հայրերի հավատքից, մայրը հորդորում է որդիներին անսասան մնալ: Մայրն ու իր որդիները նախընտրում են մեռնել, քան թե դավաճան դառնալ: Մեծ տարբերություն կա այս սրբերի և այսօրվա որոշ հայերի միջև: Այսօր ոմանք հեշտությամբ կարողանում են հրաժարվել մեր հայրերի հավատքից, դարերով եկած ու մեզ հասած ավանդական արժեքներից ու սրբություններից և հետևում են բոլորովին վերջերս սկիզբ առած և հիմնականում Միացյալ Նահանգներից եկած աղանդավորական տարբեր ուղղությունների և ուսմունքների: Քրիստոնեության վաղ շրջանում ևս շատ քրիստոնյաներ թիչ առաջ հիշված սրբերի նման նահատակվեցին

և հարստության արժանանալով: Մինչդեռ այսօրվա աղանդավորները, իրենց համար նոր, ինքնակոչ եկեղեցի կազմելով, ճշմարտությունից հեռու լինելու պատճառով երբեք չեն կարող հոգևոր հարստություն ձեռք բերել: Գուցե շատեր սկզբում նյութապես օգտվեն՝ ձրի գրքեր կամ այլ տեսակի օգնություն ստանալով, սակայն խղճալի են միայն ունեցվածքով հարուստ մարդիկ, որովհետև ամեն ինչից առավել է հոգևոր հարստությունը, որ ձեռք է բերվում առաջին հերթին ճշմարտությանը հետևելու շնորհիվ: Սուրբ Հովհան Ոսկեբերանը, խոսելով աղքատ Ղազարոսի վերաբերյալ ավետարանական առակի մասին, ասում է. «Հարուստը միայն ունեցվածքով էր հարուստ, իսկ Ղազարոսը միայն ունեցվածքով էր աղքատ: Բոլորը գիտեն Ղազարոսի անունը, սակայն ու՞ր է հարուստի անունը. այն ոչ մի տեղ չկա»: «Այդքան հարս-

տություն և ոչ մի անու՞ն, դա ի՞նչ հարստություն է»,- իրավամբ հարցնում է Սուրբ Հովհան Ոսկեբերանը:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՁԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ

Այսօր նաև աղանդավորներն իրենց հավաքավայրերը կոչում են եկեղեցի: Սակայն ինչպես Պողոս առաքյալն առաջին դարում (Հռ. 16.17-18, Գաղ. 1.6-9, Փիլիպ. 3.18-19), մենք ևս պետք է այսպիսի կազմակերպությունների դեմ հանդես գանք, որոնք իրենց սխալ գաղափարախոսություններն են սփռում: Կաթոլիկ Եկեղեցու մեծանուն սրբերից մեկը՝ Օգոստինոսը, ասում է, որ ճշմարիտ Եկեղեցուց դուրս որևէ մեկը կարող է գտնել ամեն ինչ, բացի փրկությունից: Նրանց հետևորդները կարող են երգել ալելուիա, պատիվ ստանալ, Ավետարանն իրենց ձեռքը վերցնել և կարդալ ու քարոզել, բայց ոչ ոք փրկություն չի ունենա ճշմարիտ Եկեղեցուց դուրս:

Մեր օրերում ազատության և ազատ ընտրության խնդիրը կա: Աղանդները կարող են առարկել, որ իրենք ազատություն ունեն քարոզելու իրենց հավատքը: Սակայն ՀՀ Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքն արգելում է աղանդավորներին քարոզել իրենց խմբակների անդամ չհանդիսացող այլ մարդկանց: Բացի դրանից ազատությունն առանց սահմանների վերածվում է սանձարձակության: Եկեղեցական ժամանակակից հեղինակներից մեկը շատ դիպուկ է ասել. «Ես ազատ եմ շարժելու իմ ձեռքը, բայց իմ ձեռքը շարժելու իմ սեփական ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի դեմքը»: Սա նշանակում է, որ ազատությունը սահմանափակելու պատճառներից մեկը ուրիշին հասցվող ցավն է: Իսկ աղանդավորական կազմակերպությունները ցավ են պատճառում մեր ազգին՝ բաժանում գցելով մեր ժողովրդի մեջ, հեռացնելով մեր Սուրբ Եկեղեցուց և մեր նախնիների ճշմարիտ հավատքից:

ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Մարգարեանալը միշտ եղել է բոլոր կրոնական շարժումների հիմքում: Հայտնի է, որ Հին Կտակարանում Մովսեսը վճռական պահերին հարցնում էր Աստծուն և իմանալով Տիրոջ կամքը՝ հնազանդվում էր ու դրանով առաջնորդում ժողովրդին:

Շատ աղանդներ իրենց նմանեցնում են աստվածաշնչյան այս կամ այն պատմությանը: Օրինակ՝ մորմոնական աղանդի պատմությունը իր

հայտնություններով նմանեցված է հինկտակարանյան Իսրայելի պատմությանը, այն տարբերությամբ, որ այստեղ Թագավորն ու Մարգարեն՝ Մորմոնական աղանդի Առաջին Նախագահն է: Աղանդների հետևորդները պետք է իմանան, որ նաև սուտ մարգարեներ կան, որոնք մոլորություն են տարածում: Հովհաննու Հայտնության մեջ ասվում է. «Տեսա, որ սուտ մարգարեի բերանից ելնում էին երեք անմաքուր ոգիներ» (16.13), մեկ այլ համարում ևս ասվում է. «Եվ բռնվեց գազանը ու նրա հետ եղող սուտ մարգարեն, որ նրա առաջ նշաններ էր գործում. դրանցով մոլորեցնում էր նրանց» (19.20): Աստվածաշունչն ասում է, որ այդ սուտ մարգարեներին ներշնչողը սատանան է, որն ի վերջո պիտի պատժվի. «Եվ երկնքից, Աստծու մոտից կրակ պիտի իջնի ,- ասվում է Աստվածաշնչում,- ու պիտի լափի նրանց և նրանց զորագլխին՝ Սատանային, որը մոլորեցրեց նրանց» (Հայտնութ. 20.9-10): Աղանդավորական շարժումների պատմությունը ցույց է տալիս, որ նրանք ծագել են մարգարեական հողի վրա, բայց իրականում այդ մարգարեությունները երբեք չեն կատարվել: Մինչդեռ Աստվածաշնչի բոլոր մարգարեությունները կատարվել են և կատարվելու են: Սակայն, օրինակ, մորմոնական «Վարդապետություն և Ուխտեր» գրքում առկա մարգարեություններից ոչ մեկը մինչև այսօր էլ չի իրականացել: Նույնն է նաև ադվենտիստների մոտ Քրիստոսի Երկրորդ գալստյան գուշակությունները, Եհովայի վկաների մոտ Արմագեդոնի՝ աշխարհի վախճանի զանազան տարեթվերի գուշակությունները և այլն: Մոլորյալ, միամիտ շարքային աղանդավորները, չգիտես ինչու, մատների արանքով են նայում իրենց հրամցված տարբեր մարգարեությունների չիրականացված լինելու հանգամանքին, մինչդեռ ըստ Հին Կտակարանի, եթե չի կատարվում մարգարեի ասածը, նրան քարկոծում են, որպեսզի չմոլորեցնի ժողովրդին (Բ Օր. 13.5-10), նաև Աստված ուսուցանում է, որ սուտ մարգարեի մարգարեության չիրականանալը անմիջական վկայություն է նրա կեղծիքի, որի համար այդ մարգարեն պետք է մեռնի (Բ Օր. 18.20-22): Այսպիսին է մարգարեությունների ստուգման սկզբունքը, որը հմտորեն շրջանցվում է կամ էլ այլաբանորեն մեկնաբանվում աղանդների ղեկավարության կողմից: Այս իմաստով, ինչպես նշում է աղանդների ուսումնասիրմամբ զբաղված, մեր Եկեղեցու հոգևորականներից Տ. Ղևոնդ քահանա Մայիլյանը իր «Ժամանակակից աղանդները Հայաստանում» գրքում, որոշ աղանդների առաջնորդներ հայտնվել են շատ խղճալի վիճակում. նրանք այսօր ստիպված պիտի բացատրեն, թե ինչու չեն կատարվել իրենց նախորդների մարգարեությունները:

ԻՆՔՆԱՍՏՎԱԾԱՑՈՒՄ

Այսօրվա բոլոր աղանդավորներն իրենց համարում են Աստծուց

ներշնչված և Նրա զորությամբ գործող: Սակայն շատ հաճախ որոշակի զգացողություններ և տարբեր ոգևորություններ լինում են պարզապես մարդկային զգացմունքներից ու տրամադրվածությունից կամ էլ չարի ազդեցությունից, և ահավոր բան է, երբ այդպիսի վիճակում գտնվող մարդն իրեն անմիջապես Սուրբ Հոգով ներշնչված է համարում: Այս դեպքում արդեն մարդ աստվածացնում է իրեն և իր զգացմունքները, իսկ սրա մեջ մեծ վտանգ կա, որին ենթարկվում են աղանդավորների կողմից մոլորված բազմաթիվ մարդիկ: Այսպիսի ինքնաստվածացման դրսևորումներից են նաև Հայաստանում տարածված հայտնություններ ստացող կամ լեզուներ խոսող աղանդների անդամները:

ՓԱՌԱԶՐԿՈՒՄ

Մեր եկեղեցու սրբերից է Անաստաս քահանան, ով պարսից զորքի կազմում մասնակցել է 614 թ. Երուսաղեմի գրավմանը և Քրիստոսի խաչափայտի գերմանը: Անաստասը քրմի զավակ էր, բայց դարձի եկավ քրիստոնեության և հավատաց՝ տեսնելով, որ Խաչը նույնիսկ գերության մեջ հրաշքներ է գործում: Անաստասը գնաց Երուսաղեմ, մկրտվեց և յոթ տարի ապրեց Սուրբ Սաբայի վանքում: Այնուհետ անցավ Պաղեստինյան Կեսարիա, որն այդ ժամանակ պարսիկների տիրապետության ներքո էր գտնվում: Այնտեղ նրան ճանաչեցին և բանտարկեցին: Պարիսից Խոսրով արքան հայտարարեց, որ Անաստասին կների, եթե նա նույնիսկ ձևականորեն մեկ հոգու առաջ ուրանա Քրիստոսին: Բայց Անաստասը հրաժարվեց և մահվան դատապարտվեց: Այսպես հերոսաբար նահատակվեցին նաև բազմաթիվ քրիստոնյաներ: Եվ այսօր այն, ինչ հալածանքների ու արյունահեղության գնով չհաջողվեց իրականացնել կայսրերին, այլահավատ թագավորներին ու այլ հալածիչներին, փորձում են իրականացնել որոշ աղանդներ՝ իրենց հետևորդներին մոլորեցնելով, թե Քրիստոս Աստված չէ, այլ ստեղծված է Աստծո կողմից: Եվ ցավալին այն է, որ նրանց հետևում են նաև հայորդիներ, որոնց հայրերը, պապերը, նախնիները Ավարայրից առաջ, Ավարայրում և դրանից հետո պայքարել են ճշմարիտ հավատի և հայրենիքի համար: Այդպիսինները նման ընթացքով նսեմացնում են մեր նախնիների փառքն ու վաստակը և իրենց զրկում այն փառքից, որ տալու է Աստված բոլոր ճշմարիտ հավատացյալներին Երկնքի Արքայության մեջ:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր Քրիստոսի առաքելահաստատ Սուրբ Եկեղեցին գուցե շատ բանով է տարբերվում առաջին քրիստոնյա առաքելական համայնքից, ո-

որովհետև ժամանակների բերումով շատ բան առաջ է ընթացել, զարգացել է և փոփոխվել, բայց մի բանում մենք հաստատ ենք և միշտ էլ նույնն ենք մնալու առաքելական շրջանի քրիստոնեական համայնքի հետ: Դա այն այն համոզումն է, որ Քրիստոսից դուրս փրկություն չկա, որ հատկապես նաև առանց Քրիստոս Աստծո Մարմնի և Արյան հաղորդության, ըստ Ավետարանի, մարդը չի կարող հավիտենական կյանք ունենալ (Հովհ. 6.54-55, 59): Մինչդեռ բազմաթիվ աղանդներ, պատճենելով քրիստոնեական առաջին համայնքի ձևերը, շեղվում են հավատքի ամենագլխավոր հարցերում: Օրինակ, ըստ մորմոնների, Քրիստոս ոչ միայն մարդկանց նման է, այլև բնությամբ նույնն է, մինչդեռ Եկեղեցին ուսուցանում է Քրիստոսի աստվածամարդկային բնության մասին: Եհովայի վկաների աղանդը ևս համառորեն մերժում է Քրիստոսի աստվածությունը, և չնայած որ աղանդավորները շատ են գործածում *Քրիստոս* անունը և այն հաճախ են գրում իրենց թերթիկների ու գրքույկների էջերին, այնուամենայնիվ, խեղաթյուրված կերպով են ներկայացնում Աստվածաշնչի տվյալները՝ մոլորեցնելով հիմնականում սկզբնապես Աստվածաշնչից անտեղյակ մարդկանց: Հետևաբար, այս աղանդները որոշ, այսպես կոչված, եկեղեցիների հետ միասին զուրկ են մնում Սուրբ Հաղորդությունից, հետևաբար նաև, ըստ Քրիստոսի խոսքի, հավիտենական կյանքը ժառանգելու հնարավորությունից:

ՆԶՈՎՔԻ ՏԱԿ

Քրիստոս հայտնում է, որ ցորենն ու որոմը, այսինքն՝ բարին և չարը աշխարհում միասին են լինելու (Մատթ. 13.25, 38-39) և ասում է, որ մինչև դատաստան ցանկալի չէ որոմը քաղել, որովհետև քաղելիս գուցե ցորենը վնասվի (Մատթ. 13.30): Սակայն այս խոսքերից երևում է, որ երբ հնարավոր է որոմը քաղել ցորենին չվնասելով, պետք է քաղել և դեն նետել: Նոր օրենքում Պողոսն ասում է, որ փոքր թթխմորը խմորում է ողջ զանգվածը (Ա Կորնթ. 5.6), որից հետո ասում է. «Մաքրեցե՛ք, դե՛ն նետեցեք հին խմորը» (Ա Կորնթ. 5.7), «Վերացրե՛ք չարը ձեր միջից» (Ա Կորնթ. 5.13): Այդ իսկ պատճառով եկեղեցական Հայրերը նզովքների և բանադրանքների են ենթարկել ճշմարիտ հավատքից շեղվողներին: Հաճախ ինքը Եկեղեցին բանադրում և նզովում է իր հանցավոր անդամներին: Շնորհք եպիսկոպոս Գալուստյանը (հետագայում արքեպիսկոպոս և Պոլսո Պատրիարք) իր «Տեղիք աստվածաբանության» աշխատության մեջ ասում է, որ բանադրանքը եկեղեցական պատիժ է, որ տրվում է ենթակային ուղղության բերելու համար: Իսկ նզովքը կարդացվում է անուղղելի և անհույս հերետիկոսների վրա, որպեսզի մյուսները, սա տեսնելով, հե-

ռու մնան այդ հիվանդությունից: Այսօր նզովքի տակ են աղանդավորական մոլորյալ ուսմունք տարածողները:

ԻՄԱՆԱԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Արդեն 19-րդ դարից գերմանացի փիլիսոփաներն ուսուցանում էին, որ ամեն ինչ բանականության համար է և բանականության ներսում: Բայց միևնույն ժամանակ մենք չենք կարող իրերն ու երևույթները կատարելապես, բացարձակությամբ իմանալ: Օրինակ՝ աթոռը, որին նստում ենք, կամ սեղանը, որի առջև ենք, անճանաչելի են մեզ իրենց ամբողջական էության մեջ, չգիտենք դրանց մոլեկուլային և ատոմային կառուցվածքը, անտեղյակ ենք այն պրոցեսներին, որ տվյալ պահին տեղի են ունենում դրանց ներսում: Անտիկ շրջանում փիլիսոփա Հերակլիտն ասում էր, որ ոչ ոք չի կարող երկու անգամ նույն գետը մտնել: Եվ սա ճիշտ է, որովհետև գետի ջրերը փոխվում են, և երկրորդ անգամ մտնում ենք այլ ջրի մեջ: Մենք կարող ենք ճանաչել առարկաները, բայց միայն այն ազդեցությամբ, որ նրանք թողնում են մեզ վրա: Եվ եթե չենք կարող ճանաչել առարկաները, ինչպե՞ս կարող ենք ճանաչել Աստծուն:

Աղանդավորական կազմակերպությունների մեջ ևս կարելի է շատ բան իմանալ Քրիստոսի մասին, նույնիսկ Աստվածաշնչից շատ անգիր համարներ սովորել Քրիստոսի և շատ այլ բաների վերաբերյալ: Սակայն այլ է Քրիստոսի մասին իմանալը, այլ է Քրիստոսին իմանալը, ճանաչելը: Քրիստոսի մասին իմանում ենք Աստվածաշնչից, իսկ Քրիստոսին իմանում, ճանաչում ենք այն ժամանակ, երբ սրտին դիպչում է Քրիստոսի Հոգին: Հենց այսպես է, որ և՛ առաքյալները, և՛ քրիստոնեական բոլոր սրբերը գիտեին Քրիստոսին, մի բան, որից զուրկ են ճշմարտությունից շեղվածները:

ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Աղանդավորները, բողոքականները չեն հավատում Սրբազան Ավանդությանը: Նրանք հետևում են միայն Սուրբ Գրքին՝ սխալ համարելով առաքելահաստատ Եկեղեցու կողմից ավանդության ընդունումը: Շատ հետաքրքիր են հետևյալ դիտարկումները ավանդության վերաբերյալ: Սրբազան Ավանդությունը Սուրբ Գրքում չվկայված այն բոլոր վարդապետություններն են (ուսմունքները), որոնք մեզ հասել են առաքյալներից և Եկեղեցու Հայրերից: Այս վարդապետությունները ներառում են այնպիսի նյութ, որը կարող է և չլինել Սուրբ Գրքում, սակայն որևէ կերպ չի հակասում նրան: Բողոքականները մերժում են այն ժառանգությունը, որ

Եկեղեցին ձեռք է բերել նախորդ սերունդներից՝ առաքյալների և Եկեղեցու Հայրերի գործերը, սուրբ ժողովների որոշումները, Եկեղեցու կանոններն ու սահմանակարգումները, Եկեղեցու ծեսն ու բանավոր Ավանդությունը: Սակայն Սուրբ Գրքում շատ հաճախ է նշվում ավանդությունը և ցույց է տրվում դրա ճշմարտացիությունը: Օրինակ՝ Նոյը վերցրեց որոշ սուրբ անասուններ ու սուրբ թռչուններ և սեղանի վրա ողջակեզ մատուցեց (Ծնն. Ը 20-21): Նոյն ինչպե՞ս գիտեր ողջակեզի համար սուրբ կենդանիների գործածության գաղափարի մասին: Նա պիտի որ այն վերցրած լիներ անմիջապես Տիրոջից և ապա՝ փոխանցած իրենից հետո եկող սերունդներին, նախքան Մովսեսը Հնգամատյանում կբացատրեր սուրբ կենդանիների գաղափարը: Երբ Աստված գրավոր օրենքը տվեց, կամեցավ, որ ավանդությունը ևս մնա: Նա պատվիրեց հայրերին տարբեր առիթներով ավանդել ու փոխանցել իրենց սովորածը զավակներին: Տերը նրանց հրամայեց տեղեկացնել իրենց զավակներին ամեն արգանդի անդրանիկ ծնունդի փրկագնման դեպքի մասին (Ելք 13.14-16): Տերը նաև ասաց ժողովրդին. «Նայի՛ր քեզ և խիստ զգո՛ւյշ եղիր քո անձին, չմոռանա՛ս այս բոլորը, որ քո աչքերը տեսան, և սրտիցդ թող չհեռանան քո կյանքի բոլոր օրերին: Եվ սովորեցրու դրանք քո որդիներին և որդիներիդ որդիներին» (Բ Օր. 4.9): Ավանդության փոխանցման երևույթը, որ առկա էր Հին Ուխտի շրջանում, տեղ գտավ նաև Նոր Ուխտի շրջանում: Մինչև որևէ Ավետարանի կամ թղթի գրությունը բավականին ժամանակ է անցել: Շուրջ քսան տարի մարդիկ Ավանդության միջոցով էին ընդունում հավատքն իր ամբողջության մեջ՝ Քրիստոսի ամբողջական պատմությունը Նրա վարդապետությունների և շնորհած փրկության հետ մեկտեղ: Սուրբ Պողոս առաքյալը ևս գրավորից բացի շատ կարևոր է համարում նաև բանավոր ավանդությունը: Թեսաղոնիկեցիներին ուղղված թղթում առաքյալն ասում է. «Ուրեմն եղբայրներ, հաստատ մնացեք և պահեցեք այն ավանդությունները, որ սովորեցիք թե՛ խոսքով և թե՛ մեր այս թղթով» (Բ Թեսաղ. 2.14):

ԴԻՎԱԿԱՆ ՏԵՍԻԼՔՆԵՐ

Խոսելով տեսիլքների մասին՝ անդրադառնանք հիմնականում տարբեր աղանդավորների՝ Եհովայի վկաների, մորմոնականների, հոգեգալըստականների և մյուսների պնդումներին տեսիլքներ տեսնելու իրենց կարողությունների վերաբերյալ: Աշխարհահռչակ մի փիլիսոփա ճշմարտացիորեն պնդում է, որ մարդն իրերը ճանաչում է միայն իր փորձի վրա հիմնվելով, այսինքն՝ նա կարողություն ունի բանականությամբ ճանաչելու միայն առաջացած երևույթները: Այդ իսկ պատճառով չափազանց

սխալ է, որ այն, ինչ ճիշտ է երևույթների համար, տարածում են բուն իրերի վրա և ընդհանրապես խառնում են այս երկու հասկացությունները: Չափազանց սխալ է նաև հիմնվելը ողջամիտ բանականության վրա այն դեպքում, երբ խոսքը փորձին չվերաբերող հասկացությունների և հիմնադրույթների մասին է, ինչպիսիք են տեսիլքները: Մարդկային հոգեբանության խորը քննությամբ զբաղված փիլիսոփաներից մեկը նշում է, որ բարոյական արարքը այն ժամանակ է կանգնում իր ճշմարիտ բարձրության վրա, երբ ազատված է սկզբնական միտումնավորությունից և սկզբնապես այս կամ այն կողմը հակված լինելուց: Մինչդեռ այս պայմանների բացակայությունն է պատճառը, որ տարբեր աղանդների տեսիլքները բոլորովին հակասում են միմյանց: Որոշակի միտումնավորությամբ և սկզբնական հակվածությամբ ամեն մեկն իր հերթին տեսիլք է տեսնում, և այս սկզբնական միտումնավորությունն է պատճառը, որ գրեթե բոլոր աղանդների տեսիլքները հակասում են միմյանց՝ պնդումով, թե միայն իրենք են ճշմարիտը, միայն իրենք կարող են ճշմարիտ հարաբերության մեջ լինել Աստծո հետ, իսկ մնացած եկեղեցիները անարդար և սխալ են: Այդ իսկ պատճառով գրեթե միշտ տարբեր աղանդների մոտ նկատվող տեսիլքների միմյանց հակասությունները և Սուրբ Եկեղեցու դատապարտումով յուրաքանչյուրի սեփական ճշմարտության պնդումները խիստ կասկածի տակ են դնում դրանց աստվածային ծագումը:

ԱՂԱՆԴՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Տարբեր տեսակի աղանդներ՝ մորմոններ, Եհովայի վկաներ, հոգեգալստականներ և այլն երբեմն ասում են. «Տեսեք մենք քարոզում ենք հավատքը և մեզ հալածում են, բայց դրանով մեզ վրա իրականանում է Քրիստոսի խոսքը, թե՝ «Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն» (Մատթ. 5.11): Անշուշտ, բոլոր աղանդների նման վարվելակերպը պարզապես ինքնաարդարացման մի փորձ է, որովհետև Պողոս առաքյալը ևս իր թղթերում պատվիրեց Եկեղեցու առողջ գործունեությանը խանգարողներին հեռու վանել, և նման արդարացումներ նույնպես այն ժամանակ եղան տարբեր աղանդների կողմից:

Երբ Ադամը դրախտում մեղք գործեց, նրա հետ անիծվեց նաև ողջ երկիրը, Աստված ասաց. «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով» (Ծննդ. 3.17): Սա ցույց է տալիս, որը մարդը սերտ կապի մեջ է իր շրջապատի, ողջ բնության և ողջ տիեզերքի հետ: Եվ եթե մարդու մեղքը վատ է անդրադառնում բնության վրա, ուրեմն որքան առավել մարդկային հասարակության մեջ հատկապես անառողջ հոգևոր մտածելակերպը վատ է անդրադառնում ողջ հասարակության վրա: Ուրեմն այս տե-

սակետից ևս վնասակար են աղանդները, նաև այն մարդիկ, ովքեր երես են դարձնում Աստծուց, և այդպիսիների ուղղակի մեղքն է նաև մեր երկրի և ժողովրդի՝ երբեմն դժվարին վիճակում գտնվելը:

ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

Առաքյալները Քրիստոսից ստացած լիազորությունները հոգևոր գործունեությամբ զբաղվելու և այդ առաքելության մեջ հաջողություն ունենալու շնորհն ու կարողությունները ձեռնադրությամբ փոխանցեցին իրենց հաջորդած հոգևորականներին: Եվ այսօր այդ ձեռնադրությամբ է եկեղեցականներին փոխանցվում Քրիստոսից տրված շնորհը: Հետևաբար, ձեռնադրությունը կարևոր է որևէ մեկի համար ճշմարտապես հոգևոր առաքելություն իրականացնելու նպատակով: Այսօր հոգեգալստականներ և բողոքական-ավետարանականներ իրենց հոգևոր գործունեությունն արդարացնում են՝ պնդելով, թե իրենք էլ ձեռնադրված են:

Սակայն իրական ձեռնադրությունը պետք է սկիզբ առած լինի Հիսուս Քրիստոսից և ոչ թե պատմության ինչ-որ մի կետում մի սովորական մարդուց: Այսպես խաբեությամբ էլ ավետարանականները փորձում են մարդկանց շեղել ճշմարիտ հավատքից՝ խաբելով, թե Հայ Առաքելական Եկեղեցին և Ավետարանական եկեղեցին նույնն են: Դրա համար նրանք գործածում են բոլոր հնարավոր միջոցները: Նույնիսկ լսում ենք, որ ասում են, թե այս երկու եկեղեցիները նույն մեկ եկեղեցին են, ինչպես որ կինը և ամուսինը երկուսով մեկ մարմին են՝ ըստ Աստվածաշնչի: Սակայն իրականում երկուսը մեկ կարող են լինել միմիայն երկուսի համաձայնությամբ, մինչդեռ այս դեպքում Հայ Առաքելական Եկեղեցին երբեք համաձայն չէ Ավետարանական Եկեղեցու հետ իր մեկությանը և դրա համար երբեք էլ իր համաձայնությունը չի տվել: Սա պարզապես ավետարանականներին պետք է մարդկանց գրավելու կամ գրաված մարդկանց պահելու համար, որովհետև եթե ասեն, թե մենք տարբեր ենք Առաքելական Եկեղեցուց, շատերը կհեռանան: Նույն կերպ էլ Եհովայի վկաները խորամանկությամբ գրանցվում են քրիստոնեական անվան տակ, որպեսզի քրիստոնյա երկրներում այդ անունով մարդկանց գրավեն, մինչդեռ նույն խորամանկությամբ մուսուլմանական երկրներում երբեք չեն գործածում այդ անունը, քանի որ այս դեպքում էլ, արդեն հակառակը, քրիստոնեական անունը լսելով՝ մարդիկ կխուսափեն այդ աղանդից: Սադուկեցիները և փարիսեցիները Հրեաստանում իրենց գաղափարներով և հավատալիքով բոլորովին միմյանց հակառակ խմբեր էին, մինչդեռ Ավետարանում կարդում ենք, որ Քրիստոսի դեմ ելնելու համար նրանք միասին են մոտենում՝ Քրիստոսին փորձելու (Մատթ. 16.1, 22.34): Այսպես էլ այժմ աղանդ-

ները իրարից տարբեր և իրար հակառակ են, բայց միաբանվում են Եկեղեցու դեմ իրենց պայքարի մեջ՝ մարդկանց Ճշմարիտ Եկեղեցուց հեռացնելու համար: Այդ պատճառով, սիրելի հավատացյալներ, աղանդավորների հետ գործ ունենալիս պետք է շատ զգոն և ուշադիր լինել:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԱՂԱՆԴՆԵՐԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Սուրբ Գրիգոր Տաթևացին Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի մասին իր քարոզի համար բնաբան է վերցրել Ավետարանում հիշատակված Քրիստոսի խոսքերը. «Խորագե՛տ եղեք օձերի պես և միամիտ՝ աղավնիների նման» (Մատթ. 10.16): Ոմանք բացատրում են, որ Քրիստոս պատվիրեց խորագետ լինել օձերի պես և ոչ աղվեսների, քանի որ աղվեսների վարվելաձևն այն է, որ հետապնդման ժանամակ իրենց կյանքը փրկելու համար դիմում են խորամանկության, մինչ օձերը զգուշանում են, որպեսզի չլինի թե իրենք վնասվեն: Այսինքն՝ Քրիստոս ընդունելի չհամարեց որևէ առիթով խորամանկության դիմելը: Իսկ աղավնիների նման միամիտ լինելու պատվերը պետք է հասկանալ հետևյալ իմաստով: Աղավնիներն ապրում են երամով, որ խորհրդանշում է եղբայրասիրությունը: Երբ աղավնու բնից ձուն կամ ձագերին վերցնում են, չի քանդում բունը և թողնում հեռանում: Նույնպես և մենք, երբ դժբախտության ենք հանդիպում կամ ունենում ենք մերձավորների, հարազատների կորուստ, չպետք է թողնենք հավատքը ու հեռանանք, երես դարձնենք Աստծուց: Տաթևացին ասում է, որ վտանգի ժամանակ օձերը անտեսում են մարմինը և հատկապես ջանում են վնասի չենթարկել իրենց գլուխը: Ճիշտ նույն կերպ էլ մենք չպետք է հոգանք միայն մարմնավորի մասին, այլ պետք է ուշադիր լինենք, որ չվնասվի մեզ համար գլխավորը, այսինքն՝ մեր հավատքը, և այն պետք է ամուր պահենք:

Սատանան օձի կերպարանքով երևաց ու խաբեց մարդկանց դրախտում: Նույնիսկ այս բացասական արարքից Տաթևացին վեր է հանում օգտակար խրատներ և հորդորում, որ օձի՝ այդ ժամանակ դրսևորած իմաստությունը մենք նկատի ունենանք և գործածենք դրական իմաստով: Օձը Եվային մոլորեցրեց, երբ կինը գտնվում էր Ադամից հեռու: Հետևաբար, ընտրեց ամենահարմար տեղը իր քարոզած խոսքի արդյունավետության համար: Օձը խոսեց Եվային շատ հետաքրքող բանից՝ պտղից, որ նշանակում է, թե Ճշմարտության քարոզման համար էլ պետք է ընտրել հարմար վայրը և մարդկանց ուշադրությունը գրավել նրանց հետաքրքրող բաներով: Այսպես վարվեցին և առաքյալները, ինչպես, օրինակ, Պողոս առաքյալը Աթենքում, կռապաշտ հույներին քարոզելով հավատքը, խո-

սեց հեթանոսական հավատալիքների և կռապաշտության մասին (Գործք 17.22-31):

Այսօր հաճախ տարբեր հնարանքներով, մարդկանց գրավելու զանազան մեթոդներով աղանդավորական կազմակերպությունները մարդկանց շեղում են ճշմարտությունից, ինչպես մի ժամանակ օձը հմտությամբ կարողացավ մոլորեցնել Ադամին և Եվային: Մեր Սուրբ Եկեղեցին կոչվում է Առաքելական, որովհետև հիմնադրվել է Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների կողմից: Սակայն այսօր կան նաև աղանդավորական եկեղեցիներ, որոնց համար անգամ պատշաճ չէ գործածել *եկեղեցի* բառը: Դրանք նոր են առաջացել և գրեթե բոլորը այստեղ են եկել հիմնականում ամերիկյան մայրցամաքից: Բայց երբ ասում ենք, թե պետք է հետևենք երկհազարամյա պատմություն ունեցող մեր Եկեղեցուն և ոչ թե նորաստեղծ աղանդներին, նկատի չունենք, թե որը հին է, այն ավելի լավն է, այլ պարզապես ճշմարտությունն է Եկեղեցու ծոցում, որովհետև երբեմն նորը կարող է նույնիսկ ավելի ճիշտ և ընդունելի լինել: Օրինակ՝ այսպես է պարագան Նոր Կտակարանի և Հին Կտակարանի, հրեաների և հեթանոսների, որոնց խորհրդանշանները տեսնում ենք Հին Կտակարանում: Աբրահամի որդիներից կրտսեր Իսահակը ժառանգեց հոր ունեցվածքն ու բոլոր իրավունքները (Ծնն. 25.5), Իսահակի կրտսեր որդին՝ Հակոբը, արժանացավ անդրանիկության բոլոր իրավունքներին, որովհետև ավագը՝ Եսավը, իր անդրանիկության իրավունքը փոխանցեց Հակոբին (Ծնն. 25.30-34): Նաև գեղեցիկ խորհրդանշան է համարվում Հուդայի որդիներ Փարեսի և Զարայի ծնունդը: Մանկաբարձը կանխատեսեց, որ առաջինը պետք է ծնվի Զարան, սակայն ծնվեց Փարեսը և նա համարվեց անդրանիկը (Ծնն. 38.27-30): Այս երկուսը Հուդայի մյուս որդիների հետ եղան Հուդայի ցեղի նախահայրերը, որից ծնվեց Դավիթ թագավորը, և որի սերնդից էր հենց Հիսուս Քրիստոս (Մատթ. 1.3-6): Հետևաբար, երբ հորդորում ենք հետևորդը լինելու առաքյալների կողմից հաստատված Սուրբ Եկեղեցու, նկատի չունենք հնությունն ու նորությունը, այլ՝ ճշմարտությունը, ճշմարիտ աստվածպաշտությունը, որը հենց առաքելահաստատ Եկեղեցում կարող են գտնել հավատացյալները: Մինչդեռ աղանդները հիմնադրվել են ոչ թե առաքյալների, այլ ավելի հաճախ կրոնական մոլեռանդների կամ հոգեկան անառողջ վիճակ ունեցող կասկածելի անձերի կողմից, որոնց կենսագրությունը կամ նրանց կյանքի հետ կապված պատմությունները, դժբախտաբար, չգիտեն աղանդի միամիտ հետևորդները:

Միջնադարում նաև Կաթոլիկ Եկեղեցին է մեղադրվել աղանդավորական գործունեության մեջ: Այս պարագային ավելի ճիշտ կլինի ասել ոչ թե Եկեղեցին, այլ Եկեղեցի մուտք գործած շահախնդիր անձինք, ովքեր

մտածում էին, թե Կաթոլիկ Եկեղեցու գերիշխանությունը տարածելով ամբողջ աշխարհում՝ ավելի շատ նյութական օգուտներ կունենան: 18-րդ դարի մեր Կաթողիկոսներից Ղազար Ձահկեցին իր «Աստվածաբանական դրախտ ցանկալի» աշխատության մեջ նշում է, որ աղանդավորական է այսպիսի գործունեությունը, որովհետև եթե կաթոլիկները նպատակ ունեին քրիստոնեությունը տարածելու, ապա պետք է այն քարոզեին միայն այն երկրներում, որտեղ մարդիկ քրիստոնյա չէին, մինչդեռ նրանք շահագրգռվածությամբ առաջնայնորեն դա անում էին հենց քրիստոնյա երկրներում: Այսպես էլ այսօրվա աղանդները, եթե նախանձախնդրություն ունեին քրիստոնեությունը տարածելու, պետք մեկնեին այն երկրները, որտեղ մարդիկ քրիստոնյա չեն: Մինչդեռ սրանք տարածվեցին բոլոր այն երկրներում, որոնք վաղուց արդեն քրիստոնյա են: Խորհրդային բռնապետությունից ազատվելով՝ մեր Եկեղեցին ավելի աշխույժ պիտի գործեր՝ իր գիրկը ներառելու այն մարդկանց, ովքեր դեռ հեռու էին Եկեղեցուց: Մինչդեռ աղանդները, հատուկ նպատակով և հեշտ որս ունենալու ակնկալիքով տարածվելով նախկին խորհրդային երկրներում, փախցրեցին որոշ քանակի մարդկանց և մեր դեպքում նրանց զրկեցին առաքյալների կողմից հաստատված Եկեղեցու անդամը դառնալուց: Պողոս առաքյալը, երբ եկեղեցիներ հիմնադրեց, այնտեղ անմիջապես տարածվեցին աղնադավոր քրիստոնյաներ, որոնք ասում էին, թե սխալ է ուսուցանում Պողոս առաքյալը, անպայմանորեն պետք է պահել Հին Կտակարանի բոլոր օրենքները, մովսիսական օրենքը: Եվ Պողոս առաքյալն ասաց. «Մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ [այսինքն՝ մարդկանց հետ չէ], այլ.... այս խավար աշխարհի տիրակալների հետ և երկնքի տակ եղող չար ոգիների հետ» (Եփես. 6.12): Հետևաբար, այն իրողությունը, որ աղանդները տարածվեցին ոչ թե քրիստոնեությունից հեռու երկրներում, այլ հենց քրիստոնյա երկրներում, կարող ենք համարել նաև մարմնի և արյան, այսինքն՝ մարդկանց միջոցով գործող չար ոգիների գործը, քանզի չարի նպատակն է թուլացնել Քրիստոսի Սուրբ Եկեղեցին: Սուրբ Եփրեմ Ասորին առաքելական թղթերի իր մեկնության մեջ շեշտում է այն, որ առաքյալն այստեղ ասում է *մեր պատերազմը* և ոչ թե՝ *չարի պատերազմը*: Սրանից երևում է, որ մենք զորություն ունենք պատերազմելու չարի դեմ և հաղթելու, բայց չարը չի կարող պատերազմել մեզ հետ: Դրա համար էլ մարդկանց միայն գայթակղում է հաճելի թվացող մեղսալի մտքերով, և մենք զորություն ունենք մեզանից հեռու վանելու այդպիսի մտքերը Աստծո շնորհով, մեր հավատքի օգնությամբ:

Պողոս առաքյալը նաև ասաց, որ նզովյալ է նա, ով ուրիշ ավետարան կուսուցանի (Գաղ. 1.7-8)՝ նկատի ունենալով նույն ճշմարտության այն տարբեր բացատրությունները, որ բերում էին կեղծ քրիստոնյաները

իր հիմնադրած եկեղեցիներում: Եվ մենք էլ, քանի որ հետևում ենք առաքյալների Ավետարանին, Ավետարանի վերաբերյալ նրանց աշակերտների, հետևորդների բացատրություններին և առաքյալներից փոխանցված ճշմարտությանը նրանց իսկ կողմից հիմնված Եկեղեցում, չենք ցանկանում, որ մեր ժողովրդի որոշ զավակներ հեռու մնան այդ ճշմարտությունից, այլ վերադառնան Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների կողմից հաստատված իրենց Մայր Եկեղեցին:

ԻՄ ՏՈՒՆԸ ԱՂՈԹՔԻ ՏՈՒՆ ՊԻՏԻ ԿՈՉՎԻ

Սուրբ Հովհան Ոսկեբերանը վեր է հանում Եսայի մարգարեի հիանալի վկայությունը Եկեղեցու մասին՝ այլաբանորեն մեկնաբանելով մարգարեի հետևյալ խոսքը, որով Եկեղեցին համեմատվում է լեռան հետ. «Վերջին օրերին պիտի հայտնվի Տիրոջ լեռը, Աստծու տունը՝ լեռների գագաթներին, պիտի բարձրանա բլուրների վրա, և բոլոր հեթանոսները պիտի շարժվեն դեպի նա» (2.2): Եկեղեցին ճշմարիտ աղոթավայր է, ինչը չի ընդունվում աղանդավորների կողմից: Առանձնական աղոթքը կարող է արվել ամենուր, սակայն բացի առանձնական աղոթքից կա նաև ընդհանրական աղոթք, որ հատուկ սահմանված վայրում է արվում, այսինքն՝ եկեղեցում, ինչը խորհրդանշում է աղոթողների միաբանությունն ու միակամությունը: Աղոթքի համար հատուկ սրբագործված վայրի անհրաժեշտության մասին են վկայում աստվածաշնչյան խոսքերը. «Իմ Տունը աղոթքի Տուն պիտի կոչվի» (Եսայի 56.7), որովհետեւ եկեղեցում ասված աղոթքը առավել լսելի է Աստծուն, ինչպես գրված է. «Այժմ Իմ աչքերը բաց կլինեն ու Իմ ականջները սուր, որ լսեմ այս տեղում կատարվող աղոթքը» (Բ Մնաց 7.15 հմմտ. Գ Թագ. 8.29), կամ «Ահա ընտրեցի և սրբագործեցի այս տունը, որպեսզի Իմ անունը այստեղ լինի հավիտյան և Իմ աչքերն ու սիրտը այստեղ լինեն ընդմիշտ» (Գ Թագ. 9.3, Բ Մնաց 7.16): Քրիստոսի և առաքյալների ճշմարիտ հետևորդներն ուղիղ աստվածպաշտությամբ հիմնադրեցին և հիմնադրում են եկեղեցի-աղոթավայրեր, որում Սուրբ Հոգին գործում է ինչպես Վերնատանը, որ եղավ օրինակը քրիստոնեական առաջին եկեղեցու: Հին Ուխտի վկայարանը, տաճարը ստվերն էր ճշմարիտ Եկեղեցու, և վերոնշյալ վկայակոչումները աղոթավայրի մասին իրականանում են քրիստոնեական աղոթավայրերի պարագային, քանզի Աստված պիտի լսի «այս տեղում կատարվող աղոթքը»:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Շնորհք պատրիարքն ասում է, թե ոչնչով չի արդարացված մեր Եկեղեցու անտարբերությունը Հովսեփի հանդեպ: Նա Քրիստոսին խնամել է և հետո ծառայել, որի համար արժանացել է Աստվածահայր պատվանունին: Աղանդավորները Հովսեփի մասին սխալ են ուսուցանում՝ պնդելով, թե Հովսեփը Մարիամի հետ ապրել է ինչպես մյուս ամուսինները և նրանից որդիներ է ունեցել, քանզի Մատթեոսի Ավետարանի առաջին գլխում (հմր. 25) գրված է, որ Հովսեփը չհարաբերվեց Մարիամի հետ, մինչև Մարիամը ծնեց իր անդրանիկ որդուն: Բայց ըստ Հովհան Ոսկեբերանի՝ *մինչև*-ը ցույց է տալիս մինչ զավակ ունենալը, իսկ նրանից հետո պետք է հասկանալ ըստ Եկեղեցու վարդապետության, այսինքն՝ միշտ կույս: *Մինչև* բառը երկու իմաստ ունի. ա) ցույց է տալիս նախկին վիճակին հակառակ գործողության շարունակություն և բ) որևէ գործողություն չի կատարվել մինչ նշված պահը և հետագայում էլ չի կատարվելու: Աստվածաշնչում *մինչև* բառը գործածված է այս երկու իմաստներով: Ավետարանի այս հատվածում այն օգտագործված է երկրորդ իմաստով, այսինքն՝ հետագայում էլ չէր կատարվելու նշված գործողությունը: *Մինչև* բառն այս իմաստով մենք ևս գործածում ենք մեր առօրյայում, բայց որպեսզի առավել հստակ լինեն օրինակները, դրանք բերենք Հին և Նոր Կտակարաններից: «Եվ ոչ ոք մինչև այսօր չգիտի, թե որտեղ է նրա [Մովսեսի] գերեզմանը» (Երկրորդ օրենք 34.6). սա չի նշանակում, թե այս տողերի գրությունից հետո Մովսեսի գերեզմանի տեղն իմացել են: «Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստիր Իմ աջ կողմում, մինչև որ Քո թշնամիներին դնեմ Քո ոտքերի տակ իբրև պատվանդան» (Սղմ. 109.1, Մատթ. 22.44, Մարկ. 12.35-37, Ղուկ. 20.41-44). այս նախադասությունը նստելուց հետո կանգնած վիճակ չի ենթադրում: «Սավուղի դուստր Մեղքողը մինչև իր մահվան օրը զավակ չունեցավ» (Բ Թագ. 6.23). սա չի նշանակում, թե մահից հետո զավակներ է ունեցել: Նաև Մատթ. 28.20-ում Քրիստոս ասում է. «Ձեզ հետ եմ և կլինեմ մինչև աշխարհի վախճանը», և սա չի նշանակում, որ աշխարհի վախճանից հետո մեզ հետ չի լինելու:

Աղանդավորների սխալ ուսուցումները բացահայտելով՝ նրանց հասցեին թշնամանքով չենք խոսում: Խորհրդային եկեղեցամարտության տարիներին արգելված էր հավատքի լայնորեն քարոզչությունը, և մեր հայրենի երկրի անկախության առաջին տարիներին Հայաստան ներթափանցած աղանդներից շատ մարդիկ առաջին անգամ լսեցին Աստծո մասին, իմացան աղոթքի և աղոթելու քաղցրությունը: Եվ մենք ոչ թե թշնամանքով ու ատելությամբ խոսում ենք աղանդավորների դեմ, այլ հանդես ենք գալիս սիրով, ճշմարտությամբ ու վեհությամբ բարձր, որպեսզի նրանք էլ ուզենան ետ դառնալ հավատքի շեղված ճանապարհից և հասնել այդ բարձունքներին: Մարդկային հոգեբանությանն անդրադարձած

հեղինակներից մեկը հաստատում է, որ երբ խոսում են մարդու համար ընդունելի համարվող մտքերի ու կարծիքների դեմ, նրա ներվային համակարգը լարվում է, և մարդը նաև օրգանապես պատրաստվում է ամբողջ ուժով հակառակվելու: Բայց երբ խոսում ենք հանդարտությամբ և ճշմարտության ավելի բարձր դիրքից, իրենք էլ ուզում են հասնել այդ բարձունքներին և նոր հորիզոններին, որոնք Աստծո շնորհով մարդկանց ներաշխարհում բացվում և բացահայտվում են Սուրբ Եկեղեցու գրկում:

ԼԵԶՎԱԽՈՍԱԿԱՆ ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ

Այսօր ոմանք հարցնում են. «Ինչպե՞ս է, որ որոշ աղանդներ լեզուներ են խոսում (եթե, իհարկե, այդ կոկորդային ձայնարձակումները կարելի է լեզու համարել), Քրիստոսի անունով մարգարեություն և այլ գործեր են անում»: Լեզուների վերաբերյալ Պողոս առաքյալն ասում է, որ դրանք անհասկանալի են, իսկ մարգարեությունները՝ հասկանալի, ուրեմն և մարգարեությունները շինություն են եկեղեցու համար (Ա Կորնթ. 14.1-4): «Ուզում եմ, որ բոլորդ էլ լեզուներ խոսեք, - ասում է Պողոսը, որպեսզի չվիրավորի նրանց, - բայց ավելի լավ է մարգարեանաք» (Ա Կորնթ. 14.5): Մարգարեությունը Սուրբ Հոգու այն պարգևն էր, որն ունեցողը իր սրբակենցաղ կյանքով և վարքով կարողանում էր Աստծու խոսքը հասցնել մարդկանց, և Պողոս առաքյալը դա էր շինություն համարում Եկեղեցու համար: Ըստ առաքյալի՝ լեզուները նշան են անհավատների համար, այն էլ՝ երբ դրանք հասկանալի լինեն անհավատին (14.22): Պողոս առաքյալը մեջբերում է Հին Կտակարանից. «Օտար լեզուներով և օտարոտի շրթունքներով պիտի խոսեմ այդ ժողովրդի հետ, սակայն և այնպես չպիտի լսեն Ինձ» (Բ Օր. 28.49, Եսայի 28.11-12, Ա Կորնթ. 14.21): Մարգարեությունից այս մեջբերումը վերաբերում է Հրեաստանի վրա ասորեստանցիների հարձակմանը, որն Աստծո պատիժն էր լինելու իրենց հարազատ լեզվով խոսող մարգարեներին չլսող հրեաներին: Մարգարեությունն անմիջականորեն չի վերաբերում լեզուների շնորհին, սակայն առաքյալը ցանկանում է ասել, որ ինչպես Հրեաստան եկած ասորեստանցիների անհասկանալի խոսքը լսելը պատիժ էր հրեաների համար, այնպես էլ կորնթացիների հավաքույթներում աղոթողների համար անհասկանալի լեզուների հնչումը վկայում է նրանց և Աստծո միջև բաժանման մասին: Հետևաբար, խելացիորեն չեն վարվում կորնթացիները, երբ արարողությունների ժամանակ ջանում են լեզուներ խոսել, և առաքյալն ասում է, որ եթե բոլորն էլ լեզուներ խոսեն, չե՞ն ասի, թե դուք գժվել եք (23):

Լեզվախոսական աղանդավորական շարժումները ծնվել են արևմուտքում, և դրանց պաշտամունքային ձևերը, հետևաբար, նման են ա-

ռևմտյան շոուների, ինչը և տեսնում ենք դահլիճներում կամ ստադիոններում իրականացվող նրանց հավաքներում: Այսպիսի աղանդները հանդես են գալիս «Կենաց խոսք», «Նոր սերունդ» ու նման այլ անվանումներով, և նրանց թվացյալ շնորհները բնավ էլ փրկության չեն առաջնորդում, ինչպես ասաց Քրիստոս. «Շատերն Ինձ այդ օրը կասեն. “Տե՛ր, Տե՛ր, մի՞թե Քո անունով չմարգարեացանք, Քո անունով դևեր չհանեցինք և Քո անունով բազում հրաշքներ չգործեցինք”: Սակայն Ես այդ ժամանակ կասեմ նրանց. “Ես ձեզ երբեք չեմ ճանաչել. հեռացե՛ք Ինձանից բոլորդ, որ անօրենություն էք գործում”» (Մատթ. 7.22-23):

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Աղանդավորները չունեն այնպիսի սրբություններ ու հրաշքներ, որպիսիք ունի Սուրբ Եկեղեցին: Եվ հորդորելով մեր ժողովրդին չխաբվել աղանդավորներից՝ մի քանի հարցերով ցույց տանք նրանց սխալականությունը: Ինչպե՞ս են մորմոնները և Եհովայի վկաներն ասում, թե Քրիստոս Աստված չէ, եթե Քրիստոս Ինքն է ասում՝ «Ես և Իմ Հայրը մի ենք» (Հովհ. 10.30), «Հայրը Իմ մեջ է, և Ես՝ Հոր մեջ» (Հովհ. 10.38), եթե Թովմաս առաքյալը Քրիստոսին ասում է՝ «Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ » (Հովհ. 20.28), եթե Պողոս առաքյալը եբրայեցիներին ուղղված թղթում՝ հենց առաջին գլխում, մեջբերելով սաղմոսի խոսքերը՝ ասում է, որ Հայրն Ինքն է Քրիստոսին Աստված կոչում (Եբր. 1.8-9, Սղմ. 44.7-8), եթե Հայտնության մեջ Քրիստոս կոչվում է Անսկիզբ և Անվախճան (Հայտն. 2.8), ինչպիսին կարող է լինել միմիայն Աստված: Ինչպե՞ս են հոգեզալստականները կամ այլ անունով հիսունականները իրենց մոլությունը՝ անմարդկային ձայների արձակումը, համարում ամենքի ճշմարիտ հավատքը վկայող Սուրբ Հոգու շնորհ, եթե Սուրբ Գիրքը հայտնապես նշում է, որ լեզուների շնորհն ամենքի համար չէ (Ա Կորնթ. 12.10, 13.30), եթե Պողոս առաքյալն ասում է, թե կամենում եմ հինգ խոսք խոսել խելքով, քան բազում խոսքեր՝ լեզվով (Ա Կորնթ. 14.19): Ինչպե՞ս են բողոքականները-ավետարանականները արգելում մանուկների մկրտությունը, եթե Հին Կտակարանի ժամանակներից սկսած երեխաները ծնողների հոգածությամբ էին Աստծո ժողովրդի անդամ դառնում (Ծննդ. 17.11), ծնողների հոգածությամբ էին փրկվում (Ելք 12.13, 23, 14.22, 16.14-19, 17.3), և եթե առաքյալները մկրտում էին ամբողջական ընտանիքներ (Գործք 16.15, Ա Կորնթ. 1.16, 16.15, 16.33), որոնց մեջ անտրամաբանական է պնդելը, թե բոլորովին ե-

ռեխաներ չեն եղել: Եվ ընդհանրապես, ինչպե՞ս կարող է աշխարհիկ մեկը զբաղվել հոգևոր գործունեությամբ, եթե դրա համար պարտադիր է Քրիստոսից սկիզբ առած և առաքյալներով փոխանցված ձեռնադրությունը, քանի որ առաքյալներից հաջորդաբար եկած՝ հոգևորականների ձեռնադրության և դրա անհրաժեշտության մասին բազմիցս խոսվում է Նոր Կտակարանում (Գործք 6.6, 8.19, 13,3, 14.22, Ա Տիմ. 4.14, 5.22, Բ Տիմ. 6.6, Եբր. 6.2): Այս հարցերն իրենք իրենց միջից արդեն հնչեցնում են իրենց պատասխանները և լրջորեն մտորելու ու խորհելու տեղիք են տալիս բոլոր աղանդավորներին: Իսկ մենք էլ պետք է աղոթենք նրանց բոլորի դարձի գալու համար և գնալով խոստովանության ու ապաշխարության՝ պետք է նաև աղոթենք Աստծո առջև գործած մեր անձնական մեղքերի թողության ու քավության համար:

ՏԻՐՈՋԸ ՊԱՏԿԱՆՈՂՆԵՐԸ

Երբ Մովսեսն իջավ Սինա լեռից, տեսավ, որ իսրայելցիները, Աստծուց երես դարձնելով, ոսկե հորթ են ձուլել ու այդ կուռքին են պաշտում: Այդ ժամանակ զայրացած Մովսեսը բարձրաձայն հայտարարեց. «Ով Տիրոջն է պատկանում, թող ինձ մոտենա»: Եվ Մովսեսին մոտեցան միայն Ղևիի որդիները (Ելք 31.1-26), դրա համար էլ հետագայում Աստծուն սպասավորություն անելը հանձնվեց միայն ղևտացիներին: Մյուսները համառեցին, ինչը որ ավելի վատ էր, քան կուռքին պաշտելը:

Քրիստոսի առաքյալները տարբեր երկրներում Եկեղեցիներ հիմնադրեցին: Առաքյալների հիմնադրած այդ Եկեղեցիները հոգևոր խնամք տարան և տանում են այդ երկրների ժողովուրդների հանդեպ: Եվ հայ ժողովրդի հոգևոր խնամակալն ու ծնողն է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Այսօր աղանդավորների, սխալ ուսմունքներ տարածողների առկայության պարագային Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին Մովսեսի նման ձայնում է հայ ժողովրդի բոլոր զավակներին՝ ասելով. «Ով Տիրոջն է պատկանում թող ինձ մոտենա»: Եվ դուք էլ, սիրելիներ, ինչպես այն ժամանակ ղևտացիները, ընտրեցեք ոչ թե շահը, հարմարավետությունը, այլ աստվածային ճշմարտությունը՝ դեպի Երկնային Արքայություն նավելով համայն հայության փրկարար տապանով, որն է՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

ՄՈԳԵՐԸ

ԲԵԹՂԵՀԵՄՅԱՆ ԱՍՏՂԻ ՄԱՍԻՆ

Քրիստոսին երկրպագող մոգերը Տիրոջ Ծննդյան մասին իմացան երկնքում երևացած պայծառ աստղի ծագումից, և դրանով առաջնորդված՝ եկան մանուկ Հիսուսին երկրպագելու (Մատթ. 2.2,9): Եկեղեցական հեղինակներն ասում են, որ աստղի երևալը հրաշք էր: Մեր եկեղեցական հեղինակներից Ստեփանոս Սյունեցին ասում է, որ աստղը կարող էր նաև հրեշտակ լինել, որ լուսավորում էր մոգերի ճանապարհը և նրանց առաջնորդում Տիրոջ մոտ: 17-րդ դարում առաջ եկավ Կեպլերի տեսությունը Բեթղեհեմյան աստղի վերաբերյալ: 1603-1604 թվականներին հայտնի աստղագետ Յոհան Կեպլերը (1571-1630) տեսավ, որ երեք մոլորակներ՝ Յուպիտերը, Սատուրնը և Մարսը, կանգնում են մի գծի վրա և թողնում են մեկ պայծառ աստղի տպավորություն: Նա հաշվարկեց, որ այդ մոլորակները մի գծի վրա են կանգնում 800 տարին մեկ, և այն ենթադրությունն արեց, թե Բեթղեհեմյան աստղը կարող էր լինել այս երեք աստղերի միավորությունը: Սակայն Կեպլերի տեսությունը Քրիստոսի Ծննդյան ժամանակ երեք մոլորակների միավորությունից երևացած աստղի ծագման վերաբերյալ չի կարող ճշգրիտ լինել: Պատճառներից մեկն այն է, որ այդ դեպքում Ավետարանում կխոսվեր ոչ թե աստղի, այլ համաստեղության մասին, մինչդեռ Ավետարանիչը երկնային այդ երևույթը հստակորեն աստղ է կոչում, որ չպետք է շփոթել համաստեղության հետ: Բեթղեհեմյան աստղի մասին եղած կարծիքների վերաբերյալ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյանն ասում է, որ այնքան էլ կարևոր չէ աստղի բնույթը, այլ առավել կարևոր է մոգերի գալստյան և Քրիստոսին երկրպագելու իրողությունը:

ԲԵԹՂԵՀԵՄՅԱՆ ԱՍՏՂԸ ԵՎ ՄՈԳԵՐԸ

Աստված մարգարեներ չուղարկեց մոգերի մոտ Քրիստոսի Ծննդյան մասին ավետելու, որովհետև նրանք մարգարեներին չէին հավատա: Եթե մի մարգարե նրանց քարոզեր կույսից Աստծո ծնվելու մասին, աստղագուշակությամբ տարված լինելու պատճառով մոգերը չէին հավատա և չէին ընդունի, մինչև չտեսնեին այդ ամենն աստղերի միջոցով: Եվ ահա ինչի մեջ որ մոլորված էին մոգերը, Աստված դրանով էլ որսաց նրանց և բերեց ճշմարիտ աստվածպաշտության: Մոգերին հայտնված աստղը մեծ էր ու փառավոր իր լույսով, երևելի՝ ծագմամբ ու հրաշալի՝ տեսքով, զարհուրելի՝ բոցով ու բորբոքելի՝ հրով, սքանչելի՝ փայլով ու զարմանալի՝ տեսակով, և չկար մեկ այլ աստղ, որ սրա նման լիներ: Մոգերն աստղի մեջ տեսնում էին Սուրբ Կույսին՝ զարմանալի կերպով բազմած, և հրաշալի Մանուկին նրա գրկում՝ հրեղեն թագը գլխին: Այս տեսիլքը հիացրեց նրանց, բայց նրանք իրենց գրքերում չգտան այս խորհրդի մեկնությունը,

և քաղդեացիների դպիրներն էլ չկարողացան բացատրել այն: Սակայն նրանք ունեին Բաղաամի մարգարեությունը, ուր ասվում է. «Այդ սերնդից պիտի ծնվի մի Մարդ, որ պիտի տիրի բազում ազգերի: Նրա թագավորությունը Գոգի թագավորությունից հզոր պիտի լինի և նրա թագավորությունը պիտի բարգավաճի» (Թվեր 24.7), որից էլ իմացան, որ իրենց ավետվում է ծնունդը Մեծ Արքայի, և լցվեցին մեծ երկյուղով ու որոշեցին, որ քանի դեռ մանուկ է, իրենք հոժարակամությամբ գնան և Նրան խոնարհվեն: Եվ այն խոսքից, թե՝ «Ծագելու է Հակոբի աստղը» (Թվեր 24.17), իմացան, որ Աստված է հայտնվելու: Իսկ այն խոսքից, թե՝ «Նա ննջելու է որպես առյուծ» (Թվեր 24.9), իմացան, որ խոսքը Նրա թաղվելու մասին է, ինչի համար էլ արևելքից իրենց հետ բերեցին համապատասխան նվերներ: Երբ մոգերը մտան Հրեաստան, աստղը ծածկվեց նրանցից, որպեսզի Փրկչի ծնունդն իմանան նաև հրեական մարգարեություններով հաստատված: Մոգերը եկան Երուսաղեմ, և Հերովդես թագավորը, իմանալով նրանց գալստյան նպատակը, չարությամբ լցվեց (Մատթ. 2.3), քանզի մոգերը փնտրում էին Դավթի սերնդից ծնված արքային, իսկ Հերովդեսը Դավթի թագավորական ցեղից չէր, այլ օտարազգի էր՝ հոր կողմից եդոմացի, իսկ նրա մայրն արաբ էր: Նա բռնությամբ էր վերցրել իշխանությունը և իրեն այնպես էր ներկայացնում, իբրև թե Դավթի սերնդից է: Երբ մոգերը հարցրեցին, թե ուր է հրեաների արքան (Մատթ. 2.2), Հերովդեսը ներքուստ ավելի զայրացավ, որովհետև հրեաների արքա անվանեցին ոչ թե իրեն, այլ նոր ծնված մի երեխայի: Հերովդեսն առավել կատաղեց, երբ տեսավ մոգերի նվերները, և իրեն ավելի անարգված զգաց, որովհետև այդ ընծաներն իրեն չմատուցեցին:

ՄՈԳԵՐԻ ԸՆԾԱՆԵՐԸ

Մոգերը, նորածին Քրիստոսին երկրպագելով, Նրան նվերներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս (Մատթ. 2.11): Մոգերն ընծայեցին նախ ոսկի, որովհետև մեծ Արքա է, ապա՝ կնդրուկ, որովհետև Աստված է, այնուհետև զմուռս՝ խորհրդանշելով այն մահը, որն ընդունելու էր մեր փրկության համար: Դարձյալ՝ խունկը՝ կնդրուկը, ընծայեցին Աստվածության, զմուռսը՝ մարդեղության, իսկ ոսկին՝ իշխանության համար:

Այդ երեք մոգերից առաջինը պարսից Մելքոն թագավորն էր: Նա Աբրահամի Քետտուրա հարճի սերունդներից էր (Ծնն. 25.1-4, Ա Մնաց. 1.32-33): Երկրորդը Գասպարն էր՝ հնդիկների թագավորը, իսկ երրորդը՝ Բաղդասարը՝ արաբների թագավորը:

Ասվում է, որ իրենց նվերներն ընծայելիս մոգերը նաև համապատասխան տեսիլքներ ունեցան: Գասպարը՝ հնդիկների թագավորը, Մանկանը կնդրուկ, նարդոս, ստաշխ, կասիան ու կինամոն և այլ անուշահո-

տություններ ընծայեց՝ տեսնելով Նրան որպես Աստծու Որդի՝ մարմնով բազմած փառքի աթոռին, իսկ հրեշտակների զորքերը՝ Նրան սպասավորելիս: Բաղդասարը՝ արաբների թագավորը, ընծայեց ոսկի, արծաթ ու պատվական քարեր և գեղեցիկ ու վայելուչ մարգարիտ և տեսավ Տիրոջը մարմնով, որպես Արքայի Որդի, նստած բարձր գահի վրա, և մարդկանց բազում զորքերը Նրա առջև: Իսկ Մելքոնը՝ պարսից թագավորը, ընծայեց զմուռս, հալվե, ծիրանի ու բեհեզ, նաև պատանքի համար կտավ և տեսավ Նրան որպես Աստծու Որդի՝ չարչարանքներով մեռած, բայց հարություն առած ու կենդանի: Մոգերն ընծաներ մատուցեցին իրենց երկրպագելի Թագավորին, ով եկել էր նրանց մոտ աղքատի կերպարանքով և արհամարհվել Իր ազգի կողմից՝ ըստ այս խոսքի. «Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները նրան չընդունեցին» (Հովհ. 1.11), սակայն օտարներն ընծաներով եկան Նրան պատվելու:

ՄՈԳԵՐԻ ԵՎ ՀՈՎԻՎՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Քրիստոսին նախ երկրպագեցին հովիները մսուրում (Ղուկ. 2.16), այնուհետև՝ մոգերը: Ավետարանիչն ասում է, որ մոգերը մանուկ Փրկչին տան մեջ երկրպագեցին (Մատթ. 2.11): Այսպիսով, Փրկչին խոնարհվում են մարդկային անմեղությունն ու պարզությունը՝ հանձինս հովիվների, և մարդկային իմաստությունը՝ հանձինս մոգերի, այսինքն՝ ամենահասարակ և ամենակրթված մարդիկ: Սրանով պարզ է դառնում, որ Աստված ընդունում է բոլորին: Նրան հաճելի է պարզությունը՝ զուգակցված իր կոչումին համապատասխան ազնիվ ընթացքով ու խղճի մաքրությամբ: Նրա համար ընդունելի է նաև մարդկային իմաստությունը, երբ այն օգտագործում է իր գիտելիքները ի փառս Աստծո և հոգուտ մերձավորի:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հունվարի 13-ին Քրիստոսի անվանակոչության տոնն է: Ըստ հրեական օրենքի՝ նորածին երեխային ութերորդ օրը թլփատում էին և անուն դնում (Ծննդ. 17.12, Ղևտ. 12.3): Այս հրեական արարողությունը քրիստոնեական մկրտության արարողության նախօրինակն էր կամ ստվերը: Սրա մասին մանրամասն բացատրվում է Կանոնագիրք Հայոցում՝ Առաքելական 13-րդ կանոնի մեջ: Քրիստոսի առաքյալների հաստատած կանոններից է երեխային ութ օրեկան հասակում մկրտելու կարգը, ինչպես

որ Աստված Աբրահամին պատվիրեց երեխային ութ օրեկանում թլփատել՝ որպես հավիտենական ուխտի նշան (Ծննդ. 17.12), ինչը մկրտության նախօրինակն էր: Բացի դրանից Թվոց գրքում (19.9) խոսվում է մեղքերի մաքրման ջրի մասին, որը պետք է հեղեին անմաքուր մարդու վրա: Սա կանխագուշակումն էր հեթանոսների մկրտության: Մկրտության այլ ակնարկներ ևս տեսնում ենք Հին Կտակարանում: Օրինակ՝ իսրայելցիները ջրով անցնելով՝ փրկվեցին փարավոնից (Ելք 14.21-22): Մի քանի այլ օրինակներ ևս զետեղված են երեխային ութ օրեկան հասակում մկրտելու վերաբերյալ առաքյալների հաստատած 13-րդ կանոնի մեջ. «Հեսուն անցավ Հորդանան գետը և ջրով անցնելուց հետո մտավ Պարգևների երկիր (Հեսու 3.14-17): Եղիան ևս անցավ Հորդանանը և երկինք ելավ (Դ Թագ. 2.6-11): Հովհաննեսը ևս Քրիստոսին մկրտեց ջրի մեջ (Մատթ. 3.13-17, Մարկ. 1.9-11, Ղուկ. 3.21-22)»: Ահա այսպիսի մեծ և փրկարար զորություններով է օժտված մկրտությունը, որ մաքրում է ադամական մեղքը, արժանացնում է բազում շնորհների, Երկնքի Արքայության և հավիտանեկան կյանքի:

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ Ավանդության՝ երեք տարին լրանալուց հետո Սուրբ Մարիամն ընծայվում է տաճարին, ուր մնում է մինչև իր նշանվելը: Սուրբ Եկեղեցին ամեն տարի տոնում է Աստվածածնի տաճարին ընծայման տոնը: Այս տոնի հաստատումը կապված է Հուստինիանոս կայսեր կողմից 6-րդ դարում Աստվածածնի պատվին հրեական տաճարի տեղում քրիստոնեական տաճարի կառուցման հետ, որը հետագայում վերածվել է մուսուլմանական մզկիթի: Այժմ բոլոր Եկեղեցիներն Աստվածածնի տաճարին ընծայման տոնը տոնում են նոյեմբերի 21-ին: Հրեաների մոտ սովորություն կար նաև 40 օրեկան առաջին տղա երեխային տաճարին ընծայել: Երբ Եգիպտոսում մեռան բոլոր անդրանիկ զավակները, Աստծո զորությամբ հրեաների երեխաներին ոչինչ չպատահեց (Ելք 12.27): Այդ իսկ պատճառով այդուհետ բոլոր անդրանիկ արու զավակները համարվում էին Աստծո սեփականությունը: Հետագայում տաճարում սպասավորություն անելու համար ընտրվեց Ղևիի ցեղը, իսկ մյուս անդրանիկները կարող էին փրկագնվել տաճարին զոհաբերվող գումարով և ընծայով: Քրիստոնեության մեջ ևս 40 օրեկան երեխայի ընծայման շատ գեղեցիկ կարգ կա, որով հոգևորականը Աստծո օրհնությունն է խնդրում մոր և մանկան համար:

Ի տարբերություն բողոքականների-ավետարանականների՝ մենք հավատում ենք, որ մկրտությունը Եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է:

Մինչդեռ բողոքականները հիմնական խորհուրդներ են համարում Մկրտությունը և Հաղորդությունը, վերջինս նույնիսկ միայն խորհրդանիշ նկատելով: Մեր Եկեղեցում հիշատակվող սրբերից Անդրե զորավարն ու իր զինվորները նահատակվեցին հենց մկրտության գնալու պատճառով: Մկրտությունը չի կարելի երկրորդ անգամ կրկնել, սակայն Սուրբ Եկեղեցին մկրտում է աղանդներից դարձի եկողներին, որովհետև անվավեր է համարվում աղանդավորական մկրտությունը, քանի որ չի կատարվել Եկեղեցու հոգևորականի՝ քահանայի կողմից: Բողոքական-ավետարանականները որոշ աղանդների նման չեն ընդունում քահանայության կարևորությունը: Բացի դրանից բողոքական-ավետարանականները չեն հավատում, որ մկրտությունը արժանացնում է կյանքի նորոգության, մեղքերի թողության, փրկության և արդարության, քանի որ նրանք փրկության առաջնային պայման են համարում հավատքը: Սակայն իրականում առանց մկրտության մարդ չի կարող փրկվել, ինչպես Քրիստոս ասաց Նիկոդեմոսին. «Եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծու արքայությունը մտնել» (Հովհ. 3.5): Չնայած, որ Պողոս առաքյալը Քրիստոսի կողմից ընտրվեց, սակայն նրա մեղքերը չներվեցին միայն Քրիստոսի հետ հանդիպմամբ, այլ Անանիան այդ ամենից հետո նրան ասաց. «Եվ արդ ինչո՞ւ ես դանդաղում. ելի՛ր, մկրտվի՛ր և լվացվի՛ր մեղքերիցդ» (Գործք 22.16): Այստեղ տեսնում ենք, որ մկրտության ներգործություններից մեկը մեղքերից մաքրելն է: Երբ հոգեգալստյան օրը բազմաթիվ հրեաներ հավատացին Քրիստոսին, առաքյալներին հարցրեցին. «Ի՞նչ պիտի անենք, եղբայրնե՛ր»: Պետրոսն ու մյուս առաքյալները պատասխանեցին. «Ապաշխարե՛ք, և թող ձեզանից յուրաքանչյուրը մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ, մեղքերի թողության համար» (Գործք 2.37-38): Առաքյալները հավատքից բացի առաջնայնորեն կարևորեցին մկրտութունը, չնայած որ պետք է կատարեին շատ հոգնեցուցիչ գործողություն՝ մկրտելով երեք հազար մարդկանց:

Իսկ ինչու՞ է մարդը, որ մկրտությամբ Սուրբ Հոգին է ստացել, այսինքն՝ արժանացել է Սուրբ Հոգու շնորհներին, շարունակում մեղանչել: Պատճառն այն է, որ մկրտությունը կյանքի նորոգություն է տալիս, ինչպես ասում է Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված թղթում (6.4), բայց այն չի շնորհում անմեղանչականություն: Մկրտության ժամանակ մենք ստանում ենք նոր, հոգևոր ծնունդ, նոր կյանք և նոր շնորհներ, արդարանում ենք Քրիստոսով, ընդունում ենք նորոգված բնություն: Այս նոր բնությունն ունի հոգևոր կյանքի մեծ ընդունակություն և ուժ: Եվ մկրտվածը մեղանչում է ոչ թե մեղքի կողմը հակված լինելու, մեղքի իշխանության տակ գտնվելու պատճառով, այլ սատանայի խաբեության, գայթակղության պատճառով: Մինչդեռ մկրտությամբ ստացած շնորհներով մարդը

մեծ զորություն ունի սատանային հաղթելու: Բողոքականները, ավետարանականները մերժում են նաև մանուկների մկրտությունը՝ փոքրիկ երեխաներին զրկելով աստվածային շնորհներից: Նրանց սխալ կարծիքն այն է, որ մարդը պետք է մկրտվի իր ազատ կամքով և հավատալուց հետո: Բայց Եգիպտոսում, ինչպես նաև Կարմիր ծովով անցնելիս երեխաները ծնողների հոգածության շնորհիվ փրկվեցին: Հին Կտակարանում նշվում է, որ ծնողների հոգածությամբ թլփատվելով՝ երեխան դառնում էր Աստծո ժողովրդի անդամ և ժառանգակից Աստծո տված խոստումներին (Ծննդ. 17.11-12), ու ոչ թե ծնողները սպասում էին, որ երեխան մեծանա և իր ազատ կամքով ընտրի՝ փրկվելու՞ է, թե՞ ոչ: Ինչպես որ ծնողները երեխայի կամքից անկախ հոգ են տանում նրա սնվելու, կրթության և դաստիրակության համար, այդպես էլ առավել շատ պետք է հոգ տանեն երեխայի հոգու և հատկապես մկրտությամբ աստվածային շնորհների ստացման համար: Սուրբ Գրքում գրված է, որ հաճախ մկրտվել են նաև ամբողջական ընտանիքներ (Գործք 10, 16, 18 գլուխները, Ա Կրնթ. 1.16), և ան-տրամաբանական է պնդելը, որ այդ բոլոր ընտանիքներում երեխաներ չեն եղել: Բացի դրանից Սուրբ գրքում չկա ոչ մի համար, որ արգելի երեխաների մկրտությունը: Սա ցույց է տալիս, որ բողոքականների, ավետարանականների կարծիքները հիմնված են առաջին հերթին իրենց տրամաբանության և ոչ թե Սուրբ Գրքի վրա: Հետևաբար, պետք է հեռու մնալ աղանդավորների, ոչ իրական հոգևորական անձանց կողմից կատարվող սուտ մկրտություններից: Եվ եթե փոքրիկ երեխաներ ունեք, ովքեր մկրտված չեն, շտապեցեք Եկեղեցի՝ մկրտությամբ ձեր երեխաներին արժանացնելու աստվածային օրհնությանն ու շնորհներին:

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՏՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեր Տեր Հիսուս Քրիստոս ասաց. «Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի» (Մարկ. 16.16): Բայց ի՞նչ կարող ենք ասել այն մարդկանց մասին, ովքեր սպանվեցին հալածանքների շրջանում առանց մկրտված լինելու: Արդյո՞ք նրանք կորցրեցին իրենց փրկությունը: Ոչ, որովհետև եկեղեցական հեղինակներն ասում են, որ մկրտության տարբեր տեսակներ կան՝ մկրտություն ջրով և Սուրբ Հոգով, որը կարող եք տեսնել եկեղեցիներում, և մկրտություն արյան, սիրո, արցունքների: Մարտիրոսությունը կոչվում է արյան մկրտություն: Երբ Զեբեդեոսի որդիները՝ Հակոբոսը և Հովհաննեսը, խնդրեցին Տիրոջը նստելու Նրա աջ և ձախ կողմերում, Քրիստոս պատասխանեց նրանց. «Չեք իմանում՝ ինչ եք խնդրում. կարո՞ղ եք խմել այն բաժակը, որը Ես խմելու եմ. կամ՝ մկրտվել այն մկրտությամբ, որով Ես մկրտվելու եմ» (Մատթ. 20.22, Մարկ. 10.38), ո-

րով երևում է, որ հանուն հավատքի արյուն հեղելը արյան մկրտություն է, ինչպես որ այն կոչեց Քրիստոս: Սիրո մկրտությունն այն է, որ մի մարդ ճշմարիտ հավատքի գալով և Աստծո հանդեպ մեծ սիրով լցված լինելով՝ ցանկանում է մկրտվել, բայց հանկարծակի մահվան պատճառով չի կարողանում իրագործել իր փափագը, և համարվում է սիրո մկրտությունն ունեցող: Մկրտության տեսակ է արցունքների մկրտությունը, որով մենք բոլորս պետք է մկրտվենք: Սուրբ Գրիգոր Աստվածաբանն ասում է, որ սաղմոսերգուն հայտնում է այս մկրտության մասին՝ ասելով. «Ամեն գիշեր հեծեծանքով լվացի մահիճն իմ և իմ արտասուքով անկողինս թրջեցի» (Սաղմ. 6.7): Սա նշանակում է, որ մենք հաճախ կարիքն ունենք զղջալու մեր մեղքերի համար, լաց լինելու մեր վատ արարքների համար՝ խնդրելով, որ Ամենակարողն Աստված ների մեզ:

Հավատքը ևս լինում է տարբեր տեսակների: Կան հավատքի երկու տեսակներ, որոնք առանց վարձքի են, և երրորդ տեսակը վարձատրելի է, որովհետև դա է ճշմարիտ հավատքը: Չար ոգիները աներեր հավատում են Աստծուն, բայց նրանց հավատը վարձքի արժանի չէ, որովհետև նրանք անզեղջ են մնում իրենց չար ընթացքի մեջ: Հակոբոս առաքյալն ասում է. «Դու հավատում ես, որ մեկ է Աստված. լավ ես անում: Դևերն էլ են հավատում և դողում» (Հակ. 2.19): Անվարձատրելի հավատքի մյուս տեսակն այն է, երբ մարդը մկրտությամբ ստանում է Աստծո շնորհները, բայց բարի գործերով կենդանի չի դարձնում իր հավատքը: Այդպիսի հավատքը մեռած հավատք է: Երբ հավատքը գործեր չունի մեռած է, ինչպես ասում է Հակոբոս առաքյալը (Հակ. 2.17): Եվ մեր կյանքում մենք պետք է հաստատենք հավատքի այն տեսակը, որն արդյունավորվում է բարի և առաքինի գործերով:

ՄՈՎՍԵՍՆԵՐ ԵՎ ՔՐԻՍՏՈՍՆԵՐ

Մենք ինքներս ինչ-որ իմաստով մովսեսներ և քրիստոսներ ենք: Մովսես անունը հրեական հայտնի պատմիչ Հովսեփոս Փլավիոսի խոսքերով կազմված է եգիպտական *մo* և *իսիս* երկու բառերից: *Մo* նշանակում է ջուր, իսկ *իսիս՝* պահպանված, փրկված: Հետևաբար՝ Մովսես, Մoիսիս նշանակում է ջրից փրկված: Իսկ *Քրիստոս* անունը թարգմանաբար նշանակում է օծյալ: Եվ Մովսեսը, որ ջրից, բայց նաև ջրի միջոցով փրկվել էր, հետագայում նույն կերպ իր ողջ ժողովրդին փրկեց ջրի միջոցով՝ անցկացնելով Կարմի ծովով, դրանով խորհրդանշելով ջրով և Հոգով մկրտությունը, որի ժամանակ մկրտվողներն ավազանից ելնելով և սուրբ մյուռոնով դրոշմվելով՝ դառնում են քրիստոսներ, այսինքն՝ Աստծո օծյալներ: Դրա համար է մկրտության ժամանակ հոգևորականն ասում

մկրտվողին. «Խաղաղութիւն ընդ քեզ օծեալդ Աստուծոյ»: Եվ այս հիանալի ճշմարտություններն այսօր իմանալով՝ արդյունավետությամբ գործածենք մեզ տրված աստվածային շնորհները՝ իզուր չվատնելով մեր կյանքի թանկ ժամանակը, ապրելով աղոթքով, պահեցողությամբ և բարի կյանքով, որպեսզի այս կյանքի ավազանից էլ դուրս ելնելիս մեզ ընդառաջ գա Տերը և մեզ հավիտենական խաղաղության ու երջանկության հրավիրելով՝ սիրով ու բարությամբ ասի. «Խաղաղութիւն ընդ քեզ օծեալդ Աստուծոյ»:

ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄԱՏԱՆԻ

Հարսանեկան մատանին ցույց է տալիս հարսի և փեսայի ամբողջական և կատարյալ սերը: Ինչպես մատանին է մի մատին դրվում, նույնպես հարսը մեկ փեսայինն է, և փեսան՝ մեկ հարսինը: Մատանին բոլորաձև է և դրվում է ձախ ձեռքի մատնեմատին, որով, ինչպես հնուց ի վեր հավատում էին, երակ է գնում դեպի սիրտը: Դա խորհրդանշում է, որ փեսան և հարսը պետք է կատարյալ սեր ունենան միմյանց հանդեպ:

Մատանու խորհուրդը վերաբերում է նաև հավատքին: Ինչպես մատանին դրվում է հինգ մատներից մեկին, նույնպես հավատը դրվում է մեր իմացման վրա, որը մեկն է ներքին հինգ զգայարաններից: Մատանին դրվում է սրտի երակ ունեցող մատին, ինչը նշանակում է, որ մեր հավատքը առ Քրիստոս սրտի ջերմ սիրով պետք է հաստատված լինի: Ինչպես մատանին պատում է մատը բոլոր կողմերից, այնպես էլ ամբողջական հավատքը պահպանում է մեր հոգին ու մարմինը չարից և բոլոր մոլորություններից: Ինչպես պատվական է մատանու նյութը, որ ոսկուց կամ արծաթից է լինում, նույնպես պատվական և անբիծ պետք է լինի մեր հավատքը առ Քրիստոս: Մատանու գույնը լինում է դեղին կամ սպիտակ, որ ցույց է տալիս մեր հավատի պայծառությունը. սպիտակը՝ հոգու անմեղությունը, իսկ դեղինը՝ առաքինությամբ հանդերձ մարմնի ահն ու երկյուղը: Մատանու նյութը ձայնեղ է, այնսինքն մի տեղ ընկնելիս զրնգուն ձայն

է հանում: Այսպես նաև հավատքը պետք է հայտնի դարձնել՝ ի լուր ամենքի:

ՓԵՍԱՅԻ ԱՋ ՁԵՌՔՈՎ ՀԱՐՍԻ ԱՋ ՁԵՌՔԸ ԲՌՆԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Պսակի արարողության սկզբում հարսը կանգնում է փեսայի ձախ կողմը, ով իր աջ ձեռքով բռնում է հարսի աջ ձեռքը: Աջը խորհրդանշում է պատվավորն ու ճշմարիտը: Այսպես Աստծո աջ կողմում բազմյալ Միածին Որդին իր Աջով բռնել է Եկեղեցին, որ դեռևս աշխարհի ձախ կողմում է, մինչև որ Եկեղեցին, այսինքն՝ հավատացյալները կազմեն վերին Եկեղեցին, և այն ժամանակ հավատացյալները կլինեն աջակողմյաններ, ըստ այն խոսքի, թե՝ «Բռնեցիր իմ աջ ձեռքից, քո խորհուրդներով ինձ առաջնորդեցիր և փառքով ընդունեցիր ինձ» (Սաղմ. 72.23-24): Ինչպես Աստծո Աջը առավ Ադամի ձախ կողը և կին արարեց, նույնպես և Աստծո Աջը, որ Միածին Բանն է, առավ ձախ կողը՝ Ադամի հանցավոր բնությունը, և մարդեղացման ժամանակ Իրեն միավորելով՝ եղավ անմեղ և անապական մարմնով՝ հանելով Ադամի բնությունը առաջվա աջակողմյան պատվին, ուր գտնվում էր առաջին մարդը նախքան իր մեղանչելը:

Երբ եկեղեցուց դուրս են գալիս, հարսը լինում է փեսայի ձախ կողմում, բայց երբ հարսն ու փեսան նստում են պատվավոր տեղում, հարսին արդեն նստեցնում են աջ կողմում: Սրա նշանակությունն այն է, որ դրախտում կինը Ադամի աջ կողմում էր, բայց երբ դրախտից արտաքսվեցին, կինը եղավ Ադամի ձախ կողմում և նրա անկման պատճառ: Իսկ երբ Բանն Աստված ցանկացավ մարդ լինել, մեր ձախ բնությունը աջի փոխեց: Դրա համար կույսի արգանդի աջ կողմում բնակվեց, ինչպես որ ըստ կարգի բոլոր արու մանուկները մոր աջ կողմում են գոյավորվում, իսկ իգական սեռի մանուկները՝ ձախ կողմում: Նույնպես խաչի վրա Քրիստոս կամեցավ մեզ որպես որդիներ ծնել, որի համար Իր կողի աջակողմը բացեց նիզակով խոցվելով և Եկեղեցին Իր աջ կողմում շինեց: Այսպես նաև մկրտության ավազանն է գտնվում եկեղեցիների աջ կողմում: Եվ դարձյալ երկրորդ փառավոր գալստյան ժամանակ Քրիստոս Իր աջ կողմում կհաստատի Սուրբ Եկեղեցին, ինչպես ասում է Ավետարանը (Մատթ. 25.31-33):

ՊՍԱԿԻ ԶԳԵՍՏՆԵՐ

Պսակի արարողության ժամանակ հարսի պայծառ, սպիտակ զգեստները խորհրդանշում են Ադամի և Եվայի լուսեղեն զգեստները: Նախքան

մեղանչելը առաջին մարդիկ պատված էին սրբության լույսով և չէին տեսնում միմյանց մերկությունը: Այսպես էլ պսակվողներն են եկեղեցում, ինչպես որ մարդկության ծնողները դրախտում: Քողը արգելում է հարսին ցանկությամբ նայելը, ինչպես Ադամը դրախտում ցանկությամբ չէր նայում Եվային: Քողը նաև ցույց է տալիս, որ այս կյանքում շատ իրողություններ ու երևույթներ պարզորոշ չենք տեսնում և ընկալում: Հին ժամանակներում փիլիսոփայական միտքը աշխարհը և մարդկությունը համեմատում էր քարանձավում բնակվող մարդկանց հետ, ովքեր դրսի պայծառ իրողությունները տեսնում էին քարանձավի պատերին արտացոլվող ստվերների տեսքով: Նաև ըստ առաքյալի հաստատման՝ այս կյանքում ճշմարտությունները և Տիրոջ փառքը տեսնում ենք կարծես թե քողի միջով կամ ինչպես մի արտացոլանք հայելու մեջ, մինչդեռ հանդերձյալ կյանքում ամեն ինչ տեսնելու ենք դեմառդեմ (Ա Կորնթ. 13.12, Բ Կորնթ. 3.13-18):

ՅՈԹ ՕՐ, ՅՈԹ ԳԻՇԵՐ ՀԱՐՍԱՆԻՔ ԱՐԻՆ

Հնում հարսանիքների առիթով հարսին տրվում էին երեք տեսակի ընծաներ: Հարսի հայրը տալիս էր բաժինք՝ պսակի պետքերի համար, փեսան տալիս էր օժիտ՝ նվերներ հարսին, իսկ բարեկամները տալիս էին պարգևներ:

Մեր ժողովրդական հեքիաթներից մեզ ծանոթ է յոթ օր, յոթ գիշեր հարսանիք անելու եղելությունը: Իրոք, միջնադարում մեր նախնիների մոտ սովորություն է եղել հարսանիքի տոնախմբությունը յոթ օր անելը, որից հետո՝ ութերորդ օրը, հարսն ու փեսան գնում էին եկեղեցի՝ սուրբ պսակի արարողության: Ժողովրդական այս սովորությունը կրոնական հիմնավորում ունի: Նախ երեք օր մեծ տոնախմբություն էին անում, յուրաքանչյուր օրը համապատասխանում էր Ադամի և Եվայի դրախտային ուրախության ժամերին: Ադամը ստեղծվեց ուրբաթ օրվա առաջին ժամին, Եվան՝ երկրորդ, իսկ երրորդ ժամին կերան արգելված պտուղը: Հետևաբար, Ադամն ու Եվան միասին դրախտային ուրախության մեջ եղան երեք ժամ: Այս երեք օրերին ավելացնում էին չորս օրեր, և ութերորդ օրը գնում եկեղեցի, որպեսզի օրերի թիվը համապատասխանի աշխարհի գոյատևման խորհրդանշական յոթ ժամանակաշրջաններին, որից հետո՝ ութերորդում, գալու է Քրիստոս՝ իբրև դատավոր, և Իր հավատարիմներին բազմեցնելու է Երկնքի Արքայության հավիտենական ուրախության մեջ:

ԾԻՍԱԿԱՆ

ԾԵՍ ԵՎ ԾԻՍԱԿԱՆ ԳՐՔԵՐ

Ծես բառը վրացական ծագում ունի և, ըստ Ստեփան Մալխասյանցի բացատրական բառարանի, նշանակում է կարգ, կանոն, սովորություն, եկեսեցական ծես, եկեղեցական արարողությունները կատարելու սահմանված կարգը: Ծես բառին համազոր է արարողություն բառը:

Ծիսագիտությունը եկեղեցական արարողություններ կատարելու համար սահմանված կանոնի գիտությունն է, օրինակ, ցույց է տալիս, թե ինչ է երախա (այսինքն՝ չմկրտված անձ) մկրտելու կանոնը և ինչպես պետք է կատարել:

Ծիսական մատյաններն ինն են՝ 1.Ավետարան, 2.ժամագիրք, 3.Խորհրդատետր կամ Պատարագամատույց, 4.Շարակնոց, 5.Ճաշոց, 6.Հայսմավուրք, 7.Գանձարան, 8.Տոնացույց, 9.Մաշտոց:

1. Չորս Ավետարանները ծիսական գրքեր չեն, բայց ընթերցվածների դասավորումով ծիսականացված են:

2. Ժամագիրքը հիմնականում ներկայացնում է ժամերգությունների աղոթքները, քարոզները, երգերը:

3. Խորհրդատետրը կամ Պատարագամատույցը ներկայացնում է Պատարագիչ հոգևորականի բարձրաձայն և ծածուկ ասվող աղոթքները, սարկավագների քարոզները, դպրաց դասի երգեցիկ պատասխանները:

4. Շարակնոցը շարականների՝ եկեղեցական տոների, արարողությունների առիթներով երգվող երգերի ժողովածուն է: Ենթադրվում է, որ *շարական* բառը *շարք* կամ *շարան* բառից է՝ երգերի շարան, երգաշար իմաստով:

5. Ճաշոց գիրքը պարունակում է ամենօրյա սուրբգրական ընթերցվածքները՝ ըստ սահմանված հերթականության: Ճաշոցը տերունի (Տիրոջը նվիրված) տոների տարեկան տոնակարգի սահմանումն է՝ համապատասխան ընթերցվածներով, ներառում է նաև հատվածներ եկեղեցական հայրերի մատենագրական ժառանգությունից:

6. Հայսմավուրքում բովանդակված են սրբերի վարքերը: Անվանումը գալիս է ամեն վարքից առաջ սկսվող բառերից, օրինակ՝ հայսմ ավուր (այսինքն՝ այս օրը) տոնն է այսինչ սրբի: Նախկինում Հայսմավուրքից ընթերցվում էր օրվա սրբի վարքը ժամերգությունից առաջ: Հիմա Հայսմավուրքից սրբերի վարքեր կարդացվում են Երուսաղեմում երեկոյան ժամերգությունից առաջ:

7. Գանձարանը բովանդակում է եկեղեցական հատուկ երգեր, որոնք կոչվում են գանձեր և նվիրված են եկեղեցական հանդիսավոր տոներին: Գանձը հայ միջնադարյան հոգևոր երգարվեստի ժանր է, անվանումը գալիս է Սուրբ Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններից, որոնց տների սկզբնատառերը կազմում են *գանձ* բառը:

8. Տոնացույցը ցույց է տալիս եկեղեցական տոների կարգը, հերթականությունը:

9. Մաշտոցները լինում են երեք տեսակի՝ Փոքր Մաշտոց, Մայր Մաշտոց և Հայր Մաշտոց: Մշտոց անվանումն այս ժողովածուն կարգավորած և խմբագրած Մաշտոց Եղիվարդեցի Կաթողիկոսի (897 - 898) անունով է: Փոքր Մաշտոցը պարունակում է քահանայի կողմից կատարվող արարողությունների կարգը, Մայր Մաշտոցը պարունակում է Փոքր Մաշտոցի արարողությունները, ինչպես նաև եպիսկոպոսներին վերապահված ձեռնադրություն կամ տվչություն, օծում, պղծյալ եկեղեցիներ սրբելու, պատկերներ օրհնելու և օծելու, քահանայաթաղի կանոններ: Հայր Մաշտոցը պարունակում է կաթողիկոսներին վերապահված կանոններ՝ ձեռնադրության և օծման (եպիսկոպոսի), մյուռոնօրհնության, թագավորի օծման:

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ժամերգությունները յոթն են՝ ըստ 118.164 սաղմոսի. «Օրվա մեջ յոթն անգամ Քեզ պիտի օրհնեմ»: Յոթ ժամերգություններն ունեն իրենց անվանումները՝ Գիշերային, Առավոտյան, Արևագալի, Ճաշու, Երեկոյան, Խաղաղական, Հանգստյան: Ճաշու ժամերգությունը բաժանվում է երեք մասի՝ երրորդ, վեցերորդ և իններորդ, որով ժամերգությունները նկատվում են նաև ինը հատ՝ համապատասխան հրեշտակների դասերի թվին: Այժմ հիմնականում առավոտյան և երեկոյան ժամերգությունները կատարվում են ամեն օր, արևագալի ժամերգությունը՝ Մեծ Պահքի ընթացքում, Ճաշու ժամերգությունը՝ Մեծ Պահոց շրջանում պատարագ մատուցված օրերին, ճրագալույցներին և Ավագ Հինգշաբթի Պատարագից առաջ, Խաղաղական ժամերգությունը՝ Մեծ Պահքի ընթացքում երեկոյան ժամերգության փոխարեն, Հանգստյան ժամերգությունը՝ Մեծ Պահքի ուրբաթ օրերին:

Ժամերգությունները սկսվում և վերջանում են Տերունական աղոթքով (Մատթ. 6.10-13, Ղուկ. 11.2-4):

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ Ի ԴԵՄՍ

Գիշերային ժամերգությունը կատարվում է ի դեմս Հայր Աստծո, Առավոտյանը՝ Որդի Աստծո, որ երևեաց յուղաբեր կանանց, Արևագալը՝ Սուրբ Հոգու և Քրիստոսի Հարության, որ երևաց աշակարտներին:

Ճաշու երրորդ ժամերգությունը կատարվում է ի դեմս Սուրբ Հոգու իջման, նախամայր Եվայի ճաշակման և Քրիստոսով ազատության: Սուրբ Հովհան Օձնեցի Կաթողիկոսը (717-728) «Յաղագս կարգաց Եկեղեցւոյ» աշխատության մեջ նշում է, որ օրվա երրորդ ժամի համար այս ժամերգությունը կարգվեց, որովհետև, ինչպես ասում է Մարկոս Ավետարանիչը, Քրիստոս երրորդ ժամին (առավոտյան ժամը ինին) խաչվեց (15.25), և այդ ժամին էր, որ Եվան ենթարկվեց բանսարկուի հրապուրանքներին և ցանկացավ ճաշակել արգելված պտուղը:

Ճաշու վեցերորդ ժամերգությունը կատարվում է ի դեմս Հայր Աստծո և Որդի Աստծո չարչարանքների ու խաչելության: Ըստ Օձնեցու՝ այս ժամին նախամայրը պատվիրանը զանց առավ և ճաշակեց պտուղը, և այդ նույն ժամին նրա՝ մեղքի քաղցր ճաշակման փոխարեն Քրիստոս լեղիով խառնած քացախ ճաշակեց (Հովհ. 19.30)՝ ի բժշկություն պտղի դառնության:

Ճաշու իններորդ ժամերգությունը կատարվում է ի դեմս Որդի Աստծո մահվան և բանական հոգու ավանդման: Օձնեցին ասում է, որ այդ ժամին ելավ Ադամը դրախտից, և նույն ժամին Փրկիչը հոգին ավանդեց և Ադամին հանեց դժոխքից:

Երեկոյան ժամերգությունը կատարվում է ի դեմս Որդի Աստծո, որ իջեցվեց խաչից և պաստառով պատվելով դրվեց գերեզմանում: Օրվա ընթացքի անցուդարձից ու զբաղմունքից հոգնում է մարդը և այս ժամին խնդրում է, որ Աստված օգնի իրեն և բոլոր կարիքավորիներին, խնամքի կարոտներին: Խնդրում ենք, որ Տերն ազատի մեզ հոգսերից, ծանրակիր բեռներից և մենք, մեր հոգին սնելով աղոթքներով, սաղմոսներով, նաև մարմնապես զորանանք՝ գիշերային անկողնում հանգստանալով:

Խաղաղական ժամերգությունը կատարվում է ի դեմս Հոգի Աստծո, նաև Բանն Աստծո, որ դրվեց գերեզմանում և իջավ դժոխք ու խաղաղություն բերեց հոգիներին: Ժամագրքի սկզբում զետեղված ուղղափառ հավատքի դավանությունը պարունակող «Խոստովանիմք»-ում ևս նշվում է, որ Քրիստոսի մարմինը դրվեց գերեզմանում՝ աստվածությամբ միավորյալ, և Քրիստոս իջավ դժոխք հոգով՝ անբաժանելի աստվածությամբ, քարոզեց հոգիներին, ավերեց դժոխքը և ազատեց հոգիներին: Սա հաստատում է նաև Պետրոս առաքյալը (Ա Պետ. 3.18-19): Ժամերգությունը կատարվում է Մեծ Պահքի շրջանում: Ժամերգության երեք երգերն են «Շնորհեա մեզ Տէր», «Նայեաց սիրով» և «Ի քէն հայցեմք»: «Շնորհեա մեզ Տէր» երգի երկրորդ մասը՝ *Ընդ մեզ Տէր Աստուած* խոսքերից սկսյալ,

քաղվածք է Եսայու մարգարեության 8-րդ և 9-րդ գլուխներից, երգի յուրաքանչյուր տանը ավելացված են *զի Աստուած ընդ մեզ է - քանզի Աստված մեզ հետ է* բառերը, որոնք դարձյալ Եսայու խոսքերն են (8.9, 10): Խոսրով Անձևացին ասում է, որ Սևանի միաբաններն այս երգը երգում էին սարակինոսների՝ արաբների թշնամությունից, հարձակումներից ազատվելու համար: Ժամերգության երկրորդ և երրորդ երգերի հեղինակը Ներսես Շնորհալին է: «Նայեաց սիրով» երգի տների սկզբնատառերը կազմում են *Ներսեսի երգ* բառերը: Մեծ Պահքի շաբաթ և կիրակի օրերին խաղաղական ժամերգություն չի լինում:

Հանգստյան ժամերգությունը կատարվում է ի դեմս Հայր Աստծո, որ Միածնի պահպանողական Աջով պահպանի մեզ խավար գիշերվա ընթացքում:

ԺԱՄԱԳՐՔԻ ՔԱՐՈԶՆԵՐԻ ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու արարողությունների հիմնադիրը Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է:

Սահակ Պարթև (387-436) - Գիշերային ժամերգության վերջին 4 քարոզների և աղոթքների հեղինակ:

Հովհաննես Մանդակունի (478 – 490) - ժամագրքում նրան են պատկանում *Զարթուցեալքս* քարոզը, *Զքէն գոհանամք* աղոթքը:

Եզր Կաթողիկոս (631 – 642) - Արևագալի արարողության հեղինակն է:

Հովհաննես Սարկավագ (12-րդ դար) - *Բարերար և Բազումողորմ* աղոթքի հեղինակ:

Ներսես Շնորհալի (1166 – 1173) - հեղինակել է *Յիշեսցուք, Աշխարհ ամենայն, Առավոտ լուսոյ, Նայեաց սիրով, Ի քէն հայցեմք* երգերը և *Հաւատով խոստովանիմ* քսանչորս աղոթքները, որոնք ասվում են Հանգըստյան ժամերգության ընթացքում:

Հովհան Օձնեցի (717 – 728) և Խոսրով Անձևացի (Ժ դար) - գրել են ժամագրքի աղոթքների մեկնություններ:

Մաշտոց Ա Եղիվարդեցի (897 – 898) - Նրա անունով է Հայաստանյայց Եկեղեցու ծիսարանը, բայց Մաշտոցը ոչ թե ծիսական կարգեր հաստատեց, այլ դրանք ամփոփեց մեկ հատորի մեջ:

ՈՐՔԱՆ ՀԵՌՈՒ Է ԱՐԵՎԵԼՔՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ

Առաքելական առաջին կանոնն է՝ եկեղեցում աղոթել դեմքով դեպի արևելք, որը լույսի խորհրդանիշն է, նաև Քրիստոսի երկրորդ գալուստը

արևելքից է լինելու (Մատթ. 24.27): Եկեղեցիների գլխավոր մուտքը միշտ բացվում է դեպի արևելք, նաև գերեզմաններում ննջեցյալներին թաղում են դեմքով դեպի արևելք, որպեսզի Քրիստոսի երկրորդ գալստյանը՝ ընդհանրական հարության ժամանակ, ննջեցյալները հարություն առնեն դեմքով դեպի Քրիստոս: Եկեղեցու ներսում դեմքով դեպի արևմուտք են դառնում միայն սատանայից և նրա չար զորությունից հրաժարման ժամանակ, երբ արտասանում են համապատասխան «Հրաժարիմքը»: «Հրաժարիմքն» ասվում է Սուրբ Պատարագից առաջ, ինչպես նաև մկրտության արարողության ընթացքում: «Որքան հեռու է արևելքն արևմուտքից» (Սղմ. 102.12), հավատացյալն այնքան պետք է հեռանա մեղքից, սատանայական գայթակղություններից:

ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Մեծ Պահքի ընթացքում է կատարվում Արևագալի ժամերգությունը: Արևագալի ժամերգության կարգն սկսվում է պահքի առաջին չորեքշաբթի օրվանից: Այն թե՛ իր երաժշտականությամբ, թե՛ աղոթքներով այնպիսի հոգեվիճակ է ստեղծում ժամերգությանը ներկա մարդկանց ներաշխարհում, որ մարդկային հոգին հուզական ներշնչումներով իր աղոթքները վեր է բարձրացնում՝ մատուցելու երկնային բարձունքներից հոգատար

 սևեռած Ամենակալ Աստծուն: Արևագալի ժամերգությունը կատարվում է ի դեմս Սուրբ Հոգու և Քրիստոսի Հարության, այստեղ Քրիստոս համեմատվում է լույսի և արեգակի հետ:

ՆԱԽԱՏՈՆԱԿ

Յուրաքանչյուր մեծ տոնից առաջ եկեղեցում նախատոնակ է կատարվում: Այս բառն ինքը հուշում է, որ նախատոնակը տոնից առաջ կատարվող արարողություն է: Սուրբ Գրիգոր Տաթևացին նախատոնակը հետևյալ կերպ է բացատրում: Ինչպես որ թագավորի որևէ քաղաք գնալու ժամանակ նախ ավետավորներն են ժամանում, ապա քաղաքացիները զարդարում են իրենց ու քաղաքի փողոցները և պատրաստ սպասում, նույնպես է և տոների պարագային, որոնցից առաջ սակավ-ինչ հոգևորապես ուրախանում ենք և մեզ պատրաստում: Սրբերի տոների նախատոնակը կատարվում է երեկոյան, ինչպես որ տերունական, այսինքն՝ Տիրոջը նվիրված տոների նախատոնակը, որովհետև սրբերը Քրիստոսի աթոռակիցներն են, Նրա զինավորները: Նախատոնակի երեկոն խորհրդանշում է այս կյանքը, որի ընթացքում հավատքի ենք գալիս, իսկ հաջորդ՝ տոնի օրը, խորհրդանշում է հանդերձյալ կյանքը, որտեղ շնորհներով

տեսնելու ենք Փրկչին: Դրա համար էլ նախատոնակին դուրս ենք բերում Խաչն ու Ավետարանը, որոնք Քրիստոսի տնօրինության ապացույցներն են: Եվ Քրիստոս Ինքը մեզ երևում է Խաչով ու Ավետարանով: Քրիստոս մեզ նաև հավատքի լույսի բերեց, ինչը և խորհրդանշում են վառվող մոմերը: Նախատոնակին տոնում ենք սրբերի ելնելը երկինք, իսկ տոնի օրը՝ նրանց արժանանալը պսակի և փառքի:

ՃՐԱԳԱԼՈՒՅՑ

Հունվարի 5-ին մատուցվում է Ճրագալույցի պատարագ: Բառն ինքն արդեն նշում է պատարագի մատուցման ժամը՝ երբ սկսում են ճրագները լուցանել՝ վառել, այսինքն՝ երեկոյան: Նախկինում մեծ տոների առթիվ սովորություն կար եկեղեցու կանթեղները վառել ու ներկաներին մոմ բաժանել՝ դրանք կանթեղներից վառելու համար: Այժմ Ճրագալույց են կոչվում Սուրբ Ծննդյան և Սուրբ Զատկի նախորդ օրերը:

Տարեկան երկու անգամ՝ Սուրբ Ծննդյան և Սուրբ Հարության ճրագալույցի պատարագից առաջ, եկեղեցիներում ընթերցվում է մեկ ընդարձակ հատված Դանիելի մարգարեության երրորդ գլխից: Ընթերցվող հատվածը ներկայացնում է Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսորի հրամանը իր շինած կուռքին երկրպագելու, երիտասարդների՝ Դանիել մարգարեի և նրա երեք ընկերների հրաժարման և ճշմարիտ Աստծուն փառաբանելու մասին (3.1-90): Սարկավագներն այս ընթերցումն անում են Սուրբ Խորանից: Այդ ժամանակ Խորանի վարագույրը փակ է լինում: Սարկավագները դուրս են գալիս վարագույրի ետևից՝ ձեռքներին մոմեր բռնած: Դանիելի մարգարեությունից ընթերցվող հատվածը գալարաձև թղթի վրա է գրված լինում: Կենտրոնում կանգնելով՝ սարկավագներն ի լուր ամենքի բարձրաձայն հնչեցնում են այս ընթերցվածը: Գերության մեջ գտնվող երիտասարդներն իրենց անսասան հավատքի համար հալածվել են թագավորի կողմից: Նրանք՝ Դանիելի երեք ընկերները՝ Սեդրակը, Միսակը և Աբեդնագովը, գցվել են հրե հնոցի մեջ (Դան. 3.19-23), Դանիելը նետվել է առյուծների գուբը (Դան. 6.16), սակայն ամեն անգամ Աստված փրկել է նրանց: Երիտասարդների նետվելը հնոց, և նրանց փրկվելը մի գեղեցիկ խորհրդանիշ ունի: Հուրը մեղքերն են, երիտասարդները մարդիկ են, որոնց Քրիստոս աստված փրկեց մեղքերից և կործանումից: Սա շեշտվում է նաև ամեն օր Առավոտյան ժամերգության ժամանակ սարկավագի կողմից ասվող քարոզի մեջ, որտեղ նշվում է, թե Քրիստոս «էջ ի բոց հնոցին և փրկեաց զերիս մանկունսն ի քաղդեացւոց անտի», այսինքն՝ Քրիստոս իջավ հնոցի բոցի մեջ և երեք մանուկներին փրկեց քաղդեացիներից:

ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԺՈՂՈՎՆԵՐ

Ըստ եկեղեցական տոնացույցի՝ եկեղեցում տոնվում է Նիկիայի, Կոստանդնուպոլսի և Եփեսոսի երեք տիեզերաժողովներին մասնակցած Հայրապետների հիշատակը: Նիկիայի տիեզերաժողովին մասնակցում էին 318 Հայրապետներ, Կոստանդնուպոլսի տիեզերաժողովին՝ 150 Հայրապետներ, իսկ Եփեսոսի տիեզերաժողովին՝ 200 Հայրապետներ:

Նիկիայի տիեզերաժողովում դատապարտվեց Արիոսի ուսմունքը, ըստ որի, Քրիստոս արարած է: Կոստանդնուպոլսի տիեզերաժողովում դատապարտվեց Մակեդոնի մոլորությունը, որ մերժում էր Սուրբ Հոգու աստվածությունը, իսկ Եփեսոսի տիեզերաժողովում Նեստորի ուսմունքը, ըստ որի Քրիստոս ծնվեց որպես հասարակ մարդ և հետո աստվածությունը բնակվեց Նրա անձի մեջ, որով և Նեստորը Աստվածածնին անվանում էր պարզապես Քրիստոսածին:

Նիկիայի տիեզերաժողովում (325 թ.) հաստատվեց Քրիստոսի Աստվածությունը, Կոստանդնուպոլսի տիեզերաժողովում (381 թ.)՝ Սուրբ Հոգու Աստվածությունը: Իսկ Եփեսոսի ժողովը (431 թ.) դատապարտեց Նեստորի ուսմունքը՝ հաստատելով, որ Քրիստոս Աստված մարդկայնորեն ծնվելով՝ միաժամանակ կատարյալ մարդ է և կատարյալ Աստված, և այս երկու բնությունները միավորված են անխառն, անշփոթ և անբաժանելի կերպով, իսկ Սուրբ Մարիամ կույսը Աստվածածին է, որովհետև նրանից ծնվել է Աստված:

Տիեզերաժողովներին մասնակից Հայրապետների տոնի օրը երգվում է *Այսօր Սրբոց Հայրապետաց* և *Ով հրաշալի նախահարք* շարականները: Շարականների մեջ ասվում է, որ մեր Հայրերը հավաքվելով՝ հավատքի հիմքերը հաստատեցին առաքյալների ու մարգարեների հիմքի վրա և մաքրեցին հավատքը խեղաթյուրող ապականիչ որոմը: *Ով հրաշալի նախահարք* շարականի երգեցողության ժամանակ խորանի վարագույրը փակվում է իբրև սխալ ուսմունքից հրաժարման նշան: Հետո երգվում է շարականի *Ի Սուրբ Երրորդութենէն* մասը, որտեղ ասվում է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսին ճանաչում ենք իբրև Սուրբ Երրորդության անձերից մեկը՝ Բանն Աստված, որը եկավ մարդկանց փրկելու: Այս հատվածի երգեցողության ժամանակ վարագույրը բացվում է:

ԽԱՉՎԱՌ

Հռոմեական կայսրության մեջ հսկա տերությունը կառավարելու համար եղել են երկու գլխավոր ղեկավարներ՝ օգոստոսներ, մեկն արևել-

քում ու մյուսն արևմուտքում, և նրանց անմիջական օգնականները կոչվել են կեսարներ կամ կայսրեր: Բռնակալ Մաքսենտիոս կայսեր դեմ պատերազի ժամանակ, երբ Կոստանդիանոս կայսրը մոտեցել էր Հռոմին, ուր պիտի տեղի ունենար վճռական ճակատամարտը, նրան երևում է խաչի լուսեղեն նշանը երկնքում, և մի ձայն լսվում, թե սրանով պիտի հաղթես: Կոստանդիանոսն անմիջապես հրամայում է իր դրոշների վրա դնել խաչի նշանը և այդ դրոշները վեր բարձրացրած՝ գնում է մարտի ու հաղթանակ տանում:

Այս դեպքի հետ է կապված Պատարագի արարողության ընթացքում խաչվառի գործածությունը՝ իբրև հաղթության նշան: Խաչվառը խաչի, խաչելության կամ տնօրինական այլ պատկերով շրջանակավոր դրոշակ է՝ երկար ձողի վրա ամրացված, որ դուրս է բերվում եկեղեցական հանդիսավոր արարողությունների ժամանակ: Երբ պատարագիչ քահանան խնկարկությամբ իջնում է խորանից՝ խորհրդանշելով Քրիստոսի իջնելն առ մարդիկ, առջևից սարկավագը բարձր բռնած տանում է խաչվառը: Խաչվառն այս իմաստով գործածում են նաև մեծ տոների հանդիսավոր թափորների ժամանակ:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդի օրը հիշատակվում է Քրիստոսի փառավոր մուտքը Երուսաղեմ: Ըստ ավետարանական պատմության՝ մարդիկ ցնծությամբ էին դիմավորում Քրիստոսին՝ Նրա առջև ձիթենու և արմավենու ճյուղեր սփռելով: Որպես այս դեպքի հիշատակություն՝ այդ օրը եկեղեցիները զարդարում են արմավենու և ձիթենու ճյուղերով: Հայաստանում, քանի որ արմավենիներ և ձիթենիներ չկան, եկեղեցիների ներսը զարդարում են ուռենու ճյուղերով: Առավոտյան ժամերգության ավարտին հանդիսավոր կերպով կատարվում է անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են երկրի չորս կողմերը: Օրհնվում են նաև ուռենու ճյուղեր, որոնք բաժանվում են հավատացյալներին: Քրիստոսի Երուսաղեմ մուտքի և նրա առջև ճյուղեր սփռելու իրադարձությունը նաև փոխաբերական իմաստ ունի մեր կյանքում: Ճյուղերը մարդկային բարի և առաքինի գործերն են, որոնցով մենք ճանապարհ ենք պատրաստում Աստծո համար՝ մուտք գործելու մեր սրտերը:

ԴՌՆԲԱՑԵՔ

Շատ գեղեցիկ և խորհրդանշական է հատկապես Ավագ շաբաթից առաջ Մեծ Պահքի վերջին կիրակիի՝ Ծաղկազարդի երեկոյան կատարվող արարողությունը, որը կոչվում է Դռնբացեք: Եկեղեցու խորանը խորհրդանշում է Երկնքի Արքայությունը, իսկ խորանի վարագուրված լինելը ցույց է տալիս Արքայության փակված լինելը մեղավոր մարդկանց համար: Մեծ Պահոց շրջանի քառասուն օրերի ընթացքում մենք պահեցողությամբ զղջում ենք մեր մեղքերի համար՝ ավելի կատարելագործվելով, որովհետև պահքը սուգ է և տրտմություն գործած մեղքերի համար: Եվ միայն մեղքերից հրաժարված մարդը կարող է համարձակություն ունենալ խնդրելու, որ իր առջև բացվեն Երկնքի Արքայության դռները: Ահա այս գեղեցիկ իրողությունն է ներկայացնում դռնբացեքի արարողությունը:

Արարողության ընթացքում խորան են բարձրանում երեք հոգևորականներ և ծնկի գալով ու հատակին դրված մի փայտի բարձր թակելով (դռան թակոցներին նմանեցնելով)՝ հուզիչ երգեցողությամբ խնդրում են Տիրոջը բացել Արքայության դռները: Փակ վարագույրի մյուս կողմում ևս հոգևորականներ են լինում, ովքեր խորհրդանշում են երկնային զորություններին: Նրանց միջև հարցուպատասխանից հետո հայտարարվում է, որ երևում է Տերը, և իրենց մեղքերի համար զղջացած ու ապաշխարած մարդկանց առջև բացվում են Արքայության դռները: Այս գեղեցիկ արարողության խորհուրդը ներկայացնում է նաև Դռնբացեքի ժամանակ երգվող «Բաց մեզ Տէր» ազդեցիկ մեղեդին:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

Քրիստոսի Հարությանի տոնին՝ Սուրբ Զատկին նախորդող շաբաթը կոչվում է Ավագ շաբաթ: Համապատասխանաբար շաբաթվա օրերն էլ հիշատակվում են ավագ անունով: Ավագ երկուշաբթի օրը չորացած թզենու հիշատակն է: Քրիստոս Իր գործունեությամբ բոլորին բուժում էր և կյանք էր պարգևում, սակայն նա միայն մեկ անգամ բացասական իմաստով գործածեց իր զորությունը և չորացրեց թզենին (Մատթ. 21.19, Մարկ. 11.12 -14, 20-22): Ցույց տալու համար, որ Իր խոսքը կենդանարար է, Ինքն է կենդանացնում, բայց նաև դատում, Քրիստոս չորացրեց կանաչ թզենին և բուժեց չորացած ձեռքը: Քանի որ մոտենում էին Իր չարչարանքները, Քրիստոս թզենին չորացրեց, որպեսզի առաքյալները չմտածեին, թե Ինքը ուժերի թուլության պատճառով չարչարանքների մատնվեց: Քրիստոս թզենին չորացրեց նաև ցույց տալու համար, որ Իր գալստյամբ այլևս պետք չեն թզենու տերևները, որոնցով Ադամը ծածկում էր իր մերկությունը (Ծննդ. 3.7), և որոնք ծառայում էին իբրև ամոթի և խայտառակության ծածկոց:

Քրիստոս Երկնքի Արքայությունը նմանեցրեց կույսերի: Ավագ երեքշաբթի օրը՝ երեկոյան ժամերգության ընթացքում եկեղեցում ընթերցվում է տասը կույսերի առակը (Մատթ. 25.1-13): Այդ ժամանակ կույսերին խորհրդանշող տասը դպիրներ դուրս են գալիս եկեղեցու ատյան՝ վառվող մոմերով: Կույսերի մասին ավետարանական առակում հինգ կույսերը կոչվում են իմաստուններ, հինգը՝ հիմարներ (Մատթ. 25.2): Հիմարները մերժվում են Քրիստոսի կողմից և չեն կարողանում մտնել Երկնքի Արքայություն (Մատթ. 25.10-12): Եվ երբ ընթերցվում է այս հատվածը, հիմար կույսերին խորհրդանշողների մոմերը հանգցնում են: Ո՞րն էր Քրիստոսի մերժման պատճառը. չէ՞ որ բոլորն էլ կույսեր էին, բոլորն էլ ճգնությամբ պահել էին քրիստոնեության մեջ ամենամեծը համարվող կուսության առաքինությունը: Հիմար կույսերը բավականաչափ յուղ չունենալու պատճառով չկարողացան վառ պահել իրենց լապտերները և ուշացան: Յուղը խորհրդանշում է մարդասիրությունը և ողորմությունը, և հիմար կույսերը նրանք են, ովքեր այս մեծագույն առաքինությունն ունենալով հանդերձ ավելի շատ մտածում են երկրային բաների մասին և ամենաառաջին հերթին չեն աշխատում աստվածային կամքի իրագործման և Երկնքի Արքայությանն արժանանալու համար:

Ավագ չորեքշաբթին հիշատակն է Բեթանիայում կնոջ կողմից Քրիստոսի օծման (Մատթ. 26.6, Մարկ. 14. 3 -9, Յովհ. 12. 1 -8): Ավագ Հինգշաբթի օրը հիշատակվում է Քրիստոսի կողմից Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատումը: Այս օրը մատուցվում է բաց Պատարագ: Քրիստոս Վերջին Ընթրիքի ժամանակ հացն ու գինին տվեց ճաշակելու Իր աշակերտներին՝ ասելով որ հացը Իր Մարմինն է, իսկ գինին՝ Իր արյունը, որ հեղվում է մարդկանց մեղքերի քավության համար (Մատթ. 26.26, Մարկ. 14.22-24, Ղուկ. 22.19-20, Ա Կորնթ. 11.24-26): Մերժելի և անընդունելի են աղանդավորական այն բոլոր տեսակետները, որոնց համաձայն հացն ու գինին պարզապես Քրիստոսի Մարմնի և Արյան խորհրդանիշ են: Նման տեսակետ ունեցողներից են նաև բողոքականները: Այսպիսի պնդումները հակասում են հենց Քրիստոսի բառերին, ով հաղորդության համար երբեք չօգտագործեց խորհրդանիշ բառը: Քրիստոս նաև մեկ այլ տեղ ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չըմպեք Նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա» (Հովհ. 6.54): Յուրաքանչյուր մկրտված քրիստոնյա եկեղեցական մեծ տոներին՝ տարվա ընթացքում գոնե չորս կամ հինգ անգամ, պետք է հաղորդություն ստանա: Սակայն նաև մեկ այլ հանդիմանական խրատ կա՝ եթե դու այնպիսի մարդ ես, որ սիրտդ այդքան սառած է Աստծո հանդեպ, ապա տարին մեկ անգամ գոնե՝ Սուրբ Զատկի տոնին, պետք է հաղորդություն ստանաս եկեղեցում, որպեսզի ներքին էությամբ չդադարես

քրիստոնյա լինելուց: Մեծ մեղքերի պարագային հավատացյալը հաղորդության կարող է մոտենալ միայն հոգևորականի կողմից կարգված ապաշխարության երկարատև շրջանից հետո:

Ավագ Հինգշաբթի երեկոյան կատարվում է ոտնլվայի արարողությունը: Խորանի վրա բարձրաստիճան հոգևորականը հանում է իր զգեստները, գոգնոց կապում և լվանում ու յուղով օծում է տասներկու հոգու ոտքերը: Սա արվում է Քրիստոսի արարքի նմանողությամբ, երբ Քրիստոս ևս լվաց Իր տասներկու աշակերտների ոտքերը՝ խոնարհության նշան ցույց տալով, ու ասաց. «Մի օրինակ տվի ձեզ, որ, ինչպես Ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձևով անեք» (Հովհ. 13.15):

Ավագ Ուրբաթը հիշատակն է Քրիստոսի չարչարանքների և խաչելության: Քանի որ ըստ եկեղեցական կարգի՝ երեկոյան ժամերգությունից հետո է օրը փոխվում, ապա չարչարանքներին նվիրված արարողությունը կատարվում է հինգշաբթի ուշ երեկոյան: Արարողության ընթացքում ընթերցվում են Ավետարաններից հատվածներ Քրիստոսի երկրային կյանքի վերջին դեպքերի մասին (Հովհ. 13.16-18.1, Ղուկ. 22.1-65, Մարկ. 14.27-72, Մատթ. 26.31-56, Մատթ. 26.57-75, Հովհ. 18.2-27, Հովհ. 18.28-19.6): Խորանի վրա վառվող 13 մոմերը խորհրդանշում են Քրիստոսին և առաքյալներին: Ավետարանական յուրաքանչյուր ընթերցանությունից հետո հերթով հանգցնում են երկուական մոմ: Քրիստոսին խորհրդանշող մոմը մեջտեղում է դրվում, որը վերջում միայնակ վառվողն է դառնում, ինչը հիշեցնում է առաքյալներից լքված Քրիստոսի միայնակ մնալը: Իսկ Հուդային խորհրդանշող մոմը սև գույնի է լինում և չի վառվում: Ավագ Ուրբաթ օրը ծաղիկներից և մշտադալար ծառերի ճյուղերից պատրաստվում է Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը և երեկոյան ժամերգությունից հետո, ի հիշատակ Քրիստոսի թաղման, խորհրդանշական գերեզմանը հանդիսավոր թափորով եկեղեցուց դուրս է հանվում: Այն պտտեցնում են եկեղեցու շուրջը և երբ նորից եկեղեցի են բերում, հոգևորականները, հավաքվելով գերեզմանի մոտ, երգում են *Խաչի Քո Քրիստոս* օրհներգը, այնուհետև բոլորը համբուրում են գերեզմանի վրա դրված խաչն ու Ավետարանը: Մարդիկ վախենում են մահից, սակայն Քրիստոսի մահով և Հարությամբ մահը մեզ համար սարսափելի չէ, որովհետև մենք գիտենք հարության մասին: Այդ իսկ պատճառով այս գերեզմանը ոչ թե հողաթումբ է, այլ ծաղիկներից է, որը ոչ թե մահ, այլ կյանք, հավիտենություն ու երանություն է ավետում:

Ավագ Շաբաթ օրը մատուցվում է ճրագալույցի, իսկ կիրակի օրը՝ Սուրբ Հարության հանդիսավոր Պատարագ:

ԾԵՍԻ ԼԵԶՈՒՆ

Նկատի ունենալով եկեղեցական ծիսակատարությունների գրաբար լեզուն, որով հայությունն այսօր չի խոսում, ոմանք անհրաժեշտ են համարում գրաբար լեզվի փոխարեն խոսակցական լեզվի գործածումը եկեղեցական արարողություններում, հատկապես՝ Սուրբ Պատարագի արարողության ընթացքում: Սակայն Եկեղեցին նպատակահարմար չի նկատում ծիսական լեզվի փոփոխումը: Կան մի քանի պատճառներ: Այսօր աշխարհասփյուռ հայությունն ապրում է տարբեր երկրներում, որով ծեսի լեզվի փոփոխության պարագային պիտի խախտվի արարողությունների միօրինակությունը. կունենանք արևելահայերեն, արևմտահայերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն, ռուսերեն, իսպաներեն և այլ լեզուներով պատարագներ, և որևէ առիթով տվյալ երկրներում ապրող հայերը, մեկ այլ երկրում Սուրբ Պատարագի արարողությանը մասնակցելով, օտար և անհաղորդ պիտի լինեն: Մինչդեռ մեր Սուրբ Եկեղեցու արտասահմանյան թեմերում վաղուց արդեն գործածության մեջ են հավատացյալների համար նախատեսված պատարագամատույցները՝ հայերենին զուգահեռ համապատասխան խոսակցական լեզվով բացատրություններով, որով արդեն պարբերաբար եկեղեցի հաճախող հավատացյալը նույնիսկ մեկ այլ երկրում գրաբար երգեցողությունն ու աղոթքները լսելիս գիտի, թե որն է ասվածի իմաստը: Իսկ Հայաստանում գործածվում են պատարագամատույցներ, որտեղ մանրամասն բացատրված է Պատարագի յուրաքանչյուր հատվածի նշանակությունն ու իմաստը:

Մեր Սուրբ Եկեղեցու շարականների, հոգևոր երգերի, մեղեդիների խոսքերը ևս գրաբար են՝ բանաստեղծական գեղեցիկ հորինվածքներով ու չափերով: Եվ դրանք գրաբարից այլ լեզվի փոխադրելիս պիտի խախտվի բանաստեղծական չափը, ավելին՝ ըստ այդմ կայլափոխվի երաժշտությունը: Մեր եկեղեցական արարողությունները, դրանց տեքստերն ու երաժշտությունները նաև մշակութային արժեքներ են, իսկ մշակութային արժեքները չեն ենթարկվում փոփոխությունների:

Զարմանալի է, որ կան նման իրողություններ, որոնց առնչությամբ փոփոխման պահանջներ չեն հնչում: Օրինակ՝ իտալական օպերաներն ամենուր հնչում են իտալերեն լեզվով, և հանդիսատեսներն այն լսում և ընդունում են այդ լեզվով: Ոչ ոք չի պահանջում, որ հիվանդներին տրվող դեղատոմսերում բժիշկները դադարեն բժշկության մեջ լատիներեն լեզուն գործածելուց և բոլոր դեղատոմսերը գրեն ժամանակակից լեզվով: Բացի դրանից երիտասարդներն արտասահմանյան շատ երգեր են լսում, որոնց բառերը բոլորովին չեն հասկանում և դրանց դեմ չեն բողոքում: Մինչդեռ Պատարագի և մյուս արարողությունների լեզուն դասական հայերենն է, որի բառապաշարը ծանոթ է բոլորին, միայն այլ է քերականութ-

յունը: Եվ եթե նույնիսկ չլինեին Սուրբ Պատարագի առնչությամբ վերոնշյալ բացատրական միջոցները, պարզապես նախանձախնդրություն էր պետք՝ հասկանալու նպատակով գրաբարի մի քանի քերականական կանոններ սովորելու համար: Այսօր բազում մարդիկ օգտվում են համակարգչից, ինտերնետից, որի համար սովորում են անգլերեն տերմիններ ու խոսքեր: Եվ եթե սեփական հաճույքի կամ հետաքրքրության համար մարդիկ բոլորովին օտար բառեր ու եզրեր են սովորում, ուրեմն որքան առավել ևս պետք է նախանձախնդիր լինեն հոգևոր շահի համար մի փոքր բան սովորելու գործում:

Մեր օրերում շատ երիտասարդների հարազատ են աշխարհիկ երաժշտության տարբեր տեսակների հնչյունները, և եթե գնանք փոփոխությունների, ոմանք էլ պիտի ուզեն իրենց հասկանալի և հարազատ երաժշտություն Պատարագի, ժամերգությունների ժամանակ, և ավելի առաջանալով՝ պիտի պահանջեն նաև Քրիստոսի զոհագործության խորհուրդը հանդիսացող Պատարագի թատերականացում՝ առավել տեսանելի դարձնելու կատարվող զոհագործությունը: Ոմանք էլ պիտի պահանջեն մանրանկարների և սրբանկարների փոփոխում այսօրվա նկարչությանը հատուկ արտահայտչամիջոցներով կատարված նկարներով: Սակայն բացի փոփոխություն պահանջող մարդկանցից կան նաև բազում մարդիկ, ովքեր դեմ են այդ փոփոխություններին, և Եկեղեցին մի քանի մասերի չպիտի բաժանվի՝ մարդկանց ցանկություններին ընդառաջ գնալով: Նաև Եկեղեցին բազմադարյա հաստատություն է, որն իր կայունությունը պահպանում է իր առողջ պահպանողականությամբ, քանզի ամեն ժամանակ իր պահանջներն ունի, և ամեն ժամանակաշրջանում մարդկանց ցանկությունների համեմատ փոխվելով՝ Եկեղեցին Եկեղեցի չէր մնա:

Կաթոլիկ Եկեղեցին փորձ կատարեց ծիսական լեզվի փոփոխման, որոշ տեղերում անգամ արարողությունների երաժշտությունների արդիականացման, որը բոլորովին չբերեց մարդկանց և հատկապես երիտասարդների դեպի եկեղեցի հոսքի, ինչը որ սպասվում էր այդ փոփոխություններից: Մարդը, այնուամենայնիվ, հոգու խորքում ցանկանում է Եկեղեցին տեսնել ավելի վեր այս աշխարհի սովորական ընթացքից և սովորույթներից: Եվ, ինչպես նշվեց, լեզուն հասկանալու համար պարզապես պետք է ցանկություն և նախանձախնդրություն, երաժշտությունը հասկանալու և հոգեհարազատ զգալու համար՝ ապաշխարող խոնարհ հոգի, քանզի խորը զղջում և ապաշխարություն չապրած մարդը երբեք չի կարող հասկանալ հոգևոր երաժշտությունը: Իսկ սա նշանակում է, որ ոչ թե Եկեղեցին պետք է փոխվի ըստ մարդու, այլ մարդը պետք է փոխվի ըստ Եկեղեցու:

ԿՐԿԻՆ ԾԻՍԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սուրբ Մեսրոպ Մաշտոցը եղել է Սուրբ Ներսես Մեծ Կաթողիկոսի աշակերտը, եղել դպիր Հայոց թագավորի արքունիքում, այնուհետև դարձել զինվորական, բայց իր հոգու ձգտումին անսալով՝ հոգևոր ծառայության անցել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում՝ ճգնավորական կյանք վարելով: Սուրբ Մեսրոպը իր հոգևոր սպասավորության տարիներին մեծ դժվարության է հանդիպել Սուրբ Գրքի քարոզչության գործում, քանի որ եկեղեցական արարողությունները կատարվում էին հունարեն և ասորերեն լեզուներով, և Աստվածաշնչի օրինակներն էլ այդ լեզուներով էին: Քարոզիչներն այդ լեզուներով կարդում էին Աստվածաշունչը, այնուհետ բանավոր կերպով հայերեն թարգմանում ունկնդիրների համար, ինչը քիչ արդյունավետ էր ժողովրդի հոգևոր կարիքների բավարարման գործում:

Ոմանք ասում են, թե այսօր էլ նույն իրողությունն է, քանի որ եկեղեցական արարողությունները կատարվում են մարդկանց անհասկանալի գրաբարով: Սակայն այս պարագայում տեղին չէ հանգամանքների նույնություն տեսնել, որովհետև Մեսրոպ Մաշտոցը նախ Սուրբ Գրքի քարոզչության համար մտահոգված գրերի գյուտն արեց, իսկ այսօր եկեղեցական արարողությունների, հատկապես Սուրբ Պատարագի ընթացքում Աստվածաշնչից ընթերցումները կատարվում են ոչ գրաբար, ժողովրդին հասկանալի լեզվով, և հոգևորականների քարոզները հնչում են բոլորին հասկանալի լեզվով: Բացի դրանից հինգերորդ դարում եկեղեցական արարողությունների ընթացքում գործածական էին օտար լեզուները՝ հունարենն ու ասորերենը, իսկ հիմա՝ գրաբարը, որը ոչ թե օտար լեզու է, այլ դասական հայերենն է, որի հիմնական բառապաշարը ծանոթ է արդի հայերեն իմացող բոլոր անձանց, պարզապես կան քերականական որոշ տարբերություններ, որոնք դժվար չէ սովորելը:

Ոմանք էլ բողոքում են եկեղեցական երաժշտության ոչ արդիականացումից: Ճիշտ կարելի է համարել այն միտքը, թե երաժշտությունը զգացմունքների և կրքերի լեզուն է, ինչպես բառերը՝ բանականության լեզուն: Պլատոնն ասում է, որ մեղեդիների շարժումը հոգու հուզումների է նմանվում: Նաև Արիստոտելն ասում է, թե ինչու՞ երաժշտական ռիթմերը և մեղեդիները լինելով հասարակ հնչյուններ, այնուամենայնիվ, նման են լինում հոգևոր վիճակների: Եվ եկեղեցական արարողությունների ընթացքում աղոթքների գրաբար գեղեցիկ հնչողությունը ևս դարձել է հոգևոր երաժշտություն եկեղեցի միշտ հաճախողների համար, ովքեր պարբերաբար մասնակցելով եկեղեցական արարողություններին՝ հասկանում են

ամենօրյա աղոթքների և մաղթանքների իմաստը: Իսկ բողոքում են նրանք, ովքեր շատ հազվադեպ են լինում եկեղեցում, որով էլ և, բնականաբար, միշտ լինելով աշխարհիկ իրողությունների և հնչյունների շրջագծում՝ անհաղորդ են մնում եկեղեցական երաժշտությանն ու լեզվին: Եվ նման բողոքից կարելի է հստակ պատկերացում կազմել բողոքողի եկեղեցի այցելելու հաճախականության վերաբերյալ:

ՔԱՐՈԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՉԱՆՉՐԱԼԻ ՔԱՐՈԶՆԵՐ

Ոսկեբերանն իր անվանումը ստացել է հիանալի քարիզիչ լինելու համար: Պետք է իմանալ, որ տարբերություն կա քարոզչի և ուսուցչի միջև: Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված իր առաջին թղթում ասում է. «Իմաստությունը քարոզում ենք հոգեպես կատարյալներին» (2:6): Առաքյալի նշած իմաստությունը Քրիստոսի և հավատքի մասին պարզ քարոզ չէ, այլ կրոնափիլիսոփայական դատողություններ քրիստոնեության էության և հիմքերի, Աստծո տնտեսության ծրագրերի մասին: Այդպիսի ուսմունք շարադրելը քարոզչի գործ չէ, այլ ուսուցչի: Քարոզիչը հիմնականում դիմում է մեղավորի սրտին և ցույց է տալիս խաչը՝ իբրև հոգին մեղքերից մաքրելու միջոց, իսկ ուսուցիչը, դիմելով առավելաբար մտքին, զարգացնում է հավատացյալների ճանաչողությունը և դրանով ամրացնում քրիստոնեական սիրո զգացումը: Նկատելի է, որ Սուրբ Հովհան Ոսկեբերանի քարոզները երկու ուղղվածությամբ են. դիպչում են և՛ սրտին, և՛ մտքին, մարդուն բերում զղջման ու հաստատում սիրո մեջ և միևնույն ժամանակ կարևոր ուսուցումներ տալիս մտքին Սուրբ Գրքի և հավատքի մասին:

Ոսկեբերանը գիտեր, որ երբեմն քարոզները ծանձրույթ են պատճառում: Ձանձրույթի մասին փիլիսոփաներից մեկն ասել է, որ բավականության հապաղումը տանջնաք է ծնում, իսկ նոր ցանկության հապաղումը՝ ձանձրույթ, և մենք սովորաբար ձանձրանում ենք նրանց հետ, ովքեր ձանձրանում են մեզ հետ: Նաև պետք է հիշել, որ ամենից շատ ձանձրացնում է նա, ով համոզված է, թե իբր ինքը ոչ ոքի չի կարող ձանձրացնել: Հետևաբար, քարոզիչը պետք է ընդառաջ գնա մարդկանց՝ ներաշխարհի նոր հոգևոր արժեքներ ու գիտելիքներ ձեռք բերելու ցանկությանը՝ զգուշանալով ավելորդ կրկնաբանություններով ու խոսքերի սակավիմաստ կուտակումով ձանձրույթ պատճառելուց:

Բայց նաև հավատացյալները պետք է համբերատար լինեն հետևյալ հանգամանքում: Ոմանց համար ամեն տարի տոների առիթով եկեղեցական քարոզի պատմական մասը կրկնողության պատճառով երբեմն ձանձրալի է թվում, սակայն Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է. «Եթե քարոզի մեջ քո իմացած բանն ես լսում, և դա քեզ ձանձրացնում է, համբերիր, որովհետև կան այնպիսիք, ովքեր նոր են իմանում: Եկեղեցին մի մարմին է: Երբ ոտքը փուշ է մտնում, աչքերը խոնարհվում են և չեն ասում, թե ես բարձր եմ»: Օգտակարության այս նկատառումով է հին աշխարհի փիլիսոփան ասել. «Եռակի գեղեցիկ է կրկնել գեղեցիկը», նաև Պողոս առաքյալը նշել. «Ուրեմն, իմ եղբայրնե՛ր, ուրա՛խ եղեք ի Տեր. նույն բաները ձեզ գրելն ինձ համար ձանձրալի չէ, իսկ ձեզ համար մեծ ապահովություն է» (Փիլիպ. 3.1):

ՔԱՐՈԶՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Քարոզը երբեմն երիտասարդների վրա սպասված ազդեցությունը չի թողնում: Մի անգամ փիլիսոփա Կանտին հարցրել են, թե ի՞նչն է պատճառը, որ առաքինությունների մասին ուսուցումները, ինչքան էլ համոզիչ լինեն բանականության համար, այդքան քիչ հաջողություն ունեն: Ըստ Կանտի՝ պատասխանը միայն մեկն է. իրենք ուսուցիչները իրենց համար հստակորեն չեն պարզել իրենց հասկացությունները և ցանկանալով դա ուղղել՝ եղածն ավելի փչացնում են նրանով, որ ամեն տեղից հավաքում են բարոյական բարուն մղող պատճառներ, որպեսզի դեղը, ինչպես պետք է, ուժեղ դարձնեն: Սակայն ամենասովորական ուսումնասիրության դեպքում պարզվում է, որ եթե մեզ ցույց են տալիս ազնիվ արարք, որը հակառակ մեծ փորձություններին և գայթակղություններին անսասան ոգով կատարվել է առանց որևէ մտադրության՝ այս կամ այն աշխարհում օգուտ քաղելու և շահ ստանալու, ապա այն շատ անգամներ գերազանցում է և ստվերի տակ թողնում նման մեկ այլ արարք, որի վրա թեկուզ ամենա-չնչին ձևով ազդել է ինչ-որ շարժառիթ: Անշահախնդիր բարոյական արարքի օրինակն է բարձրացնում ոգին և ցանկություն առաջացնում գործելու նույն ձևով: Նույնիսկ երիտասարդներն զգում են այդ ազդեցությունը, այդ պատճառով էլ պարտականությունները երբեք չպետք է երիտասարդներին ցույց տալ այլ ձևով: Ահա այսպիսին է եղել հայտնի փիլիսոփայի կարծիքը:

Նաև դարեր առաջ Հովհան Ոսկեբերանն ասում էր, որ առաքինություն պետք է գործել հանուն առաքինության, որովհետև մենք ևս կվիրավորվեինք, եթե մեզ սիրեին ոչ թե հանուն մեզ, այլ հանուն ուրիշների: Նաև Պողոս առաքյալն է ուսուցանում. «Ամեն ինչ արե՛ք Աստծու փառքի

համար» (Ա Կորնթ. 10.31): Հետևաբար, մեր հոգևոր կյանքում չպետք է վարվենք, այսօրվա արտահայտությամբ, առևտրային հարաբերություններով, այսինքն՝ չպիտի առաջնորդվենք շահ ստանալու ակնկալիքով: Սակայն միևնույն ժամանակ կարող ենք իմանալ, որ մեծագույն շահը՝ հավիտենություն, Երկնքի Արքայություն, փառք ունենալու ենք որպես արդյունք մեր հավատավոր կյանքի և առաքինի գործերի: Սա նշանակում է, որ շահ ունենալը չպետք է դիտենք իբրև նպատակ, այլ առաքինություն գործենք հանուն առաքինության՝ ամեն ինչ անելով Աստծո փառքի համար:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐ

Դարեր առաջ Պլատոնը և Սենեկան հարցադրում են արել, թե կարելի՞ է արդյոք բարեգործություն, բարի գործեր անել սովորել: Այս առնչությամբ ոմանք մնացել են այն կարծիքին, որ հարցին պետք է բացասական պատասխանել՝ նկատի ունենալով նաև քրիստոնեական ուսմունքը շնորհի և նախասահմանման մասին, ինչպես առաքյալն է ասում. «Աստծու շնորհով փրկվածներ եք հավատի միջոցով. և այս ձեզնից չէ, այլ պարգևն է Աստծու, ոչ էլ ձեր գործերից է, որպեսզի ոչ ոք չպարծենա. որովհետև նրա արարածներն ենք՝ Քրիստոս Հիսուսով ստեղծվածներ բարի գործերի համար, որոնց համար էլ Աստված առաջուց պատրաստեց մեզ, որպեսզի դրանք կատարենք» (Եփ. 2.8-10): Այն տեսակետն է արտահայտվում, որ ինչպես հանճարը և էսթետիկայի բոլոր պրոֆեսորները միասին վերցրած չեն կրող մարդու մեջ ներդնել հանճարեղ արվեստի, իրական գեղարվեստական ստեղծագործությունների ստեղծման ընդունակություն, ճիշտ այդպես էլ բարոյականության ոչ մի պրոֆեսոր և բարեգործության քարոզիչներ ի վիճակի չեն անշնորհակալ բնավորությունը փոխել և նման անձի մեջ արմատավորել բարեգործություն և առաքինություն: Սակայն մարդն ըստ բնության բարի է ստեղծված և չարագործության է գնում սատանայի գայթակղություններով, և «եթե մեկն ինքն իրեն մաքրի այդպիսի բաներից, կլինի պատվավոր անոթ՝ սրբագործված և պիտանի իր Տիրոջը, պատրաստված ամեն բարի գործի համար (Բ Տիմ. 2.21): Ուստի, պետք է, որ «հոգ տանենք միմյանց՝ սիրո և բարի գործերի հորդորելով» (Եբր. 10.24):

ՆՈՐ ՏԱՐԻ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հետաքրքիր կլինի իմանալ, թե մարդիկ երբվանից սկսեցին Նոր տարին կամ Ամանորը նշել հունվար ամսին, և ի՞նչպես էին վարվում դրանից առաջ: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ Նոր տարին սկսեց տոնվել հենց բաբելոնյան աշտարակաշինությունից հետո: 72 ազգերը ցրվեցին ամեն մեկն իր երկիրը, և յուրաքանչյուրը սկսեց տարեմուտ անել այն օրը, երբ մտան իրենց հատկացված աշխարհը: Նույնը տեսնում ենք նաև Աստվածաշնչում: Աստված հրահանգում է հրեաներին, որ Եգիպտոսից դուրս ելնելու ամիսը համարեն առաջին ամիսը: «Այն թող տարվա առաջին ամիսը լինի» (Ելք 12.2),- ասում է Աստված: Երբ 72 ազգերից յուրաքանչյուրը հասավ իրեն սահմանված երկիրը, այդ ամիսը համարվեց ամիսների և տարվա սկիզբ: Ահա այսպես հրեաների տարվա սկիզբը եղավ նիսան ամիսը, հռոմեացիներինը՝ հունվարը, հայերինը՝ նավասարդը և այլն: Սակայն քրիստոնեությունից հետո եկեղեցական Հայրերը որոշեցին նոր տարվա սկիզբը տոնել հունվարին, որը ձմռանն էր, և ըստ քրիստոնեական ուսուցումների՝ դրա մեջ կարելի էր հատուկ խորհուրդ տեսնել: Սակայն մինչ դրա բացատրությանն անցնելը, նախ տեսնենք, թե որտեղից է առաջացել հունվար ամսվա անունը: Հեթանոսության շրջանում հռոմեացիները մի աստված ունեին Յանուս անունով, որը երկու դեմք ուներ, մեկը նայում էր դեպի ետ, իսկ մյուսը նայում էր դեպի առաջ: Սա խորհրդանշում էր անցյալը և ապագան, անցնող և գալիք տարիները: Եվ ահա հենց սրա անունով էլ կոչվել է այդ ամիսը: Ձմռանը Նոր տարին նշում են հիմնականում քրիստոնյաները, և սրա խորհուրդը հետևյալն է: Ձմռանն ամեն ինչ մեռնում է, և դա է ցույց տալիս նաև այդ անվան նշանակությունը՝ ձմեռ կամ ձյունամեռ, այսինքն՝ ձյունից ամեն ինչ մեռնում է՝ բույսերը չորանում են, ծառերը մերկանում, ջրերը սառչելով պաղում, և երկիրը դադարում է ծննդից: Նույնպես և մեղքով մեռած հոգիները պաղում են Աստծո սիրուց: Եվ այս տեսանկյունով տարվա սկիզբը քրիստոնյա Հայրերը ձմռանը դրեցին, որպեսզի մենք մեր մեղքերի զազիր գործերը հիշելով՝ զղջանք մեր հոգում: Ձմեռը նաև մեզ հուշում է մեր ելքը այս կյանքից, սակայն քանի որ այն իր մեջ նաև ապագա հարության խորհուրդն ունի, ապա մեզ նաև հիշեցնում է հավիտենական կյանքի մասին: Իսկ ինչու՞ է այդ մեկամյա ժամանակամիջոցը կոչվում տարի: Տարի է կոչվում, որովհետև տարավ մեր կյանքի մի մասը, և ժամանակը տարավ ու տանում է ամեն բան, և մեզ ոչինչ չի մնալու: Հետևաբար, չպետք է հոգանք միայն անցողիկ կյանքի, նյութական իրերի համար, այլև հոգևորի և հավիտենականի համար:

ՁՄԵՌ ՊԱՊ ԿԱՄ ՍԱՆՏԱ ԿԼԱՈՒՍ

Սուրբ Նիկողայոսը մասնակցել է Նիկիայի 325 թ. տիեզերաժողովին: Քրիստոնեական այս մեծ սուրբն իր կյանքի ընթացքում գործել է բազում հրաշքներ և առավելապես հայտնի է իր բարի գործերով: Նա գաղտնի օգնում էր կարիքավորներին՝ գիշերները ծածուկ կերպով նրանց տները դրամ գցելով: Պատմում են նաև, որ Սուրբ Նիկողայոսը, ամեն օր մեկական ոսկի գցելով անառակ կանանց պատուհանից ներս, նրանց այս ձևով զերծ է պահել անառակությունից: Նաև մանուկների հանդեպ սիրո և մեծ հոգածության համար Սուրբ Նիկողայոսը համարվում է մանուկների պաշտպան և հանդիսանում է նախատիպարը այն բարի պապիկի, ով մեծ ուրախություն և գեղեցիկ նվերներ է բերում Նոր Տարվա հեքիաթային օրերին: Սուրբ Նիկողայոսի անվան ձևափոխումից էլ առաջացել է բոլորիս հայտնի Սանտա Կլաուս անունը:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՄՍԱԹԻՎՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

Առաջին ամսվա առաջին օրը եկեղեցիներում նշանավորվում է Սուրբ Պատարագի արարողությամբ: Տարվա սկիզբ տոնելը և առաջին օրը նշանավորելն աստվածային պատվեր է: Հնում հրեաները տոնում էին բոլոր ամիսների ամսամուտները՝ ամսվա առաջին օրերը, և այդ օրերի համար Մովսեսը հատուկ զոհեր էր սահմանել, համաձայն հետևյալ խոսքի. «Ամսվա առաջին օրերին Տիրոջը ողջակեզ կմատուցեք նախրից բերված երկու զվարակ, մեկ խոյ, մի տարեկան ոչ արատավոր յոթը գառ: Այս ողջակեզները պիտի մատուցեք յուրաքանչյուր ամսվա առաջին օրը, տարվա բոլոր ամիսներին» (Թվեր 28.11, 14):

Հայ Եկեղեցին տոնում է միայն տարվա առաջին ամսվա ամսամուտը, որպես մեր Փրկչի Ծննդյան թվականի առաջին ամսվա առաջին օրը, և այդ օրը մատուցվում է Սուրբ Պատարագ:

Մինչ Բաբելոնյան աշտարակաշինություն բոլոր ազգերը միասին էին տոնում Նոր տարին՝ նիսան ամսվա 1-ին: Նիսան նշանակում է կազմություն, լինելիություն, որովհետև այդ ամսին ստեղծվեց Ադամը: Բայց լեզուների խառնումից հետո մարդիկ ցրվեցին տարբեր կողմեր, յուրաքանչյուր խումբ իր երկիրը գնաց, և որ ամսին մտան իրենց բնակության երկիրը, այդ ամիսն էլ համարեցին տարվա սկիզբ: Այսպես հայերի մոտ Ամանորը նավասարդի 1-ին էր, որը համապատասխանում է օգոստոսի 11-ին: Այդ առիթով կազմակերպվում էին բազմատեսակ զվարճություններ, խաղեր, որոնք հայտնի էին նավասարդյան խաղեր անունով և նման էին հունական օլիմպիական մարզական խաղերին, որոնց հաստատողը հույն հերոս Հերակլեսն էր: Միայն հրեաները շարունակեցին Նոր տա-

ին նշել նիսան ամսին, որովհետև եբրայեցիների տարեմուտը նիսանի 1-ին է, քանզի հրեաները նիսան ամսին ազատվեցին Եգիպտոսի ստրկությունից և առաջնորդվեցին դեպի իրենց վիճակված երկիրը, որը Տիրոջ նախա-խնամությամբ համընկավ Ադամի արարման օրվա հետ: Հեթանոսներն Ամանորի առիթով մեծ զվարճություն, գինարբուք էին անում: Նույնիսկ նրանք, ովքեր հեռու էին հարբեցողությունից, մասնակցում էին գինարբուքին, որովհետև հեթանոսական սնահավատությամբ կարծում էին, թե ինչպես այդ օրն անցկացնես, այդպես էլ կանցնի ողջ տարին:

Եկեղեցական մեծագույն դեմքերից Օգոստինոսը բացասաբար էր անդրադառնում նաև քրիստոնյաների շրջանում նմանատիպ մեղսալի զվարճություններին՝ նշելով, որ շատ մարդիկ կենդանիների, հեթանոսական կուռքերի նմանությամբ դիմակներ էին հագնում: Իսկ Սուրբ Հովհան Ոսկեբերանը Նոր տարվա տոնակատարությունների մասին ասում է. «Ողջ գիշեր ծիծաղը, աղմուկն ու չարաբանությունը, գիշերային պարերն ու կատակները գերել են մեր քաղաքը: Ամենից շատ ինձ տխրեցնում է հյուրանոցներում անցկացվող մեղսագործ և անժուժկալ խաղերը»: Մեղսագործ՝ որովհետև այնտեղ զբաղվում էին գուշակությամբ ու կարծում, որ եթե այդ օրը ուրախության, խրախճանքի մեջ անցկացնեն, ապա տարին էլ այդպես կանցնի, իսկ անժուժկալ՝ որովհետև կանայք և տղամարդիկ առանց չափի զգացման դատարկում էին գինով լի բաժակները: Սուրբ Հովհան Ոսկեբերանի խորհուրդն այն է, որ ամիսների սկիզբն ի-մաստավորելու համար ճիշտ կլինի խորհել կյանքի անցած օրերի շուրջ. արդյո՞ք անպտուղ չեն անցել տարիները, ժամանակը ապարդյուն չի՞ հոսել, արդյոք ի՞նչ բարի գործ ենք արել: Նման ինքնաքննումը մեզ կբերի նոր եզրահանգումների և ավելի կատարյալ կդարձնի մեր քայլերը նոր տարում:

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐ

Հին և նոր տոմարներ արտահայտությունը լսում ենք հատկապես Ամանորի օրերին, երբ խոսվում է Նոր տարին նաև հին տոմարով դիմավորելու մասին: Ի՞նչ են հին և նոր տոմարները: Նոր տարին հունվարի 1-ին սկսեց տոնվել Ն.Ք. 46 թվականին՝ Հուլիոս Կեսարի օրոք, երբ նրա կողմից գործածության մեջ դրվեց մի նոր տոմար, որը նրա անունով կոչվեց հուլյան տոմար: Ըստ այդ տոմարի՝ տարին ուներ ոչ թե 365 օր, 5 ժամ, 48 րոպե, 46 վայրկյան, այլ 365 օր, 6 ժամ, այսինքն՝ ճշգրիտ հաշվումներով որոշված տարուց 11 րոպե 14 վայրկյանով երկար էր: Սխալմունքը վերացնելու նպատակով Հռոմի Գրիգոր 13-րդ պապը Եվրոպայի նշանավոր տոմարագետներին հրավիրում է Հռոմ, որպեսզի նորը մշակեն: Բազմաթիվ նախագծերից ընդունվում է իտալացի բժիշկ և աստղագետ Ալոիս

Լիլիոյի նախագիծը, որը կիրառվեց 1582 թվականի հոկտեմբերի 15-ից: Քանի որ հուլյան տոմարի 11 որպե 14 վայրկյանի սխալը Ն.Ք. 46 թվականից մինչև 1582 թիվը կուտակվել դարձել էր 10 օր, այսինքն՝ ժամանակը 10 օր ետ էր ընկել, ուստի սխալն ուղղելու համար որոշվեց 1582 թ. հոկտեմբերի 4-ից հետո ոչ թե հոկտեմբերի 5 ընդունել, այլ՝ հոկտեմբերի 15:

Այսպես սկսվեց նոր տոմարը, որը Հռոմի Գրիգոր պապի անունով կոչվեց «Գրիգորյան»: Մոտ 340 տարվա ընթացքում նոր տոմարն ընդունեցին աշխարհի գրեթե բոլոր քրիստոնյա ժողովուրդները: Վերջինն ընդունեց Եգիպտոսը (1928 թ.), իսկ Ռուսաստանը նոր տոմարին անցավ 1918թ. հունվարի 1-ին: Քանի որ 1582 թվականից մինչև 1918 թվականը, այսինքն՝ 336 տարում վերոհիշյալ 11 որպե 14 վայրկյանը կուտակվել-դարձել էր 3 օր, ուստի այդ երկրում նոր տոմարը հնից երկար էր ոչ թե 10, այլ 13 օրով: Այստեղից էլ նոր տոմարի համեմատ հին տոմարի 13 օրվա տարբերությունը:

ՀՈՐԴՈՐԱԿՆԵՐ

ՀՐԱԺԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՑ

Ձեռնադրության ժամանակ սարկավագները կամ քահանաները խորանի վրա ծնկած, դեմքով դեպի ժողովուրդը, ձեռքերը ափերն ի դուրս վեր բարձրացնելով՝ հրաժարվում են աշխարհից և նվիրվում Աստծուն ծառայության: Աշխարհից հրաժարումը չի նշանակում, թե պետք է կապերը խզեն աշխարհի հետ: Հովհաննես առաքյալի «Մի՛ սիրեք աշխարհը, և ինչ որ աշխարհի մեջ կա» (Ա Հովհ. 2.15) հորդորի կողքին նրա Ավետարանում նա նաև հետևյալ հոգեպարար վկայությունը. «Աստված այնքան

կ Իր միածին Որդուն տվեց» (Հովհ. 3.15): Աշխարհում կան շատ գեղեցիկ իրողություններ, բնություն, արեգակի լույս ու ջերմություն և այլն, որոնք մենք պետք է վայելենք և ոչ թե մերժենք, իսկ աշխարհից հրաժարում նշանակում է հրաժարվել մեղքերից և աշխարհի մեղավոր ուրախություններից ու հաճույքներից: Հոգևորականների ձեռնադրություններն արարողության պերճախոս լեզվով քարոզ են նաև հավատացյալների համար՝ հուշելով, որ այդպիսին պետք է լինեն ոչ միայն հոգևորականները, այլև յուրաքանչյուր քրիստոնյա: Այսպիսով, աշխարհից հրաժարված, բայց միևնույն ժամանակ աշխարհը սիրելով՝ փորձենք մեր կյանքը ապրել Քրիստոսի պատվիրանների համաձայն, սիրենք ոչ միայն մեր բարեկամներին, որովհետև Քրիստոս ասում է, որ դրա համար վարձք չկա, քանզի ամենամեղավոր մարդիկ էլ կարողանում են

դա անել (Մատթ. 5.44-46), այլ փորձենք սիրել նաև մեր թշնամիներին, որպեսզի նաև հոգևոր ներքին խաղաղություն հաստատենք մեր ներաշխարհում և այդ խաղաղությունը ձեռք բերելով՝ կարողանանք մեր կյանքում իրագործել Աստծո տված ամենամեծ պատվիրաններից մեկը, որն ասում է. «Կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5.48):

ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՉԵՎԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Առաքյալների քարոզչությամբ հեթանոսները դարձի եկան, հրաժարվեցին իրենց արատավոր սովորություններից և նույնիսկ նահատակվեցին հանուն քրիստոնեության: Եթե նրանց՝ հեթանոսությունից նորադարձներին, համեմատենք այսօրվա շատ քրիստոնյաների հետ, մեծ տարբերություն կտեսնենք: Կարո՞ղ ենք արդյոք պատկերացնել, որ վաղ շրջանի քրիստոնյաները, ովքեր վախով, մահվան սպառնալիքի տակ աստվածպաշտության համար հավաքվում էին գետնափոր խորշերում, քարանձավներում՝ կատակոմբներում, աղոթավայր մտնելով՝ միայն մեկ կամ մի քանի մոմ վառեին ու դուրս շտապեին՝ մտածելով, թե մոմ վառելով ապրեցին իրենց քրիստոնեական կյանքը: Այն ժամանակ նախանձախնդիր էին հատկապես ողջախոհության համար: Միչդեռ երեք դար առաջ ապրած փիլիսոփաներից մեկն ասում է, որ կանացի ողջախոհությունը դա մասնավորապես միայն հոգատարություն է բարի անվան և հանգստության համար: Ակներև է, որ եթե հանգիստը և բարի անունը չխաթարվեր, ոմանք նաև այլ քայլերի պիտի դիմեին: Կամ կարո՞ղ ենք պատկերացնել այն ժամանակվա ողջախոհությանը նախանձախնդիր կին քրիստոնյաներին, որ հեռու լինեին աղոթքից, աստվածպաշտությունից և կամ քարանձավ-աղոթավայրում մի քանի րոպե աղոթելուց հետո շտապեին իրենց տները՝ հեռուստացույցով դիտելու ֆիլմեր, սերիալներ, կամ այն ժամանակներին հատուկ թատերական ներկայացումներ, որոնցում ցուցադրվող շատ տեսարաններ և կամ որոնց գաղափարն ընդհանրապես հակասում է ողջախոհության գաղափարին: Կամ պատկերացնենք, որ այն ժամանակի նորադարձ քրիստոնյաները Աստվածաշունչ ունենային, բայց այն օգտագործեին ոչ թե ընթերցանության, այլ ցուցադրության համար. դնեին գրքերով լի գրադարակի ցուցափեղկի դիմացը՝ երեսով դեպի դուրս, որպեսզի իր տուն եկողները տեսնեն, որ ինքը Աստվածաշունչ ունի: Եվ կամ Աստվածաշունչը գործածեին գեղագիտական նպատակների համար, այն դնեին գրադարակի առջևում, որովհետև ոսկե տառերով կամ վրան խաչով Աստվածաշունչը գեղեցիկ է նայվում գրքերով լի գրապահարանի ֆոնի վրա: Եվ կամ աստվածպաշտության

հետ մեկտեղ նաև զբաղվեին աստղագուշակությամբ և աստղագուշական տեսություններին հետևելով, որոնք այսօր լայնորեն սփռվում են հեռուստացույցով և այլ միջոցներով: Զավեշտալի է այս ամենը պատկերացնելը այն ժամանակի քրիստոնյաների համար: Եվ մենք պետք է ձգտենք բարձր պահել մեր ժողովրդի պատիվը՝ իբրև աշխարհում առաջին քրիստոնյա ժողովուրդ, ամեն ջանք ներդնելով, որպեսզի հանկարծ մի օր մեր աստվածպաշտությունը երբեք չվերածվի ձևապաշտության:

ԺԱՄԱՆԱԿ ՀՈԳԵՎՈՐԻ ՀԱՄԱՐ

Անհնար է, որ որևէ մեկի բարի աղոթքներն անպատասխան մնան: Եվ բազում ու բազում մարդիկ այսօր համոզվել են, որ իրենց կյանքում չի եղել որևէ բան, որ Աստծուց խնդրեն և չստանան: Սակայն կան մարդիկ, ովքեր ասում են, որ աղոթքով իրենց շատ խնդրանքներ չեն կատարվել: Մեր Եկեղեցու մեծագույն Կաթողիկոսներից մեկը՝ Հովհան Մանդակունին, ասում է, որ եթե քո որևէ աղոթք անպատասխան է մնացել, ապա պատճառն այն է, որ ջերմեռանդությամբ չես խնդրել: Բայց աղոթող մարդկանց թվում նաև այնպիսիները կան, ովքեր շատ հազվադեպ են եկեղեցի հաճախում, երկրային գործերով տարված լինելու պատճառով ուշադրությամբ չեն աղոթում և ասում են, որ ժամանակ չունեն թե՛ եկեղեցի հաճախելու և թե՛ Աստվածաշունչ կարդալու: Բայց հենց այստեղ է սատանայի խորամանկությունը, երբ հերթը հասնում է հոգևորին ժամանակ տրամադրելուն՝ օրվա մեջ գոնե մի փոքր ժամանակահատված Աստվածաշունչ ընթերցելուն կամ աղոթելուն, մարդը մտածում է, որ դրա համար ինքը ժամանակ չունի: Ոմանք հարցնում են. «Ինչի՞ համար աղոթենք, եթե Աստված ամենագետ է և գիտի մեր կարիքները»: Աղոթելը առաջին հերթին մեզ համար է, որովհետև այն սրբացնում է մարդուն, նրանից հեռու է վանում անառակ և վատ մտքերը, իսկ երբ մարդն աղոթում է իր թշնամու համար, դրանից փոխվում է ոչ միայն թշնամին, այլև մարդը լցվում է մեծ բարությամբ, և իրենից հեռանում են նաև թշնամական մտքերն ու զգացմունքները: Աղոթքով է, որ մենք զրուցում ենք Աստծո հետ, որպես մեր ամենամոտ հարազատի, և դրանով ամրանում և ջերմանում է նաև մեր սերն Աստծո հանդեպ: Իսկ ինչ վերաբերում է մեր առօրյա հոգսերի մեջ հոգևորի համար ժամանակ չունենալուն, ապա դրա մասին գերմանացի հռչակավոր գրողն ասել է. «Մարդ միշտ էլ բավականաչափ ժամանակ ունի, եթե միայն այն հարմար կերպով գործածել իմանա»: Իսկ մեծ փիլիսոփա Սենեկան իր հանճարեղ իմաստությամբ ասել է. «Մենք դառնապես գանգատվում ենք, թե մեր ժամանակը կարճ է: Միշտ դժգոհ ենք, թե մեր օրերը սակավաթիվ են, բայց գործում ենք այնպես,

իբր թե դրանք վերջ չունեն»: Եվ եթե մենք անդրադառնանք, թե որքան ժամանակ ենք իզուր վատնում անհարկի խոսակցությունների, հեռուստաֆիլմերի ու տարբեր հաճույքների համար, ապա կզգանք, որ, իրոք, մեծ ամոթ է մեզ այս ամենի մեջ Աստծո համար ժամանակ չգտնելը: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է. «Ոչինչ ավելի պատվական չէ, քան ժամանակը. դրա համար էլ պետք է այս կյանքի ժամանակը ի բարին օգտագործել, որովհետև այս ժամանակը ոչ ոք չի կարող վերստին ստանալ»:

ԱՍՏՎԱԾԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն անգամ սրբերի մասին լսելիս մենք նկատում ենք, որ նրանք բոլորովին ուրիշ մարդիկ են և բավականին շատ են տարբերվում մեզանից կամ մեզ ծանոթ մարդկանցից: Շատ դեպքերում նույնիսկ մեզ անհասկանալի են թվում նրանց այս կամ այն արարքները, և մենք գիտակցում ենք, որ նրանց տեղը լինելու դեպքում մենք երևի այլ կերպ կվարվեինք: Բայց նրանք այդպես էին վարվում, որովհետև տեսնում էին Աստծուն: «Իսկ մենք ինչպե՞ս կարող ենք տեսնել Աստծուն,- երևի կհարցնեք դուք,- որպեսզի կարողանանք սրբերի պես լինել»: Քրիստոս մի գեղեցիկ խոսք է ասում. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, Երկնքի Արքայությունը չեք մտնի» (Մատթ. 18.3): Մտնել Արքայություն նշանակում է նաև տեսնել Աստծուն հոգևոր տեսողությամբ, սրտի իմանալի աչքելով, ինչպես ապաշխարության գեղեցիկ շարականն է ասում. «Բացելու մեր սրտերի իմանալի աչքերը՝ նայելու Քո լույսին, Քրիստոս»: Գուցե մեր վերոնշյալ մտածելակերպի պատճառն այն է, որ մենք վաղուց արդեն դադարել ենք մանուկներ լինելուց: Ի՞նչ էինք երազում մենք, երբ մանուկներ էինք՝ կամ դառնալ բժիշկ, որպեսզի մարդկանց փրկենք, կամ օդաչու՝ երկնքի կապույտի մեջ սավառնելու համար, կամ հեքիաթների արքայադստերը փրկող արքայազն, և կամ էլ արքայազնին սպասող հեքիաթային արքայադուստր: Մի ժամանակ մենք աշխարհին նայում էինք անմեղ, սիրով և հույսով լի, անկեղծ և պարզ ու վճիտ աչքերով: Մինչդեռ այսօր որքան նյութական և ինչ-որ առումով էլ մեղավոր են դարձել մեր երազանքները: Եվ սրանով մենք կարծես թե վարակել ենք նույնիսկ մեր երեխաներին, որոնց երազանքներն այսօր առավելապես կապված են նյութական և դրամական ձեռքբերումների հետ: Մենք ցավով կարող ենք նկատել, որ այսօր նույնիսկ մեր մանուկները դադարել են մանուկ լինելուց: Չափազանցվա՞ծ եք համարում նման կարծիքը: Այո, գուցե և դուք ճիշտ եք: Բայց ցավն այն է, որ նույնիսկ այս չափազանցության մեջ մեծ տեղ է գրավում ճշմարտությունը: Եվ այս ա-

մենն իմանալով՝ մենք հասկանում ենք, թե որքան ենք հեռացել ինքներս մեզանից: Հետևաբար, մենք պետք է վերադառնանք դեպի մեզ, որպեսզի տեսնենք Աստծուն:

ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՎԱԾՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղերից մեկում, երբ եկեղեցու սպասավորը քարոզում էր աստվածային ճշմարտությունները՝ խոսելով Աստծո հանդեպ սիրո և աղոթքի անհրաժեշտության մասին, մի ծեր տատիկ բողոքելով ասաց. «Ինչ է, որ եկեղեցու մեջ կանգնեմ ու Աստված, Աստված կանչեմ, Աստված ինձ հա՞ց պիտի տա, պիտի նորից դատարկ դուրս գամ»: Որքա՜ն հակառակ է նման մտածելակերպը այն սրբերի կյանքին, ովքեր պատրաստակամությամբ նեղություններ են կրել ու նահատակվել հանուն Քրիստոսի: Սուրբ առաքյալները, մեր Հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Հռիփսիմյան ու Գայանյան կույսերը անմարդկային տանջանքներ ունեցան: Մեր Եկեղեցում հիշատակվող սրբերից Եվստաթեոսը քրիստոնյա դառնալուց որոշ ժամանակ անց սնանկացավ, կորցրեց ընտանիքը, Նեքտարինեն չարչարանքների ենթարկվեց և սպանվեց, նույնպես և Դավիթ Դվնեցին խաչվեց և մեռավ: Բազում սրբեր ահավոր տառապանքների մատնվեցին: Սակայն նրանցից որևէ մեկի մտքով անգամ չէր անցնում իրենց նեղությունների ժամանակ ուրանալ Քրիստոսին: Մինչդեռ ի՞նչ է դարձել մեր ժամանակների մարդու մտածելակերպը, Աստված նրան անպայման պիտի հաց տա: Մի՞թե այսպիսի շահախնդրությամբ ենք մենք սիրում մեր ծնողներին կամ երեխաներին, քույրերին կամ եղբայրներին: Իհարկե, ո՛չ: Ուրեմն որքան առավել ևս ամոթ է մեզ բոլորիս համար այսպիսի չափանիշներով չափել մեր զգացմունքներն ու հավատարմությունը առ Աստված:

ԿՇԵՌՔ ԵՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Խաչը նման է նաև կշեռքի, և այս նմանությունը ցույց է տալիս, որ մենք պետք է հավասարակշռություն պահպանենք հոգևոր կյանքում: Մեր եկեղեցական հեղինակներից մեկը, խոսելով խաչի նման խորհրդանիշի մասին, անդրադառնում է նաև առօրյա կյանքում կշեռքի գործածությանը: Առակաց գիրքն ասում է. «Խարդախ կշեռքը պիղծ է Տիրոջ առջև, բայց արդար կշեռքը հաճելի է Նրան» (11.1): Կշեռքով խաբող վաճառականները պիտի դատապարտվեն: Նրանք ավելի վատն են, քան գողերը և ավազակները, որովհետև գողերը գողանում են մեկ անձից և միայն մեկ

անգամ, իսկ սխալ կշեռք գործածողները մեկ անձից մի քանի անգամ՝ խաբելով նրանց: Գողերը հիմնականում գողանում են գիշերը՝ իրենց սրտերում վախ ունենալով, իսկ անարդար վաճառականները գողանում են ցերեկվա ընթացքում առանց վախի: Գողության ժամանակ գողերը երբեմն մարդկանց սպանում են, սակայն անարդար վաճառականներն սպանում են իրենց հոգիները՝ մեղքեր գործելով: Ուրեմն մեր կյանքի ընթացքում պահպանենք հավասարակշռությունը մարդկանց և հատկապես Աստծո հետ մեր հարաբերություններում՝ փառավորելով Նրան այժմ և հավիտյանս. ամեն:

ԳԱՅԹԱԿՂԻՉ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ոչ մի դարաշրջան քրիստոնեական հոգու համար այնքան գայթակղիչ և վտանգավոր չի եղել, որքան մեր դարաշրջանը: Գուցե եղել է ավելի տանջալի և ավելի դժվար ժամանակաշրջան, ինչպես օրինակ, մարտիրոսների դարաշրջանը, երբ նրանք ահեղ տանջանքների և ահավոր մահվան էին դատապարտվում: Սակայն մինչ այս երբեք չեն եղել գայթակղության առումով այսքան վտանգավոր ժամանակներ: Գիտական և հատկապես տեխնիկական նվաճումները, որոնք եղել են մարդկային կյանքը հեշտացնելու նպատակով, իրականում ընդհակառակը, կյանքը հեշտացնելու փոխարեն մարդկանց շատ հաճախ գցում են իրենցից կախվածության մեջ: Այսօրվա շատ գովազդներ, նկարներ կամ արվեստի գործեր իրենց մեջ թաքնված հատուկ ենթատեքստ ունեն, որոնք ազդում են մարդկային գիտակցության վրա: Օրինակ՝ որևէ հագուստ գովազդող փողոցում տեղադրված գովազդային հսկա պաստառն իր գայթակղիչ նկարով մարդուն կարծես Ոդիսևսի պատմության մեջ հիշվող առասպելական թռչունների պես անլսելի, բայց անընդհատ ձայնելով քաշում է իր կողմը և ասում. «Շնացիր, հաճույք վայելիր»: Անառակություններ ցույց տալով՝ նույնն է ասում նաև հեռուստացույցը՝ միևնույն ժամանակ առաջարկելով նաև սպանությունների ահավոր տեսարաններ: Իսկ համակարգիչը իր ծառայություններից միայն տասը րոպեով օգտվելու համար մտադրված մարդուն կարծես կախարդում է և նրանից ժամեր խլելով՝ լավագույն դեպքում մարդկային հոգուն միայն դատարկության զգացումների է դատապարտում: Այո, շատ դժվար էր մարտիրոսների համար, անտանելի էին նրանց չարչարանքներն ու մահը, սակայն այն ժամանակ կողմնորոշվելը հավանաբար ավելի հեշտ էր՝ կա՛մ կուռքերին պիտի երկրպագես կա՛մ՝ Աստծուն: Մինչդեռ այժմ, երբ աշխարհի մեծ մասը քրիստոնեացել է, մարդը չի կարողանում կողմնորոշվել, արդեն հեղհեղուկ են դարձել բարու և չարի սահմանները, մարդը չի կարողա-

նում կողմնորոշվել, թե որտեղ է վերջանում մամոնայի պաշտամունքը, և որտեղ է սկսվում Աստծո պաշտամունքը: Ասում են, որ «Մենք առաջինն ենք ընդունել քրիստոնեությունը» նախադասության մեջ հայերին միայն սրտամոտ և դուրալի է «առաջին» բառը: Իրոք, մեզանից շատերը հաճախ անունով քրիստոնյա, բայց էությամբ հեթանոս են: Շատերս սիրում ենք հպարտանալ միայն անցյալով՝ մոռանալով, որ մեր ներկան հաճախ միայն անցյալի ավերակն է: Որքան դիպուկ է ասված կարծես մեր ժամանակների շատ քրիստոնյաների մասին Հայտնության գրքում. «Գիտեմ քո գործերը, դու, որ ո՛չ սառն ես և ո՛չ տաք» (3.15): Ոչ սառը նշանակում է, որ մարդը քրիստոնյա է, ոչ տաքը նշանակում է, որ մարդը Քրիստոսի Եկեղեցու անդամ լինելով՝ իր ապրած կյանքի պատճառով զուրկ է աստվածային շնորհից: Լսենք, թե շարունակությամբ ինչ է ասում Քրիստոս. «Երանի դու սառն լինեիր և կամ տաք. իսկ դու գաղջ ես՝ ո՛չ տաք, ո՛չ էլ սառն. հիմա պիտի փսխեմ քեզ Իմ բերանից, չգիտես, թե ողորմելի ես դու, թշվառ և աղքատ, մերկ և կույր» (3.15.16): Մենք հաճախ ենք ձգտում բարօրության այս կյանքում: «Ի՞նչ օգուտ կունենա մարդ,- ասում է Քրիստոս,- եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի» (Մատթ. 17.26): Մարդկային անձը, հոգին ամենաթանկ բանն է, և այն փրկելու համար պետք է հետևել Քրիստոսին նույնիսկ նեղությունների և չարչարանքների մեջ: Եկեք անկեղծ լինենք, այսօրվա բազմաթիվ քրիստոնյաներ գաղջ են, այսինքն՝ միայն անունով են քրիստոնյա, շատ հեռու են Քրիստոսի հաստատած Եկեղեցուց կամ էլ շատ սահմանափակ գիտելիքներով և միայն մոմ վառելով կարծում են, թե ապրեցին իրենց քրիստոնեական կյանքը: Զարմանալին կամ ահավորն այն է, որ մարդիկ նույնիսկ չեն էլ անհանգստանում դրա համար: Սուրբ Եփրեմ Ասորին ասում է, որ երկու մկրտություն կա՝ մեկը ջրով և Սուրբ Հոգով, իսկ մյուսը՝ նահատակությունը: Սրանցից որևէ մեկի բացակայության դեպքում մարդը չի կարող փրկվել: Սակայն նա նշում է նաև, որ նահատակությունը միայն տեսանելի արյուն թափելով թշնամուն հաղթելը չէ, այլ նաև ներքին պատերազմ մղելով սատանային հաղթելը: Ուրեմն մի կողմ դնենք մեր գաղջությունը և ներքին պատերազմ մղելով՝ այս կյանքում արժանապատվությամբ նահատակվենք՝ արժանանալով Երկնքի Արքայության:

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

Սրբերը հալածանքների ժամանակ հրապարակավ հայտարարում էին իրենց քրիստոնյա լինելը: Մինչդեռ այսօրվա խաղաղ իրավիճակում մենք հաճախ լռում ենք Քրիստոսին մեր պատկանելության մասին: Քրիստոս առաքյալներին պատվիրան տվեց քարոզելու Երկնքի Արքայությու-

նը. «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի» (Մատթ. 28.19-20): Եվ Պողոս առաքյալն էլ ասում է. «Վա՛յ է ինձ, եթե չավետարանեմ» (Ա Կորնթ. 9.16): Մեծապես խրախուսելի է, երբ նաև հավատացյալներն իրենց եղբայրներին կամ քույրերին հորդորում են աստվածպաշտության՝ իրենք ունենալով ուղղափառ հավատք, հոգևորի մասին բացատրությունները տալով առաքելահաստատ Եկեղեցու ճիշտ ուսմունքին, վարդապետությանը համապատասխան: Այսօր, սակայն, ընտանիքների մեծ մասում առօրյա խոսակցություններն ընթանում են գրեթե միշտ նույն թեմայով: Մենք ավելի շատ միմյանց հետ խոսում ենք տարբեր մարդկանց տարբեր արարքների, իրադարձությունների մասին. բազում ընտանիքներում կարծես թե մեծ ամոթ է համարվում Քրիստոսի, հավատքի, աստվածայինի մասին խոսելը: Այսօր մարդիկ երբեմն ամաչում են վեհ գաղափարների մասին խոսակցությունից: Սակայն չէ՞ որ բոլորս էլ կարողանում ենք մեր կյանքում հոգևորը, աստվածայինը վեր դասել նյութականից: Երբ նորածին երեխա ունեցող մայրը հաց է ուտում, ու հանկարծ երեխան սկսում է լաց լինել, մայրը թողնում է հացն ու վազում իր երեխային խնամելու: Այս արարքով արդեն մարդը մերժում է նյութականն ու մարմնականը՝ արժևորելով հոգևորն ու մայրական սերը: Խիստ զբաղված հայրն էլ միշտ թողնում է գործը՝ իր որդու թախանձագին խնդրանքը կատարելու համար: Սրանով էլ մարդը, կտրվելով նյութականից, արժևորում է հոգևոր կապը, հարազատության և սիրո զգացումը: Եվ եթե մենք մեր կյանքում կարողանում ենք հարկ եղած դեպքում վեր բարձրանալ նյութականից դեպի հոգևորը, ինչու՞ ուրեմն այդպես չվարվել Աստծո հետ մեր հարաբերություններում: Մեր պատկանելությունն Աստծուն հայտարարենք նաև խոսքով, իսկ եթե դեռ ամաչում ենք դրանից, ապա ուրեմն հայտարարենք մեր գործերով և քրիստոնեավայել կյանքով:

ՍԻՐԵՑԵՔ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

Ավետարանում Քրիստոս Երկնքի Արքայությունը նմանեցնում է վաճառականի, որ գեղեցիկ մարգարիտներ է որոնում (Մատթ. 13.45): Սրբերը ևս նման են մարգարիտների: Մարգարիտն ընդհանրապես թանկարժեք հատկությունը չի կորցնում նույնիսկ փոշու մեջ: Այն ամեն տեղ էլ մնում է իբրև թանկարժեք քար: Նույն կերպ էլ և սրբերը կյանքի բոլոր դեպքերում եղել են իրապես մաքուր մարդիկ: Մենք ևս ցանկացած իրավիճակում մեզանից հեռու պետք է վանենք հոգին աղտոտող ատելությունը, վրեժ-խնդրությունը, սեփական անձի մասին չափազանց բարձր

կարծիքը և բոլոր բացասական ու ժխտական զգացումները, այսինքն՝ պետք է նմանվենք մարգարտի, որն իր հատկությունը պահպանում է նույնիսկ փոշու և ցեխի մեջ: Այսպես վարվելով՝ գուցե կհասկանանք Քրիստոսի այն խոսքերը, որոնք հաճախ շատ մարդկանց համար դժվարըմբռնելի են. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարությու՛ն արեք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում» (Մատթ. 5.44):

Սերը և հարգանքը կարող են վերափոխել նույնիսկ մեր հանդեպ հակակրանք ունեցող մարդկանց, որովհետև սերը նման է կրակի: Կրակը հալեցնում է մոմը, որը դառնում է փափուկ ու փխրուն, և մենք արդեն կարող ենք մոմին մեր ուզած ձևը տալ: Նույնպես սերը և հարգանքը կարող են դիմացի մարդուն դարձնել սիրալիրության, քանզի սերը և հարգանքը նույնն են մարդու համար, ինչ կրակը մոմի համար: Բայց որպեսզի կեղծավոր չլինենք, պետք է մեզանում ունենանք սիրելու և հարգելու անհրաժեշտության համոզումը՝ իմանալով, որ սիրելը նաև Աստծո պատվերն է, և մեր կողմից հակակրանքի արժանացած մարդը նույնպես ստեղծված է Աստծո պատկերով:

ՄՈՒՍՈՒԼՄԱՆՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

Քրիստոնեության հեթանոսական հալածանքները հետագայում շարունակվեցին մուսուլմանների կողմից: Սակայն արդարության համար պետք է ասենք, որ քրիստոնյաները հալածվել են ոչ բոլոր մուսուլման տիրակալների օրոք, քանզի իշխողներ են եղել, որոնց օրերում քրիստոնյաները խաղաղություն և ապահովություն են վայելել: Նրանցից մեկը իշխան Օմարն էր, ով հետաքրքրված էր քրիստոնյաների նվիրվածությամբ հանդեպ իրենց հավատքը և կարծում էր, որ քրիստոնեության, Քրիստոսի Ավետարանի մեջ կան աղավաղված հասկացություններ, որոնք իրենց սկզբնական մաքրությամբ պահպանվել են Ղուրանում: Եվ Օմարը նամակ գրեց Հռոմի Լևոն կայսերը տարբեր հարցադրումներ անելով: Հարցադրումներից մեկը վերաբերում էր Աստվածաշնչի վավերականությանը: Օմարն ասում էր, որ պատմության ընթացքում հրեաները կորցրեցին իրենց սուրբ գրքերը, սակայն հետագայում Եզրաս քահանան հավաքագրեց դրանք և խմբագրեց: Բայց ինչպե՞ս կարող է մեկ մարդը վերստեղծել սուրբ գրքերը: Լևոնը, պատասխանելով այս հարցին, բացատրեց, որ Սուրբ Հոգին Եզրասի վրա էր, երբ նա խմբագրում էր գրքերը, և երբ հետո գերյալ հրեաները վերադարձան Հրեաստան, իրենց հետ բերեցին նախապես տարված գրքերը և համեմատելով դրանք Եզրասի տարբերակի հետ՝ տեսան, որ գրքերի բովանդակությունը նույնն է: Այնուհետ

քրիստոնյաները թարգմանեցին Հին և Նոր Կտակարանները տարբեր լեզուներով, և հիմա քրիստոնեական ժողովուրդներն ունեն նույն Աստվածաշունչը, և Սուրբ Գրքում ասվածի նշանակությունը շեղող տարբերություններ չկան այդ թարգմանություններում: «Սակայն դուք,- ասում է Լևոնը Օմարին,- ունեք նույն լեզուն, մեկ ժողովուրդ եք, բայց մեկ հաստատուն դիրքորոշում չեք կարողանում հաստատել ձեր կրոնի և սուրբ գրքի հանդեպ»: Եվ Լևոն կայսեր ասածը ճիշտ է, որովհետև մուսուլմանական աշխարհում կան այնպիսիններ, ովքեր ընդունում են Մուհամեդ մարգարեին, և կան ուրիշներ, ովքեր չեն ընդունում: Կան, որ ընդունում են Ղուրանը, այլք մերժում են այն: Իսլամն ունի երկու գլխավոր ճյուղեր՝ սունի և շիա: Սունիները բացի Ղուրանից ընդունում են նաև գրավոր ավանդությունը, մինչդեռ շիաները համարում են, որ միակ սուրբ գիրքը Ղուրանն է: Սակայն այս երկու ճյուղերի պայքարը միմյանց հետ միայն արդարության պայքար չէ, այլ նաև հեղինակության և իշխանության, քանզի սունիները ենթադրում են, որ որևէ արժանավոր մարդ կարող է գալ հոգևոր և աշխարհիկ իշխանության, իսկ շիաները պնդում են, որ միայն Մուհամեդի ազգականները կարող են հոգևոր և աշխարհիկ իշխանություն ստանալ: Մուսուլմանության այս երկու ճյուղերի առաջացումից ի վեր մուսուլմանությունը բաժանվեց բազմաթիվ աղանդների: Որոշ աղանդներ առաջացան սունիից: Դրանցից մեկի հետևորդները կոչվում են խորասաջիներ, որը նշանակում է ապստամբ: Դժգոհ լինելով խալիֆ Ալիից՝ նրանք ապստամբեցին Ալիի դեմ: Սունի ուղղության ծայրահեղականները կոչվում են իսմայիլներ: Շիա ուղղության մեջ հայտնի աղանդավորներ են եղել մութազիլիները, որոնք չեն ընդունում Ղուրանը որպես հավիտենական գիրք: Նրանք նաև չեն ընդունում աստվածությանը վերագրվող մարդկային հատկանիշները՝ համարելով, որ ճշմարտության չափանիշը մարդկային բանականությունն է: Եվ միմյանց դեմ կռվում են ոչ միայն մուսուլմանության երկու գլխավոր ճյուղերը, այլև յուրաքանչյուրի աղանդները միմյանց դեմ, ինչպես նաև այդ աղանդները մյուս ուղղության և դրա մեջ գտնվող ու իրար դեմ պայքարող աղանդների դեմ: Այսօր մենք կարող ենք տեսնել, թե որքան խռովված է մուսուլմանական աշխարհն իր պատերազմներով և ահաբեկչական գործողություններով: Եվ մենք՝ որպես քրիստոնյաներ, բոլորին սիրելու և բոլորի համար աղոթելու Քրիստոսի պատվերի համաձայն, պետք է աղոթենք նաև մուսուլմանների համար, որպեսզի նրանք ճիշտ լուծումներ գտնեն իրենց խնդիրներին, և մենք միմյանց հետ կարողանանք ապրել կողք կողքի խաղաղության և ապահովության մեջ:

ԴԱՏԱՍՏԱՆ

Մենք բոլորս էլ մեղքեր ենք գործում: Աշխարհում բազում մարդիկ խաբում են, գողանում, սպանում, շնանում: Բայց մարդ կա, որ խաբում է վախից, և մարդ կա, որ խաբում է չարությամբ, մարդ կա, որ սպանում է չարությամբ, մարդ կա, որ սպանում է ակամա: Մենք մարդկանց դատում ենք երկու ձևով: Առաջինը կշտամբելն է կամ պախարակելը, որով մենք ցույց ենք տալիս, որ համաձայն չենք որևէ մեկի մի արարքի հետ և ցանկանում ենք, որ նա այդպես այլևս չվարվի և ուղղվի: Երկրորդը որևէ մեկին պիտակ կամ որակում կպցնելն է: Օրինակ՝ այլ է, երբ մեկին ասում ենք՝ դու ինչ-որ բան ես գողացել, և այլ է, երբ ասում ենք՝ դու գող ես: Եկեղեցական հեղինակներից մեկն իրավամբ ասում է, որ մենք էլ Վերջին Դատաստանի ժամանակ դատվելիս այդպիսի նրբություն ենք ցանկանալու տեսնել: Գուցե Դատաստանի ժամանանակ մենք կանգնենք Աստծո առջև և ասենք. «Ով Տեր Աստված, այնպես է եղել, որ ես ստել եմ, բայց ես խաբեբա չեմ, գողացել եմ, բայց գող չեմ, շնացել եմ, բայց ես անառակ չեմ»: Մեզ մի զարմանալի հնարավորություն է տրված. ինքներս կարող ենք որոշել, թե հետագայում ինչպես ենք դատվելու: Քրիստոս ասում է, որ ինչ ձևով որ դատում ենք ուրիշներին, այնպես էլ դատվելու ենք, ինչ չափով որ չափում ենք, այն չափով էլ չափվելու է մեզ համար (Մատթ. 7.2): Եվ եթե մենք ցանկանում ենք, որ Վերջին Դատաստանի ժամանակ մեզ դատեն ոչ թե խիստ արդարությամբ, այլ սիրով ու ներողամտությամբ, ինքներս պետք է այդպես դատենք ուրիշներին: Թող որ այնպես ապրենք, որ մեր սրտերից անպակաս լինեն սերն ու ներողամտությունը, որպեսզի մենք ինքներս տերունական Դատաստանի ժամանակ կարողանանք սեր և ներողամտություն գտնել:

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

Քրիստոնյաների ամենամեծ հալածիչներից է եղել Դիոկղետիանոս կայսրը, ով հավանաբար հոգնելով պետական գործերից՝ 305 թվականին հրաժարվեց գահից և ցանկացավ ապրել որպես պարզ քաղաքացի: Նա այդպես ապրեց Հռոմում մինչև կյանքի վերջը, սակայն նրան հասան Աստծո պատիժները, և Դիոկղետիանոսը մեռավ մեծ հիվանդություններին, նեղությունների ու չարչարանքների մեջ:

Քրիստոնյաների դեմ ուղղված հալածանքներին անդրադարձել են նաև այն եկեղեցական հեղինակները, ովքեր հալածանքների ժամանակակիցն են եղել: Այդ հեղինակներից են Կիպրիանոսը, Գրիգոր Աստվածաբանը, Եվսեբիոս Կեսարացին, ով համարվում է եկեղեցական պատմության պատմահայր: Այս հեղինակները դաժան հալածանքների համար

առաջին հերթին մեղադրում են ոչ թե դիոկղետիանոսներին, անհավատներին, այլ քրիստոնյաներին: Եվսեբիոսն ասում է, որ Աստված թույլ տվեց հալածանքները, որովհետև ոչ միայն քրիստոնյա աշխարհականների, այլ նույնիսկ հոգևորականների շրջանում կար միմյանց հանդեպ թշնամանք, ատելություն, նախանձ, արհամարհանք: Սա չի նշանակում, թե քրիստոնյաները դադարել էին ճշմարիտ աստվածպաշտությունից, ընդհակառակը, շարունակում էին արարողությունները, եկեղեցի հաճախելը, բայց դա արդեն սկսել էր վերածվել ձևականության, որովհետև առաքյալն է ասում. «Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա Հովհ. 4.20): Եվ մենք էլ մեր կյանքում հալածանքների և նեղությունների համար պատճառը փնտրենք առաջին հերթին ոչ թե մեզանից դուրս, այլ մեր ներսում, վերացնենք մարդկանց հետ հարաբերություններում մեր երկակի չափանիշները, որոնցով հաճախ ենք վարվում մեկին մեծարելով ու հարգանքով, մյուսին նախանձով կամ արհամարանքով կամ թշնամանքով: Եվ ձգտենք հեռու վանել մեզանից մեր վատ սովորույթներն ու հակումները՝ այսպիսով կատարելով Քրիստոսի պատվերը, թե՝ «Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5.48):

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՅԵՆԻՆ

Մեզ համար խրատական է Կայենի և Աբելի պատմությունը: Աստված ընդունեց Աբելի ընծան, որովհետև նա իր ունեցած ամենալավն էր ընծայել, մինչդեռ Կայենը տվել էր խոտանը, այն, ինչն իրեն քիչ էր պետք (Ծննդ. 4.3-7): Ցավոք, մենք հաճախ այսպես ենք Աստծուն ընծայում մեր սրտերը կամ էլ ժամանակը: Մեր ողջ ժամանակը տրամադրում ենք մեր մարմի խնդիրները լուծելուն կամ մարմնի հանգիստը կազմակերպելուն և Աստծուն հիշում ենք կամ եկեղեցի ենք այցելում այն ժամանակ, երբ այլևս երկրային այլ կարևոր գործեր չենք ունենում: Իսկ ե՞րբ ենք Աստվածաշունչ ընթերցում: Ավելի շատ մեր կյանքը բացի կարևոր աշխատանքից անցկացնում ենք հեռուստացույցից թմրեցնող հաճույք ստանալով, անտեղի խոսակցություններով և Աստվածաշունչ ենք ընթերցում այն ժամանակ, երբ ձանձրանում ենք մյուս բաներից: Եվ շատեր Սուրբ Գիրք ընթերցում են ամիսը մեկ կամ երկու անգամ կամ ընդհանրապես չեն ընթերցում: Եվ ինքներս էլ չենք նկատում, որ սկսում ենք նմանվել Կայենին, որովհետև Աստծուն ընծայում ենք այն, ինչը խոտան է և մեզ այլևս պետք չէ: Սա ապացուցում է, որ Աստված մեզ համար երկրորդական կամ երրորդական մի անձ է, և առաջնայինը մեզ համար մեր երկրային գործերն են կամ էլ մեր մարմնի հոգսերը: Մինչդեռ եթե վեր բարձրացնենք մեր

մտքերն ու սրտերը, կզգանք, թե ինպես է Սուրբ Հոգին գործում որպես հուր՝ ջերմացնելով մեր սրտերն Աստծո հանդեպ, և որպես աղավնի՝ մեր սրտից հեռացնելով թշնամության զգացումը, երանելի խաղաղություն պարգևելով մեր հոգիներին:

ՈԳՈՒ ՍՈՎ

Մեր օրերում կան մարդիկ, ովքեր աստվածային լույսը չեն ցանկանում տեսնել: Հայ մեծ գրողներից Ավետիք Իսահակյանը կարծես նաև հենց մեր օրերի համար է ասում. «Նյութի տաճարում արբած պարեցիք, Մոռացած անմահ, անհունի տենչանք: Ձեր նյութի հանդեպ կգա ոգու սով»: Եվ իրոք, բազում մարդիկ, մտահոգված են օրվա ապրուստի կամ նյութական տարբեր բարիքների ձեռքբերմամբ, բայց, այնուամենայնիվ, զգում են, որ ինչ-որ բան այն չէ իրենց կյանքում, ինչ-որ բան պակասում է իրենց, և մարդկային բնությանը հարազատ երջանկության ձգտումը ավելի է սրում այս զգացումը: Եվ սա է հիմնական պատճառներից մեկը, որ կան մարդիկ, ովքեր այս պակասը իրենց կյանքում զգալով, սկզբնապես առանց մտածելու մտնում են աղանդների մեջ, ինչպես որ ծարավից մեռնող մարդը մի տեղ ջուր տեսնելիս անմիջապես սկսում է անհագորեն ըմպել՝ առաջին պահին առանց մտածելու, որ այն կարող է և անմաքուր ու վնասակար լինել: Միչդեռ Քրիստոսի տված՝ ծառը պտուղներով ճանաչելու խրատով չպետք է մոռանանք, ի տարբերություն աղանդների ազգը պառակտող գործունեության, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միմիայն ազգանպաստ գործերը: Մեր ժողովրդի լավագույն հատկանիշներից մեկը իր երբեմն անհարկի ինքնամեծարման կողքին ինքնաքննադատության առկայությունն է: Սրա վկայությունն է ժողովրդական հետևյալ խոսքը. «Հայը ձի հեծնելով՝ Աստծուն է մոռանում, ձիուց իջնում է, ձիուն է մոռանում»: Եվ ճիշտ չէ նման ձևով մոռանալ առաքելահաստատ Հայ Եկեղեցու ճշմարիտ ուղին՝ հետևելով տարբեր աղանդների կամ ինքնակոչ եկեղեցիների:

ԱՋԱՏՈՒՄ ՄԵՂՔԵՐԻՑ

Շատ մարդիկ այսօր տանջվում, դատապարտվում են իրենց խղճի կողմից երբեմն գործած մեղքերի և հանցանքների համար: Դավիթ թագավորի օրինակը կարող է նրանց ուղղություն ցույց տալ: Դավիթն իր ամբողջ կյանքն ապրել է սրբությամբ և եղել Աստծո արդար: Նա համարվում է նաև Քրիստոսի նախօրինակը՝ իբրև հաղթող և բարի հովիվ: Քրիստոս ըստ մարմնի սերում է Դավթի սերնդից (Մատթ. 1.1): Սակայն մի ծանր մեղք Դավիթ թագավորին կարող էր զրկել այդ արդարությունից, եթե չլի-

ներ նրա զղջումն ու ապաշխարությունը: Դավիթը երիտասարդ հասակում սպանել է տալիս իր զինվորներից Ուրիային՝ նրա կնոջը՝ Բերսաբեեին տիրանալու համար: Բայց հետո, խորապես զղջալով և ցավելով, որ այդպես է վարվել՝ հետևելով անցողիկ մարմնական ցանկություններին, իր զղջման համար ներում է գտնում Աստծուց (Բ Թագ. 11.1-12.1-14): Ճիշտ նույն կերպ, ովքեր տանջվում են իրենց գործած անարդարություններից կամ այլ մեղքեր ունեն, ապաշխարության և զղջման դեպքում կարող են այսօր էլ, ըստ Քրիստոսի կողմից հաստատված կարգի (Մատթ. 18.18, Հովհ. 20.23), քահանայի միջոցով Աստծուց ներում ստանալ և այդուհետ ապրել խաղաղ հոգով ու հանգիստ խղճով:

ՃՇՄԱՐԻՏ ԿՅԱՆՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճշմարիտ Եկեղեցին Քրիստոսի առաքյալների կողմից հիմնադրված Եկեղեցին է: Այսօր, սակայն, աշխարհում բազմաթիվ մարդիկ համալրում են աղանդավորների շարքերը: Շատերդ, անշուշտ, ճանաչում ենք այդպիսի աղանդավոր մարդկանց, շատերդ էլ նույնիսկ բարեկամներ և ծանոթներ ունեք, ովքեր աղանդավորներ են: Մարդիկ հարցնում են. «Ինչու՞ Եկեղեցին այս կամ այն ձևով ընդհանրապես չի վերացնում մեր երկրից աղանդավորությունը»: Եկեղեցին միայն քարե կառույցը չէ, Եկեղեցին միայն հոգևորականները չեն, այլ այս ամենով հանդերձ հավատացյալ ժողովրդի հավաքականությունն է Եկեղեցին: Շատերս՝ որպես Եկեղեցու մասնիկներ կամ անդամներ, ի՞նչ ենք արել մեզ ծանոթ մոլորյալների համար, կամ ավելին, գուցե հենց շատերս ենք դարձել այդ մարդկանց շեղվածության պատճառը:

Մի քրիստոնյա մի մեծահարուստ հեթանոսի մոտ է մտնում աշխատելու: Հեթանոսն ասում է. «Քեզ աշխատանքի եմ վերցնում միայն այն պայմանով, որ ոչ մի խոսք չխոսես քո հավատի մասին»: «Հավատա, որ ոչ մի խոսք չեմ խոսի»,- ասում է քրիստոնյան: Քրիստոնյայի՝ երկու ամիս այս հեթանոսի այգում աշխատելուց հետո հեթանոսը գալիս է նրա մոտ և մեծ ցանկություն հայտնում քրիստոնյա դառնալու: Սա ցույց է տալիս, որ անգամ առանց որևէ բան քարոզելու երբեմն քրիստոնյան կարող է իր վարքով անհավատի սիրտը Ճշմարիտ Աստծուն դարձնել: Սակայն ինչպիսի՞ն է եղել ձեր վարքը նախքան ձեր բարեկամի կամ ծանոթի աղանդավոր դառնալը: Արդյո՞ք ցույց եք տվել քրիստոնեական կյանք, թե՞ եղել եք անտարբեր մեկը եկեղեցի հաճախելու կամ Աստվածաշունչ ընթերցելու հարցում, արդյո՞ք ավելի շատ զբաղված եք եղել Աստծուն որոնելով, քան երկրային բարիքների փնտրտուքով: Կամ արդյո՞ք ներկայումս այսպես օրինակելի է ձեր կյանքը: Եթե ոչ, ուրեմն օտար երկրներին, օտար

քարոզիչներին կամ որևէ այլ մեկին մեղադրելուց առաջ նայենք ինքներս մեզ, դառնանք իրապես քրիստոնյա, որպեսզի կարողանանք շտկել թե՛ մեզ, թե՛ ուրիշներին անուղղակիորեն հասցրած այն սխալները, որոնց պատճառը եղել է քրիստոնեական տեսակետով շատերիս անփույթ վարքն ու կյանքը:

ԿԵՆՍԱԿԵՐՊ

Վատ կյանքի ընթացքը, սնափառությունը, սեփական անձի մասին բարձր կարծիքը և նման այլ արատներ դժոխք են տանում: Այդ իսկ պատճառով, սիրելի ընթերցող, հետևիր հետևյալ խորհրդին. «Երբ դու ծնվեցիր, ամենքը ուրախ էին քո շուրջը, մինչդեռ դու լալիս էիր: Ձանա այնպես ապրել, որ մահվանդ օրը, երբ ամենքը լաց լինեն քո շուրջը, դու ուրախ լինես՝ զգալով, որ բարձրանում ես առ Աստված հավիտենական կյանքի համար»:

ՍԵՓԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ

Մենք աղոթելիս դիմում ենք նաև մարտիրոսներին՝ խնդրելով, որ նրանք ևս՝ իբրև սրբեր, աղոթեն մեզ համար: Սակայն եթե մենք արժանիքներ չունենք, նույնիսկ մեր հարազատների կամ մերձավորների սրբությունը չի կարող մեզ օգնել: Սրա վերաբերյալ ևս Ոսկեբերանն ասում է. «Եթե նույնիսկ Պողոսը քո հայրը լիներ և եղբայրներդ մարտիրոսներ լինեին, դարձյալ ոչ մի օգուտ չէիր ունենա, եթե սեփական արժանիքներ չունես»:

ՍԻՐՈ ՏՈՆ

Փետրվարի 14-ին Տեառնընդառաջի կամ քառասնօրյա մանուկ Քրիստոսի՝ տաճարին ընծայման տոնն է: Այս տոնը մեր ժողովրդի կողմից ամենասիրված կրոնական տոներից մեկն է, որն աչքի է ընկնում իր գեղեցիկ և յուրահատուկ արարողություններով: Սակայն արդեն մի քանի տարիներ շարունակ մեկ այլ օտարամուտ տոն կարծես թե փորձում էր ստվեր գցել Աստծուն նվիրված տոնախմբության վրա: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է նույն փետրվարի 14-ին հիշատակվող սուրբ Վալենտինի օրվան, որը հայտնի է նաև որպես սիրահարների օր: Այդ օրը հեռուստատեսությունն ու ռադիոն մեծ ոգևորությամբ գովազդում են սուրբ Վալենտինի տոնը, ինչպես նաև դրանց միջոցով սիրահար երիտասարդներն ու երիտասարդուհիները շնորհավորում են միմյանց սիրահարների ցնծալից տոնի առիթով: Ցավոք, այդ բազում խոսքերի ու շնոր-

հավորանքների մեջ երբեմն չի հիշատակվում Քրիստոսին՝ Աստծուն նվիրված տոնը: Եվ սրա պատճառը ոչ այնքան օտարամուտ տոնն է, այլ այն ցավալի իրողությունը, որ հատկապես մեր շատ երիտասարդների գիտակցության մեջ տեղի է ունեցել արժեհամակարգի խախտում: Այն արժեքները, որոնք իրականում պետք է ամենից առաջնային լինեին, այսօր շատերի համար գրավում են վերջին աննկատ տեղերը կամ էլ ընդհանրապես ջնջվել են և դուրս նետվել գիտակցությունից: Մերօրյա բազում երիտասարդների արժեհամակարգում առաջին տեղը գրավում է սեփական հաճույքը, մինչդեռ Աստծո մասին գաղափարը պատված է անտարբերության մշուշով: Սրանում համոզվելու համար հարցրեք փողոցում հանդիպած ցանկացած երիտասարդի, թե երբ է վերջին անգամ Աստվածաշունչ կարդացել և երբ է վերջին անգամ դիտել արևմտյան աշխարհից եկած կրքահարույց ֆիլմերն ու երաժշտական տեսահոլովակները, և այս երկու հարցերի պատասխանների համեմատությունից կտեսնեք, թե ինչն է նրանց ավելի շատ հետաքրքրում և ինչպիսին է նրանց վերաբերմունքը աստվածայինի հանդեպ: Ահա այսպիսին է մեր երիտասարդների մտածելակերպը: Եթե փետրվարի 14-ին երիտասարդն իր ընկերուհուն որևէ նվեր չտա, ապա դա ամոթ կլինի. ինչպե՞ս կարելի է սիրահարների տոնի օրը գեղեցիկ անակնկալ չմատուցել սիրեցյալին, բայց եթե այդ օրը եկեղեցի չայցելեն կամ Աստծուն չհիշեն, ապա դա այնքան էլ ողբերգական բան չէ: Մինչդեռ Աստված պատվիրել է, որ մարդիկ ամենից շատ Իրեն սիրեն (Մատթ. 10.37): Երկնային արժեքների հանդեպ երիտասարդության մեջ տիրող անտարբերությունն է պատճառը, որ Սուրբ Սարգիսը շատ երիտասարդների հայտնի է միայն աղաբլիթով և ալյուրի վրա թողած ձիու պայտի նշանով, իսկ եկեղեցին՝ մոմ վառելով: Քիչ թիվ չեն կազմում այն մարդիկ, ովքեր Աստծուն պատկերացնում են հեռու երկնքում նստած մի ծերունու կերպարանքով, որի հանդեպ պարտքը երբեմն որևէ խանութ գնալիս կամ քաղաք զբոսանքի ելած ժամանակ եկեղեցու կողքով անցնելու դեպքում ներս մտնելը և մոմ վառելն է, որպեսզի նաև գործերը հաջող լինեն: Մինչդեռ հռչակավոր անապատականներից Արսեն Մեծը հրաժարվեց իր խցի կողքով գնումների գնացող մի քանի վանականներին ընդունելուց, որովհետև նրանք չէին եկել առաջին հերթին հենց իրե՛ն այցելելու և հոգևոր խրատներ լսելու մտադրությամբ: Մուսուլմանների մասին ասում են, որ նրանք իրենց սուրբ գիրքը բռնած ժամանակ միշտ պահում են կրծքավանդակի՝ սրտի բարձրության վրա՝ իբրև հարգանքի նշան: Չենք կարող ասել, թե մեզ մոտ Սուրբ Գրքի հետ անփույթ վերաբերվելով՝ պատռում են այն, բայց գուցե մարդիկ անում են ավելի վատը: Շատ տներում Աստվածաշունչը գտնվում է գրադարակի ցուցափեղկի ետևում ցուցադրության համար:

Այսպիսին է հաճախ նաև Աստծո հանդեպ վերաբերմունքը. սիրում ենք, որ այն ևս «փեղկի ետևում» լինի: Մեր շատ թերթերում երբեմն ներկայացնում են Հայ Առաքելական Եկեղեցու տոները, որոնց կողքին միևնույն ժամանակ ներկայացվում են աստղագուշական տեսություններ և հաճախ՝ երեխաների մոտ բարձրաձայն ասելու համար անպատշաճ՝ ֆիլմերի անպարկեշտ վերնագրեր: Հեթանոսա-քրիստոնեական այսպիսի մի խառնուրդ է իրենից ներկայացնում նաև բազմաթիվ մարդկանց ներաշխարհը: Նախ աղոթում են եկեղեցում և մոմ վառում իրենց ցանկությունների իրականացման համար, այնուհետև եկեղեցուց դուրս գալով՝ թերթերի և հեռուստաալիքների ընձեռած հնարավորությամբ զբաղվում են աստղագուշակությամբ, որն արգելված է Աստվածաշնչով Աստծո կողմից (քանզի ըստ Աստվածաշնչի՝ գուշակություն անող կամ դրան հետևող մարդը պիղծ է Աստծո առաջ /Բ Օրինաց 18.10-12, Եսայի 47.13-14/)՝ իմանալու, թե արժե՞ այս շաբաթ որևէ շահութաբեր գործ ձեռնարկել, թե՞ ոչ: Եվ զարմանալի չէ, որ նման պայմաններում շատերի կողմից ցնծությամբ ընդունվեց սիրահարների տոնը՝ Աստծո տոնը մոռացության մատնելու հաշվին: Գուցե առարկություններ լինեն, որ սա ևս քրիստոնեական տոն է, որովհետև հիշատակվում է սուրբ Վալենտինը: Բայց նախ՝ նա մեր Եկեղեցու կողմից տոնելի սրբերի կարգին չի դասված և չի հիշատակվում մեր Եկեղեցում, և երկրորդ՝ այդ տոնի կողմնակիցներից գրեթե ոչ ոք չգիտի, թե ով է սուրբ Վալենտինը: Հաղորդավարները հաճախ ասում են Վալենտինո և կամ էլ Վալենտինա (կարծելով թե կին է), որոշ հեռուստաընկերություններ այդ օրվա համար առաջարկում են *Վալենտինի օր* արտահայտությունը բովանդակող վերնագրով ֆիլմեր, որոնք ոչ մի կապ չունեն Վալենտինի հետ, այլ պարզապես ներկայացնում են երկու սիրահարների ամոթալի և անբարոյական արկածները: Եվ սրբի մասին շատերի անտեղյակությունը ցույց է տալիս, որ նպատակը ոչ թե այլազգի մեկ այլ սրբի հիշատակը հավերժացնելն է, այլ պարզապես այդ օրը յուրահատուկ կերպով ու հիանալի տրամադրությամբ անցկացնելը, սեփական զգացմունքների համար տոն սահմանելն ու այն նշելը: Մինչդեռ Քրիստոսի՝ տաճարին ընծայման տոնը նաև Քրիստոսի՝ Իրեն ընծայելն է մարդկանց, ովքեր Սուրբ Պողոս առաքյալի խոսքերով ևս Աստծո տաճարներ են (Ա Կորնթ. 3.16): Այսինքն՝ տերունական որևէ տոն մարդկության հանդեպ աստվածային անսահման սիրո տոնն է: Եվ եթե երկու բաներ համընկել են միևնույն օրը, ապա պետք է ընտրություն կատարենք: Ո՞րն ավելի վեր դասենք և հիշատակենք՝ Աստծո տո՞նը, ով անսահմանորեն սիրում է մարդկանց և տալիս է հավիտենականը, թե՞ մարդկային զգացմունքների տոնախմբությունը: Այս հարցը տալուց հետո

մեկ որպե անցկացրեք լռությամբ և ցանկության դեպքում կլսեք, թե ինչ-պիսի պատասխան է տալիս ձեր խիղճը:

ՏՆՕՐՀՆԵՔ

Ծննդյան տոնի գեղեցիկ շարականը սկսվում է *Խորհուրդ մեծ,* իսկ Հարության տոնի շարականը՝ *Այսօր հարյավ* բառերով: Այս շարականները երգվում են նաև տնօրհնեքի արարողության ընթացքում: Ծննդյան և Հարության տոներից հետո քահանաներն այցելում են տները, Քրիստոսի Ծննդյան կամ Հարության ավետիսը տալիս և տնօրհնեք կատարում: Այս արարողությունն ուրախությամբ և օրհնությամբ է լցնում տներն ու ընտանիքները: Քանի որ անչափ դժվար է հատկապես մայրաքաղաքում, որ քահանաներն այդ օրերին բոլոր տներն այցելեն, ապա անհրաժեշտություն կա նաև, որ մարդիկ իրենց ընտանիքների և իրենց տների օրհնության համար իրենք ևս ընդառաջ գան և որևէ եկեղեցի այցելելով՝ խնդրեն քահանային տնօրհնեք կատարել:

ՇՆՈՐՀՆԵՐԸ՝ ՁՐԻԱԲԱՐ

Ծանր պայմաններում տարիներ առաջ մեր ժողովրդից շատերը մի վարվելակեպ ձեռք բերեցին. որտեղ որ նյութական օգնություն էին բաժանում՝ սնունդ, հագուստ և այլն, մարդիկ վազում էին այնտեղ և հերթ կանգնում՝ ստանալու համար: Աստծո նախախնամությամբ մենք ծնվել եք քրիստոնյա աշխարհում, մեր մեջ քարոզվում է ճշմարիտ և կատարյալ աստվածային կրոնը և ճշմարիտ եկեղեցու ծոցում Աստված ձրիաբար բաշխում է իր շնորհներն ու պարգևները՝ մարդկանց արժանացնելով հավիտենական կյանքի: Ուրեմն օգտվենք ընձեռնված այս բացառիկ հնարավորությունից և մեր ժամանակից սկզբնական շրջանում թեկուզ և մի փոքր հատված հատկացնելով աստվածային ճշմարտություններն ուսանելուն՝ շտապենք դեպի եկեղեցի՝ ստանալու համար մեզ բոլորիս խոստացված հավիտենական կյանքը:

ՇԱՐԺՈՒՄ ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ

Ոմանք երբեմն մի փոքր առիթ տեսնելով կամ հնարելով՝ քննադատում են եկեղեցականներին, հավատացյալներին և կամ մոլեռանդ համարում: Սակայն արդյո՞ք այդպիսի քննադատները հավատք ունեն: Հավատքը պասիվ համաձայնություն չէ, թե հեռու երկնքում ինչ-որ բան կա,

այլ հավատքը գործողություն է ու շարժում դեպի Աստված: Այդ իսկ պատճառով հավատքի և Եկեղեցու հանդեպ պասիվ դիրք գրավածներին հորդորելով արթնության ու դեպի Աստված մշտական ձգտումի կատարելության, և առօրյա կյանքի ճանապարհներում դեգերողների՝ Երկնային Արքայության փնտրտուքը շարժման մեջ դնելու հույսով ցանկանում ենք նրանց ասել. «Հավերժ կանգնածներ, մի արհամարհեք քայլողներին, նույնիսկ եթե նրանք սայթաքում են»:

ԱՅԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ

Ստեփանոս նախասարկավագը, իր քարկոծումից առաջ հայտարարեց, որ տեսնում է երկինքը բացված և Մարդու Որդուն՝ կանգնած Աստծո աջ կողմում (Գործք 7.55): Զարմանալի է, որ առաքյալներն իրենք երբեք այդպես չեն կոչել Քրիստոսին, և Ավետարաններում էլ ոչ ոք Քրիստոսից բացի չօգտագործեց *մարդու Որդի* արտահայտությունը: Սա բացատրվում է նրանով, որ Ստեփանոսի հոգևոր հայացքի առջև Քրիստոս ներկայացել է այնպես, ինչպես Դանիել մարգարեի տեսիլքում (Դան. 7.13): Ստեփանոսը տեսնում է Քրիստոսին՝ կանգնած Հայր Աստծո աջ կողմում: Եվս մեկ զարմանալի փաստ. ըստ Քրիստոսի խոսքերի՝ մեջբերված սաղմոսից, Աստծո աջ կողմում նստած վիճակը պետք է լինի. «Տերն ասաց իմ Տիրոջը “Նստիր Իմ աջ կողմում, մինչև Քո թշնամիներին Քո ոտքերի պատվանդան դարձնեմ”» (Ղուկ. 20.42, Սաղմ. 109.1): Այսպես է նաև ըստ առաքյալների (Մարկ. 16.19, Եփես. 1.20): Ստեփանոսի այս տեսիլքը բացատրվում է հետևյալ կերպ: Նստած վիճակը հրամայողի և տիրողի դիրք է, իսկ կանգնելը՝ պատերազմողի և օգնողի: Հետևաբար, Ստեփանոսը տեսավ իրեն օգնության հասնող և իր արդար հոգին ընդունելու պատրաստ Քրիստոսին: Նույն կերպ էլ մեր այսօրվա կյանքում Աստված երբեք անօգնական չի թողնում իրեն հավատացողներին և միշտ գործում է՝ Իրեն դիմողներին պահպանելու և օգնելու համար: Դանիել մարգարեն Քրիստոսին կոչում է մարդու Որդի (Դան 7.13): *Մարդու Որդի* արտահայտությունը մեսիական տիտղոս է, և Քրիստոս ևս Ավետարաններում Իրեն անվանում է *մարդու Որդի* մոտ ութսուն անգամ: Սակայն Քրիստոսի հետևորդների խոսքում Քրիստոս միայն մեկ անգամ այսպես կոչվեց Ստեփանոս նախասարկավագի կողմից (Գործք 7.55): Սրա պատճառն այն է, որ առաքյալներն սկսեցին քարոզել նաև հեթանոսների մեջ, որոնցից հատկապես հույները *մարդու Որդի* կիսասկանային

միայն մարդ, դրա համար էլ հրեական սինագոգից դուրս առաքյալները Քրստոսին կոչում էին Աստծո Որդի: Սակայն նրանք *մարդու Որդի* արտահայտությունը պահել են Քրիստոսի խոսքերում, որովհետև Ինքն էր Իրեն այդպես կոչում:

ՄԱՍՆԱՏՎՈՂ ԱՆՄԱՍՆԱՏԵԼԻՆ

Քրիստոս հաստատեց Հաղորդության խորհուրդը (Մատթ. 26.26): Սուրբ Հաղորդությունը տրվում է Պատարագի արարողության ժամանակ, երբ սրբագործվող հացն ու գինին աստվածային ներգործությամբ դառնում են Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արյունը: Հաղորդության զորությունն ավելի են հստակեցնում Տիրոջ խոսքերը. «Եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չըմպեք Նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա: Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում Իմ արյունը, հավիտենական կյանք ունի. և Ես նրան վերջին օրը հարություն առնել պիտի տամ» (Հովհ. 6.54.55): Պատարագի ընթացքում Հաղորդությունը հավատացյալներին տալիս է պատարագիչ հոգևորականը՝ մանր կտորների բաժանելով գինու մեջ թաթախված անթթխմոր հացը՝ նշխարը, որոնք այլևս իրենց վրա տպավորված զորությունն ունենալով՝ Մարմինն ու Արյունն են Քրիստոսի: Սակայն Հաղորդության հացն ու գինին, ինչքան էլ որ բաժանվեն կամ մասնատվեն, այնուամենայնիվ, իրենցում Քրիստոսին բովանդակում են ամբողջականորեն: Մեր մեծ աստվածաբան հեղինակներից Ղազար Զահկեցին դա բացատրում է հետևյալ կերպ: Ինչպես արեգակը բազմապատիկ մեծ է երկրից, սակայն ողջ արեգակը հայելու մեջ երևում է, և երբ հայելին բազում բեկորների կոտրես, յուրաքանչյուր մասի մեջ դարձյալ արևը ամբողջական կերևա, այսպես և Քրիստոսի մարմինը բազում անգամներ նշխարից ավելի մեծ է, բայց նշխարն օրհնվելով ճշմարիտ հոգևորականի կողմից՝ Պատարագի ընթացքում դառնում է Քրիստոսի իրական Մարմինը և գինին՝ Արյունը: Եվ եթե նշխարը բազում մասերի բաժանես, յուրաքանչյուր մասը վերստին իր մեջ կրում է Քրիստոսի ողջ Մարմինը օրհնյալ հացից, և մենք Քրիստոսին ճաշակում ենք ամբողջպես:

ՀԱՐՈՒՑՅԱԼՆԵՐԻՑ ԱՌԱՋԻՆԸ

Չնայած որ Քրիստոսից առաջ եղել էին հարություն առած մարդիկ ինչպես Հին Կտակարանի, այնպես էլ Տիրոջ երկրային կյանքի ժամանակ (Գ Թագ. 17.17-22, Դ Թագ. 4.32-37, 13.21; Մատթ. 9.18-25, Մարկ. 5.35-

42, Ղուկ. 7.11-15, 8.49-55, Հովհ. 11.43-44), սակայն Քրիստոսն է կոչվում հարուցյալներից անդրանիկը (Ա Կորնթ. 15.20, 23; Կող. 1.18), որովհետև մյուս հարուցյալները նորից մեռնելու էին, իսկ Քրիստոսի Հարությունը եղավ հավիտենական կյանքի համար մարդկանց ընդհանրական հարության օրինակը:

Ընդհանրական հարության ժամանակ մարդիկ գերեզմաններից Տիրոջն ընդառաջ են ելնելու նոր, անապական մարմիններով, քանզի Աստված նորոգելու է մարդկային մարմինները: Աստվածային այս կարողության մասին է վկայում չորս օրվա մահացած Ղազարոսի հարությունը: Մարդկային դիակը սկսում է փտել չորրորդ օրը, բայց Քրիստոս նորոգեց Իր սիրելի Ղազարոսի մարմինը և նրան հարություն տվեց: Նույնպես և Տիրոջ երկրորդ գալստյան ժամանակ Աստված պիտի առավել նորոգի մեռյալների մարմինները, ովքեր նոր կյանքի կկոչվեն արդեն կատարյալ մարմիններով, ինչպես նշում է Սուրբ Պողոս առաքյալը. «Բայց մեկը կասի՝ ինչպե՞ս են հարություն առնում մեռելները. կամ՝ ի՞նչ մարմնով պիտի գան: Անմի՛տ, ինչ որ դու սերմանում ես, չի կենդանանա, եթե չմեռնի: Եվ ինչ որ սերմանում ես, սերմանվածը այն նույն մարմինը չէ, որ ծնվելու է: Այսպես է նաև մեռելների հարությունը. սերմանվում է ապականությամբ և հարություն է առնում առանց ապականության. սերմանվում է անարգությամբ և հարություն է առնում փառքով. սերմանվում է տկարությամբ և հարություն է առնում զորությամբ. սերմանվում է շնչավոր մարմին և հարություն է առնում հոգևոր մարմին» (Ա Կորնթ. 15.35-37, 42-44):

ԱՐԵԳԱԿԻ ԽԱՎԱՐՈՒՄ

Շատ հետաքրքիր է Դիոնիսիոս Արիսպագացու դարձի պատմությունը, որը կապված է նաև Քրիստոսի խաչելության ժամանակ արեգակի խավարման հետ: Մի քանի տարի առաջ մենք բոլորս ականատես եղանք ողջ աշխարհում արեգակի մեծ խավարման: Այսօր ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ արեգակի խավարումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ լուսինը գտնվում է արևի և երկրի մեջտեղում և ծածկելով արևի ճառագայթների ճանապարհը երիկիր՝ արեգակի խավարման տպավորություն է թողնում: Սակայն զարմանալին այն է, որ Քրիստոսի խաչելության ժամանակ բնության օրենքներով արեգակի խավարումն անհնարին էր, որովհետև լիալուսին էր: Դա հայտնի է նրանից, որ խաչելությունը հրեաների զատիկից հետո եղավ, իսկ հրեաները մինչև այսօր այդ տոնը տոնում են լիալուսնի ժամանակ: Լիալուսնի ժամանակ երբեք հնարավոր չէ, որ լուսինը գտնվի արեգակի և երկրի մեջտեղում: Արեգակի այս զարմանալի խավարումից դարեր առաջ դրա մասին կանխագուշակվել էր Ամո-

սի մարգարեությունում: Ահա թե ինչ է ասվում այնտեղ. «Այդ օրը,- ասում է Տեր Աստված,- այնպես պիտի լինի, որ արեգակը մայր պիտի մտնի միջօրեին, և երկրում լույսը պիտի խավարի ցերեկով, ձեր տոնը սուգ պիտի դարձնեմ, ձեր բոլոր երգերը՝ ողբեր» (8.9): Հենց այդ ժամանակ Դիոնիսիոս Արիսպագացին, ով նաև զբաղվում էր աստղագիտությամբ և Երուսաղեմից շատ հեռու էր, տեսնելով, որ արեգակի խավարումն ամեն ինչով հակառակ է բնության օրենքներին, ասաց. «Կամ աշխարհն է կործանվում, կամ Արարիչն է չարչարվում»: Եվ երբ այս մեծ մարդը որոշ ժամանակ անց Աթենքի Արիսպագոսում լսեց Պողոս առաքյալի քարոզությունը, անմիջապես դարձի եկավ (Գործք 17.34)՝ հասկանալով արեգակի խավարման պատճառը: Շատ մարդիկ թերահավատությամբ են վերաբերվում սրան՝ ասելով. «Շատ էլ որ Ավետարանում գրված է խավարման մասին: Քրիստոսի աշակետներն էին գրողները, ինչ էլ որ ուզեին կգրեին»: Սակայն այն ժամանակ արեգակի այս զարմանալի խավարումը ապացուցվում է նաև պատմական փաստերով և այս դեպքին ականատես տարբեր պատմիչների թողած գրավոր վկայություններով: Շատ արժեքավոր է հատկապես հռոմեացի պատմիչ Ֆլեգոնի վկայությունը, որովհետև նա բացի պատմիչ լինելուց նաև աստղագետ էր: Տեղեկություններ տալով այս հրաշքի մասին՝ պատմիչը հաղորդում է, որ արեգակի խավարումն այնքան ուժեղ էր, որ երևում էին նույնիսկ աստղերը:

ՄԻՖՈՍ ԵՎ ԼՈԳՈՍ

Ոմանք Աստվածաշնչի ճշմարիտ պատմությունները սխալմամբ կոչում են աստվածաշնչյան առասպելներ: Սակայն հստակ տարբերություններ կան պատմության, առասպելի՝ միֆի, էպոսի և գրական այլ ժանրերի միջև: Հատկանշական է, որ Աստվածաշնչի պատմությունները չեն տեղավորվում առասպելի ժանրի կատեգորիայի մեջ: Նաև լեզվաբանական իմաստով հունարեն *միֆոս* բառը հակադրվում է *լոգոս* բառին նրանով, որ առաջինը խոսք է՝ կապված երևակայական պատմությունների հետ, որը կարիք չունի պատմական հիմնավորման և նույնիսկ անհրաժշտություն չկա դա անելու, ինչպես օրինակ՝ Հերակլեսի մասին առասպելը: Իսկ լոգոսը խոսք է, որն ունի պատմական հիմք, և կարելի է դրա վերաբերյալ բերել պատմական հաստատումներ կամ առարկություններ: Եվ Քրիստոս կոչվում է Բանն՝ թարգմանված հունարեն *լոգոս* բառից, որով Քրիստոսին կոչել է Ավետարանիչը (Հովհ. 1.1): Նաև այս անվանումը ցույց է տալիս, որ Քրիստոսի հետ կապված իրողությունները, Նրա մասին աստվածա-շընչյան վկայությունները առասպել չեն, որով և մեր հավատը հիմնված չէ վերացականի վրա, այլ՝ հաստատված ու վկայված ի-

ղողությունների, և սուտ չեն նաև խոստումները, որ Աստված տալիս է բոլոր Իրեն հավատացողներին:

ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՈՐՈՇՈՒՄ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Մոտ երկու հազար տարիների առաջ պատմության հանդեպ երկու մոտեցումներ առաջ եկան՝ իդեալիստական և մատերիալիստական: Իդեալիստական դիրքորոշումը մոտ է քրիստոնեական ընկալմանը: Այս հասկացության համաձայն՝ գիտակցությունը և բանականությունը ավելի բարձր են, քան նյութն ու նյութականը, և գիտակցությունն ու բանականությունն են որոշում պատմության ընթացքը: Այս ընթացքի մեջ մարդիկ օգտագործում են իրենց ընդունակությունները, որոնք մարդկությանը տրվում են Աստծուց: Նաև անտիկ շրջանի փիլիսոփա էպիկուրն ասում էր, որ տաղանդավոր մարդկանց գյուտերը վճռորոշ դեր են կատարում մարդկության առաջընթացի համար: Իսկ մատերիալիստական հասկացությունը ենթադրում է, որ նյութն է առաջնային, և սոցիալ-տնտեսական պայմաններն են որոշում պատմության և մարդկության զարգացումը:

Երբ երկու դիրքորոշումներ հակադիր են, երբեմն ճիշտ ճանապարհը եղածի միջինը ընտրելն է: Եվ մենք ընդունում ենք, որ հավատքն ու գիտակցությունը ստորակարգ չեն նյութական իրերին ու երևույթներին, այլ դրանք են սահմանողները նյութականի ընթացքի: Մենք պետք է կենդանի և արթուն պահենք մեր հավատքը և գիտակցությունը՝ ապացուցելու, որ հոգին ավելի զորավոր է ու մարմնի կենդանարար ուժն է, և միտքն ու գիտակցությունը առաջընթացի որոշողն են: Այս վերոնշյալ տեսակետները հետևյալ հարցի յուրօրինակ պատասխանն են՝ գիտակցությու՞ն է կեցության որոշողը, թե՞ կեցությունն է որոշում գիտակցությունը: Որպես քրիստոնյաներ՝ մենք ապացույց ունենք, որ գիտակցությունն ու հավատքը ավելի բարձր են և նույնիսկ դժվարին պայմանները չեն կարող արգելք լինել մեր ճանապարհին դեպի կատարելություն, և մենք ի զորու ենք շտկելու աշխարհը մեր հավատքի և հոգու ուժով, Աստծո շնորհի զորակցությամբ:

ԹԵԻԶՄ, ԴԵԻԶՄ ԵՎ ԱՆԹՐՈՊՈՄՈՐՖԻԶՄ

Մարգարեների տեսիլքներում Աստված հայտնվում է տարբեր կերպարանքներով, բայց իրականում Աստված հոգի է, ազատ մարդակերպական ձևերից: Աստծո հայտնվելը մարգարեներին այսպիսի ձևերով

մեկ նպատակ ուներ՝ հասկացված լինել աստվածայինի համեմատ սահմանափակ բանականություն և տրամաբանություն ունեցող մարդկանց համար: Օրինակ՝ Հին Կտակարանում տեսնում ենք Ծննդոցի հեղինակի ոճը պատմություն պատմելու մեջ: Դրախտում լսվում է քայլող Աստծո ոտնաձայնը, Աստված զղջում է, հիշում, զայրանում, հոտոտում և այլն (Ծնն. 3.8, 6.6-7, 8.1, 21, 9.15-16, 19.29, 30.22, Ելք 2.24, 6.5, Ղևտ. 26.31 և այլն): Այսպիսի արտահայտչաձևի դեմ հանդես եկավ 16-17 դարերում առաջած դեիզմ կոչվող փիլիսոփայական ուղղությունը: Դեիզմը թեիզմի հականիշն է ոչ ժխտական իմաստով: Թեիզմ բառը մեզ ծանոթ է աթեիզմ բառից, որը ժխտում է Աստծո գոյությունը: Թեիզմը հաստատումն է Աստծո գոյության՝ պնդումով, որ Աստված անձ է, ում հետ կարող ենք խոսել և ում կարող ենք ուղղել մեր աղոթքները: Ի հակադրություն թեիզմի՝ դեիզմն ապացուցում է Աստծո գոյությունը, սակայն Նրան համարելով ոչ թե անձ, այլ տիեզերքի անանձ, բարձրագույն սկզբունք: Աստծո համար մարդկային հատկանիշների օգտագործումը կոչվում է անթրոպոմորֆիզմ՝ մարդակերպություն: Դեիզմը, հերքելով Աստծո անձ լինելը, ասում է, որ անթրոպոմորֆիզմը կցված է Աստծուն անձ համարող թեիզմին, և եթե թեիզմը բաժանվի անթրոպոմորֆիզմից, ապա անօգուտ կդառնա: Սակայն նոր ժամանակների փիլիսոփաներից մեկն իր աշխատություններում դիտարկելով այս տեսակետը, ասում է, որ անթրոպոմորֆիզմն առնչվում է միայն պատմության լեզվի հետ և չի առնչվում դրա օբյեկտի, այսինքն՝ Աստծո հետ: Սա շեշտվում է նաև Աստվածաշնչում, և աստվածաշնչյան անձինք ևս նման ձևն ընկալում են որպես Աստծո գործունեությունը մարդկայնորեն ըմբռնելի կերպով արտահայտելու պարզունակ միջոց: Օրինակ՝ Աստված ասում է Սամուել մարգարեին, որ զղջացել է Սավուղին թագավոր օծելու համար (Ա Թագ. 15.10): Իսկ Սամուելն ինքը քիչ հետո, հակառակ Աստծուց իրեն ասվածի, նշում է. «Աստված մարդ չէ, որ զղջա» (Ա Թագ. 15.29):

Նաև Աստծո հիշելը չպետք է հասկանալ մեր բնությանը հատուկ ձևով: Օրինակ՝ Աստծո կողմից Նոյին հիշելը նշանակում է, որ Աստված գթաց Նոյին, երբ նա նեղության մեջ էր: Աստծո պարագային *հիշել* բառը Սուրբ Գրքում նշանակում է խոստումների և պարգևների իրականացում (Ծնն. 19.29, Ելից 2.24, 32.13, Սաղմ. 8.13, 97.3, 135.23):

Նման փոխաբերական իմաստով պետք է ընկալել նաև Աստծո հոտոտելը: Զրհեղեղից հետո Նոյի կատարած ողջակեզի առնչությամբ ասվում է, որ «Տեր Աստված հոտոտեց անուշ բույրը» (Ծնն. 8.20-21): Սա նշանակում է, որ զոհաբերությունը հաճելի էր Աստծուն: Նման միտք գործածում է նաև Պողոս առաքյալը, որով երևում է դրա փոխաբերական իմաստը. «Արդ, գոհություն Աստծու, որ Քրիստոս Հիսուսով մեզ միշտ

հաղթության է տանում և իր գիտության բուրմունքը մեզնով սփռում է ամեն տեղ, քանի որ Քրիստոսի բուրմունքն ենք Աստծու առաջ՝ և՛ փրկվածների մեջ, և՛ կորստյան մատնվածների մեջ. ոմանց՝ մահվան հոտ, որ տանում է դեպի մահ և ոմանց՝ կենդանության բույր, որ տանում է դեպի կյանք» (Բ Կորնթ. 2.15-16): Նաև փիլիպեցիներին ուղղված թղթում իրեն տրված նվերը առաքյալը կոչում է անուշահոտություն, ընդունելի պատարագ՝ հաճելի Աստծուն (Փիլիպ. 4.18):

ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ

Երախտամոռության գարշելի օրինակ է Տիրոջն ապտակողը, որի անունը Մաղքոս էր: Սրա ականջն էր կտրել Պետրոսը (Հովհ. 18.10), իսկ Քրիստոս սիրով բուժել էր նրա կտրված ականջը (Ղուկ. 22.50-51): Սակայն Մաղքոսը, որ քահանայապետի ծառան էր, իր տիրոջը հաճոյանալու համար հարցաքննության ժամանակ ապտակեց Քրիստոսին (Հովհ. 18.22): Քրիստոսի վրա թքողի անունը Ոչքոր կամ Ոչքորան էր (Մատթ. 26.67, Մարկ. 14.65), լեղին խմեցնողի անունը՝ Ռագոս (Հովհ. 19.29): Քրիստոսի հետ խաչված ավազակներից (Մատթ. 27.38, Մարկ. 15.27, Ղուկ. 23.32, Հովհ. 19.18) բարեմիտը հեթանոս էր, իսկ հայհոյիչը՝ հրեա: Սակայն հավատացած ավազակի մասին ասվում է, որ նա հետո հրեություն էր ընդունել, իսկ չար ավազակը իր ծննդյամբ բուն հրեա էր: Հավատցյալ ավազակի անունը Դեմնոս էր, անհավատինը՝ Կեստոս: Հարյուրապետի անունը, ով իր զինվորներից մեկին հրամայեց խոցել Քրիստոսին (Հովհ. 19.34), Ղունկիանոս էր: Քրիստոսի մահը տեսնելով՝ հարյուրապետը հավատաց Քրիստոսին (Մատթ. 27.54, Մարկ. 15.39, Ղուկ. 23.47): Երբ Քրիստոսի կողը խոցեցին, կողից արյուն և ջուր բխեց (Հովհ. 19.34): Սա տեսնելով՝ Ղունկիանոս հարյուրապետը իր ձեռքը վերցրեց արյունոտ տեգը և համբուրեց, այնուհետև շփեց իր կուրացած աչքը, որը հավանաբար վնասվել էր մարտերից մեկի ժամանակ, և տեսողությունը վերականգնվեց: Մեր Սուրբ Եկեղեցին հատուկ հարգանքով ամեն տարի նշում է Ղունկիանոս հարյուրապետի հիշատակը:

ԴԱՎԱՆԱՆՔ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Դավանանքի և վարդապետության սահմանումներն ու դրանց տարբերությունները մատչելիորեն բացատրում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը: Դավանանքը վերաբերում է հավատքին և կրոնին, իսկ վարդապետությունը՝ աստվածաբանությանը: Դավանանքը ուսուցանում

է Եկեղեցին, իսկ վարդապետությունն ուսուցանում են աստվածաբանական դպրոցները: Դավանությունը Եկեղեցու հեղինակությամբ զորացած ճշմարտություն է, վարդապետությունը դպրոցների հեղինակությամբ հաստատված կետ: Եկեղեցին այս իմաստով ճկունություն է հանդես բերել, որով միևնույն դավանանքի առկայությամբ և այն չխախտելով՝ առաքելահաստատ Եկեղեցիներն ունեն տարբեր վարդապետություններ: Մեր Եկեղեցին, սակայն, զգուշացրել է, որ վարդապետությունը չպետք է բարձրացնել դավանանքի աստիճանին: Դավանել նշանակում է ընդունել, խոստովանել, և մեր դավանությունն արտահայտված է Հավատամքի մեջ, որ հատկապես ամեն Պատարագներին արտասանվում է եկեղեցիներում արարողության ընթացքում: Հավատամքով բոլոր քրիստոնյաներս խոստովանում ենք, որ ճանաչում ենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն իբրև երեքանձնյա մի Աստվածություն՝ Նրանց միջև չընդունելով առավելություն կամ նվազություն, հառաջագույնություն կամ հետնություն, այլ միանգամայն հավասար, ամեն ինչում միաբան և միևնույն բնությամբ, Հայրը ծնող, Որդին ծնունդ, իսկ Հոգին ոչ թե ծնունդ, այլ բխում Հորից, Երեքն էլ անժամանակ և Որդին ու Սուրբ Հոգին ի սկզբանե Հոր հետ: Որդին անճառապես մարմնացած Սուրբ Կույս Մարիամից, Նույն Ինքը՝ ճշմարիտ Աստված և կատարյալ մարդ, որ Իր Աստվածության զորությունը ցույց տվեց որպես Աստված, և մարդկային կարիքներն առանց մեղքերի կրեց՝ որպես մարդ մեկ բնությամբ: Նույն Ինքը խաչին ու մահվանը համբերեց և երրորդ օրը հարություն առավ՝ վերացնելով մեր վրայի անեծքը, մեղքը և մահը: Մեր մարմնով համբարձվեց երկինք և գալու է կենդանիներին ու մեռածներին դատելու և յուրաքանչյուրին ըստ իր գործերի հատուցելու, արդարներին՝ կյանք հավիտենական, իսկ մեղավորներին՝ տանջանք հավիտենական: Ինչպես նաև հավատում ենք մեկ կաթողիկե և առաքելական Սուրբ Եկեղեցուն, մեկ մկրտությանը, ապաշխարությանը, մեղքերի քավությանն ու թողությանը, մեռյալների հարությանը, հոգիների և մարմինների դատաստանին, երկնքի արքայությանը և հավիտենական կյանքին: Չնայած այս ընդհանուր Հավատամքին՝ Առաքելահաստատ Եկեղեցիների միջև այսօր կան տարբերություններ, բայց դրանք միայն ծիսակարգային են, վարդապետական և ոչ դավանական, դրա համար միմյանց համահավասարորեն ընդունում են Քրիստոսի առաքյալների կողմից հաստատված Եկեղեցիները և զգուշացնում մոլորեցնող աղանդներից, որոնք այլ դավանանք ունեն:

Կան աղանդներ, որ չեն ընդունում Քրիստոսի աստվածությունը, նաև Եկեղեցու ուսուցումը, թե Որդին ծնունդ է Հորից: Սակայն Տերը, որ բոլորին ծնունդ է շնորհում, մի՞թե Ինքը չի կարող ծնել: Հորից Որդու ծնունդը պետք չէ հասկանալ մարդկային իմաստով: Հորից Որդու ծննդյան մասին

սաղմոսում ասվում է. «Դու Իմ որդին ես, Ես այսօր ծնեցի Քեզ» (Սաղմ. 2.7), ինչպես նաև՝ «Քեզ արշալույսից առաջ ծնեցի» (109.3):

Հայր Աստված կատարյալ է, և ոմանք գուցե ասեն, թե նրանից ծնված Որդին նույն կատարելությունը չի կարող ունենալ: Սակայն թեև մարդն իր որդու ծնունդից կատարելություն չի առնում, բայց իր կատարելությունից իր նմանն է ծնվում: Եվ մարդկանց պարագային նույնիսկ անկատար հայրը կարող է կատարյալ որդի ծնել, ինպես որ կույր հորից առողջ տեսողությամբ որդի է ծնվում: Եթե մարդուց ծնվածը մարդ է, ուրեմն նաև Աստծուց ծնվածը Աստված է:

Կան աղանդներ, որ մերժում են նաև Սուրբ Հոգու աստվածությունը: Բայց Ծննդոց գրքի հենց սկզբում նշվում է, որ «Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա» (1.2): Ասում են, թե այստեղ Աստծո Հոգին պետք է հասկանալ որպես զորություն, սակայն Դավիթ մարգարեն տալիս է Ծննդոց գրքի այս մտքի ճիշտ մեկնությունը. «Տիրոջ ձայնը ջրերի վրա է. փառքի Աստվածը որոտաց, Տերն Ինքն է անսպառ ջրերի վրա» (Սաղմ. 28.3): Սաղմոսի այս նույն խոսքերը քահանայի կողմից ասվում են նաև Մկրտության արարողության ժամանակ՝ ջրի օրհնությունից առաջ:

Եկեղեցական հեղինակները պարզ համեմատություններով փորձել են ըմբռնելի դարձնել Աստծո՝ Սուրբ Երրորդության գաղափարը: Հայր Աստված Սուրբ Երրորդության առաջին անձն է, Որդին ծնունդ է Հորից, իսկ Սուրբ Հոգին բխում է Հորից (Հովհ. 15.26): Սա որոշակիորեն հասկանալի է դառնում հետևյալ օրինակներով: Ծաղիկը մեկն է, սակայն գույնը և հոտը նրանից են, կրակը մեկն է, սակայն լույսը և ջերմությունը նրանից են:

Քրիստոս մարդացավ, աշխարհ եկավ՝ միևնույն ժամանակ նաև ներկա լինելով Աստծո աջ կողմում, ինչպես շարականագիրն է քանիցս ասում Ծննդյան շարականների մեջ. «Ոչ մեկնելով ի Հօրէ»: Սուրբ Գրիգոր Տաթևացին սա բացատրում է գեղեցիկ օրինակով. ջերմությունը բաժանվում է կրակից և տաքացնում է ջուրը, սակայն ջերմությունն անպակաս է մնում կրակի մեջ, նույպես և բույրը կարող է խնձորից բաժանվել: Այսպես և Աստծո Որդին մարդացավ, ծնվեց Սուրբ Աստվածածնից և միևնույն ժամանակ աննվազ մնաց Հայր Աստծո աջ կողմից: Բայց ինչպես ասում է մեր եռամեծ Սուրբը, Աստծո մասին չափից ավելին քննելը հանդգնություն է, հավատալը՝ փրկություն, և ճանաչելը՝ կյանք հավիտենական:

ԳԻՏԵԼԻՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Հրեա փիլիսոփաներն իրենց աստվածաբանությունը հիմնում էին Աստվածաշնչի ուսուցումների և մարգարեությունների վրա: Սակայն միջին դարերում առաջ եկան հրեա մտածողներ, ովքեր իրենց մտքերը հաստատեցին փիլիսոփայական սկզբունքներով: Նրանք այսպես վար-

վեցին, որովհետև տեսան, որ մուսուլման աստվածաբաններն իրենց աշխատություններում գործածում են հույն փիլիսոփաների տեսությունները: Այդ ժամանակ մահմեդական մտածողները, հունարեն լեզուն սովորելով, արդեն կարողանում էին հունարեն ընթերցել հույն փիլիսոփաների աշխատությունները կամ դրանք թարգմանել արաբերենի:

Հրեա մտածողներից մեկը իր հայացքները կառուցեց նման փիլիսոփայական սկզբունքներով: Նա ասում էր, որ հավատը ևս գիտելիք է, և փիլիսոփայությունը ճանապարհ է, որ տանում է դեպի այս գիտությունը: Այսպիսի հասկացության համար Աստված օբյեկտ է, որին նայելով՝ կարող ենք պատկերացում կազմել այդ օբյեկտի մասին: Այս տեսակետին դեմ հանդես եկավ մեկ այլ հրեա փիլիսոփա, ով նախընտրեց ամրապնդել իր մտքերը Աստվածաշնչի իմաստությամբ: Նա ջանաց ապացուցել, որ Աստված գիտելիքի օբյեկտ չէ, այլ Նա գիտելիքի սուբյեկտն է: Այսինքն՝ գիտելիքն ինքն է գալիս Աստծուց, Աստծո պարգևի շնորհիվ մարդը կարող է հասկացողություն, հասկանալու կարողություն ունենալ, և Աստված տաղանդ է տալիս մարդկանց, որոնցով մարդիկ ընդունակ են հայտնագործություններ անելու և բազմապատկելու մարդկային գիտելիքը: Ահա նաև այս բացատրությամբ առավել հասկանալի է դառնում որևէ մեկին բացարձակ իմաստով ուսուցիչ կոչելու Քրիստոսի արգելքը (Մատթ. 23.8), քանի որ Աստված Ինքն է գիտելիքի աղբյուրը:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԵՑ ԿՈԱՊԱՇՏՈՒԹՅԱՆԸ

Շատ հետաքրքիր հայտանգործություններ եղան Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հետ կապված, երբ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը համաձայնություն տվեց Մայր Տաճարում պեղումներ կատարելու իրեն ներկայացված առաջարկին: Այս մասին մեծ խանդավառությամբ պատմում էր Վազգեն Վեհափառն ինքը Բուենոս Այրեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում տեղի հայությանը 1960 թ. հուլիսի 31-ին: Չորս տարիների ընթացքում Էջմիածնի հազարամյա քարերի տակ հայտնաբերվեցին 4-5-րդ դարերի հին հիմքերը, և այս պեղումների արդյունքները եկան մեկ անգամ ևս հաստատելու մեր պատմիչների վկայությունները Սուրբ Էջմիածնի մասին: Մայր Աթոռի Ավագ Սեղանի վերակառուցման ժամանակ ևս պեղումներ կատարվեցին ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանի գլխավորությամբ: Հայտնաբերվեցին 5-րդ դարի վեմաքարը, խաչքարեր և այլ արժեքավոր իրեղեններ: Սակայն երբ պեղումները շարունակվեցին, 5-րդ դարի վեմաքարի տակ հայտնաբերվեց հեթանոսական մի կրակարան, և այս հայտնաբերումը կապված էր մեր պատմության փառավոր էջերից մեկի՝ Վարդանանց

պատերազմի ու դրան հաջորդող դեպքերի հետ: Ինչպես պատմում է երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը, Վարդան Մամիկոնյանի և մյուս քաջերի նահատակությունից հետո պարսիկներն սկսեցին քանդել մեր եկեղեցիները, իսկ որոշ եկեղեցիներ վերածեցին կրակապաշտական տաճարների: Սակայն հայ ժողովուրդը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ հաղթանակ տարավ՝ ձեռք բերելով նաև քրիստոնեության ազատությունը Հայաստանում: Վահան Մամիկոնյանն իր առաջին պարտքը համարեց նորոգել Սուրբ Էջմիածինը: Նա պահպանեց պարսիկների կրակարանը և վրան զետեղել տվեց վիմաքարը՝ որպես կռապաշտության դեմ քրիստոնեության հաղթության նշան:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍԵՐԸ

Պողոս առաքյալը նախապես հալածում էր քրիստոնյաներին, բայց այդ հալածանքների ժամանակ՝ Դամասկոսի ճանապարհին, Քրիստոս հանկարծ հայտնվեց նրան պայծառ լույսի մեջ և հարցրեց՝ ինչու՞ ես Ինձ հալածում (Գործք 22.7): Զարմանալի է այս հարցը, որովհետև Պողոսը Քրիստոսին անձնապես չգիտեր և երբեք էլ Նրան չի հալածել: Սակայն այս հարցով Տերը հասկացնում էր, որ յուրաքանչյուր քրիստոնյայի ցավ նաև Իր ցավն է, և այսօր էլ Տերն Ինքը ևս զգում է մեր ցավերն ու վշտերը և Իր մեծ սիրով առաքում Իր մխիթարությունները: Շատեր դա չեն զգում, որովհետև նրանք իրենց սրտերը փակել են Աստծո առաջ: Մինչդեռ Աստծո առաջ սիրտը բացելու դեպքում մեր հոգում բացվում են հոգևոր աչքերը, որոնցով այնքան հրաշալի բաներ ենք տեսնում, որոնք հնարավոր չէ տեսնել մարմնավոր աչքերով: Պողոսը, Քրիստոսին հավատալով, այնպիսի մեծ գործունեություն է ծավալել, որ նրան սկսել են կոչել 13-րդ առաքյալ: Նոր Կտակարանի մի մեծ մաս են կազմում Պողոս առաքյալի նամակները՝ ուղղված տարբեր եկեղեցիներին, որոնցում բազում օգտակար խորհուրդներ կան, և որոնցում երևում է հավատքի անսահման խորությունն ու Աստծո հանդեպ սիրո անսահմանությունը:

ՄԱՐԴԸ

Մարդու մասին շատ հետաքրքիր մտքեր ունի Սուրբ Գրիգոր Նյուսացին: Եկեղեցական Հայրն ասում է, որ ի տարբերություն կենդանիների՝ մարդը չունի բնական զենքեր՝ կոտոշ, պաշտպանող մազեր, արագություն, ճիրաններ, և կարծես թե խղճալի է իր այս մերկությամբ: Բայց եթե

մարդն այդ բնական զենքերն ունենար, ապա կարիք չէր զգա մյուս արարածների, մինչդեռ հիմա իշխում է նրանց: Արագության համար մարդն օգտագործում է ձիուն, մերկությունը ծածկելու համար՝ ոչխարին, պաշտպանության համար՝ ատամներով զինված շանը: Մարդն ուղիղ իրան ունի, իսկ կենդանիներն ունեն ներքև հակված մարմին: Դա ցույց է տալիս մարդու իշխող դիրքը և դեպի երկինք ուղղված հայացքը:

Կենդանիներն իրենց զգացումներն արտահայտում են ձայներով և մարմնի շարժումներով: Մարդն իր զգացումներն արտահայտում է լեզվով, սակայն լեզվով նա նաև թաքցնում է իր մտքերը: Կենդանիներն զգում են և հասկանում, մարդը կարող է անել ավելին՝ մտածում է և իմանում, բայց նրանք երկուսն էլ ցանկանում են: Սակայն ցանկանալու ունակությունը մարդը պետք է օգտագործի ոչ թե կենդանիների պես՝ մարմնական հաճույքների և մեղսալի կրքերի համար, այլ առավել պետք է ցանկանա հաստատուն մնալ այն ճանապարհին, որ ցույց տվեց Աստված:

ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐՈՎ

Անդրադառնանք Ավետարանի իմաստալի պատմություններից մեկին: Փարիսեցիները Հիսուս Քրիստոսի մոտ ուղարկեցին իրենց աշակերտներին՝ տալու ընդամենը մեկ հարց: Այս հարցը բավականին խորամանկ էր: Փարիսեցիները երկար ժամանակ խորհելուց հետո այնպիսի մի հարց էին գտել, որի բոլոր հնարավոր պատասխանները շատ վտանգավոր էին պատասխանողի համար: Փարիսեցիների աշակերտները հարցրեցին Քրիստոսին. «Օրինավո՞ր է կայսերը հարկ տալ»: Բացասական պատասխան տալով՝ Քրիստոս կհամարվեր կայսեր թշնամին, իսկ դրական պատասխանը կզայրացներ հրեաներին, որովհետև նրանք չէին ցանկանում հարկ վճարել, սակայն հռոմեացիների հպատակներն էին, քանի որ Իսրայելը գտնվում էր Հռոմեական կայսրության իշխանության ներքո: Եվ Հիսուս ասաց. «Հարկի դահեկա՛ն ցույց տվեք»: Եվ նրանք մի դահեկան բերեցին: Եվ Նա ասաց նրանց. «Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է»: Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացե՛ք, տվե՛ք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. 22.15-22, Մարկ. 12. 13 -17, Ղուկ. 20. 20-26): Իր պատասխանով Տերը ցույց տվեց, որ Իր վարդապետությունը բարձր է մարդկային բոլոր գիտություններից:

Դրամի վրայինը կեսարի պատկերն էր, այսինքն՝ պատկերը հենց ինքը կեսարը չէր: Այդպես էլ և մենք պատկերն ենք Աստծո, սակայն նույնը չենք, ինչ Աստված: Մեր բնությունը, կարելի է ասել, երկակի է. մեկը նման է աստվածայինին, մյուսը՝ բաժանված սեռերի: Եվ մարդը պատկերն է Աստծո առաջին հերթին իր ազատ կամքով, նաև հոգու անմա-

հությամբ: Դրամի վրայի պատկերը մնում է անփոփոխելի, բայց մենք կարող ենք փոխել մեզանում Աստծո պատկերը: Եվ Աստծո պատկերը մեր հոգիներում անաղարտ պահելու համար քրիստոնեությունը մեզ պատվիրաններ է տալիս, որոնցով մենք կարող ենք ապրել աստվածահաճո ընթացքով և արժանանալ Երկնքի Արքայության՝ տալով կայսրինը կայսեր և Աստծունը՝ Աստծուն:

ՀՈԳԵՎՈՐԸ ԵՎ ՄԱՐՄՆԱՎՈՐԸ

Մարդը ստեղծված է Աստծո պատկերով, օժտված ազատ կամքով և անմահ հոգով, բայց միևնույն ժամանակ մարդուն հատուկ են նաև անասնական հատկությունները ուտելու և սերնդագործման հետ կապված իրողություններով, մարդը հակված է դեպի անասնական կիրքը, որկրամոլությունը և այլ ահավոր մեղքերը: Եվ թվում է, թե մարդը աստվածային և կենդանական հատկությունների խառնուրդ է: Սակայն Երկնքի Արքայության մեջ մարդը լինելու է միայն իր աստվածային հատկություններով: Քրիստոս ասաց. «Երբ մեռելներից հարություն առնեն, ո՛չ տղամարդիկ կին կառնեն և ո՛չ էլ կանայք մարդու կգնան, այլ կլինեն հրեշտակների նման, որ երկնքում են» (Մարկ. 12.25): Իսկ կերակրի վերաբերյալ Պողոս առաքյալն ասաց կորնթացիներին ուղղված իր առաջին նամակում. «Ուտելիքը որովայնի և որովայնը ուտելիքի համար է: Բայց Աստված և՛ այս, և՛ այն պիտի կործանի» (6.13): Հետևաբար, կարելի է ասել, որ երբ մարդը հետևում է հոգևորին, իր մեջ պայծառեցնում է աստվածային պատկերը, իսկ երբ առավել հետևում է կրքերին, շեշտում է իր անասնանմանությունը՝ ստվերելով իր աստվածային պատկերը: Դրա համար եկեղեցական հեղինակներից մեկն ասում է, որ Աստված մեզ տվեց և՛ հոգևորը, և՛ մարմնավորը, հոգևորը, որպեսզի վայելենք և հաճույք ստանանք, իսկ մարմնավորը, որպեսզի օգտվենք դրանից: Եվ ահա Քրիստոս մարդկությանը շնորհներ պարգևեց առաքինի, բարոյական ճիշտ կյանքով ապրելու և ճշմարիտ աստվածպաշտության ճանապարհով հաստատուն ընթանալու համար:

ՓԱՌԱՎՈՐՈՒՄ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Խոր Վիրապի եկեղեցու դրսի պատին արված մի քանդակի վրա պատկերված են Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ թագավորը, իսկ անկյունում՝ Աշխեն թագուհին և Խոսրովիդուխտը: Զարմանալի է, որ չար

Տրդատ թագավորը դարձավ բարի և հեզ քրիստոնյա: Սակայն Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է. «Չկա բարի կամ արդար մարդ առանց մեղքի, և չկա վատ մարդ առանց առաքինության»: Այնուհետև եկեղեցական Սուրբ Հայրը, շեշտելով, որ մարդու բնությունն Աստծո կողմից չար չի ստեղծվել, ասում է. «Ոչխարը չի կարող վայրենի լինել, իսկ գայլը՝ հեզ, որովհետև նրանց բնությունն է այդպես, իսկ մարդը մեկ լինում է չար, մեկ՝ հեզ, որովհետև օժտված է ազատությամբ, և հետևաբար, չարը բնությունից չէ»: Ճիշտ նույն կերպ էլ Տրդատ թագավորը, իր ազատ կամքով ընտրելով բարին, այդուհետ ճշմարիտ քրիստոնյայի կյանք վարեց: Զարմանալի է Աստծո գործունեությունը. Հովհան Ոսկեբերանն ասում է, թե որպեսզի մարդիկ իմանան, որ ամեն ինչ պատահականություն չէ, Աստված Իր փառավոր գործերն անում է Իր թշնամիների միջոցով, ինչպես օրինակ, Պողոս առաքյալի միջոցով դարձի բերեց քրիստոնյաներին և Տրդատ թագավորի միջոցով (իհարկե, նաև Գրիգոր Լուսավորչի նախանձախնդիր գործունեությամբ) քրիստոնյա դարձրեց ողջ հայոց երկիրը: Ոսկեբերանը նշում է, որ այդպես լինում է նաև առանձին մարդու կյանքում: Եթե մարդն Աստծո պատվիրանների համաձայն է ապրում, սակայն նաև թշնամիներ ունի, Աստված ի վերջո այդ մարդուն փառավորում է իր թշնամիների միջոցով, ինչպես որ տեսնում ենք Հովսեփի կյանքի պատմությունից:

ԿԱՄՔ, ՀԱՃՈՒՅՔ ԵՎ ԿՐՔԵՐ

Որոշ մարդիկ հարցնում են. «Ինչու՞ պետք է մերժենք կյանքի հաճույքները՝ կապվելով քրիստոնեության կապանքներով»: Այս հարցին պատասխանելու համար նախ հարկ է մի քանի մտորումներ ունենալ մարդկային կամքի, հաճույքի և կրքերի մասին:

Անտիկ փիլիսոփայության մեջ հատկանշական մի պատկերացում կա մարդկային կամքի մասին: Մարդու բանականությունը՝ որպես կառք վարող, վարում է մի կառք՝ լծված երկու ձիերով, որոնցից մեկը հեզ և հնազանդ է, իսկ մյուսը վայրի: Չար ձին հաճախ ջանում է կառքը ճանապարհից դուրս հանել: Սա նշանակում է, որ բանական մարդը երբեմն ընկնում է մեղքի մեջ իր կամքի սխալ ընտրության պատճառով: Սուրբ Հովհան Ոսկեբերանը, ցանկանալով ցույց տալ մարդկային բնության բարի լինելը, համեմատություն է անում մարդու և կենդանիների միջև: Նա ասում է, որ ոչխարը միշտ հեզ է և չի կարող գազանների պես լինել իր խոնարհ բնության պատճառով, իսկ գայլը, ընդհակառակը, չի կարող հնազանդ լինել և վայրի գիշատիչ է, որովհետև գազանի բնություն ունի: Սակայն մարդը մեկ լինում է համեստ, մեկ՝ գոռոզ, երբեմն՝ բարի և եր-

բեմն՝ չար: Մարդը միայն մեկ բարի բնություն ունի, բայց կարող է չար դառնալ իր ազատ ընտրության արդյունքում: Եկեղեցական մեր հեղինակներից Առաքել Սյունեցին ասում է, որ մարդը կարծես երկու կամք ունի, մեկը՝ բնությունից, իսկ մյուսը ներմուծված չարից: Եվ այս չար կամքը մարդուն ներքաշում է մեղավոր արարքների մեջ: Սակայն մարդկային բնությունն ավելի կարևոր և բարձր է, քան մարդկային կամքը, որով և կամքն է հետևողը բնության: Եթե կամքը չի հետևում բնությանը, մարդն ընկնում է հոգևոր և մարմնավոր չարչարանքների մեջ: Օրինակ՝ ծարավը, քաղցը, հոգնածությունը բնության կրքերն են, և դրանց պահանջներին հակառակ գնալը մահվան կտանի: Նույն կերպ սխալ, անբարոյական արարքներ գործելով՝ մարդը հակառակ է գնում բարի բնությանը և որպես հետևանք հոգևոր և մարմնավոր տանջանքներ ունենում: Գերմանացի փիլիսոփաներից մեկն ասում է, որ բանական մարդը չի գնում հաճույքների հետևից, այլ ընթանում է այն ճանապարհով, որն ազատ է չարչարանքներից: Սա ճիշտ է, որովհետև հաճախ մեղսալի կարճ հաճույքը բերում է շատ տվայտանքներ: Հույն փիլիոփաներից մեկն ասել է. «Քննիր քո ընթացքը, եթե հաճույքն ավելին է, քան դրանից հետո եկող տանջանքը, մտիր այդ հաճույքի մեջ, սակայն եթե հաճույքից ծագող չարչարանքները շատ են լինելու, հեռու փախիր այդ հաճույքից»: Սա նշանակում է, որ առաջին հայացքից թվացող հաճույքը տանջանք է բերում, իսկ առաջին հայացքից թվացող զսպումը՝ հաճույք: Օրինակ՝ փոքր ինքնազսպումի հետևանքով տանջանքներից զերծ մնալը շատ ավելի մեծ հաճույք է, քան փոքր հաճույքի բերած մեծ տանջանքը: Մեղավոր հաճույքներից հեռու մնալու վարվելակերպը Քրիստոսի ցույց տված նեղ ճանապարհն ու նեղ դուռն է (Մատթ. 7.13-14, Ղուկ. 13. 24), որոնք առաջնորդում են մեզ դեպի կյանք, մինչդեռ մեղսալի հաճույքների լայն դուռը և ընդարձակ ճանապարհը առաջնորդում են դեպի կործանում (Մատթ. 7.13): Եվ եթե մենք բանական մարդիկ ենք, չպետք է հետևենք ենթադրյալ հաճույքներին, այլ պետք է գնանք այն ճանապարհով, որն ազատ է չարչարանքներից, այսինքն՝ ազատ է տանջանքներից այս կյանքում և հանդերձյալում:

Կիրքը և հաճույքը կապված են միմյանց և միաժամանակ անհետանում են: Օրինակ՝ երբ ծարավ ենք և ջուր ենք խմում, հաճույք ենք զգում, բայց այս հաճույքը անհետանում է, երբ հագեցնում ենք մեր ծարավը: Դրանից հետո, եթե մեկն ստիպի ավելին ջուր խմել, տանջանք կզգանք: Նույն կերպ է հոգևոր հագեցրած մարդը չի կարող ավելին ուտել: Այս

կիրքը և հաճույքը հաճախ միաժամանակ են անհետանում, և շատ հաճույքներ այնքան արժանի չեն, որ դրանց պատճառով չարչարվենք:

Երբեմն մարդիկ ասում են. «Եթե մենք կարիքներ չունենայինք, երջանիկ կլինեինք»: Բայց այս միտքը սխալ է, որովհետև եթե երջանկությունը կարիքների բացակայությունն է, ուրեմն մեռած մարդիկ և քարերը երջանիկ են, որովհետև նրանք ոչ մի կարիք չունեն: Որպեսզի գտնենք այն, ինչ մեզ երջանիկ է դարձնում, պետք է կարողանանք տեսնել և իմանալ մեր իրական կարիքները:

ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՃՈՒՅՔ

Մեր Եկեղեցու սրբուհիներից է Հռիփսիմեն, ով հայտնի էր իր հիացնող գեղեցկությամբ: Նա վանական կյանքով էր ապրում և Հռոմեական կայսրության ամենագեղեցիկ կինն էր: Իմանալով, որ Դիոկղետիանոս կայսրը, իր գեղեցկության մասին տեղյակ դառնալով ցանկանում է իր հետ ամուսնանալ, Հռիփսիմեն իր ընկերուհիների հետ, որոնց գլխավորն էր Գայանե մայրապետը, փախավ Հայաստան: Դիոկղետիանոսը նամակ գրեց հայոց Տրդատ արքային՝ խնդրելով, որ գտնի Հռիփսիմեին և ետ ուղարկի Հռոմ: Բայց հայոց թագավորը՝ հմայված կույսի գեղեցկությամբ, ինքը ցանկացավ նրա հետ ամուսնանալ: Հռիփսիմեն մերժեց նրան, որովհետև ուխտել էր իր կյանքն ապրել մաքրությամբ, նվիրված Աստծուն: Կույսերի առաջնորդ Գայանեն ևս հորդորեց նրան հաստատ մնալու այս որոշման մեջ: Այդ ժամանակ թագավորը հրամայեց կույսերին չարչարանքների ենթարկել և գազանորեն սպանել: Հետո Գրիգոր Լուսավորիչը կույսերի նահատակված վայրերում թաղեց նրանց և գերեզմանների վրա մատուռներ կառուցեց, որոնք հետագայում վերածվեցին մեծ վանքերի: Եվ այսօր հայոց մեջ մեծապես հայտնի են Էջմիածնի Սուրբ Հռիփսիմե և Սուրբ Գայանե վանքերը: Այս սրբուհիների տոնի օրը նրանց անունով կնքված վանքերը լի են լինում հավատացյալներով, ովքեր աղոթում են և սուրբ կույսերի բարեխոսությունն են խնդրում իրենց, իրենց ընտանիքների, Եկեղեցու, ազգի և համայն աշխարհի համար:

Հռիփսիմեն գեղեցիկ էր ոչ միայն արտաքնապես, այլև առավել ևս հոգեպես, և Եկեղեցին նրան սրբացրել է՝ մեծապես գնահատելով հենց ներքին հոգևոր գեղեցկությունը: Դժբախտաբար, մեր օրերում մարդիկ ավելի մտածում են արտաքին, քան ներքին հոգևոր գեղեցկության մասին: Եվ այս խնդիրը միայն այսօր չի ծագել: Սա խնդիր էր նաև քրիստոնեության վաղ շրջանում, ինչի մասին վկայում են այդ ժամանակների եկեղեցական հեղինակների գործերը, ովքեր կանանց հորդորում են զարդարվել ոչ թե ոսկեղեն, թանկարժեք զարդերով ու շքեղ զգեստներով, այլ հեզությամբ և քրիստոնեական այլ առաքինություններով: Գեղեցկության հարցը խնդիր էր նաև անտիկ աշխարհում: Պլատոնն իր ստեղծագոր-

ծություններից մեկում ասում է, որ մարմնի զարդարումը գալիս է կեղծ գիտությունից, որն ի հայտ է եկել այս ոլորտում ճշմարիտ գիտության՝ մարմնամարզության փոխարեն: Մարմնամարզության շնորհիվ մարդիկ կարողանում են իրենց մարմինը պահել գեղեցիկ վիճակում, սակայն առաջ եկավ մարմինների զարդարման կեղծ գիտությունը, որն ուսուցանում է այլևս չհոգնել վարժություններով, որովհետև առանց ջանքերի որևէ մեկը կարող է իրեն գեղեցիկ ցույց տալ՝ շպարվելով դիմափոշիներով, դիմաքսուկներով, զարդարվելով շքեղ զգեստներով և այլն: Եվ Պլատոնի ասած այս կեղծ գիտությունն այնքան զարգացավ, որ մեր օրերում տգեղ մարդիկ կարողանում են իրենց գեղեցիկ ցույց տալ, իսկ մյուսներն իրենց ցույց են տալիս ավելի գեղեցիկ, քան իրականում կան: Ներքին և արտաքին գեղեցկության հարցը հետաքրքրել է ոչ միայն անտիկ աշխարհի փիլիսոփաներին, այլև բանաստեղծ-բանաստեղծուհիներին: Հատկանշական է, որ Ն.Ք. 7-6 դարերում Լեսբոս կղզուց հայտնի Սապֆո բանաստեղծուհին այս իմաստուն խոսքերն է ասել. «Ով արտաքին գեղեցկություն ունի, նա միայն տեսողությանն է հաճույք պատճառում, իսկ ով լավն է ինքն իրենով, նրան գեղեցիկ են համարում»:

Շատ փիլիսոփաներ, ցանկանալով տալ իրական գեղեցկության սահմանումը, տարբերակել են գեղեցկության, հաճույքի և լավի հասկացությունները: Գեղեցիկ է այն, ինչ դուր է գալիս, հաճելի է այն, ինչ ուրախություն է բերում, և լավ է այն, ինչ օգտակար է: Հաճելի բանը կարող են զգալ նաև կենդանիները, սակայն գեղեցկությունն զգում են միայն մարդիկ, որովհետև մարդն ունի բանականություն, որով գնահատում է գեղեցիկը: Հաճելի բանը հաճույք է պատճառում միայն արտաքին զգայարաններին և զգացմունքներին, իսկ լավը հաճույք է պատճառում մարդկային բանականությանը հասկացության և դիտարկումի միջոցով: Լավ բանը երբեմն կարող է հաճելի չլինել: Օրինակ՝ կան դառը, տհաճ դեղեր, որոնք օգտակար են և առողջություն են տալիս: Սակայն քրիստոնեության մեջ լավ բանը նաև հաճելի է դառնում: Երբեմն մենք ստիպում ենք մեզ աղոթելու, պահք պահելու, և քրիստոնեական առաքինությունները երբեմն հաճելի չեն թվում: Քրիստոս մեզ ուսուցանեց նեղ ճանապարհի մասին (Մատթ. 7.13-14, Ղուկ. 13.24): Լայն դռնով շատերն են մտնում, բայց նեղ դռնով քիչ մարդիկ են մտնում (Մատթ. 7.13-14): Մեկնիչներն ասում են, որ ընդարձակ ճանապարհով քայլողները հետո զղջում են, քանզի այս ճանապարհն աստիճանաբար նեղանում է և սպանում նրանց: Սակայն նեղ ճանապարհն աստիճանաբար դառնում է ավելի լայն և հաճույք ու փրկություն բերում այդ ճանապարհով ընթացողներին: Մեր մեծ Կաթողիկոսներից Հովհան Մանդակունին ուշադրություն է հրավիրում այս խնդրի վրա: Նա ասում է, որ պահեցողությունն ու աղոթքը և քրիստոնեական այլ

առաքինի գործերը երբեմն մեզ տհաճ գործողություններ են թվում, բայց դրանցում հարատևելով՝ մենք կարող ենք տեսնել, որ դրանք հաճելի են դառնում:

ԿՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Սովորական մարդիկ մտածում են, թե ինչպես հաճելի անցկացնեն ժամանակը, իսկ ով մի քիչ տաղանդ ունի, մտածում է, թե ինչպես օգտագործի ժամանակը: Հաճելիի ձգտումը կապված է մարդու՝ երջանկության ձգտման հետ, որովհետև հաճախ մարդիկ, ինչպես որ անտիկ շատ փիլիսոփաներ, երջանկությունը նույնացնում են հաճույքի հետ: Երջանկության գիտության մեծ ուսուցիչ էպիկուրը մարդկային կարիքները, կրքերը ճիշտ կերպով բաժանել է երեք մասի՝ 1. բնական և անհրաժեշտ կարիքներ, որոնք չբավարարվելու դեպքում տանջանք են պատճառում՝ ուտելիք, ապաստարան, հանգիստ, 2. բնական ոչ անհրաժեշտ կարիքներ, ինչպես օրինակ՝ սեռական կիրքը, սեռական բավարարվածության կարիքը, որը, սակայն, կենսականորեն անհրաժեշտ չէ անձի անհատական գոյության պահպանման համար, 3. ոչ բնական և ոչ անհրաժեշտ կարիքներ, որոնց բավարարումը առավել դժվար է, օրինակ՝ ճոխություն, շքեղություն և այլն: Նման բաժանում կա նաև եկեղեցական մեր հեղինակներից Առաքել Սյունեցու մոտ, ով ևս բնական կրքեր է համարում քաղցը, ծարավը, քունը, որոնք կամքը չի կարող խափանել: Առաքել Սյունեցին, մոտավորապես կրկնում է էպիկուրի ասածը, ըստ որի բնական ոչ անհրաժեշտ կարիք է մարմնական ցանկությունը, քանզի հակառակ դեպքում անհնարին կլիներ կուսությամբ ապրելը:

Քրիստոս ապրեց մարդկային բնությանը անհրաժեշտ կրքերով՝ հեռու մնալով մեղքերից, ինչպես նաև բնական ոչ անհրաժեշտ և ոչ բնական և ոչ անհրաժեշտ կարիքների հակումից և դրանց բավարարումից՝ Իր օրինակով ցույց տալով, որ մարդը պետք է պարզապես օգտվի մարմնականից և հաճույք ստանա հոգևորից:

ՀԱՅԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Աչքերը կարող են իրենց տեսնել՝ նայելով այն արժանիքի մեջ, որ իրենք ունեն, որն է տեսողությունը: Այսինքն՝ աչքերը կարող են իրենց

տեսնել՝ նայելով ուրիշ աչքերի մեջ, մարմնի այլ մասերին նայելով՝ աչքերն իրենց չեն տեսնի: Նույն կերպ հոգին կարող է իրեն տեսնել՝ նայելով այն արժանիքի մեջ, որ ինքն ունի, որն է իմաստությունը: Ինչպես որ հայելիները ավելի պարզ են ցույց տալիս, քան աչքերի հայելիները, նույնպես աստվածային իմաստությունն ավելի հստակ է ցույց տալիս, քան մարդկային իմաստությունը: Եվ մեր հոգիներն ավելի լուսավոր տեսնելու և այդպիսին դարձնելու համար պետք է նայենք աստվածային իմաստության հայելու մեջ:

Երբ մարդը կենտրոնանում է իր կրքերի վրա, որոնք հատուկ են նաև անասուններին, սկսում է նմանվել կենդանիներին, նույնիսկ եթե չի քայլում չորքոտանի կենդանիների պես, այլ քայլում է երկու ոտքերով՝ կապիկների պես: Քիչ առաջ անդրադարձանք իմաստության հայելու մեջ նայելու անհրաժեշտությանը: Սակայն փիլիսոփան ասում է, որ երբ կապիկը նայում է հայելու մեջ, հայելուց չի կարող առաքյալ դուրս նայել: Հետևաբար, մարդը պետք է իրական մարդ դառնա: Եվ Դարվինի տեսությունը՝ կապիկից մարդու առաջանալու մասին, գուցե օգտակար լինի այս խորհրդանշական իմաստով:

ԱՍՏՎԱԾՆԵՐ

Սուրբ Գիրքը աստվածներ է կոչում Աստծո սրբությանը կամ գիտությանը կամ իշխանությանը հաղորդակից անձանց: Սուրբ Դիոնիսիոսն իր «Երկնային քահանայապետությունների մասին» գրքում նշում է, որ աստվածաբանությունն աստվածներ է կոչում երկնայիններին և մեզանից ավելի բարձր էություններին, իսկ մեզանից էլ՝ աստվածասերներին և սրբազան այրերին: Օրինակ՝ Ելից գրքում Աստծո կողմից աստվածներ են կոչվում մարգարեները (22.28), ինչպես նաև Մովսեսն անվանվում է աստված փարավոնի համար (Ելք 7.1): Սաղմոսում աստվածներ են կոչվում դատավորները, այնուհետև Աստված հավատացյալ մարդկանց ևս աստվածներ է կոչում և Բարձրյալի որդիներ (Սաղ. 82.1, 6): Քրիստոս հենց այս սաղմոսը վկայակոչեց, երբ հրեաները Նրան սկսեցին մեղադրել այն բանում, որ Իրեն ներկայացնում էր որպես Աստված և Իրեն Աստծո Որդի էր ասում (Հովհ. 10.33-36):

Վերոնշյալ սաղմոսում նշվում է մարդկանց վեր լինելը մյուս արարածներից, ըստ որի էլ Արարիչը մարդկանց մեծ կարողություններն ու աստվածանմանությունը նկատի առնելով ասում է, թե մարդիկ ևս աստվածներ են:

«ԱՍՏՎԱԾ» ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աստված բառը ստուգաբանվում է՝ «աստ ած», որ գրաբարից թարգմանաբար նշանակում է՝ այստեղ բերեց: Խոսրով Անձևացին՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու հայրը, իր ժամակարգության մեկնության մեջ ասում է, որ Աստված անունը արարչական է և մեզանում ստուգաբանվում է՝ «Աստ էած զմեզ», այսինքն՝ մեզ այստեղ՝ այս լինելիությանն ու գոյությանը բերեց: Մեր եկեղեցական հայտնի հեղինակներից Ներսես Լամբրոնացին իր Պատարագի մեկնության մեջ նշում է, որ արարածների ստեղծող գիտենք միայն Նրան, այդ պատճառով էլ ստեղծվածների արարչին կոչում ենք Աստված, այսինքն՝ ոչնչությունից դեպի էության ու գոյության, այն է՝ երկնավորներին ու երկրավորներին այստեղ բերող՝ աստ ածող: Աստված բառի ստուգաբանությունների մեջ նշվում է, ոչ միայն աստ ածը, այլև՝ *աստեաց* կամ *հաստեաց*, այսինքն՝ այստեղ բերեց, գոյացրեց, ստեղծեց արարածներ: Սուրբ Ներսես Շնորհալին իր եղբայր Գրիգոր Դ Պահլավունի Կաթողիկոսի հրամանով Միջագետքի Ասորվոց կոչվող նահանգի քահանաներին ուղղված թղթում ասում է, որ Նրան՝ ստեղծողին է հատուկ ու վայելուչ Աստված անունը, որը վեր է քան բոլոր անունները, որովհետև Աստված արարչության անուն է:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅՐ ԿԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշ մարդիկ և հատկապես աղանդավորները հաճախ հետևյալ մեղադրանքն են անում. «Քրիստոս ասաց՝ ոչ ոքի ուսուցիչ կամ հայր չկոչեք, բայց ահա հոգևորականներն արհամարհում են Քրիստոսի պատվիրանը և ստիպում են մարդկանց իրենց կոչել տեր, վարդապետ կամ հայր»: Հոգևորականներին տեր հայր կամ հայր սուրբ դիմելաձևը աղանդավորների և եկեղեցու հետ շատ քիչ կապ ունեցող, սակայն իրենց աստվածաշնչի գիտակներ համարող մարդկանց կարծիքով Քրիստոսի կողմից ասված մի կարևոր պատվիրանի խախտում է: Իրոք, Քրիստոս Մատթեոսի Ավետարանում ասում է. «Բայց դուք որևէ մեկին ուսուցիչ մի կոչեք, որովհետև ձեր ուսուցիչը մեկ է, և դուք բոլորդ եղբայրներ եք: Եվ երկրի վրա ոչ մեկին ձեզ հայր մի կոչեք, որովհետև մեկ է ձեր Հայրը, որ երկնքում է: Եվ ուսուցիչներ չկոչվեք, որովհետև Քրիստոս է ձեր ուսուցիչը» (Մատթ. 23.8-10): Քրիստոսի խոսքերն օգտագործելով՝ այսպիսի մեղադրանք հնչեցնելը նշանակում է, որ և՛ դպրոցներում պետք է արգելել ուսուցիչ բառը, և՛ գիտնականներին պետք է զրկել իրենց գիտական կոչումներից, էլ չենք մանրամասնում, որ ոմանք նույիսկ արգելում են ծնողին հայր կոչելը: Այսպիսի միտումները, ինչ խոսք, նորմալ մարդկանց

համար անհեթեթություն են թվում: Նախ նրանք, ովքեր ասում են, որ հայր կամ ուսուցիչ՝ վարդապետ, չպետք է կոչել ոչ ոքի, առավել ևս՝ հոգևորականներին, քանզի Քրիստոս արգելում է այդպիսի կոչումները, իրենց վրա են բարդում Աստվածաշնչի շատ տկար իմացության մեղքը: Քրիստոս այս պատվերը տվեց այն ժամանակ, երբ դատապարտում էր փարիսեցիներին ու օրենսգետներին, որովհետև նրանք սիրում էին իրենց վերաբերող այդպիսի պատվավոր կոչումներ լսել: Եվ Քրիստոս առաջին հերթին պատվիրեց խուսափել կոչումների պատճառով հպարտությունից ու սնափառությունից, քանի որ օրենսգետներն ու փարիսեցիները, որոշ գիտելիքների տիրապետելով, այնպես էին հպարտանում, կարծես հենց իրենք են դրանց աղբյուրը: Գիտելիքների և մարդկային լինելիության սկզբնապատճառը Աստված է, և այս բացարձակ իմաստով արգելված է որևէ մեկին կոչել հայր կամ ուսուցիչ, սակայն մենք այդ անվանումներն օգտագործում ենք որպես պարզ պատվանուն: Դարձյալ մեզ հակառակվողներից ոմանք գուցե ասեն. «Ահա տեսեք, ինչ-որ այլաբանական բացատրություններ են տալիս՝ խուսափելով կոնկրետ պատասխանից»: Սակայն նորից նշենք, որ այսպիսի բան ասողը կրկին իր վրա է բարդում Աստվածաշնչի տկար իմացության մեղքը: Նախ Քրիստոսի ասածը, ինչպես որ բացատրվեց, այդպես հասկացան նաև առաքյալները և բացարձակ իմաստով ոչ ոքի հայր կամ ուսուցիչ չկոչեցին, սակայն որպես պատվանուն օգտագործեցին դրանք: Այս կարծիքին հակառակվողներին խորհուրդ ենք տալիս մեկ անգամ ևս ընթերցել Պողոս առաքյալի թղթերը, որոնց մեջ առաքյալն ինքն է իրեն ուսուցիչ կոչում, իսկ հակառակվող մարդկանց գործն ավելի հեշտացնելու նպատակով նշենք նաև մի քանի համարներ: Տիմոթեոսին ուղղված առաջին նամակի 2-րդ գլխի 7-րդ համարում Պողոս առաքյալն ասում է. «Դրա համար իսկ ես կարգվեցի որպես քարոզիչ և առաքյալ, (ճշմարիտ եմ ասում Քրիստոսով և չեմ ստում), եղա վարդապետ հեթանոսների՝ հավատով և ճշմարտությամբ»: Իսկ Տիմեթեոսին ուղղված Բ նամակի առաջին գլխի 11-րդ համարում առաքյալն ասում է. «Ավետարան, որին քարոզիչ կարգվեցի ես և առաքյալ ու վարդապետ հեթանոսների»: Իսկ ծնողին հայր չկոչելու պնդումն արդեն դուրս է մարդկային առողջ բանականության սահմաններից: Եվ եթե Քրիստոս ընդհանրապես արգելեր *հայր* բառի գործածությունը բացի Աստծուն դիմելու ձևից, ապա Ինքը շատ անգամներ չէր օգտագործի *հայր* բառը: Եվ սա դարձյալ ցույց տանք աստվածաշնչյան մեջբերումներով: Սկսենք Աստվածաշնչի հենց ամենասկզբից: Ծնողի համար *հայր* բառն առաջին անգամ Աստծո հավանությամբ գործածեց Ադամը, երբ խոսելով կնոջ մասին՝ ասաց. «Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը» (Ծնն. 2.24): Աստված

Ինքը ծնողի համար գործածեց *հայր* բառը տասը պատվիրանների մեջ՝ ասելով. «Պատվի՛ր քո հորն ու մորը» (Ելք 20.12, Բ Օր. 5.16): Դարձյալ, երբ Աստված երևում է Իսահակին, Մովսեսին, ասում է. «Ես քո հոր Աստվածն եմ» (Ծննդ. 26.24, Ելք 3.6), նաև պատվիրում է Մովսեսին. «Այսպես կասես իսրայելացիներին. ՝Ձեր հայրերի Տեր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածն է առաքել ինձ՝» (Ելք 3.15): Առակների մեջ 23-րդ գլխում աստվածաշնչյան իմաստունն ասում է. «Լսիր որդյակ քեզ ծնող հորը» (22): Նոր Կտակարանում արդեն՝ Մատթեոսի Ավետարանում, Հիսուս Քրիստոս ծնողի համար դարձյալ օգտագործում է *հայր* բառը՝ ասելով. «Դուք չե՞ք կարդացել, թե նա, ով սկզբից ստեղծեց, արու և էգ արեց նրանց և ասաց. դրա համար տղամարդը պիտի թողնի իր հորը և մորը ու պիտի գնա իր կնոջ ետևից» (Մատթ. 19.4): Մարկոսի Ավետարանում Քրիստոս, հիշեցնելով Մովսեսի օրենքը, ասում է. «Ով որ չարախոսի իր հոր կամ մոր մասին, մահվամբ թող պատժվի» (7.10): Ղուկասի Ավետարանում օրենսգետներին դիմելով՝ Քրիստոս ասում է. «Ձեր հայրերը սպանեցին մարգարեներին» (11.47): Նաև առաքյալները Գործք Առաքելոցում և իրենց թղթերում բազմաթիվ անգամներ գործածում են *հայր* բառը: Սա ցույց է տալիս, որ Քրիստոս, ասելով՝ «ոչ ոքի հայր մի կոչեք, որովհետև մեկ է ձեր Հայրը, որ երկնքում է», նկատի ուներ, որ ոչ ոքի Հայր չկոչենք աստվածային բացարձակ իմաստով, այլապես Ինքը շատ անգամներ *հայր* բառը չէր օգտագործի: Կարծում ենք, որ այսքանը լիուլի բավական է թերահավատներին հաստատելու և հակառակվողների տգիտությունը ցույց տալու համար: Ահա տեսնում ենք, որ բացարձակ իմաստով արգելված է որևէ մեկին կոչել ուսուցիչ կամ հայր, սակայն որպես պատվանուն դրանք գործածել է և՛ Հայր Աստված, և՛ Որդին Աստված՝ Քրիստոս, և՛ առաջին մարդը՝ Ադամը, և՛ առաքյալները: Եվ այս ամենից մենք բոլորս միայն մեկ եզրակացություն կարող ենք անել՝ ոչ թե Եկեղեցին է խախտում Քրիստոսի պատվիրածը, այլ տարբեր աղանդավորներ մոլորեցնում են մարդկանց՝ գցելով շփոթության մեջ: Սա նշանակում է, որ աստվածային պատվիրանները ճշմարտությամբ ուսուցանում և մարդանց դեպի Երկնային Արքայություն է առաջնորդում միմիայն Ճշմարիտ Եկեղեցին, որին մենք բոլորս պետք է հավատարիմ մնանք մեր ողջ կյանքի ընթացքում:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՐ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աղանդավորները մեղադրում են մեզ, որ հոգևորականներին դիմում ենք նաև *տեր* ձևով, որը մենք գործածում ենք ոչ թե երկնային Տիրոջ իմաստով, այլ որպես մի պարզ պատվանուն: Աղանդավորների այս մեղադրանքը կրկին ցույց է տալիս, որ նրանց առաջնորդները խաբում են միամիտ շարքային աղանդավորներին, իսկ շարքային աղանդավորները պարզապես շատ տկար գիտելիքներ ունեն Աստվածաշնչից: Աստվածաշնչից հասարակ աղանդավորների տկար գիտելիքների պատճառն այն է, որ գրեթե բոլոր աղանդավորները աղանդ մտնելուց առաջ ընդհանրապես Աստվածաշունչ չեն իմացել և հետո ընդունել են այն, ինչ իրենց ասել են աղանդի մեջ: Նրանք միայն մեկ բան գիտեն *տեր* բառի գործածության վերաբերյալ, որն ամեն անգամ կրկնում են անգիր սովորած երեխայի պես. Քրիստոս Մատթեոսի Ավետարանում ասում է. «Բայց դուք որևէ մեկին ուսուցիչ մի կոչեք, որովհետև ձեր ուսուցիչը մեկ է, և դուք բոլորդ եղբայրներ եք: Եվ երկրի վրա ոչ մեկին ձեզ հայր մի կոչեք, որովհետև մեկ է ձեր Հայրը, որ երկնքում է: Եվ ուսուցիչներ չկոչվեք, որովհետև Քրիստոս է ձեր ուսուցիչը» (Մատթ. 23.8-10) կամ «մեզ համար միայն մե՛կ Աստված կա, Հայր, որ ստեղծել է ամեն բան, և մենք ապրում ենք նրանով. և՝ միայն մե՛կ Տեր Հիսուս Քրիստոս, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ, և մենք ապրում ենք նրանով» (Ա Կորնթ. 8.6): Ահա այն ամենը, ինչ նրանց հայտնի է *հայր* կամ *տեր* բառերի մասին: Քրիստոսի պատվերն իրականում վերաբերում է բացարձակ, աստվածային իմաստով որևէ մեկին տեր, ուսուցիչ կամ հայր չկոչելուն: *Հայր* և *վարդապետ* բառերի մասին վերո-նշյալ բացատրությունը տրվեց, իսկ ինչ վերաբերում է *տեր* բառին, ապա Քրիստոս Ինքը ընդունում է *տեր* բառի գործածությունը կյանքի տարբեր պարագաներում: Այս են ցույց տալիս նրա բազմաթիվ խոսքերը Ավետարաններից: Ահա այդ օրինակները:

«Աշակերտը ավելին չէ, քան վարդապետը, և ոչ էլ ծառան՝ քան իր տերը: Աշակերտին հերիք է, եթե լինի իր վարդապետի նման, և ծառային՝ իր տիրոջ նման» (Մատթ. 10.24-25): Այստեղ Քրիստոս բացի *տեր* բառից օգտագործում է նաև *վարդապետ՝ ուսուցիչ* բառը: Քրիստոս Իր պատմած առակներում հաճախ համեմատություններ է անում տիրոջ և ծառայի հարաբերությունների հետ՝ շատ ընդունելի կերպով բազմաթիվ անգամներ գործածելով *տեր* բառը (Մատթ 13.27-29; 18.24-25, 33-35; 24.45-51; 25.19-21; Ղուկ 17.9-10): Սակայն կարող են ասել, որ առակներում տերը խորհրդանշում է Աստծուն, դրա համար էլ ընդունելի է *տեր* բառի գործածությունն այս առակների մեջ: Բայց եթե աղանդավորներն ասում են, որ ընդհանրապես չպետք է գործածենք *տեր* բառը, որովհետև Քրիստոս է այդպես ասել, ապա ստացվում է, որ երբեք որևէ մեկին չպետք է ասենք տան տեր, այգու տեր և այլն, ինչը պարզապես ծիծաղելի է թվում:

Սակայն Քրիստոս Ինքը նման պարագաներում գործածեց *այգու տեր* (Մատթ. 20.8, 21.40, Մարկ. 12.9, Ղուկ. 20.15), *տանուտեր* (Մատթ. 13.52, 20.1, 21.33) բառերը, Ավետարանում հիշվում են ավանակի տերերը (Ղուկ. 19.33):

Լավ իմանալով բացարձակ իմաստով մարդուն Տեր կոչելու Քրիստոսի արգելքը՝ *տեր* բառը սովորական գործածության համար ընդունելի են համարել նաև Քրիստոսի առաքյալները և իրենք ևս շատ անգամներ օգտագործել են այն իրենց գրություններում: Օրինակ՝ «Եվ մինչ մենք աղոթելու էինք գնում, մեզ հանդիպեց մի աղախին, որին մի հարցուկ՝ չար ոգի էր բռնել. սա գուշակութիւններով իր տերերին մեծ օգուտ էր տալիս» (Գործք 16.16): Պողոս առաքյալը ևս իր նամակներում *տեր* բառն օգտագործում է տարբեր հանգամանքների համար. «Թող մարդը կնոջ հանդեպ իր պարտքը կատարի, նույն ձևով և կինը՝ իր մարդու հանդեպ. որովհետև կինն իր մարմնի տերը չէ, այլ՝ մարդը: Նույնպես և՝ մարդը իր մարմնի տերը չէ, այլ՝ կինը» (Ա Կորնթ. 7.3-4): «Ծառանե՛ր, ամեն ինչում հնազա՛նդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ոչ թե մարդահաճո կերպով, ցուցադրական ծառայությամբ, այլ սրտի անկեղծությամբ՝ երկյուղ կրելով Տիրոջից» (Կողոս. 3.22): «Բոլոր նրանք, ովքեր ծառայության լծի տակ են, նրանցից յուրաքանչյուրը թող իր տերերին պատվի արժանի համարի, որպեսզի Աստծու անունն ու վարդապետությունը չանարգվի: Իսկ նրանք, որ հավատացյալ տերեր ունեն, թող չարհամարհեն, որ նրանք եղբայրներ են, այլ ավելի լավ ծառայեն, քանի որ հավատացյալներ են» (Ա Տիմ. 1-2): «Հորդորի՛ր ծառաներին, որ հնազանդ լինեն իրենց տերերին և ամեն ինչում լինեն հաճելի նրանց» (Տիտ. 2.9): Նույն կերպ է վարվում նաև Քրիստոսի ամենանախանձախնդիր առաքյալներից Սուրբ Պետրոս առաքյալը. «Ծառանե՛ր, ամեն ինչում երկյուղով հնազա՛նդ եղեք տերերին, ոչ միայն բարիներին և հեզաբարոներին, այլև դաժաններին, քանի որ Աստծուց է այն շնորհը, երբ մեկը հանիրավի վիշտ է կրում բարի խղճով. քանզի ի՞նչ երախտիք կունենաք, եթե, մեղանչելուց հետո, տանջվեք և համբերեք: Իսկ եթե բարիք գործեք և չարչարվեք ու համբերեք, այդ շնորհ է Աստծու մոտ» (Ա Պետ. 2.18-20): «Այդպէս էր Սառան, որը հնազանդ էր Աբրահամին և նրան իր տերն էր կոչում» (Ա Պետ. 3.6):

Աստվածաշունչը հստակ ցույց է տալիս, որ աստվածային բացարձակ իմաստով մենք չպետք է ոչ ոքի կոչենք տեր, հայր կամ ուսուցիչ, սակայն որպես պատվանուն դրանք կարելի է օգտագործել, ինչպես որ արել են Քրիստոս և նրա առաքյալները: «Թեպետև այսպես կոչված աստվածներ կան թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա. արդարև, կան բազում աստվածներ և բազում տերեր: Բայց մեզ համար միայն մե՛կ Աստված կա, Հայր, որ ստեղծել է ամեն բան, և մենք ապրում ենք նրանով. և՝ միայն

մե՛կ Տեր Հիսուս Քրիստոս, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ, և մենք ապրում ենք Նրանով»,- ասում է Պողոս առաքյալը (Ա Կորնթ. 8.5-6) և բացատրում նաև, որ այս երկրի վրա բոլոր տեր կոչվողները (սովորական իմաստով) իրենց միակ Տերը (բացարձակ, աստվածային իմաստով) ունեն երկնքում, որի առջև բոլորս պատասխանատու ենք. «Ծառանե՛ր, հնազա՛նդ եղեք ձեր մարմնավոր տերերին ահով և դողով և անկեղծ սրտով, ինչպես հնազանդ եք Քրիստոսին: Եվ դուք, տերե՛ր, նո՛ւյնն արեք նրանց հանդեպ՝ մի կողմ թողնելով սպառնալիքները. իմացե՛ք, որ և՛ նրանք, և՛ դուք Տեր ունեք երկնքում, և Նրա առաջ աչառություն չկա» (Եփես. 6.5, 9): Սա ավելի լավ հասկանալի է նաև Աստվածաշնչի այն հատվածներում, երբ նշվում է, որ Աստված տերերի Տերն է. «Որին իր ժամանակում հայտնի պիտի անի Երանելին և միակ Հզորը, թագավորների Թագավորը և տերերի Տերը» (Ա Տիմ. 6.15): «Եվ սրանք պատերազմելու են Գառան դեմ, և Գառը նրանց հաղթելու է, քանի որ նա Տերն է տերերի և Թագավորը՝ թագավորների» (Հայտն. 17.14): «Եվ Իր պատմուճանի ու Իր մարմնի մասերի վրա կար գրված մի գրություն՝ Թագավոր թագավորների և Տեր տերերի» (Հայտն. 19.16):

ՇՆՈՐՀ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Բողոքականներն ասում են, որ մարդն արդարանում է հավատքով և փրկվում Աստծո շնորհով ու ոչ թե իր գործերով: Բողոքականության հիմնադիր Մարտին Լյութերն ուսուցանում էր, որ մարդկային կամքն ազատ չէ, այլ սկզբնապես հակված է դեպի չարը, դրա համար էլ մարդու գործերը չար են, և հետևաբար, մարդը փրկության կարժանանա իր հավատքի և ոչ թե իր գործերի շնորհիվ, իսկ հավատքը գալիս է ոչ թե ազատ կամքից, այլ տրվում է աստվածային շնորհով: Դարեր ի վեր այս հարցի վերաբերյալ վիճաբանություններ են եղել կաթոլիկների և բողոքականների միջև: Քննելով տասը կույսերի առակը (Մատթ. 25.1-13)՝ կաթոլիկներն ու բողոքականները բանավեճի մեջ մտան միմյանց հետ առակում հիշվող յուղի վերաբերյալ մեկնաբանությունների առնչությամբ: Կաթոլիկներն ասում էին, որ յուղի իմաստի տակ պետք է առավելաբար հասկանանք գործերը, իսկ բողոքականներն ասում էին, որ յուղի ակնարկով պետք է հասկանալ հավատքը: Սակայն այս առնչությամբ հատկապես բողոքականների աստվածաբանությունը միակողմանի է, և բողոքական ուսուցումների մեջ առանց տարբերակման մի տեղում են կուտակված տարբեր իրողությունների շուրջ ասված առաքյալի մտքերը: Պետք է իմանալ, որ Պողոս առաքյալի հիմնած եկեղեցիներում շատ արագ տարածվեցին նաև հուդայաքրիստոնյաներ՝ հրեությունից քրիստոնեության դարձած

մարդիկ, ովքեր քրիստոնեական կյանքում կարևոր էին համարում նաև Մովսես մարգարեի կողմից ավանդված հինկտակարանյան օրենքի պահպանությունը: Եվ նրանց դեմ հանդես գալով՝ Պողոս առաքյալն ուսուցանում էր, որ մովսիսական օրենքի գործերը կարևոր չեն փրկության համար, այլ կարևորը հավատքն է, որ արդարացնում է: Այսինքն՝ հավատքով արդարանալու և շնորհով փրկվելու առնչությամբ գործերի անկարևորության մասին խոսելով՝ առաքյալը նկատի ունի այն գործերը, որոնք պահանջվում են ըստ մովսիսական օրենքի: Սակայն առաքյալը խոսում է նաև այլ գործերի և դրանց անհրաժեշտության մասին, որոնք հավատքի գործեր են: Հետևաբար, Պողոս առաքյալի թղթերում խոսվում է երկու տեսակի գործերի մասին՝ օրենքի գործերի և հավատքի գործերի: Քրիստոնյային պետք չէ պահել Հին Կտակարանի ժամանակներում հրեաներին Մովսեսի կողմից ավանդված օրենքը: Սակայն հավատքի գործերը կարևոր են քրիստոնեական կյանքում և փրկության համար: Այսպիսով, առաքյալը խոսում է քրիստոնեական հավատքի անհրաժեշտության և մովսիսական օրենքի գործերի անկարևորության մասին (Հռ. 3.20, 28; 4.4-5; 9.31-32, Գաղ. 2.16, 3.2, 11): Գաղատացիներին ուղղված թղթում Պողոս առաքյալն ասում է. «Ես Աստուծո շնորհը չեմ անարգում, քանի որ եթե արդարությունը օրենքից է, ապա Քրիստոս իզուր մեռավ» (2:21): Առաքյալը նրանց դեմ է հանդես գալիս, ովքեր վերադառնում են օրենքի գործերի կատարմանը, քանզի եթե մարդու արդարացումն օրենքի գործերի կատարման մեջ է, ապա հանգում ենք մի անհեթեթ եզրակացության. նշանակում է՝ արդարացնում է ոչ թե Քրիստոս, այլ մովսիսական օրենքը, և Քրիստոս իզուր մեռավ: Հավատով արդարանալու այս ելույթն ուղղված էր Պետրոս առաքյալի դեմ, ով մինչև հրեաների գալը, հեթանոսների հետ էր ուտում, բայց երբ հրեաները եկան, նա մի կողմ քաշվեց՝ վախենալով թլփատության կողմնակիցներից: Պողոսը մեղադրեց Պետրոսին կեղծավորության մեջ՝ նշելով, որ քրիստոնեական կյանքում այլևս պետք չեն մովսիսական օրենքի գործերը (2.11-14):

Ի տարբերություն օրենքի գործերի՝ հավատքի գործերի վերաբերյալ առաքյալը նշում է, որ դրանք մեծ կարևորություն ունեն (Հռ. 2.16, Բ Թեսաղ. 1.11), և հորդորում է գործեր կատարելու (Հռ. 16.19, Ա Կորնթ. 15.58, Գաղ. 6.9, Փիլիպ. 1.6, Ա Թեսաղ. 5.15, Բ Թեսաղ. 3.11, Բ Տիմ. 3.17, Տիտ. 3.8): Որպեսզի հավատացյալները սխալ և միակողմանի չհասկանան Պողոս առաքյալի ուսուցումը, Հակոբոս առաքյալը շեշտում է, որ միայն հավատքը առանց հավատքի գործերի դատարկ և մեռած հավատք է (Հակ. 2.14, 17-20, 26), և սովորեցնում է, որ հավատքով արդարանալը պետք է հասկանալ մովսիսական օրենքի գործերի մերժումով, սակայն հավատքի գործերի իրականացումով: Հավատքի գործերով ար-

դարանալը Հակոբոս առաքյալը ցույց է տալիս Աբրահամ նահապետի օրինակով, որով առավել հասկանալի է դառնում, որ Հռոմեացիներին ուղղված թղթում Պողոս առաքյալը, նույն օրինակով խոսելով հավատքով արդարացման մասին, հավատքը նկատի ուներ հավատքի գործերի հետ միասին՝ մերժելով հինկտակարանյան օրենքի գործերի կարևորությունը (22-23, Հռ. 4.1-3): «Տեսնո՞ւմ եք, որ գործերով է արդարանում մարդ և ոչ թե միայն հավատով» (Հակ. 2.24):

Պողոս առաքյալը խոսում է Քրիստոսի փրկագործությամբ, աստվածային շնորհով մարդու՝ չարի և մեղքի իշխանությունից փրկվելու մասին, ինչն արդյունք էր մարդկանց հանդեպ Աստծո սիրո և ողորմության, որպեսզի արժանանանք հավիտենական կյանքի (Եփ. 2.5, 8-10; Բ Տիմ. 1.9; Տիտ. 2.11, 3.4-7): Սուրբ Գրիգոր Տաթևացին իր աշխատություններից մեկում ասում է, որ Աստված մեզ ձրի է տալիս Երկնքի Արքայությունը, որովհետև մեր առաքինի գործերը չափազանց փոքր են այն ուրախության և երջանկության համեմատ, որ Աստված տալու է Երկնքում: Սակայն վերջնական փրկության, Դատաստանի օրը արդարանալու և հավիտենական կյանքին արժանանալու համար քննվելու են նաև յուրաքանչյուրի գործերը (Ա Կորնթ. 3.12-15, Ա Տիմ. 5.24-25), և վախճանն ու դատաստանը, ինչպես ասում են առաքյալները, լինելու են ըստ գործերի (Բ Կորնթ. 11.15, Հայտնութ. 20.13), քանզի բարի գործերով է բարի հիմք դրվում հանդերձյալում՝ ճշմարիտ կյանքը ձեռք բերելու համար (Ա Տիմ. 6.18-19): Առաքյալը հորդորում է ահով և դողով աշխատել փրկության համար (Փիլիպ. 2.12), քանզի Աստված «հատուցում է յուրաքանչյուրին ըստ իր գործերի. հավիտենական կյանք՝ նրանց, որ բարի գործերի մեջ, իրենց հարատև համբերությամբ, փնտրում են փառք, պատիվ և անմահություն» (Հռ. 2.6-7):

Հավատքը հիմքն է, իսկ գործերը՝ կառույցը, հիմնված այդ հիմքի վրա: Հավատքը դեպի երկինք տանող անտեսանելի պարան է, իսկ գործերը՝ պարանով բարձրանալու համար անհրաժեշտ ձեռքերի շարժումը: Հավատքը և գործերը երկու թևեր են: Ինչպես արծիվն է թռչում երկու թևերով, այդպես էլ մարդը երկինք է թռչում այս երկու խորհրդանշական թևերով՝ հավատքով և գործերով:

ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Առաքյալները Քրիստոսի Հարությունից հետո տարածեցին Ավետարանը ողջ աշխարհով: Քրիստոս, խոսելով Երուսաղեմի տաճարի կործանման և վախճանի մասին, ասում է, որ պիտի լինեն պատերազմներ, աղետներ, Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում և ապա

պիտի գա վախճանը (Մատթ. 24.6-13, Մարկ. 13.7-10, Ղուկ. 21.9): Որոշ աղանդներ այս վախճանը հասկանում են որպես աշխարհի վախճանը: Հատկապես Եհովայի վկաներն ասում են, որ Ավետարանի այս հատվածում խոսվում է աշխարհի վախճանի մասին, և ներկայիս պատերազմներն էլ վկայում են, որ մոտ է աշխարհի վախճանը: Սակայն Եհովայի վկաների չարահնար աղանդը իր հիմնադրման հենց առաջին օրերից սկսած մինչև այժմ տարիներ շարունակ գուշակում է աշխարհի վախճանը և հերթական անգամ ձախողվում գուշակությունների մեջ՝ ըստ Հին Կտակարանի քարկոծման ենթակա սուտ մարգարեների նման (Բ Օր. 18.20-22): Բայց եթե միամիտ շարքային աղանդավորները մի քանի անգիր համարներից բացի ավելի լավ իմանային Աստվածաշունչն իր ընդհանրության մեջ, կտեսնեին, թե որքան սուտ են այդ աղանդի պնդումները աշխարհի վախճանի վերաբերյալ, որն ավելի շատ կապված է ոչ թե պատերազմների, այլ խաղաղության հետ: Պողոս առաքյալը թեսաղոնիկեցիներին ուղղված թղթում Տիրոջ օրվա մասին խոսելով՝ ասում է. «Թող ոչ ոք ձեզ չխաբի, որովհետև այն օրը չի գալու, եթե նախ չգա ապստամբությունը և անօրենության մարդը» (Բ Թեսաղ. 2.3), այսինքն՝ Նեռը՝ հակաքրիստոսը: Ու նաև նշում է. «Երբ ասեն, թե՝ խաղաղություն և ապահովություն է, այն ժամանակ հանկարծակի կհասնի նրանց կործանումը» (Ա Թեսաղ. 5.3): Ըստ Հովհան Ոսկեբերանի և եկեղեցական մյուս մեկնիչների՝ Ավետարանի այս հատվածում վախճանի հետ կապված պատերազմների և ողջ աշխարհում Ավետարանի քարոզության հիշատակումը վերաբերում է միայն Երուսաղեմի վախճանին, Երուսաղեմի կործանմանը, որը և ճշգրտորեն տեղի ունեցավ, երբ Ներոնից հետո հռոմեական կայսրության գահին բարձրացած Վեսպասիանոս կայսեր որդին՝ Տիտոսը, 69 թ. պաշարեց և 70 թ. գրավեց և ավերեց Երուսաղեմը: Հրեաները պատժվեցին Քրիստոս Աստծուն խաչելու համար, Երուսաղեմի պաշարման և գրավման ժամանակ ավելի քան մեկ միլիոն հրեաներ սպանվեցին և 97.000 հոգի գերվեցին: Ավերվեց նաև հրեաների ամենամեծ սրբությունը՝ տաճարը, որի ճիշտ տեղում այժմ կառուցված է մուսուլմանական հայտնի Օմարի մզկիթը: «Լսելու եք պատերազմների ձայներ» (Մատթ. 24.6) -ասում է Քրիստոս առաքյալներին, այսինքն՝ մասնակից կամ ականատես չեք լինելու, որովհետև Երուսաղեմի կործանման ժամանակ գրեթե բոլոր առաքյալներն արդեն նահատակված էին: Իսկ կործանումից առաջ ողջ աշխարհում Ավետարանի տարածման մասին վկայում է Պողոս առաքյալը և Հռոմեացիներին ուղղված թղթում ասում է, որ առաքյալների ձայնը ամբողջ երկիրը բռնեց, և նրանց խոսքը հասավ աշխարհի ծագերին (Հռոմ. 10.18): Նաև կողոսացիներին ուղղված թղթում ասում է, որ Ավետարանը քարոզվեց երկնքի տակ եղող բոլոր արարածներին (Կող.

1.23): Եվ Ղուկասի Ավետարանում էլ նշվում է, որ Քրիստոս, վախճանի ժամանակ փախուստի մասին խոսելով, նկատի ուներ հենց Երուսաղեմի կործանումը (21.20-24): Կարճ ժամանակում Ավետարանի տարածումը ամբողջ աշխարհում ցույց է տալիս Տիրոջ խոսքի զորությունը:

ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԸ

Այսօր աղանդավորներից հաճախ ենք լսում հետևյալ արտահայտությունը՝ մենք վերջին ժամանակներն ենք ապրում: Սակայն բացի աղանդավորներից, այլ մարդիկ ևս, դեմ լինելով տարբեր գործընթացների, շահարկում են աստվածաշնչյան թեմաները՝ մարդկանց վախեցնելով աշխարհի վերջով և Ահեղ Դատաստանով: Քրիստոս Իր գալստյան օրվա և ժամի մասին ասաց, որ ոչինչ չգիտի (Մատթ. 24.36, Մարկ. 13. 32), սակայն Իր երկրային կյանքի ընթացքում շատ դեպքերում Իրեն անգետ ցույց տվեց հատուկ նպատակների համար: Օրինակ՝ Ղազարոսի մասին հարցրեց՝ «ու՞ր դրիք նրան» (Հովհ. 11.34), հիվանդ կնոջ բուժման ժամանակ հարցրեց՝ «ո՞վ դիպավ Իմ զգեստներին» (Մարկ. 5.30), իսկ նրանց մասին, ովքեր ճշմարտությամբ չեն երկրպագում Աստծուն, ասաց՝ Ես ձեզ չեմ ճանաչում (Մատթ. 7.23, 25.12): Բայց այսպիսիններին Քրիստոս որքան լավ գիտեր և լավ էր ճանաչում, որ այդ պատճառով էլ ասաց, թե՝ «Ձեզ չգիտեմ, ձեզ չեմ ճանաչում»: Ճիշտ նույն կերպ էլ Քրիստոս ասաց գալստյան օրվա մասին: Քանի որ առաքյալները հետաքրքրվում էին այդ հարցով, Քրիստոս նրանց հարցուփորձը դադարեցնելու նպատակով ասաց՝ չգիտեմ, և ապա՝ «Ձեզ տրված չէ իմանալ ժամերն ու ժամանակները» (Գործ 1.7): Սակայն Սուրբ Եփրեմ Ասորին ասում է. «Ավետարանում գրված է. «Ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ Որդին» (Մատթ. 11.27, Ղուկ. 10.22): Իսկ ի՞նչ կա ավելի մեծ, քան Հայրը: Եթե Որդին գիտի այդ ամենամեծը, ապա որքան առավել ևս գիտի մնացած փոքր բաները»: Ուրեմն Քրիստոս մեր օգտի համար Իրեն երբեմն անգետ ցույց տվեց: Աշխարհի վախճանի մասին խոսելով՝ Քրիստոս ասաց. «Թզենուց սովորեցեք առակը, երբ ոստերը կակղեն և տերևը ցցվի, կիմանաք, որ ամառը մոտ է: Նույնպես և դուք՝ երբ այս բոլորը տեսնեք, իմացեք, թե մոտ է Նա, դռների առաջ» (Մատթ. 24.32-33, Մարկ. 13. 28-29, Ղուկ. 21.29-31): Հետևաբար՝ Քրիստոս խոսել է իր աշակերտների հետ աշխարհի վախճանի ժամանակների մասին: Մեզանից ծածկված է ճշգրիտ ժամանակը, բայց մոտավոր ժամանակները մենք կարող ենք իմանալ: Այսպես է և մարդու մահվան պարագան: Մարդը չգիտի, թե որ ժամին է մեռնելու, սակայն խոր ծերության մազերի ճերմակությունը կամ մարմնի տկարությունը կամ մահացու հիվանդությունը ցույց են տալիս,

որ մոտենում է այն ժամանակը, երբ մարդն այս կյանքից անցնելու է դեպի հավիտենություն: Ահա այսպես էլ մոտավոր կերպով մենք կարող ենք իմանալ աշխարհի վախճանի մասին: Թե ինչ էր խոսել Քրիստոս Իր աշակերտների հետ Իր երկրորդ գալստյան վերաբերյալ, մենք իմանում ենք հենց առաքյալների գրվածքներից: Պողոս առաքյալը հայտնում է Քրիստոսի գալստյան նշաններից մեկը, ըստ որի երբ մարդիկ ասեն, թե աշխարհում արդեն խաղաղություն է, ապահովություն, այն ժամանակ էլ կլինի գալուստը (Ա Թեսաղ. 5.3): Առաքյալը հայտնում է նաև գալստյան երկրորդ նշանը՝ ասելով. «Թող ոչ ոք ձեզ չխաբի և ոչ մի ձևով, որովհետև այն օրը չի գալու, եթե նախ ապստամբությունը չգա և չհայտնվի անօրենության մարդը: Նա շատ գոռոզ է լինելու այն աստիճան, որ նստելու է Աստծո տաճարում և ինքն իրեն ցույց է տալու, թե Աստված է» (Բ Թեսաղ. 2.3-4): Այս մասին հայտնում է նաև Հովհաննես առաքյալը իր Հայտնության գրքում (գլ. 13): Անօրենության մարդու թագավորությունը, որին մարդիկ պիտի պաշտեն իբրև Աստծո, ըստ Հայտնության գրքի և ըստ Դանիելի մարգարեության, տևելու է 1260 օր, որ 42 ամիս է կամ 3,5 տարի (Դան. 7.25, 12.7, Հայտն. 11.2-3, 12.6,14, 13.5), որից հետո Քրիստոս նրան ոչնչացնելու է Իր զորությամբ: Պողոս առաքյալը հայտնում է, որ վերջում դարձի պիտի գան նաև բոլոր հրեաները (Հռ. 11.25-26), և այս ամենից հետո կլինի Քրիստոսի գալուստը և աշխարհի վերջը: Եվ քանի դեռ այս նշանները չեն իրականացել, պետք չէ ոմանց հրահրումներով ընկնել խուճապի և տարակուսանքների մեջ: Սակայն յուրաքանչյուրիս համար Տիրոջ օրը գալիս է նաև մասնավոր կերպով, որը մահն է: Եվ այս օրվան մենք պետք է միշտ պատրաստ լինենք այն իմաստով, որ մեղքերի և անարդարությունների մեջ չլինենք, երբ մեր երկրավոր կյանքի վախճանը հանկարծակի հասնի, ինչպես գողը գիշերով: Հետևաբար, մեր կյանքի ընթացքում մենք պետք է զգույշ և մեղքերից ու չարիքից հեռու լինենք, որպեսզի արժանի դառնանք մեր երկրավոր կյանքի ավարտին հավիտենական խաղաղություն ու երջանկություն գտնելու մեր սիրելի երկնավոր Հոր երանելի և հայրական գրկում:

ԿՐԿԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Աստվածաշնչյան մարգարեություններից է Դանիելի մարգարեությունը: Այս մարգարեությունը հետաքրքրական կանխատեսումներ ունի Երուսաղեմի տաճարի կործանման, մեծ սրբապղծության, հակաքրիստոսի թագավորության, ինչպես նաև աշխարհի վախճանին առնչվող դեպքերի վերաբերյալ (Դան. 7-9):

Աշխարհի սկզբի և վախճանի մասին, ծննդից առաջ և մահից հետո մարդու գոյության մասին մտածողները, փիլիսոփաները խորհում էին մինչև 18-19-րդ դարերը: Մտքերի այս ընթացքը փոխվեց, երբ գերմանացի փիլիսոփաները սկսեցին ուսուցանել, որ մարդու համար ամեն ինչ տեղի է ունենում իր բանականության ընկալման մեջ, և աշխարհի վախճանը ոչ միայն մարդուց դուրս է, այլև մարդու ներսում: Իրոք, մեռած մարդու համար աշխարհն իր ողջ կառուցվածքով դադարում է գոյություն ունենալուց:

ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԵՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԸ

Սուրբ Եղիա մարգարեի տոնից առաջ շաբաթապահք է, որ կոչվում է եղիական պահք, որովհետև նախորդում է մարգարեի տոնին: Եղիա մարգարեն չի ներառնված Աստվածաշնչի մեծ կամ փոքր մարգարեների շարքում, որովհետև նա գրավոր մարգարեություն չի թողել, սակայն, անկասկած, նա ամենանշանավոր մարգարեներից մեկն է մարդկության պատմության մեջ: Նրա ավնան հետ է կապված Քրիստոսի երկրորդ գալուստը աշխարհի վախճանին: Հակոբոս առաքյալը և եկեղեցական շատ հեղինակներ ճշմարիտ հավատն են ուսուցանում Եղիա մարգարեի օրինակով: Քրիստոս համեմատեց Հովհաննես Մկրտչին Եղիա մարգարեի հետ (Մատթ. 11.14, 17.12, Մարկ. 9.12): Իսկ Հակոբոս առաքյալն իր թղթում ասում է. «Եղիան մարդ էր մեզ նման՝ կրքերի ենթակա. նա աղոթեց, ու երկրի վրա երեք տարի ու վեց ամիս անձրև չտեղաց: Ապա դարձյալ աղոթեց, և երկինքը անձրև տվեց, ու երկիրը բուսցրեց իր պտուղը» (Հակ. 5.17-18):

Մաղաքիա մարգարեն իր մարգարեության մեջ ցույց է տալիս, որ Քրիստոսի երկրորդ գալստից առաջ Եղիան պետք է գա (4.4): Օրենսգետները ևս ուսուցանում էին, որ Մեսսիայի գալստից առաջ Եղիան պետք է գա (Մատթ. 17.10, Մարկ. 9.10): Դրա համար էլ առաքյալները այլակերպության լեռան վրա Տիրոջը հարցրեցին այս մասին, իսկ Քրիստոս ասաց, որ Հովհաննես Մկրտիչը ինքը Եղիան է, այսինքն՝ այն իմաստով, որ Հովհաննես Մկրտիչն ուներ նույնպիսի նախանձախնդրություն, ինչպիսին Եղիան:

Եղիան գալու է Քրիստոսի փառավոր գալստից առաջ, ինչպես որ տեսնում ենք Մաղաքիայի մարգարեության մեջ, ով Տիրոջ գալստյան մասին այս հատվածում խոսում է աշխարհի վախճանի մասին: Հովհաննես Ավետարանիչը Հայտնության գրքում խոսում է երկու վկաների մասին, ովքեր գալու են հակաքրիստոսի թագավորության շրջանում և հայտարարելու են, որ նրա թագավորությունը չարից է: Այդ ժամանակ հակաք-

րիստոսը՝ նեռը, սպանելու է նրանց, և նրանց մարմինները երեք օր ընկած են լինելու Երուսաղեմի հրապարակում: Սակայն երեք օր հետո նրանք հարություն են առնելու և երկինք են համբարձվելու (11.3-12): Հովհաննես առաքյալը որևէ բան չի հայտնում այդ երկու վկաների անունների մասին, բայց Եկեղեցու Հայրերը, հիմնվելով Սուրբ Գրքի վկայության վրա, ասում են, որ Հովհաննու Հայտնության մեջ հիշատակվող երկու վկաները Ենովքն ու Եղիան են, ովքեր չեն մահացել, այլ երկինք են համբարձվել իրենց կենդանության օրոք (Ծննդ. 5.24, Դ Թագ. 2.11, Եբր. 11.5): Նրանք կրկին երկիր են գալու և մեռնելու են մարդկանց հատուկ մահով, այնուհետև հարություն են առնելու, իսկ հակաքրիստոսի զորությունը վերացվելու է աշխարհի վախճանից և Դատաստանի օրվանից առաջ:

ՉԱՐ ՈԳԻՆԵՐ ԵՎ ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐ

Ըստ Աստվածաշնչի՝ հրեշտակներն ապրում են երկնքում, բայց ո՞րն է նրանց ճշգրիտ բնակավայրը: Տիեզերքի անսահմանությունը Աստծո գոյության ապացույցներից մեկն է: Սակայն նույնիսկ եթե տիեզերքը սահման ունի, ապա ի՞նչ կա տիեզերքի սահմաններից այն կողմ: Սրանք հարցեր են, որոնց գիտությունը նույնիսկ այսքան զարգացած քսանմեկերորդ դարում չի կարողանում մի հստակ պատասխան տալ:

Սուրբ Գրքի համաձայն՝ այլ երկինքներ էլ կան (Եփ. 4.9, Եբր. 7.26, Հայտն. 21.1): Պողոս առաքյալը հափշտակվեց մինչև երրորդ երկինք (Բ Կորնթ. 12.2), հրեական ավանդության մեջ ինը երկինքների պատկերացումը կա: Եկեղեցական հեղինակներն ասում են, որ այս աստղային երկնքից այն կողմ հրեղեն երկինքն է, որտեղ Աստված է, հրեշտակները և մեծ սրբերը: Իսկ որտե՞ղ են անկյալ հրեշտակները՝ չար ոգիները: Շատ մարդիկ մտածում են, որ նրանք երկրի տակ են, բայց այս կարծիքը հիմնված չէ Աստվածաշնչի վրա և գուցե գալիս է տարբեր ժողովուրդների սնոտիապաշտություններից: Հրաբուխների ժայթքող լավաները տեսնելով՝ շատ ժողովուրդներ պատկերացրեցին, որ գետնի տակ վայրեր կան, որտեղ սատանան պատրաստում է իր հավիտենական կրակները մեղավոր մարդկանց համար: Բայց որտե՞ղ են չար հրեշտակներն ըստ Աստվածաշնչի: Գուցե զարմանալի կլինի իմանալը, սակայն նրանք բնակվում են օդի մեջ՝ երկնքի տակ: Եփեսացիներին ուղղված իր թղթում Պողոս առաքյալն ասում է. «Ընթանում էիք ըստ այս աշխարհի սովորության՝ հնազանդվելով օդում տիրող իշխանի այն ոգուն, որ այժմ ներգործում է ապստամբող մարդկանց մեջ» (Եփ. 2.2): Առաքյալը նաև ասում է. «Մեր պա-

տերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ.... այս խավար աշխարհի տիրակալների հետ և երկնքի տակ եղող չար ոգիների հետ» (Եփես. 6.12):

Եկեղեցական ժամանակակից հեղինակներից մեկն ասում է, որ երկնքում երբեմն երևացող արտասովոր երևույթները, որոնք մարդկանց ներշնչում են, թե այլմոլորակայինների նշաններ են, սատանայի թակարդն են, որով չարը ցանկանում է մարդկանց հեռացնել Աստծո մասին ճիշտ պատկերացումից: Եվ կարող ենք ասել, որ երբեմն չարը հաջողություններ է ունենում այս հարցում, քանի որ այժմ տարբեր երկրներում ոչ քիչ թվով մարդիկ կան, ովքեր սխալմամբ կարծում են, թե երկրի վրա կյանքը տարածվել է այլմոլորակայինների կողմից:

ՀՈԲԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Հոբի իմաստուն խոսքերից է ողջախոհության հորդորող հետևյալ միտքը. «Ուխտ եդի աչաց իմոց ոչ հայիլ ի կոյս - Դաշինք կնքեցի աչքերիս հետ՝ չնայելու ոչ մի կույսի»,- ասում է Հոբը (Հոբ 31.1): Հոբի այս խոսքերը հիշեցնում են Քրիստոսի խոսքերը. «Ամեն մարդ որ կնոջը նայում է նրան ցանկանալու համար, արդեն իսկ շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. 5.28): Հոբի նույն խրատը կրկնում է նաև Սիրաք իմաստունը. «Երկար մի՛ նայիր կույսին, որպեսզի չգայթակղվես նրա հմայքով» (9.5): Այս խրատներում նայելու արգելքը վերաբերում է հատկապես հոգևոր իմաստով մեղսալից կերպով ներքին աչքերով նայելուն և ուսուցանում, որ մարդն իր բարի կամքով պետք է հսկի իր բանականության ու մտքերի վրա, որպեսզի հաճելիին հաճախ անգամ պատահականորեն նայելով՝ չընկնի հաճոյական մտավոր մեղքերի մեջ, որն էլ բերում է գործնական մեղքի: Բայց այստեղ հարց է առաջանում. «Ուրեմն, գուցե ճի՞շտ են վարվում մահմեդական ազգերը, որ արգելում են կանանց ազատ կերպով երևալ հասարակության մեջ և թույլատրում են դրսում մարդկանց մեջ լինել միայն ծածկող զգեստներով, որով և վերանում է կնոջը մեղսալի ցանկությամբ նայելու վտանգը»: Բայց եթե քաղցից տառապող մեկին նստեցնենք փակ սենյակի դռան առջև և ասենք, որ ներսում զանազան համեղ ուտելիքներ կան, ապա նրա մտքերը պիտի պտտվեն միայն ներսի, իրեն ցանկալի իրողությունների շուրջ: Սակայն եթե մարդը հավատարիմ է Աստծուն, գիտի իշխել իր մտքերին ու ցանկություններին, նա անգամ մարմնական նեղությունն անտեսելով՝ հեռու կվանի արգելքը բացելու և այն կողմ անցնելու ամեն միտք, եթե դա հակառակ է սիրելի Աստծո կամքին, որովհետև ինչպես Պողոս առաքյալն է ասում, «ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները, թե՞ սուրը» (Հռ. 8.35):

Մարդ չի կարող զերծ լինել մեղքից: Եթե իրեն հեռու է պահում գործով մեղանչելուց, հաճախ մեղք է գործում խոսքով, եթե սրանից էլ զգուշանում է, ապա մեղք է գործում մտքով, ինչպես Սիրաք իմաստունն է ասում. «Ո՞վ է, որ մեղք չի գործում մտքով կամ լեզվով» (19.17): Բայց եթե անգամ մարդն իր սրբությամբ սրանցից էլ հեռու է, ապա զերծ չի սկզբնական՝ ադամական մեղքից, ինչպես Հոբը: Դրա համար Քրիստոս մեզ պատվիրեց Տերունական աղոթքում ասել՝ թող մեզ զպարտիս մեր, որպեսզի հիշենք, որ մենք էլ մեղավոր ենք, ուրիշների համեմատ մեզ անմեղ և սուրբ չկարծենք, ինչպես փարիսեցին (Ղուկ. 18.11-12), և նրա նման չդատապարտվենք:

«Մահը մարդու համար հանգիստ է»,- ասում է Հոբը (3.22): Ոմանք Աստվածաշնչից նման նախադասություններ հանելով՝ տեսություններ են հորինում և մոլորեցնելով ուսուցանում, որ մարդու հոգին անմահ չէ, և մարդը մեռնելով ոչնչանում է, բայց Աստված հետո կարող է վերաստեղծել նրան: Բայց մենք միշտ ասում ենք, որ Աստվածաշնչի խոսքերը պետք է դիտարկենք ամբողջականության մեջ և ոչ թե դրանցից մի քանիսի վրա տեսություններ սարքենք, որոնց ենթակայության տակ էլ հետո դրվում է Աստվածաշունչն ինքը: Պետք է իմանալ, որ Հոբի՝ «մահը մարդու համար հանգիստ է» խոսքերի կողքին կան նաև Սողոմոն իմաստունի խոսքերը. «Բայց արդարների հոգիներն Աստծու ձեռքին են, և մահը չի մոտենալու նրանց» (Իմաստութ. 3.1): Խաչի վրա Քրիստոս յոթ խոսք ասաց, որոնցից վերջինն էր. «Հա՛յր, Քո ձեռքն եմ ավանդում Իմ հոգին» (Ղուկ. 23.46): Սրանով Տերը մեզ ուսուցանեց այնպես ապրել, որ կյանքի վերջում հոգին ավանդեք Աստծո ձեռքը և ոչ թե չարի տվայտանքներին՝ արժանանալու Երկնքի Արքայության հավիտենական երջանկությանն ու երանությանը:

ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՎ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Մեր Եկեղեցին ամեն տարի տոնում է տասներկու վարդապետների տոնը: Այդ տասներկու վարդապետներն են՝ 1. Ռեթեոս Աթենացի, 2. Դիոնիսիոս Արիսպագացի, 3. Սեղբեստրոս՝ Հայրապետ Հռոմի, 4. Աթանաս, 5. Կյուրեղ Երուսաղեմացի, 6. Եփրեմ Խուրի Ասորի, 7. Բարսեղ Կեսարացի, 8. Գրիգոր Նյուսացի, 9. Գրիգոր Աստվածաբան, 10. Եպիփան Կիպրացի, 11. Հովհան Ոսկեբերան, 12. Կյուրեղ Ալեքսանդրացի: Այս վարդապետներն ապրել են սրբակենցաղ կյանքով և թողել են կարևոր ուսուցումներ, որոնց հիման վրա Եկեղեցին հետագայում կառուցել է Աստվածաշնչից բխող իր դավանաբանական դիրքորոշումները: Այս վարդապետները մեր Եկեղեցում տոնելի ոչ հայ, օտարազգի վարդապետներն

են: Հայ վարդապետների տոնը տոնվում է առանձին: Հիշյալ վարդապետներից միայն մեկ անձ՝ Սեղբեստրոսը՝ Հռոմի Եկեղեցու եպիսկոպոսը, վարդապետական գրություններ չի թողել, և անգամ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին Սեղբեստրոսին չի ընդունում որպես վարդապետ, որովհետև նա համապատասխան գրվածքներ չունի: Կարծիք կա, որ Սեղբեստրոսը տասներկու վարդապետների շարքում հիշվում է Գրիգոր Լուսավորչի հետ մոտ լինելու և իր գործունեությամբ ճշմարիտ վարդապետությանը հետևելու համար: Հետաքրքրական է, որ կաթոլիկ այլ հեղինակներ չեն ներառնվել վարդապետների շարքում: Բնական է, որ Քաղկեդոնի ժողովից հետո քաղկեդոնական Եկեղեցիների հեղինակներ ընդունելի չեն եղել հակաքաղկեդոնական Եկեղեցիների կողմից՝ քրիստոսաբանության մեջ բավականին տարբեր դիրքորոշումների պատճառով: Սակայն, օրինակ, Կաթոլիկ Եկեղեցու մեծ վարդապետներից Օգոստինոսը, ով չնայած ապրել ու գործել է 451 թ. տեղի ունեցած Քաղկեդոնի ժողովից առաջ (354-430), նույնպես բառիս բուն իմաստով վարդապետ չի համարվել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու համար: Հավանաբար պատճառն այն է, որ այս հեղինակը արտահայտել է կարծիքներ, որոնք հետագայում հիմք են հանդիսացել Կաթոլիկ Եկեղեցու՝ մեզ համար անընդունելի վարդապետությունների: Օրինակ՝ Քրիստոսի այն խոսքից, թե Սուրբ Հոգու դեմ հայհոյությունը «չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ հանդերձյալում» (Մատթ. 12.32), Օգոստինոսը եզրակացրել է, որ ներում հնարավոր է նաև մահից հետո, որով և Կաթոլիկ Եկեղեցին ստեղծել է քավարանի վերաբերյալ իր ուսուցումը:

Այսօր Կաթոլիկ Եկեղեցին բազում հետևորդներ ունի, ովքեր հետևում են այդ Եկեղեցու վարդապետներին: Մեր եկեղեցական հեղինակներից մեկն ասում է, որ կաթոլիկ հավատացյալները չեն պատժվի մոլոր վարդապետության հետևելու համար, այլ կպատժվեն նրանց վարդապետները, որ ժողովրդին ճիշտ չեն սովորեցրել: Կաթոլիկ Եկեղեցում հիմնական համարվող վարդապետական դիրքորոշումներից հատկապես մի քանիսը չեն ընդունվում և ոչ մեկ այլ Եկեղեցու կողմից, ինչպես օրինակ՝ քավարանի գաղափարը, Սուրբ Երրորդության ուսուցման մեջ Սուրբ Հոգու բխումը նաև Որդուց, պապի անսխալականությունը, Կաթոլիկ Եկեղեցու գերիշխանության հավակնությունը և այլն: Այդ իսկ պատճառով մեր աստվածաբան Կաթողիկոսներից Ղազար Ձահկեցին հորդորում է, որ եթե հայ հավատացյալը ցանկանում է աղոթել, բայց այնպիսի վայրում է, ուր հայկական եկեղեցի չկա, սակայն կան կաթոլիկ և հունական եկեղեցիներ, ապա նախընտրելի է, որ հայ հավատացյալն աղոթի հունական եկեղեցում, քանի որ Հույն Եկեղեցին, որը չնայած, ի տարբերություն մեզ, քաղկեդոնական է, Կաթոլիկ Եկեղեցու վերոնշյալ սխալ

կարծիքները չի ընդունում: Իսկ մեր Սուրբ Եկեղեցին այլ Եկեղեցիների հետ հարաբերություններում հետևում է Կաթոլիկ Եկեղեցու մեծագույն հեղինակություններից մեկի՝ Օգոստոնոսի նշած, և մեր Եկեղեցու Կաթողիկոսներից Սուրբ Ներսես Շնորհալու կողմից շեշտված սկզբունքին՝ միություն կարևոր բաներում, ազատություն երկրորդական բաներում և սեր ամեն ինչում:

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ

Սուրբ Գրիգոր Աստվածաբանը կոչվում է նաև Գրիգոր Նազիանզացի, քանի որ Կապադովկիայի Նազիանզ գյուղաքաղաքից էր, որդին էր Նազիանզի Գրիգոր եպիսկոպոսի: Նա ապրել և գործել է 328-389 թվականներին: Սուրբ Գրիգոր Նազիանզացին ընկերն էր Սուրբ Բարսեղ Կեսարացու, ում հետ ծանոթացել էր ուսումնառության տարիներին Կապադովկիայում և մտերմացել Աթենքի համալսարանում ուսանելու ժամանակ: Աթենքի համալսարանը Պլատոնի կողմից Ն.Ք. չորրորդ դարում հիմնադրված Ակադեմիան էր, որ արդյունավետությամբ գործեց շուրջ հազար տարի և փակվեց Հուստինիանոս կայսեր կողմից 539 թվականին: Աթենքի համալսարանում ուսանողական յուրահատուկ սովորություն կար նորեկներին փորձության ենթարկելու: Նոր ուսանողին աղմուկով, պարերով, ծաղրանքներով ուղեկցում էին մինչև բաղնիք, այնուհետ խանգարում բաղնիքի դուռը բացելուն: Եթե նոր ուսանողը դիմանում էր այս փորձությանը, ապա բաղնիքից դուրս գալիս նրան ընդում էին իբրև յուրային և ընդգրկում իրենց շարքերը: Հավանաբար այսպիսի փորձության միջով անցել էր նաև Գրիգորը: Բայց երբ նա իմանում է Բարսեղի գալստյան մասին, դիմավորում է նրան և զգուշացնում ուսանողական այս փորձության մասին և նույնիսկ համոզում մյուս ուսանողներին, որ Բարսեղի հետ հարգանքով վերաբերվեն և նման փորձություններ չսարքեն: «Սա եղավ առաջին առիթը մեր մտերմության»,- գրում է Գրիգոր Աստվածաբանը: Նրանց մտերմության երկրորդ առիթը կապված էր հայ ուսանողների հետ: Մենք գիտենք, որ մեր ժողովուրդը մեծապես կարևորել է ուսումը, կրթությունն ու գիտությունը: Հայ ազնվականներն իրենց որդիներին ուղարկում էին աշխարհի հռչակավոր համալսարաններ՝ ուսման մեջ կատարելագործվելու: Այսպես, Աթենքի համալսարանում ուսանում էին շատ հայ երիտասարդներ: Մի անգամ հայ ուսանողները գալիս են Բարսեղ Կեսարացու մոտ և նրան հրավիրում փիլիսոփայական վիճաբանության: Գրիգորը սկզբում անցնում է հայերի կողմը, բայց հետո շատ ցանկանալով, որ իր ընկերը հաղթի, անցնում է Բարսեղի կողմը: Փիլիսո-

փայական այս վիճաբանության մեջ Բարսեղը փայլուն հաղթանակ է տանում:

Աթենքի համալսարանի այս երկու ուսանողները՝ Բարսեղը և Գրիգորը, համալսարանի ամենաառաջադեմ ուսանողներն էին, և Գրիգորը հետագայում գրում է, որ իրենց համբավը տարածվել էր ոչ միայն համալսարանում, այլև ողջ քաղաքում և նույնիսկ քաղաքից դուրս: Նրանք փայլում էին հատկապես ճարտասանության և հռետորության մեջ այն աստիճան, որ ուսման ավարտին նրանց խնդրեցին մնալ համալսարանում և հռետորություն դասավանդել: Բարսեղը համոզեց ընկերոջը ընդառաջել հրավերին, իսկ ինքը գաղտնի հեռացավ: Որոշ ժամանակ համալսարանում դասավանդելուց հետո Գրիգորը վերադարձավ իր ծննդավայր և հոր կողմից ձեռնադրվեց երեց, քանի որ հորը՝ Նազիանզի եպիսկոպոսին, օգնական էր հարկավոր՝ գործերը վարելու համար: Տարիներ անց Գրիգորն իր ընկերոջ՝ Բարսեղի կողմից ձեռնադրվում է Սասիմա քաղաքի եպիսկոպոս: Այս ձեռնադրություններին Սուրբ Գրիգորը դժկամությամբ է համաձայնվել, քանի որ ավելի շատ հակում ուներ առանձնացյալ կյանքի, աղոթքի, ճգնակեցության: Սուրբ Գրիգոր Աստվածաբանը մասնակցել է 381 թ. Կոստանդնուպոլսի երկրորդ տիեզերաժողովին՝ որպես ժողովի նախագահ, այնուհետև ժողովից վերադառնալով՝ ապրել է առանձության մեջ մինչև իր մահը:

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

Սուրբ Գրիգոր Աստվածաբանը, ով չորրորդ դարի հույն Հայրերից է, թողել է հարուստ գրական ժառանգություն, որի մեջ առանձնանում են հատկապես աստվածաբանական ուղղվածությամբ աշխատությունները: Աստվածաբանական իր աշխատություններից մեկում Սուրբ Գրիգորն ասում է, որ Աստծո՝ անմարմին գերագույն հոգևոր էակի հետ մարդը, որ նաև մարմնավոր է, հաղորդակցվում է անմարմնի՝ մտքի միջոցով, որը Գրիգոր Աստվածաբանը կոչում է *նուս*: *Նուս* հունարենից թարգմանաբար նշանակում է միտք: Սակայն Գրիգոր Աստվածաբանի այս տեսակետն իմանալիս պետք է նկատի ունենալ, որ նա Աստծուն համարելով անմարմին՝ դրանով հանդերձ չի մերժում Քրիստոսի մարմնացումը և իր գրի-վածքներում գեղեցիկ կերպով խոսում է նաև Քրիստոս Աստծո մարդեղացման և Նրա աստվածության մասին: Նաև պետք է իմանալ, որ Համբարձումից հետո Քրիստոս Իր մարդկային մարմնով նստեց Աստծո աջ կողմում (Մարկ. 16.19), և հիմա Քրիստոս մարմնով Աստծո աջ կողմում է (Հռ. 8.34), իսկ Իր աստվածությամբ՝ ամենուր: Դրա համար հավա-

տացյալներն աղոթում են Քրիստոսին երկիր մոլորակի ցանկացած կետից, և Նա մեզ լսում է ամեն տեղից:

Գրիգոր Աստվածաբանի կողմից արտահայտված մեկ այլ տեսակետի համաձայն՝ մարդն այս կյանքում չի կարող ճանաչել Աստծո էությունը, բայց որոշակիորեն կարող է ճանաչել և տեսնել հանդերձյալ կյանքում: Հետագա աստվածաբանները, սակայն, չզարգացրեցին երանելի տեսության այս տեսակետը, որովհետև ընդունված է այն կարծիքը, որ մարդը չի կարող ճանաչել Աստծո էությունը, և Աստված Իրեն ճանաչելի է դարձնում մարդկանց սոսկ այն չափով, որքանով մարդկային տկար միտքը, բանականությունը կարող է տանել: Սակայն ըստ Սուրբ Գրիգորի՝ սա խզում առաջ չի բերում մարդու և Աստծո հարաբերություններում, որովհետև Աստված անձ է, և մենք հաղորդակցվում ենք Աստծո հետ՝ իբրև անձի: Հենց սա է քրիստոնեության հրաշալիքներից մեկը, որ մարդը կարող է շփվել, զրուցել, խոսել Աստծո հետ, աղոթել Աստծուն: Մինչդեռ որոշ կրոններ իրենց հետևորդներին նման հիանալի հնարավորություն չեն ընձեռում: Օրինակ՝ հնդկական բրահմանիզմի մեջ աստված անանձ ուժ կամ էություն է, հետևաբար, նրան հնարավոր չէ դիմել մեղքերի թողության, նեղության ժամանակ օգնության կամ գոհություն հայտնելու համար: Այսպիսի հնարավորությունից զրկված են նաև բուդդայական կրոնի՝ բուդդիզմի հետևորդները: Այս կրոնն արդարացիորեն կոչվում է աթեիստների կրոն, որովհետև այնտեղ խոսք չկա Աստծո մասին, նույնիսկ նպատակահարմար կամ ցանկալի չի համարվում աստծուն կամ աստվածներին աղոթելը: Այլ մարդը, աշխատելով ինքն իր վրա, պետք է իրեն կատարելության հասցնի: Մինչդեռ քրիստոնեությունը մարդուն տալիս է գեղեցիկ հնարավորություն Աստծո հետ շփվելու:

Առաքյալն ասում է, որ Աստված Իր նախախնամությամբ ընտրեց քրիստոնյաներին (Հռ. 8.28-30, Բ Տիմ. 1.9): Եվ Աստծո նախախնամությամբ մենք ծնվել ենք քրիստոնյա երկրում, հետևորդն ենք ճշմարիտ քրիստոնեական կրոնի: Ուրեմն բաց չթողնենք մեզ ընձեռնված առիթը Աստծո հետ խոսելու, աղոթելու: Քրիստոս ասում է. «Մինչև հիմա Իմ անունով ոչինչ չխնդրեցիք. խնդրեցե՛ք և պիտի ստանաք, որպեսզի ձեր ուրախությունը լիակատար լինի» (Հովհ. 16.24):

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՍՐԲԱՑՈՒՄՆԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ

Տիեզերական երկրորդ ժողովը գումարվեց 381 թ. Կոստանդնուպոլսում: Ժողովը նախագահում էր Սուրբ Գրիգոր Նազիանզացին, ով անվանվել է նաև Աստվածաբան: Եկեղեցական կանոնների համաձայն՝ այն քաղաքի եպիսկոպոսը, որտեղ գումարվում է ժողովը, պետք է լիներ ժողովի նախագահը, մինչդեռ Գրիգորը Կոստանդնուպոլսի պաշտոնական

եպիսկոպոսը չէր: Նա Կոստանդնուպոլիս էր հրավիրվել մի խումբ հավատացյալների կողմից՝ հաստատելու ուղղափառ հավատքը, քանի որ այդ ժամանակ արիոսական հերձվածողները դեռևս մեծ ազդեցություն ունեին և զբաղեցնում էին քաղաքի գլխավոր եկեղեցիները: Երկու տարիների ընթացքում Սուրբ Գրիգոր Աստվածաբանը հաջողություն ունեցավ իր առաքելության մեջ և դարձավ իր հոտի սիրված հովիվը:

Պոլսի ժողովը գումարվել էր դատապարտելու Մակեդոնի ուսմունքը, ով մերժում էր Սուրբ Հոգու աստվածությունը: Սակայն ժողովը գումարվել էր այլ խնդիրներ ևս լուծելու: Բացի Մակեդոնի հարցից երկու խնդիրներ ևս կային՝ առնչված Կոստանդնուպոլսի և Անտիոքի եպիսկոպոսների հետ: Սուրբ Գրիգոր Աստվածաբանը, ինչպես նշվեց, Կոստանդնուպոլսի պաշտոնական եպիսկոպոսը չէր, այլ հրավիրյալ եպիսկոպոս էր: Կոստանդնուպոլսում նրա կեցության ընթացքում մի ցինիկ փիլիսոփա՝ Մաքսիմ անունով, եկավ Գրիգորի մոտ՝ որպես մի մարդ՝ հետաքրքրված ուղղափառ հավատքով և հավատքի սկզբունքներով: Սուրբ Գրիգորը նրան ապաստան և կերակուր տվեց իր տանը: Բայց մինչ հացկերույթների ընթացքում Մաքսիմը հավատքի մասին էր խոսում Սուրբ Գրիգորի հետ, նրա թիկունքում մեքենայություններ էր պատրաստում, որպեսզի ինքը դառնա Կոստանդնուպոլսի եպիսկոպոս: Մաքսիմը կարողացավ համաձայնության գալ Ալեքսանդրիայի Պետրոս եպիսկոպոսի հետ: Մի գիշեր, երբ Սուրբ Գրիգորը քնած էր, Եգիպտոսից կրոնավորներ եկան և սկսեցին Մաքսիմի ձեռնադրության արարողությունը: Սակայն արարողության կեսից առավոտյան լույսը բացվեց, և քաղաքացիները, իմանալով գաղտնի ձեռնադրության մասին, եգիպտացիներին և Մաքսիմին արտաքսեցին քաղաքից: Վերջիններս ստիպված եղան արարողությունը շարունակելու և ավարտելու մեկ այլ տեղում:

Կոստանդնուպոլսի ժողովը դատապարտեց Մաքսիմին և Կոստանդընուպոլսի եպիսկոպոս հռչակեց Գրիգորին: Ժողովի ընթացքում Գրիգորը խոսեց Անտիոքի եպիսկոպոսի օգտին: Անտիոքում երկու եպիսկոպոսներ կային, քանի որ առաջին եպիսկոպոսն աքսորվել էր, և նրա աքսորի ընթացքում մեկ ուրիշ եպիսկոպոս էր փոխարինել նրան: Բայց հետո աքսորյալ եպիսկոպոսը վերադարձել էր: Ժողովի օրերին Անտիոքի առաջին եպիսկոպոսը մահացել էր, և Սուրբ Գրիգորը ցանկանում էր, որ երկրորդ եպիսկոպոսը լիներ Անտիոքի հոգևոր առաջնորդը: Այս դեպքում, ըստ Սուրբ Գրիգորի, որևէ հակառակություն չէր լինի: Սակայն ժողովի Հայրերը ձայների մեծամասնությամբ որոշեցին մեկ այլ եպիսկոպոս նշանակել: Եգիպտացի հոգևորականները ժողովի առաջին օրերին ներկա չէին: Երբ նրանք ժամանեցին, տեսնելով, որ երկու գլխավոր հարցեր լուծվել են առանց իրենց մասնակցության և հատկապես եպիսկոպո-

սության իրենց ներկայացրած թեկնածուն մերժվել է, ժողովի նախագահի՝ Սուրբ Գրիգորի դեմ ելան: Նրանք վկայակոչեցին այն կանոնը, որի համաձայն որևէ մեկը չի կարող միաժամանակ երկու քաղաքների եպիսկոպոս լինել: Սուրբ Գրիգորը իր ընկերոջ՝ Կեսարիայի եպիսկոպոս Բարսեղի կողմից ձեռնադրվել էր Սասիմա գյուղաքաղաքի եպիսկոպոս: Սակայն Գրիգորը դժկամությամբ էր գնացել այս ձեռնադրությանը: Սասիման ոչ կարևոր, կիսակայարանային վայր էր, և Սասիմայում պաշտոնական թեմ չկար հաստատված: Եվ պաշտոնականորեն գոյություն չունեցող թեմի եպիսկոպոս դառնալը ճակատագրական եղավ Գրիգոր Աստվածաբանի համար, և նա այլևս չկարողացավ որևէ այլ քաղաքի եպիսկոպոս դառնալ: Գրիգորն ապշած էր այս մեղադրանքից: Իր բանաստեղծական գրությունների մեծ մասը նա գրել է Կոստանդնուպոլսում և դրանցից մեկում ասում է, որ իր դեմ հանեցին մի եկեղեցական կանոն, որը վաղուց ի վեր դադարել էր գործելուց: Սակայն հակամարտությունից խուսափելու համար Գրիգորը հրաժարվեց ժողովի նախագահությունից ու Կոստանդնուպոլսի եպիսկոպոսությունից և լքեց քաղաքը: Իր ծուխին ուղղված հրաժեշտի խոսքի մեջ Սուրբ Գրիգորը եպիսկոպոսական առաջնորդական աթոռը կոչում է նախանձոտ ու վտանգավոր բարձրություն հոգևորականի համար: Իր այլ բանաստեղծություններում Երկրորդ տիեզերաժողովի Հայրերը կոչվում են վայրի խոզեր, որոնք հարձակվում են մեկը մյուսի վրա իրենց ժանիքներով և եռում են զայրույթով: Զարմանալի է, որ Եկեղեցական ժողովի Հայրերը, ովքեր վիճաբանություն ունեցան Սուրբ Գրիգոր Աստվածաբանի հետ, հետագայում Եկեղեցու կողմից սրբացվեցին՝ հակառակ Սուրբ Գրիգորի տված այսպիսի բացասական գնահատականի: Մենք չենք ասում, որ սրբերը թերություններից զուրկ մարդիկ են եղել: Սակայն սրբացման հարցում Եկեղեցին ուշադրություն է դարձնում ոչ թե քրիստոնյաների բնավորության երկրորդական բաներին, այլ հավատացյալների ամբողջ կյանքի ընթացքին ու գործերին: Այս կերպ Եկեղեցին սրբացրել է հոգևորականների, ովքեր հակասություններ ու հակառակություններ են ունեցել միմյանց հետ, ինչպես օրինակ, Կյուրեղ Ալեքսանդրիացին և Եպիփան Կիպրացին ընդդեմ Հովհան Ոսկեբերանի: Եվ Կոստանդնուպոլսի ժողովի Հայրերի սրբացումը հասկանալի կլինի, երբ անդրադառնանք, որ սրբեր են նաև Պողոս և Պետրոս առաքյալները: Նրանք ևս հակառակություններ են ունեցել, որոնց մասին իմանում ենք Պողոս առաքյալի՝ գաղատացիներին ուղղված թղթի երկրորդ և երրորդ գլուխներից, որտեղ Պողոսը Պետրոսին նույնիսկ կեղծավոր է կոչում (Գաղ. 2.14): Գործք առաքելոցից գիտենք, որ Պողոսը վիճաբանել և նույնիսկ գործունեության մեջ բաժանվել է Բառնաբասից Մարկոսի պատճառով (Գործք 15.37-39):

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Բաբելասը Անտիոքի եպիսկոպոսն է եղել: Նա կայսեր չար գործերի և վարքի համար քաջությամբ արգելեց նրան եկեղեցի մտնել: Այդ իսկ պատճառով իր երեք աշակերտների հետ միասին գլխատվեց Դեկոս կայսեր հրամանով: Նման միջադեպ եղել է նաև Հուսիկ Կաթողիկոսի և Տիրան թագավորի միջև: 1957 թ. Երուսաղեմում հրատարակված «Հայաստանյայց Եկեղեցու սրբերը և տոները» գրքի հեղինակ Թորգոմ Պատրիարք Գուշակյանը գրում է. «Մեր եկեղեցական պատմության մեջ Հուսիկը ներկայացնում է քաղաքական իշխանությանը դիմադրող կրոնական իշխանության գիտակից ուժը»: Երբեմն զարմանալի է թվում, թե ինչպես են մարգարեները կամ եկեղեցականները քաջությամբ հանդիմանել թագավորներին սխալների համար: Ընդհանրապես ազատությունը կայանում է սահմանափակության մեջ: Եթե մի ոլորտ իր գործունեության շրջանակներից դուրս գա և իր իշխանությունը տարածի նաև մեկ այլ ոլորտի վրա, ապա կստացվի մեկի ազատության բռնություն մեկ ուրիշի սահմանների ընդլայնման հաշվին: Այսինքն՝ յուրաքանչյուրն ազատ է իր սահմանների ներսում: Սահմաններից դուրս գալը նշանակում է ուրիշի սահմանների խախտում և ուրիշի ազատության բռնի սահմանափակում: Այս ամենը շատ ճիշտ է հաստատությունների կամ գործունեության ոլորտների պարագային: Սակայն այս սահմանումը երբեք չի կարող ճշմարտացի լինել քրիստոնեության համար: Մի հեղինակ, դիպուկ դիտարկում անելով, ասել է. «Պահանջել, որ քրիստոնեությունը սահմանափակվի միայն եկեղեցական ոլորտով, նշանակում է պահանջել, որ քրիստոնեությունը ինքնասպանություն գործի»: Հետևաբար, քրիստոնեությունը տարածվում է բոլոր ոլորտների վրա անխտիր՝ յուրաքանչյուրից պահանջելով Աստծուց մեզ ցույց տրված կյանքի և վարվելաձևի համապատասխան դրսևորում: Հոգևորականն այս երկրի վրա կարգված է որպես դետ (Եզեկ. 3.17), որպես զգուշացնող, և եթե ոմանք իրենց արված զգուշացումներից վատ են զգում կամ նախկինում վիրավորվում էին և զգուշացնողներին սպանում, ապա նշանակում է, որ մեղքերի բազմապատկմանը համապատասխան բազմապատկվելու են նաև դժոխային տանջանքները ոմանց համար ոչ միայն այն կյանքում, այլև այս կյանքից սկսած:

ԱՅԼ ԿՐՈՆԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կեսարիայում Կոռնելիոս անունով մի հեթանոս հարյուրապետ կար, ով բարեպաշտ ու աստվածավախ էր, շատ ողորմություններ էր անում ժողովրդի մեջ և միշտ Աստծուն աղոթում էր: Աստծո հատուկ հայտնությունը եղավ Կոռնելիոսին, որի շնորհիվ նա քրիստոնյա դարձավ (Գործք 10):

Կոռնելիոսի օրինակը ցույց է տալիս, թե ինչպես պիտի փրկվեն այլ կրոնի ներկայացուցիչները: Փրկության համար նրանք պետք է քրիստոնեություն ընդունեն: Սա ծայրահեղ հայտարարության պես է հնչում որոշ մարդկանց համար, սակայն այսպիսին է քրիստոնեության պատասխանը: Քրիստոս ասաց. «Ես եմ Ճանապարհը և Ճշմարտությունը և Կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ՝ Ինձանով» (Հովհ. 14.6): Նա նաև ասաց. «Ով հավատա և մկրտվի կփրկվի» (Մարկ. 16.16): Այլ կրոնները կարծում են, որ քրիստոնեությունը խորթ չէ իրենց: Օրինակ՝ կան բուդդիստներ, ովքեր մտածում են, որ քրիստոնեությունը օտար չէ իրենց հասկացություններին, որովհետև նրանք հաճախ Քրիստոսին համարում են Բուդդայի վերամարմնավորումներից մեկը: Մուսուլմանների համար Քրիստոս մեծ մարգարեներից մեկն է: Դրա համար էլ նրանք չեն արգելում քրիստոնյաներին մուսուլմանական երկրներում եկեղեցիներ շինել: Եվ մեր հայ համայնքները հիմա բազմաթիվ եկեղեցիներ ունեն մուսուլմանական երկրներում: Սակայն քրիստոնեության համար այլ կրոններն ընդունելի չեն: Եվ Կոռնելիոսի մասին Գործք առաքելոցի պատմությունը ցույց է տալիս, որ այլ կրոնի հետևորդ հանդիսացող առաքինի և բարոյական մարդը կարող է փրկվել քրիստոնյա դառնալով՝ Աստծո հատուկ խնամքի և մասնավոր հայտնության շնորհիվ:

Հետաքրքրական է իմանալ, որ քրիստոնյա դառնալուց հետո Կոռնելիոսը քարոզեց Ավետարանը, հրաշքներ գործեց, բազմաթիվ մարդկանց դարձի բերեց դեպի Ճշմարիտ կրոնը և վախճանվեց ծեր տարիքում խաղաղ պայմանների մեջ:

ՕՐՀՆՎԱԾ ՋՈՒՐ

Հունվարի 6-ին, ի հիշատակ Քրիստոսի մկրտության, եկեղեցիներում Պատարագից հետո կատարվում է ջրօրհնեքի արարողություն: Օրհնված ջուրը բաժանում են հավատացյալներին. այն մարդկանց օրհնություն, սրբություն ու նաև ըստ հավատի՝ բժշկություն է պարգևում: Օրհնված ջրի կամ սուրբ ջրի գաղափարը հայտնի էր դեռևս հնում հրեաներին, ինչպես տեղեկանում ենք Հին Կտակարանից: Աստված Մովսեսի միջոցով պատվիրել էր հրեաներին, որ մի կարմիր երինջ հանեն բանակատեղիից դուրս, որը քահանան պետք է զոհաբերեր և այրեր: Այրվող երինջի վրա

քահանան գցում էր կարմիր թել, զոպա, այսինքն՝ սպունգ, և եղևնու փայտ (Թվեր 19.2-5): Ըստ Եբրայեցիներին ուղղված թղթում Պողոս առաքյալի տված ցուցումների՝ երինջի զոհաբերությունը խորհրդանշում էր Քրիստոսի զոհագործությունը (Եբր. 9.11): Այս ցուցումներին հետևելով՝ Եկեղեցու Հայրերը հետևյալն են ուսուցանում: Այրվող երինջի վրա գցվող կարմիր թելը խորհրդանշում էր Քրիստոսի արյունը, սպունգը՝ մեղքերից մաքրվելը (Սաղմ. 50.9), իսկ եղևնու փայտը Քրիստոսի խաչափայտի խորհրդանիշն էր: Երինջի զոհաբերությունը բանակատեղիից դուրս խորհրդանշում էր Քրիստոսի խաչելությունը Երուսաղեմից դուրս: Այս այրված երինջի մոխիրը հրեաները խառնում և լուծում էին ջրի մեջ և այն օգտագործում կրոնական ծիսական լվացումների համար: Անմաքրություն ունեցող մարդն այս ջրով լվացվելով՝ այլևս մաքուր էր համարվում Աստծո և մարդկանց առջև (Թվեր 19.9): Եվ եթե հնում այրված երինջի մոխրով ջուրը մաքրություն էր պարգևում, ուրեմն որքան առավել ևս այժմ հավատացյալներին կարող է մաքրություն, օրհնություն և բժշկություն պարգևել Քրիստոսի Սուրբ Խաչի նշանով օրհնված ջուրը:

ԱԲԳԱՐ ԹԱԳԱՎՈՐ

Հայոց Աբգար թագավորը, ով Քրիստոսին հավատացած առաջին հայոց թագավորն է, մեծ առնչություն ունի Քրիստոսի երկրային կյանքի դեպքերի հետ: Քրիստոս ծնվեց այն ժամանակ, երբ Հռոմի կայսր էր Օգոստոսը, իսկ Եդեսիայում թագավորում էր Աբգարը: Մոգերը, որ տասներկու հազար հեծելազորով ճանապարհվում էին Պաղեստին՝ Քրիստոսին երկրրպագելու, լսեցին, թե սով է սկսվել Պաղեստինում, և մտան Եդեսիա, թողեցին իրենց զորքը Աբգարի մոտ և իրենք գնացին տասներկու իշխաններով և հազար հեծյալներով: Մոգերի անուններն էին Մելքոն Պարսիկ, Գասպար Հնդիկ, Բաղդասար Արաբ, ովքեր իրենց հետ իբրև ընծա տանում էին ոսկի, կնդրուկ և զմուռս: Այս մոգերի մասին ոմն Լուկիանոս Փռանկ, որ Ասորիքում էր, Օգոստոս կայսերը նամակ գրեց՝ հաղորդելով, որ մեծ աստղից առաջնորդվելով հարավ-արևելքից մեծաշուք այրեր եկան և երկրպագեցին Պաղեստինում ծնված մի տղայի: Երբ մոգերը գնացին այլ ճանապարհով իրենց երկրները (Մատթ. 2.12), Հերովդեսը Բեթղեհեմում կոտորեց հազար չորս հարյուր վաթսուներկու մանուկների՝ ենթադրելով, թե սպանվածների մեջ կլինի նաև մոգերից երկրպագված մանուկը (Մատթ. 2.16): Բայց մանուկ Քրիստոս ծնողներից Եգիպտոս էր տարվել (Մատթ. 2.14): Այդ ժամանակ Եգիպտոս գնաց նաև Օգոստոս կայսրը և սպանեց իր զորավար Անտոնինոսին, որը նրա դեմ ապստամբել էր: Իսկ Աբգար թագավորն այդ ժամանակաընթացքում ավարտեց

Ուռհա-Եդեսիա քաղաքի շինարարությունը և այնտեղ տեղափոխեց իր նստավայրը և դիվանը Մծբինից: Տարիներ անց Աբգարը հիվանդացավ մաշկային հիվանդությամբ և լսելով Քրիստոսի մասին՝ հավատաց, որ Նա Աստծո Որդի է և կարող է իրեն բժշկել, ու նամակ գրեց Տիրոջը բժշկության խնդրանքով՝ հրավիրելով նաև իր թագավորության մեջ խաղաղ ապրելու, հեռու հրեաների հալածանքներից: Ծառաների միջոցով Աբգարն ուղարկեց իր նամակը, ովքեր չհամարձակվեցին այն անմիջապես Քրիստոսին փոխանցել, այլ խնդրանքը հայտնեցին Փիլիպպոս և Անդրեաս առաքյալներին, ովքեր խնդիրը ներկայացրեցին Տիրոջը, ինչպես որ պատմվում է Ավետարանում (Հովհ. 12.20-22): Քրիստոս պատասխան գրություն ուղարկեց Աբգարին՝ գրված Թովմաս առաքյալի ձեռքով, ինչպես վկայում է նաև Մովսես Խորենացի պատմիչը, որ հետո կառաքի Իր առաքյալներից մեկին, ով և կբուժի Աբգարին: Աբգար թագավորը նաև մի նկարիչ էր ուղարկել՝ Քրիստոսի պատկերը նկարելու և իրեն բերելու համար: Սակայն նկարիչը չի կարողանում նկարել Քրիստոսի դեմքը, և Քրիստոս նամակի հետ միասին ուղարկում է նաև իր անձեռագործ պատկերը՝ դաստառակի վրա նկարված:

Աբգար թագավորը հետագայում՝ Տիրոջ երկրային կյանքի վերջին օրերին, մի պատմուճան է ընծայում Քրիստոսին, որը հյուսել էր նրա քույրը: Պատմուճանն ամբողջովին հյուսքագործ էր, առանց որևէ կարի և այնքան գեղեցիկ էր, որ Քրիստոսին խաչ հանող չորս զինվորներն ափսոսացին այն կտրել ու չորս մասերի վերածել: Եվ միմյանց մեջ վիճակ գցեցին, որն ընկավ զինվորներից մեկին (Հովհ. 19. 23-24, Սաղմ. 22-18): Ըստ ավանդության՝ այդ պատմուճանը մի որոշ ժամանակ անց անցավ հռոմեացի հարյուրապետի ձեռքը, ով այն հանձնեց Պիղատոսին, իսկ վերջինս ուղարկեց Հռոմ: Աբգարի և նրա դեսպանների մասին, բնականաբար, տեղյակ էր նաև Հուդա Իսկարիովտացին, ով հետո գնաց փնտրելու քահանայապետներին, ժողովրդի իշխաններին, օրենսգետներին ու փարիսեցիներին, ովքեր տխուր ու տրտում ժողովվել ու խորհում էին, թե ինչպես, ինչ հնարով ազատվեն Հիսուսից, քանի որ ամբողջ աշխարհը Նրա կողմն է՝ և՛ հրեաները, և՛ հեթանոսներ, և՛ սամարացիները, և՛ հյուսիսի կողմից եկածները, մինչև անգամ Հայոց արքան՝ Աբգարը, ով բնակվում է Եդեսիա քաղաքում, Հիսուսին Աստծու Որդի է խոստովանում:

Քրիստոսի համբարձումից հետո Թադեոս առաքյալը գալիս է Եդեսիա: Երբ առաքյալը մտնում է Աբգարի մոտ, սքանչելի տեսիլքով պայծառացյալ է երևում թագավորին Թադեոսի դեմքը: Եվ Աբգարը, գահից ելնելով, խոնարհվում է առաքյալի առջև: Առաքյալն ասում է. «Եթե հավատաս Քրիստոս Հիսուսին՝ Աստծո Որդուն, քեզ կտրվեն քո սրտի խնդրանքները»: Աբգարն ասում է. «Ես հավատացի Նրան և Նրա Հորը,

որի համար կամեցա առնել իմ զորքը և կոտորել հրեաներին, որ խաչեցին Նրան, եթե ինձ չարգելեր Հռոմեական թագավորությունը»: Աբգարը բժշկվում է, երկու անգամ նամակ է գրում Տիբերիոս կայսեր՝ բողոքելով հրեաներից և Պիղատոսից, որ առանց ճիշտ դատաստանի և առանց կայսերական հրամանի այսպիսի հրաշափառ Մարդուն մահվան մատնեցին: Տիբերիոսը բարկությամբ հրամայեց Պիղատոսին ձերբակալել ու Հռոմ բերել, սակայն Պիղատոսը, զարհուրելով թագավորի ցասումից, անձնասպան եղավ՝ ծովում ջրախեղդ լինելով: Իսկ նրա կինը, հավատացյալ դառնալով, հարեց առաքյալներին:

Աբգարը թագավորեց երեսունութ տարի: Նրա մահից հետո հայոց մյուս արքան՝ Սանատրուկը ցանկացավ տիրանալ նաև Աբգարի թագավորությանը: Սակայն Եդեսիայի բանկիչները լուր են ուղարկում, որ պատերազմ չանի, իրենց թույլ տա մնալու քրիստոնեական հավատքի մեջ՝ խոստանալով Սանատրուկին հանձնել քաղաքը և թագավորի գանձերը: Բայց Սանատրուկը խաբեություն է անում, հետո սրով կոտորում Աբգարի զավակներին, խնայում միայն դուստրերին և Աբգարի կնոջը՝ Հեղինեին, ով Աբգարի պես բարեպաշտ ու հավատացյալ էր: Հեղինեն չի ցանկանում ապրել կռապաշտների մեջ, գնում է Երուսաղեմ Կլավդիոս կայսեր ժամանակ, երբ Ագաբոս մարգարեի կանխատեսած սովն էր սկսվել (Գործք 11.28): Հեղինեն իր բոլոր գանձերը վաճառում է Եգիպտոսում, ցորեն գնում և բաժանում բոլոր կարոտյալներին: Այս մասին վկայում է նաև հրեական հայտնի պատմիչ Հովսեփոսը: Երուսաղեմում երկար ժամանակ նշանավոր է եղել Հեղինեի շիրիմը:

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ, ՀԱՅՏՆԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ ՍՐԲԵՐԻ ՏՈՆԸ

Շատ հետաքրքիր է հին և նոր, հայտնի և անհայտ բոլոր սրբերի տոնի հաստատման մասին տեղեկությունը: Այս տոնը հաստատվել է մի քանի պատճառներով: Հին Հռոմում մի տաճար կար, ուր զետեղված էին բոլոր ազգերի կուռքերը, և դրանց համար հատուկ տոնակատարության օր էր նշանակված: Սակայն երբ հռոմեացիները քրիստոնյա դարձան, բոլոր կուռքերի տոնը դարձրեցին բոլոր սրբերի տոն: Բացի սրանից քրիստոնյա սրբերը բազում են, իսկ օրերը՝ սակավ, այդ իսկ պատճառով մեկ օր կարգվեց՝ տոնելու բոլորի հիշատակը միասին:

ԿԱՏԱՐՅԱԼ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Ծնողների կողմից հալածանքների և նույնիսկ մահվան մատնված բազում սրբերի կյանքի օրինակը ցույց է տալիս, որ հեթանոսությունը

կամ կռապաշտությունը, դիվապաշտությունը մարդուն զրկում է առողջ բանականությունից, գցում մոլեռանդության կամ մտագարության մեջ: Այդ իսկ պատճառով էլ տագնապով պիտի վերաբերվել Հայաստանում գլուխ բարձրացրած որոշ մարդկանց, որոնք փորձում են վերականգնել հեթանոսությունը, հետևորդներ ունենալ, ինչպես նաև նրանց հրապարակային հայտարարութուններին կամ ելույթներին: Սակայն այսպիսի կարծիքի դեպքում մի հետաքրքիր հարց է առաջանում. «Ուրեմն մեր նախնիները մինչև քրիստոնեություն մտագարության մե՞ջ էին հազարավոր տարիներ»: Ինչ-որ իմաստով, այո: Ճիշտ է, այդ ժամանակաշրջանից մենք ունենք մշակութային գեղեցիկ ստեղծագործություններ, ժողովրդական բանահյուսության բացառիկ նմուշներ, պատմական նվաճումներ և ձեռքբերումներ, սակայն բարոյականության, առաքինության և աստվածպաշտության հարցում մարդկանց գիտակցությունն այնքան ցածր աստիճանի վրա էր, որ դա ավելի շատ վկայում է հիվանդության, քան թե առողջության մասին: Ճիշտ նույն կերպ էլ մենք երբեք կատարելապես առողջ չենք համարում այն մարդուն, ում սիրտը լավ վիճակում է և ինքն էլ ֆիզիկապես ուժեղ, այլ պետք է նաև մտքի հստակություն ու առողջություն ունենալ: Հակառակ դեպքում այդպիսի մարդկանց անվանում ենք խելագարներ՝ ստույգ իմանալով, որ նրանց շտապ բուժում է պետք:

ԿՇԵՌՔ ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՐ

Քրիստոնյաների դեմ ուղղված հալածանքների շրջանում հեթանոսներն ու անհավատները բազում անմարդկային չարչարանքների են ենթարկել քրիստոնյաներին՝ տանջելով ու սպանելով ահռելի ձևերով: Այսօրվա քրիստոնյա կոչվող աշխարհում ևս քիչ չեն դաժանությունները, բռնությունները, որոնք առավել հաճախ դրսևորվում են պատերազմների ժամանակ: Դրանց զուգահեռ այսօր աշխարհի բազում մարդիկ ապրում են թշվառությունների, նեղությունների, դժվարին իրավիճակների մեջ: Աշխարհի նման վիճակի մեղավորը մարդն է: Մարդկությունը կանգնած է կարևոր ընտրության առջև. մարդիկ պետք է ընտրեն Քրիստոսին կամ Բարաբբային: Բարաբբան խորհրդանշում է ռազմական հեղափոխությունների, արյունահեղության ճանապարհը, իսկ Քրիստոս՝ անմեղությունը և փրկությունը: Բայց մարդիկ հաճախ ընտրում են Բարաբբային, և մեր օրերում կարող ենք տեսնել աշխարհի ընտրության արդյունքը:

Փիլիսոփաներից մեկն ասում է, որ եթե հնարավոր լիներ կշեռքի մի նժարի վրա դնել մարդկությանը խոցող աղետները, զրկանքները, դժբախտությունները, աղքատությունը և կշեռքի մյուս նժարին՝ մարդու կողմից գործվող բոլոր անօրինությունները, դաժանությունները, մարդ-

կային եսասիրությունն ու շահամոլությունը, ապա կշեռքի երկու նժարները հավասար կկանգնեին: Սա ցույց է տալիս, որ Երկիր մոլորակի բոլոր ահռելիությունները ոչ թե երկնքից են թափվում մարդկային հասարակության գլխին, այլ մարդիկ են իրենց սխալ ու մեղավոր ընթացքով խախտում ներդաշնակությունն ու խաղաղությունը այս աշխարհում:

ՀԻՆԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ

Սուրբ Աստվածածնի անսերմ հղիության խորհրդանշանն է աշխարհի արարման ժամանակ առանց վար ու ցանքի, միայն Աստծո խոսքով հողի՝ բույսեր աճեցնելը (Ծննդ. 1.11-12): Մարդկության մեղքերի համար Քրիստոսի զոհագործության խորհրդանշանն է Աբրահամի կողմից իր որդի Իսահակի փոխարեն Աստծո պարգևած խոյի մորթվելը: Քրիստոսի մարդեղացման և մարդկանց մեղքերի բոցից փրկելու խորհրդանշանն է հնոցի բոցից Դանիել մարգարեի երեք ընկերների փրկվելը: Ն.Ք. 586 թ. Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորը հաղթանակ տարավ Հյուսիսային Հուդայի թագավորության հանդեպ, ավերեց Երուսաղեմը և բազմաթիվ հրեա գերիների քշեց Բաբելոն: Գերյալների մեջ էին Դանիելն ու իր ընկերները: Բաբելոնում նրանք չարչարանքներ կրեցին, բայց իրենց տոկունությամբ պահպանեցին իրենց հավատքը և ճշմարիտ աստվածապաշտությունը: Դանիելի ընկերների հետ կապված գեղեցիկ համեմատությունը հիշվում է նաև Առավոտյան ժամերգության քարոզի մեջ՝ ըստ որի Քրիստոս Ինքն էր, որ իջավ հնոցի մեջ և փրկեց աստվածապաշտ երիտասարդներին. «Որ էջ ի բոց հնոցին և փրկեաց զերիս մանկունսն ի քաղդեացւոց անտի»: Իսկ Իսրայելի տասներկու նահապետները, որոնցից սերվեց հրեա ժողովուրդը, խորհրդանշանն են տասներկու առաքյալների, որոնց քարոզչությամբ քրիստոնյա դարձան աշխարհի ժողովուրդները, և ստեղծվեց Նոր Իսրայելը:

ՀՐԵԱ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Քրիստոնեական աշխարհի մշակույթի հիմքում ընկած է ոչ թե հունական, հռոմեական կամ եգիպտական հսկա քաղաքակրթությունների հարուստ մշակույթը, այլ հրեական մշակույթը: Քրիստոնեական առաջին շրջանի աշխատությունները, մանրանկարները, հետագայում Վերածննդի շրջանի արվեստի հռչակավոր գործերը, եկեղեցիները զարդարող պերճաշուք նկարները առնչվում են ոչ թե հույն ժողովրդի փիլիսոփայությանը, հին եգիպտացիների զարմանալի և ակնածելի ձեռքբերումներին, հռոմեացիների մեծագույն նվաճումներին և կամ այլ հայտնի հին քա-

ղաքակրթություններին, այլ հրեա ժողովրդի պատմությանը և ազգությամբ հրեա Հիսուս Քրիստոսի և Նրա առաքյալների կյանքին ու գործունեությանը:

Մարդկության պատմության մեջ հրեաների եզակի դերակատարությունն այն էր, որ միայն նրանք էին պահպանել միաստվածության գաղափարը, մինչ մյուսները ընկղմված էին կռապաշտության և բազմաստվածության հիմարության մեջ: Հրեաներն Աստծո ընտրյալ ժողովուրդն են, բայց պետք է ասել, որ նաև Աստծո ստեղծած ժողովուրդն են, քանի որ Աստված Ինքն ընտրեց հրեաների նախահայր Աբրահամին (Ծննդ. 12.1-2) և նրա սերունդներին ժողովուրդ դարձրեց՝ ըստ Իր խոստման (Ծննդ. 15.5): Ճիշտ է, հետագայում Աստծո ընտրյալ, սեփական ժողովուրդ համարվեցին քրիստոնյաները, որպես Նոր Իսրայել՝ սերած տասներկու ա-

ղրն են սերում Աբրահամի սերունդ տասներկու նահապետներից:

Երբ հրեաները սկսեցին շեղվել աստվածահաճո ապրելակերպից, դադարեցին Աստծո ժողովուրդ լինելուց: Քրիստոս, Ով Ինքը մարդկային ծնունդով ազգությամբ հրեա էր, հրեաներին անվանում է սատանայի ժողովուրդ. «Դուք հոր կողմից սատանայի զավակներ եք և ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել» (Հովհ. 8.44): Նաև ազգությամբ հրեա Հովհաննես առաքյալի հեղինակած Հայտնության մեջ հրեաները համարվում են սատանայի ժողովուրդ. «Տեսա նաև հայհոյությունը նրանց, որ իրենք իրենց մասին ասում էին, թե հրեաներ են, բայց այլ բան չէին, քան սատանայի ժողովուրդ» (2.9), «Ահավասիկ ես հանձնում եմ քեզ սատանայի ժողովից եղողներին: Նրանք իրենց մասին ասում են, թե հրեաներ են, բայց չեն և ստում են» (3.9):

Սակայն այն փաստը, որ հրեաների խարդավանքով խաչվեց մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, և նրանք կոչվեցին սատանայի ժողովուրդ, երբեք չպետք է պատճառ լինի հրեա ժողովրդի հանդեպ ատելության, քանզի նրանց ժամանակավոր անհնազանդությունը Տիրոջը պատճառ եղավ մյուս ժողովուրդների դարձի (Հռոմ. 11.25), ովքեր պատվաստվեցին և հաղորդակից եղան այն արմատին, որ հրեական է (Հռոմ. 11.17): Պողոս առաքյալը, ով հպարտանում է իր հրեա ազգությամբ՝ Աբրահամի սերնդից և Բենիամինի ցեղից լինելով, շեշտում է, որ Աստծո կողմից Իսրայելի՝ հրեաների ընտրյալ լինելը և նրանց խոստացված պարգևը անդառնալի են (Հռոմ. 11.28), և մարգարեանում է, որ հրեա ժողովուրդը պիտի փրկվի այն ժամանակ, երբ մյուս ժողովուրդների ամբողջությունը փրկվի (Հռոմ. 11. 25-26): Պողոս առաքյալը, նաև արտահայտելով իր մեծ սերը իր ժողովրդի հանդեպ, ասում է. «Իսրայելի անհավատարմությունը մեծ տրտմություն է ինձ և անհատնում ցավ՝ իմ սրտին, որովհետև ես ինքս

երդումով փափագում էի նզովվել Քրիստոսից իմ ազգակից եղբայրների համար, որ իսրայելացիներն են. նրանցն է որդեգրությունը, փառքը, ուխտերը, օրենսդրությունը, պաշտամունքը և խոստումը. նրանցն են նահապետները, նրանցից է նաև Քրիստոս՝ ըստ մարմնի. և Նա՛ է բոլորի վրա հավիտյանս օրհնյալ Աստված: Ամեն» (Հռոմ. 9.2-4):

ԿՐՈՆԱԿԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրիստոնեությունը, հուդայիզմը և մուսուլմանությունը իրենց սրբությունների շարքում մեկ ընդհանուր սրբություն ունեն, որն է նախնիների գերեզմանները: Նույն բանը չենք կարող ասել բուդդիզմի մասին, որովհետև այդ կրոնի հետևորդները վառում են մեռածների մարմինները և մնացորդը ցանում օդի մեջ կամ կերակրում թռչուններին:

Երբ մեկը վիրավորական խոսք է ասում Մուհամեդի մասին, մուսուլմաններն ահավոր զայրանում են, որովհետև դա սրբապղծություն է նրանց համար, քանի որ Աստծո գաղափարը նրանց համար անբաժանելի է այդ մարգարեից: Երբ մեկը վիրավորում է հրեային, հրեաներն ըմբոստանում են, որովհետև նրանց համար դա սրբապղծություն է, քանի որ Աստծո գաղափարը անբաժանելի է աստվածընտիր ժողովրդից: Եվ երբ մեկը վիրավորական խոսք է ասում Հիսուս Քրիստոսին վերաբերող, դա սրբապղծություն է քրիստոնյաների համար, քանի որ Աստծո գաղափարն անբաժանելի է Հիսուս Քրիստոսից, քանզի Քրիստոսն Ինքը Աստված է:

Իսլամն ուշադրություն է դարձնում արտաքին վարմունքի վրա, մինչդեռ քրիստոնեությունն ուշադրությունը բևեռում է մարդու ներքին վիճակի վրա, քանզի քրիստոնեությունն ուսուցանում է, որ միայն հոգու մեջ հավատքով ներդաշնակություն ու խաղաղություն հաստատելով՝ մարդը կարող է կատարյալ դառնալ: Մուսուլմանական վարքուբարքի պարտադրված ձևերի տակ կարող է բարոյական ոչ ճիշտ վիճակ թաքնվել: Քրիստոնեությունն ասում է, որ բարիքն իրական կլինի, եթե ընտրված է ազատ կամքով և ոչ թե պարտադրված ստիպողական չափանիշներով: Եվ քրիստոնեության այդ հանդուրժողականության պատճառով էլ քրիստոնեական երկրներում կարող ենք տեսնել հեթանոսական սկզբունքներ և վարմունքներ:

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Սերմնացանի առակում ասվում է, որ հողի վրա ընկած սերմերը պտուղ տվեցին մեկի դիմաց երեսուն, մեկի դիմաց վաթսուն, մեկի դիմաց

հարյուր (Մատթ. 13.8, Մարկ. 4.8): Երեսունը նրանք են, ովքեր աշխարհի մեջ կարողանում են ապրել իբրև բարի քրիստոնյա: Վաթսունը նրանք են, ովքեր զրկանքների և ճգնությունների ենթարկելով իրենց մարմինը՝ արժանի են դառնում Երկնքի Արքայության ըստ ավետարանական հետևյալ խոսքի. «Հովհաննես Մկրտչի օրերից մինչև այժմ Երկնքի Արքայությունը բռնադատվում է, և հզորներն են հափշտակում այն» (Մատթ. 11.12): Իսկ հարյուրը հենց նրանք են, ովքեր հանուն Քրիստոսի հեղել են իրենց արյունը:

Ըստ մեկ այլ մեկնության՝ հարյուրը կուսության և կամ մարտիրոսության առաքինությունն ունեցողներն են, վաթսունը՝ կրոնավորությունը և ապաշխարությամբ մեղքերի մաքրումը, իսկ երեսունը ամուսնական կյանքով ապրող բարի քրիստոնյաներն են:

ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ուշագրավ է, որ հեթանոսությունից ամեն ինչ չմերժվեց, և օգտակարը մեծապես գնահատվեց ու խրախուսվեց քրիստոնեական կյանքում դրանց նորովի արժևորումով: Շատեր գուցե առարկեն և հիշեն հեթանոսական տաճարները, որոնք ևս մշակութային, ճարտարապետական կոթողներ էին և դրանք գրեթե բոլորն էլ այժմ չկան: Բայց հեթանոսական տաճարների պարագան այլ է. դրանք համարվում են նյութական վայրեր, որոնց միջոցով և որոնց միջից դիվական, սատանայական ազդեցությունը առավել ուժգնությամբ է տարածվում աշխարհի և մարդկության վրա: Ահա հենց այդ է պատճառը, որ քրիստոնեական սրբերը, հրեաների պատրաստած գեղեցիկ ոսկե հորթը կործանած Մովսես մարգարեի նման (Ելք 32.20), կործանել են նաև տաճարներում զետեղված կուռքերը, որոնք ևս կրոնական մտածողությամբ չառաջնորդվելու դեպքում, կարելի է համարել արվեստի գործեր: Սակայն հեթանոսության շրջանում ստեղծվել էին գրական մեծ գործեր, դարերով զարգացել էր մարդկային բանականության իմաստությունը, որի շատ դրական կողմեր օգտակար համարվեցին նաև քրիստոնյաների համար: Օրինակ՝ Սուրբ Բարսեղ Կեսարացին խորհուրդ է տալիս չմերժել և ընթերցել հեթանոսական գրողների աշխատությունները՝ միևնույն ժամանակ երիտասարդներին ցույց տալով, թե ինչ սկզբունքներով պետք է առաջնորդվեն, այն է՝ պետք է վերցնել օգտակարը և մերժել վնասակարը: Նա ասում է, որ Մովսեսը ևս սկզբից եգիպտական գիտություններով վարժվեց, և հետո Աստծո հայտնությանը հասավ, նույնպես Դանիելը Բաբելոնում քաղդեական իմաստություն սովորեց: Եկեղեցական Սուրբ Հայրը նշում է, որ կարելի է շատ օգտակար մտքեր սովորել հեթանոսական հեղինակներից և գործիչներից: Եվ Բարսեղ Կեսարացին բերում է հիանալի օրինակներ: Ահա դրան-

ցից մեկը. հեթանոսական հեղինակներից Սոլոնն ասում է, որ հարուստների ունեցվածքի հետ չենք փոխի առաքինության հարստությունը, որովհետև այն մշտական է, իսկ մարդկանց ունեցվածքին տիրում է մերթ մեկը, մերթ մյուսը: Հեթանոս գործիչների, փիլիսոփաների կյանքը ևս մեզ կարող է շատ բան սովորեցնել: Օրինակ՝ փիլիսոփա Դիոգենեսն ապացուցեց, որ հարուստ է նույնիսկ մեծ թագավորից, որովհետև կյանքում նրանից քիչ կարիքներ ունի: Ալեքսանդր Մակեդոնացին, գերի վերցնելով Դարեհ թագավորի աղջիկներին, որոնք հայտնի էին իրենց հիանալի գեղեցկությամբ, նրանց չարժանացրեց նույնիսկ իր հայացքին՝ ամոթ համարելով տղամարդկանց հաղթողին թույլ տալ իր հանդեպ կանանց հաղթանակը:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՏՈՆԻ ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սուրբ Սարգսի տոնի հետ կապված ժողովրդական գեղեցիկ ավանդություն կա, ըստ որի՝ այս տոնի գիշերը սուրբ Սարգիսն իր ձիով շրջում է հավատացյալների տները: Եվ մարդիկ նախկինում պնակով ալյուր էին դնում տների տանիքներին կամ դռան շեմին, որպեսզի սրբի ձիու պայտի հետքը մնա ալյուրի վրա: Այդ օրը նաև աղե բլիթ կամ աղաբլիթ են պատրաստում, որպեսզի երիտասարդներն ու երիտասարդուհիներն այն ուտեն և գիշերը երազի մեջ տեսնեն, թե ով է լինելու իրենց ապագա կինը կամ ամուսինը: Ժողովրդական այս սովորությունը գեղեցիկ համարելով հանդերձ չպետք է մոռանանք, որ ժողովրդական ավանդությունը բոլորովին տարբեր է եկեղեցական կամ կրոնական ավանդությունից և կրոնական իմաստով ժողովրդական ավանդությունն իր մեջ կարող է շատ սխալ բաներ պարունակել: Սուրբ Սարգսի տոնը անմիջապես հաջորդում է Առաջավորաց պահքին, և հավանաբար աղաբլիթի գործածությունն առաջացել է պահքի կերակրից կամ դրա նմանողությամբ, քանի որը աղը և հացը պահքի ժամանակ գործածվող հիմնական կերակուրներն են: Այդ իսկ պատճառով պահքի օրերը կոչվում են նաև աղուհացի օրեր: Սակայն ընդունելի չէ աղաբլիթով սնոտիապաշտական գուշակությունը: Աստվածաշունչը միշտ բացասական շեշտով է խոսում գուշակությունների մասին, թեև դրական արձագանք կա վիճակահանության վերաբերյալ: Սակայն Աստվածաշնչի դրական վերաբերմունքը վիճակահանությունից այն կողմ չի անցնում: Աստծո պատվիրածի համաձայն՝ հրեական զոհաբերությունների ժամանակ գործածվում էր վիճակահանությունը (Ղևտ. 16.8-9): Հին Կտակարանում իսրայելցիները վիճակահանությամբ իմացան, թե խոստացված երկրում որ ցեղը որ հողատարածքը պետք է զբա-

ղեցնի (Թվեր 25.55-56, 34.13, 36.2; Բ Օր. 2.19, 31; 25.19): Նոր Կտակարանում առաքյալները վիճակահանությամբ իմացան, թե ով պետք է լինի Հուդայի փոխարեն (Գործք 1.26): Վիճակահանությունը գործածվում է նաև եկեղեցական արարողության ժամանակ: Ավագ երեքշաբթի օրն ընթերցվում է տասը կույսերի առակը: Ընթերցման ընթացքում տասը դպիրներ պետք է ձեռքներին վառված մոմերով ատյան դուրս գան՝ խորհրդանշելով տասը կույսերին: Եվ եկեղեցու ավանդատանը վիճակահանություն է կատարվում, որպեսզի հայտնի դառնա, թե դպիրներից ովքեր պետք է խորհրդանշեն հիմարներին, և ովքեր՝ իմաստուններին: Իսկ գուշակության վերաբերյալ Աստված Ինքն է պատվիրում, որ չգտնվի այնպիսի մեկը, որ կխարդությամբ կամ գուշակությամբ, հոգեհարցությամբ զբաղվի, որովհետև դրանք գարշելի են, և Տիրոջ համար պիղծ է նա, ով զբաղվում է այդպիսի բաներով (Բ Օր. 18.10-12):

Չնայած որ սուրբ Սարգսի ձիու պայտը անցյալում կարևորվում էր ալյուրի վրա թողած հետքով, որը հավանաբար հաջողություն էր համարվում, այսօր արդեն սովորական ձիու պայտի գործածությունն այլ ուղղություն է ստացել: Կարող ենք տեսնել բազմաթիվ տներ, որոնց դռներին կամ նախամուտքին ձիու պայտեր են կախված: Մարդիկ սնոտիապաշտությամբ հավատում են, որ այդ ձիու պայտը կարող է իրենց հաջողություն բերել: Ոմանք նույնիսկ այնքան են առաջացել այս սնահավատության մեջ, որ երբեմն տգիտությամբ իրենց հետ ձիու պայտ են բերում եկեղեցի և քահանային խնդրում, որ այն օրհնի, որպեսզի իրենց տներում օրհնված պայտեր կախեն: Այսպես տարածված է նաև աչքուլունքների գործածությունը հատկապես փոքրիկ երեխաների համար, տանը փշերի գործածությունը՝ չար աչքից չվնասվելու համար և այլն: Խիստ դատապարտելի են նման երևույթները, որովհետև մենք մեր հույսը պետք է դնենք ոչ թե անշունչ առարկաների, այլ կենդանի Աստծո զորության վրա:

Ընդունելի է տների մոտ Սուրբ Սարգսի ձիու պայտի հետքը դրոշմվելու փոխաբերական իմաստը, որ նշանակում է, թե Սուրբը մոտ է բոլոր տներին, և իր պաշտպանությունը տարածվում է բոլորի վրա: Երիտասարդները հաճախ դժվարանում են ապագա կնոջ կամ ամուսնու ընտրության, կողմնորոշվելու հարցում, քանի որ կա սիրահարվածություն, համակրանք, հրապուրանք, կիրք և ի վերջո սեր, որ բոլոր զգացմունքներից ամենազորավորն ու զորեղն է: Եվ ընդունելի է պահք պահելը և աղոթքով երկնային զորությունների օգնությունը խնդրելը այնպիսի կարևոր հարցի համար, ինչպիսին է ընտանիքի կազմությունը և դրա համար կին կամ ամուսին ընտրելու խնդիրը: Այսպես վարվեց նաև Աբրահամի ծառան՝ աղոթքով խնդրելով Աստծուն ցույց տալ, թե ում կին ընտրի Իսահակի համար (Ծննդ. 24.12-14): Եվ Աստված անմիջապես պատասխա-

նեց այս աղոթքին, որով երևում է, թե Աստծո կողմից ընդունելի է նման պարագայի համար երկնային օգնություն խնդրելը: Եվ մեր երիտասարդները այս աղոթական ոգով պետք է ընկալեն աղաբլիթի գործածությունը Սուրբ Սարգսի տոնին:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Մեր ժողովրդի մոտ մի քանի սխալ սովորույթներ կան. եթե տանը մինչև Սուրբ Զատիկ ընտանիքի անդամներից մեկը մահացած է լինում, ապա տանեցիները ձու չեն ներկում և փլավի մեջ չամիչ չեն գցում: Սա անտեղյակ տրամաբանության արդյունք է, ըստ որի՝ կարմիրը տոնական գույն է, և սգի մեջ եղող մարդիկ չպետք է ուրախանան: Սակայն սա հանգուցյալի նկատմամբ հարգանքի արտահայտություն չէ, քանի որ Զատկի ձուն Հարության, կյանքի հավերժության խորհրդանշան է, հետևաբար, պիտի ներկվի հենց ա՛յդ ընտանիքներում՝ իբրև հոգևոր մխիթարություն, ի նշան կորցրած հարազատի հոգու անմահության և Երկնքի Արքայության համար հարություն առնելու: Իսկ զատկական փլավի մեջ բրնձի հատիկները խորհրդանշում են մարդկությունը, չամչի հատիկները՝ առաքյալներին, ովքեր Քրիստոսի Ավետարանի քարոզությամբ քաղցրություն բերեցին մարդկային կյանքում: Սուրբ Զատկի տոնի հետ կապված նաև այլ նախապաշարումներ կան մեր ժողովրդի կենցաղում՝ օճառով ձեռքերը չեն լվանում, կար չեն անում և այլն: Սակայն Եկեղեցին երբեք այսպիսի հրահանգներ չի տվել հավատացյալներին, և սրանք ևս համարվում են անտեղյակությունից ծագած ժողովրդական անիմաստ սնոտիապաշտություններ: Այսպիսի անտեղյակության հետևանք են նաև ժողովրդի կողմից սխալ կերպով գործածվող *փոքր և մեծ զատիկ* արտահայտությունները: Զատիկ բառը գործածվում է միայն Սուրբ Հարության տոնի համար, իսկ հունվարի 6-ը ոչ թե Հարության տոնին՝ Զատիկին նախորդող փոքր զատիկն է, այլ Տիրոջ Ծննդյան տոնը:

Պետք է նշել, որ գերեզմաններ գնալու օրը մեռելոցի օրն է և ոչ թե դրան նախորդող եկեղեցական մեծ տոնի օրը, անկախ նրանից, թե մարդը երբ է մահացել: Մեռելոցի օրերը հիմնականում լինում են երկուշաբթի օրերը, բացի Սուրբ Ծննդյան մեռելոցից, որը հունվարի 7-ին է անկախ շաբաթվա օրից: Մեռելոցների նախորդ կիրակի օրը տերունական ցնծալի տոն է տոնվում, և տոնի օրը սխալ է գերեզման գնալը: Մեզանից ոչ ոք չի թողնի իր սիրելի հարազատի հարսանիքը՝ նույնպես սիրելի, սակայն մահացած բարեկամի գերեզմանը գնալու համար: Եվ եթե այսպես ենք վարվում մեր մարմնավոր հարազատների պարագային, ուրեմն որքան առավել ևս չպետք է Տիրոջը նվիրված ուրախությունն ու ցնծությունը

թողնելով՝ գնանք գերեզմաններ:

ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Միմյանց հետ խոսակցության ժամանակ մարդկանց գիտակցությունը կարծես թուլանում և ուժգնանում է՝ կախված այն բանից, թե որքանով է զրուցակցի ասածը հետաքրքրում դիմացինին: Անգամ խոսակցության մեջ մարդիկ սիրում են շահը, սեփական օգտակարության համար որևէ բան ստանալը: Սակայն առաքյալը հիշեցնում է Քրիստոսի խոսքերը, թե՝ երանելի՜ է մանավանդ տալը, քան առնելը (Գործք 20.35): Հետևաբար, երանելի է ողորմություն անելը: Փիլիսոփաներից մեկն ասում է, որ Ալեքսանդր մեծը թագավորություններ էր բաժանում, իսկ Ավետարանի այրի կինը ընդամենը երկու լումա էր գցում գանձանակը: Եվ չնայած նրանց տվածի չափը տարբեր է, բայց երկու դեպքում էլ նույն առատաձեռնությունն է դրսևորվում, որովհետև նրանցից յուրաքանչյուրը տվեց իր ունեցածից մեծագույնը: Դրա համար էլ քիչ ունեցողի քիչ տվածը շատ է համարվում, իսկ շատ ունեցողի քիչ տվածը համարվում է ժլատություն:

Փիլիսոփա Կանտն ասում էր, որ արարքը լավն է, երբ արվում է պարտքի զգացումից, նույնիսկ առավել գնահատելի է այն դեպքում, երբ մարդը հակառակ իր ցանկության, բայց պարտքի զգացումից ելնելով՝ բարի բան է անում: Սակայն այս կարծիքին հակադրվում էր փիլիսոփա Շոպենհաուերը, ով պնդում էր, որ անգամ արվեստի գործերն արարվում են ոչ թե գեղագիտության չոր օրենքներով, այլ ներշնչումով ու ներշնչանքով: Նույնպես բարեգործությունը արժևորվում է գթասրտությամբ: Իսկ Պողոս առաքյալն ասում է. «Ինչ էլ անեք, ամեն ինչ արեք Աստծու փառքի համար» (Ա Կորնթ. 10.31):

ՄԱՏԱՂ

Մատաղը նույնը չէ ինչ Հին Կտակարանի ժամանակաշրջանում հրեական իրականության մեջ կենդանիների զոհաբերությունը: Աղանդավորները, փորձելով մարդկանց տրամադրել Եկեղեցու դեմ, խաբեությամբ ասում են, որ եկեղեցում կենդանիների զոհաբերություն են անում ըստ հրեական սովորության՝ անտեսելով Քրիստոսի զոհաբերությունը, որից հետո այլևս անհրաժեշտ չեն հինկտակարանյան զոհագործությունները: Սակայն այս մեղադրանքը սուտ է և չի համապատասխանում իրականությանը, որովհետև մատաղը արվում է միայն ողորմության համար: Նույնիսկ խիստ արգելված է մատաղացու կենդանին եկեղեցի մտցնելը: Եկեղեցին դրախտի խորհուրդն ունի, իսկ անասունները դրախտ չեն

մտնելու, որով էլ և կենդանիներին չի կարելի եկեղեցի տանել: Երբ Սինա լեռանը անասուն էր մոտենում, քարկոծվում էր (Ելք 19.13, 34.3): Եվ քանի որ Եկեղեցին անմատույց լեռ է (Եսայի 2.2), ապա անասուններն ու անարժանները չպետք է մտնեն: Հին տաճարում գառ էր պատարագվում, որն Աստծո Գառի՝ Հիսուս Քրիստոսի օրինակն էր: Եվ քանի որ եկեղեցում ճշմարիտ Գառն է պատարագվում, ապա օրինակն արգելվում է եկեղեցի մտցնել: Նաև Քրիստոս տաճարից խարազանով հանեց ոչխարներին ու արջառներին (Հովհ. 2.14-15), մենք ևս արտաքսում ենք և զգուշանում ենք, որ եկեղեցին փարախի չվերածվի: Այլև եկեղեցին բանավոր, այսինքն՝ բանական հոտի փարախն է և ոչ թե անբան հոտի:

Մատաղի կենդանին կարող է լինել որձ կամ էգ, բայց պետք է ուշադրություն դարձնել, որ կենդանին խեղված կամ անարգ չլինի, որովհետև առաքինի նպատակի համար պետք է ընտիրը գործածել: Ընդունված կարգի համաձայն՝ մատաղի կենդանին կարող է լինել արջառ, ոչխար, գառ, աքաղաղ և աղավնի: Նախընտրելի է աղավնիներին ազատ արձակելը՝ որպես գթասրտության նշան:

Մատաղ բառն այս պարագային կապ չունի *զոհաբերություն* բառի հետ, այլ ստուգաբանվում է՝ մատուցել աղ: Աստված պատվիրել էր հրեաներին, որպեսզի իրենց բոլոր զոհաբերություններն աղով լինեն, և աղը չպակասեցվի Աստծուն նվիրվող ընծաներից: Այդ աղը նույնիսկ կոչվում է Աստծո ուխտի աղ (Ղևտ. 2.13): Աղի ուխտի մասին հիշատակվում է նաև Թվոց (18.19), ինչպես և Բ Մնացորդաց գրքերում (13.5): Նաև Եղիսե մարգարեն աղով մաքրեց Երիքովի վատ ջրերը, որպեսզի դրանցից մահ և անբերրիություն չառաջանան, և դրանք մաքուր դարձրեց (Դ Թագ. 2.19-22): Հետևաբար, աղը խորհրդանիշն է սրբության, մաքրության, և այս գեղեցիկ խորհրդով մատաղի համար հավատացյալները աղ են տանում եկեղեցի՝ հոգևորականի կողմից աղի օրհնության համար:

Օրհնված աղից նախ պետք է տալ մատաղացու կենդանուն՝ որպես կերակուր, այնուհետև կենդանուն կարելի է մորթել: Մնացյալ աղը, ըստ չափի, օգտագործվում է մատաղի պատրաստության մեջ: Մատաղի մսով տարբեր կերակուրներ չեն պատրաստում, այլ ընդունված է պարզապես ջրում եփել: Մատաղացու կենդանին պետք է մորթի տղամարդ աշխարհական, հավատացյալ անձնավորություն: Կինը, մանուկը և հոգևոր դասին պատկանող որևէ մեկը չպետք է մատաղի կենդանի մորթեն: Եկեղեցական կանոնագրքի համաձայն՝ մատաղի միսը չի կարելի պահել տանն իբրև ուտելիք, այլ նույն օրը պետք է բաշխել աղքատներին:

ԶԱՏԿԱԿԱՆ ՁՈՒ

Ավագ Շաբաթ երեկոյան ավարտվում է Մեծ Պահքը: Այդ երեկո սեղաններին արդեն լինում են բրնձով և չամիչով փլավ, ձուկ, ներկած ձու, գինի: Այս օրը զատկական ձվերը տարբեր գույնի են ներկում: Դա ցույց է տալիս ուրախ տրամադրությունը, ինչպես նաև գեղեցկության համար է: Սակայն հիմնականում զատկական ձուն պետք է կարմիր գույնի լինի: Ձու ներկելու խորհուրդը շատ լավ է բացատրում Սուրբ Գրիգոր Տաթևացին: Ձվի դեղնուցը խորհրդանշում է երկիրը, սպիտակուցը՝ ջրերը, թաղանթը խորհրդանշում է օդը, իսկ կեղևը՝ երկինքը: Կարմիր գույնը խորհրդա-նշում է Քրիստոսի արյունը, և կարմիր ներկված ձուն ցույց է տալիս, որ ողջ աշխարհը փրկվեց Քրիստոսի արյամբ:

ԵՐԱԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շատ մարդիկ երազներ տեսնելուց հետո առավոտյան շտապում են վերցնելու չգիտես որտեղից ձեռք բերված երազահանը՝ իմանալու, թե ինչ է նշանակում իրենց տեսած երազը: Կամ էլ այն պատմում են ընտանիքի անդամներին, ընկեր-ընկերուհիներին՝ լսելու նրանց կարծիքը: Բացահայտելու համար երազի իսկությունը, նախ տեսնենք, թե ինչպիսին է մարդկային քունը: Ըստ մեծանուն փիլիսոփա Արիստոտելի՝ ամեն կենդանի արարած պետք է ննջի, որպեսզի արթնության ժամանակ կարողանա գործել: Քունը նաև նրա համար է, որպեսզի երբեմն Աստված կամ հրեշտակները հայտնվեն մարդուն, ինչպես որ եղավ Հակոբի պարագային, երբ նա երազում տեսավ սանդուղքով իջնող և բարձրացող հրեշտակներին և սանդուղքի վրա՝ Տիրոջը (Ծննդ. 28.12-13): Քունը օգտակար է նաև նրա համար, որպեսզի մարդիկ իմաստանան, ինչպես որ Սողոմոնը գիշերը քնած ժամանակ երազի մեջ իմացավ Աստծո բարի խորհուրդները (Գ Թագ. 3.5, 11-14): Երազի մասին հոգեբանները շատ աշխատություններ և կարծիքներ են գրել: Սակայն տեսնենք, թե ինչ են ասում աստվածային իմաստությամբ լի սրբերը: Երազները լինում են չորս տեսակի՝ բնական, փոփոխական, դիվական և տեսլական: Բնականն այն է, երբ մարդն իր մտահոգություններից կամ օրվա աշխատանքից մնացած հիշողական պատկերներ է տեսնում: Փոփոխականն առաջանում է մարմնի տարրերի որոշ փոփոխման հետևանքով: Օրինակ՝ երբ մարդու ջերմությունը բարձրանում է, մարդը դրա պատճառով երազներ, մղձավանջներ է տեսնում: Դիվական երազները լինում են սատանայական չար ուժերի ազդմամբ՝ մարդկանց մոլորության մեջ գցելու համար: Իսկ տեսլականի ժամանակ Աստված տեսիլքներով մարդուն որևէ կարևոր

բան է հայտնում, ինչպես որ ասվում է. «Տեսիլքով կերևամ նրան և երազի մեջ կխոսեմ նրա հետ» (Ծնն. 12.6): Երազների մասին խոսելիս պետք է անպայման իմանալ, որ մարդկային հոգին բաղկացած է երեք մասից՝ տնկական, զգացական և բանական: Քանի դեռ մարդն արթուն է, միտքը՝ բանական մասը, առաջնորդ է, և մյուս նշվածները սպասավորում են նրան: Բայց երբ մարդը քնում է, առաջնորդ է դառնում հոգու տնկական մասը, որով լինում է կերակրի մարսումը և կարևոր նյութերի բաշխումը օրգանիզմին: Քնի ժամանակ հոգու տնկական մասը ակտիվ գործում է, այդ իսկ պատճառով էլ մարդու քնած լինելը չի խանգարում կերակրի մարսողությանը և դրա հետ կապված այլ գործողություններին: Քնի ընթացքում արդեն տնկականն է դառնում առաջնորդ, իսկ միտքը և զգացական մասը սպասավորում են նրան: Դրա համար էլ երազները երբեմն այդքան խառնիճաղանջ են լինում: Ընդհանրապես խորհուրդ է տրվում երազներին այդքան էլ ուշադրություն չդարձնել, որովհետև դրանք այնքան էլ հատկանշական բաներ չեն: Աստվածաշնչում՝ Սիրաքի իմաստության մեջ, ասվում է. «Ով հավատում է երազներին, նա նման է մեկին, որը փորձում է բռնել ստվերը և վազել քամու ետևից: Ինչպես ունայն է դեմքի անդրադարձը դեմքի դիմաց, այնպես էլ՝ երազներ տեսնելը: Ունայն են այն գուշակությունները, նշաններն ու երազները... Մի՛ տուր քո սիրտը դրանց, քանզի շատերին մոլորեցրին երազները, և դրանց վրա հույս դնողները խոտորվեցին» (Սիրաք 31.2-3, 5,7): Իսկ եթե երազն Աստծուց է, ինչը շատ հազվադեպ է լինում, ապա այն հատուկ ձևով կկրկնվի շատ անգամներ, և այդպիսի երազ տեսնելուց հետո պետք է անպայման խորհրդակցել հոգևորականի հետ՝ այն դիվական երազներից տարբերակել կարողանալու համար: Այդ իսկ պատճառով երազահաններ ընթերցելու փոխարեն ընթերցեք սբերի վարքը կամ Աստվածաշունչը, որոնցից անհամեմատ ավելի մեծ օգտակարություն կարող եք ստանալ: Երազը երբեմն նման է նաև մեղքին: Օրինակ՝ եթե մարդը քնի մեջ սպանություն է տեսնում, վախենում է, բայց երբ քնած մարդուն մեկը իրականում ուզում է սպանել, ապա նա, անտեղյակ լինելով, ոչ մի երկյուղ չի զգում: Ճիշտ այդպես էլ մեղավոր մարդը մահից կամ հետագայում Աստծո պատժից չի վախենում, սակայն վախենում է այս կենցաղի հետ կապված տարբեր խնդիրներից: Սրա համար էլ մենք ճշմարիտը իմանալով՝ մեր սրտերում տեղ պատրաստենք Աստծո համար, որպեսզի հետագայում Աստված էլ մեզ տեղ տա Իր Երկնային Արքայության մեջ:

ՈՐԴԵԾՆՈՒԹՅՈՒՆ

Հովակիմը և Աննան երկար ժամանակ զավակ չունեին և աղոթքներով խնդրում էին, որ Աստված իրենց ևս զավակ պարգևի: Եվ աստվածային նախախնամությամբ լույս աշխարհ եկավ մի մանկիկ, ով հետագայում, ինչպես մեր գեղեցիկ շարականներից մեկն է շատ պատկերավոր կերպով ասում, արևելք էր դառնալու աստվածային Արեգակի համար, այսինքն՝ լինելու էր Աստծո Միածին Որդու մայրը: Աստվածաշնչյան իմաստունն ասում է. «Տիրոջ օրհնությունն արդարների գլխին է, և նա էլ հարստացնում է նրանց և չի ավելացնում նրանց սրտի տրտմությունը» (Առակ. 10.22): Երբեք սխալ չի լինի այս իմաստուն արտահայտությունը հասկանալ նաև մարդու հոգևոր աշխարհի կամ էլ հենց զավակներով հարստության իմաստով:

Մեզ երբեմն հուզում է այն հարցը, թե ինչու որոշ ամուսնացած մարդիկ երկար ժամանակ անզավակ են մնում, ինչպես որ էին Սուրբ Աստվածածնի ծնողները: Եվ մենք փորձում ենք այս հարցի պատասխանը գտնել միայն բժշկության տեսակետից ելնելով: Սակայն տեսնենք, թե Աստվածաշնչում ինչ է ասվում այս մասին: Ծննդոց գրքից հայտնի է, որ Աբրահամը Իսահակին ունեցավ Աստծո խոստման համաձայն (Ծննդ. 18.14): Երբ սատանայի փորձության պատճառով վախճանվեցին երանելի Հոբի զավակները, նա ասաց. «Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց, Տերն էլ հետ առավ» (Հոբ 1.21): Այսինքն՝ Հոբը ևս շեշտում էր այն փաստը, որ Տիրոջից էր ստացել իր զավակներին: Սրա հակառակ իրողությունը նույնպես առկա է Աստվածաշնչում, երբ Աստված տարբեր նպատակներով ոմանց որոշ ժամանակ զրկում է որդեծնությունից: Այսպիսին է Ծննդոց գրքում Ռաքելի ու Հակոբի պատմությունը: Երբ Ռաքելը տեսավ, որ ինքը որդի չի ունենում, իր ամուսնուն՝ Հակոբին ասաց. «Ինձ զավակներ պարգևիր, այլապես կմեռնեմ»: Եվ շատ հետա-քրքրական է Հակոբի պատասխանը. «Մի՞թե Աստծո փոխարինողն եմ ես, որ զրկել է քեզ ծննդաբերելուց» (Ծննդ. 30.1-2): Այնուհետև Աստվածաշունչն ասում է, որ որոշ ժամանակ անց Աստված հիշեց Ռաքելին, անսաց նրա թախանձագին աղոթքներին և բեղմնավոր դարձրեց նրա արգանդը (Ծննդ. 30.22): Հետևաբար, այս հարցում մեծ դեր ունի նաև հավատը, ինչը և տեսնում ենք հատկապես Աստվածածնի ծնողների՝ Հովակիմի և Աննայի պարագային:

Երկիր մոլորակի վրա կենդանությունը, կյանքը պահպանում է ամենակարևոր տարրերից մեկը՝ ջուրը: Այն կյանք է տալիս բույսերին և ապահովում է նաև մարդկանց ու կենդանիների գոյությունը: Գիտնականներից մեկի խոսքերով՝ ջրի զարմանալի հատկություններից մեկն այն է, որ մեկ կաթիլ ջրի մեջ այնքան ատոմ կա, որքան որ ջրի կաթիլ կա Միջերկրական ծովում: Սակայն կարո՞ղ է արդյոք որևէ մեկն ասել, թե որ-

քան զորություն կա մեկ կաթիլ հավատքի մեջ: Եվ եթե ջուրը կենդանություն է տալիս, ապա որքան առավել ևս կենդանություն կարող է տալ առ Աստված հրաշալի հավատքը:

ՊԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հետաքրքրական է, որ հրեական աստվածպաշտության մեջ կարևոր տեղ է գրավում ոչ միայն աղոթքը, սաղմոսասացությունը, երկրպագությունը, այլև՝ պարը և պարելը: Ոմանք ուսուցանում են, որ սխալ է հիշարժան առիթներով խնջույքներ կազմակերպելը, ինչի դեմ խոսում է Քրիստոսի ներկայությունը Կանայի հարսանիքում (Հովհ. 2.1-2), և ասում են, որ չի կարելի մանավանդ պարել այդ տոնակատարությունների ժամանակ: Սակայն տեսնենք, թե ինչ է ասում Աստվածաշունչը պարի մասին: Պարը Աստվածաշնչում ներկայանում է դրական և բացասական լույսի ներքո, դրական՝ իբրև մարդկային ուրախության արտաքին դրսևորման ձև, և բացասական՝ իբրև դիվահարության, դիվապաշտության, կռապաշտության նշան:

Երբ Մովսեսն իջավ լեռից, տեսավ, որ հրեաները ոսկե հորթ են պատրաստել ու երկրպագում են այդ կուռքին՝ դրա առջև պարելով, որի համար խիստ զայրացավ մարգարեն և ոչնչացրեց կուռքը (Ելք 32.19-20): Սակայն պարը նույն Մովսես մարգարեի հետ կապված մեկ այլ դրվագում ներկայանում է նաև դրական իմաստով: Երբ հրեաներն անցան Կարմիր ծովը, Մովսեսի քույր Մարիամը իր ձեռքն առավ թմբուկը, և բոլոր կանայք գնացին նրա ետևից՝ թմբուկ խփելով ու պարելով: Առաջից գնում էր Մարիամն ու ասում. «Օրհնենք Տիրոջը, քանզի նա փառքով է փառավորված» (Ելք 15.20-21): Մովսեսը ևս այս խոսքերով էր սկսել Տիրոջն ուղղված օրհնաբանությունը (Ելք 15.1), և այս օրհնաբանության սկզբի բառերն ասվում են ամեն օր եկեղեցիներում գիշերային ժամերգության ժամանակ՝ իբրև օրհնության շարականի սկզբնավորություն՝ Օրհնեսցուք զՏէր, զի փառաւք է փառաւորեալ:

Պարելը բացասական իմաստով է ներկայացվում Աստվածաշնչի մի շարք հատվածներում: Սաղմոսում ասվում է. «Անմիտ մարդը պարում և ցնծում է բարեկամների համար երաշխավոր լինելիս» (Առակ. 17.18): Նաև Դավիթ թագավորը պարում է, որպեսզի դիվահարի տպավորություն թողնի (Ա Թագ. 21.11-15): Սակայն Հին Կտակարանում պարելը համարվում է նաև ուրախության արտահայտման ձև: Աստվածաշնչյան իմաստունն ասում է, որ կա «լալու ժամանակը և ծիծաղելու ժամանակը, ողբալու ժամանակը և պարելու ժամանակը» (Ժող. 3.4): Երբ Իսրայելի գլխավոր Հեփթայեն գալիս է իր տուն, նրա աղջիկը ընդառաջ է ելնում

թմբուկներով ու պարերով (Դատ. 11.34): Գողիաթին սպանած Դավթին հրեաները պարերով ու երգերով են դիմավորում (Ա Թագ. 18.6-7): Դավիթը Տիրոջ տապանակը վերադարձնելիս պարում էր և նվագում, որի համար նրա կինը՝ Մեղքողը, նախատեց ամուսնուն, ինչին ի պատասխան Դավիթ թագավորն ասաց. ««Ես պիտի պարեմ Տիրոջ առջև: Օրհնյալ է Տեր Աստվածը, որն ինձ ընտրեց և ոչ թե քո հորն ու նրա ամբողջ տունը: Նա ինձ Իսրայելի իր ժողովրդի վրա առաջնորդ կարգեց: Ահա այդ Տիրոջ առաջ ես պիտի երգեմ ու պարեմ»: Եվ հենց այս նախատինքի համար էր, որ Դավթի կին Մեղքողը մինչև իր կյանքի վերջը զավակ չունեցավ (Բ Թագ. 6.20-23): Սողոմոն արքայի թագավորացումը մարդիկ նշեցին պարեր պարելով և մեծ ուրախությամբ (Գ Թագ. 1.39-40): Այսպիսով, հրեաները նաև պարեր պարելով էին օրհնում Աստծուն (Բ Մակ. 6.23, 25): Նաև մարգարեները պարը ներկայացնում են որպես հակադրություն սգի և տխրության (Զաք. 12.10, Երեմ. 30.18.19, 31.4, Երեմ. ողբը 5.15):

Նոր Կտակարանում ևս պարի հանդեպ դրական և բացասական վերաբերմունք կա: Հերովդես թագավորի ծննդյան տարեդարձի տոնախմբության ժամանակ նրա անօրինական կին Հերովդիայի դուստրը պարում է հրավիրյալների առջև, հաճելի թվում Հերովդեսին, և հենց այս պարով խորամանկությամբ թագավորից պահանջում կտրել Հովհաննես Մկրտչի գլուխը (Մատթ. 14.6-11, Մարկ. 6.21-28): Սակայն անառակ որդու մասին Քրիստոսի պատմած առակում պարը ներկայացվում է որպես ուրախության դրսևորման ձև (Ղուկ. 15.25):

Իսկ ինչու՞ Եկեղեցին չզարգացրեց պարը և Դավիթ թագավորի նմանողությամբ չմտցրեց ծիսարարողական կարգի մեջ: Ոմանք կարծում են, որ պարի դրսևորում է եկեղեցում կատարվող Անդաստանի արարողությունը, որի ընթացքում քշոցների ձայնակցությամբ և երգերի ու երաժշտության նվագակցությամբ հոգևորականներն ի մի խմբված շարժվում են այս ու այն կողմ: Եկեղեցական կանոնագիրքը հստակ դիրքորոշում ունի պարի մասին: Եթե քահանան պսակ է անում և նրան հրավիրում են հարսանիքի տոնախմբության, հոգևորականը կարող է գնալ, բայց անպատշաճ է պարելը: Այսպիսի դիրքորոշման պատճառն այն է, որ մարդկային հաճույքները լինում են երեք տեսակի: 1. արտադրողական կամ կյանքի խիստ անհրաժեշտ կրքեր կամ հաճույքներ, որոնք են ուտելը, խմելը, հանգիստը, քունը, առանց որոնց մարդը կմեռնի, և որոնք հատուկ են նաև բոլոր կենդանիներին, կենդանական աշխարհին: 2. Գրգռող հաճույքներ՝ ճանապարհորդություն, ձիավարություն, սուսերամարտ, պարեր, որսորդություն և այլն և նույնիսկ պատերազմ: 3. Մտավոր-զգացական հաճույքներ, որոնք են՝ հայեցողություն, մտածողություն, զգացողություններ, արվեստ, բանաստեղծություն, երաժշտություն, ուսուցում,

ընթերցանություն, փիլիսոփայություն: Հատկապես առաջին և մասամբ երկրորդ տիպի հաճույքներն ունեն նաև կենդանիները, և մանավանդ պարը առկա է թռչունների բազում տեսակների մոտ, որոնք երբեմն պարը ներկայացնում են այնպիսի պերճաշուքությամբ, ինչպես չեն կարող անգամ մարդիկ: Իսկ մտավոր-զգացական հաճույքները բոլորից բարձր են և հատուկ են միայն մարդուն: Սրանք հոգևոր հաճույքներ են, և Եկեղեցին հիմնականում դրանք զարգացրեց, որովհետև դրանք են կարևոր հոգևոր խաղաղության և ներդաշնակության հաստատման համար:

ՀՍԿԱՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ

Ինչպես որ գիտության զարգացումը հիմնված է նախկին դարերի գիտնականների հայտնագործությունների և փորձառության վրա, ճիշտ այդպես էլ հոգևոր կյանքում մեծագույն սրբերի, Եկեղեցական Հայրերի փորձառության և նրանց ցույց տված ուղիով ընթանալու շնորհիվ միայն մարդն այսօր կարող է ճշմարիտ ձևով պաշտել Աստծուն: Սա հաստատելու համար մեջբերենք մեծագույն գիտնականներից մեկի՝ բոլորին հայտնի Նյուտոնի խոսքերը: Նյուտոնը նաև մեծ հավատացյալ էր և բացի իր գիտական աշխատություններից նաև մեկնություններ է գրել Դանիել մարգարեի և Հովհաննես Աստվածաբանի կողմից գրված աստվածաշնչյան գրքերի վերաբերյալ: Իր գիտական նվաճումների մասին խոսելով՝ այս մեծ գիտնականը նշել է. «Եթե ես ավելի հեռուն եմ տեսել, ապա դա եղել է միայն հսկաների ուսերին կանգնելու շնորհիվ»: Եվ հոգևոր կյանքում էլ մենք կարող ենք ճշմարիտ ուղիով ընթանալ միայն մեզանից առաջ եղած մեծագույն սրբերի՝ հոգևոր կյանքի, Աստվածաշնչի ընթերցանության և այն ճիշտ հասկանալու վերաբերյալ նրանց թողած խրատների և ուսուցումների շնորհիվ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԽՈՍՆԵՐԸ

Երրորդ դարում ապրած, ազգությամբ ասորի եդեսացի քրիստոնյաներ են Գուրիասը, Սամունասը և Աբիբասը: Գուրիասը և Սամունասը քահանաներ էին, ովքեր ստիպվեցին Դիոկղետիանոս կայսեր կողմից հավատքը ուրանալ, բայց նրանք չուրացան քրիստոնեական հավատքը և դաժանաբար չարչարվեցին ու գլխատվեցին: Իսկ Աբիբասը Եդեսիայի Եկեղեցու սարկավագն էր: Լիկիանոս կայսրը հրամայեց նրան բանտարկել, բայց երբ նրան չգտան, բանտարկեցին Աբիբասի ազգականներին: Այդ ժամանակ Աբիբասն ինքը հանձնվեց, մերժեց իր մտերիմների կող-

մից առաջարկվող փախուստի հնարավորությունը: Չարչարանքների ենթարկելուց հետո նրան այրեցին:

Այս երեք նահատակները՝ Գուրիասը, Սամունասը և Աբիբասը, համարվում են ընտանեկան անհաշտությունների պարագային ամուսնացյալ կանանց հովանավորներ և պաշտպաններ: Այսպիսի խնդիրներ ունեցող կանայք կարող են իրենց աղոթքներում դիմել այս սրբերին՝ խնդրելով նրանց բարեխոսությունն ու օգնականությունը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Մենք հավատում ենք մարդկային հոգու անմահությանը և սրբերի մասունքների կենարար զորությանը, ինչպես որ նշված է Աստվածաշնչում Եղիսե մարգարեի մասունքների վերաբերյալ (Դ Թագ. 13.21): Քրիստոնեական գրողներից մեկն ասում է, որ հոգու անմահության և մարդկային աճյունի խորհրդավորության նկատմամբ պատկառանքն ունի մի շատ զորավոր բարոյական ապացույց. դա մարդկանց ունեցած հարգանքն է գերեզմանների հանդեպ: Օրինակ՝ անասունը չի մտահոգվում իր աճյունով: Ի՞նչ նշանակություն ունեն նրա համար իր ոսկորները: Իսկ փոշու մի քանի հատիկ, եթե միայն անկենդան ոսկորներ են, արժանի՞ են արդյոք մեր պատվին ու մեծարանքին. իհարկե, ոչ: Մենք բոլորս գերեզմանատուն ենք գնում և մեր նախնիների աճյունները հարգում ենք ոչ թե նրա համար, որ գիտենք, թե հողի տակ դրանք վերածվել են ոսկորների անկենդան կույտի, այլ նրա համար, որ ներքին մի ձայն մեզ ասում է, թե ամեն ինչ ջնջված-վերջացած չէ նրանց մեջ: Եվ այդ զգացումն է, որ նվիրագործում է հոգեհանգստյան արարողությունը բոլոր եկեղեցիներում:

ԱՍՏՎԱԾԱՑՈՒՄ

Երբ Ադամը դրախտում թմրեց, նրա կողից շինվեց Եվան, ու աշխարհը լցվեց բազում մարդկանցով (Ծննդ. 2.21-22): Նույն կերպ էլ Քրիստոս թմրեց խաչի վրա, և Նրա կողից արյուն և ջուր բխեց (Հովհ. 19.34): Քրիստոսի կողից բխած արյունն ու ջուրը խորհրդանշում են հաղորդությունն ու մկրտությունը: Դրանցով հաստատվեց Եկեղեցին, որով բազում մարդիկ փրկության են արժանանում: Այս ընկալումով նաև վերացական գաղափարի պես չի հնչում այն, որ մարդկությունը փրկվեց Քրիստոսի արյամբ: Փրկության վերջնակետը մարդու աստվածացումն է, ինչպես ասում է Սուրբ Աթանաս Ալեքսանդրացին. «Աստծո Որդին մարդ դարձավ, որպեսզի մարդու որդիները Աստծո որդիներ դառնան»:

ԿԻՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քրիստոնեությունը կնոջը վեր հանեց ավելի բարձր հեղինակության, ինչը չենք կարող տեսնել այլ կրոններում կամ մարդկային պատմության անցյալի մեջ: Որոշ կրոնների հետևող հասարակությունների մեջ կինը երկրորդական կամ երրորդական տեղում է, ինչպես օրինակ իսլամի կամ բուդդիզմի մեջ: Բուդդայականության մեջ նույնիսկ կնոջ նկատմամբ շեշտված թշնամական վերաբերմունք կա: Կինը տանջանքներով լի նյութական աշխարհի՝ սանսարայի մարմնացումն է: Դրա համար էլ բուդդայականությունը կնոջը փրկություն չի խոստանում. փրկության համար կինը պետք է վերածնվի որպես տղամարդ: Այս կրոնը կնոջը դատապարտում է տղամարդուն իր հետ ամուր կապելու և դրանով նրա փրկությանը խանգարելու համար: Բուդդայականության շատ հետևորդների կարծիքով ընտանիքի հետ կապերը չխզած տղամարդը չի կարող փրկվել: Դրա օրինակը Բուդդան է, ով թողեց իր ընտանիքը: Իսլամի մեջ կատարյալ կնոջ կերպար է համարվում Հիսուսի մայր Մարիամը, բայց, այնուամենայնիվ, բազմակնության ընդունումը կնոջը ստորակարգ էակ է դարձնում: Մինչդեռ քրիստոնեությունը, շեշտելով տղամարդու գլխավորող դերը, միևնույն ժամանակ չի նսեմացնում կնոջ դերը: Քրիստոնյաների ամենամեծ սուրբն է Մարիամ Աստվածածինը: Բացի դրանից Քրիստոս և՛ Ծննդյան, և՛ Հարության ժամանակ առաջինը հենց կանանց հայտնվեց:

Պողոս առաքյալն ասում է, որ Քրիստոսով խտրություն չկա տղամարդու և կնոջ միջև (Գաղ. 3.28): Բայց առաքյալը նաև ասում է, որ տղամարդն է կնոջ գլուխը, ինչպես Քրիստոս գլուխն է Եկեղեցու (Ա Կորնթ. 11.3, Եփ. 5.23): Ինչպե՞ս կարող ենք հասկանալ այս հակասությունը առաքյալի խոսքերի միջև: Մարդու գլխավորության մասին շեշտադրումը անցյալի հասկացությունների կրկնությունը չէ, որոնց համաձայն մարդը ղեկավարն է, իսկ կինը՝ նրա ենթական: Ընդհակառակը, քրիստոնեական տեսակետի համաձայն՝ տղամարդու գլուխ լինելը նշանակում է հոգատարություն, քնքշություն կանանց հանդեպ և աջակցություն նրանց: Ճիշտ է, Քրիստոսով խտրականություն չկա տղամարդու և կնոջ միջև, սակայն կինը և տղամարդը նույնը չեն: Կան բաներ, որ կինը երբեք չի կարող անել տղամարդու փոխարեն, և կան բաներ, որ տղամարդը երբեք չի կարող իրագործել կնոջ փոխարեն: Ճիշտ է ասված, որ եթե կինը գոյություն չունենար, մենք զրկված կլինեինք ուրախությունից մեր կյանքի սկզբում, հաճույքից՝ մեր կյանքի ընթացքում և մխիթարությունից՝ մեր կյանքի վերջում: Եվ այս կարծիքն ընդունելի է, որովհետև մարդկանցից ոչ ոք չի կարող մխիթարել այնպես, ինչպես կանայք, քույրերը և մայրերը՝ կնոջ հոգուն հատուկ բարիության ու զգացմունքայնության շնորհիվ: Եվ

բանաստեղծը մեծ իմաստությամբ է ասել, որ մեր առաջին արցունքները սրբվում են կնոջ կողմից, և մեր առաջին բառերը սովորում ենք կանանց շուրթերից:

ԴՐԱԽՏ ԿԱՄ ԿՅԱՆՔԻ ԲԱՐԵԿԵՑԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մեծ Պահքի առաջին կիրակին կոչվում է բարեկենդան: Այս բառը նշանակում է զվարթություն և խնդություն, և այդ օրը պետք է ուրախություն անենք, պարարտ կերակուրներ ուտենք, որովհետև հաջորդ օրվանից պետք է պահք պահենք և զղջանք մեր գործած մեղքերի համար: Այդ օրվա ուրախությունը մեզ հիշեցնում է առաջին մարդկանց երջանկությունը դրախտում:

Իրենց նպատակին հասնելով՝ մարդիկ ցանկանում են մեկ այլ նպատակի իրականացում, և մարդը չի կարողանում իր ցանկություններին հագեցում, բավականացում գտնել: Թվում է, թե մենք ժառանգել ենք մեր նախնածնողների նայողը դրախտի հանդեպ և դրախտը կորցնելու ցավն

մարդկությունը պատմության ընթացքում ցանկացել է դրախտներ ստեղծել երկրի վրա: Այդ փորձերը եղել են առանց Եկեղեցու և հոգևորի անտեսումով ու պատմության մեջ վերածվել են փորձությունների: 16-րդ դարում, երբ առաջ եկավ բողոքականությունը, բողոքական դարձած երկրներում փոխվեցին բոլոր եկեղեցական տոները, և փակվեցին վանքերը: Այս օրինակով 18-րդ դարի վերջում ֆրանսիական հեղափոխականները զրկեցին հոգևորականներին իրենց տիտղոսներից և եկեղեցական տոները փոխարինեցին հեղափոխական տոներով: Ֆրանսիական մեծ հեղափոխությունն ընթացավ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» նշանաբանով, սակայն հեղափոխությունը չկարողացավ իրագործել այս առաքինի գաղափարները: Գրեթե նույն ժամանակներում Անգլիայում անգլիական սահմանադրության հիմքում ընկած էր առաջին հերթին ոչ թե մարդկության, այլ հատկապես անձի երջանկության նպատակը:

Հետաքրքրական է պոզիտիվիզմի տեսությունը: Այն ենթադրում էր, որ կապիտալիզմը պետք է դառնա ավելի և ավելի կատարյալ, որի արդյունքում կձևավորվեր ծաղկող հասարակություն: Սակայն ուտոպիստներն առարկում էին պոզիտիվիզմի դեմ՝ ասելով, որ երկրի վրա դրախտային պայմաններ ստեղծելու համար բացի բարգավաճող հասարակությունից անհրաժեշտ է նաև աշխատանքի արդյունքների հավասար բաժանում: Այնուհետև առաջ եկավ մարքսիզմը՝ ուսուցանելով, որ երկրում դրախտ, այսինքն՝ ապահով և բարօր պայմաններ հաստատելու

համար անհրաժեշտ է վերացնել մասնավոր սեփականությունը՝ հաստատելով հասարակական սեփականություն:

Նույնիսկ անտիկ ժամանակաշրջանում փիլիսոփաներն ու գիտնականները մտածում էին կատարյալ քաղաքական համակարգ ձևավորելու մասին: Հույն բանաստեղծ Հեսիոդոսը, ով ապրել է Ն.Ք. 8-7-րդ դարերում, մարդկության պատմությունը բաժանում է հինգ շրջանների՝ աստվածային, ոսկյա, արծաթյա, պղնձե և երկաթե: Նա ասում էր, որ մարդկության պատմության լավագույն շրջանն անցյալում է, և ապագայում առավել վատ մասն է գալու: Հունական մեկ այլ հայտնի փիլիսոփա և մտածող Պյութագորասը, ով ապրել է Ն.Ք. 6-րդ դարում, շեշտում էր պատմության շրջանային հասկացության տեսությունը՝ ասելով, որ երեք փուլեր կան՝ ծագում, զարգացում և վախճան: Հետևաբար, որևէ երկիր կամ պետություն անցնում է այս շրջանաձև ճանապարհով:

Պատմությունը ցույց է տվել, որ երկրում դրախտ հաստատելու բոլոր փորձերն ավարտվել են մեծ անհաջողություններով: Մարդը չի կարող դրախտ հաստատել աշխարհում, իր երկրում, իր ընտանիքում՝ դրախտից արտաքսված լինելով: Այդ նպատակի իրականացման համար նա պետք է կրկին արժանավոր դառնա և ստանա դրախտը: Առաջնային իմաստով իրական դրախտը Աստծո ներկայությունն է, որ մարդ զգում է իր շուրջը և իր ներաշխարհում, քանզի առանց դրա շատերի պատկերացրած առատ բուսականությամբ և կլիմայական հաճելի պայմաններով դրախտը վերածվում է սովորական պուրակի կամ զբոսայգու: Քրիստոս ևս հաստատեց, որ Աստծո Արքայությունը նաև մարդու ներսում է (Ղուկ. 17.21): Եվ այս այլաբանական իմաստով մենք պետք է ձգտենք հասնելու դրախտի, այսինքն՝ Աստծո իրական ներկայության: Դրանից հետո մենք կարող ենք հաստատել կյանքի եթե ոչ դրախտային, ապա գոնե մարդկային արժանավայել պայմաններ աշխարհում, մեր երկրում և մեր ընտանիքներում:

ԱՐԳԵԼՎԱԾ ՊՏՈՒՂԸ

Մեծ Պահքի երկրորդ կիրակին կոչվում է Արտաքսման կիրակի: Ամենակարող Աստված դրախտից արտաքսեց առաջին մարդկանց, որովհետև նրանք խախտեցին աստվածային կամքը և կերան արգելված ծառի պտղից (Ծննդ. 3.17, 24): Այստեղ կարևոր չէ, թե ինչ տեսակի ծառ էր այդ ծառը և ինչ պտուղ էր, որ կերան, այլ էականն այն է, որ առաջին մարդիկ աստվածային կամքին դեմ գնացին: Աստվածաշնչյան այս թեման չարաշահվել է միջին դարերում Եկեղեցի մուտք գործած եսամոլ մարդկանց պատճառով: Առաջին եվրոպական համալսարաններն առաջ եկան դա-

սական միջնադարի շրջանում: Այդ ժամանակ համալսարանների ամբիոններն ու ֆակուլտետները գլխավորում էին ֆրանցիսկյան և դոմինիկյան վանականները: Եվ նրանց ղեկավարությամբ համալսարաններում ուսանողներն աշխատություններ էին գրում հետևյալ վերնագրերով՝ «Ինչու՞ Ադամը խնձոր կերավ և ոչ թե տանձ» կամ «Քանի՞ հրեշտակ կարող է տեղավորվել մի ասեղի ծայրին»: Սակայն, ինչպես նշեցինք, կարևոր չէ, թե ինչ տեսակի ծառ կամ պտուղ էր Աստծո արգելածը, այլ հիմնական խնդիրն այն է, որ մարդիկ աստվածային կամքին դեմ գնացին: Դրա համար էլ Աստվածաշնչում հիշատակություն չկա ծառի կամ պտղի տեսակի մասին:

Սուրբ Եկեղեցու հռչակավոր Հայրերից Սուրբ Գրիգոր Նյուսացին բացատրում է, որ դրախտում ուտելը պետք է հասկանալ խորհրդանշական իմաստով: Օրինակ՝ դրախտի մեջտեղի Կենաց ծառը (Ծնն. 2.9) Խաչն է, որի պտուղը Հիսուս Քրիստոսն է: Իսկ արգելված ծառը կոչվեց չարի և բարու գիտության ծառ, որովհետև Աստված այս ծառից ուտելն արգելել էր՝ փորձելու համար Ադամի հավատարմությունը:

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ

Ութերորդ դարի մեր Կաթողիկոսներից Սուրբ Հովհան Օձնեցին ողջ կյանքի ընթացքում գաղտնի խարազանազգեստ է հագել, այսինքն՝ մարմինը ծակծկող զգեստ, իսկ արտաքինից եկեղեցական շքեղ զգեստներ: Եկեղեցական շքեղ զգեստների գործածությունը հիմնված է պաշտամունքի համար Հին Կտակարանում նշվող հատուկ զգեստների գործածության աստվածային պատվերի վրա (Ելք 28.1-14, 39.1-7): Եվ քահանայական ձեռնադրության կանոնում էլ դրանք կոչվում են աստվածաստեղծ զգեստներ: Երբ Հովհան Օձնեցին 719 թ. գնում է Դամասկոս բանակցության Օմար ամիրապետի մոտ, նրանից մեղադրվում է շքեղության ու ցուցամոլության համար: Սակայն սուրբը հանում էր իր ճոխ հանդերձը և ցույց տալիս մաշկը ծակծկող խարազանազգեստը՝ արժանանալով ամիրապետի հարգանքին ու համակրանքին, հաջող արդյունք ապահովելով բանակցությանը, որով դադարում են կրոնական հալածանքները, Եկեղեցին և հոգևորականությունը ազատվում են հարկերից:

Քրիստոնեությունը միշտ շեշտում է առաջին հերթին ներքին գեղեցկության անհրաժեշտությունը: Ոմանք ասում են, թե գեղեցիկը այն է, ինչ համընկնում է և սազում, բայց սրան հակառակ է հագուստի օրինակը, որը սազելով՝ տգեղին էլ կարող է գեղեցիկ ցույց տալ: Այսօր էլ շատ մարդիկ թե՛ ուղիղ և թե՛ փոխաբերական իմաստներով զարդարելով իրենց տարբեր զգեստերով և սքողվելով տարբեր դիմափոշիների տակ՝ իրենց

գեղեցիկ են ցույց տալիս: Սակայն այլ բան է գեղեցիկ լինել և այլ բան է գեղեցիկ թվալ: Գեղեցիկ թվացողները իրականում մնում են նույն տգեղները խաբուսիկ արտաքինի տակ:

Բնության մեջ գեղեցիկը գեղեցիկ իր է, երևույթ կամ առարկա: Իսկ արվեստի մեջ գեղեցիկը գեղեցիկ պատկերացում է իրի, առարկայի կամ երևույթի մասին: Եվ մարդկանց հետ մեր հարաբերություններում պետք է գործածենք նաև արվեստի այս ըմբռնումը: Կան մարդիկ, ովքեր ահավոր մեղքեր ունեն, տգեղացած են հոգևոր իմաստով, սակայն մենք չպետք է խորշենք նրանցից նրանց մեղքերի համար, քանի որ այդ մարդիկ էլ մի ժամանակ եղել են կամ կարող են գեղեցիկ լինել: Սա է ապացուցում ճապոնական ընդամենը երեքտողանոց խորիմաստ բանաստեղծությունը. «Տգեղ, սև ագռավ, սակայն անգամ նա շատ գեղեցիկ է առաջին ձյունի ճերմակի վրա»: Եվ մենք էլ մարդկանց պետք է դիտարկենք այնպիսի համապատկերում, ուր նրանք գեղեցիկ եղել են կամ կարող են գեղեցիկ լինել, և մեր ներքին գեղեցկության մասին հոգ տանելով՝ պետք է օգնենք մյուսներին, որպեսզի նրանք էլ գեղեցկանան հոգեպես:

ԶԳԵՍՏԻ ՆՊԱՏԱԿԸ

Դրախտում Ադամն ու Եվան պարուրված էին լուսեղեն զգեստներով, սակայն մեղանչումից հետո նրանց պարուրող լույսն ահնետացավ, և նրանք տեսան, որ մերկ են: Մերկությունը ծածկելու համար առաջին մարդիկ, թզենու տերևներն իրար կարելով, գոգնոց շինեցին՝ իրենց մերկությունը ծածկելու համար (Ծնն. 3.7): Այնուհետև Աստված կաշվից զգեստներ պատրաստեց և հագցրեց նրանց (Ծնն. 3.21): Ծննդոց գրքի այս դրվագում երևում է զգեստի գործածության առաջին և բուն նպատակը՝ մերկությունը ծածկելը, քանզի անպատշաճ է կենդանիների նման միմյանց առջև մերկ երևալը: Հետագայում զգեստը սկսեց գործածվել նաև գեղեցկության, ազդեցիկ տպավորություն թողնելու համար, և զգեստի գործածության այս ձևը մուտք գործեց նաև Եկեղեցի: Եկեղեցական հանդիսավոր արարողությունների ժամանակ համապատասխան շքեղ զգեստներ են հագնում, որոնք իրենց հատուկ խորհուրդն ունեն: Շքեղ զգեստներ հագնելու սովորությամբ հայտնի է ութերորդ դարի մեր մեծ Կաթողիկոսներից Սուրբ Հովհան Օձնեցին, ով պերճաշուք հագուստների օգտագործման առնչությամբ բացատրել է, որ առաքյալներն իրենց սրբությամբ էին մարդկանց վրա ազդեցություն թողնում, սակայն հետագայի եկեղեցականները, որ չեն կարող ունենալ մեծ առաքյալների ազդեցությունն ու պատկառելիությունը, հատուկ զգեստներով են մարդկանց ներկայանում և նրանց արտաքին ուշադրության վրա ազդելով՝ Քրիստո-

սի ու առաքյալների վարդապետությունն են ուսուցանում և հավատքը քարոզում:

Հետագայում զգեստի գործածության նպատակը աստիճանաբար աղավաղվեց և նույնիսկ հագնեց ի սկզբանե կարգված նպատակի ճիշտ հակադրության: Արդի նորաձևության մեջ հատկապես կանանց հագուստները ստեղծվում են ոչ թե մերկությունը ծածկելու, այլ ընդհակառակը, մերկությունը ցույց տալու և մարմնի սքողելի տեղերը բացահայտելու համար: Պատճառն այն է, որ չարի դրդմամբ կրքերի ու մարմնական հաճույքների հակված մարդիկ հասկացան, որ կիսասքողված մերկությունն ավելի գայթակղիչ է, քան մերկությունն ինքը: Եվ մինչ Ադամն ու Եվան իրենց մերկությունը ծածկելու համար էին զգեստից օգտվում, այսօրվա նորաձևության մեջ առաջին հերթին սեռական հետաքրքրությունը գրգռելու և մերկությունն ի բաց դնելու միտումով են ստեղծվում հագուստները, միտում, որից պետք է հեռու մնան բարեպաշտ քրիստոնյաները:

ԱԶԳԱՆ/ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երբ Մեծ Պահքի կեսն անցնում է, նշում են միջինքը: Միջինք բառը ցույց է տալիս, որ պահքի մեջտեղում ենք, պահքի օրերի կեսն արդեն ետևում են մնացել: Եկեղեցական հատուկ արարողություն չկա միջինքի համար, այլ պարզապես այդ օրվանից սկսվում է երեկոյան ժամերգությունների ավարտին ստեղի՝ հանդիսավոր մեղեդի ունեցող շարականների երգեցողությունը: Ժողովրդական սովորության համաձայն՝ միջինքի օրը գաթա են թխում, մեջը մեկ հատիկ լոբի կամ այլ փոքրիկ իր դնում, և համարում են, որ տարին հաջող է լինելու նրա համար, ում բաժին է ընկնում այդ առարկայով գաթայի կտորը: Եկեղեցին չի արգելում նման ժողովրդական սովորություններ նշելը, սակայն զգուշացնում է, որպեսզի մարդիկ դրանց չմոտենան սնոտիապաշտական նախապաշարումներով, դրանք չընդունեն որպես ճշմարտություններ, այլ այդ սովորություններն ընկալվեն պարզապես իբրև զվարճություն:

Մեր ազգագրագետները հատկապես խորհրդային ժամանակաշրջանում մեծ աշխատանք տարան՝ եկեղեցական տոները ներկայացնելու ժողովրդական սնոտիապաշտությունների լույսի ներքո: Դա մեծապես ձեռնտու էր հատկապես կոմունիստական հասարակարգին, որ եկեղեցամարտ էր և հալածում էր Եկեղեցին: Բայց հիմա ազգագրագետները պետք է դադարեցնեն սնոտիապաշտությունների ընկալման ներքո եկե-

ղեցական տոների ներկայացումը, որի պատճառը հաճախ անգրագիրտությունն է եկեղեցական իրողությունների և տոնի հաստատման ու եկեղեցական հեղինակների բացատրությունների մասին: Ազգագրագետները սխալմամբ եկեղեցական տոները ներկայացնում են որպես թե առաջացած ժողովրդական սնոտիապաշտություններից, փոխանակ նշելու, որ ժամանակի ընթացքում եկեղեցական տոների առիթով առաջ են եկել նաև ժողովրդական տոնախմբություններ, սովորույթներ, սնոտիապաշտություններ, որոնցից հատկապես վերջինը Եկեղեցին երբեք չի ընդունել ու չի քաջալերել: Այսինքն՝ ազգագրագետները փոխված են ներկայացնում տեղերը՝ տոնը բխած համարելով ժողովրդական սովորություններից, որով արդեն նսեմանում է կրոնական տոնի դերը, խորհուրդն ու նշանակությունը:

Դեռևս անտիկ ժամանակաշրջանում փիլիսոփաները պայքարում էին սնոտիապաշտությունների դեմ՝ դրանք վնասակար համարելով: Պլատոնը նշում է, որ իր ուսուցիչ փիլիսոփա Սոկրատը խիստ կասկածում էր աստվածների մասին ժողովրդական անտրամաբանական պատումների ճշմարտացիությանը: Իսկ հնում ժողովրդական շատ տոնախմբություններ կապված էին այդ պատմությունների հետ: Նաև Պլատոնն ինքը պետության մասին իր ծավալուն աշխատության մեջ քննադատությամբ է վերաբերվում Հոմերոսի, Հեսիոդոսի և այլ բանաստեղծների սուտ պատմություններին: Հատկապես Հեսիոդոսի «Թեոգոնիա»՝ աստվածների ծագումնաբանություն աշխատության մեջ նկարագրված էին ժամանակի գյուղացիների՝ հաճախ սնոտիապաշտական սովորույթներն ու սովորությունները, և նման սնոտիապաշտությունները, Պլատոնի կարծիքով, մեծապես խանգարում են պետության քաղաքացիների դաստիարակությանը:

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ

Ինչպե՞ս կարող են օտարները՝ այլահավատները, օրհնության արժանանալ: Այս հարցի պատասխանը տալիս է Եփեսոսի մանուկների օրինակը: Եփեսոսի քառասուն քրիստոնյա զինվորներին զցել էին սառած լիճը, որպեսզի ցրտից մեռնեն, և գայթակղության համար մեծ խարույկ էին վառել ափին: Եթե մեկն ուրանար Քրիստոսին, կարող էր ելնել ափ և տաքանալ: Զինվորներից մեկը չի դիմանում և ափ է ելնում, սակայն իսկույն մեռնում է: Այդ ժամանակ նահատակվող զինվորների վրա լուսե պսակներ են իջնում երկրքից, որը տեսնելով հեթանոս զինվորներից մեկը իրեն սառած լիճն է զցում՝ բացականչելով. «Ես էլ եմ քրիստոնյա, ես էլ եմ Քրիստոսին պաշտում»: Այդ հեթանոսը ևս արժանանում է պսակի,

որից հրաժարվել էր ուրացյալ քրիստոնյան: Սա ցույց է տալիս, որ աստվածային օրհնության արժանանալու պայմանը Քրիստոսին հավատալն է, քանզի եթե չեն հավատում այն աղբյուրին, որից գալիս է օրհնությունը, կամ իրենց համար փակում են այն, ապա չեն կարող դրանից օրհնություն ստանալ: Սա նաև նշանակում է, որ այլ հավատքի պատկանողները, այլ կրոնների հետևորդները չեն կարող մեր Եկեղեցում օրհնության արժանանալ, եթե չհավատան Ճշմարիտ Աստծուն: Եկեղեցական կանոնագրքի կանոնը նույնիսկ արգելում է այլահավատներից օրհնություն առնել, քանզի, ինչպես նշում է կանոնը, նրանցը օրհնություն չէ, այլ անմտություն և բարկություն: Մեկ այլ կանոն արգելում է անհավատների կամ հերձվածողների հետ աղոթքի կանգնել ու աղոթել: Համապատասխան մի կանոնով արգելված է նույնիսկ այլահավատների կամ հերձվածողների հետ խնամիություն անել, բացառությամբ այն դեպքի, երբ նրանք Ճշմարիտ աստվածպաշտության են դառնում և հավատում են Ընդհանրական Սուրբ Եկեղեցուն:

ԼԵԶՈՒՆ ԶՍՊԵԼՈՒ ԵՎ ՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարդը պետք է մեծ ուշադրություն դարձնի իր խոսվածքին, որպեսզի իր բերանից դուրս չգան Աստծուն ոչ հաճելի մտքեր, արտահայտություններ ու բառեր: Քրիստոս, կարևորելով լեզուն զսպելը, ասում է. «Լսեցե՛ք և իմացե՛ք. ոչ թե՝ ինչ որ բերանով է մտնում, ա՛յն է պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է բերանից՝ ա՛յն է պղծում մարդուն» (Մատթ. 15.10-11, Մարկ. 7.15): Նաև մեր Տերն ասում է. «Մարդիկ իրենց խոսած ամեն դատարկ բանի համար դատաստանի օրը հաշիվ պիտի տան» (Մատթ. 12.36): Մկրտության արարողության ժամանակ Մկրտության խորհրդի կատարումից անմիջապես հետո կատարվում է Դրոշմի խորհուրդը, որի ընթացքում սուրբ մյուռոնով օծվում են նաև մկրտվողի շուրթերը: «Սա եղիցի քեզ ի պահպանութիւն բերանոյ և դուռն ամուր շրթանց քոց»,- ասում է օծումը կատարող հոգևորականը: Այս օծմամբ մկրտյալ մարդուն զորություն է տրվում, որպեսզի քրիստոնյան իրեն հեռու պահի անգամ խոսքով մեղանչելուց:

Մարդը խոսքով մեղանչում է հատկապես այն մեղքերով, որոնք հիշված են մեղքերի թողության համար եկեղեցում ընթերցվող մեղաների շարքում՝ դժգոհելով, տրտնջալով, բամբասելով և հայհոյելով, որոնք մարդու վրա են կուտակում աստվածային զայրույթը: Առավել հաճախ նաև ստախոսությունն է տարածված: Հետաքրքրական է իմանալ, որ գոյություն ունեն ստի երեք տեսակներ: Առաջին տեսակը վտանգավոր է և վնասում է մարդուն, ինչպես օրինակ՝ սուտ վկայելը, չարախոսելը: Երկրորդ տեսակը կատակով է լինում, որ ծաղրածուություն է: Ստի երրորդ

տեսակը անվտանգ է և նույնիսկ օգտակար է լինում, ինչպես օրինակ՝ երբ մոլագարը սուր է խնդրում, ասում ենք, թե չունենք: Գրիգոր Տաթևացու այս օրինակը որոշ տարբերությամբ հանդիպում է նաև Դավիթ Անհաղթի մոտ, ըստ որի բարի է, երբ մեկը ստում է իրեն սուրը պահ տված մարդուն, ով եկել էր բարկության պահին մեկ ուրիշին սպանելու համար սուրը ետ վերցնելու, և ասում է, թե՝ ինձ ոչինչ չես տվել: Եվ կամ երբ մեզ անարժան մի բան են հարցնում, ասում ենք, թե չգիտենք: Առաջին տեսակի սուտը՝ չարախոսությունը, սուտ վկայությունը մահու չափ մեղք է: Երկրորդ տեսակինը՝ կատակախոսությամբ լինողը, որ առավել աշխարհականների մեջ է հանդիպում, ներելի մեղք է, երբ հազվադեպ է կատարվում: Սակայն երբ այն միշտ է լինում և այն էլ եկեղեցում, ապա մահու չափ մեղք է, ինչպես որ Սուրբ Գրիգոր Տաթևացու վկայակոչմամբ ասում է Սուրբ Նեղոսը. «Ծաղրածու կրոնավորը գերգեսացի դև է»: «Վա՜յ ձեզ, որ այժմ ծիծաղում եք, որովհետև պիտի սգաք ու պիտի լաք» (Ղուկ. 6.25): Եվ այսպիսի կատակերգակը պատճառ է լինում դատարկաբանության ու ենթակա է պատասխանատվության: Եվ դատվելու են ոչ միայն ստախոսներն ու դատարկախոսները, այլև հավանությամբ նրանց լսողները:

Սուրբ Հակոբոս առաքյալը ևս իր ընդհանրական թղթում խոսում է լեզուն զսպելու անհրաժեշտության մասին: Ձիերը կառավարվում են ոչ մեծ սանձով և հսկա նավերը՝ փոքր ղեկով: Այդպես էլ մարդու անդամների մեջ հաստատված լեզուն է, որը սխալ ընթացքի դեպքում կարող է ապականել ամբողջ մարմինը՝ դատապարտելով գեհենի կրակին, ինչպես որ փոքրիկ կրակը մեծ անտառներ է հրդեհում (Հակ. 3.1-6): Նույն լեզվով օրհնություններ ու վատ խոսքեր են ասվում, ինչը խիստ դատապարտելի է: «Նրանով օրհնում ենք Տիրոջը և Հորը և նրանով անիծում ենք մարդկանց, որ ստեղծվեցին Աստծու նմանությամբ: Նույն բերանից դուրս են գալիս օրհնություններ և անեծքներ: Եղբայրնե՛ր իմ, պետք չէ, որ այդ այդպես լինի» (Հակ. 3.9-10),- քաղցրաբար հորդորում է Սուրբ Հակոբոս առաքյալը:

ՇՐՋԱՊԱՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոսի առաքյալներից չորսը Բեթսայիդայից են: Այս քաղաքը հիշվում է մեղավոր քաղաքներին վերաբերող Քրիստոսի վայերի մեջ: Քրիստոս ասաց. «Վա՜յ քեզ, Քորազին, վա՜յ քեզ, Բեթսայիդա. որովհետև եթե Տյուրոսում և Սիդոնում տեղի ունեցած լինեին այն զորավոր գործերը, որ ձեր մեջ արվեցին, վաղուց արդեն քուրջով և մոխրով ապաշխարած կլինին» (Մատթ. 11.21, Ղուկ. 10.13): Այս հայտարարությունը ցույց է

տալիս, որ Բեթսայիդան մեղսալի տեղ էր, սակայն այս քաղաքից են ծագում հինգ մեծ առաքյալներ՝ Պետրոսը և նրա եղբայր Անդրեասը, Զեբեդեոսի որդիներ Հակոբոսն ու Հովհաննեսը և Փիլիպպոսը: Այս փաստն ապացուցում է, որ շրջապատը առաջնայնորեն մեծ ազդեցություն չունի մարդու չար կամ բարի լինելու վրա, այլ մարդն ինքն է իր ազատ կամքով ընտրում գնալ դեպի բարին կամ չարը: Սա կարող ենք տեսնել նաև Ղովտի օրինակով, ով ապրում էր Սոդոմում: Այդ քաղաքում ապրում էին մեղքերի մեջ ընկղմված մարդիկ: Սակայն նույնիսկ այդպիսի վայրում Ղովտը պահեց իր և իր ընտանիքի բարոյականությունը (Ծննդ. 13.12-13, 19.15): Հուդա առաքյալը, ընդհակառակը, իր կյանքի գլխավոր ժամանակաշրջանն ապրեց Քրիստոսի և տասնմեկ առաքյալների հետ, այսինքն՝ բարձր հատկանիշների և բարոյականության տեր անձանց շրջանում, բայց նա դարձավ Տիրոջ մատնիչը: Հետևաբար, մարդն իր ազատ ընտրությամբ է գնում դեպի չարն ու բարին:

ԱՔԱՂԱՂԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Երբ մեծ փիլիսոփա Սոկրատը մեռնում էր, նրա աշակերտները հավաքվեցին նրա շուրջը: Փիլիսոփայի հակառակորդները դատապարտել էին նրան մահապատժի՝ թունավորումով: Նա ինքը պետք է ըմպեր թույնով լցված բաժակը: Թույնը խմելուց առաջ Սոկրատը պատվիրեց իր սիրելի աշակերտներից մեկին աքլոր զոհաբերել: Այս պատվերը անհասկանալի է թվում, բայց կարող ենք հասկանալ դրա իմաստը՝ իմանալով այն ժամանակներում աքաղաղի զոհաբերության սովորության մասին: Մարդն աքաղաղ էր զոհաբերում, երբ բուժվում էր հիվանդություններից: Իր պատվերով Սոկրատը ցանկացավ ակնարկել, որ այս կյանքից հեռանում է հոգեպես բուժված և որևէ մեղսալի արատ չունի իր հոգում: Աքլորը հիշատակված է նաև Ավետարանի հայտնի պատմության մեջ: Քրիստոս ասաց, որ Իր աշակերտներից մեկը՝ Պետրոսը, Իրեն կուրանա մինչև աքաղաղի կանչելը (Մատթ. 26.34, Մարկ. 14.30, Ղուկ. 22.34, Հովհ. 13.38): Սա ևս խորհրդանշական իմաստ ունի: Առավոտյան, երբ աքաղաղը կանչում է, լույսը բացվում է: Պետրոսը դեռ իր հոգում չուներ հավատքի ամբողջական լույսը: Մենք գիտենք, որ Քրիստոսի Հարությունից առաջ առաքյալներն անհաստատ էին հավատքի մեջ, որի համար էլ Տիրոջը մենակ թողեցին ու փախան (Մատթ. 26.56, Մարկ. 14.50): Սակայն Հարության հաղթանակից հետո հավատքի լույսը կատարելապես սփռվեց առաքյալների հոգիներում, և նրանք անհողդողդ մնացին քրիստոսապաշտության մեջ:

ԴԱՐԻ ԽԵՂԿԱՏԱԿՆԵՐԸ

Նկատե՞լ եք արդյոք մի զարմանալի իրողություն: Մեր ժամանակներում այլևս կարծես չկան փայլող մեծություններ ու հանճարեղ մարդիկ: Որևէ բանաստեղծի կամ գրողի, որևէ երաժշտի կամ էլ մի մեծ մարդու վկայակոչելիս մենք միշտ նայում ենք դեպի անցյալը: Այս առումով շատ հիանալի խոսքեր ունի ֆրանսիացի մեծ մտածող Ֆրանսուա Ռընե դը Շատոբրիանը իր «Քրիստոնեության հանճարը» գրքում. «Մեր ժամանակներում, չհաշված մի քան բացառություններ, տեղի է ունեցել տաղանդների մի տեսակ վիժում: Կարելի է նույնիսկ ասել, որ անկրոնությունը, որն ամեն ինչ ամլացնում է, դրսևորվում է նաև մարդու ֆիզիկական կառուցվածքի աղարտացումով: Ո՞ւր են խաղաղ և վեհաշուք դեմքով, ազնվական քայլվածքով, վայելուչ զգեստներով, բարեկիրթ և մաքուր խոսվածքով, դասական տեսքով, տիրական կեցվածքով, արվեստներով ներշնչված այն մարդիկ: Փնտրում ենք նրանց և այլևս չենք գտնում: Աֆրիկյան թզուկների նման փոքրիկ, անծանոթ մարդիկ այժմ ման են գալիս մի այլ դարաշրջանում կառուցված կամարակապ բարձր ճեմասրահների տակ: Նրանց պինդ ճակատների վրա դրոշմված է եսասիրությունը և արհամարհանքն Աստծո հանդեպ: Նրանք կորցրել են թե՛ հագնվածքի վայելչությունը և թե՛ խոսվածքի մաքրությունը: Նրանք ասես լինեն ոչ թե զավակները, այլ խեղկատակները այն մեծ ցեղի, որ նախորդել է նրանց»: Իսկ մենք, սրբերի օրինակով կարևորելով մեր կյանքում Աստծո և Եկեղեցու դերը, հաճախ աղոթենք և Քրիստոսի պատվիրած բարոյական պատվիրաններով ապրենք այնպես, որպեսզի լինենք ոչ թե խեղկատակները, այլ արժանի հետնորդները մեր փառապանծ հայրերի:

ՀԱՂԹԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք տարբերվում ենք քրիստոնեական սրբերից, որովհետև դեռ շատ անելիքներ ունենք իրագործելու՝ նրանց կատարելությանը հասնելու համար: Մինչ սրբերն իրենց երկրային կյանքի ընթացքում վարժ կերպով քայլում էին կատարելության ճանապարհներով, մենք դեռևս կաղում ենք այդ ճանապարհներին:

Պատմում են, որ մի կաղ մարդ զորքի ետևից պատերազմ էր գնում: Մի զինվոր, տեսնելով զորքի ետևից մի կերպ շարժվող այդ մարդուն ասում է. «Ինչու՞ ես այդ վիճակով պատերազմ գնում, երբ թշնամին հարձակվի, ինչպե՞ս ես փախչելու»: Եվ մարդը պատասխանում է. «Ո՛վ թշվառ, ես չեմ գնում կռվի՝ փախչելու համար, այլ գնում եմ, որպեսզի կանգնեմ, պայքարեմ և հաղթեմ»: Եվ մենք էլ, թեկուզ սրբերի համեմա-

տությամբ դեռ կաղում ենք կատարելության ճանապարհին, բայց մենք հոգևոր պատերազմի մեջ ենք մտել ոչ թե նրա համար, որ փախչենք, այլ որպեսզի կանգնենք, պայքարենք և հաղթենք:

ՔԱՐՈԶՆԵՐ

«Կա ժամանակ ծնվելու և կա ժամանակ մեռնելու» (Ժող. 3.2):

Եկեղեցական գլխավոր տոների հաջորդ օրը մեռելոց է: Ուրախ տոնից հետո մեռելոցը մեզ կարծես հիշեցնում է, որ այս կյանքում ուրախություն ու տխրություն այսպես լինում են կողք կողքի, իսկ այն, որ Եկեղեցին կարգել է ամեն անգամ պահեցողությամբ պատրաստվել եկեղեցական մեծ տոնակատարության, մեզ հիշեցնում է, որ այսպես պահեցողությամբ, մեղքերի համար զղջալով ու ապաշխարությամբ պիտի պատրաստվենք նաև հանդերձյալ կյանքին:

Պահեցողությանն ու մահվանն առնչվող մի խրատական և հետաքրքիր պատմություն կա Հին Կտակարանում: Դավիթ թագավորի նորածին որդին մահամերձ էր: Եվ Դավիթը մանկան համար աղաչեց Աստծուն, ծոմ պահեց ու գիշերը գետնին քնեց: Պալատականները ելան գնացին նրա մոտ, որ նրան գետնից բարձրացնեն, բայց նա չուզեց վեր կենալ և նրանց հետ հաց չկերավ: Երբ յոթներորդ օրը մանուկը մեռավ, պալատականները վախենում էին Դավթին հայտնել, որովհետև ասում էին. «Քանի դեռ մանուկը կենդանի էր, այսպես խիստ էր, իսկ հիմա ի՞նչ կանի, եթե ասենք մեռավ»: Դավիթը տեսնելով, որ պալատականները փսփսում են և հասկանալով, որ մանուկը մահացել է, ասաց պալատականներին. «Մի՞թե մանուկը մեռավ»: Նրանք ասացին. «Մեռավ»: Եվ Դավիթը գետնից վեր կացավ, լվացվեց, օծվեց, փոխեց իր զգեստները, մտավ Աստծո տունն ու երկրպագեց նրան: Ապա նա իր տունը մտավ և ուզեց հաց ուտել: Պալատականները նրան ասացին. «Այս ի՞նչ արեցիր մանկան համար. քանի նա կենդանի էր, ծոմ էիր պահում, լալիս ու տանջվում, իսկ երբ մանուկը մեռավ, վեր կացար, կերար ու խմեցիր»: Եվ Դավիթն ասաց. «Քանի մանուկը կենդանի էր, ծոմ էի պահում ու լալիս, որովհետև մտածում էի. “Ո՞վ գիտի, գուցե Տերը ողորմի և մանուկն ապրի”: Հիմա, որ մանուկը մեռավ, ես ինչու՞ ծոմ պահեմ, մի՞թե կարող եմ նրան հետ կյանքի կոչել: Ես եմ նրա մոտ գնալու, իսկ նա ինձ մոտ չի վերադառնա» (Բ Թագ. 12.16-23): Ահա այսպիսի իմաստուն խրատ է տալիս մեզ աստվածաշնչյան այս պատմությունը: Սակայն եթե այդպես է, ուրեմն մենք ի՞նչ անենք, այլևս չլացե՞նք մեր մահացած սիրելիների համար. չէ՞

որ նույնիսկ Քրիստոս Ինքը արտասվեց իր սիրելի Ղազարոսի համար (Հովհ. 11.35): Կամ Աստվածաշնչում կարդալով հարության մասին՝ չվախենա՞նք մահից. չէ՞ որ անգամ Քրիստոս Ինքը որպես մարդ վախեցավ՝ Իր Հորը ասելով՝ այս բաժակը Ինձնից հեռացրու (Մատթ. 26.39, Մարկ. 14.36, Ղուկ. 22.42): Կամ խնդրենք Աստծուն, որ երկար կյանք տա մեզ. բայց Աստված անգամ իր սիրելի Որդուն երկարամյա երկրային կյանք չշնորհեց, մե՞զ արդյոք պիտի շնորհի ծերության երջանկությունը, մե՞զ, որ Քրիստոսի անմեղության համեմատ ծանրաբեռնված ենք մեղքերով և բարձրաձայնելու համար ամոթալի ահավոր հանցանքներով: Այս հարցերն էին հավանաբար հուզում նաև եկեղեցական մեր Սուրբ Հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերանին, ով այս մասին մտորելով՝ մեզ ասում է. «Կյանքը Աստված է տալիս: Ու երբ Աստված Իր տվածն է առնում, ոչ ոք չի կարող Նրան մեղադրել, որովհետև Իրենն է և իշխանություն ունի: Երբ մեզ պարտքով փող են տալիս, շնորհակալություն ենք հայտնում այն ժամանակահատվածի համար, որ տալիս են և չենք մեղադրում այն բանի համար, որ վերցնում են մեզանից իրենց սեփականությունը: Մի՞թե պիտի մեղադրենք Աստծուն, որ վերցնում է իր սեփականությունը»: Այսպես նաև Հոբը չմեղադրեց Աստծուն իր զավակների անժամանակ մահվան համար: Իսկ բոլոր մարդկանց աչքին իրենց սիրելիների մահը միշտ էլ անժամանակ է երևում, ու վշտացած սիրտը չի սփոփվում միայն մեկ պատասխանով: Եվ ահա մեզ մխիթարելու է գալիս նաև Սուրբ Գրիգոր Տաթևացին իր իմաստուն խոսքերով. «Ոմանց Աստված թույլ է տալիս վաղաժամ մեռնել՝ ազատելով նրանց հետագա կյանքի ահավոր ընթացքից կամ դժոխքի դատապարտող դեպքերից»: Հետևաբար, ոմանցից Աստված նրանց իսկ օգտի համար վերցնում է այս կյանքը՝ տալով հանդերձյալ կյանքը, վերցնում է ժամանակավորը՝ տալով հավիտենականը: Սակայն ահա անօրեններ կան, որ գռփում են և հափշտակում, անիրավի ծեծում են և սպանում ու դեռ ապրում են, և ահա կյանքեր, որոնք հանգչում են կիսավառ մոմերի պես: Շատ ամբարիշտների Աստված դեռ թույլ է տալիս երկրի վրա մնալ հիմնական պատճառներով: Նախ չարերից երբեմն բարի մարդիկ են ծնվում և բարի զավակների համար Աստված պահպանում է չար ծնողներին: Ինչպես որ Աստծո հրեշտակն ասաց Սուրբ Գրիգոր Լուսավորչի շառավիղներից Հուսիկ Կաթողիկոսին նրա չար և ամբարտավան որդիների մասին. «Հուսիկ, որդի Գրիգորի, մի երկնչիր, ահա քո զավակներից այլ զավակներ պիտի ծնվեն, որոնք Հայաստան աշխարհի համար հոգևոր իմաստության աղբյուրներ կլինեն, որոնք Եկեղեցու սյուներ կլինեն, հավատի հիմքեր, Քրիստոսի պաշտոնյաներ»: Եվ գիտենք, որ Հուսիկի ամբարիշտ որդի Աթանագինեսից ծնվեց Սուրբ Ներսես Կաթողիկոսը, ով նոր լուսավորություն բերեց Հայաստան

աշխարհին: Դարձյալ՝ չարերին Աստված երբեմն չի սատակեցնում, որովհետև նրանց ձեռքով հոգևոր բարիք է լինում, ինչպես քրիստոնեության վաղ շրջանում չար բռնավորները նեղում էին քրիստոնյաներին, իսկ նրանք համբերելով՝ բազմացնում էին իրենց վարձն ու պսակը: Եվ մեկ այլ պատճառն այն է, որ Աստված չի կամենում մեղավորի մահը, այլ նրա դարձի գալը և ապրելը, ինչպես ասվում է Սուրբ Գրքում (Եզեկ. 18.23), որպեսզի բազում հանցանքներից հետո ապաշխարհի և չզրկվի Երկնքի Արքայությունից, ինչպես մեր Սուրբ Տրդատ թագավորը, ով գիշատիչ էր, սրբերի չարչարեց ու սպանեց, բայց վերջում դարձավ հեզ և խոնարհ գառ: Հավիտենական օգտի համար հավատացյալներից ոմանց վաղամեռ լինելու Աստծո թույլտվության մասին իմանալով՝ պետք է գիտենանք նաև, որ այս մասնահատուկ դեպքից զատ Աստված երկարակեցության խոստում է տալիս իրեն պաշտողներին: «Որդյակ, մի մոռացիր Իմ խրատները և Իմ խոսքերը պահիր քո սրտում, որպեսզի երկարեն քո կյանքի օրերն ու կենդանությանդ տարիները» (Առակաց 3.1-2),- ասում է Աստված: «Ընդունիր Իմ խոսքերը, և քո կյանքի տարիները պիտի շատանան, և պիտի ավելանան քո կյանքի ճանապարհները» (Առակաց 4.10),- դարձյալ ասում է Տերը: «Տիրոջ երկյուղն ավելացնում է կյանքի օրերը»,- ասվում է Առակաց գրքում (10.27): «Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի երկար ապրես երկրի վրա»,- ասում է Աստված տասնաբանյա պատվիրաններում (Ելք 20.12): Պողոս առաքյալը, այս պատվիրանի մասին խոսելով, ասում է, որ սա Աստծո կողմից մարդկությանը տրված առաջին խոստումով պատվիրանն է (Եփես. 6.2), այսինքն՝ այն պահելու դեպքում անպայման ստանալու ենք խոստացվածը:

Այժմ տեսնենք, թե ու՞ր են այսօր՝ մեռելոցի օրը, այն հավատացյալները, ովքեր ուրախությունների, հարսանիքների, մկրտությունների ժամանակ, հաճախ ոչ թե հանուն Աստծո, այլ հանուն ուրախության ու տոնախմբության լցնում են եկեղեցիները բազմահարյուր ներկայությամբ: Եթե հատկապես Սուրբ Զատկի կամ Խաչվերացի մեռելոցներին գերեմանատներ գնաք, կտեսնեք մեքենաների ու մարդկանց բազմություն, և կլսեք, թե ինչպես մեռյալներին ամփոփող լուռ գերեզմանները լի են ողջերի ձայներով: «Կա ժամանակ ծնվելու և կա ժամանակ մեռնելու»,- ասում է աստվածաշնչյան իմաստունը: Եկեղեցին հոգևոր ծննդյան ու կյանքի վայր է, իսկ գերեզմանատունը՝ մեռելավայր: Եվ ծննդյան ու մահվան նույն հերթականությամբ պետք է լինի նաև հաճախելը նախ՝ եկեղեցի, ուր կյանքն է և աղոթք ննջեցյալների կենդանի հոգիների համար, և ապա՝ գերեզմաններ, որոնք Քրիստոսի նկարագրմամբ «դրսից գեղեցիկ են երևում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով և ամենայն ապականությամբ» (Մատթ. 23.27): Ղազարոսի մահվան առիթով Քրիստոս ար-

տասվեց: Սակայն Նա լալիս էր ոչ միայն Ղազարոսի համար, այլև, ինչպես ասում է Սուրբ Եփրեմ Ասորին, Տերը նախ և առաջ արտասվում էր այն բոլոր մարդկանց համար, ովքեր մարմնով ապրում են, բայց հոգեպես մեռած են և հավիտենապես հոգևոր մահվան մեջ, այսինքն՝ Աստծուց հեռու պիտի լինեն: Մենք էլ այսօր Քրիստոսի նմանողությամբ աղոթենք և ներքին կամ արտաքին արտասուքներով լաց լինենք ոչ միայն մեր ննջեցյալների, այլև բոլոր նրանց համար, ովքեր այսօր, ցավոք սրտի, իրենց սխալ ընթացքով մեզ հասկացնում են, թե ինչ նկատի ուներ Քրիստոս, երբ ասում էր՝ թող մեռելները թաղեն իրենց մեռելներին (Մատթ. 8.22, Ղուկ. 9.60): Եվ ինչպես որ Դավիթ թագավորը իր մանկան մահից հետո մտավ Աստծո Տուն ու երկրպագեց Նրան, մենք էլ, նրա բարի օրինակին հետևելով և արդեն նոր իմաստությամբ խորհելով, որ կա ժամանակ ծնվելու և կա ժամանակ մեռնելու, ժամանակավոր վիշտը արգելք չդարձնենք աստվածպաշտության՝ միշտ փառավորելով Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

***

«Ահա մենք թողեցինք ամեն ինչ և եկանք
Քո ետևից, մենք ի՞նչ կունենանք» (Մատթ. 19.27):

Անսահման սիրով լի, համամարդկային հոգածություն ուներ Հիսուս Քրիստոս՝ մտահոգվելով Իր աշակերտների և ողջ մարդկության կյանքի ընթացքով: Սակայն Քրիստոսի աշակերտներին հետաքրքրում էր մի հարց, որն այժմ հետաքրքրում է նաև ինձ, ինչպես նաև ձեզ, սիրելի հավատացյալներ: Այդ հարցը գուցե չի հնչում մեր մտքերում, սակայն այն մի անհանգիստ զգացում է արթնացնում մեր սրտերում, և այդ անհանգստության մեջ էլ կարծես ծրարված է հետևյալ հարցը. «Ահա մենք թողեցինք ամեն ինչ և եկանք Քո ետևից, մենք ի՞նչ կունենանք»: Կան հարցեր, որոնք մարդկանց հետաքրքրում են ներկա պահի, միևնույն ժամանակ ապագայի համար: Եվ ներկա պահի համար այս հարցը ձեզ կարող է հետաքրքրել հետևյալ տեսանկյունից. «Ահա այժմ մենք եկել ենք եկեղեցի, թողել ենք մեր բոլոր գործերը, հոգսերն ու մեր բոլոր հետաքրքրությունները, մենք ի՞նչ կունենանք»: Բայց մեզ համար մի պատասխան հարց է հնչում: Ի՞նչ հակահարց կամ ի՞նչ պատասխան հարց է դա: Գիտե՞ք, թե ինչպես է դարձի եկել քրիստոնյա սրբերից մեկը: Նա տեսել է խաչեցյալ Քրիստոսի պատկերը, որի վրա գրված էր. «Ահա թե Ես ինչ եմ արել քեզ համար, իսկ դու ի՞նչ ես անում Ինձ համար»: Մենք Աստծուն ուղղված

բազում հարցեր, խնդրանքներ, Նրանից ակնկալիքներ ունենք, բայց ամեն անգամ, երբ մենք տեսնում ենք խաչված Քրիստոսի պատկերը, այդ պատկերը պարուրող թվացյալ լռության միջից Աստված Ինքն է մեզ հարցնում. «Ահա թե Ես ինչ եմ արել քեզ համար, իսկ դու ի՞նչ ես անում Ինձ համար»:

Իրոք, ի՞նչ ենք անում մենք: Երբեմն գալիս ենք եկեղեցի, որին շատ անգամներ մատների արանքով ենք նայում, և դժկամում ենք մի փոքր երկար կանգնել արարողությանը՝ նախընտրելով վերադառնալ մեր հոգսերին, փախչելով եկեղեցուց կարծես մի ահավոր վայրից: Երկար կանգնելուց մեր մեջքները ցավում են, մեր ոտքերը հոգնում են, մեր մտքերը սկսում են ձանձրանալ: Բայց մի՞թե մի փոքր երկար արարողությունն է այս ամենի պատճառը: Այդ ինչպե՞ս է, որ գրեթե միշտ համերգասրահները լեփ-լեցուն են լինում մարդկանցով, որոնցից շատերը լեցուն նստատեղերի պատճառով ժամեր ու ժամեր տևող համերգների ընթացքում ոտքի վրա են կանգնում և ոչ միայն չեն հոգնում, այլ դեռ ընդհակառակը, պարելու ցանկություն էլ են ունենում: Այդ ինչպե՞ս է, որ մեր շատ երիտասարդներ ու երիտասարդուհիներ հատկապես մայրաքաղաքում ամբողջ գիշեր անցկացնում են զվարճանքի վայրերում անընդհատ շարժման մեջ և չեն հոգնում: Այդ ինչպե՞ս է, որ մենք ինքներս էլ հարսանիքների ժամանակ առավոտից մինչև ուշ գիշեր պարում ենք ու թռչկոտում և չենք հոգնում: Ուրեմն, սիրելիներ, եկեղեցում մեր դժգոհության, դժկամության, ձանձրույթի պատճառը ոչ թե երկար կանգնելուց մեր ցավեցող մեջքն է կամ հոգնած ոտքերը, այլ մեր սրտերում Աստծո հանդեպ սիրո և ջերմության պակասը: Իսկ ի՞նչ կա մեր սրտերում: Մեր սրտերը կարծես սառել են ու մեռել, ոչ մի ջերմություն, վեհ սիրո կամ վեհ հույզերի ոչ մի թրթիռներ, միայն հոգսեր, վշտեր, մտահոգություններ, ավելի շատ տխրություն, քան ուրախություն, ավելի շատ թախիծ, քան երանություն: Լինում են պահեր, երբ մեր սիրտը դառնում է տխրության բաժակ, և այդ պահերին, ինքներս էլ չգիտենք, թե ինչու, մեր աչքերից արցունքներ են ուզում հոսել ցած, և մեր սիրտը կարծես արթնանալով գոչում է. «Ազատեցե՛ք ինձ, ազատեցե՛ք ինձ հոգսերի և վշտերի այս ճնշող բեռից, ի՞նչ եք խեղդում ինձ, ինչու՞ եք ինքներդ փորձում սպանել ձեր սիրտը»: Այս աշխարհում իրական հան-գըստություն և ուրախություն չկա, իրական հանգստությունն ու ուրախությունը միայն Աստծո մոտ են: Սակայն ու՞մ եմ ես ասում սա: Չէ՞ որ դուք ինքներդ էլ ձեր կյանքի փորձով համոզվել եք, որ այդպես է: Ահա երեկ վշտերն էին կրծոտում մեր սրտերը, այսօր մտահոգություններն են տանջահար անում, իսկ վաղը ծանրաբեռնված ենք լինելու ապագայի հոգսերով: Բայց խաչված Քրիստոս տարածել է Իր ձեռքերը, և Քրիստոսի ձեռքերն այսպես տարածված էին ոչ միայն

խաչի վրա, երբ նա մեռած էր, այլ Նրա ձեռքերն այսպես տարածված են նաև հիմա՝ Նրա հարություն առնելուց հետո: Քրիստոս կարոտա՛ծ հոր պես, արցունքի՛ հասնող կարոտով Իր ձեռքերը տարածել է մեզ Իր գիրկն առնելու համար: Տեսե՞լ եք, թե ինչպես է հայրը երեխայի հետ խաղ անելիս բացում ձեռքերը. երեխան վազում է, ընկնում հոր գիրկը, փարվում նրա պարանոցին: Իսկ դուք ի՞նչ եք կանգնել, ի՞նչ եք սառել ու մնացել, չէ՞ որ Աստված Իր ձեռքերը բացել է մեզ Իր գիրկն առնելու համար: Ավետարանում կարդում ենք Հիսուս Քրիստոսի խոսքերը, Նա կարծես գոչելով է ասում մեզ բոլորիս, յուրաքանչյուրիս առանձին-առանձին. «Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և Ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. 11.28):

Երբ մեր գլուխը ցավում է, փորձում ենք որևէ դեղ խմել, երբ ավելի լուրջ ցավեր ենք ունենում, վազում ենք բժշկի մոտ, բայց մի՞թե սրանցից ավելի լրջորեն չպետք է մտածենք մեր սրտի և հոգու խաղաղության մասին: Իսկ մեր հոգին հիվանդ է, և ինքներս չենք գիտակցում դա: Ինքներս մեզ արդար ենք համարում, մինչդեռ մեղքերի մեջ կորած ենք: «Ի՞նչ եմ արել, ոչ մարդ եմ սպանել, ոչ էլ շնություն եմ գործել»,- հաճախ ասում են շատերը: Բայց Աստծո տված յուրաքանչյուր պատվիրան աստիճաններ ունի: Լավ է, որ չես սպանում, բայց ավելի լավ է, երբ խոսքով չես սպանում, և սրանից է՛լ ավելի լավ է, երբ մտքով չես սպանում: Լավ է, որ չես շնանում, բայց ավելի լավ է, երբ մտքով չես շնանում: Լավ է, որ սիրում ես եղբորդ, ավելի լավ է, երբ սիրում ես հարևանիդ, բայց սրանից է՛լ ավելի լավ է, երբ սիրում ես... թշնամուդ: Ո՞վ կարող է մեզ սրտի և հոգու խաղաղություն տալ, եթե ոչ միայն Աստված: Բայց մենք Աստծուն գցել ենք ամենավերջին տեղը և Նրանից վերև բազմեցրել մեր սեփական հոգսերն ու ցանկությունները: Մեր ողջ գործունեությունն ուղղված է կամ մարդկանց, կամ ինքներս մեզ հաճոյանալուն: Կեղծավորությունը ծնվում է մարդկանց շահամոլությամբ հաճոյանալուց, իսկ գժտությունները, վիրավորանքներն ու նեղացկոտությունը՝ ինքներս մեզ հաճոյանալուց: Սակայն այսուհետև փոխենք իրերի հերթականությունը, մեզ համար մեր սրտերում առաջին տեղում բազմեցնենք Աստծուն և Նրան հանձնենք մեր բոլոր հոգսերն ու մտահոգությունները՝ հավատալով, որ Աստված ըստ Իր խոսքի օգնելու է մեզ ամեն ինչում և յուրաքանչյուր խնդրի համար ի՛ր ժամանակին ելք է ցույց տալու, և մեր բոլոր գործերն անենք առաջին հերթին ո՛չ թե մարդկանց, այլ Աստծուն հաճոյանալու համար: Ահա սա է քայլը դեպի Աստված, ահա այս է մեր՝ երեխաներիս վազելը դեպի Իր մխիթարող գիրկը մեզ համար բացած մեր սիրող Հայրը: Թող որ Աստված մեզ բոլորիս ուժ տա, որպեսզի կարողանանք այս դժվար թվացող, բայց միևնույն ժամանակ իրականության մեջ այսքան հեշտ քայլերը դեպի Աստ-

ված կատարել, որպեսզի մի օր էլ արդեն խաղաղված սրտով և խաղաղված հոգով Աստծուն փառք տանք և ասենք. «Փա՛ռք Քեզ Աստված, փա՛ռք Քեզ, ամե՛ն ինչի համար փառք Քեզ հավիտյանս հավիտենից. ամեն»:

***

«Մարմնի ճրագը աչքն է» (Մատթ. 6.22):

Սիրելի հավատացյալներ,

Ավետարանի ընթերցանությունից դուք գիտեք, որ Քրիստոս բազմաթիվ իմաստուն խոսքեր ասաց, հորդորներ ու պատվիրաններ տվեց: Մեր Տիրոջ խոսքերը, Նրա հիանալի վարդապետությունը քրիստոնեության ամենամեծ հրաշքներն են, որովհետև թեկուզ և այլ կրոններում ևս նկարագրված են գերբնական երևույթներով դեպքեր, սակայն ոչ մի կրոն չունի Աստծո և մարդու, աշխարհի, բարոյականության, առաքինության այնպիսի բարձր ու վեհ ուսուցումներ, որպիսիք կան քրիստոնեության մեջ: Ահա և այսպիսի իմաստնագույն միտք է արտահայտում նաև տերունական այս խոսքը, որ սկսվում է *մարմնի ճրագը աչքն է* բառերով: Գեղեցիկ համեմատություն է արված: Ի՞նչ է ճրագը, այն է, որ լույս է տալիս, և որի օգնությամբ կարողանում ենք մթության մեջ տեսնել: Ահա այսպես խորհրդանշական ճրագ է նաև մարմնի համար աչքը, որի օգնությամբ մարմինը կարողանում է տեսնել: Իսկ ի՞նչ ենք տեսնում մենք այդ ճրագով: Դա կախված է նրանից, թե այն դեպի որ կողմն ենք ուղղորդում: Լապտերը ցույց է տալիս միայն այն առարկան, որի ուղղությամբ գցում ենք լապտերի լույսը: Իսկ աչքի ճրագը մեզ համար լուսավորում է այն, ինչի կողմը մենք ամբողջությամբ հայեցված ենք մեր մտքերով: Հաճախ է լինում, որ

մեզ շրջապատող բնության գեղեցկությունը, կամ հոգնած տուն վերադառնալիս չենք տեսնում մեր ճանապարհի շուրջը եղող իրողությունները, և կամ մտքերի մեջ քայլելիս չենք նկատում մեզ ծանոթ մարդկանց և չենք բարևում նրանց: Իսկ ո՞ր կողմն է այսօր ուղղված մեր ճրագը, այսինքն՝ ինչո՞վ ենք ավելի շատ մտազբաղ և ի՞նչ ենք տեսնում: Մեր օրերում, երբ և՛ պետական, և՛ հասարակական, և՛ ընտանեկան, և՛ անձնական կյանքում բազմաթիվ խնդիրներ կան, ինչպես նաև խնդիրներ զգացմունքային, նյութական, որոշ մարդկանց հետ մեր հարաբերություններին առնչվող և այլն, մենք ավելի շատ տեսնում ենք դժվարությունները, մտածում, որ Աստված այնպես չի օգնում մեզ, ինչպես որ պետք է, և կամ էլ Աստված հեռվից է դիտում մեզ՝ տեսնելու, թե ինչպես ենք հոգնատանջ լինելով հաղթահարում կյանքի բազում դժվա-

ությունները: Այդ մտքերը մեզ ավելի նեղ վիճակի մեջ են գցում, երբեմն հիասթափություն ու ընկճվածություն է տիրում սրտին: Սակայն մի՛ տխրիր, սիրելի հավատացյալ, Աստված միշտ քո կողքին է, և քո դժվարություններն ու խնդիրները հարթվելու են, որովհետև Աստված գործում է դրա համար: Միայն թե մի քիչ պետք է հավատքով համբերել, ինչպես որ բնությանն է ժամանակ պետք անձրևից հետո մշուշն ու մառախուղը ցրելու և արևի լույսը կրկին փայլեցնելու համար: Մեզ երբեմն թվում է, թե մեր նեղությունների ու փորձությունների մեջ մենք մենակ ենք, և Աստված սպասում է, որ ինքներս դուրս գանք այդ փորձությունից: Բայց Դամասկոսի ճանապարհին Քրիստոս լույսի մեջ հայտնվեց քրիստոնյաներին հալածող Սավուղին՝ հետագայի Պողոս առաքյալին, և ասաց. «Սավուղ, ինչո՞ւ ես Ինձ հալածում» (Գործք 9.4): Ե՞րբ և որտե՞ղ Պողոսը հալածեց Աստծուն, նա հալածում էր միայն քրիստոնյաներին: Բայց Քրիստոս Իր հետևորդների չարչարանքները նաև Իրենը համարեց: Չարչարավող մարդը կարծում է, թե ինքը միայնակ է չարչարվում, և Աստված լքել է նրան, մինչդեռ Աստված Ինքը չարչարվում է մարդու հետ: Այդ հատկությունը ձեռք բերվեց Աստծո մարմնացումով և խաչի վրա տանջանքներով: Խաչված Քրիստոս բացահայտում է Աստծուն, որ ընդունակ է չարչարվելու: Աստված չարչարվում է մեզ հետ, չարչարվում է մեր կողմից, երբ մեղք ենք գործում, և չարչարվում է մեզ համար: Նույն Պողոս առաքյալն ասում է. «Եթե Քրիստոսի չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու և փառքին» (Հռ. 8.17): Սակայն ոչ միայն մենք չարչարանակից ենք լինում Աստծուն, որպեսզի Նրան փառակից լինենք, այլև Աստված Իր փառքից չարչարվում է մեզ հետ, որպեսզի մեզ Իր փառքին հանի: Հիշիր, թե քո որքան աղոթքներ են կատարվել, վիշտը, որ չարաղետ հարվածներով այտուցվում է կրծքի ձախ անկյունում՝ սրտի մեջ, ինչպես է փարատվել կամ հաղթահարվել: Հուսահատության չարախինդ պահերին, երբ ուզում էիր մեկի հետ կիսել հոգիդ պարուրած դառնության ծանրությունը, ու՞մ ես ամբողջությամբ բացել սիրտդ, եթե ոչ Աստծո, ով քեզ դուրս է բերել մենությանդ բոժոժից, նորածին թիթեռնիկի սլացք պարգևել և ոչնչացրել սիրտդ կրծոտող տխրության թրթուրը: Ո՞վ է բուժել մեղքի նետերից արյունաքամ եղող լացակումած հոգուդ դառը վերքերը: Ո՞ւմ ես դու արդյոք աչքերդ հառել, երբ տենչացել ես մի այնպիսի մխիթարություն, որ պարգևելը սովորական մարդու ուժերից վեր է: Արարչի բացառիկ հատկություններից մեկն է ամենուրեքությունը, Նրա մշտական ներկայությունը ամեն տեղ, որը վկայում է, թե բոլոր հանգամանքներում Աստված մեզ հետ է: Պատերազմներով, անարդարություններով, ապագայի հանդեպ մեր գերլարված մտքի ու մտահոգությունների առկայությամբ լի այս աշխարհում Մեր հույսը Աստված է: Նա է մեր գաղտնի արցունքնե-

ը սրբողը, մեր մեղքերի հուսահատությունից մեզ վեր հանողը, մեր միջի հին մարդուն խաչողը և նորին հարություն տվողը, մեր սիրտն Իր ձեռքերում ջերմացնողը, մեզ դրախտ խոստացողը, մեզ երջանկություն պարգևողը: Աստված ներկա է անգամ Նրան բացակա համարող մարդու կյանքում: Ներկա է ոչ միայն Երգ երգոցի սիրահար զույգի պես փողոցով ճախրող սիրեցյալների հավիտենական հավատարմության մեծ խոստումներում, այլև արդեն իսկ ընտանիք կազմած ամուսինների վեճերի բոցում, որպեսզի փրկի Սուրբ Գրքից հայտնի երեք մանկանց պես հնոցը նետված այդ անմիտներին զայրույթի հրից: Նա միշտ ներկա է երեխաների անմեղ և կամ էլ չարաճճի վազք ու խաղերում, ներկա է անգամ գայթակղությունից գալավող մարդու ցանկացող սրտի մութ անկյուններում՝ լուսավորելու խավարը լույսով, քանզի ի՞նչ եք կարծում, խղճի խայթն ի՞նչ է: Աստված միշտ ներկա է նորածին մանկան ծիծաղից հրճվող, իր մանկան վրա սիրով խոնարհված հոգնած մոր կողքին, աշխատանքից վերադարձող հոր շտապող քայլերի և նրան սիրով ընդառաջ ելնող երեխաների մանկական վազքի արագության մեջ: Նաև իր սենյակում միայնակ մարդը մենակ չէ երբեք, քանզի Աստված ներկա է անգամ միայնության մեջ: Աստված ներկա է տիեզերքի մեջ, տիեզերքից վեր, ներկա է նաև մարդկային հոգու տիեզերքներում: Նա ներկա է միշտ և չկա մի տեղ, ուր բացակայի, քանզի Նա Աստված է, Նա ամենուր է: Ուրեմն, Աստված միշտ մեր կողքին է: Աստված քեզ հաջողություն է տալիս, միայն պետք է վերցնես այն քո եռանդուն աշխատանքով: Աստված քեզ առողջություն է տալիս, միայն պետք է այն պահպանես՝ քո մասին իրապես հոգ տանելով: Աստված քեզ հոգու անմեղության լույսն է տալիս, միայն թե պետք է այն պահպանես աչքի լույսի պես: Բայց հաճախ առողջությունը քայքայվում է աշխատանքում, և աչքի լույսը կարևորվում է հոգու լույսից: Աչքերի մասին հոգալով՝ ակնոցներ ենք օգտագործում, նաև գիշերը աչքերը փակում ենք տեսողության հոգնածությունը թոթափելու համար: Սակայն «մարմնի ճրագը աչքն է. և եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Իսկ եթե քո աչքը պղտոր է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Եվ արդ, եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խավարը՝ որչա՜փ ևս ավելի» (Մատթ. 6.22-23),- ասում է Քրիստոս: Այսինքն՝ երբ մարդ կորցնում է տեսողությունը, իր համար և՛ աշխարհը, և՛ իր մարմինը ընկղմվում են խավարի թագավորություն: Եվ եթե այդպես է մարմնավոր տեսանկյունից, ուրեմն առավել ևս երբ հոգևոր աչքը կուրանում է, երբ հոգու լույսը հանգչում է, խավարի իշխանն է դառնում տիրակալը մարդու ներաշխարհի: Աստծո ստեղծած բարիքները՝ բնությունը, երկինքը, կենդանիներին, աստվածային պատկերով մարդկանց, արեգակի լույսը, գիշերվա խորհրդավոր մթության մեջ շողացող աստղերը և

ժպտացող լուսինը և այլ բարիքներ մենք տեսնում ենք բաց աչքերով, բավական է փակել աչքերը և այդ ամենը կանհետանա: Եվ որպեսզի բարիքները քեզ համար չանհետանան, միշտ բաց պահիր հոգուդ աչքերը՝ դրանք հառած ամենուրեք գտնվող Աստծուն, Տիրոջը ներկա համարելով ոչ միայն ամպերից այն կողմ, այլև՝ քո հոգու մեջ: Երբ բաց են հոգու աչքերը, մարդն այլ կերպ է տեսնում իրողությունները: Ահա թե մի հավատացյալ ինչպես է դա վկայել. «Ես Աստծուց ուժ խնդրեցի, իսկ նա փորձություններ ուղարկեց, որպեսզի կոփի ինձ, իմաստություն խնդրեցի, և խնդիրներ ուղարկեց, որոնք հաղթահարելու համար միտքս պիտի աշխատեցնեի: Արիություն խնդրեցի, և վտանգներ ուղարկեց, որոնք հաղթահարելիս զորացավ իմ քաջությունը: Խնդրեցի, որ մարդկանց հանդեպ սերս մեծացնի, և Աստված իմ օգնության կարիքն ունեցող դժբախտներ ուղարկեց: Բարիքներ խնդրեցի, և Աստված դրանք ձեռք բերելու հնարավորությունները տվեց: Արդյունքում ես չստացա ոչինչ, ինչ խնդրել էի, բայց միևնույն ժամանակ ստացա այն ամենը, ինչ հարկավոր էր ինձ»: Մարմնի ճրագը աչքն է, և մեկն այդ ճրագով տեսնում է ջրափոսը, իսկ մյուսը տեսնում է այդ ջրափոսում արտացոլվող աստղերը: Հավատքով ապրիր ու աշխատիր, սիրելի հավատացյալ, և Աստված բազում օրհնություններ կբերի քեզ, զգոն եղիր և կշահես ոչ միայն այս, այլ նաև հավիտենական կյանքը՝ միշտ փառավորելով Բարձրյալն Աստծուն՝ Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

***

«Ծառա չես, այլ՝ որդի, և եթե որդի ես, ապա և՝ ժառանգ Աստծո» (Գաղ. 4.7)

Սիրելի հավատացյալներ,

Այսօր ձեր ուշադրությունը պիտի հրավիրեմ առաքելական թղթի մեկ մտքի վրա, որն անմիջականորեն վերաբերում է մեզ՝ քրիստոնյաներիս. «Ծառա չես, այլ՝ որդի, և եթե որդի ես, ապա և՝ ժառանգ Աստծո»: Ժառանգը այն մարդն է, ով իրեն կտակված հարստությունը ստանում է կտակողի մահից հետո: Սակայն Աստծո պարագային այդպես չէ, որովհետև Աստված անմահ է, և ինչ որ մեզ տալիս է, մենք այն ստանում ենք

առանց սպասելու ժառանգությունը փոխանցողի մահվան: Կամ կարող ենք ասել, որ Քրիստոս արդեն մեռավ մեզ համար, և մենք արդեն իսկ տերն ենք այն ժառանգության, որ Աստված կտակել է մեզ: Այն կարծիքը կա, որ հիմնական ժառանգությունը՝ բարիքները, վայելքները, Աստված մեզ պիտի տա միայն մեր մահից հետո այն կյանքում, իսկ այստեղ ավելի շատ պիտի ունենանք նեղություններ, դժվարություններ ու պիտի անտեսենք նյութականը՝ առավելաբար մտածելով հոգևորի մասին: Չէ՞ որ Քրիստոս նաև Ինքն ասաց. «Ձեր հոգու համար հոգ մի՛ արեք, թե ինչ պիտի ուտեք կամ ինչ պիտի խմեք, և ոչ էլ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք» (Մատթ. 6.25): Սակայն Պողոս առաքյալն իր մարմնի վրա ցրտի սառնությունը զգալով բանտում, պատվիրում է իր աշակերտ Տիմոթեոսին իրեն բերել իր վերարկուն, որ մոռացել էր հավատացյալներից մեկի տանը՝ այս կերպ մտածելով, թե ինչ պետք է հագնի (Բ Տիմ. 4.13): Նաև Սուրբ Աստվածածինը Կանայի հարսանիքում մտահոգվեց խմիչքի համար և Քրիստոս՝ կիսելով այս մտահոգությունը, ջուրը գինու վերածեց (Հովհ. 2.3-8): «Հայր մեր» աղոթքում Տերը մեզ սովորեցրեց մեր հանապազօրյա հացի մասին մտածել, հացի բազմացման հրաշքներով ևս կրկնեց Իր այս սովորացրածը: Նաև Քրիստոս, որ նախապես Իր առաքյալներին քարոզչության ուղարկելով պատվիրել էր ոչինչ չվերցնել, Իր խաչելությունից առաջ հրահանգ է տալիս. «Իսկ այժմ՝ ով որ քսակ ունի, թող վերցնի այն, նույնպես և՝ մախաղ» (Ղուկ. 22.36): Սա նշանակում է, որ մենք բացի հոգևորից, պիտի մտածենք նաև նյութականի մասին, նյութական բարիքներ ձեռքբերելու մասին: Իսկ Քրիստոսի պատվերը՝ հագնվելու, ուտելու կամ խմելու պետքերի հանդեպ չմտահոգվելու առնչությամբ, պարզապես մեզ ուղղված զգուշացում է մարմնավորը հոգևորից ավելի առաջնային չհամարելու, նյութականը Աստծուց ավելի վեր չդասելու, որովհետև այդպես վարվողների մասին է հիմնականում ասված, թե ավելի հեշտ է, որ պարանը ասեղի ծակով մտնի, քան թե հարուստը՝ Աստծու արքայությունը (Մատթ. 19.24): Սակայն եթե մենք բարիքներ ստանալու ենք ոչ միայն հանդերձյալ աշխարհում, այլ նաև այս կյանքում, ուրեմն ու՞ր է շատերիս ժառանգությունն ու ունեցվածքը, որովհետև բազում մարդիկ այսօր մի կերպ միայն օրվա ապրուստ են վաստակում: Սուրբ Գրքի խոսքը, որ վկայակոչեցինք, ասում է, որ մենք Աստծո ժառանգներն ենք, իսկ մարդկանց մեջ ժառանգություն կտակողը թողնում է մի փոքրիկ փաստաթուղթ կամ բանալի, որով կարող ես գնալ, բացել, վերցնել քեզ տրվածը և տեր դառնալ բարիքների, այսինքն՝ պետք է գործողություն, շարժում իրականացնել: Այդպես է վարվում նաև Աստված: Աստված քեզ հաջողություն է տալիս, միայն պետք է դրա պտուղները վերցնես քո եռանդուն աշխատանքով կամ նոր ձեռնարկներով, անպայ-

մանորեն խելացի և կշռադատված քայլերով՝ առաջին հերթին, ինչպես սովորեցնում է Քրիստոս, Աստծո արդարությունն ու արքայությունը փնտրելով (Մատթ. 6.33): Աստված մեր անկեղծ զղջումը տեսնելով՝ ներում է մեր մեղքերը և մեզ մաքրագործում, դարձնում է նոր մարդ՝ նոր հույսերով ու երազներով, ունենալու առավել լավ, բարեկեցիկ ու երջանիկ կյանք: Այս ձգտումը դուք բոլորդ կարող եք իրականություն դարձնել ձեզ անսահմանորեն սիրող Աստծո օգնությամբ: Սիրելի հավատացյալներ, չեմ ուզում ձեզ առավել հույս տալ, քան պետք է, բայց չեմ ուզում նաև նոր և ավելի լավ ու բարօր կյանքի անհնարինության հուսահատությունը ներշնչել: Ընթերցում ենք միջնադարի մեր եկեղեցական հեղինակների մոտ, թե մարդ չի կարող և՛ այս կյանքը վայելել, և՛ այն կյանքում երանությունը ճաշակել, միայն մեկում մարդը երջանկություն կստանա: Այսպիսի որոշ չափով հոռետեսական հայտարարությունը, որ կարծես թե փակցված է միջնադարի մեր շատ հեղինակների քարոզների նախամուտքին, սխալ չէ: Սակայն այն մեծ չափով կրում է դրոշմը այն ժամանակների դառը իրականության, երբ մեր հայրենիքը ողողված էր պարսկական, արաբական, թաթար-մոնղոլական, հետո նաև թուրքական արշավանքներով, համատարած սպանդով ու ավերով, թալանով և բռնություններով: Համաձայնեք, որ այսպիսի ծանր պայմաններում առնըվազն տարօրինակ պիտի հնչեր այս երկրում ապահով ու երջանիկ կյանքի հնարավորության հաստատումը: Եվ այդ ժամանակների համար որքան ճիշտ ու մխիթարական են հնչել մեր հայրերի քարոզները առավելաբար ոչ թե այս, այլ այն կյանքում ուրախության ու երջանկության ձեռքբերման մասին: Այն ժամանակների համար էին օրինակ ծառայում ամբողջ կյանքում չարչարված ու սոված աղքատ Ղազարոսը, հացի կարոտ ժողովուրդը, հազիվ երկու լումա ունեցող տառապյալ այրին, արդարությունը պաշտպանած և ճշմարտության համար բանտ նետված ու գլխատված Հովհաննես Մկրտիչը: Սակայն ո՞վ կարող է ասել, որ հավատացյալների համար օրինակ չեն նաև հազարավոր ուղտեր ու ոչխարներ ունեցող, իր աշխատանքով իր ապրուստը վաստակած Աբրահամ նահապետը, իր կարողությունը ստեղծած Հակոբ նահապետը, փարավոնի բարձր պաշտոնյա և երկրները կերակրող Հովսեփը, առաքյալները, ովքեր ոչ միայն նավեր, այլև վարձկաններ ունեին աշխատեցնելու համար, և ովքեր հաճախ օգտվում էին այդ նավերից Քրիստոսի հետ Գալիլեական ծովի այս կամ այն ափն անցնելու համար, Ղուկասի ավետարանում հիշվող ունևոր կանայք, ովքեր իրենց ունեցվածքից, ինչպես ասում է ավետարանիչը, մատակարարում էին Քրիստոսին, հարուստ Հովսեփ Արիմաթացին, ով իր գնած գերեզմանում ամփոփեց Քրիստոսի մարմինը, և վերջապես Հոբ Երանելին, ով իր հարստությունն ու զավակներին կորցրեց, սակայն հե-

տո Աստծո օգնությամբ և օրհնությամբ ավելի շատ զավակների և ավելի մեծ հարստության տեր դարձավ: Մենք հավատում ենք, թե Հոբը օրինակն է նաև եղեռնից հալածված մեր ժողովրդի, որն ավելի շատ զավակներ ու ավելի մեծ զորություն պիտի ունենա: Հիմա, փառք Աստծո, խաղաղ ժամանակներ են մեզ համար, առանց պատերազմների, առանց ջարդերի ու սպանդի: Հիմա Աստված նոր կյանքի ու նոր հնարավորությունների ձեռքբերման հույսն ու Իր օգնությունն է տալիս:

Եթե հակառակ ուղղությամբ գնանք, մտածենք միմիայն հոգևորի մասին, ամբողջովին անտեսենք նյութականը, հակառակ կլինենք նաև բնության օրենքներին, ըստ որոնց կենդանիներն իրենք ամբարում են իրենց ապրուստը, ստեղծում իրենց բույնը, կերակուր կուտակում և լիության մեջ մեծացնում իրենց փոքրիկ ձագերին: Նաև նյութական չունևորության, աղքատության մեջ ընկնելով՝ չպիտի կարողանանք իրականացնել այն մեծագույն առաքինությունը, որ կոչվում է ողորմություն, և որի կատարման համար Աստված մեծապես գովում է Իր ժառանգներին: Նաև Սուրբ Գիրքն է կենդանական աշխարհից օրինակներ բերելով մեզ խրատում: Առակաց գիրքն ասում է. «Մրջյունի մո՛տ գնա, ո՛վ ծույլ, նախանձի՛ր նրա գործերին և իմաստո՛ւն եղիր նրանից ավելի. քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ վերակացու և ո՛չ էլ գլխին տեր ունի, բայց ամռանը նա պատրաստում է իր ուտելիքը և հնձի ժամանակ ամբարում է իր առատ պաշարը: Կամ մեղվի մո՛տ գնա, տե՛ս, թե ինչպե՞ս գործունյա է նա և թե ինչպիսի ջանասիրությամբ է գործում, որի վաստակը մատուցում են թագավորներին և տնանկներին՝ բժշկության համար»: Շարունակելով այս խրատը՝ Աստվածաշունչն ասում է, որ եթե ժրաջան չլինես, աղքատությունը, ինչպես չար ուղևոր, կհասնի քեզ, և կարիքը, իբրև ժիր սուրհանդակ, կկանգնի դռանդ առջև: Բայց եթե եռանդուն լինես, ապա քո ամառը պիտի հասնի աղբյուրի նման, և կարիքը պիտի հեռու փախչի քեզանից (Առակ. 6.6-11):

Այսուհետ ապրեք ու աշխատեցեք որպես նոր մարդիկ՝ անկեղծ զղջումով մեղքերից թոթափված, Աստծո հանդեպ հավատարմությամբ, միմյանց սիրելու և օգնելու մտադրությամբ, եռանդուն նոր մտահղացումներով ու խիզախումներով, և Աստված ժամանակի ընթացքում պիտի օրհնի ձեր ձեռքերի գործերը բյուր արդյունքներով: Եվ ասում եմ ձեզ, ձեր սիրելիների հետ երջանկությունը և բարօր կեցությունը պիտի վայելեք ոչ միայն այն, այլև այս կյանքում, թեկուզ և այս անցողիկ աշխարհի օրենքների համաձայն երբեմն մայրամուտներով ու գիշերներով, սակայն ցերեկներն ու արևածագերը անպակաս պիտի լինեն ձեր կյանքից: Եվ ձեր բարիքների համար ուրախությամբ պիտի փառավորեք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և հավիտյանս. ամեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ

Ա

ԱԲԳԱՐ ԹԱԳԱՎՈՐ 349
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՁԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ 243
ԱԶԱՏՈՒՄ ՄԵՂՔԵՐԻՑ 302
ԱԶԳԱՆ/ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 374
«ԱՀԱ ՄԵՆՔ ԹՈՂԵՑԻՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ ԵՎ ԵԿԱՆՔ ՔՈ ԵՏԵՎԻՑ,
ՄԵՆՔ Ի՞ՆՉ ԿՈՒՆԵՆԱՆՔ» (ՄԱՏԹ. 19.27) 382
ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐ 242
ԱՂԱՆԴՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 250
ԱՂՈԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ 140
ԱՂՈԹՔ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 91
ԱՂՈԹՔ ՆՆՁԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ 207
ԱՂՈԹՔ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ 134
ԱՂՈԹՔ ԵՎ ԲԺՇԿՈՒՄ 134
ԱՂՈԹՔԸ ՊԱՀՔԻՑ ԵՎ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՎԵԼ 155
ԱՂՈԹՔԻ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՄՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ 140
ԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ԱՂՈԹԵՑԵՔ 140
ԱՅԳԱԼՈՒՑ 208
ԱՅԼ ԿՐՈՆԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 347
ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ 165
ԱՆԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ 116
ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ 139
ԱՆԴԱՄՆԵՐ ՄԵԿ ՄԱՐՄՆԻ 138
ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՀՔ 154
ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԸ 169
ԱՆՀԱՎԱՏԻ ԿՐՈՆԸ 117
ԱՆՁՆԱԿԱՆ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ 58
ԱՆՇԱՀԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ 187
ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԸ 335
ԱՌԱՁԱՎՈՐԱՑ ՊԱՀՔ 155
ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ 359
ԱՌԱՔԻՆԻ ՄԱՀ 206

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ 62
ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՆԱԽՕՐԻՆԱԿՆԵՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ 61
ԱՌՈՂՋՆԵՐԻՆ ԲԺԻՇԿՆԵՐ ՊԵՏՔ ՉԵՆ 136
ԱՌՈՂՋԱՑՈՒՄ ՀՈԳԵՎՈՐՈՎ 137
ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐՈՎ 318
«ԱՍՏՎԱԾ» ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 326
ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է 152
ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏԱՐԻՔԸ 50
ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ 50
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿՐՈՆ 129
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍԵՐԸ 317
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՀԱՄԱՐՀՈՒՄ 143
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՄԽԻԹԱՐԻՉ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ 145
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՆԴԵՊ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ 145
ԱՍՏՎԱԾԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 292
ԱՍՏՎԱԾԱՑՈՒՄ 368
ԱՍՏՎԱԾՆԵՐ 325
ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՉԵՎԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ 290
ԱՎԱԳ ՇԱԲԱԹ 278
ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐ 64
ԱՐԳԵԼՎԱԾ ՊՏՈՒՂԸ 371
ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ 250
ԱՐԵԳԱԿԻ ԽԱՎԱՐՈՒՄ 309
ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ 273
ԱՐԻՍՏՈԿՐԱՏ ԴԱՌՆԱԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ 148
ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ 163
ԱՔԱՂԱՂԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ 377
ԱՖՈՐԻԶՄ 219

Բ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐ 285
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 83

ԲԵԹՂԵՀԵՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ 200
ԲԵԹՂԵՀԵՄՅԱՆ ԱՍՏՂԸ ԵՎ ՄՈԳԵՐԸ 260
ԲԵԹՂԵՀԵՄՅԱՆ ԱՍՏՂԻ ՄԱՍԻՆ 259
ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 138

Գ

ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻ 175
ԳԱՅԹԱԿՂԻՉ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ 294
ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ 372
ԳԵՐԵԶՄԱՆ ԳՆԱԼԸ 208
ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՈՐՈՇՈՒՄ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ 311
ԳԻՏԵԼԻՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ 316
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 109
ԳՅՈՒՏ ԽԱՉԻ 56
ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ 146
ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ 342
ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ
ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ 343
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ 104
ԳՈՒՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 232

Դ

ԴԱՍԵՐ ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ 109
ԴԱՎԱՆԱՆՔ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 314
ԴԱՏԱՍՏԱՆ 299
ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ 172
ԴԱՐԻ ԽԵՂԿԱՏԱԿՆԵՐԸ 378
ԴԻՎԱԿԱՆ ՏԵՍԻԼՔՆԵՐ 249
ԴՈՆԲԱՑԵՔ 277
ԴՐԱԽՏ ԿԱՄ ԿՅԱՆՔԻ ԲԱՐԵԿԵՑԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ 369
ԴՐԱԽՏ ԵՎ ԵՐՁԱՆԿՈՒԹՅՈՒՆ 193

Ե

ԵԹԵ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՌԱՆՑ ՀՐԱՇՔԻ 129
ԵԿԵՂԵՑԻ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 85
ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՎԱՅՐ 75
ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 67
ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ 66
ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ 71
ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՁՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ 69
ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ 73
ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 89
ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ 212
ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԵՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԸ 337
ԵՐԱԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ 362
ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԺՈՂՈՎՆԵՐ 275
ԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 192
ԵՐՁԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՐԴՅՈՒՆՔ .....
193
ԵՐՐՈՐԴ ՕՐ
..... 209
ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵԿՈՒԹՅՈՒՆԸ 48

Զ

ԶԱՏԿԱԿԱՆ ՁՈՒ 361
ԶԱՐՄԱՆԱԼԻ ՍՐԲԱՑՈՒՄՆԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ 344
ԶԳԵՍՏԻ ՆՊԱՏԱԿԸ 373
ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԱՂԱՆԴՆԵՐԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ 251

Ը

ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՎ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ 340
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԽՈՍՆԵՐԸ 367
ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 137

Թ

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 147
ԹԵԻԶՄ, ԴԵԻԶՄ ԵՎ ԱՆԹՐՈՊՈՄՈՐՖԻԶՄ 312
ԹՈՒՂԹՈՒԳՐԻ ՄԱՍԻՆ 235

Ժ

ԺԱՄԱԳՐՔԻ ՔԱՐՈԶՆԵՐԻ ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ 272
ԺԱՄԱՆԱԿ ՀՈԳԵՎՈՐԻ ՀԱՄԱՐ 291
ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ Ի ԴԵՄՍ 271
ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 271
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ 358

Ի

ԻՄԱՆԱԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ 247
ԻՄ ՏՈՒՆԸ ԱՂՈԹՔԻ ՏՈՒՆ ՊԻՏԻ ԿՈՉՎԻ 254
ԻՆՉՈՒ՞ ԱՂՈԹԵՆՔ 140
ԻՆՔՆԱՄԵԾԱՐՈՒՄ 109
ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ 223
ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱԶՈՀՈՂՈՒԹՅՈՒՆ 220
ԻՆՔՆԱՍՏՎԱԾԱՑՈՒՄ 245
ԻՐԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ 53

Լ

ԼԵԶՎԱԽՈՍԱԿԱՆ ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ 256
ԼԵԶՈՒՆ ԶՍՊԵԼՈՒ ԵՎ ՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 375
ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ 105
ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՕՐԻՆԱԿՈՎ 181

Խ

ԽԱՉԻ ՄԱՍԻՆ 55
ԽԱՉԻ ՆՇԱՆԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ 59
ԽԱՉԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ 57
ԽԱՉՎԱՌ 276
ԽՄԻՉՔ ԵՎ ԽՆՁՈՒՅՔ 160
ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՄԲ ՄԵԿԴ ՄՅՈՒՍԻՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀԱՄԱՐԵՑԵՔ 113

Ծ

ԾԱՂԿԱԶԱՐԴ 177, 277
«ԾԱՌԱ ՉԵՍ, ԱՅԼ՝ ՈՐԴԻ, ԵՎ ԵԹԵ ՈՐԴԻ ԵՍ,
ԱՊԱ ԵՎ՝ ԺԱՌԱՆԳ ԱՍՏԾՈ» (ԳԱՂ. 4.7) 389
ԾԵՍ ԵՎ ԾԻՍԱԿԱՆ ԳՐՔԵՐ 269
ԾԵՍԻ ԼԵԶՈՒՆ 280

Կ

«ԿԱ ԺԱՄԱՆԱԿ ԾՆՎԵԼՈՒ ԵՎ ԿԱ
ԺԱՄԱՆԱԿ ՄԵՌՆԵԼՈՒ» (ԺՈՂ. 3.2) 379
ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 77
ԿԱՄՔ, ՀԱՃՈՒՅՔ ԵՎ ԿՐՔԵՐ 320
ԿԱՏԱՐՅԱԼ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ 351
ԿԵՆԱՑ ԾԱՌ 59
ԿԵՆՍԱԿԵՐՊ 303
ԿԻՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ 368
ԿՅԱՆՔԻՑ ԷԼ ԱՎԵԼԻ 182
ԿՇԵՌՔ ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 352
ԿՇԵՌՔ ԵՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ 294
ԿՐԿԻՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԻ ՄԱՍԻՆ 184

ԿՐԿԻՆ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ 166
ԿՐԿԻՆ ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ 174
ԿՐԿԻՆ ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ 170
ԿՐԿԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ 336
ԿՐԿԻՆ ԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 195
ԿՐԿԻՆ ԾԻՍԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 282
ԿՐԿԻՆ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ 45
ԿՐԿԻՆ ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ 199
ԿՐՈՆԱԿԱՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ 354
ԿՈՒՅՍ ԵՎ ՄԱՅՐ 51
ԿՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 54
ԿՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ 324

Հ

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ 299
ՀԱՂԹԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 379
ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 246
ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ 112
ՀԱՅԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 325
ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ 148
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏՔԸ 213
ՀԱՅՐԵՐ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ 81
ՀԱՆՈՒՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ 142
ՀԱՆՈՒՆ ՆՆՁԵՑՅԱԼՆԵՐԻ.....
207
ՀԱՎԱՏ ՀՐԱՇՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ 124
ՀԱՎԱՏԱԼ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ 117
ՀԱՎԱՏՔԻ ԶԳԱՑՈՒՄԸ 115
ՀԱՎԱՏՔ ԵՎ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ 108
ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆ 52
ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ 80
ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄԱՏԱՆԻ 267
ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 183

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ 258
ՀԱՐՈՒՑՅԱԼՆԵՐԻՑ ԱՌԱՋԻՆԸ 309
ՀԱՑԻ ԽՆԴԻՐ 185
ՀԵՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ 111
ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 356
ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ 313
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ 209
ՀԻՆԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ 352
ՀԻՆ ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ 77
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ, ՀԱՅՏՆԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ ՍՐԲԵՐԻ ՏՈՆԸ 351
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐ 289
ՀԻՄՆԱԿԱՑ ՊԱՀՔ ԵՎ ԲՈՒԴԱՅԱԿԱՆ ՊԱՀԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ 158
ՀՆԱՋԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 80
ՀՆԱՋԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 87
ՀՈԲԻ ԽՈՍՔԵՐԻՑ 339
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ 367
ՀՈԳԵՎՈՐ ԿԵՐԱԿՈՒՐ 187
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ 93
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅՐ ԿԱՄ
ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ 326
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՐ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ 329
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ 91
ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 101
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ 62
ՀՈԳԵՎՈՐԸ ԵՎ ՄԱՐՄՆԱՎՈՐԸ 319
ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ 214
ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ .....
214
ՀՈԳՈՒ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 216
ՀՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԵՆ 127
ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԾՈՒՂԱԿԸ 112
ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐ ԵՎ ՎԱՅՐԻ ՑԵՂԵՐ 224
ՀՍԿԱՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ 366

ՀՐԱԺԱՐՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՉԻՑ 190
ՀՐԱԺԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԻՑ 289
ՀՐԱՇՔ ԱՌԱՆՑ ՀԱՎԱՏՔԻ 133
ՀՐԱՇՔԻ ՍԿԻԶԲԸ 124
ՀՐԱՇՔԻ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻՑ 126
ՀՐԱՇՔԻ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 126
ՀՐԱՇՔՆԵՐ, ԱՂԵՏՆԵՐ, ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 130
ՀՐԱՇՔՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ՉԵՆ 132
ՀՐԱՇՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ 125
ՀՐԵԱ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ 353

Չ

ՉԱՆՉՐԱԼԻ ՔԱՐՈԶՆԵՐ 283
ՉՄԵՌ ՊԱՊ ԿԱՄ ՍԱՆՏԱ ԿԼԱՈՒՍ 287

Ղ

ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԵՐԸ 84

Ճ

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ԱԶԱՏ ԿԱՄՔ 119
ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ 121
ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՎ ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ 118
ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 95
ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՐՔԵՐ 99
ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 224
ՃԳՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՐ 100
ՃԳՆԱՎՈՐ, ՔԱՀԱՆԱ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ 97
ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՎԱԾՍԻՐՈՒԹՅՈՒՆ 293
ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑԻՆ 64
ՃՇՄԱՐԻՏ ԵՎ ԻՆՔՆԱԿՈՉ ՔԱՀԱՆԱ 92
ՃՇՄԱՐԻՏ ԿՅԱՆՔԻ ՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ 302

ՃՇՄԱՐԻՏ ԿՐՈՆԸ 237
ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ 255
ՃՐԱԳԱԼՈՒՅՑ 274

Մ

ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ 197
ՄԱՀՎԱՆ ՊԱՏԻԺԸ 204
ՄԱՍՆԱՏՎՈՂ ԱՆՄԱՍՆԱՏԵԼԻՆ 308
ՄԱՏԱՂ 360
ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ 149
ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ 233
ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԶՐԿՈՒՄՈՎ 182
ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 221
ՄԱՐԴԸ 318
ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ 307
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՏՈՒՄ 205
«ՄԱՐՄՆԻ ՃՐԱԳԸ ԱՉՔՆ Է» (ՄԱՏԹ. 6.22) 385
ՄԵԾ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ 141
ՄԵԾ ԶՈՀՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 179
ՄԵՆՔ՝ ՀՐԱՇԱԳՈՐԾՆԵՐ 133
ՄԵՌԱԾՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ 211
ՄԵՌՆԵԼԸ ՇԱՀ Է 201
ՄԻ ՍՊԱՆԻՐ 218
ՄԻՖՈՍ ԵՎ ԼՈԳՈՍ 310
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 263
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 262
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՏՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 265
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ ԿԱՄ ՀՈԳԻՆԵՐԻ
ՓՐԿՈՒԹՅՈՒՆ 102
ՄՈԳԵՐԻ ԸՆԾԱՆԵՐԸ 261
ՄՈԳԵՐԻ ԵՎ ՀՈՎԻՎՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ 262
ՄՈԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԽԱՐԴՈՒԹՅՈՒՆ 234

ՄՈՎՍԵՍՆԵՐ ԵՎ ՔՐԻՍՏՈՍՆԵՐ 266
ՄՈՒՍՈՒԼՄԱՆՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ 297
ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊՆ 104

Յ

ՅՈԹՆԵՐՈՐԴ ՕՐ 209
ՅՈԹ ՕՐ ՅՈԹ ԳԻՇԵՐ ՀԱՐՍԱՆԻՔ ԱՐԻՆ 269

Ն

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 122
ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ, ՍԿԻԶԲ ԵՎ ՎԵՐՋ 123
ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՀ 123
ՆԱԽԱՏՈՆԱԿ 274
ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎԸ 219
ՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ 162
ՆԵՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 181
ՆԵՂՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 179
ՆԵՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԼԻՈՒԹՅՈՒՆ 180
ՆԵՐԲՈՂՅԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ 218
ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՃՈՒՅՔ 322
ՆՁՈՎՔԻ ՏԱԿ 247
ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՅԵՆԻՆ 300
ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՄՍԱԹԻՎՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ 287
ՆՈՐ ՏԱՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ 286

Շ

ՇԱՐԺՈՒՄ ԴԵՊԻ ԱՍՏՎԱԾ 307
ՇՆՈՐՀՆԵՐԸ՝ ՁՐԻԱԲԱՐ 306
ՇՆՈՐՀՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ 46
ՇՆՈՐՀ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ 331
ՇՐՋԱՊԱՏԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 377

Ո

ՈԳՈՒ ՍՈՎ 301
ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ 185
ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՆՆՋԵՑՅԱԼԻ 206
ՈՐԴԵԾՆՈՒԹՅՈՒՆ 363
Ո՞ՐՆ Է ՃՇՄԱՐԻՏ ԿՐՈՆԸ 236
ՈՐՔԱՆ ՀԵՌՈՒ Է ԱՐԵՎԵԼՔՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ 273

Չ

ՉԱՐԻ ՄԱՍԻՆ 231
ՉԱՐԻՔ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ 196
ՉԱՐ ՈԳԻՆԵՐ ԵՎ ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐ 338
ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 162

Պ

ՊԱՀՈՑ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 157
ՊԱՀՔ, ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՈՒՆ ԵՎ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ 154
ՊԱՀՔ ԿԱՄ ԴԻԵՏԱ 155
ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ 153
ՊԱՀՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 156
ՊԱՀՔ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒԹՈՒՆ 160
ՊԱՅՔԱՐ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ 191
ՊԱՏԻԺ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ 93
ՊԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 364
ՊՍԱԿԻ ԶԳԵՍՏՆԵՐ 268
ՊՐՈՄԵԹԵՎՍ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ 151

Ս

ՍԱՏԱՆԱՅԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ 227
ՍԱՏԱՆԱՅԻ ԵՎ 666-Ի ՄԱՍԻՆ 228
ՍԱՐՍԱՓ ՄԱՀԻՑ ԵՎ ՄԵՌԱԾՆԵՐԻՑ 210
ՍԻՐԵՑԵՔ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ 297
ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ 355
ՍԵՓԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ 303
ՍԻՐՈ ՏՈՆ 303
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ 188
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 221
ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ 248
ՍՐԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՐԲԵՐ 106
ՍՐԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ 106
ՍՐԲԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ 128
ՍՐԲՈՒԹՅԱՆ ՁԳՏՈՒՄ 105
ՍՐԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐԲՆԱԿԱՆԻ ԸՆԿԱԼՈՒՄ 107
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԽՈՀԱՆՈՑԻՑ ԴՈՒՐՍ 106
ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ 244
ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԸ 128
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ 101
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ 142
ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 47
ՍՈՒՐԲ ՁԻՆՎՈՐՆԵՐ 226
ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 44
ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԷՋՔԸ 45
ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ 49
ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՏՈՆԻ ՄՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 357

Վ

ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ 333
ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀ 197
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՂԹԱՆԱԿԸ 219

ՎԱՐԴԱՆԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ 218
ՎՇՏԻ ՉԱՓԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 205

Տ

ՏԻՐՈՋԸ ՊԱՏԿԱՆՈՂՆԵՐԸ 259
ՏՆԵՐԻ ՉԱՓՍԵՐԸ 190
ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ 167
ՏՆՕՐՀՆԵՔ 306

Ու

ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒ ՄԱՀՎԱՆ ՀԱՄԱՐ 203

Փ

ՓԱՌԱԶՐԿՈՒՄ 246
ՓԱՌԱՎՈՐՈՒՄ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 320
ՓԱՌՔ ԵՎ ՊԱՏԻՎ 114
ՓԱՌՔԻ ԵՎ ՓԱՌԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 113
ՓԵՍԱՅԻ ԱՋ ՁԵՌՔՈՎ ՀԱՐՍԻ ԱՋ ՁԵՌՔԸ
ԲՈՆԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ 267

Ք

ՔԱՀԱՆԱ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ 94
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ 94
ՔԱՐՈԶՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ 284
ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ 296
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ 346
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԵՑ ԿՈԱՊԱՇՏՈՒԹՅԱՆԸ 316
ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՎԱԾ ԵՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ 41
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԱՊԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ 32

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆԸ 25
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 39
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԳԵԼՔԸ 37
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՏԱՍՎԵԼԸ 33
ՔՐԻՍՏՈՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ 27
ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ 24
ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ 38
ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ 34
ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀԸ ԵՎ ԻՋՆԵԼԸ ԴԺՈԽՔ 33
ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 30
ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՇԱՄԱԿԸ 37
ՔՐԻՍՏՈՍԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐ 42

Օ

ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՓՈԽԱՁԱԿՑՈՒԹՅՈՒՆ 89
ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՏՐՏՈՒՆՁԻ ՓՈԽԱՐԵՆ 178
ՕՐՀՆՎԱԾ ՁՈՒՐ 348
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ 375

ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ
(ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ)

Թուղթը՝ օֆսեթ 90 գր, չափը՝ 70X100 1/16, ծավալը՝ 25.5 մամուլ,
կազմը՝ 4 գույն, փափուկ, տպաքանակը՝ 400:

ՏՊԱԳՐՎԱԾ Է ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ